Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1427

1877

22
9-82

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱԳԻՏԱԿԱՆ—ՄԱՐԳԱՐԱՆԱԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

2010

2787

ԳՈՐԾՔ
ԱՌԱՔԵԼՈՑ

ԳՈՐԾՔ

ԱՌԱՔԵԼՈՑ

ԹՈՒՂԹՔ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԹՈՒՂԹՔ ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

1872

ՀԱՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

և ի

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

Տ. Տ. ՆԵՐՍԷՍԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ.

29692-Ա.Հ.

2001

13547-58



ԳԱԼՈՒՍՏ ՀՈԳՒՈՅՆ ՍՐԲՈՅ

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԶԲԱՆՆ առաջին՝ զոր արարի՝ վասն ա-
մենայնի, ո՜ Թէոփիլէ, զոր սկսաւ Յի-
2 սուս առնել և ուսուցանել, * մինչև յօրն պա-
տուիրելոյ Առաքելոցն ՚ի ձեռն Հոգւոյն Սրբոյ՝
3 զորս ընտրեաց, և վերացաւ։ * Որոց յանդիման
կացոյց զինքն կենդանի յետ չարչարանացն իւ-
րոց, ՚ի բազում արուեստս, յաւուրս քառա-
սուն երևել նոցա և ասել վասն արքայու-
4 թեանն Աստուծոյ։ * Եւ ՚ի հաղորդել ընդ նոսա
հացին՝ պատուէր տայր նոցա յԵրուսաղեմէ մի՛
մեկնել, այլ սպասել աւետեացն Հօր՝ զոր լուա-
5 րուքն յինէն։ * Զի Յովհաննէս մկրտեաց ՚ի ջուր,
այլ դուք մկրտեսջիք ՚ի Հոգին Սուրբ, ոչ յետ
6 բազում ինչ աւուրցս այսոցիկ։ * Եւ նոքա մա-
տուցեալ հարցանէին զնա և ասէին. Տէր, եթէ
՚ի ժամանակի՞ աստ յայսմիկ հաստուցանելոց ի-
7 ցես զարքայութիւնն Իսրայէլի։ * Ասէ ցնոսա.
Ոչ է ձեր գիտել զժամս և զժամանակս, զոր Հայր

եդ յիւրում իշխանութեան. * այլ առջիք զօ- 8
րութիւն 'ի հասանել Հոգւոյն Սրբոյ 'ի վերայ ձեր,
և եղիջիք ինձ վկայք յԵրուսաղէմ և յամենայն
Հրէաստանի և 'ի Սամարիա, և մինչեւ 'ի ծագս
երկրի։ * Եւ զայս իբրեւ ասաց՝ մինչդեռ հայէին 9
նոքա՝ վերացաւ, եւ ամպն կալաւ զնա յաչաց
նոցա։ * Եւ մինչդեռ պշուցեալ հայէին ընդ եր- 10
կինս երթալոյ նորա, և ահաւասիկ արք երկու
երեւեցան նոցա 'ի հանդերձս սպիտակս, * որք 11
և ասացին. Արք Գալիլեացիք, զի՞ կայք հայե-
ցեալ ընդ երկինս. այս Յիսուս՝ որ վերացաւ
'ի ձէնջ յերկինս, սոյնպէս եկեսցէ զոր օրինակ
տեսէք զնա երթեալ յերկինս։

*Ապա դարձան յԵրուսաղէմ յանուանեալ 12
լեռնէն Ձիթենեաց, որ է մերձ յԵրուսաղէմ
ըստ շաբաթու ճանապարհի։ * Եւ իբրեւ մը- 13
տին, ելին 'ի վերնատունն ուր վանքն իսկ էին,
Պետրոս և Յակոբոս և Յովհաննէս և Անդրէաս,
Փիլիպպոս և Թովմաս, Բարթողոմէոս և Մատ-
թէոս, Յակոբոս Ալփեան, և Շմաւոն Նախան-
ձայող և Յուդա Յակոբեան։ * Սոքա ամենե- 14
քեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս
հանդերձ կանամբք և Մարեմաւ մարբն Յիսուսի
և եղբարբք նորա։

Ա.Ա. * Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ 15
Պետրոս 'ի մէջ եղբարցն ասէ. և էր անդ բազ-
մութիւն անուանց իբրեւ հարիւր և քսանից.
* Արք եղբարք, պարտ էր կատարել գրոյն, զոր 16

յառաջագոյն ասաց Հոգին Սուրբ 'ի բերանոյ
Դաւթի վասն Յուդայի՝ որ եղեւ առաջնորդ
17 ունելեացն Յիսուսի. * զի 'ի թիւս մեր էր ընդ
մեզ, և հասեալ էր նմա վիճակ պաշտամանս
18 այսորիկ։ * Սա ստացաւ դեօղ 'ի վարձուց անի-
րաւութեան, և ուռուցեալ հերձաւ ընդ մէջ
19 և հեղաւ ամենայն փոր նորա. * եւ յայտնի ե-
ղեւ ամենեցուն որ բնակեալ են յԵրուսաղէմ.
մինչեւ կոչել գեղջն այնմիկ բարբառովն իւ-
րեանց Ակեղդամա. այսինքն է՝ դեօղ արեան։
20 * Զի գրեալ է 'ի գիրս Սաղմոսաց. Եղիցի բնա-
կութիւն նորա աւերակ, և մի՛ ոք լիցի՝ որ բնա-
21 կիցէ 'ի նմա. և զկարգ նորա առցէ այլ։ * Արդ
պարտ է յարանցս յայսցանէ եկելոցս ընդ մեզ
յամենայն ժամանակի, յորում մուտ և ել առ
22 մեզ Տէր Յիսուս. * սկսեալ 'ի մկրտութենէն Յով-
հաննու մինչեւ յօրն՝ յորում վերացաւ 'ի մէնջ,
վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել միում
23 'ի սոցանէ։ * Եւ կացուցին երկուս. զՅովսէփ՝
որում Բարսաբայն կոչէին, որ անուանեցաւն
24 Յուստոս և զՄատաթիա. * եւ կացեալ յաղօ-
թս՝ ասեն. Դու Տէր, սրտագէտ ամենայնի,
յայտնեա զմի ոք զոր ընտրեցեր 'ի սոցանէ
25 յերկոցունց, * առնուլ զվիճակ պաշտամանս
այսորիկ և զառաքելութեան, յորմէ անկաւ Յու-
26 դաս գնալ 'ի տեղի իւր։ * Եւ ետուն վիճակս
նոցա, և ելանէր վիճակն Մատաթեայ. և համա-
րեցաւ ընդ մետասան Առաքեալսն։ Վ.Ջ

ԳԼՈՒԽ Բ.

Եւ 'ի կատարել աւուրցն պենտեկոստէից՝ էին 1
ամենեքեան միաբան 'ի միասին ։ * Եւ եղեւ յան- 2
կարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրեւ սաստիկ
հողմոյ, եւ ելից զամենայն տունն յորում նըս-
տէին. * եւ երեւեցան նոցա բաժանեալ լեզուք 3
իբրեւ 'ի հրոյ, եւ նստաւ իւրաքանչիւր 'ի վե-
րայ նոցա ։ * Եւ լցան ամենեքեան հոգւով Սըր- 4
բով, եւ սկսան խօսել այլ լեզուս՝ որպէս եւ Հո-
գին տայր բարբառել նոցա ։ * Եւ էին յԵրուսա- 5
ղէմ բնակեալ Հրէայք՝ արք երկիւղածք, յամե-
նայն ազգաց որ 'ի ներքոյ երկնից ։ * Եւ իբրեւ 6
եղեւ բարբառս այսորիկ միաբան բազմութիւնն
եւ խռնեցաւ. զի լսէին յիւրաքանչիւր լեզուս
խօսել նոցա ։ * Սքանչանային ամենեքեան եւ 7
զարմանային եւ ասէին ընդ միմեանս. Ո՞չ ահա-
ւասիկ ամենեքեան սոքա որ խօսին՝ Գալիլեացիք
են, * եւ զիա՞րդ լսեմք մեք յիւրաքանչիւր բար- 8
բառս մեր՝ յորում ծնեալ եմք. * Պարթեւք եւ 9
Մարք եւ Եղամացիք, եւ որ բնակեալ են 'ի Միջա-
գետս, 'ի Հրէաստանի եւ 'ի Գամիրս, 'ի Պոնտոս
եւ յԱսիա, * 'ի Փռիւգիա եւ 'ի Պամփիւլիա, յԵ- 10
գիպտոս եւ 'ի կողմանս Լիբեացւոց, որ ընդ Կիւ-
րենացւս եւ որ եկք Հռոմայեցիք, * Հրէայք եւ եկք 11
նոցուն, Կրետացիք եւ Արաբացիք, լսեմք խօսից
նոցա 'ի մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ ։

12 * Սքանչանային ամենեքեան զարմացեալք եւ ա-
13 սէին ցմիմեանս. Զի՞նչ կամիցի այս լինել ։ * Եւ
կիսոցն ընդ խաղ արկեալ ասէին, եթէ քաղց-
14 ուալից իցեն ։ * Յարուցեալ Պետրոս հանդերձ
մետասանիւքն, ամբարձ զձայն իւր եւ խօսեցաւ
ընդ նոսա. Արք Հրէաստանեայք, եւ որ բնա-
կեալ էք յԵրուսաղէմ ամենեքեան, այս ձեզ
15 յայտնի լիցի եւ ունկն դիք բանից իմոց. * ոչ որ-
պէս դուք կարծէք՝ թէ սոքա արբեալ իցեն.
16 զի դեռ երեք ժամք են աւուրս ։ * Այլ այս է
17 որ ասացաւ 'ի ձեռն մարգարէին Յովելեայ. * Եւ
եղիցի յետ այսորիկ յաւուրս յետինս, ասէ Աս-
տուած, հեղից յոգւոյ իմմէ 'ի վերայ ամենայն
մարմնոյ, եւ մարգարէասցին ուստերք ձեր եւ
դստերք ձեր. եւ երիտասարդք ձեր տեսիլս տես-
18 ցեն, եւ ծերք ձեր երազովք յերազեսցին. * եւ 'ի
վերայ ծառայից իմոց եւ 'ի վերայ աղախնայց ի-
մոց յաւուրսն յայնոսիկ հեղից յոգւոյ իմմէ, եւ
19 մարգարէասցին ։ * Եւ տաց նշանս յերկինս 'ի
վեր, եւ նշանս յերկիր 'ի խոնարհ, արիւն եւ
20 հուր եւ մրրիկ ծխոյ. * արեգակն դարձցի 'ի խա-
ւար եւ լուսին յարիւն, մինչեւ եկեալ իցէ օր
21 Տեառն մեծ եւ երեւելի ։ * Եւ եղիցի ամենայն
որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ ։
22 ԱԲ. * Արք Իսրայելացիք, լուարուք զբանս
զայսոսիկ. զՅիսուս Նազովրեցի՝ զայր ցուցեալ
յԱստուծոյ 'ի ձեզ՝ զօրութեամբք եւ նշանօք եւ
արուեստիւք, զոր արար նովաւ Աստուած 'ի

միջի ձերում, որպէս և դուք իսկ գիտէք, * զնա՝ 23
նկատեալ խորհրդով և կանխագիտութեամբն
Աստուծոյ՝ մատնեալ 'ի ձեռաց անօրինաց՝ բե-
ւեռեալ 'ի փայտի սպանէք. * զոր Աստուած յա- 24
րոյց լուծեալ զերկունս մահու, քանզի ոչ էր
հնար ըմբռնել նմա 'ի նմանէ։ * Դաւիթ իսկ ա- 25
սէ զնմանէ. Յառաջագոյն տեսանէի զՏէր առա-
ջի իմ յամենայն ժամ, զի է ընդ աջմէ իմմէ, զի
մի սասանեցայց. * վասն այսորիկ ուրախ եղեւ 26
սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ. եւս և մարմին
իմ բնակեսցէ յուսով. * զի ոչ թողցես զանձն 27
իմ 'ի դժոխս, և ոչ տացես սրբոյ քում տեսա-
նել զապականութիւն. * Ծանուցեր ինձ զճանա- 28
պարհս կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ ե-
րեսաց քոց։ * Արք եղբարք, պարտ է համար- 29
ձակութեամբ ասել ձեզ վասն նահապետին
Դաւթի, զի և մեռաւ և թաղեցաւ, և գե-
րեզման նորա կայ 'ի միջի մերում մինչեւ ցայ-
սօր։ * Զի մարգարէ էր և գիտէր, եթէ երդ- 30
մամբ երդուաւ նմա Աստուած՝ 'ի պտղոյ որո-
վայնէ նորա նստուցանել յաթոռ նորա. * յա- 31
ռաջագոյն ծանուցեալ խօսեցաւ վասն յարու-
թեանն Քրիստոսի. զի ոչ թողաւ ոգի նորա 'ի
դժոխս, և ոչ մարմին նորա ետես զապականու-
թիւն։ * Զայս Յիսուս յարոյց Աստուած, որում 32
ամենեքին մեք վկայ եմք։ * Աջովն Աստուծոյ 33
բարձրացեալ, զաւետիս Հոգւոյն Սրբոյ ընկա-
լեալ 'ի Հօրէ, սփռեաց զայս՝ զոր դուք իսկ տե-

34 սանէք և լսէք։ * Զի ոչ եթէ Դաւիթ ել յեր-
կինս. ասէ իսկ ինքն. Ասաց Տէր ցՏէր իմ, Նիստ
35 ընդ աջմէ իմմէ՝ * մինչեւ եդից զթշնամիս քո
36 պատուանդան ոտից քոց։ * Արդ ճշմարտիւ
գիտասցէ ամենայն տունդ Իսրայելի, զի և Տէր
զնա և օծեալ՝ Աստուած արար, զայն Յիսուս՝
37 զոր դուքն խաչեցէք։ * Եւ լուեալ զայս՝ զղջա-
ցան 'ի սիրտս իւրեանց, և ասեն ցՊետրոս և
ցայլ Առաքեալսն. Զի՞նչ գործեսցուք, արք եղ-
38 բարք։ * Ասէ ցնոսա Պետրոս. Ապաշխարեցէք, և
մկրտեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ յանուն
Տեառն Յիսուսի Քրիստոսի 'ի թողութիւն մե-
39 ղաց, և ընկալջիք զաւետիս Հոգւոյն Սրբոյ. * զի
ձեզ են աւետիքս և որդւոց ձերոց, և ամենայն
40 հեռաւորաց զորս կոչեսցէ Տէր Աստուած մեր։ * Եւ
այլովք բանիւք բազմօք վկայութիւն դնէր, և
մխիթարէր զնոսա և ասէր. Ապրեցարուք յազ-
41 գէ աստի խոտորելոյ յայսմանէ։ * Ոմանք յօժա-
րութեամբ ընկալեալ զբան նորա՝ մկրտեցան,
և յաւելան յաւուր յայնմիկ հոգիք իբրեւ երեք
հազարք։
42 Ա.Գ. * Եւ էին հանապազորդեալք վարդա-
պետութեան Առաքելոցն, և հաղորդութեան
43 և բեկանելոյ հացին և աղօթից. * Եւ լինէր ա-
մենայն անձին ահ և երկիւղ, և բազում նշանք
և արուեստք 'ի ձեռս Առաքելոցն գործէին։
44 * Ամենայն հաւատացեալքն էին 'ի միասին, և
45 ունէին զամենայն ինչ հասարակաց. * և զստա-

ցուածս և զինչս վաճառէին, և բաշխէին զայն
ամենեցուն ում զինչ պէտս ինչ լինէր։ *Հա- 46
նապազօր կանխեալ միաբանութեամբ 'ի տա-
ճարն, և առ տունս բեկանէին զհացն, և առ-
նուին կերակուր ուրախութեամբ, *և միամ- 47
տութեամբ սրտի օրհնէին զԱստուած. և ունէ-
ին շնորհս առ ամենայն ժողովուրդն. և Տէր
յաւելոյր 'ի փրկեալսն հանապազօր 'ի նոյն։

ԳԼՈՒԽ Գ.

Պետրոս և Յովհաննէս ելանէին 'ի տաճար 1
անդր յիններորդ ժամու աղօթիցն։ *Եւ էր այր 2
մի կաղ յորովայնէ մօր իւրոյ, զոր բարձեալ
դնէին հանապազօր առ դրան տաճարին, որ
կոչէր գեղեցիկ, խնդրել ողորմութիւն յայնցա-
նէ որ մտանէին 'ի տաճարն։ *Որոյ տեսեալ 3
զՊետրոս և զՅովհաննէս զի մտանէին 'ի տաճա-
րն, աղաչէր ողորմութիւն առնուլ։ *Հայեցաւ 4
'ի նա Պետրոս Յովհաննու հանդերձ, և ասէ.
Հայեաց 'ի մեզ։ *Նա դարձաւ 'ի նոսա, և ակն 5
ունէր առնուլ ինչ 'ի նոցանէ։ *Եւ ասէ Պետ- 6
րոս. Արծաթ և ոսկի ոչ ունիմ, բայց զոր ունիմ
զայս տաց քեզ. յանուն Յիսուսի Քրիստոսի Նա-
զովրեցւոյ՝ արի և գնա։ *Եւ կալեալ զաջոյ ձե- 7
ռանէ նորա յարոյց զնա. և անդէն հաստատե-
ցան բարձք նորա և սրունք. *'ի վեր վազեաց և 8
սկսաւ գնալ, և եմուտ ընդ նոսա 'ի տաճարն.

9 գնայր և վազվազէր և օրհնէր զԱստուած։ *Եւ
ետես ամենայն ժողովուրդն զնա, զի գնայր և
10 օրհնէր զԱստուած. *և գիտէին զնա զի սա էր՝
որ նստէր վասն ողորմութեան առ գեղեցիկ դը-
րան տաճարին. և լցան զարմանալեօք 'ի վերայ
11 նշանին որ եղեւ։ *Եւ մինչ նա ունէր զՊետրոս
և զՅովհաննէս, ընթացաւ ամենայն ժողովու-
րդն առ նոսա 'ի սրահն՝ որ կոչէր Սողոմոնի՝
12 զարմացեալք։ *Իբրեւ ետես Պետրոս՝ պատաս-
խանի ետ ժողովրդեանն. Արք Իսրայելացիք, զի՞
զարմացեալ էք 'ի վերայ այսորիկ, կամ ընդ
մեզ զի՞ էք պշուցեալ, իբրու թէ անձին զօ-
րութեամբ ինչ կամ քաջութեամբ արարեալ
13 իցէ զգնալդ դմա։ *Աստուած Աբրահամու, և
Աստուած Սահակայ, եւ Աստուած Յակոբայ,
Աստուած հարցն մերոց փառաւորեաց զՈրդի
իւր զՅիսուս, զոր դուքն մատնեցէք և ուրա-
ցարուք առաջի Պիղատոսի՝ 'ի դատելն նորա
14 արձակել։ *Եւ դուք զսուրբն և զարդարն ու-
րացարուք, և խնդրեցէք այր մի մահապարտ
15 շնորհել ձեզ. *և զառաջնորդ կենացն սպանէք,
զոր Աստուած յարոյց 'ի մեռելոց, որում մեք
16 իսկ վկայեմք։ *Եւ հաւատովք անուան նորա՝
զսա զոր տեսանէքս և գիտէք, հաստատեաց
անուն նորա. եւ հաւատքն որ նովաւ՝ ետուն
դմա զառողջութիւնս զայս յանդիման ձեր ա-
17 մենեցուն։ *Եւ արդ, եղբարք, գիտեմ զի ան-
գիտութեամբ արարէք՝ որպէս և իշխանքն ձեր.

* այլ Աստուած՝ որպէս յառաջագոյն պատմեաց 18
'ի բերանոյ ամենայն մարգարէից չարչարելն Քրի-
ստոսի իւրոյ, նոյնպէս և կատարեաց ։ * Արդ 19
ապաշաւեցէք և դարձարուք 'ի ջնջել զմեղս ձեր.
* որպէս զի եկեսցեն ժամանակք հանգստեան 20
յերեսաց Տեառն, և առաքեսցէ զյառաջագոյն
նկատեալն ձեզ՝ զՅիսուս Քրիստոս ։ * Զոր պարտ 21
է երկնից ընդունել՝ մինչեւ 'ի ժամանակս ամե-
նեցուն հաստատելոյ, զորոց խօսեցաւ Աստուած
'ի բերանոյ սրբոց, իւրոց մարգարէից ։
Ա.Գ. * Մովսէս ասաց ցհարսն, թէ մար- 22
գարէ յարուսցէ ձեզ Տէր Աստուած ձեր յեղ-
բարց ձերոց իբրեւ զիս, նմա լուիջիք՝ ըստ
ամենայնի որ զինչ և խօսեսցի առ ձեզ. * եւ 23
եղիցի ամենայն անձն՝ որ ոչ լուիցէ մարգարէին
այնմիկ, սատակեսցի 'ի ժողովրդենէն ։ * Եւ ա- 24
մենայն մարգարէք որ 'ի Սամուելէ և այսր խօ-
սեցան և պատմեցին զաւուրսս զայսոսիկ ։ * Դուք 25
էք որդիք մարգարէիցն, և ուխտին զոր ուխ-
տեաց Աստուած ընդ հարսն մեր, և ասէ ցԱբ-
րահամ. Ի զաւակի քում օրհնեսցին ամենայն
ազգ երկրի ։ * Ձեզ նախ յարոյց Աստուած զՈր- 26
դին իւր, եւ առաքեաց զնա օրհնել զձեզ, 'ի
դառնալ ձեզ իւրաքանչիւր 'ի չարեաց ձերոց ։

ԳԼՈՒԽ Դ.

Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողովրդեա- 1
նըն, հասին 'ի վերայ նոցա Քահանայապետք և

2 իշխանք տաճարին և Սադուկեցիքն, * զայրա-
գնեալք վասն ուսուցանելոյ նոցա զժողովուրդն
և պատմելոյ Յիսուսիւ զյարութիւն մեռելոց.
3 * մխեցին 'ի նոսա զձեռս իւրեանց, և եդին ըզ-
նոսա 'ի բանտի մինչեւ 'ի վաղիւն, զի էր ընդ
4 երեկս ։ * Իսկ բազումք 'ի լսողաց բանին հա-
ւատացին, և եղեւ թիւ մարդկան իբրեւ հա-
5 զարաց հնգից ։ * Եւ եղեւ 'ի վաղիւ անդր ժողո-
վել նոցա զիշխանսն և զերիցունս եւ զդպիրս
6 յԵրուսաղէմ, * և զԱննա քահանայապետ եւ
զԿայիափա, և զՅովհաննէս և զԱղէքսանդրոս, և
որք միանգամ էին յազգէ քահանայութեանն.
7 * և կացուցեալ զնոսա 'ի մէջ՝ հարցանէին. Որո՞վ
զօրութեամբ կամ որո՞վ անուամբ արարէք դուք
8 զայս ։ * Յայնժամ Պետրոս լցեալ հոգւով Սրբով՝
ասէ ցնոսա. Իշխանք ժողովրդեան և երիցունք
9 Իսրայէլի, * թէ արժա՞ն ինչ իցէ դատել զմեզ
այսօր վասն երախտեաց առն միոյ տկարի, ո-
10 րով սա բժշկեցաւ ։ * Յայտնի լիցի ամենեցուն
ձեզ, եւ ամենայն ժողովրդեանդ Իսրայէլի, զի
յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ զոր
դուքն խաչեցէք՝ զոր Աստուած յարոյց 'ի մեռե-
լոց, նովաւ սա կայ աւասիկ առաջի ձեր ող-
11 ջացեալ ։ * Նա է վէմն անարգեալ 'ի ձէնջ շինո-
12 ղաց, որ եղեւ գլուխ անկեան. * և չիք այլով
իւիք փրկութիւն. զի և ոչ անուն այլ գոյ 'ի
ներքոյ երկնից տուեալ 'ի մարդիկ՝ որով արժան
իցէ կեալ մեզ ։

Ա.Ե. *Հայեցեալ 'ի համարձակութիւնն Պետ- 13
րոսի և Յովհաննու, և 'ի վերայ հասեալք թէ
արք տգէտք և առանց դպրութեան են, զար-
մանային. զի ճանաչէին զնոսա թէ ընդ Յիսուսի
էին. * և զայրն եւս տեսանէին զբժշկեալն՝ զի 14
կայր ընդ նոսա, և ոչ ինչ կարէին տալ պատաս-
խանի։ * Եւ հրամայեալ նոցա արտաքս քան զա- 15
տեանն ելանել, խորհեցան ընդ միմեանս, և ա-
սեն. * Զի՞նչ արասցուք արանցս այսոցիկ. զի ե- 16
րևելի նշան եղև 'ի ձեռս նոցա. ամենայն իսկ
բնակչաց Երուսաղէմի յայտ է, և ոչ կարեմք ու-
րանալ. * այլ զի մի առաւել ճարակեսցի 'ի ժո- 17
ղովուրդն, սպառնասցուք նոցա մի ևս խօսել
յանունն յայն՝ մի ումեք 'ի մարդկանէ։ * Եւ 18
կոչեցեալ զնոսա պատուիրեցին ամենևին մի
խօսել, եւ մի ուսուցանել յանունն Յիսուսի։
* Իսկ Պետրոս և Յովհաննէս պատասխանի ե- 19
տուն և ասեն ցնոսա. Եթէ արժան իցէ առաջի
Աստուծոյ՝ ձեզ լսել առաւել քան Աստուծոյ,
ընտրեցէք. * այլ մեք ոչ կարեմք զոր տեսաքն և 20
լուաք՝ չխօսել։ * Նոքա սպառնացեալ արձակե- 21
ցին զնոսա, և ոչ ինչ գտեալ թէ որպէս պա-
տուհասեսցեն զնոսա՝ վասն ժողովրդեանն. զի
ամենեքեան փառաւոր առնէին զԱստուած վա-
սն իրացն եղելոց. * զի ամաց էր այրն աւելի 22
քան զքառասուն, յորոյ վերայ եղեւ նշանս
այս բժշկութեան։ * Եւ անտի արձակեալ եկին 23
առ իւրեանս, և պատմեցին որչափ ինչ ասա-

ցին ցնոսա քահանայապետքն եւ երիցունքն։
24 * Եւ նոցա լուեալ, ամբարձին զձայն իւրեանց
առ Աստուած՝ և ասեն. Դու Տէր Աստուած՝ որ
արարեր զերկինս և զերկիր և զծով և զամե-
25 նայն որ 'ի նոսա, * որ 'ի բերանոյ հօր մերոյ
Դաւթի ծառայի քոյ 'ի ձեռն հոգւոյն Սրբոյ ա-
սացեր. Զմէ՞ խռովեցան հեթանոսք՝ և ժողո-
26 վուրդք խորհեցան 'ի սնոտիս. * յանդիման ե-
ղեն թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան
'ի միասին վասն Տեառն և վասն օծելոյ նորա։
27 * Ժողովեցան արդարեւ 'ի քաղաքիս յայսմիկ 'ի
վերայ սրբոյ որդւոյ քոյ Յիսուսի զոր օծերն՝ Հե-
րովդէս և պոնտիոս Պիղատոս՝ ազգօք և ժո-
28 ղովրդովք Իսրայելի, * առնել որչափ ձեռն քո
29 և կամք յառաջագոյն սահմանեցին լինել։ * Եւ
արդ, Տէր, հայեաց 'ի սպառնալիս նոցա, և տուր
ծառայից քոց ամենայն համարձակութեամբ
30 խօսել զբանն քո. * 'ի ձգել զձեռն քո 'ի բը-
ժշկութիւն և նշանս և արուեստս՝ լինել ան-
31 ուամբն սրբոյ որդւոյ քոյ Յիսուսի։ * Եւ մինչ
կային նոքա յաղօթս՝ շարժեցաւ տեղին յորում
էին ժողովեալ, և լցան ամենեքին հոգւով Սըր-
բով, եւ խօսէին զբանն Աստուծոյ համարձա-
կութեամբ։

32 Ա.Զ. * Եւ բազմութեան հաւատացելոց էր
սիրտ և անձն մի. եւ ոչ ոք 'ի նոցանէ ասէր
զընչից իւրոց թէ իւր իցէ, այլ էր նոցա ամե-
33 նայն ինչ հասարակաց. * և զօրութեամբ բազ-

մաւ տային վկայութիւն Առաքեալքն զյարու-
թեանն Տեառն Յիսուսի Քրիստոսի ։ Եւ շնորհք
մեծամեծք էին 'ի վերայ ամենեցուն նոցա . * և 34
ոչ ոք կարօտէր 'ի նոսա . զի որ միանգամ տեարք
էին գիւղից կամ ապարանից՝ վաճառէին , եւ
բերէին զգինս վաճառելոյն՝ * դնէին առ ոտս 35
Առաքելոյն . և բաշխէին իւրաքանչիւր՝ որպէս
ումեք պիտոյ ինչ լինէր ։ * Յովսէփ՝ որ կոչեցա- 36
ւն Բառնաբաս յԱռաքելոց անտի , որ թարգ-
մանի որդի մխիթարութեան , Ղեւտացի , յազ-
գէ Կիպրացի , * էր նորա գեօղ . վաճառեաց և
եբեր զգինն՝ և եդ առ ոտս Առաքելոցն ։

ԳԼՈՒԽ Ե .

Իսկ այր ոմն Անանիա անուն , հանդերձ կը- 1
նաւ իւրով Սափիրաւ , վաճառեաց ագարակ ,
* և խորեաց 'ի գնոց անտի՝ գիտելով և կնոջն . 2
և եբեր մասն ինչ՝ եդ առ ոտս Առաքելոցն ։ * Ա- 3
սէ Պետրոս . Անանիա , ընդէ՞ր ելից սատանայ
զսիրտ քո՝ ստել քեզ Հոգւոյն Սրբոյ , և խորել
'ի գնոց գեղջն . * ո՞չ ապաքէն մինչ կայրն քո էր , 4
և 'ի վաճառելն՝ ընդ քո իշխանութեամբ էր .
զի՞ է՝ զի եդիր 'ի սրտի քում զիրս զայս . ոչ
ստեցեր մարդկան՝ այլ Աստուծոյ ։ * Եւ լուեալ 5
Անանիա զբանս զայսոսիկ , անկաւ և եհան զո-
գի . և եղեւ ահ մեծ 'ի վերայ ամենեցուն որ
լուան զայն ։ * Յոտն կացին երիտասարդքն՝ և 6

7 ամփոփեցին զնա , եւ տարան թաղեցին ։ * Եւ
եղեւ , իբրեւ ժամք երեք անցին , և կին նորա
ոչ գիտէր զինչ եղեալն էր , եմուտ 'ի ներքս ։
8 * Պատասխանի ետ նմա Պետրոս և ասէ ցնա .
Ասա դու ինձ՝ թէ ա՞յնչափի գնոց զգեօղն վա-
9 ճառեցէք ։ Եւ նա ասէ . Այո՛ , այնչափի ։ * Եւ
ասէ ցնա Պետրոս . Զի՞ է՝ զի միաբանեցէք դուք
փորձել զհոգին Տեառն . ահա ոտքն՝ որ թաղե-
10 ցին զայրն քո 'ի դրան , հանցեն և զքեզ ։ * Եւ
անկաւ անդէն առ ոտս նորա և եհան զոգի .
մտին երիտասարդքն՝ գտին զնա մեռեալ , եւ
11 հանին թաղեցին առ առն իւրում ։ * Եւ եղեւ
երկիւղ մեծ 'ի վերայ ամենայն եկեղեցւոյն , և
'ի վերայ ամենեցուն որ լուանն զայն ։
12 ԱԻ . * Եւ 'ի ձեռս Առաքելոցն լինէին նշանք
և արուեստք բազումք 'ի ժողովրդեանն . և էին
13 միաբան ամենեքեան 'ի սրահին Սողոմոնի . * և
յայլոց անտի ոչ ոք իշխէր մերձենալ առ նոսա ,
14 այլ յարգէր զնոսա ժողովուրդն ։ * Եւ առաւել
եւս յաւելուին հաւատացեալքն 'ի Տէր , բազ-
15 մութիւն արանց և կանանց . * մինչեւ 'ի հրա-
պարակն հանել զհիւանդս՝ և դնել պատգա-
րակօք և մահճօք իւրեանց , զի ընդ անցանելն
Պետրոսի՝ գոնէ հովանին նորա հասցէ ումեք
16 'ի նոցանէ ։ * Եւ ժողովէր բազմութիւնն շուրջ
'ի քաղաքաց անտի յԵրուսաղէմ . բերէին զհի-
ւանդս և զնեղեալս յայսոց պղծոց , որք և բը-
17 ժշկէին ամենեքեան ։ * Յարուցեալ քահանայա-

պետն և ամենեքին որ ընդ նմա, և աղանդ Սա-
դուկեցւոց, լցան նախանձու. * և արկին զձե- 18
ռըս յԱռաքեալսն, և եդին զնոսա հրապարա-
կաւ 'ի բանտի:

* Ապա հրեշտակ Տեառն գիշերի եբաց ըզ- 19
դուրս բանտին, * և հանեալ զնոսա՝ ասէ. Գնա- 20
ցէք կացէք 'ի տաճարին, և խօսեցարուք ընդ
ժողովրդեանն զամենայն պատգամս կենացս այ-
սոցիկ: * Եւ իբրև լուան, մտին ընդ առաւօտն 21
'ի տաճարն՝ և ուսուցանէին: Եկն քահանայա-
պետն՝ և որ ընդ նմա, կոչեցին միաբան զատեանն
և զամենայն ծերակոյտ որդւոցն Իսրայելի. և ա-
ռաքեցին 'ի բանտն՝ ածել զնոսա: * Եւ իբրև 22
եկին սպասաւորքն, ոչ գտին զնոսա 'ի բանտին.
դարձեալ անդրէն պատմեցին, * և ասեն. Թէ 23
զբանտն գտաք փակեալ ամենայն զգուշու-
թեամբն, և զպահապանսն զի կային առ դրա-
նցն. բացաք՝ և 'ի ներքս զոք ոչ գտաք: * Իբրև 24
լուան զբանս զայս իշխանք տաճարին և քահա-
նայապետքն, հիանային վասն նոցա, թէ զինչ
արդեօք լինիցի այն: * Եւ եկն ոմն պատմեաց 25
նոցա, թէ ահա արքն զորս եդիք 'ի բանտին՝
կան 'ի տաճարին և ուսուցանեն զժողովուրդն:
* Յայնժամ երթեալ իշխանն սպասաւորօքն 26
հանդերձ՝ ած զնոսա ոչ բռնութեամբ. քանզի
երկնչէին 'ի ժողովրդենէն՝ զի մի քարկոծեսցին:
* Եւ ածեալ զնոսա՝ կացուցին յատենի. եհարց 27
զնոսա քահանայապետն, * և ասէ. Ո՞չ պատուէ- 28

րելով պատուիրեցաք ձեզ՝ մի՛ ուսուցանել յա-
նունն յայն. և արդ ահաւասիկ լցէք զԵրուսաղէմ
ուսմամբդ ձերով, և կամիք ածել 'ի վերայ մեր
29 զարիւն զառն զայնորիկ: * Պատասխանի ետ
Պետրոս և Առաքեալքն և ասեն. Հնազանդել
պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան:
30 * Աստուած հարցն մերոց յարոյց զՅիսուս՝ զոր
31 դուքն սպանէք կախեալ զփայտէ. * զնա Աստ-
ուած առաջնորդ և փրկիչ բարձրացոյց աջով
իւրով՝ տալ ապաշխարութիւն Իսրայելի և թո-
32 ղութիւն մեղաց. * եւ մեք եմք նորա վկայք
բանիցս այսոցիկ, և Հոգին Սուրբ՝ զոր ետ Ա-
33 տուած հնազանդելոց իւրոց: * Եւ նոքա իբրև
լուան, առատանային և խորհէին սպանանել
զնոսա:

34 ԲԿ. * Յարուցեալ ոմն 'ի մէջ ատենին փա-
րիսեցի, որում անուն էր Գամաղիէլ՝ օրէնսու-
սոյց, պատուական ամենայն ժողովրդեանն, հր-
ամայեաց տակաւին մի զարսն արտաքս հանել.
35 * եւ ասէ ցնոսա. Արք Իսրայելացիք, հայեցա-
րուք 'ի ձեզ վասն արանցս այսոցիկ, զի՞նչ ար-
36 ժան իցէ գործել: * Յառաջ քան զաւուրս զայ-
սոսիկ յարեաւ Թևդաս՝ ասել զանձնէ թէ իցէ
ոմն. յոր անկան արք թուով իբրև չորեք հա-
րիւր. որ սպանաւ, և ամենեքեան որ միաբա-
նեալ էին ընդ նմա՝ քակտեցան և եղեն յոչինչ:
37 * Յետ նորա յարեաւ Յուդաս գալիլեացի՝ յա-
ւուրս աշխարհագրին. եւ ապստամբեցոյց ժո-

զժողովուրդ բազում զկնի իւր. եւ նա կորեաւ, եւ
ամենեքեան որ ընդ նմայն հաւանեալ էին՝ ցը-
րուեցան: * Եւ զարդ ասեմ ձեզ, 'ի բաց կա- 38
ցէք յարանցդ յայդցանէ, և թոյլ տուք դոցա.
զի եթէ 'ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ
կամ գործդ՝ քակտեսցի. * ապա թէ յԱստուծոյ 39
է՝ ոչ կարէք քակտել զդոսա. գուցէ եւ աս-
տուածամարտք գտանիցիք: * Հաւանեցան նմա, 40
եւ կոչեցեալ զԱռաքեալսն՝ գան հարին, եւ պա-
տուիրեցին՝ մի եւս խօսել յանուն Յիսուսի. եւ
արձակեցին զնոսա: * Եւ նոքա գնային խնդալով 41
յերեսաց ատենին, զի վասն անուանն արժանի
եղեն անարգելոյ: * Եւ զամենայն օր 'ի տաճա- 42
րին եւ առտնին ոչ դադարէին ուսուցանել եւ
աւետարանել զՅիսուս Քրիստոս:

ԳԼՈՒԽ Զ.

Եւ յաւուրսն յայնոսիկ 'ի բազմանալ աշա- 1
կերտացն՝ եղեւ տրտունջ Յունացն առ Հեբրա-
յեցիսն, զի արհամարհեալ լինէին 'ի պաշտա-
մանն հանապազորդի այրիք նոցա: * Կոչեցին եր- 2
կոտասանքն զբազմութիւն աշակերտացն և ա-
սեն. Ոչ է հաճոյ մեզ թողուլ զբանն Աստուծոյ
եւ պաշտել զսեղանս. * ընտրեցէք, եղբարք, 3
վկայեալս 'ի ձէնջ արս եօթն. զորս կացուցուք
'ի վերայ պիտոյից այսոցիկ. * և մեք աղօթից 4
և պաշտաման և բանին հպատակ լիցուք: * Եւ 5

հաճոյ թուեցաւ բանն առաջի ամենայն բազ-
մութեանն. եւ ընտրեցին զՍտեփաննոս, այր լի
հաւատով եւ Հոգւով Սրբով, եւ զՓիլիպպոս եւ
զՊրոքորոն եւ զՆիկանովրայ եւ զՏիմոնիոս եւ ըզ-
6 Պարմենայ եւ զՆիկողայոս զեկն Անտիոքացի. * զո-
րըս կացուցին առաջի Առաքելոցն, եւ աղօթս
7 արարեալ՝ եդին 'ի վերայ նոցա զձեռս: * Եւ
բանն Աստուծոյ աճէր, և բազմանայր թիւ ա-
շակերտացն յոյժ յԵրուսաղէմ. և բազում ժո-
ղովք 'ի քահանայիցն անսային հաւատոցն:
8 ԲԲ. * Ստեփաննոս՝ այր լի շնորհօք և զօրու-
թեամբ, առնէր արուեստս եւ նշանս մեծամե-
9 ծըս 'ի ժողովրդեանն. * Յարեան ոմանք 'ի ժո-
ղովրդենէն, որ կոչէր Լիբէացւոց և Կիւրենաց-
ւոց և Աղէքսանդրացւոց՝ եւ որ 'ի Կիլիկեցւոց եւ
10 յԱսիայ, վիճել ընդ Ստեփաննոսի. * եւ ոչ կա-
րէին զդէմ ունել զիմաստութեանն եւ զհոգ-
11 ւոյն՝ որով խօսէր: * Յայնժամ հրապուրեցին
արս ոմանս ասել զնմանէ, թէ լուաք զդորա
խօսել բանս հայհոյութեան 'ի Մովսէս եւ յԱս-
12 տուած: * Եւ խռովեցին զժողովուրդն եւ զծեր-
ունսն եւ զդպիրսն, և հասեալ 'ի վերայ յափշ-
13 տակեցին զնա եւ ածին յատեանն: * Եւ կացու-
ցին վկայս սուտս որ ասէին. Այրս այս ոչ դա-
դարէ խօսել բանս հայհոյութեան զտեղւոյն
14 սրբոյ եւ զօրինացն. * լուաք 'ի դմանէ զի ասէր,
թէ Յիսուս Նազովրեցի՝ նա քակեսցէ զտեղիս
զայս, եւ փոխեսցէ զօրէնսս զոր ետ մեզ Մովսէս:

* Եւ հայեցեալ 'ի նա ամենեքեան որ նստէին 15
յատենին , տեսին զերեսս նորա իբրեւ զերեսս
հրեշտակի :

ԳԼՈՒԽ Է .

Ասէ քահանայապետն՝ եթէ արդարեւ այդ 1
այդպէս իցէ : * Եւ նա ասէ . Արք եղբարք եւ 2
հարք , լուարուք ինձ : Աստուած փառաց երե-
ւեցաւ հօր մերում Աբրահամու , մինչդեռ 'ի
Միջագետս էր , մինչչեւ բնակեցուցեալ էր զնա
'ի Խառան . եւ ասէ ցնա . * Ել յերկրէ քումմէ եւ 3
յազգէ քումմէ , եւ եկ յերկիր՝ զոր ցուցից քեզ :
* Յայնժամ ելեալ յերկրէն Քաղդէացւոց բնա- 4
կեցաւ 'ի Խառան . եւ անտի յետ մեռանելոյ հօր
նորա , փոխեաց պանդխտեցոյց զնա յերկրիս
յայսմիկ , յորում դուք այժմ բնակեալ էք : * Եւ 5
ոչ ետ նմա ժառանգութիւն 'ի սմա , եւ ոչ քայլ
մի ոտին . եւ խոստացաւ տալ նմա զսա 'ի բնա-
կութիւն , եւ զաւակի նորա յետ նորա . եւ մինչ
ոչ գոյր նորա որդի , * Խօսեցաւ Աստուած այս- 6
պէս . Թէ եղիցի զաւակ նորա պանդուխտ յօ-
տար երկրի . եւ ծառայեցուսցեն զնա՝ եւ չարչա-
րեսցեն ամս չորեքհարիւր . * Եւ զազգն որում 7
ծառայեսցեն՝ դատեցայց ես , ասէ Աստուած .
և յետ այսորիկ ելցեն՝ եւ պաշտեսցեն զիս 'ի
տեղւոջս յայսմիկ : * Եւ ետ նմա ուխտ թլփա- 8
տութեան . եւ ապա ծնաւ զԻսահակ , եւ թլփա-

տեաց զնա յաւուր ութերորդի . և Իսահակ զ-
Յակոբ , եւ Յակոբ զերկոտասան նահապետսն :
9 * Եւ նահապետքն նախանձեալ ընդ Յովսեփայ՝
վաճառեցին յԵգիպտոս . եւ էր Աստուած ընդ
10 նմա . * եւ փրկեաց զնա յամենայն նեղութեանց
նորա , եւ ետ նմա շնորհս և իմաստութիւն ա-
ռաջի Փարաւոնի արքային Եգիպտացւոց , եւ կա-
ցոյց զնա իշխան Եգիպտացւոցն՝ եւ ամենայն
11 տան նորա : * Եւ եկն սով յամենայն երկիրն
Եգիպտոսի եւ 'ի Քանան՝ նեղութիւն մեծ , և ոչ
12 գտանէին կերակուրս հարքն մեր : * Եւ լուեալ
Յակոբայ թէ գտանի կերակուր յԵգիպտոս , ա-
13 ռաքեաց զհարսն մեր յառաջագոյն . * եւ յեր-
կրորդումն ետ ծանօթս Յովսէփ եղբարց իւրոց ,
14 և յայտնի եղեւ Փարաւոնի ազգ նորա : * Առա-
քեաց Յովսէփ եւ կոչեաց զՅակոբ զհայր իւր
եւ զամենայն ազգատոհմն՝ ոգիս եօթանասուն
15 և հինգ : * Եւ էջ Յակոբ յԵգիպտոս , եւ վախ-
16 ճանեցաւ ինքն եւ հարքն մեր . * եւ փոխեցան 'ի
Սիւքէմ , եւ եդան յայրին զոր ստացաւ Աբրա-
համ գնոց արծաթոյ յորդւոցն Եմովրայ 'ի Սիւ-
17 քէմ : * Իբրեւ մերձեցաւ ժամանակ աւետեա-
ցըն՝ զոր խոստացաւ Աստուած Աբրահամու , ա-
ճեաց ժողովուրդն՝ և բազմացաւ յԵգիպտոս ,
18 * մինչեւ յարեաւ այլ թագաւոր յԵգիպտոս , որ
19 ոչ ճանաչէր զՅովսէփ : * Նա հնարեցաւ ազգին
մերում եւ չարչարեաց զհարսն մեր , առնել
20 ընկեցիկ զմանկունս նոցա զի մի ապրեսցին : * Յո-

րում ժամանակի ծնաւ Մովսէս, և էր կայտառ
առաջի Աստուծոյ, որ եւ սնաւ 'ի տան հօր իւ-
րոյ ամիսս երիս. * Եւ յընկեցիկն առնել զնա՝ ե- 21
բարձ զնա դուստրն փարաւոնի, եւ սնոյց զնա
իւր յորդեգիրս. * եւ վարժեցաւ Մովսէս ամե- 22
նայն իմաստութեամբ Եգիպտացւոյն. եւ էր զօ-
րաւոր բանիւք եւ գործովք իւրովք: * Իբրեւ 23
լցաւ նորա քառասնամեայ ժամանակ, անկաւ
'ի սիրտ նորա շրջել զեղբարբք իւրովք՝ զորդ-
ւովք Իսրայէլի. * եւ տեսեալ զոմն զրկեալ՝ զչա- 24
րեցաւ, եւ խնդրեաց զվրէժ զրկելոյն՝ սպանեալ
զԵգիպտացին: * Զմտաւ ածէր թէ իմասցին 25
եղբարք նորա, զի Աստուած 'ի ձեռն նորա տա-
լոց էր զփրկութիւն նոցա, և նոքա ոչ իմացան:
* Եւ 'ի վաղիւ անդր երեւեցաւ նոցա մինչդեռ 26
մարտնչէինն, եւ վարեաց զնոսա 'ի խաղաղու-
թիւն. ասէ, Արք, եղբարք էք, ընդէ՞ր զրկէք
զմիմեանս: * Իսկ որ զրկէր զընկերն՝ մերժեաց 27
զնա, եւ ասէ. Ո՞ կացոյց զքեզ իշխան եւ դա-
տաւոր 'ի վերայ մեր. * միթէ սպանանե՞լ կա- 28
միցիս զիս, զոր օրինակ սպաներ երէկ զԵգիպ-
տացին: * Եւ փախեաւ Մովսէս 'ի բանիցս յայս- 29
ցանէ, և եղեւ պանդուխտ յերկրին Մադիա-
մու, ուր ծնաւն երկու որդիս:

ԲԳ. * Եւ 'ի կատարել ամացն քառասնից՝ 30
երեւեցաւ նմա յանապատին լերինն Սինայ հրեշ-
տակ Տեառն 'ի բոց հրոյ մորենւոյն: * Եւ Մովսէ- 31
սի տեսեալ՝ զարմացաւ ընդ տեսիլն. և 'ի մատ-

32 չելն նորա նշմարել՝ եղեւ ձայն Տեառն. * Ես
եմ Աստուած հարց քոց, Աստուած Աբրահա-
մու եւ Սահակայ և Յակովբայ. եւ զահի հարեալ
33 Մովսէս՝ ոչ իշխէր հայել: * Եւ ասէ ցնա Տէր.
Լոյծ զկօշիկս ոտից քոց, զի տեղիդ յորում
34 դուդ կայցես՝ երկիր սուրբ է. * տեսանելով
տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ որ յԵգիպ-
տոս, եւ լուայ հեծութեան նոցա, եւ իջի փր-
կել զնոսա, եւ արդ եկ առաքեցից զքեզ յԵ-
35 գիպտոս: * Զայն Մովսէս՝ զոր ուրացան և ա-
սէին, ո՞ կացոյց զքեզ իշխան եւ դատաւոր 'ի
վերայ մեր, զնա Աստուած իշխան և փրկիչ ա-
ռաքեաց 'ի ձեռն հրեշտակին, որ երեւեցաւ
36 նմա 'ի մորենւոջն: * Նա եհան զնոսա՝ արա-
րեալ նշանս և արուեստս յերկրին Եգիպտաց-
ւոց եւ 'ի կարմիր ծովուն եւ յանապատի՝ ամս
37 քառասուն: * Այս Մովսէս է՝ որ ասաց ցոր-
դիսն Իսրայէլի. Մարգարէ ձեզ յարուսցէ Տէր
Աստուած յեղբարց ձերոց՝ իբրեւ զիս, նմա լու-
38 իջիք: * Սա է որ եղեւ յեկեղեցւոջն յանապա-
տին ընդ հրեշտակին, որ խօսեցաւ ընդ նմա 'ի
լերինն Սինայ՝ եւ ընդ հարսն մեր, որ ընկալաւ
39 զպատգամս կենդանիս տալ մեզ: * Որում ոչ
կամեցան հնազանդ լինել հարքն մեր, այլ մեր-
ժեցին և դարձան սրտիւք իւրեանց յԵգիպտոս.
40 * եւ ասեն ցԱհարոն. արա մեզ աստուածս որ
երթիցեն առաջի մեր. զի Մովսէսն այն որ ե-
հան զմեզ յերկրէն Եգիպտացւոց՝ ոչ գիտեմք

զի եղեւ նմա ։ * Եւ արարին յաւուրսն յայնոսիկ 41
որթ, և մատուցին զոհս կռոց, և ուրախ լի-
նէին ’ի գործս ձեռաց իւրեանց ։ * Դարձոյց Աս- 42
տուած՝ և մատնեաց զնոսա ’ի պաշտօն զօրու-
թեան երկնից. որպէս և գրեալ է ’ի գիրս մար-
գարէից. Մի թէ զո՞հս և պատարագս մատու-
ցէք ինձ զամս քառասուն յանապատին, տուն
Իսրայէլի. * եւ առէք զխորանն Մողոքայ, և զաստ- 43
ղըն աստուածոյն Հռեմփայ. զպատկերսն զոր ա-
րարէք երկիր պագանել նոցա. եւ փոխեցից ըզ-
ձեզ յայն կողմ Բաբելացւոց ։ * Խորանն վկայու- 44
թեան էր ընդ հարսն մեր յանապատին, որպէս
հրաման ետ որ խօսէրն ընդ Մովսիսի՝ առնել
զայն ըստ օրինակին զոր ետես ։ * Զոր եւ ընկա- 45
լեալ բերէին հարքն մեր հանդերձ Յեսուաւ ’ի
վիճակ ազգացն՝ զորս մերժեաց Աստուած յե-
րեսաց հարցն մերոց, մինչեւ յաւուրս Դաւթի,
* որ եգիտ շնորհս առաջի Աստուծոյ, և խնդ- 46
րեաց գտանել զյարկս Աստուծոյ Յակոբայ ։ * Նա 47
եւ Սողոմոն շինեաց նմա տուն. * այլ ոչ եթէ 48
Բարձրեալն ’ի ձեռագործ տաճարս բնակէ ։ Այլ
որպէս մարգարէն ասէ. * Երկինք աթոռ իմ են, 49
եւ երկիր պատուանդան ոտից իմոց. ո՞րպիսի
տուն շինեցէք ինձ, ասէ Տէր, կամ զի՞նչ տեղի
հանգստեան իմոյ. * ո՞չ ձեռն իմ արար զայս ա- 50
մենայն ։ * Խստապարանոցք եւ անթլփատք սըր- 51
տիւք եւ ականջօք, դուք հանապազ Հոգւոյն
Սրբոյ հակառակ կայք. որպէս հարքն ձեր, եւ

52 դուք ։ * Զո՞ ’ի մարգարէիցն ոչ հալածեցին հար-
քըն ձեր, եւ սպանին զայնոսիկ որ յառաջագոյն
պատմեցին վասն գալստեան արդարոյն, որոյ
դուք այժմ մատնիչք եւ սպանողք եղերուք.
53 * ոյք առէք զօրէնս ’ի հրամանս հրեշտակաց,
եւ ոչ պահեցէք ։
54 * Եւ լուեալ զայս զայրանային ’ի սիրտս իւ-
րեանց, եւ կրճտէին զատամունս ’ի վերայ նորա ։
55 * Եւ նա էր լի Հոգւով Սրբով. հայեցաւ յեր-
կինս՝ եւ ետես զփառս Աստուծոյ, եւ զՅիսուս
զի կայր ընդ աջմէ Աստուծոյ. եւ ասէ, Ահա
տեսանեմ զերկինս բացեալ՝ եւ զՈրդի Մարդոյ
56 զի կայ ընդ աջմէ Աստուծոյ ։ * Աղաղակեալ ’ի
ձայն մեծ՝ խցին զականջս իւրեանց, և դիմեցին
57 առ հասարակ ’ի վերայ նորա. * եւ հանեալ ար-
տաքոյ քաղաքին՝ քարկոծէին, և վկայքն դնէին
զձորձս իւրեանց առ ոտս երիտասարդի միոջ՝
58 որ կոչէր Սաւուղ ։ * Եւ քարկոծ առնէին զՍտե-
փաննոս, որ կարդայր եւ ասէր. Տէ՛ր Յիսուս,
59 ընկալ զոգի իմ ։ * Եդ ծունր և աղաղակեաց ’ի
ձայն բարձր. Տէ՛ր, մի՛ համարիր դոցա զայս մե-
ղս ։ Եւ զայս իբրեւ ասաց՝ ննջեաց. եւ Սօղոս
էր կամակից սպանման նորա ։

ԳԼՈՒԽ Ը.

1 Եւ եղեւ յաւուր յայնմիկ հալածումն մեծ
’ի վերայ եկեղեցւոյն Երուսաղէմ, եւ ամենե-

քեան ցրուեցան՝ 'ի գեօղս Հրէաստանի և 'ի Սա-
մարիայ բաց յԱռաքելոցն ։ * Եւ բարձին զՍտե- 2
փաննոս արք երկիւղածք , և արարին կոծ մեծ
'ի վերայ նորա ։

ԲԴ . * Բայց Սօղոս մնասակար էր եկեղեց- 3
ւոյն . 'ի տունս տունս մտանէր , քարշեալ զարս
և զկանայս՝ մատնէր 'ի բանտ ։ * Եւ սփռեալքն 4
շրջէին աւետարանէին զբանն ։ * Իսկ Փիլիպ- 5
պոս իջեալ 'ի քաղաքն Սամարացւոց՝ քարոզէր
նոցա զՔրիստոս Յիսուս ։ * Ունկն դնէին ժողո- 6
վուրդքն բանիցն Փիլիպպոսի միաբան , 'ի լսել
նոցա եւ 'ի տեսանել զնշանսն զոր առնէր ։
* Քանզի բազումք որ ունէին զայսս պիղծս՝ ա- 7
ղաղակէին 'ի ձայն մեծ եւ ելանէին . * եւ բա- 8
զում անդամալոյծք եւ կաղք բժշկէին . * եւ ե- 9
ղեւ ուրախութիւն մեծ 'ի քաղաքին յայնմիկ ։

* Այր ոմն Սիմոն անուն , յառաջագոյն էր
'ի քաղաքին . մոգ էր և ապշեցուցանէր զազգն
Սամարացւոց , ասել զանձնէ թէ իցէ մեծ ոմն ։
* Ցոր հայէին ամենեքեան 'ի փոքուէ մինչեւ 'ի 10
մեծամեծս և ասէին . Սա է զօրութիւն Աստու-
ծոյ՝ որ կոչի մեծ ։ * Հայէին 'ի նա վասն բա- 11
զում ժամանակաց մոգութեամբքն ապշեցու-
ցանելոյ զնոսա ։ * Բայց յորժամ հաւատացին 12
Փիլիպպոսի , որ աւետարանէր վասն արքայու-
թեանն Աստուծոյ և անուանն Յիսուսի Քրիստո-
սի , մկրտէին ամենեքեան արք եւ կանայք ։
* Այլ եւ ինքն Սիմոն հաւատաց , եւ մկրտեալ 13

կանխէր առ Փիլիպպոս . տեսեալ զնշանսն եւ
զմեծամեծ զօրութիւնսն որ լինէին՝ զարմանայր ։
14 * Իբրեւ լուան որ յԵրուսաղէմ Առաքեալքն է-
ին , թէ եւ 'ի Սամարիա ընկալան զբանն Աստու-
ծոյ , առաքեցին առ նոսա զՊետրոս եւ զՅով-
15 հաննէս . * որք իջեալ կացին յաղօթս 'ի վերայ
16 նոցա , որպէս զի առցեն զհոգի սուրբ . * զի
յայնժամ չեւ եւս էր եւ ոչ 'ի վերայ միոյ նոցա
հասեալ , բայց միայն մկրտեալք էին յանուն
17 տեառն Յիսուսի ։ * Յայնժամ եդին զձեռս 'ի վե-
րայ նոցա՝ եւ առնուին հոգի սուրբ ։
18 * Տեսեալ Սիմոնի՝ թէ ձեռն 'ի վերայ դնե-
լով Առաքելոցն՝ տուեալ լինի հոգի սուրբ , մա-
19 տոյց նոցա ինչս եւ ասէ . * Տուք եւ ինձ զիշխա-
նութիւնս զայս , զի յոյր վերայ դնիցեմ զձեռս՝
20 առցէ հոգի սուրբ ։ * Եւ Պետրոս ասէ ցնա . Ար-
ծաթ քո ընդ քեզ լիցի 'ի կորուստ , զի զպար-
գեւսն Աստուծոյ համարեցար ընչիւք ստանալ .
21 * ոչ գոյ քեզ մասն եւ վիճակ 'ի բանիդ յայդ-
միկ , քանզի սիրտ քո ոչ է ուղիղ առաջի Աստու-
22 ծոյ ։ * Ապաշաւեա դու 'ի չարեացդ քո յայդ-
ցանէ , եւ աղաչեա զՏէր , թերեւս թողութիւն
23 լիցի քեզ 'ի մեղմելս խորհրդոց սրտի քոյ . * քան-
զի 'ի դառնութիւն մաղձի , եւ 'ի կնճիռն անի-
24 րաւութեան տեսանեմ զքեզ ։ * Պատասխանի
ետ Սիմոն եւ ասէ . Աղաչեցէք դուք վասն իմ
զՏէր , զի մի ինչ եկեսցէ 'ի վերայ իմ՝ յորոց
25 դուքդ ասացէք ։ * Եւ նոքա եղեալ վկայութիւն՝

խօսեցան զբանն Աստուծոյ, և դարձան յԵրու-
սաղէմ. եւ 'ի բազում գեօղս Սամարացւոցն ա-
ւետարանէին ։
ԲԵ. * Հրեշտակ Տեառն խօսեցաւ առ Փի- 26
լիպպոս եւ ասէ. Արի եւ գնա դու 'ի կողմն
հարաւոյ՝ ընդ ճանապարհ որ իջանէ յԵրուսա-
ղէմէ 'ի Գազա. զի այս է անապատ ։ * Եւ յա- 27
րեալ գնաց ։ Եւ ահաւասիկ այր մի Եթով-
պացի ներքինի՝ հզօր Կանդակայ տիկնոջ Եթով-
պացւոց, որ էր 'ի վերայ ամենայն գանձուց նո-
րա. որ եկեալ էր երկիր պագանել յԵրուսա-
ղէմ. * եւ անդրէն դարձեալ եւ նստեալ 'ի կա- 28
ռս իւրում՝ ընթեռնոյր զմարգարէն զԵսայի ։
* Ասէ հոգին ցՓիլիպպոս. Մատիր եւ յարեաց 29
'ի կառսդ յայդոսիկ ։ * Եւ ընթացեալ Փիլիպպոս՝ 30
լուաւ զի ընթեռնոյր զԵսայի մարգարէ. եւ ասէ.
Գիտիցե՞ս արդեօք զոր ընթեռնուցուդ ։ * Եւ 31
նա ասէ. զիա՞րդ կարիցեմ, թէ ոչ ոք առաջ-
նորդեսցէ ինձ ։ Եւ աղաչեաց զՓիլիպպոս՝ ելա-
նել նստել ընդ նմա ։ * Եւ գլուխ գրոյն զոր ըն- 32
թեռնոյր՝ էր այս. Իբրեւ զոչխար 'ի սպանդ վա-
րեցաւ, եւ իբրեւ զորոջ առաջի կտրչի իւրոյ
անմռունչ, այնպէս ոչ բանայ զբերան իւր. * 'ի 33
խոնարհութեան նորա դատաստան նորա բար-
ձաւ, եւ զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ. զի
բառնան յերկրէ կեանք նորա ։ * Պատասխանի 34
ետ ներքինին Փիլիպպոսի եւ ասէ. Աղաչեմ զք-
եզ, վասն ո՞յր ասէ մարգարէն զայս. վասն

35 ի՞ւր, եթէ վասն այլ ուրուք ։ * Եբաց Փիլիպ-
պոս զբերան իւր, եւ սկսեալ 'ի գրոցս յայս-
ցանէ աւետարանեաց նմա զՅիսուս Քրիստոս ։
36 * Իբրեւ երթային զճանապարհայն, եկին 'ի
ջուր ինչ. եւ ասէ ներքինին. Ահաւասիկ ջուր,
37 զի՞նչ արգելու զիս 'ի մկրտելոյ ։ * Եւ ասէ ցն-
նա. Եթէ հաւատաս բոլորով սրտիւ քով՝ մարթ
է ։ Պատասխանի ետ եւ ասէ. Հաւատամ՝ ե-
38 թէ է Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ ։ * Եւ
հրամայեաց կացուցանել զկառսն. եւ իջին եր-
կոքին 'ի ջուրն՝ Փիլիպպոս եւ ներքինին, եւ մկ-
39 կրտեաց զնա ։ * Եւ իբրեւ ելին 'ի ջրոյ անտի,
Հոգի Սուրբ եկն 'ի վերայ ներքինւոյն. եւ հրեշ-
տակ Տեառն յափշտակեաց զՓիլիպպոս, և ոչ
եւս ետես զնա ներքինին. եւ գնայր զճանա-
40 պարհ իւր ուրախութեամբ ։ * Բայց Փիլիպպոս
գտաւ յԱզովտոս, եւ շրջեալ աւետարանէր ա-
մենայն քաղաքացն, մինչեւ 'ի գալ նորա 'ի Կե-
սարիա ։

ԳԼՈՒԽ Թ.

1 ԲԶ. Իսկ Սաւղոս տակաւին լցեալ սպառնա-
լեօք եւ սպանմամբ աշակերտացն Տեառն, մա-
2 տուցեալ առ քահանայապետն՝ * խնդրեաց 'ի
նմանէ թուղթս 'ի Դամասկոս առ ժողովսն.
որպէս թէ զոք գտցէ զայնր ճանապարհաւ՝ ա-
րս կամ կանայս, կապեալս ածցէ յԵրուսաղէմ ։

* Եւ ընդ երթալն նորա՝ եղեւ մերձենալ ՚ի Դա- 3
մասկոս. յանկարծակի շուրջ զնովաւ փայլատա-
կեաց լոյս յերկնից, * եւ անկեալ յերկիր՝ լուաւ 4
բարբառ որ ասէր ցնա. Սաւուղ Սաւուղ, զի՞
հալածես զիս: * Եւ ասէ. Ո՞վ ես Տէր: Եւ նա 5
ասէ. Ես եմ Յիսուս զոր դու հալածես. (խիստ —
է քեզ ընդդէմ խթանի աքացել: * Եւ զարհու- 6
րեալ՝ եւ անշշունչ լեալ ասաց. Տէր՝ զիս զի՞նչ
կամիս առնել: * Եւ ասէ ցնա Տէր:) Այլ 7
յոտն կաց եւ մուտ ՚ի քաղաքդ, եւ պատմեսցի
քեզ՝ զինչ քեզ պարտ լիցէ առնել: Իսկ արքն որ
ընդ նմայն երթային, կային անշշունջք. զձայնն
միայն լսէին, բայց տեսանէին եւ ոչ զինչ: * Յա- 8
րեաւ Սաւուղ յերկրէ անտի, եւ աչօք բացօք ոչ
զոք տեսանէր. զձեռանէ առեալ նորա մուծին
՚ի Դամասկոս. * եւ էր անդ աւուրս երիս, եւ 9
ոչ տեսանէր. եւ ոչ եկեր եւ ոչ արբ: * Եւ էր 10
ոմն աշակերտ ՚ի Դամասկոս՝ Անանիա անուն. ա-
սէ ցնա Տէր ՚ի տեսլեան. Անանիա: Եւ նա ասէ.
Ահաւասիկ եմ Տէր: * Եւ ասէ ցնա Տէր. Յոտն 11
կաց եւ գնա ընդ փողոցն՝ որ կոչի ուղիղ, եւ
խնդրեսցես յապարանս Յուդայ՝ Սաւուղ անուն
զտարսոնացի. զի կայ դեռ յաղօթս: * Եւ ետես 12
՚ի տեսլեան այր մի Անանիա անուն, մտեալ եւ
եդեալ ՚ի վերայ նորա զձեռն, որպէս զի տեսա-
ցէ: * Պատասխանի ետ Անանիա. Տէր, լուայ ՚ի 13
բազմաց վասն առնն այնորիկ՝ որչափ արար չա-
րիս սրբոց քոց յԵրուսաղէմ: * Եւ աստ ունի իշ- 14

խանութիւն ՚ի քահանայապետացն՝ կապել զա-
15 մենեսեան որ կարդան զանուն քո: * Ասէ ցնա
Տէր. Երթ դու, զի անօթ ընտրութեան է ինձ
նա, կրել զանուն իմ առաջի հեթանոսաց եւ
16 թագաւորաց եւ որդւոցն Իսրայէլի. * քանզի
ես իսկ ցուցից նմա՝ որչափ պարտ իցէ նմա
17 չարչարել վասն անուան իմոյ: * Եւ գնաց
Անանիա եւ եմուտ յապարանսն. եւ եդեալ
՚ի վերայ նորա ձեռս, եւ ասէ. Սաւուղ եղ-
բայր, ՚ի վեր հայեաց. Տէր առաքեաց զիս,
Յիսուս՝ որ երեւեցաւ քեզ ՚ի ճանապարհին
յորում գայիր, որպէս զի տեսցես եւ լցցիս
18 հոգւով Սրբով: * Եւ վաղվաղակի անկան յաչաց
նորա իբրեւ կեղեւանք. ետես, եւ յարեաւ
19 մկրտեցաւ. եւ առեալ կերակուր զօրացաւ: * Եւ
եղեւ ՚ի Դամասկոս ընդ աշակերտսն աւուրս ինչ.
20 * եւ վաղվաղակի ՚ի ժողովուրդսն քարոզեաց ըզ-
21 Յիսուս, թէ սա է Որդին Աստուծոյ: * Զարմա-
ցեալ էին ամենեքեան որ լսէին, եւ ասէին.
Ո՞չ սա էր որ աւարն հարկանէր յԵրուսաղէմ
զայնոսիկ որ կարդային զանուն Յիսուսի. եւ
այսր նմին իրի եկեալ էր, զի կապեալս զնոսա
22 տարցի առ քահանայապետսն: * Այլ Սաւուղ
առաւել եւս զօրանայր՝ եւ յաղթահարէր ըզ-
հրէայսն, որ բնակեալ էին ՚ի Դամասկոս. եւ
23 խելամտեցուցանէր թէ սա է Քրիստոսն: * Իբ-
րեւ կատարէին աւուրք բազումք, խորհեցան
24 հրեայքն սպանանել զնա: * Յայտնեցաւ Սաւղոսի

նենգութիւնն նոցա. քանզի պահէին զդրունսն
'ի տուէ եւ 'ի գիշերի, որպէս զի սպանցեն զը-
նա ։ * Եւ առեալ զնա աշակերտացն 'ի գիշերի՝ 25
ընդ պարիսպն կախեալ իջուցին վանդակաւ ։
* Իբրեւ եկն Սաւղոս յԵրուսաղէմ, ընդելանէր 26
յարել յաշակերտսն. եւ ամենեքեան երկնչէին
'ի նմանէ, չհաւատային թէ իցէ աշակերտ ։ * Բայց 27
Բառնաբաս առեալ զնա ած առ Առաքեալսն,
եւ պատմեաց նոցա՝ որպէս 'ի ճանապարհին
ետես զՏէր, եւ զի խօսեցաւ ընդ նմա. եւ զի
'ի Դամասկոս համարձակեցաւ յանուն Յիսուսի.
* Եւ էր ընդ նոսա մտանել եւ ելանել յԵրու- 28
սաղէմ, համարձակեալ յանուն Տեառն. * խօսէր 29
եւ վիճէր ընդ Յոյնսն, եւ նոքա խորհէին սպա-
նանել զնա ։ * Եւ իմացեալ եղբարց՝ իջուցին զը- 30
նա 'ի Կեսարիա, եւ առաքեցին զնա 'ի Տարսոն ։
* Բայց եկեղեցին ընդ ամենայն Հրէաստան եւ 31
'ի Սամարիա և 'ի Գալիլեա ունէր խաղաղութիւն,
շինեալ եւ երթեալ զհետ երկիւղի Տեառն, եւ
մխիթարութեամբ հոգւոյն Սրբոյ բազմանայր ։

ԲԷ. * Եւ եղեւ 'ի շրջելն Պետրոսի առ ա- 32
մենեքումբք՝ իջանել նմա եւ առ սուրբսն որ
բնակեալ էին 'ի Լիւդդա. * եւ եգիտ անդ այր 33
մի, որում անուն էր Ենեա, ութեմեան դնէր
'ի մահիճս անդամալոյծ ։ * Եւ ասէ ցնա Պետ- 34
րոս. Ենեա, բժշկէ զքեզ Տէր Յիսուս Քրիստոս,
արի եւ քեզէն թօթափեա զանկողինս քո ։
Եւ վաղվաղակի յարեաւ ։ * Եւ տեսին զնա 35

ամենեքեան որ բնակեալ էին 'ի Լիւդդա եւ 'ի
36 Սարոնիա, որք եւ դարձան իսկ 'ի Տէր ։ * Եւ
'ի Յոպպէ էր կին ոմն աշակերտեալ՝ անուն Տա-
բիթա, որ թարգմանեալ կոչի այծեմնիկ. սա
էր լի գործովք բարեօք եւ ողորմութեամբք
37 զոր առնէր ։ * Եւ եղեւ յաւուրսն յայնսիկ
հիւանդանալ նմա եւ մեռանել. լուացին զը-
38 նա եւ եդին 'ի դստիկոնի անդ ։ * Եւ մերձ էր
Լիւդդա 'ի Յոպպէ. աշակերտացն լուեալ եթէ
Պետրոս անդ է, առաքեցին երկուս արս առ
նա, աղաչել՝ զի մի դանդաղեսցի գալ առ նո-
39 սա ։ * Եւ յարուցեալ Պետրոս եկն ընդ նոսա.
զոր իբրեւ եկն՝ հանին 'ի վերնատունն, եւ
կացին շուրջ զնովաւ այրիքն ամենայն. լային եւ
ցուցանէին զձորձս եւ զհանդերձս, որչափ առ-
40 նէր նոցա այծեմնիկն ։ * Եւ հանեալ արտաքս
զամենեսեան Պետրոսի, եդ ծունր՝ եկաց յա-
ղօթս. եւ դարձաւ 'ի մարմինն եւ ասէ. Տա-
բիթա, արի կաց յանուն Տեառն Յիսուսի Քրիս-
տոսի ։ Եւ նա եբաց զաչս իւր, եւ տեսեալ
41 զՊետրոս՝ նստաւ կանգուն. * ձեռն ետ նմա
եւ յարոյց զնա. կոչեաց զսուրբսն եւ զայրիսն,
42 առաջի կացոյց զնա կենդանի ։ * Եւ յայտնի ե-
ղեւ ընդ ամենայն Յոպպէ, եւ հաւատացին
43 բազումք 'ի Տէր ։ * Եւ եղեւ աւուրս բազումս
լինել նմա 'ի Յոպպէ՝ առ ումեմն Սիմովնի խա-
ղախորդի ։

ԳԼՈՒԽ Ժ.

ԳԿ. Այր մի էր 'ի Կեսարիա՝ անուն Կոռ- 1
նելիոս, հարիւրապետ՝ 'ի գնդէ որ կոչէր Իտա-
լացի, * բարեպաշտօն եւ երկիւղած յԱստուծոյ 2
ամենայն տամբ իւրով. առնէր ողորմութիւնս
բազումս 'ի ժողովրդեանն, եւ յաղօթս կայր
առ Աստուած յամենայն ժամ: * Ետես 'ի տեսի- 3
լեան յայտնապէս զիններորդ ժամու աւուրն՝
զհրեշտակ Աստուծոյ զի մտանէր առ նա եւ ա-
սէր ցնա. Կոռնելիէ: * Եւ նա հայեցեալ ընդ 4
նա՝ զարհուրեցաւ, եւ ասէ. Զի՞ է տէր: Եւ
ասէ ցնա. Աղօթք քո եւ ողորմութիւնք քո ելին
յիշատակաւ առաջի Աստուծոյ. * եւ արդ յղեա 5
արս 'ի Յոպպէ՝ եւ կոչեա զՍիմոն զոմն՝ որ կոչի
Պետրոս. * Նա մտեալ է առ Սիմոնի ուրումն խա- 6
ղախորդի, որոյ է տունն մերձ 'ի ծով: * Եւ իբ- 7
րեւ գնաց հրեշտակն որ խօսէր ընդ նմա, կո-
չեաց երկուս 'ի ծառայից, եւ զինուոր մի բա-
րեպաշտօն 'ի սպասաւորացն իւրոց, * եւ պատ- 8
մեալ նոցա զամենայն՝ առաքեաց զնոսա 'ի Յոպ-
պէ: * Եւ 'ի վաղիւ անդր 'ի ճանապարհ ան- 9
կանել նոցա եւ մօտ 'ի քաղաքն լինել, ել Պետ-
րոս 'ի տանիսն կալ յաղօթս զվեցերորդ ժա-
մուն. քաղցեաւ, եւ կամէր ճաշակել: * Եւ 'ի 10
պատրաստելն նոցա՝ եղեւ 'ի վերայ նորա զար-
մացումն. * եւ տեսանէ զերկինս բացեալ. եւ 11

զչորեցունց ծագաց կախեալ անօթ ինչ իբրեւ
կտաւոյ մեծի իջեալ նստեալ 'ի վերայ երկրի.
12 * յորում էր ամենայն չորքոտանիք եւ սողունք
13 երկրի եւ թռչունք երկնից. * եւ եղեւ ձայն
14 առ նա. Արի Պետրոս, զեն եւ կեր: * Եւ
Պետրոս ասէ. Քաւ լիցի, Տէր, զի ոչ երբէք
15 կերայ խառնակ ինչ եւ անսուրբ: * Ձայն եղեւ
կրկին անգամ առ նա. Զոր Աստուած սրբեաց՝
16 դու մի՛ պղծեր: * Այս եղեւ երիցս, եւ վե-
17 րացաւ անօթն յերկինս: * Եւ մինչդեռ զարմա-
ցեալ էր ընդ միտս Պետրոս՝ թէ զինչ իցէ տե-
սիլն զոր ետես, ահա արքն առաքեալք 'ի Կոռ-
նելեայ՝ հարցին զապարանիցն Սիմոնի, կացին
18 առ դրանն, * կոչեցին եւ հարցանէին, եթէ
19 Սիմոն՝ որ կոչի Պետրոս՝ աստ մնեա՞լ իցէ: * Եւ
մինչդեռ Պետրոս զմտաւ ածէր վասն տեսլեանն,
ասէ Հոգին ցնա. Ահաւասիկ արք ոմանք խնդ-
20 րեն զքեզ. * այլ արի էջ՝ եւ երթ ընդ նոսա
առանց իրիք խղճելոյ, զի ես առաքեցի զնոսա:
21 * Եւ իբրեւ էջ Պետրոս առ նոսա, ասէ. Ահա-
ւասիկ ես եմ զոր խնդրէքն. զի՞նչ իրք են՝ վասն
22 որոյ եկիք: * Եւ նոքա ասեն. Կոռնելիոս հա-
րիւրապետ՝ այր արդար եւ երկիւղած յԱստու-
ծոյ, վկայեալ յամենայն ազգէն Հրէից, հրա-
ման առ 'ի հրեշտակէ սրբոյ՝ կոչել զքեզ 'ի
23 տուն իւր եւ լսել բանս 'ի քէն: * Կոչեաց զնո-
սա 'ի ներքս եւ առ իւր ագոյց: Եւ 'ի վաղիւ
անդր յարուցեալ Պետրոս գնաց ընդ նոսա. եւ

ամենք յեղբարց անտի որ ’ի Յոպպէ էին՝ եկին
ընդ նմա ։ * Եւ ’ի վաղիւ անդր մտին ’ի Կեսա- 24
րիա . եւ Կոռնելիոս մնայր նոցա . կոչեցեալ
զազգատոհմն իւր եւ զկարեւոր բարեկամսն ։
ԳԲ . * Եւ եղեւ ’ի մտանելն Պետրոսի , ընդ 25
առաջ եղեւ նմա Կոռնելիոս , անկեալ առ ոտս
նորա երկիր պագանէր ։ * Եւ Պետրոս կանգնեաց 26
զնա եւ ասէ . Յո՛տն կաց , եւ ես ինքն մարդ
եմ ։ * Եւ խօսելով ընդ նմա եմուտ ’ի ներքս , 27
եւ գտանէր անդ ժողովեալ զբազումս ։ * Եւ 28
ասէ ցնոսա . Դուք ինքնին գիտէք՝ որպէս ան-
մարթ է առն Հրէի հպել կամ մերձենալ առ
այլազգի . եւ ինձ Աստուած եցոյց՝ մի՛ զոք խառ-
նակ կամ անսուրբ ասել ’ի մարդկանէ ։ * Վասն 29
այսորիկ եւ առանց ընդ բանս ինչ անցելոյ եկի
կոչեցեալ . բայց արդ հարցանեմ , յի՞նչ պէտս
կոչեցէք զիս ։ * Եւ Կոռնելիոս ասէ . Յառաջ 30
քան զչորս աւուրս մինչ ցայս ժամ՝ կայի յա-
ղօթս յիննն ժամն ’ի տան իմում՝ եւ ահա այր մի
եկն եկաց առաջի իմ ’ի հանդերձս սպիտակս ,
* եւ ասէ . Կոռնելիէ , լսելի եղեն աղօթք քո . 31
եւ ողորմութիւնք քո յիշեցան առաջի Աստու-
ծոյ ։ * Եւ արդ յղեա ’ի Յոպպէ , եւ կոչեա 32
զՍիմոն՝ որ կոչեցեալն է Պետրոս . սա մտեալ է
’ի տան Սիմոնի ուրուամն խաղախորդի մերձ ’ի
ծով . որ եկեսցէ եւ խօսեսցի ընդ քեզ ։ * Եւ 33
ես իսկ եւ իսկ յղեցի առ քեզ . դու բարւոք ա-
րարեր զի եկիր . արդ ամենեքեան մեք առա-

ջի Աստուծոյ կամք , լսել զամենայն որ հրամայ-
34 եալ է քեզ ’ի Տեառնէ ։ * Եբաց Պետրոս զբե-
րան իւր , եւ ասէ . Ճշմարտութեամբ հասեալ
եմ , զի ոչ գոյ ակնառութիւն առաջի յԱստու-
35 ծոյ . * այլ յամենայն ազգս՝ որ երկնչին ’ի նմանէ
եւ գործեն զարդարութիւն՝ ընդունելի է նմա ։
36 * Զբանն առաքեաց որդւոցն Իսրայելի՝ աւե-
տարանել զխաղաղութիւն ’ի ձեռն Յիսուսի Քրի-
37 ստոսի . սա է ամենայնի Տէր ։ * Դուք ինքնին
գիտէք զբանն , որ եղեւ ընդ ամենայն Հրէաս-
տան սկսեալ ’ի Գալիլեէ , յետ մկրտութեանն
38 զոր քարոզեաց Յովհաննէս . * զՅիսուս որ ’ի Նա-
զարեթէ , զոր օծ Աստուած Հոգւով Սրբով եւ
զօրութեամբ , որ շրջեցաւ բարի առնել՝ եւ
բժշկել զամենայն ըմբռնեալսն ’ի սատանայէ ,
39 զի Աստուած էր ընդ նմա ։ * Եւ մեք վկայեմք
ամենայնի զոր արար յերկրին Հրէաստանի եւ
յԵրուսաղէմ . զոր եւ սպանին կախեալ զփայ-
40 տէ . * զնա Աստուած յարոյց յերրորդ աւուր ,
41 եւ ետ նմա յայտնի լինել . * ոչ ամենայն ժողո-
վրդեանն , այլ մեզ վկայիցս՝ յառաջագոյն ընտ-
րելոցս յԱստուծոյ , որք և կերաք եւ արբաք ընդ
42 նմա յետ յարութեան նորա ’ի մեռելոց ։ * Եւ
պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն՝ եւ
վկայութիւն դնել թէ նա է սահմանեալն յԱս-
տուծոյ դատաւոր կենդանեաց եւ մեռելոց .
43 * Նմա ամենայն մարգարէքն վկայեն , թողու-
թիւն մեղաց առնուլ անուամբ նորա ամենայն

հաւատացելոց 'ի նա ։ * Եւ մինչդեռ խօսէր 44
Պետրոս զբանս զայս. հանգեաւ Հոգին Սուրբ 'ի
վերայ ամենեցուն՝ որ լսէին զբանն ։ * Զարմա- 45
ցան՝ որք 'ի թլփատութենէ անտի հաւատա-
ցեալք եկեալ էին ընդ Պետրոսի, զի եւ 'ի հե-
թանոսս պարգեւք Հոգւոյն Սրբոյ զեղուին,
* քանզի լսէին 'ի նոցանէ խօսել լեզուս եւ մե- 46
ծացուցանել զԱստուած ։ * Յայնժամ պատաս- 47
խանի ետ Պետրոս. Միթէ զջուրն ոք արգելո՞ւլ
կարէ առ 'ի չմկրտելոյ զոսա, որք եւ զՀոգին
Սուրբ ընկալան որպէս եւ մեք ։ * Եւ հրամա- 48
յեաց նոցա մկրտել յանուն Յիսուսի Քրիստոսի.
յայնժամ աղաչեցին զնա լինել անդ աւուրս ինչ ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Գ.Գ. Լուան Առաքեալքն եւ եղբարքն որք 1
էին 'ի կողմանս Հրէաստանի, զի եւ 'ի հեթա-
նոսս ընկալան զբանն Աստուծոյ ։ * Բայց յորժամ 2
ել Պետրոս յԵրուսաղէմ, խղճէին 'ի նմանէ որ
'ի թլփատութենէ անտի հաւատացեալքն, * եւ 3
ասէին, եթէ եմուտ առ արս անթլփատս եւ
եկեր ընդ նոսա ։ * Եւ սկսաւ Պետրոս պատ- 4
մել նոցա կարգաւ՝ եւ ասէ. * Ես էի 'ի քաղաքին 5
Յոպպէ յաղօթս, եւ տեսի զարմացման տեսիլ.
իջանել անօթ ինչ իբրեւ կտաւոյ մեծի, զչորե-
ցունց ոտանոց կախեալ յերկնից՝ եւ եհաս մին-
չեւ առ իս. * յոր պշուցեալ հայէի, եւ տեսի 6

զչորքոտանիս երկրի եւ զգազանս եւ զսողունս,
7 եւ զթռչունս երկնից. * եւ լուայ բարբառ որ
8 ասէր ցիս. արի, Պետրոս, զե՛ն եւ կեր. * եւ ա-
սեմ. քաւ լիցի, Տէր, զի խառնակ ինչ եւ ան-
9 սուրբ ոչ երբէք եմուտ 'ի բերան իմ ։ * Պատաս-
խանի ետ ինձ երկիցս անգամ բարբառն յերկ-
նից, զոր Աստուած սրբեաց՝ դու մի՛ խառնակ
10 համարիր. * այս եղեւ երիցս, եւ վերացաւ
11 դարձեալ ամենայն անօթն յերկինս ։ * Եւ ահա
անդէն երեք արք եկին կացին առ ապարանիցն՝
ուր եմ էի, առաքեալք 'ի Կեսարիայ առ իս.
12 * եւ ասէ ցիս Հոգին՝ երթալ ընդ նոսա, եւ մի՛
ինչ խղճել. եկին ընդ իս եւ սոքա վեցեքին եղ-
13 բարքս, եւ մտաք 'ի տուն առնն այնորիկ ։ * Եւ
պատմեաց մեզ՝ որպէս ետես զհրեշտակն 'ի
տան իւրում, զի կայր եւ ասէր ցնա. առաքեա
'ի Յոպպէ, եւ կոչեա զՍիմոն զկոչեցեալն Պետ-
14 րոս, * որ խօսեսցի բանս ընդ քեզ, որովք կեց-
15 ցես դու եւ ամենայն տուն քո ։ * Եւ իբրեւ
սկսայ խօսել՝ եկն Հոգին Սուրբ 'ի վերայ նոցա՝
16 որպէս 'ի վերայ մեր իսկզբանն ։ * Յիշեցի զբանն
Տեառն զոր ասէրն. Յովհաննէս մկրտեաց 'ի ջուր,
17 բայց դուք մկրտեսջիք 'ի Հոգին Սուրբ ։ * Իսկ ե-
թէ զհաւասարական պարգեւն ետ Աստուած նո-
ցա որպէս եւ մեզ՝ 'ի հաւատալն 'ի Տէր Յիսուս
Քրիստոս, ես զի՞նչ կարող էի արգելուլ զԱս-
18 տուած ։ * Եւ լուեալ զայս՝ լռեցին, եւ փառա-
ւոր առնէին զԱստուած եւ ասէին. Ուրեմն եւ

'ի հեթանոսս ետ Աստուած զապաշխարութիւն
կենաց ։
ԳԴ. * Եւ ցրուեալքն 'ի նեղութենէն որ 19
եղեւ 'ի վերայ Ստեփաննոսի՝ հասին մինչեւ 'ի
փիւնիկէ եւ 'ի Կիւպրոս եւ յԱնտիոք. ոչ ու-
մեք խօսէին զբանն՝ բայց միայն Հրէից ։ * Եւ է- 20
ին ոմանք 'ի նոցանէ արք Կիւպրացիք եւ Կիւ-
րենացիք, որք մտեալ յԱնտիոք՝ խօսէին ընդ Յոյն-
սն, աւետարանեալ Տէր զՅիսուս ։ * Եւ էր ձե- 21
ռըն Տեառն ընդ նոսա, եւ բազմութիւն հաւա-
տացելոց դարձաւ 'ի Տէր ։ * Լու եղեւ բանս այս 22
յականջս եկեղեցւոյն որ էր յԵրուսաղէմ՝ վասն
նոցա. եւ առաքեցին զԲառնաբաս մինչեւ յԱն-
տիոք ։ * Որ իբրեւ եկն ետես զշնորհսն Աստու- 23
ծոյ՝ ուրախ եղեւ, եւ մխիթարէր զամենեսեան՝
յօժարութեամբ սրտի կալ նոցա 'ի Տէր. * զի էր 24
այր զուարթամիտ եւ լի Հոգւով Սրբով եւ հա-
ւատովք. եւ յաւելաւ ժողովուրդ բազում
Տեառն ։ * Եւ ել 'ի Տարսոն խնդրել զՍաւղոս, եւ 25
գտեալ զնա ած յԱնտիոք ։ * Եւ եղեւ նոցա զամն 26
ողջոյն ժողովել յեկեղեցին, եւ ուսուցանել ժո-
ղովուրդ բազում, եւ անուանել նախ յԱնտիոք
զաշակերտեալսն՝ քրիստոնեայս ։
* Ընդ աւուրսն ընդ այնոսիկ իջին յԵրու- 27
սաղեմէ մարգարէք յԱնտիոք ։ * Յարուցեալ 28
մի ոմն 'ի նոցանէ՝ անուն Ագաբոս, նշանակեաց
Հոգւովն՝ սով մեծ լինել ընդ ամենայն աշխարհ,
որ եղեւ առ Կղաւդեաւ ։ * Բայց յաշակերտաց 29

անտի՝ որպէս զիարդ կարող ոք էր, իւրաքան-
չիւր ոք 'ի նոցանէ որոշեցին առաքել 'ի պէտս
եղբարցն՝ որ բնակեալ էին 'ի Հրէաստանի.
30 * զոր եւ արարին իսկ՝ առաքեալ առ երիցունս
'ի ձեռն Բառնաբայ եւ Սաւղոսի ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 ԳԵ. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ արկ Հե-
րովդէս արքայ ձեռն՝ չարչարել զոմանս յեկե-
2 ղեցւոյն. * եւ սպան զՅակովբոս զեղբայր Յով-
3 հաննու սրով ։ * Ետես եթէ հաճոյ է Հրէիցն,
4 յաւել եւս ունել զՊետրոս. * եւ էին աւուրք
բաղարջակերաց. զոր իբրեւ կալաւ՝ եդ 'ի բան-
տի, եւ մատնեաց չորից չորրորդաց զինուո-
րաց պահել զնա. եւ կամէր յետ զատկին ա-
5 ծել զնա ժողովրդեանն ։ * Եւ Պետրոս 'ի պա-
հեստի էր 'ի բանտին, եւ աղօթք ստէպ լինէ-
6 ին յեկեղեցւոյն վասն նորա առ Աստուած ։ * Իբ-
րեւ կամեցաւ զնա ածել Հերովդէս, 'ի գիշերին
յայնմիկ էր Պետրոս 'ի քուն 'ի մէջ երկուց զի-
նուորաց՝ կապեալ կրկին շղթայիւք, եւ պա-
7 հապանքն առաջի դրանն պահէին զբանտն ։ * Եւ
ահա Հրեշտակ Տեառն եկն եկաց 'ի վերայ, եւ
լոյս ծագեաց 'ի տանն եւ խթեաց զկողն Պետ-
րոսի, յարոյց զնա եւ ասէ. Արի վաղվաղակի ։
8 Եւ անկան շղթայքն 'ի ձեռաց նորա ։ * Եւ ա-
սէ ցնա Հրեշտակն. Ած զգօտի քո, եւ արկ

զհողաթափս յոտս քո ։ Եւ արար այնպէս ։ Եւ
ասէ ցնա . Արկ զձորձս քո , եւ եկ զհետ իմ ։
*Եւ ելեալ երթայր զհետ , եւ ոչ գիտէր՝ եթէ 9
ճշմարիտ իցէ որ ինչ եղեւն 'ի հրեշտակէն . զի
համարէր երազ տեսանել ։ *Եւ իբրեւ անցին 10
նոքա ըստ մի պահ եւ ըստ երկուս , եկին
մինչեւ 'ի դուռնն երկաթի՝ որ հանէր 'ի քա-
ղաքն , որ ինքնին բացաւ նոցա , եւ մտեալ ան-
ցին ընդ փողոց մի , եւ վաղվաղակի 'ի բաց ե-
կաց 'ի նմանէ հրեշտակն ։ *Եւ Պետրոս իբրեւ 11
'ի միտս եղեւ , ասէ . Արդ գիտեմ ճշմարիտ ե-
թէ առաքեաց Տէր զհրեշտակ իւր , եւ փրկեաց
զիս 'ի ձեռաց Հերովդի , եւ յամենայն ակնկա-
լութենէ ժողովրդեանն հրէից ։ *Եւ լեալ 'ի մի- 12
տս՝ եկն 'ի տուն Մարեմու մօր Յովհաննու , որ
կոչեցաւն Մարկոս , ուր էին բազումք ժողովեալ
եւ աղօթս առնէին ։ *Եւ բախեալ զդուրս 13
տանն՝ մատեաւ աղախին մի ունկն դնել , որում
անուն էր Հռովդէ . *եւ ծանուցեալ զձայնն 14
Պետրոսի՝ 'ի խնդալոյն ոչ եբաց զդուռն , 'ի ներ-
քս ընթացեալ պատմեաց , եթէ Պետրոս առ
դրանն կայ ։ *Նոքա ասեն ցնա , Մոլիս ։ Եւ նա 15
եւս պնդէր՝ թէ այդպէս է . եւ նոքա ասէին .
Հրեշտակ նորա իցէ ։ *Եւ Պետրոս ստէպ բախ- 16
խէր . իբրեւ բացին՝ տեսին զնա եւ զարմացան ։
*Եւ նա ձեռամբ ցուցանէր նոցա լռել . եւ 17
պատմեաց որպէս եւ Տէր եհան զնա 'ի բանտէն ,
եւ ասէ . Պատմեցէք Յակոբայ եւ եղբարց զայս ։

18 Եւ ելեալ գնաց յայլ տեղի ։ *Եւ իբրեւ եղեւ
այգ , էր խռովութիւն մեծ 'ի մէջ զինուորացն .
19 զի՞ արդեօք Պետրոսն եղեւ ։ *Իսկ Հերովդէս
իբրեւ խնդրեաց զնա՝ եւ ոչ եգիտ , հարցեալ
զպահապանսն՝ հրամայեաց սպանանել , եւ է-
ջեալ 'ի Հրէաստանէ 'ի Կեսարիա՝ եւ անդ լինէր ։
20 *Եւ էր Հերովդէս ցասմամբ ընդ Տիւրացիս եւ
ընդ Սիդոնացիս . եւ նոքա առ հասարակ եկին
առ նա , եւ 'ի բանի արարեալ զԲղաստոս սենե-
կապետ արքային՝ խնդրէին զխաղաղութիւն վասն
21 կերակրելոյ երկրին նոցա յարքունուստ ։ *Յա-
ւուր միում յերեւելում՝ Հերովդէս զգեցեալ էր
զհանդերձ թագաւորութեան եւ նստէր յա-
22 տենի , եւ խօսէր ընդ նոսա հրապարակաւ . *եւ
ամբոխն աղաղակէր , թէ Աստուծոյ բարբառ է ,
23 եւ ոչ մարդոյ ։ *Եւ անդէն եհար զնա հրեշտակ
Տեառն , փոխանակ զի ոչ ետ փառս Աստուծոյ .
24 եւ եղեալ որդնալից՝ սատակեցաւ ։ *Եւ բանն
Աստուծոյ աճէր եւ բազմանայր ։
25 Գ.Զ. *Բառնաբաս եւ Սաւղոս դարձան յե-
րուսաղեմէ՝ իբրեւ կատարեցին զպաշտօնն . ա-
ռեալ էր ընդ իւրեանս եւ զՅովհաննէս՝ որ կո-
չեցաւն էր Մարկոս ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Էին ոմանք յԱնտիոք ըստ եկեղեցւոյն մար-
գարէք եւ վարդապետք , Բառնաբաս եւ Շմա-

ուն կոչեցեալն Նիգեր, եւ Ղուկիոս Կիւրենացի,
եւ Մանայէն դայեկորդի Հերովդի չորրորդա-
պետի, եւ Սաւղոս։ * Մինչդեռ ՚ի պաշտաման 2
Տեառն կային եւ պահէին, ասէ Հոգին Սուրբ.
Որոշեցէք ինձ զԲառնաբաս եւ զՍաւղոս ՚ի գործ՝
յոր կոչեցեալ է իմ զդոսա։ *Յայնժամ պահեալ 3
եւ աղօթս արարեալ, եդին ձեռն ՚ի վերայ նո-
ցա եւ արձակեցին։ * Եւ նոքա առաքեալք ՚ի 4
Հոգւոյն Սրբոյ՝ իջին ՚ի Սելեւկիա, եւ անտի նա-
ւեցին ՚ի Կիւպրոս։ * Եւ հասեալ ՚ի Սաղամինա՝ 5
պատմէին զբանն Աստուծոյ ՚ի ժողովուրդս Հր-
էիցն. ունէին եւ զՅովհաննէս պաշտօնեայ։
* Շրջեցեալ ընդ ամենայն կղզին մինչեւ ՚ի Պափոս, 6
գտին անդ այր զոմն մոգ, սուտ մարգարէ՝ Հր-
էայ, որում անուն էր Բարյեսու. * որ էր ընդ 7
փոխանակի բդեշխին Սերգեա Պաւղոսի առն ի-
մաստնոյ. նորա աղաչեալ զԲառնաբաս եւ զՍ-
աւղոս՝ խնդրէր լսել զբանն Աստուծոյ։ * Ընդ- 8
դէմ եկաց նոցա Եղիմաս՝ մոգ, քանզի այսպէս
թարգմանի անուն նորա, խնդրէր շրջել զփո-
խանակ բդեշխին ՚ի հաւատոց։ * Իսկ Սաւղոս, 9
որ եւ Պաւղոսն, լցեալ Հոգւով Սրբով՝ հայեցաւ
՚ի նա * եւ ասէ. Ո՛վ լի ամենայն նենգութեամբ 10
եւ խորամանկութեամբ՝ որդի սատանայի եւ
թշնամի ամենայն արդարութեան, ո՞չ դադարես ՚ի
թիւրելոյ զճանապարհս Տեառն ուղիղս. * Եւ 11
արդ ահա ձեռն Տեառն ՚ի վերայ քո, եւ եղի-
ցիս կոյր՝ չտեսանել զարեւ մինչեւ ՚ի ժամանակ

մի։ Եւ անդէն անկաւ ՚ի վերայ նորա մէգ եւ
12 խաւար, եւ շրջէր խնդրէր առաջնորդս։ *Յայն-
ժամ տեսեալ փոխանակի բդեշխին զեղեալն որ ե-
ղեն՝ հաւատաց, զարմացեալ ընդ վարդապետու-
թիւնն Տեառն։

13 Գ Ի. * Եւ ամբարձեալ ՚ի Պափէ Պաւղոսեանցն՝
եկին ՚ի Պերգէ Պամփիւլեայ։ Յովհաննէս մեկ-
14 նեալ ՚ի նոցանէ դարձաւ յԵրուսաղէմ. * եւ նո-
քա գնացեալ ՚ի Պերգեայ՝ եկին յԱնտիոք Պիսի-
դեայ, եւ մտեալ ՚ի ժողովուրդն յաւուր շաբա-
15 թու՝ նստան։ * Եւ յետ ընթեռնլոյ զօրէնսն եւ
զմարգարէս, առաքեցին առ նոսա ժողովրդա-
պետքն՝ եւ ասեն. Արք եղբարք՝ եթէ իցէ ՚ի
ձեզ բանք մխիթարութեան առ ժողովուրդդ՝
խօսեցարուք։

16 * Յառն եկաց Պաւղոս՝ շարժեաց զձեռն, եւ
ասէ. Արք Իսրայելացիք, եւ որք երկնչիք յԱս-
17 տուծոյ, լուարուք. * Աստուած ժողովրդեանս
այսորիկ Իսրայէլի՝ ընտրեաց զհարսն մեր, եւ
զժողովուրդն բարձրացոյց ՚ի պանդխտութեան
յերկրին Եգիպտացւոց, եւ ՚ի բազուկ բարձր
18 եհան զնոսա անտի։ * Եւ իբրեւ քառասնամեայ
19 ժամանակ կերակրեաց զնոսա յանապատի, * եւ
քակեալ ազգս եօթն յերկրին Քանանու՝ ժառան-
20 գեցոյց նոցա զերկիր նոցա * իբրեւ ամս չորեք հա-
րիւր եւ յիսուն։ Եւ յետ այսորիկ ետ նոցա դա-
21 տաւորս մինչեւ ՚ի Սամուէլ մարգարէ, * եւ անտի
յաւուր խնդրեցին թագաւոր, եւ ետ նոցա

Աստուած զՍաւուղ որդի Կիսեայ , այր յազգէ
Բենիամինի , ամս քառասուն ։ * Եւ իբրեւ փո- 22
խեաց զնա , յարոյց նոցա զԴաւիթ թագաւոր ,
որում եւ ասաց վկայութեամբ ‖ գտի զԴաւիթ
որդի Յեսսեայ՝ այր ըստ սրտի իմում, որ արաս-
ցէ զամենայն զկամս իմ ։ * Ի սորա զաւակէ Ա- 23
տուած ըստ աւետեացն յարոյց Իսրայէլի փր-
կիչն Յիսուս , * ըստ յառաջագոյն քարոզութեա- 24
նըն Յովհաննու առաջի երեսաց մտի նորա՝ մը-
կրտութիւն ապաշխարութեան ամենայն ժո-
ղովրդեանն Իսրայէլի ։ * Եւ իբրեւ լնոյր Յովհան- 25
նէս զընթացսն , ասէր . Զո՞ ոք կարծէք զինէն
թէ իցեմ . չեմ ես այն . այլ ահա գայ զկնի իմ՝
որում չեմ արժանի զկօշիկս ոտիցն լուծանել ։
* Արք եղբարք , որդիք աբրահամեան տոհմին , 26
եւ որ ՚ի ձեզ երկիւղածք իցեն յԱստուծոյ , ձեզ
բանս այս փրկութեան առաքեցաւ ։ * Բայց որ 27
բնակեալ են յԵրուսաղէմ , եւ իշխանք նոցա՝
անծանօթ եղեն ՚ի նմանէ , եւ ըստ բարբառոյ
մարգարէիցն՝ որ զամենայն շաբաթս ընթեռ-
նուին՝ դատեալ կատարեցին . * եւ ոչ մի ինչ 28
պատճառս մահու գտեալ՝ խնդրեցին ՚ի Պիղա-
տոսէ սպանանել զնա ։ * Եւ իբրեւ կատարեցին 29
զամենայն՝ որ վասն նորա գրեալ էր , իջուցեալ
՚ի փայտէն՝ եդին ՚ի գերեզմանի ։ * Այլ Աս- 30
տուած յարոյց զնա ՚ի մեռելոց , որ երեւեցաւ
աւուրբք բազմօք այնոցիկ , * որ ելեալ էին ընդ 31
նմա ՚ի Գալիլեէ յԵրուսաղէմ , որք եւ արդ իսկ

32 վկայք են նորա առ ժողովուրդն ։ * Եւ մեք ձեզ
աւետարանեմք զխոստումն որ առ հարսն ե-
33 ղեալ էր . * զի զնոյն Աստուած կատարեաց առ
մեզ որդիս նոցա՝ յարուցեալ զՅիսուս . որպէս
եւ ՚ի Սաղմոսին գրեալ է՝ յերկրորդում . Որդի
34 իմ ես դու՝ ես այսօր ծնայ զքեզ ։ * Եւ զի յա-
րոյց զնա ՚ի մեռելոց , եւ ոչ եւս դառնալոց է
յապականութիւն , այսպէս ասէ , թէ տաց քեզ
35 զսրբութիւնսն Դաւթի զհաւատարիմս . * քանզի
եւ ՚ի միւսումն ասէ . Ոչ տացես սրբոյ քում
36 տեսանել զապականութիւն ։ * Այլ Դաւիթ
յազգի անդ իւրում պաշտեաց , եւ ՚ի կամս
Աստուծոյ ննջեաց՝ եւ յաւելաւ առ հարս իւր ,
37 եւ ետես զապականութիւն . * բայց զոր Աս-
տուած յարոյց , ոչ ետես զապականութիւն ։
38 * Յայտնի լիցի ձեզ՝ արք եղբարք , զի սովաւ ձեզ
թողութիւն մեղաց աւետարանի . եւ յամե-
նայնէ՝ յորմէ ոչ կարացէք օրինօքն Մովսիսի ար-
39 դարանալ , * սովաւ ամենայն որ հաւատայ՝ ար-
40 դարանայ ։ * Զգոյշ կացէք , գուցէ եկեսցէ ՚ի
41 վերայ ձեր որ ասացեալն է ՚ի մարգարէս . * Տե-
սէք , արհամարհողք , եւ զարմացարուք եւ եղ-
ծարուք . զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր ,
գործ՝ որում ոչ հաւատայցէք՝ եթէ ոք պատ-
42 մեսցէ ձեզ ։ * Եւ իբրեւ ելին անտի , աղաչէին
՚ի միւսում շաբաթու խօսել նոցա զնոյն բանս ։
43 * Եւ իբրեւ արձակեցաւ ժողովուրդն , զհետ
երթային բազումք ՚ի հրէից անտի եւ ՚ի պաշ-

տօնէիցն եկամտից՝ զՊաւղոսի եւ զԲառնաբայ,
որք խօսէին ընդ նոսա եւ հաւանեցուցանէին
զնոսա կալ մնալ 'ի շնորհսն Աստուծոյ։
ԴԿ. * Եւ 'ի գալ միւսոյ շաբաթուն՝ գրեթէ 44
ամենայն քաղաքն ժողովեցաւ լսել զբանն Աստու-
ծոյ։ * Իբրեւ տեսին Հրէայքն զամբոխն, լցան 45
նախանձու. եւ ընդդէմ դարձեալ ասացելոցն 'ի
Պաւղոսէ՝ հայհոյէին։ * Համարձակեալ Պաւղոսի եւ 46
Բառնաբայ՝ ասէին. Առ ձեզ նախ պարտ էր խօ-
սել զբանն Աստուծոյ. եւ քանզի դուք մերժէք
զնա, եւ ոչ արժանիս համարիք զձեզ կենացն
յաւիտենականաց, ահաւասիկ դառնամք 'ի հե-
թանոսս։ * Զի այսպէս պատուիրեաց մեզ Տէր. 47
Եդի զքեզ 'ի լոյս հեթանոսաց, լինել քեզ 'ի
փրկութիւն մինչեւ 'ի ծագս երկրի։ * Զայս լը- 48
ւեալ հեթանոսացն՝ ուրախ լինէին, եւ փառա-
ւոր առնէին զբանն Տեառն. եւ հաւատացին
որք էին կարգեալ 'ի կեանսն յաւիտենականս.
* եւ շրջէր բանն Աստուծոյ ընդ ամենայն գա- 49
ւառն։ * Բայց Հրէայքն գրգռեցին զպաշտօնեայ 50
կանայս զգաստս, եւ զգլխաւորս քաղաքին, եւ
յարուցեալ հալածանս 'ի վերայ Պաւղոսի եւ
Բառնաբայ, հանին զնոսա 'ի սահմանացն իւ-
րեանց։ * Եւ նոքա թօթափեալ զփոշի ոտից 'ի 51
վերայ նոցա, եկին յԻկոնիոն. * եւ աշակերտքն 52
լնուին խնդութեամբ եւ Հոգւով Սրբով։

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Եւ եղեւ յԻկոնիոն 'ի միասին մտանել նոցա
'ի ժողովուրդ Հրէիցն եւ խօսել նոյնպէս, մին-
չեւ հաւատալ Հրէից եւ Յունաց բազմաց յոյժ.
2 * բայց անհաւան Հրեայքն յարուցին եւ չա-
րացուցին զանձինս հեթանոսացն 'ի վերայ եղ-
3 բարց։ * Բազում ժամանակս շրջէին՝ համարձա-
կեալք Տեառն վկայութեամբ, բանիւ շնորհաց
իւրոց, եւ տալ նշանս եւ արուեստս լինելոյ 'ի
4 ձեռս նոցա։ * Եւ եղեն հերձուածք բազմու-
թեան քաղաքին. ոմանք էին 'ի Հրեայսն, եւ
5 ոմանք յԱռաքեալսն։ * Իբրեւ եղեւ դիմել հե-
թանոսացն եւ Հրէից իշխանօքն իւրեանց՝ 'ի
6 թշնամանել եւ 'ի քարկոծել զնոսա, * ազդ ե-
ղեալ նոցա՝ փախեան 'ի քաղաքսն Լիկայոնաց-
ւոց, 'ի Լիւստրա եւ 'ի Դերբէ՝ եւ շուրջ զգա-
ւառաւն, եւ անդ աւետարանէին։
7 ԴԲ. * Եւ այր ոմն լիւստրացի տկար յոտից
նստէր՝ կաղ յորովայնէ մօր իւրոյ, որոյ երբէք
8 չէր գնացեալ. * սա լուաւ զխօսսն Պաւղոսի,
որոյ հայեցեալ 'ի նա եւ տեսեալ՝ թէ ունի
9 հաւատս փրկութեան, * ասէ մեծաձայն. Քեզ
ասեմ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստո-
սի, յոտն կաց 'ի վերայ ոտից քոց ուղիղ։ Եւ
10 վազվազէր եւ գնայր։ * Եւ ժողովրդոցն տե-
սեալ զոր արարն Պաւղոս, բարձին զձայնս իւ-

րեանց լիկայոներէն, եւ ասէն. Աստուածք
նմանեալ մարդկան իջին առ մեզ: * Եւ կոչէին 11
զԲառնաբաս՝ Դիոս, եւ զՊաւղոս՝ Հերմէս, քան-
զի նա էր առաջնորդ բանին: * Իսկ քուրմն Դի- 12
ոյ՝ որ կայր առաջի քաղաքին, ցուլս եւ պսակս
հասուցեալ 'ի դուռն հանդերձ բազմութեամբ-
քըն՝ կամէր զոհել: * Եւ լուեալ Առաքելոյն 13
Բառնաբայ եւ Պաւղոսի, պատառեալ զհան-
դերձս իւրեանց՝ արտաքս վաղեցին յամբոխէն,
* աղաղակէին եւ ասէին. Արք, զի՞նչ գործէք 14
զայդ. մեք ձեզ նմանօղք կարեօք մարդիկ եմք,
աւետարանել ձեզ յայդպիսի ունայնութեանց
դառնալ յԱստուած կենդանի, որ արար զեր-
կինս եւ զերկիր եւ զծով՝ եւ զամենայն որ 'ի
նոսա. * որ յանցեալ ազգսն թոյլ ետ ամենայն 15
հեթանոսաց գնալ 'ի ճանապարհս իւրեանց.
*եւ սակայն ոչ եթէ առանց վկայութեան զին- 16
քըն եթող, բարերարութեամբն տալ յերկ-
նից ձեզ անձրեւս, եւ ժամանակս պտղաբերս,
լնուլ կերակրովք եւ ուրախութեամբ զսիրտս
ձեր: * Եւ զայս ասացեալ՝ հազիւ լռեցուցանէ- 17
ին զժողովուրդսն 'ի չզոհելոյ նոցա, այլ գնալ
յիւրաքանչիւր տեղիս:

Դ.Գ. * Եւ 'ի շրջելն նոցա եւ յուսուցանել՝ 18
եկին հասին յԱնտիոքէ եւ յԻկոնիոնէ Հրեայք:
Եւ 'ի վիճել նոցա համարձակութեամբ, պատ-
րեցին զժողովուրդսն 'ի բաց կալ 'ի նոցանէ,
եւ ասէին թէ ոչ ինչ ճշմարտութիւն ասեն,

այլ զամենայն ստեն. եւ քարկոծեալ զՊաւղոս
քարշեցին արտաքս քան զքաղաքն, եւ համա-
19 րէին զնա մեռեալ: * Եւ 'ի պատել զնովաւ ա-
շակերտացն՝ յարեաւ եմուտ 'ի քաղաքն, եւ 'ի
վաղիւ անդր ել Բառնաբաւ հանդերձ 'ի Դեր-
20 բէ: * Աւետարանեալ 'ի քաղաքին յայնմիկ եւ
աշակերտեալ զբազումս, եւ դարձան 'ի Լիւս-
21 տրա եւ յԻկոնիոն եւ յԱնտիոքիա, * հաստատել
զանձինս աշակերտելոյն եւ մխիթարել, կալ
հաստատուն 'ի հաւատսն, եւ թէ բազում
նեղութեամբ պարտ է մեզ մտանել յարքա-
22 յութիւն Աստուծոյ: * Ձեռնադրեցին նոցա
ըստ եկեղեցեաց երիցունս. աղօթս արարեալ
հանդերձ պահովք, յանձն արարին զնոսա Տեա-
23 ռըն՝ յոր հաւատացեալ էին: * Եւ շրջեալ ընդ
24 Պիսիդեա՝ եկին 'ի Պամփիլիա. * եւ խօսեցեալ
25 'ի Պերգէ զբանն Տեառն, իջին յԱտալիա. * եւ
անտի նաւարկեալ՝ գնացին յԱնտիոք, ուստի է-
ին յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ՝ 'ի գոր-
26 ծըն զոր կատարեցին: * Եկեալ ժողովեալ զե-
կեղեցին՝ պատմեցին որչափ արար Աստուած
ընդ նոսա, եւ զի եբաց հեթանոսաց դուռն
27 հաւատոյ. * շրջէին ժամանակս ոչ սակաւս ընդ
աշակերտսն:

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Դ.Գ. Եւ ոմանք իջեալ 'ի Հրէաստանէ՝ ու-
սուցանէին զեղբարս, եթէ ոչ թլփատիք ըստ

օրինացն Մովսիսի՝ ոչ կարէք ապրել։ * Եւ ՚ի 2
լինել ոչ սակաւ հակառակութեան եւ խնդրոյ՝
Պաւղոսի եւ Բառնաբայ ընդ նոսա, եդին ելա-
նել Պաւղոսի եւ Բառնաբայ եւ ոմանց ՚ի նոցա-
նէ՝ առ Առաքեալսն եւ երիցունս յԵրուսաղէմ
վասն խնդրոյն այնորիկ։ * Նոքա յուղարկեալք 3
յեկեղեցւոյն՝ շրջէին ընդ Փիւնիկէ եւ ընդ Սա-
մարիա, պատմէին զդարձն հեթանոսաց, եւ
առնէին ուրախութիւն մեծ ամենայն եղբարց։
* Եւ հասեալք յԵրուսաղէմ, ընկալեալք յեկե- 4
ղեցւոյն եւ յԱռաքելոցն եւ յերիցանց, պատ-
մեցին որչափ ինչ արար ընդ նոսա Աստուած։
* Յարեան ոմանք ՚ի հերձուածոյն փարիսեցւոց 5
հաւատացեալք, եւ ասէին՝ թէ պարտ է թլ-
փատել զդոսա, եւ պատուիրել պահել զօրէն-
սըն Մովսէսի։ * Եւ ժողովեցան Առաքեալքն եւ 6
երիցունք տեսանել վասն բանիս այսորիկ։ * Եւ 7
յետ բազում խնդիր լինելոյ, յոտն եկաց Պետ-
րոս եւ ասէ ցնոսա. Արք եղբարք, դուք ինքնին
գիտէք, զի յաւուրցն յառաջնոց ՚ի միջի ձե-
րում ընտրեաց Աստուած բերանով իմով լսել
հեթանոսաց բանին աւետարանի եւ հաւա-
տալ. * Եւ սրտագէտն Աստուած վկայեաց նո- 8
ցա, տալով նոցա զՀոգին Սուրբ՝ որպէս եւ
մեզ. * Եւ ոչ ինչ ընտրութիւն արար ՚ի մէջ նո- 9
ցա եւ մեր, հաւատովք սրբեալ զսիրտս նոցա։
* Արդ ընդէ՞ր փորձէք զԱստուած, դնել լուծ 10
՚ի վերայ պարանոցի աշակերտացն, զոր ոչ հարքն

11 մեր եւ ոչ մեք կարացաք բառնալ. * այլ շնոր-
հօքն տեառն Յիսուսի Քրիստոսի՝ հաւատամք
12 ապրել, զոր օրինակ եւ նոքա։ * Լռեաց ամե-
նայն ժողովուրդն, եւ լսէին Բառնաբայ եւ
Պաւղոսի պատմելոյն՝ որչափ արար Աստուած
նշանս եւ արուեստս ՚ի հեթանոսս ՚ի ձեռն
նոցա։

13 ԴԵ. * Եւ յետ լռելոյն նոցա, պատասխանի
ետ Յակովբոս եւ ասէ. Արք եղբարք, լուարուք
14 ինձ. * Շմաւոն պատմեաց որպէս յառաջագոյն
Աստուած այց արար առնուլ ժողովուրդ ՚ի հե-
15 թանոսաց՝ անուան իւրոյ. * Եւ այնմ միաբանին
16 բանք մարգարէիցն. որպէս եւ գրեալ է. * Յետ
այսորիկ դարձայց՝ եւ շինեցից զյարկն Դաւթի՝
զանկեալն, եւ զկործանեալսն նորա վերստին շի-
17 նեցից, եւ կանգնեցից զնա. * որպէս զի խնդ-
րեսցեն մնացորդք մարդկան զՏէր, եւ ամենայն
հեթանոսք՝ յորս վերայ կոչեցեալ է անուն իմ,
18 ասէ Տէր. որ առնէ զայս ամենայն, * յայտնի է
19 ՚ի յաւիտենից (Տեառն գործ իւր)։ * Վասն ո-
րոյ եւ ես իրաւունս համարիմ, մի՛ նեղել զայ-
նոսիկ՝ որք ՚ի հեթանոսացն դառնան առ Աս-
20 տուած. * այլ տալ թուղթս առ նոսա, խոր-
շել ՚ի կերակրոց կռոց, եւ ՚ի պոռնկութենէ,
21 եւ ՚ի մեռելոտւոյ, եւ յարենէ։ * Զի Մովսէս
յազգացն առաջնոց ըստ քաղաքաց զքարոզիչսն
իւր ունի ՚ի ժողովսն, ըստ ամենայն շաբաթուց
22 ընթերցեալ։ * Յայնժամ հաճոյ թուեցաւ Առա-

քելոցն եւ երիցանցն ամենայն եկեղեցեաւն՝
արս ընտրեալս 'ի նոցանէ առաքել յԱնտիոք ընդ
Պաւղոսի եւ ընդ Բառնաբայ‖. զՅուդա զկոչե-
ցեալն Բարսաբա՝ եւ զՇիղա, արս գլխաւորս.
* գրեալ առ եղբարս 'ի ձեռն նոցա զայս ինչ. 23
Առաքեալք եւ երիցունք եւ եղբարք, յԱնտիոք
եւ 'ի Սիւրիա եւ 'ի Կիլիկիա, եղբարցդ որ 'ի
հեթանոսաց էք, ողջոյն: * Քանզի լուաք՝ թէ 24
ոմանք ի մէնջ խռովեցուցին զձեզ բա-
նիւք՝ խախտել զանձինս ձեր. ասեն թլփատել
եւ պահել զօրէնսն, որոց ոչ հրամայեցաք:
* Հաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողովելոց՝ 25
արս ընտրեալս յղել առ ձեզ, ընդ սիրելիս մեր՝
ընդ Բառնաբայ եւ ընդ Պաւղոսի. * արք՝ որք մատ- 26
նեցին զանձինս իւրեանց վասն անուանն Տեա-
ռն մերոյ Յիսուսի Քրիստոսի: * Արդ առաքե- 27
ցաք զՅուդա եւ զՇիղա, եւ նոքա 'ի բանից
զնոյն պատմել: * Զի հաճոյ թուեցաւ Հոգւոյն 28
Սրբոյ եւ մեզ, մի ինչ աւելի բեռն դնել ձեզ.
բայց միայն 'ի կարեւորացս յայսցիկ. * 'ի բաց 29
կալ 'ի զոհելոց կռոց, եւ յարենէ, եւ 'ի հեղ-
ձուցելոյ, եւ 'ի պոռնկութենէ. յորոց պահեալ
զանձինս՝ բարւոք գործիցէք. ողջ լերուք: * Եւ 30
նոքա արձակեալք՝ իջին յԱնտիոք, եւ ժողովեալ
զժողովուրդն՝ ետուն զթուղթն. * եւ ընթեր- 31
ցեալ՝ ուրախ եղեն 'ի վերայ մխիթարութեանն:
* Յուդա եւ Շիղա, զի եւ նոքա մարգարէք է- 32
ին, բանիւք բազմօք մխիթարեցին զեղբարս եւ

33 հաստատեցին: * Եւ եղեալ անդ ժամանակս,
արձակեցան յեղբարց խաղաղութեամբ առ
34 Առաքեալսն. * եւ հաճոյ թուեցաւ Շիղայի մը-
35 նալ անդէն: * Բայց Պաւղոս եւ Բառնաբաս շըր-
ջէին յԱնտիոք, ուսուցանել եւ աւետարանել
եւ այլովք բազմօք՝ զբանն Աստուծոյ:
36 ԴՁ. * Իսկ յետ աւուրց ինչ ասէ Պաւղոս
ցԲառնաբաս. Դարձցուք եւ շրջեսցուք զեղ-
բարբք՝ ըստ ամենայն քաղաքաց յորս քարոզե-
37 ցաք զբանն Տեառն, թէ որպէս ունիցին: * Բառ-
նաբաս կամէր առնուլ եւ զՅովհաննէս զկոչե-
38 ցեալն Մարկոս. * բայց Պաւղոս աղաչէր՝ թէ
զմեկնեալն 'ի նոցանէ 'ի Պամփիլիա, եւ զչե-
կեալն ընդ նոսա 'ի գործն, մի առնուլ ընդ իւ-
39 րեանս: * Եւ եղեւ գժտութիւն 'ի մէջ նոցա՝
մինչեւ մեկնել 'ի միմեանց, Բառնաբայ առնուլ
զՄարկոս նաւել 'ի Կիպրոս:
40 * Եւ Պաւղոսի ընտրեալ զՇիղա՝ ել, յանձն
արարեալ շնորհացն Աստուծոյ յեղբարց անտի.
41 * եւ շրջէր 'ի կողմանս Ասորւոց եւ Կիլիկեցւոց,
եւ հաստատէր զեկեղեցիսն:

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Եկն եհաս 'ի Դերբէ եւ 'ի Լիւստրա. եւ
ահա աշակերտ ոմն էր անդ՝ անուն Տիմոթէոս,
որդի կնոջ հրէի հաւատացելոյ՝ եւ հօր հեթա-
2 նոսի, * որ վկայեալ էր 'ի Լիւստրացւոց եւ յԻ-

կոնացւոց եղբարց ։ * Զսա կամեցաւ Պաւղոս ընդ 3
իւր տանել. եւ առեալ թլփատեաց զնա վասն
Հրէիցն՝ որ էին ՚ի տեղիսն յայնսիկ. քանզի գի-
տէին ամենեքին զհայր նորա թէ հեթանոս էր ։
* Իբրեւ անցանէին ընդ քաղաքսն, աւանդէին 4
նոցա պահել զհրամանսն պատուիրեալս յԱռա-
քելոցն եւ յերիցանցն՝ որք յԵրուսաղէմ ։ * Եւ 5
եկեղեցիքն հաստատէին ՚ի հաւատս, եւ յաւե-
լուին ՚ի թիւն հանապազօր ։

Գէ. * Եւ շրջեցան ընդ Փռիւգիա եւ ընդ 6
կողմանս Գաղատացւոց, արգելեալք ՚ի Հոգւոյն
Սրբոյ խօսել զբանն յԱսիա. * բայց եկեալ առ 7
Միւսեաւ՝ թեւակոխէին երթալ ՚ի Բիւթանիա,
եւ ոչ համարձակեաց նոցա Հոգին Յիսուսի ։ * Եւ 8
անցեալ ընդ Միւսիա՝ իջին ՚ի Տրովադա. * եւ 9
տեսիլ երեւեցաւ ՚ի գիշերի Պաւղոսի. այր ոմն
Մակեդոնացի կայր աղաչէր զնա եւ ասէր.
անցեալ ՚ի Մակեդոնիա՝ օգնեսցես մեզ ։ * Եւ 10
իբրեւ զտեսիլն ետես, վաղվաղակի խնդրեցաք
ելանել ՚ի Մակեդոնիա, տեղեկացեալ թէ հը-
րաւիրեաց զմեզ Տէր աւետարանել նոցա ։ * Եւ 11
ելեալ ՚ի Տրովադայ՝ դէպ ուղիղ գնացաք ՚ի Սա-
մոթրակէ. եւ ՚ի վաղիւ անդր ՚ի Նոր քաղաք,
* եւ անտի ՚ի Փիլիպպուս, որ է առաջին վիճակ 12
Մակեդոնացւոց՝ քաղաք Կողոնիա ։ Եւ անդ ՚ի
քաղաքին դադարեալ մեր աւուրս ինչ, * յաւուր 13
շաբաթու ելաք արտաքոյ քաղաքին առ գետափ-
նըն՝ ուր համարէին աղօթս մատուցանել. եւ

14 նստեալ խօսէաք ընդ ժողովեալ կանայսն ։ * Եւ
կին ոմն անուն Լիդիա ծիրանավաճառ՝ ՚ի Թի-
ւատիր քաղաքէ, երկիւղած յԱստուծոյ, լուաւ.
զորոյ Տէր եբաց զսիրտն անսալ խօսիցն Պաւ-
15 ղոսի ։ * Եւ իբրեւ մկրտեցաւ ինքն եւ տուն
իւր, աղաչէր եւ ասէր. Եթէ համարիք զիս
հաւատացեալ Տեառն, մտեալ ՚ի տուն իմ ա-
16 գերուք ։ Եւ բռնադատեաց տարաւ զմեզ ։ * Եւ
եղեւ մինչ երթայաք մեք յաղօթս, պատահեաց
մեզ աղախին ոմն՝ զոր ունէր այս հարցուկ. որ
շահս բազումս տայր տերանց իւրոց մոլելովն ։
17 * Նա զհետ եղեալ Պաւղոսի եւ մեր՝ աղաղա-
կէր եւ ասէր. Արքս այս ծառայք Աստուծոյ
բարձրելոյ են, որ պատմեն ձեզ զճանապարհս
18 փրկութեան ։ * Եւ զայս առնէր ՚ի բազում ա-
ւուրս ։ Զայրացեալ Պաւղոս՝ դարձաւ եւ ասէ
ցայսն. Պատուիրեմ քեզ յանուն Յիսուսի Քրիս-
տոսի ելանել ՚ի դմանէ. եւ ել ՚ի նմին ժամու ։
19 * Իբրեւ տեսին տեարք նորա՝ եթէ հատաւ
յոյս շահի նոցա, առեալ զՊաւղոս եւ զՇիղա՝
20 ձգեցին ՚ի հրապարակն առ իշխանսն. * եւ ա-
ծեալ զնոսա առ զօրագլուխսն՝ ասեն. Արքս այս
խռովեցուցանեն զքաղաքս մեր. ինքեանք Հը-
21 րէայք են, * եւ պատմեն մեզ օրէնս, զոր չէ
արժան մեզ ընդունել եւ ոչ առնել, զի Հռո-
22 մայեցիք եմք ։ * Եւ կուտեցաւ ամբոխն ՚ի վե-
րայ նոցա ։ Եւ զօրագլուխքն պատառեցին ըզ-
հանդերձս իւրեանց, եւ հրամայեցին գան հար-

կանել: *Եւ բազում վէրս եդեալ ՚ի վերայ նոցա՝ 23
արկին ՚ի բանտ, պատուիրեցին բանտապետին՝
զգուշութեամբ պահել զնոսա: *Որոյ առեալ 24
զայսպիսի պատուէր, արկ զնոսա ՚ի ներքին
բանտն, եւ զոտս նոցա պնդեաց ՚ի կոճեղ: *Եւ 25
՚ի մէջ գիշերոյն Պաւղոս եւ Շիղա կային յաղօ-
թս՝ եւ օրհնէին զԱստուած. ունկն դնէին նո-
ցա կալանաւորքն: *Եւ եղեւ յանկարծակի շար- 26
ժումն մեծ, մինչեւ շարժել հիմանց բանտին,
եւ բացան անդէն դրունքն ամենայն, եւ ամե-
նեցուն կապանքն լուծան: *Իբրեւ զարթեաւ 27
բանտապետն՝ եւ ետես բացեալ զդուրս բան-
տին, ձգեաց զսուսեր՝ եւ կամէր երթալ զիւ-
րովին. կարծէր փախուցեալ զկապեալսն: *Եւ 28
կոչեաց ՚ի ձայն մեծ Պաւղոս՝ եւ ասէ. Մի ինչ
գործեր ընդ անձն քո չար, քանզի ամենեքին
աստ եմք: *Խնդրեաց լոյս՝ եւ դիմեաց ՚ի ներքս. 29
եւ զահի հարեալ՝ անկաւ առաջի Պաւղոսի եւ
Շիղայի. *եւ ածեալ զնոսա արտաքս՝ ասէ. 30
Տեարք, զի՞նչ պարտ է ինձ առնել՝ զի ապրե-
ցայց: *Եւ նոքա ասեն. Հաւատա ՚ի Տէր Յի- 31
սուս Քրիստոս, եւ ապրեսցիս դու եւ ամենայն
տուն քո: *Եւ խօսեցան նմա զբանն Տեառն, 32
եւ ամենեցուն որ էին ՚ի տան նորա: *Եւ ա- 33
ռեալ զնոսա ՚ի նմին ժամու գիշերոյն՝ լուաց
՚ի վիրաց անտի, եւ մկրտեցաւ ինքն եւ իւրքն
ամենեքեան անդէն վաղվաղակի. *Եւ ածեալ 34
զնոսա ՚ի տուն իւր, եդ առաջի նոցա սեղան,

եւ ուրախ եղեւ ամենայն տամբն հաւատա-
35 ցեալ յԱստուած: *Եւ իբրեւ այգ եղեւ՝ ա-
ռաքեցին զօրագլուխքն զնաւիրակսն, եւ ասեն.
36 Արձակեա զարսդ զայդոսիկ: *Եւ պատմեաց
բանտապետն զբանսն՝ Պաւղոսի, եթէ առաքե-
ցին զօրագլուխքն զի արձակիցիք. արդ ելէք եւ
37 երթայք խաղաղութեամբ: *Իսկ Պաւղոս ասէ
ցնոսա. Գան հարեալ զմեզ հրապարակաւ՝ արս
անմեղս հռովմայեցիս արկին ՚ի բանտ, եւ արդ
լռելեա՞ն հանեն զմեզ. ոչ այդպէս. այլ եկես-
38 ցեն ինքեանք իսկ հանցեն զմեզ: *Եւ պատմե-
ցին զօրագլխացն նաւիրակքն զբանսն. զահի հա-
րան իբրեւ լուան՝ թէ հռովմայեցիք են, եւ
39 եկեալ աղաչեցին զնոսա. *եւ իբրեւ հանին,
40 աղաչեցին գնալ ՚ի քաղաքէն: *Եւ ելեալ ՚ի
բանտէն՝ մտին առ Լիդիա, եւ տեսեալ զեղ-
բարս՝ մխիթարեցին զնոսա, եւ գնացին:

ԳԼՈՒԽ ԺԷ.

1 ԵԿ. Եւ շրջեալ ընդ Ամփիպօլիս եւ ընդ Ա-
պողոնիա, եկին ՚ի Թեսաղոնիկէ, ուր էր ժո-
2 ղովուրդ Հրէից: *Եւ ըստ սովորութեանն Պաւ-
ղոս եմուտ առ նոսա, եւ ՚ի շաբաթս երիս խօ-
3 սեցաւ ընդ նոսա ՚ի գրոց. *բանայր եւ դնէր
առաջի, եթէ պարտ էր Քրիստոսի չարչարիլ եւ
յառնել ՚ի մեռելոց. եւ թէ նա է Քրիստոսն
4 Յիսուս՝ զոր ես պատմեմ ձեզ: *Եւ ոմանք ՚ի

նոցանէ հաւանեցան, եւ վիճակեցան Պաւղոսի
եւ Շիղայի. բայց պաշտօնէիցն հեթանոսաց էր
բազմութիւն յոյժ, եւ ի կանանց գլխաւորաց
ոչ սակաւք: * Եւ նախանձեցան Հրէայքն, եւ 5
առեալ արս ոմանս գռեհիկս անօրէնս, ամբոխ
արարեալ խռովեցին զքաղաքն. եւ կուտեալ
առ ապարանսն Յասոնի, խնդրէին զնոսա ա-
ծել ի հրապարակ: * Եւ իբրեւ ոչ գտին զնոսա, 6
քարշէին զՅասոն եւ զոմանս եղբարս առ քա-
ղաքապետսն, բողոք բարձեալ՝ թէ որք զաշ-
խարհս խռովեցուցին՝ սոքա եւ այսր հասին,
* զորս ընկալեալ է Յասոնի. եւ սոքա ամենե- 7
քեան հակառակ հրամանացն կայսեր գործեն,
թագաւոր զոմն ասեն զՅիսուս: * Եւ խռովե- 8
ցուցին զժողովուրդն եւ զքաղաքապետսն, որ
լսէին զայն. * եւ առեալ երաշխաւորութիւն 9
առ ի Յասոնայ եւ յայլոցն՝ արձակեցին զնոսա:
* Բայց եղբարք վաղվաղակի գիշերայն յուղար- 10
կեցին զՊաւղոս եւ զՇիղայ ի Բերիա. որք իբրեւ
հասին անդր, ի ժողովուրդն Հրէից գնացին.
* զի սոքա էին ազնուագոյնք՝ քան որ ի Թեսա- 11
ղոնիկն էին. որք ընկալան զբանն ամենայն յօ-
ժարութեամբ, հանապազ քննէին զգիրս՝ եթէ
իցէ՞ այս այսպէս: * Եւ բազումք իսկ ի նոցանէ 12
հաւատացին, եւ ի Յունաց կանանց զգաստից
եւ յարանց ոչ սակաւք: * Բայց իբրեւ գիտացին՝ 13
որ ի Թեսաղոնիկէ Հրէայքն էին, եթէ եւ ի
Բերիայ պատմեցաւ ի Պաւղոսէ բանն Աստուծոյ,

եկին եւ անդր՝ շարժել եւ խռովեցուցանել ըզ-
14 ժողովսն: * Յայնժամ զՊաւղոս վաղվաղակի ա-
ռաքեցին եղբարք գնալ մինչեւ ի ծովեզր, եւ
15 մնացին Շիղա եւ Տիմոթէոս անդէն: * Եւ որք
տանէին զՊաւղոս, ածին զնա մինչեւ յԱթէնս.
եւ առեալ պատուէր առ Շիղա եւ Տիմոթէոս,
զի վաղվաղակի եկեսցեն առ նա, եւ գնացին:
16 ԵԲ. * Եւ յԱթէնս ի մնալն նոցա Պաւղոսի,
զայրանայր հոգի նորա ի նմա, զի տեսանէր ի
17 կռապաշտութեան զքաղաքն. * եւ խօսէր ի
ժողովրդեանն ընդ հրէայսն եւ ընդ պաշտօ-
նեայսն, եւ ի հրապարակին զամենայն օր՝ որոց
18 եւ պատահէին: * Ոմանք յԷպիկուրեանցն եւ ի
Ստոյիկեանց փիլիսոփայից հակառակէին ընդ
նմա. եւ ոմանք ասէին, զի՞նչ կամիցի սերմա-
նաքաղս այս խօսել, եւ այլք՝ թէ օտարոտի
իմն դից թուի պատմիչ լինել. քանզի զՅիսուս
19 եւ զյարութիւնն աւետարանէր: * Եւ առեալ
զնա ածին յԱրիսպագոսն, եւ ասէին. Կարա-
ցո՞ք իմանալ՝ թէ զի՞նչ է նոր վարդապետու-
20 թիւնդ՝ որ ի քէն պատմի, * օտարացուցիչս իմն
բերես ի լսելիս մեր. կամիմք գիտել՝ թէ զի՞նչ
21 կամիցի այս լինել: * Զի Աթենացիք ամենեքին
եւ եկքն օտարք՝ ոչ յայլ ինչ պարապէին, բայց
22 ասել ինչ, կամ լսել նորագոյնս: * Եկաց Պաւղոս
ի մէջ Արիսպագին՝ եւ ասէ. Արք Աթենացիք.
ըստ ամենայնի իբրեւ պաշտօնասէրս տեսանեմ
23 զձեզ. * քանզի շրջեալ եւ տեսեալ զպաշտամու-

նըս ձեր, գտի բագին մի՝ յորում գրեալ էր, Ան-
ծանօթի Աստուծոյ. զոր դուք յանծանօթս
պաշտէք՝ ես զնոյն պատմեմ ձեզ։ * Աստուած՝ 24
որ արար զաշխարհս եւ զամենայն որ 'ի նմա,
նա երկնից եւ երկրի է Տէր. ոչ 'ի ձեռագործ
տաճարս բնակէ, * եւ ոչ 'ի ձեռաց մարդկան 25
պաշտի իբրեւ կարօտ իմիք. նա տայ ամենայնի
կեանս եւ շունչ եւ զամենայն ինչ. * արար 'ի 26
միոջէ արենէ զամենայն ազգս մարդկան՝ բնա-
կել 'ի վերայ երեսաց ամենայն երկրի. հաս-
տատեաց կարգեալ ժամանակս եւ սահմանա-
դրութիւնս բնակութեան նոցա՝ խնդրել զԱս-
տուած, * զի թերեւս զննիցեն զնա եւ գտա- 27
նիցեն. նա՝ եւ ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր
ումեքէ 'ի մէնջ. * զի նովաւ կեամք եւ շար- 28
ժիմք եւ եմք, որպէս ոմանք 'ի ձերոց ճարտա-
րաց ասացին, թէ նորա եւ ազգ իսկ եմք։ * Եւ 29
արդ՝ որովհետեւ ազգք եմք Աստուծոյ, ոչ պար-
տիմք համարել ոսկւոյ կամ արծաթոյ կամ քա-
րի, որ 'ի ճարտարութենէ եւ 'ի մտաց մարդ-
կան քանդակեալ իցէ. զաստուածականն լինել
նմանող։ * Բայց զժամանակս անգիտութեանն 30
անտես արարեալ Աստուծոյ՝ արդ զայս պատուի-
րէ մարդկան, ամենայն ումեք ապաշխարել։
* Քանզի հաստատեաց օր, յորում պարտ է դա- 31
տել զաշխարհս արդարութեամբ 'ի ձեռն առն,
որով սահմանեաց տալ հաւատս ամենեցուն՝
յարուցեալ զնա 'ի մեռելոց։ * Իբրեւ լուան 32

զյարութիւն մեռելոց, ոմանք ծաղր առնէին.
կէսքն ասէին՝ լուիցուք 'ի քէն վասն այդորիկ
33 միւսանգամ։ * Եւ ապա Պաւղոս ել գնաց 'ի մի-
34 ջոյ նոցա. * եւ ոմանք արք անկեալք 'ի նա հա-
ւատացին, ընդ որս էր եւ Դիոնէսիոս արիսպա-
գացի, եւ կին մի անուն Դամարիս, եւ այլք
ընդ նոսա։

ԳԼՈՒԽ ԺԸ.

1 ԵԳ. Յետ այսորիկ մեկնեալ Պաւղոսի յԱթե-
2 նացւոց անտի, եկն 'ի Կորնթոս. * եւ եգիտ զո-
մըն հրեայ՝ անուն Ակիւղաս՝ յազգէ պոնտացի,
այն ինչ եկեալ յԻտալիոյ, եւ զՊրիսկիղա կին
նորա, վասն հրամանին Կղաւդեայ՝ որոշել զամե-
նայն Հրէայս 'ի Հռոմայ. եւ յարեցաւ 'ի նոսա։
3 * Եւ վասն զի համարուեստ էր, եղեւ առ նոսա՝
եւ գործէր. քանզի էին խորանակարք արուես-
4 տիւ։ * Եւ խօսէր 'ի ժողովրդեանն ըստ ամե-
նայն շաբաթուց, եւ հաւանեցուցանէր զՀրէ-
5 այս եւ զհեթանոսս։ * Իբրեւ իջին 'ի Մակեդո-
նիայ Շիղա եւ Տիմոթէոս, ստիպէր հոգւովն
Պաւղոս դնել վկայութիւն Հրէիցն՝ թէ Յիսուս է
6 Քրիստոսն։ * Եւ յընդդէմ դառնալ նոցա եւ
հայհոյել, թօթափեալ զձորձս եւ ասէ ցնոսա.
Արիւն ձեր 'ի գլուխս ձեր, քաւեալ եմ ես.
7 յայսմհետէ 'ի հեթանոսս երթամ։ * Եւ գնա-
ցեալ անտի եմուտ 'ի տուն ուրումն, որոյ ա-

նուն էր Տիտոս Յուստոս՝ պաշտօնեայ Աստուծոյ.
որոյ ապարանքն էին մերձ ՚ի ժողովրդանոցն :* Կրիս- 8
պոս ժողովրդապետն հաւատայ ՚ի Տէր ամենայն
տամբ իւրով, եւ բազումք ՚ի Կորնթացւոցն լու-
եալ՝ հաւատային եւ մկրտէին : * Եւ ասէ 9
Տէր ՚ի գիշերի տեսլեամբ ցՊաւղոս . Մի՛ երկն-
չիր , այլ խօսեաց՝ եւ մի՛ լռեր . * քանզի ես ընդ 10
քեզ եմ, եւ ոչ ոք ընդդէմ դարձցի քո ՚ի չար-
չարել զքեզ . քանզի ժողովուրդ է իմ բազում
՚ի քաղաքիս յայսմիկ : * Եւ նստաւ անդ տարի մի 11
եւ ամիս վեց՝ ուսուցանել նոցա զբանն Աս-
տուծոյ :

ԵԴ . * Այլ Գաղիոնեաւ փոխանակաւ բդեշ- 12
խին Աքայեցւոց՝ յարեան միաբան Հրեայքն ՚ի
վերայ Պաւղոսի , եւ ածին զնա յատեան . * եւ 13
ասէին , եթէ արտաքոյ օրինաց պատրէ սա զ-
մարդիկ՝ պաշտել զԱստուած : * Եւ իբրեւ մերձ 14
էր Պաւղոս բանալ զբերան իւր , ասէ Գաղիոն
ցՀրեայսն . Եթէ էր ինչ անիրաւութիւն կամ
խարդախութիւն չարեաց , ո՛վ Հրեայք , ՚ի դէպ
էր ինձ անսալ ձեզ . * ապա եթէ խնդիրք ինչ 15
են վասն բանի եւ անուանց եւ օրինաց ձերոց,
տեսէք ձեզէն . քանզի դատաւոր այդպիսի իրաց
չկամիմ լինել : * Եւ մերժեաց զնոսա յատենէ 16
անտի : * Եւ առեալ ամենեցուն Յունացն զՍոս- 17
թենէս ժողովրդապետն՝ հարկանէին առաջի
ատենին , եւ ոչ ինչ զայնմանէ Գաղիոնի փոյթ
լինէր : * Բայց Պաւղոսի տակաւին մնացեալ ա- 18

ւուրս բազումս , յեղբարցն հրաժարեալ նաւէր
յԱսորիս , եւ ընդ նմա Պրիսկիղա եւ Ակիւղաս ,
փոքրել զգլուխ ՚ի Կենքրեա , քանզի ուխտաւոր
19 էր : * Եւ հասեալ յԵփեսոս՝ զնոսա եթող անդ ,
եւ ինքն մտեալ ՚ի ժողովուրդն խօսէր ընդ Հր-
20 էայսն : * Եւ աղաչէին զնա՝ բազում ժամա-
21 նակս լինել անդ . եւ ոչ առ յանձն , * այլ հրա-
ժարեաց ՚ի նոցանէն եւ ասէ . Դարձեալ շրջե-
ցայց Աստուծոյ կամօքն առ ձեզ : Համբարձաւ
22 յԵփեսեայ , * եւ իջեալ ՚ի Կեսարիա՝ ել եւ ետ
23 ողջոյն եկեղեցւոյն : Էջ յԱնտիոք , * եւ եղեալ
անդ ժամանակ ինչ , ել շրջել կարգաւ ընդ Գա-
ղատացւոց աշխարհն եւ ընդ Փռիւգիա , հաս-
24 տատել զամենայն աշակերտեալսն : * Հրեայ ոմն
Ապողոս անուն՝ աղեքսանդրացի յազգէ , այր
ճարտարաբան , եկն եհաս յԵփեսոս . զօրաւոր
25 էր գրովք : * Սա էր տեղեկացեալ ճանապար-
հին Տեառն , եւ եռայր հոգւով . խօսէր եւ
ուսուցանէր ճշմարտութեամբ վասն Յիսուսի .
26 գիտէր միայն զմկրտութիւնն Յովհաննու . * սա
սկսաւ համարձակել ՚ի ժողովրդեանն : Եւ լու-
եալ ՚ի նմանէ Ակիւղայ եւ Պրիսկիղեայ՝ առին
զնա առ իւրեանս , եւ ճշմարտագոյնս պատ-
27 մեցին նմա զճանապարհն Աստուծոյ . * Իբրեւ
կամեցաւ նա գնալ յԱքայիս , յօժարեալ եղ-
բարք՝ գրեցին առ աշակերտսն ընդունել զնա :
Որ իբրեւ եհաս անդր՝ բազում նպաստ լինէր
28 հաւատացելոցն ՚ի ձեռն շնորհաց . * քանզի

պնդագոյն զՀրէայսն յանդիմանէր հրապարա-
կաւ, ցուցանել գրովք՝ եթէ Քրիստոսն է Յի-
սուս :

ԳԼՈՒԽ ԺԹ.

ԵԵ. Եւ եղեւ՝ մինչդեռ Ապողոն ՚ի Կորըն- 1
թոս էր, Պաւղոսի շրջեալ զվերին կողմամբքն՝
եւ իջանել յԵփեսոս, եւ գտանել զոմանս զա-
շակերտս. * ասէ ցնոսա. Եթէ Հոգի Սուրբ ըն- 2
կալարո՞ւք ՚ի հաւատալն : Նոքա ասեն ցնա.
Այլ եւ ոչ թէ Հոգի Սուրբ գուցէ՝ լուեալ է
մեր : * Եւ ասէ. Իսկ յի՞նչ մկրտեցարուք : Նո- 3
քա ասեն. Ի Յովհաննու մկրտութիւնն. * Եւ 4
ասէ Պաւղոս. Յովհաննէս քարոզեաց մկրտու-
թիւն ապաշխարութեան ամենայն ժողովր-
դեանն, եւ ասէր, զի որ գալոցն է յետ նորա՝
՚ի Նա հաւատասցեն, այսինքն է՝ ՚ի Յիսուս Քրիս-
տոս : * Եւ իբրեւ լուան, մկրտեցան յանուն 5
Տեառն Յիսուսի : * Եւ ՚ի դնել ՚ի վերայ նոցա 6
Պաւղոսի զձեռն. եկն Հոգի Սուրբ ՚ի վերայ նո-
ցա. խօսէին լեզուս եւ մարգարէանային, * եւ 7
էին ամենեքեան արք իբրեւ երկոտասան : * Եւ 8
մտեալ ՚ի ժողովուրդն՝ համարձակէր ամիս ե-
րիս, խօսէր եւ հաւանեցուցանէր վասն արքա-
յութեանն Աստուծոյ : * Իբրեւ ոմանք խստա- 9
նային եւ ընդդէմ դառնային՝ բամբասել զճա-
նապարհն առաջի բազմութեանն. մեկնեալ ՚ի

նոցանէ որոշեաց զաշակերտսն. հանապազօր
10 խօսէր ՚ի դիւանին Տիւրաննեայ ուրումն : * Եւ այս
եղեւ զերկեամ մի, մինչեւ ամենայն բնակչացն
Ասիացւոց լսել զբանն Տեառն, Հրէից եւ հե-
11 թանոսաց : * Եւ զօրութիւնս ոչ սակաւս առ-
12 նէր Աստուած ՚ի ձեռն Պաւղոսի, * մինչեւ ՚ի հի-
ւանդս տանել՝ ՚ի քրտանէ նորա թաշկինակս
կամ վարշամակս, եւ մերժել ՚ի նոցանէ ախտի-
13 ցըն, եւ այսոց չարաց ելանել : * Յանդգնեցան
ոմանք ՚ի շրջող Հրէիցն՝ որ երդմնեցուցիչքն է-
ին, անուանել ՚ի վերայ այնոցիկ որք ունէին այսս
չարս՝ զանուն Տեառն Յիսուսի, եւ ասէին. Երդ-
մնեցուցանեմ զձեզ ՚ի Յիսուս՝ զոր Պաւղոսն քա-
14 րոզէ : * Էին ոմանք Սկեւեայ Հրէի քահանայա-
15 պետի եօթն որդի որ զայս առնէին : * Պատաս-
խանի ետ այսն չար եւ ասէ ցնոսա. ԶՅիսուս
գիտեմ եւ զՊաւղոս ճանաչեմ, բայց դուք ո՞վ
16 էք : * Եւ վազեաց այրն յորում էր այսն չար,
ըմբռնեալ զերկոսեան յաղթահարեաց զնոսա,
մինչեւ մերկս եւ վիրաւորս փախչել ՚ի տանէ
17 անտի : * Եւ այս յայտնի եղեւ ամենայն Հրէից
եւ հեթանոսաց՝ որ բնակեալ էին յԵփեսոս. եւ
անկաւ երկիւղ յամենեսեան ՚ի նոսա, եւ մե-
18 ծանայր անուն Տեառն Յիսուսի. * եւ բազումք
՚ի հաւատացելոցն գային եւ խոստովան լինէին,
19 եւ պատմէին զգործս իւրեանց : * Եւ բազումք
՚ի կախարդասարացն բերէին զգիրսն, այրէին
առաջի ամենեցուն. եւ համարեցան զգինս նո-

ցն՝ եւ գտանէին արծաթոյ բիւրս հինգ :

ԵԶ. * Եւ այսպէս բանն Աստուծոյ աճէր եւ 20
զօրանայր : * Եւ իբրեւ կատարեցաւ այս, եդ 21
Պաւղոս 'ի մտի՝ շրջել ընդ Մակեդոնիա եւ ընդ
Աքայիա՝ եւ գալ յԵրուսաղէմ. ասէր, եթէ
յետ երթալոյն իմ անդր, պարտ է ինձ եւ ըզ-
Հռոմ տեսանել : * Առաքեաց 'ի Մակեդոնիա եր- 22
կուս 'ի պաշտօնէից իւրոց, զՏիմոթէոս եւ զԵ-
րաստոս, եւ ինքն մնաց ժամանակս ինչ յԱսիա :
* Եւ եղեւ 'ի ժամանակին յայնմիկ խռովութիւն 23
ոչ սակաւ վասն ճանապարհին : * Իսկ Դեմե- 24
տրիոս ոմն անուն՝ արծաթագործ, գործէր մե-
հեանս արծաթիս Արտեմիս դից, եւ տայր ճար-
տարացն լինել ոչ սակաւ շահ. * որ ժողովեալն 25
իսկ եւ զձեռագէտս արուեստին, եւ ասէ.
Արք, դուք ձեզէն իսկ գիտէք զի յայսմ գործոյ
է շահ մեզ. * եւ տեսանէք եւ լսէք՝ եթէ ոչ 26
միայն զեփեսացւոց, այլ գրեթէ զամենայն իսկ
Ասիացւոց՝ Պաւղոս այս հաւանեցուցեալ շըր-
ջեաց բազում ժողովս, ասել թէ ոչ են աս-
տուածք ձեռագործք : * Եւ ոչ միայն այս ճգնէ 27
զմեր կողմն՝ գալ 'ի յանդիմանութիւն, այլ եւ
զմեծին աստուծոյ Արտեմեայ զմեհեանն յոչինչ
համարել, նա՝ եւ քակելոց եւս իցէ մեծու-
թիւն նորա՝ զոր ամենայն Ասիա եւ տիեզերք
պաշտեն : * Եւ զայս իբրեւ լուան, լի եղեն 28
բարկութեամբ, աղաղակէին եւ ասէին. Մեծ
է Արտեմիս եփեսացւոց : * Եւ լցաւ քաղաքն 29

խռովութեամբ. դիմեցին առհասարակ 'ի թէա-
տրոնն, յափշտակեցին զԳայիոս եւ զԱրիստար-
30 քոս մակեդոնացին՝ զուղեկիցսն Պաւղոսի : * Բայց
Պաւղոս իբրեւ կամեցաւ մտանել յամբոխն, ոչ
31 թողին զնա աշակերտքն. * ոմանք եւ յասիա-
պետացն՝ որ էին նորա բարեկամք, յղէին առ
նա եւ աղաչէին՝ մի տալ զանձն 'ի թէատրոնն :
32 * Այլք այլ իմն աղաղակէին, զի էր ժողովն նո-
ցա խռովեալ. եւ բազումք 'ի նոցանէ ոչ գի-
33 տէին թէ վասն ոյր ժողովեալ իցեն : * Եւ յամ-
բոխէն բազմութենէ յառաջ կալան զԱղէքսան-
դրոս. եւ իբրեւ ածին զնա յառաջ Հրեայքն,
Աղէքսանդրոս շարժեաց զձեռն՝ եւ կամէր պա-
34 տասխանի առնել ամբոխին : * Իբրեւ գիտացին
թէ այրն Հրեայ է, միաբարբառ եղեալ յամե-
նեցունց՝ իբրեւ ժամս երկուս աղաղակել, թէ
35 մեծ է Արտեմիս եփեսացւոց : * Լռեցոյց դըպ-
րապետն զամբոխն եւ ասէ. Արք եփեսացիք,
իսկ ո՞վ է 'ի մարդկանէ՝ որ ոչ գիտէ զեփեսաց-
ւոց քաղաքս՝ մեհենապարդ մեծին Արտեմեայ
36 դիցն եւ Դիոպետեայ. * եւ զի այդ այդպէս է
անշուշտ, պարտ է ձեզ հանդարտել եւ մի ինչ
37 յանդգնութեամբ գործել. * ածէք զարս զայ-
դոսիկ այսր, ոչ մեհենակապուտս եւ ոչ հայ-
38 հոյիչս աստուածոյն մերոյ : * Զի եթէ Դեմե-
տրիոս եւ որ ընդ նմա ճարտարքն՝ ունիցին ինչ
ընդ ումեք բանս, յատեան երթիցեն, եւ դա-
տաւորք գոն, եւ անթիպատոսն լիցին զմիմեանց.

* Ապա թէ վասն այլ իրիք խնդիր իցէ, յօրինա- 39
ւոր ժողովն վճարեսցին. * Քանզի եւ մեզ վիշտ 40
վտանգի է ընդ կռուոյս այսր աւուր՝ առանց
իրիք յանցանաց լինելոյ, զորմէ ոչ կարասցուք
պատասխանի տալ վասն ժողովոյս այսորիկ: Եւ
զայս ասացեալ՝ արձակեաց զժողովն:

ԳԼՈՒԽ Ի.

ԵԼ. Եւ յետ դադարելոյ ամբոխին՝ կոչեաց 1
Պաւղոս զաշակերտսն եւ մխիթարեաց. ողջոյն
ետ, եւ ել գնաց 'ի Մակեդոնիա: * Եւ շրջեալ 2
ընդ կողմանսն ընդ այնոսիկ, եւ մխիթարեալ
զնոսա բանիւք բազմօք, եկն յԵլլադա: * Իբրեւ 3
արար անդ ամիսս երիս, եղեւ նմա դաւ 'ի Հր-
էիցն, մինչդեռ կամէր ելանել յԱսորիս. խոր-
հուրդ կալաւ դառնալ ընդ Մակեդոնիա. * Եւ 4
երթայր ընդ նմա մինչեւ յԱսիա Սոսիպատրոս
Պիւռեայ Բերիացի, եւ 'ի Թեսաղոնիկեցւոց՝
Արիստարքոս եւ Սեկունդոս, եւ Գայիոս Դեր-
բացի, եւ Տիմոթէոս, եւ Ասիացիք՝ Տիւքիկոս
եւ Տրոփիմոս: * Սոքա յառաջ երթեալ մնային 5
մեզ 'ի Տրովադա: * Եւ մեք նաւեցաք յետ ա- 6
ւուրցն բաղարջակերաց 'ի Փիլիպպեայ, եւ ե-
կաք առ նոսա 'ի Տրովադա մինչեւ յաւուրս
հինգ. անդ դադարեցաք աւուրս եօթն: * Եւ 7
յաւուրն շաբաթուց՝ մինչդեռ ժողովեալ էաք
բեկանել զհացն, Պաւղոս խօսէր ընդ նոսա,

զի գնալոց էր 'ի վաղիւ անդր. եւ երկայնեաց
8 զբանն մինչեւ 'ի մէջ գիշերւոյն. * Եւ էին լապ-
տերք բազումք 'ի վերնատանն՝ ուր էաք ժողո-
9 վեալ: * Եւ նստէր ոմն երիտասարդ՝ անուն Եւ-
տիքոս՝ 'ի վերայ պատուհանին, նիրհէր 'ի քուն
թանձրութեան, 'ի խօսելն Պաւղոսի յաճախ.
ընկղմեալ 'ի քնոյ անտի՝ անկաւ յերրորդ դստի-
10 կոնէն 'ի վայր, եւ բարձաւ մեռեալ: * Եւ ի-
ջեալ Պաւղոս՝ անկանէր զնովաւ, եւ առնոյր
զնա ընդ գիրկս՝ եւ ասէր. Մի՛ խռովիք, քանզի
11 ոգի սորա 'ի սմին է: * Եւ ել եբեկ զհացն՝ եւ
ճաշակեաց. եւ բազում եւս խօսեցաւ մինչեւ
12 յառաւօտն, եւ ապա ել գնաց, * եւ ածին
զպատանին կենդանի, եւ մխիթարեցան ոչ
13 սակաւ: * Եւ մեք մտեալ 'ի նաւն՝ ամբարձաք
յԱսոն. անտի ակն ունէաք միւսանգամ առ-
նուլ զՊաւղոս, զի այնպէս պատուիրեալ էր՝
14 մինչ ինքն զցամաքաւն երթալոց էր: * Եւ իբ-
րեւ դիպեցաւ մեզ 'ի յԱսոն, առեալ զնա ե-
15 կաք 'ի Միտիլինէ. * Եւ անտի նաւեալ՝ 'ի վա-
ղիւ անդր հասաք հանդէպ Քիոյ, եւ 'ի միւս
օրն հասաք 'ի Սամոս, եւ 'ի վաղիւ անդր եկաք
16 'ի Միլետոն: * Զի 'ի մտի եդեալ էր Պաւղոսի
նաւել առ Եփեսոսաւ, որպէս զի մի՛ լիցի նմա
ժամանակ ինչ յամել յԱսիա. քանզի փութայր,
եթէ հնար ինչ իցէ նմա, զօրն պենտակոստէից
երթալ յԵրուսաղէմ:
17 ԶԿ. * Եւ 'ի Միլետեայ յղեալ յԵփեսոս, կո-

կոչեաց զերիցունս եկեղեցւոյն ։ * Եւ իբրեւ եկին 18
առ նա, ասէ ցնոսա. Դուք ձեզէն գիտէք յորէ
յառաջնմէ յորմէ եկի յԱսիա, որպէս ընդ ձեզ
զամենայն ժամանակն եղէ, *Ծառայել Տեառն 19
ամենայն խոնարհութեամբ եւ բազում արտա-
սուօք եւ փորձութեամբք՝ որ դիպեցան ինձ 'ի
նենգութեանց Հրէից ։ * Որպէս ոչ ինչ զանգի- 20
տեցի յօգտակարացն չպատմել ձեզ, եւ ուսու-
ցանել ձեզ հրապարակաւ եւ առտնին, * տալ 21
վկայութիւն Հրէից եւ հեթանոսաց զապաշխա-
րութեանն՝ որ առ Աստուած, եւ զհաւատոյն՝
որ 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս ։ * Եւ արդ ա- 22
հաւասիկ ես կապեալ հոգւովն՝ երթամ յԵրու-
սաղէմ, եւ որ ինչ անդ ընդ իս անցանելոց է ոչ
գիտեմ. * բայց զի Հոգին Սուրբ ըստ քաղաքաց 23
վկայէ ինձ եւ ասէ, եթէ կապանք եւ նեղու-
թիւնք մնան քեզ ։ * Այլ եւ ոչ ինչ համարիմ 24
զանձն իմ պատուական, որպէս կատարել զըն-
թացս իմ ուրախութեամբ՝ եւ զպաշտօնն զոր
առի 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, վկայ լի-
նել աւետարանի շնորհացն Աստուծոյ ։ * Եւ 25
արդ ահաւասիկ գիտեմ ես, եթէ ոչ եւս տե-
սանէք զերեսս իմ դուք ամենեքեան, յորս շըր-
ջեցայ քարոզել զարքայութիւնն Աստուծոյ ։
* Վասն որոյ եւ վկայութիւն դնեմ ձեզ յա- 26
ւուր յայսմիկ, զի սուրբ եմ յարենէ ամենե-
ցուն. * քանզի ոչ խորշեցայ 'ի չպատմելոյ ձեզ 27
զամենայն կամսն Աստուծոյ ։ * Զգոյշ կացէք ան- 28

ձանց եւ ամենայն հօտին, յորում եդ զձեզ
Հոգին Սուրբ տեսուչ՝ հովուել զժողովուրդ
29 Տեառն, զոր ապրեցոյց արեամբ իւրով ։ * Քան-
զի գիտեմ ես, եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայ-
ցեն գայլք յափշտակողք 'ի ձեզ որ ոչ խնայես-
30 ցեն հօտին, * եւ 'ի ձէնջ յարիցեն արք որ խօ-
սիցին թիւրս, ձգել զաշակերտան զկնի իւրեանց ։
31 * Վասն այսորիկ արթուն կացէք, եւ յիշեցէք՝
զի զերկեամ մի զցայդ եւ զցերեկ՝ ոչ դադա-
րեցի արտասուօք խրատել զմի մի իւրաքանչիւր ։
32 * Եւ արդ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ եւ
բանի շնորհաց նորա, որ կարօղն է շինել եւ
տալ ձեզ ժառանգութիւն ընդ սուրբսն ամենե-
33 սեան ։ * Արծաթոյ կամ ոսկւոյ կամ հանդերձից՝
34 ոչ ուրուք 'ի ձէնջ ցանկացայ. * դուք ինքնին
գիտէք՝ զի զպէտս իմ եւ որոց ընդ իսն էին՝
35 պաշտեցին ձեռքս այս ։ * Եւ զամենայն ինչ ցու-
ցի ձեզ, զի այսպէս պարտ է վաստակել, եւ
դարմանել զհիւանդս, եւ յիշել զբանն Տեառն
Յիսուսի զոր ինքն իսկ ասաց. Երանելի է մա-
36 նաւանդ տալն քան առնուլ ։ * Եւ զայս իբրեւ
ասաց, եդեալ ծունր ամենեքումբք՝ եկաց յա-
37 ղօթս ։ * Բազում լալումն եղեւ ամենեցուն, եւ
անկեալ զպարանոցաւն Պաւղոսի համբուրէին
38 զնա. * մորմոքէին մանաւանդ 'ի վերայ բանին
զոր ասէր. թէ ոչ եւս տեսանելոց են զերեսս
նորա. եւ յուղարկեցին զնա 'ի նաւ անդր ։

ԳԼՈՒԽ ԻԱ.

ՁԲ. Եւ իբրեւ եղեւ ելանել մեզ եւ մեկ- 1
նել ՚ի նոցանէ, համդէպ գնացեալ եկաք ՚ի Կով,
եւ ՚ի վաղիւ անդր ՚ի Հռոդոն, եւ անտի ՚ի Պա-
տարա։ * Եւ գտեալ նաւ մի զի երթայր ՚ի 2
Փիւնիկէ, ելեալ ՚ի նա գնացաք։ * Եւ յայտ ե- 3
ղեալ Կիպրեայ, թողաք զնա ՚ի ձախակողմն, նա-
ւեցաք յԱսորիս եւ իջաք ՚ի Տիւրոս. քանզի անդ
էր նաւն թափելոց զբեռինն։ * Եւ գտեալ զա- 4
շակերտսն՝ կացաք անդ աւուրս եօթն, որք ա-
սէին զՊաւղոս ՚ի ձեռն Հոգւոյն, մի՛ ելանել
յԵրուսաղէմ։ * Եւ իբրեւ եղեւ մեզ կատարել 5
զաւուրսն՝ ելեալ գնացաք, յուղարկեալ զմեզ
ամենեցուն՝ հանդերձ կանամբք եւ որդւովք՝
մինչեւ արտաքոյ քաղաքին։ Եւ եդեալ ծունր
առ ծովեզերբն՝ կացաք յաղօթս, * եւ հրաժա- 6
րեցաք ՚ի միմեանց եւ ելաք ՚ի նաւն. եւ նոքա
դարձան յիւրեանց տեղիս։ * Եւ մեր զնաւն առ- 7
խթեալ ՚ի Տիւրոսէ՝ հասաք ՚ի Պտողեմայիդա. եւ
ողջոյն տուեալ եղբարց, եղաք օր մի առ նոսա։
* Եւ ՚ի վաղիւ անդր ելեալ անտի եկաք 8
՚ի Կեսարիա, եւ մտեալ յապարանս Փիլիպպո-
սի աւետարանչի, որ էր յեօթանց անտի, ա-
գաք առ նմա. * Նորա էին դստերք չորք կոյսք՝ 9
մարգարէք։ * Եւ ՚ի լինելն մեր անդ աւուրս 10
բազումս, էջ ոմն ՚ի Հրէաստանէ անուն Ագա-

11 բոս, * եւ եկեալ առ մեզ՝ առեալ զգօտին Պաւղո-
սի՝ կապեաց զոտս եւ զձեռս իւր, եւ ասէ.
Այսպէս ասէ Հոգին Սուրբ, զայրն որոյ գօտիս
այս է՝ այսպէս կապեսցեն յԵրուսաղէմ Հրէայք,
12 եւ մատնեսցեն զնա ՚ի ձեռս հեթանոսաց։ * Եւ
իբրեւ լուաք զայն, աղաչէաք մեք եւ որ ՚ի
13 տեղւոջն էին՝ չելանել նմա յԵրուսաղէմ։ * Յայն-
ժամ պատասխանի ետ Պաւղոս եւ ասէ. Զի՞նչ
գործէք՝ զի՞ լայք եւ ճմլեցուցանէք զսիրտ իմ.
քանզի ես ոչ միայն կապելոյ, այլ եւ մեռանելոյ
յԵրուսաղէմ պատրաստ եմ վասն անուանն
14 Տեառն Յիսուսի Քրիստոսի։ * Եւ ՚ի չանսալն նո-
րա՝ լռեցաք. ասեմք, Տեառն կամք լիցին։
15 ՁԳ. * Եւ յետ աւուրցն այնոցիկ՝ հանդեր-
16 ձեալ ելանէաք յԵրուսաղէմ. * եկին ընդ մեզ
եւ յաշակերտաց անտի Կեսարացւոց, եւ տա-
նէին զմեզ առ որում վանս ունելոց էաք՝ Մնա-
սովնի ումեմն Կիպրացւոյ առաջին աշակերտի։
17 * Եւ ՚ի մտանելն մեր յԵրուսաղէմ, խնդութեամբ
18 ընկալան զմեզ եղբարք։ * Ի՛ վաղիւ անդր ե-
մուտ Պաւղոս ընդ մեզ առ Յակովբոս. եւ եկին
19 ամենայն երիցունքն. * եւ ողջոյն տուեալ նոցա՝
պատմէր մի ըստ միոջէ զոր արար Աստուած ՚ի
20 հեթանոսս ՚ի ձեռն պաշտաման նորա։ * Եւ նո-
ցա լուեալ՝ փառաւոր առնէին զԱստուած. եւ
ասեն ցնա. Տեսանե՞ս, եղբայր, քանի՛ բիւրք են
հաւատացելոցն Հրէից, եւ ամենեքեան նա-
21 խանձաւոր օրինացն են։ * Բայց լրագէկ եղեն

վասն քո՝ թէ ապստամբութիւն ուսուցանես 'ի
Մովսիսէ՝ որոց 'ի հեթանոսս ամենայն հրէայք
են, ասես՝ մի՛ թլփատել նոցա զորդիս, եւ մի՛
ըստ կրօնից օրինացն գնալ: * Արդ զի՞նչ լինի- 22
ցի. ապաքէն լուեն թէ եկեալ ես. * արդ զայս 23
արա զոր ասեմք քեզ. են 'ի մեզ արք չորք ուխ-
տադիրք յանձինս իւրեանց, * զնոսա առեալ 24
սրբեսցիս ընդ նոսա. եւ ծախեա ինչ 'ի նոսա՝
զի գերծցեն զգլուխս իւրեանց, եւ գիտասցեն
ամենեքին, թէ զորոց լուալեն եղեն զքէն՝ ոչ
ինչ է, այլ միաբանիս եւ դու պահել զօրէնսն:
* Բայց վասն հաւատացելոցն հեթանոսաց՝ մեք 25
առաքեցաք՝ որպէս ընտրեցաք, մի՛ ինչ այնպիսի
պահել նոցա. բայց միայն զգուշանալ նոցա 'ի
կռոց զոհելոյ եւ յարենէ եւ 'ի հեղձուցելոյ եւ
'ի պոռնկութենէ: * Յայնժամ Պաւղոսի առեալ 26
զարսն՝ 'ի վաղիւ անդր ընդ նոսա սրբեալ ե-
մուտ 'ի տաճարն. յայտ առնել զկատարումն
աւուրցն սրբութեան, մինչեւ մատեաւ 'ի վե-
րայ իւրաքանչիւր ուրուք 'ի նոցանէ պատարագ:

ԶԴ. * Եւ իբրեւ մերձ էին եօթն աւուրքն 27
'ի կատարել, տեսեալ զնա 'ի տաճարին Ասիա-
ցւոց Հրէիցն՝ զեղուին զնովաւ զամենայն ամբո-
խըն, եւ արկեալ 'ի նա ձեռս՝ աղաղակէին.
* Արք իսրայելացիք, օգնեցէք. այս այր է՝ որ 28
հակառակ ժողովրդեանն եւ օրինացն եւ տե-
ղւոյս այսորիկ՝ ամենեցուն ամենայն ուրեք ու-
սուցանէ, մինչեւ հեթանոսս եւս եմուծ 'ի տա-

29 ճարն եւ պղծեաց զսուրբ տեղիս: * Քանզի էր
յառաջագոյն տեսեալ զՏրոփիմոս զեփեսացի 'ի
քաղաքին ընդ նմա, զոր կարծէին եթէ 'ի տա-
30 ճար անդր եմուծ Պաւղոս: * Շարժեցաւ քաղա-
քըն ամենայն, եւ կուտեցաւ ժողովուրդն. եւ
առեալ զՊաւղոս ձգէին արտաքոյ տաճարին.
31 եւ վաղվաղակի փակեցան դրունքն, * եւ խընդ-
րէին զնա սպանանել: Եհաս զրոյց 'ի հազարա-
պետ գնդին, եթէ խռովեալ է ամենայն Երու-
32 սաղէմ. * որոյ անդէն առեալ զօրականս եւ հա-
րիւրապետս՝ դիմեաց 'ի վերայ նոցա. եւ նոցա
տեսեալ զհազարապետն եւ զզօրականսն, դա-
33 դարեցին 'ի հարկանելոյ զՊաւղոս: * Յայնժամ
մատուցեալ հազարապետն կալաւ զնա, եւ հը-
րամայեաց կապել կրկին շղթայիւք, եւ հարցա-
34 նէր թէ ո՛վ իցէ, եւ զի՞նչ իցէ արարեալ: * Այլք
այլ ինչ աղաղակէին զնմանէ յամբոխին. իբրեւ
ոչ կարաց գիտել զստոյգն վասն ամբոխին, հը-
35 րամայեաց ածել զնա 'ի բանակն: * Եւ իբրեւ
եհաս յաստիճանն, դէպ եղեւ բառնալ բե-
րել զնա 'ի զօրականացն՝ վասն բռնութեան
36 ամբոխին. * քանզի զհետ երթայր բազմութիւն
37 ժողովրդեանն, եւ ասէին՝ Բարձ զդա: * Մինչ-
դեռ մտանելոց էր Պաւղոս 'ի բանակն, ասէ
ցհազարապետն. Եթէ արժա՞ն իցէ ինձ խօսել
38 ընդ քեզ: Եւ նա ասէ. Յունարէն գիտե՞ս. * մի՛
արդեօք դո՛ւ իցես եգիպտացին, որ յառաջ
քան զայս աւուրս ապստամբեցուցեր եւ հա-

նէր յանապատ չորս հազարս արս սիկարեանս։
* Եւ ասէ Պաւղոս. Ես եմ այր Հրէայ, 'ի Տար- 39
սոնէ Կիլիկեցւոց, ոչ աննշան քաղաքի քաղաքա-
ցի. աղաչեմ զքեզ հրամայեա ինձ խօսել առ
ժողովուրդդ։ * Եւ 'ի հրամայելն նորա, Պաւղոս 40
կացեալ 'ի վերայ աստիճանացն՝ շարժեաց զձե-
ռըն ժողովրդեանն. իբրեւ բազում լռութիւն
լինէր, սկսաւ բարբառել Հեբրայեցւոց բարբա-
ռոյն եւ ասէ։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Արք եղբարք եւ հարք, լուարուք ինձ այժմ 1
առ ձեզ պատասխանատուութեանս։ * Իբրեւ 2
լուան՝ թէ Հեբրայեցւոց լեզուաւն բարբառե-
ցաւ նոցա, առաւել եւս դադարեցին 'ի լռու-
թիւն։ * Եւ նա ասէ. Ես եմ այր Հրէայ, ծնեալ 3
'ի Տարսոնի Կիլիկեցւոց, սնեալ 'ի քաղաքիս
յայսմիկ առ ոտս Գամաղիելի, խրատեալ ըստ
ճշմարտութեան հայրենի օրինացն, նախանձա-
յոյզ էի Աստուծոյ՝ որպէս ամենեքեան դուք այ-
սօր։ * Որ զայն ճանապարհ վարեցի մինչեւ 'ի 4
մահ, կապել եւ մատնել 'ի բանտս արս եւ
կանայս, * որպէս եւ քահանայապետդ վկայէ 5
ինձ՝ եւ ամենայն ծերակոյտդ. յորոց եւ թուղ-
թըս առեալ առ եղբարս 'ի Դամասկոս երթա-
յի, ածել եւ անտի կապեալս յԵրուսաղէմ, զի
պատժեսցին։ * Եւ եղեւ ինձ 'ի գնալն եւ 'ի 6

մերձենալ 'ի Դամասկոս, զմիջաւուրբն յանկար-
ծակի յերկնից փայլատակեաց լոյս սաստիկ զի-
7 նեւ, * եւ անկայ յերկիր. եւ լուայ բարբառ
որ ասէր ցիս. Սաւուղ Սաւուղ, զի՞ հալածես
8 զիս։ * Եւ ես ետու պատասխանի, թէ ո՞վ ես
Տէր. եւ ասէ ցիս. Ես եմ Յիսուս Նազովրեցի՝
9 զոր դու հալածես։ * Բայց որ ընդ իս էին՝ ըզ-
լոյսն տեսին, այլ զձայնն ոչ լսէին՝ որ խօսէր
10 ընդ իս։ * Եւ ասեմ. Զի՞նչ արարից Տէր. եւ ա-
սէ ցիս Տէր. Յարուցեալ երթիցես 'ի Դամասկոս,
եւ անդ պատմեսցի քեզ վասն ամենայնի որ հը-
11 րաման է քեզ առնել։ * Իբրեւ ոչ տեսանէի 'ի
փառաց լուսոյն այնորիկ, զձեռանէ ձգեալ 'ի
նոցանէ որ ընդ իս էին, մտի 'ի Դամասկոս։
12 * Անանիա ոմն այր երկիւղած ըստ օրինացն, վը-
կայեալ յամենայն բնակչաց որ 'ի Դամասկոս
13 Հրէայքն էին, * եկն եկաց առ իս եւ ասէ, Սա-
14 ւուղ եղբայր, 'ի վեր հայեաց։ * Եւ ես նոյնժա-
մայն 'ի վեր հայեցայ 'ի նա, եւ նա ասէ ցիս.
Աստուած հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց
զքեզ ճանաչել զկամս նորա, եւ տեսանել զար-
15 դարն, եւ լսել բարբառ 'ի բերանոյ նորա. * զի
եղիցես վկայ նորա առ ամենայն մարդիկ, որոց
16 տեսերն եւ լուար. * եւ արդ զի՞ հեղգաս, ա-
րի մկրտեաց, եւ լուա զմեղս քո 'ի կարդալ զա-
17 նուն նորա։ * Եւ եղեւ ինձ 'ի դառնալն յԵրու-
սաղէմ՝ եւ կալ յաղօթս 'ի տաճարին՝ լինել 'ի
18 զարմացման, * եւ տեսանել զնա զի ասէր ցիս.

փութա՛ ե՛լ յԵրուսաղեմէ վաղվաղակի, քանզի
չե՛ն ընդունելոց զքո վկայութիւնդ վասն իմ։
*Եւ ես ասեմ. Տէր, ինքեանք իսկ գիտեն՝ զի ես 19
էի որ ՚ի բանտ տայի, եւ գան հարկանէի ըստ
ժողովրդոցն զհաւատացեալսն ՚ի քեզ. *եւ յոր- 20
ժամ հեղոյր արիւնն Ստեփաննոսի վկայի քոյ,
ես ինքն էի որ ՚ի վերայ կայի, եւ կամակից լի-
նէի սպանմանն նորա, եւ պահէի զհանդերձս
սպանողացն նորա։ *Եւ ասէ ցիս. գնա՛, զի ես 21
՚ի հեթանոսս հեռաւորս առաքեցից զքեզ։ *Եւ 22
ունկն դնէին նմա մինչեւ ցայս բան. ապա բար-
ձին զձայնս իւրեանց եւ ասեն. Բա՛րձ յերկրէ
զայդպիսիդ, զի չէ պարտ այդպիսւոյդ կեալ։
*Եւ յաղաղակելն նոցա եւ ընկենուլ զհանդեր- 23
ձըս եւ զփոշին ցանել յօդսն, *հրամայեաց 24
հազարապետն մուծանել զնա ՚ի բանակն. ասէր
գանիւ հարցանել զնա, զի գիտասցէ վասն որոյ
յանցման այնպէս աղաղակէին զնմանէ։ *Եւ 25
իբրեւ պրկեցին զնա փոկովք, ասէ Պաւղոս ցը-
հարիւրապետն որ ՚ի վերայ կայր, Եթէ զայր
հռովմայեցի եւ անպարտ պա՞րտ իցէ ձեզ գան
հարկանել։ *Իբրեւ լուաւ հարիւրապետն, մա- 26
տուցեալ առ հազարապետն պատմեաց եւ ա-
սէ. Զի՞նչ կամիս առնել, քանզի այրս այս հը-
ռովմայեցի է։ *Եւ մատուցեալ հազարապետն, 27
ասէ ցնա. Ասա դու ցիս, հռովմայեցի՞ ես։ Եւ
նա ասէ. Այո։ *Պատասխանի ետ հազարապե- 28
տըն. Ես բազում գնոց զինուորութիւնս զայս

ստացայ։ Ասէ Պաւղոս. Ես ծնեալ իսկ ՚ի դմին
29 եմ։ *Եւ վաղվաղակի ՚ի բաց կացին ՚ի նմանէ՝
որ հարկանելոցն էին զնա. եւ հազարապետն
իսկ երկեաւ, իբրեւ գիտաց եթէ հռովմայեցի
իցէ, եւ զի կապեալն եւս էր զնա։
30 ԶԶ. *Եւ ՚ի վաղիւ անդր կամէր գիտել ըզ-
ճշմարիտն, թէ զի՞նչ չարախօսութիւն իցէ հը-
րէիցն. արձակեաց զնա, եւ հրամայեաց կոչել
զքահանայապետսն եւ զամենայն ատեանն, եւ
իջուցեալ զՊաւղոս՝ կացոյց ՚ի մէջ նոցա։

ԳԼՈՒԽ ԻԳ.

1 Եւ հայեցեալ Պաւղոսի յատեանն՝ ասէ. Արք
եղբարք, ես ամենայն ուղիղ մտօք գնացեալ եմ
2 առաջի Աստուծոյ մինչեւ ցայսօր։ *Եւ քահա-
նայապետն Անանիա հրամայեաց սպասաւորացն
3 հարկանել զբերան նորա։ *Յայնժամ Պաւղոս
ասէ ցնա. Հարկանելոց է զքեզ Աստուած, որմ
բռեալ. եւ դու նստիս դատե՞լ զիս ըստ օրինաց.
եւ առանց օրինաց հրամայես զիս հարկանել։
4 *Եւ որ շուրջն կային՝ ասեն. Զքահանայապետ
5 Աստուծոյ հայհոյե՞ս։ *Եւ ասէ Պաւղոս. Ոչ գի-
տէի, եղբարք, եթէ իցէ քահանայապետ. գը-
րեալ իսկ է՝ զիշխան ժողովրդեան քո ոչ հայհո-
6 յեսցես։ *Իբրեւ գիտաց Պաւղոս՝ եթէ մի կողմն
սադուկեցւոց է՝ եւ միւսն փարիսեցւոց, աղա-
ղակէր ՚ի մէջ ատենին. Արք եղբարք, ես փարի-

սեցի եմ, որդի փարիսեցւոց. վասն յուսոյ եւ
յարութեան մեռելոց ես աւասիկ դատիմ: *Եւ 7
զայս իբրեւ ասաց՝ եղեն հերձուածք փարիսեց-
ւոցն եւ սադուկեցւոց, եւ պատառեցաւ բազ-
մութիւնն: *Քանզի սադուկեցիքն ասեն, չիք 8
յարութիւն, եւ ոչ հրեշտակ եւ ոչ հոգի. բայց
փարիսեցիքն խոստովանին զերկոսեան: *Եւ ե- 9
ղեւ աղաղակ մեծ. յառն կացին ոմանք 'ի դպ-
րաց անտի 'ի կողմանէն փարիսեցւոց, հակա-
ռակէին եւ ասէին. Ոչ ինչ չարութիւն գտա-
նեմք յառնս յայսմիկ, բայց եթէ հոգի խօսե-
ցաւ 'ի դմա, կամ հրեշտակ: *Եւ 'ի բազմա- 10
նալ ամբոխին, երկուցեալ հազարապետն՝ թէ
գուցէ ձեղքիցի Պաւղոս 'ի նոցանէ, հրամայեաց
զօրականին իջանել յափշտակել զնա 'ի միջոյ նո-
ցա, եւ ածել 'ի բանակն: *Եւ 'ի վաղուեան 11
գիշերին՝ եկաց առ նմա Տէր, եւ ասէ. Քաջա-
լերեաց, Պաւղէ, զի որպէս վկայեցեր վասն իմ
յԵրուսաղէմ, սոյնպէս պարտ է քեզ եւ 'ի Հռ-
ովմ վկայել:

ԶԷ. *Եւ իբրեւ այգ եղեւ՝ արարեալ ժո- 12
ղով հրէիցն, նզովեցին զանձինս ոչ ուտել եւ
ոչ ըմպել՝ մինչեւ սպանցեն զՊաւղոս: *Եւ էին 13
աւելի քան զքառասուն՝ որոց զայս ընդ միմեա-
նս երդմունս արարեալ էր: *Որք մատեան 14
առ քահանայապետսն եւ երիցունս՝ եւ ասեն.
Նզովիւք նզովեցաք զանձինս՝ ոչ ինչ ճաշակել
մինչեւ սպանցուք զՊաւղոս. *բայց դուք զգա- 15

ցուցէք հազարապետին հանդերձ ատենիւն,
զի իջուսցէ զնա առ ձեզ, որպէս թէ կամիցէք
ճշմարտագոյնս ինչ գիտել զնմանէ. եւ մեք յա-
ռաջ քան զմօտել նորա՝ պատրաստ եմք 'ի սպա-
16 նանել զնա: *Եւ լուեալ քեռորդւոյն Պաւղոսի
զդաւաճանութիւնն, եկն եմուտ 'ի բանակ անդր՝
17 պատմեաց Պաւղոսի: *Եւ կոչեցեալ Պաւղոսի
առ իւր զմի 'ի հարիւրապետաց անտի՝ ասէ.
Զպատանիս զայս տար առ հազարապետն, զի
18 ունի ինչ պատմել նմա: *Եւ նորա առեալ
զնա տարաւ առ հազարապետն՝ եւ ասէ. Կա-
պեալն Պաւղոս կոչեաց զիս, եւ աղաչեաց զպա-
տանիս զայս ածել առ քեզ, ունի ինչ խօսել
19 ընդ քեզ: *Առեալ զձեռանէ նորա հազարա-
պետին՝ գնաց մեկուսի. հարցանէր՝ թէ զի՞նչ
20 ունիս խօսել ընդ իս: *Եւ նա ասէ. Հրեայք
միաբանեցին աղաչել զքեզ, զի վաղիւ զՊաւղոս
իջուսցես յատեան, իբրեւ թէ կամիցին ինչ
21 ճշմարտագոյնս հարցանել վասն նորա. *արդ
դու մի՛ անսայցես նոցա. քանզի դարան գոր-
ծեալ է նմա 'ի նոցանէ արանց աւելի քան զքա-
ռասուն, որք նզովեցին զանձինս՝ ոչ ուտել
եւ ոչ ըմպել՝ մինչեւ սպանցեն զնա. արդ պա-
22 տրաստ են, եւ սպասեն քում հրամանի: *Ապա
հազարապետն արձակեաց զպատանին, պա-
տուիրեալ մի՛ ումեք ասել՝ թէ զայս զգացու-
23 ցեր ինձ: *Եւ կոչեաց երկուս 'ի հարիւրապե-
տացն եւ ասէ. Պատրաստեցէք զօրականս եր-

կերիւր , որպէս զի երթիցեն մինչեւ 'ի Կեսա-
րիա . եւ հեծեալս եօթանասուն եւ տիգաւորս
երկերիւր , յերրորդ ժամու գիշերոյն . * եւ գը- 24
րաստս պատրաստական , որպէս զի իջուցեալ
զՊաւղոս ապրեցուսցեն առ Փելիքս դատաւոր .
* գրեալ թուղթ՝ որ ունէր օրինակ զայս . * Կը- 25
ղաւդիոս Լիւսիաս , առ քաջ դատաւոր Փելիքս , 26
ողջոյն : * Զայրս զայս կալեալ 'ի Հրէից՝ եւ մերձ 27
'ի սպանանել 'ի նոցանէ , հասեալ 'ի վերայ զօրա-
կանաւ ապրեցուցի , իմացեալ թէ Հռոմայեցի
է : * Կամեցայ գիտել զվնասն՝ վասն որոյ ամ- 28
բաստանէին զդմանէ , իջուցի զդա յատեան նո-
ցա . * զոր գտի ամբաստանեալ վասն խնդրոյ ի- 29
րիք իւրեանց օրինաց , եւ ոչ ինչ արժանի մա-
հու կամ կապանաց ունէր զնաս : * Իբրեւ ազդ 30
եղեւ ինձ նենգութեան յարդ լինելոյ 'ի նոցա-
նէ՝ յղեցի առ քեզ , հրաման տուեալ եւ չա-
րախօսացն խօսել զդմանէ առաջի քո . ողջ լեր :
* Եւ զօրականացն ըստ հրամանի նորա առեալ 31
զՊաւղոս ածին գիշերայն յԱնտիպատրիս . * եւ 32
'ի վաղիւ անդր արձակեալ զհեծեալսն՝ ընդ նմա
երթալ , դարձան 'ի բանակն : * Նոքա մտին 'ի 33
Կեսարիա , եւ տուեալ ցդատաւորն զթուղթն ,
առաջի կացուցին նորա եւ զՊաւղոս : * Իբրեւ ըն- 34
թերցաւ , եհարց թէ յորմէ նահանգէ իցէ . եւ
ստուգեալ եթէ 'ի Կիլիկեայ է . * Լուայց քեզ , 35
ասէ , յորժամ եւ չարախօսքն քո եկեսցեն : Եւ
հրամայեաց յապարանսն Հերովդի պահել զնա :

ԳԼՈՒԽ ԻԴ .

1 ԻԿ . Եւ յետ հինգ աւուր էջ քահանայա-
պետն Անանիա հանդերձ ծերովք ոմամբք , եւ
ճարտարախօսաւ Տերտիղեաւ ոմամբ , որք եւ
2 զգացուցին դատաւորին վասն Պաւղոսի : * Եւ
'ի կոչելն զնա , սկսաւ Տերտիղոս ամբաստան
լինել եւ ասել . Բազում խաղաղութիւն գտեալ
'ի քէն եւ իրաց ուղղութիւն ազգիս այսորիկ
3 քով խնամովդ , * ամենայնիւ եւ ամենայն ուրեք
շնորհակալ եմք , քաջդ Փելիքս , ամենայն գոհու-
4 թեամբ : * Բայց զի մի աւելի եւս աշխատ ա-
րարից զքեզ , աղաչեմ լսել մեզ կարճ 'ի կար-
5 ճոյ քոյին հեզութեամբդ : * Քանզի գտաք զայր
զայս ապականիչ եւ խռովիչ ամենայն Հրէից՝ որք
են ընդ տիեզերս , եւ առաջնորդ Նազովրեցւոց
6 հերձուածոյն . * որ եւ զտաճարն իսկ կամեցաւ
պղծել , զոր եւ կալաք , եւ ըստ մերոց օրինացն
7 դատել կամեցաք : * Եկեալ Լիւսիաս հազարա-
պետ՝ մեծաւ բռնութեամբ 'ի ձեռաց մերոց ե-
8 հան . * հրամայեաց եւ չարախօսացն նորա գալ
առ քեզ , յորմէ դու իսկ քննեալ լինիցիս 'ի
վերստին դատեալ , ամենայնի հասու լինել՝ զո-
9 րոց մեքս ամբաստանս եմք զդմանէ : — * Միա-
10 բանեցին եւ Հրեայքն , ասեն . Այդպէս է : * Պա-
տասխանի ետ Պաւղոս , յանձնարկել նմա դա-
տաւորին խօսել . Ի բազում ամաց լինել քեզ

դատաւոր ազգիս այսորիկ գիտեմ, յօժարու-
թեամբ վասն իմոց իրաց պատասխանի առնեմ։
* Քանզի կարող ես գիտել, զի ոչ ինչ աւելի է 11
իմ քան զաւուրս երկոտասան, յորմէ հետէ ելի
երկիր պագանել յԵրուսաղէմ. * եւ ոչ 'ի տա- 12
ճարի անդ գտին զիս ընդ ումեք խօսեցեալ, եւ
կամ ժողովս արարեալ բազմաց . ոչ 'ի ժողո-
վուրդս եւ ոչ 'ի քաղաքի . * եւ ոչ յանդիման 13
առնել կարեն քեզ, վասն որոյ այժմ չարախօ-
սեն զինէն ։ * Բայց զայս խոստանամ քեզ, եթէ 14
ըստ ճանապարհին զոր ասեն հերձուած, այն-
պէս պաշտեմ զհայրենի Աստուածն, հաւատա-
ցեալ ամենայնի՝ որ ինչ յօրէնս եւ 'ի մարգա-
րէս գրեալ է ։ * Ունիմ յոյս առ Աստուած, ո- 15
րում եւ դոքա իսկ ակն ունին, թէ յարութիւն
լինելոց է արդարոց եւ մեղաւորաց . * յորում 16
եւ ես իսկ ճգնիմ անխիղճ միտս ունել առ Աս-
տուած եւ առ մարդիկ յամենայն ժամ ։ * Ի բա- 17
զում ամաց ողորմութիւնս եկի առնել յազգ-
իմ, եւ ետու պատարագս . * որովք գտին զիս 18
սրբեալ 'ի տաճարին, ոչ բազմօք, եւ ոչ ամբո-
խիւ, * ոմանք յԱսիացւոց անտի Հրեայք, որոց 19
պարտ էր գալ առաջի քո եւ ամբաստան լինել,
եթէ ունիցին ինչ զինէն . * եւ կամ ինքեանք 20
սոքա ասասցեն, զի՞նչ գտին յիս անիրաւութիւն՝
մինչդեռ կայի յատենին . * բայց միայն վասն միոյ 21
բարբառոյս այսորիկ՝ զոր աղաղակեցի մինչ կա-
յի 'ի մէջ նոցա, եթէ վասն յարութեան մե-

22 ռելոց դատիմ ես այսօր 'ի ձէնջ ։ — * Եւ յապա-
ղեաց զնոսա Փելիքս, զի ստուգագոյնս գիտէր
վասն ճանապարհին, ասէ . Յորժամ Լուսիաս
հազարապետ իջցէ աստ, տեղեկացայց վասն
23 ձեր ։ * Հրամայեաց հարիւրապետին պահել
զնա, եւ ունել յընդարձակի, եւ մի՛ զոք յիւ-
րոց անտի արգելուլ 'ի պաշտելոյ զնա ։
24 ԻԲ . * Եւ յետ աւուրց ինչ, եկն Փելիքս հան-
դերձ Դրուսիլլաւ կնաւ իւրով՝ որ էր Հրեայ, կո-
չեաց զՊաւղոս, եւ լուաւ 'ի նմանէ վասն որ 'ի
25 Յիսուս Քրիստոս հաւատոյն ։ * Եւ 'ի խօսելն նո-
րա վասն արդարութեան եւ ժուժկալութեան
եւ հանդերձեալ դատաստանին, զահի հարեալ
Փելիքս, ետ պատասխանի . Դու առ այժմ երթ,
26 եւ յորժամ ժամ լինիցի, կոչեցից զքեզ ։ * Մի-
անգամայն եւ ակն ունէր, թէ տացի ինչ նմա
'ի Պաւղոսէ . վասն որոյ եւ ստէպ կոչեցեալ
զնա՝ խօսէր ընդ նմա ։
27 * Եւ 'ի կատարել երկուց ամաց՝ եկն փոխա-
նակ Փելիքսի՝ Փեստոս Պորկիոս . իբրեւ կամե-
ցաւ շնորհս առնել Հրէից Փելիքս, եթող ըզ-
Պաւղոս կապեալ ։

ԳԼՈՒԽ ԻԵ .

1 Փեստոս իբրեւ եհաս յիշխանութիւնն, յետ
2 երից աւուրց ել յԵրուսաղէմ 'ի Կեսարեայ . * եւ
զգուշացուցին նմա քահանայապետքն եւ գլխա-

ւորք Հրէից զՊաւղոսէ, * եւ աղաչէին՝ խնդրեալ 3
շնորհս 'ի նմանէ, զի կոչեսցէ զնա յԵրուսաղէմ.
դարան գործեալ սպանանել զնա 'ի ճանապար-
հի ։ * Իսկ Փեստոս արար պատասխանի՝ պահել 4
զնա 'ի Կեսարիա, թէ ինքն իսկ ընդ հուպ անդր
երթալոց էր. * Եւ որ 'ի ձէնջ կարողքդ իցեն, 5
ասէ, ընդ իս իջցեն, եւ թէ իցէ ինչ յառնն
վնաս՝ ամբաստան լիցին զնմանէ ։ * Եւ լեալ անդ 6
աւուրս՝ ոչ աւելի քան զութ կամ զտասն, եկն
էջ 'ի Կեսարիա. եւ 'ի վաղիւ անդր նստեալ յա-
տենի, հրամայեաց ածել զՊաւղոս ։ * Եւ իբ- 7
րեւ եկն, կացին շուրջ զնովաւ որ յԵրուսաղե-
մէ իջեալ էին Հրեայքն, բազում եւ ծանր վնաս
դնէին, զորս ոչ կարէին ցուցանել. * քանզի առ- 8
նէր պատասխանի Պաւղոս, եթէ ոչ յօրէնս Հր-
րէից, եւ ոչ 'ի տաճարն, եւ ոչ 'ի կայսր ինչ
վնասակար եմ ։ * Բայց Փեստոս կամեցեալ Հրէ- 9
ից՝ շնորհս առնել՝ պատասխանի ետ Պաւղոսի
եւ ասէ. Կամիս յԵրուսաղէմ ելանել, եւ անդ
վասն դոցին իրաց դատել առաջի իմ ։ * Եւ ա- 10
սէ Պաւղոս. Յատենի կայսեր հասեալ կամ, ուր
պարտ է ինձ դատել. Հրէից ինչ չեմ վնասա-
կար, որպէս եւ դու իսկ քաջ գիտես. * ապա 11
եթէ վնասակար եմ՝ եւ արժանի ինչ մահու
գործեցի, ոչ զանգիտեմ 'ի մեռանելոյ. իսկ ե-
թէ ոչ ինչ է՝ զորոց սոքա ամբաստան լինին զի-
նէն, ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել. 'ի կայսր
բողոքեմ ։ * Յայնժամ Փեստոսի խօսեցեալ ընդ 12

խորհրդականսն՝ արար պատասխանի. Ի կայսր
բողոքեցեր՝ առ կայսր երթիցես ։
13 ԻԳ. * Իբրեւ անցին աւուրք ինչ, Ագրիպ-
պաս արքայ եւ Բերնիկէ եկին 'ի Կեսարիա՝ յող-
14 ջոյն Փեստոսի ։ * Եւ իբրեւ աւուրս բազումս
հանէին անդ, Փեստոս վերկոյց արքային զՊաւղո-
սէ եւ ասէ. Այր մի է աստ մնացեալ կապեալ
15 'ի Փելիքսէ. * վասն որոյ իբրեւ շոգայ յԵրուսա-
ղէմ՝ զգացուցին ինձ քահանայապետքն եւ գլ-
խաւորք Հրէիցն. խնդրէին յինէն առնել նմա
16 պատուհաս. * որոց ետու պատասխանի, եթէ
չէ օրէն հռոմայեցւոց շնորհել ումեք զոք, մինչ-
չեւ ամբաստանեալն յանդիման ունիցի զդատա-
խազսն, եւ տեղի պատասխանւոյ առնուցու վասն
17 ամբաստանութեանն ։ * Եւ իբրեւ եկին աստ, ոչ
ինչ յապաղեցի, այլ 'ի վաղիւն նստեալ յատենի՝
18 հրամայեցի ածել զայրն ։ * Վասն որոյ մատու-
ցեալ ամբաստանքն, եւ ոչ մի ինչ վնաս չա-
րութեան 'ի մէջ բերէին՝ զորոց եսն կարծէի.
19 * բայց խնդիրս ինչ՝ որ վասն իւրեանց պաշտա-
ման ունէին ընդ նմա. եւ վասն Յիսուսի ուրումն
մեռելոյ, զորմէ ասէր Պաւղոս թէ կենդանի է ։
20 * Իբրեւ յանհնարս մտի վասն այնպիսի իրաց
քննութեան, ասեմ եթէ կամիցի՞ երթալ յԵ-
րուսաղէմ, եւ անդ դատել վասն նոցին իրաց ։
21 * Բայց 'ի Պաւղոսի բողոքելն՝ զի պահեսցի 'ի
քաջի արանցն յանդիմանութիւն, հրամայեցի
պահել զնա՝ մինչեւ տաց տանել առ կայսր ։

* Ագրիպպաս ցՓեստոս ասէ. կամէի եւ ես լը- 22
սել առնն։ Եւ նա ասէ. ի վաղիւ լուիցես։

ԻԳ. * Եւ ՚ի վաղիւ անդր իբրեւ եկն Ագ- 23
րիպպաս եւ Բերինիկէ բազում երեւելի սպա-
սուք, եւ մտին յատեանն հանդերձ հազարա-
պետօքն եւ արամբք պատուաւորօք քաղաքին,
եւ հրամայեալ Փեստոսի ածին զՊաւղոս։ * Եւ 24
ասէ Փեստոս. Արքայ Ագրիպպա, եւ ամենայն
արք որք ընդ մեզ էք, տեսանէ՞ք զսա. վասն
սորա ամենայն ժողովք հրէից ամբաստան եղեն
ինձ յԵրուսաղէմ, եւ աստ աղաղակէին՝ թէ չէ
պարտ դմա կեալ. * բայց ես ՚ի վերայ հասի, 25
թէ ոչ ինչ է դորա արժանի մահու գործեալ.
եւ դորա ինքնին բողոք կալեալ առ քաջ արան-
ցըն, խորհեցայ յղել։ * Վասն որոյ ստուգու- 26
թեամբ ինչ գրել տեառն իմում ոչ ունիմ. վասն
այնորիկ ածի զդա առաջի ձեր, եւ մանաւանդ
առաջի քո, արքայ Ագրիպպա, որպէս վերստին
քննեալ՝ մարթասցիմ ինչ գրել. * քանզի անպա- 27
տեհ իմն թուի ինձ՝ տալ տանել կապեալ մի,
եւ ոչ ինչ զվնաս զնմանէ նշանակել։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Եւ Ագրիպպաս ասէ ցՊաւղոս. հրամայեալ 1
է քեզ վասն քո խօսել։ Յայնժամ Պաւղոսի ձը-
գեալ զձեռն՝ առնէր պատասխանի. * Վասն 2
ամենայն ամբաստանութեան հրէիցդ զինէն,

արքայ Ագրիպպա, համարիմ զանձն երանելի,
զի քո առաջի այսօր տալոց եմ պատասխանի.
3 * մանաւանդ՝ զի գիտակ իսկ ես ամենայն կրօնից
եւ խնդրոց հրէից. վասն որոյ աղաչեմ երկայն-
4 մտութեամբ լսել ինձ։ * Քանզի կենաց իմոց՝ որ
՚ի մանկութենէ իսկզբանէ լեալ յազգի անդ ի-
մում յԵրուսաղէմ, տեղեակ են ամենայն հը-
5 րէայք. * յառաջագոյն գիտեն ՚ի վաղուց հե-
տէ, եթէ կամիցին վկայել, զի ըստ ճշմարտա-
գոյն կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ փարի-
6 սեցի։ * Եւ արդ վասն յուսոյն առ հարսն եղելոյ
աւետեացն յԱստուծոյ՝ դատեալ կամ յատենի,
7 * յոր երկոտասան ազգատոհմին մերոց անպա-
կաս զցայգ եւ զցերեկ պաշտեալ ակն ունին հա-
սանել. վասն որոյ յուսոյ ամբաստանիմ, արքայ,
8 ՚ի հրէիցդ. * զի՞նչ անհաւատ թուի ձեզ, եթէ
9 Աստուած զմեռեալս յարուցանէ։ * Ես իսկ ինք-
նին պատշաճ համարէի, զբազում ինչ հակա-
ռակ անուանն Յիսուսի Նազովրեցւոյ գործել.
10 * զոր եւ արարի իսկ յԵրուսաղէմ. եւս զբա-
զումս ՚ի սրբոցն ես բանտարգել առնէի՝ ՚ի քա-
հանայապետացն առեալ իշխանութիւն, եւ զըս-
11 պանելոյն նոցա բերէի համար։ * Եւ ըստ ա-
մենայն ժողովրդոցն բազում անգամ պատժեալ
զնոսա, բռնադատէի հայհոյել. առաւել եւս
մոլեալ ՚ի վերայ նոցա, հալածէի մինչեւ յար-
տաքին քաղաքսն։
12 * Որովք գնացեալ ՚ի Դամասկոս՝ իշխանու.

Թեամբ եւ հրամանօք քահանայապետիցն, * ընդ 13
մէջ աւուրն 'ի ճանապարհի տեսի, արքայ,
յերկնից առաւել քան զլուսաւորութիւն արե-
գական՝ ծագեալ զինեւ լոյս, եւ զնովք որ ընդ ի-
նըն երթային. * եւ յամենեցուն մեր անկանելն 14
յերկիր՝ լուայ ձայն որ ասէր ցիս հեբրայեցւոց
բարբառովն. Սաւուղ Սաւուղ, զի՞ հալածես
զիս. խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել:
* Եւ ես ասեմ. Ո՞ ես Տէր: Եւ Տէր ասէ. Ես եմ 15
Յիսուս զոր դու հալածես. * այլ արի եւ կաց 16
'ի վերայ ոտից քոց. զի վասն այսորիկ երեւեցայ
քեզ՝ առնուլ զքեզ 'ի ձեռն պաշտօնեայ եւ
վկայ որոց տեսերդ զիս, եւ որոց երեւեցայց
քեզ. * փրկել զքեզ 'ի ժողովրդենէդ եւ 'ի հե- 17
թանոսաց՝ յորս ես առաքեցից զքեզ. * բանալ 18
զաչս նոցա, դարձուցանել 'ի խաւարէ 'ի լոյս,
եւ յիշխանութենէ սատանայի յԱստուած. առ-
նուլ նոցա զթողութիւն մեղաց եւ վիճակ ընդ
սուրբսն հաւատովքն որ յիս: * Ուստի, արքայ 19
Ագրիպպա, ոչ եղէ անհաւան երկնաւոր տես-
լեանն. * այլ նախ որոց 'ի Դամասկոս եւ յԵրու- 20
սաղէմ էին՝ եւ ընդ ամենայն գաւառսն հրէաս-
տանի եւ 'ի հեթանոսս՝ պատմեցի զղջանալ եւ
դառնալ յԱստուած կենդանի. արժանի ապաշ-
խարութեան գործս գործել: * Վասն այսորիկ 21
հրէից կալեալ զիս 'ի տաճարին, կամէին սպա-
նանել. * օգնութիւն հասեալ առ 'ի յԱստու- 22
ծոյ, մինչեւ ցայսօր կացի վկայեալ փոքու եւ

մեծի. ոչ ինչ արտաքոյ ասել՝ քան զոր մարգա-
րէքն եւ Մովսէս խօսեցան զհանդերձելոցն լի-
23 նելոյ. * եթէ չարչարելոց է Քրիստոսն, եթէ ա-
ռաջին 'ի յարութենէ մեռելոց՝ լոյս պատմե-
24 լոց է ժողովրդեանն եւ հեթանոսաց: — * Եւ
նորա զայս պատասխանի տուեալ, Փեստոս 'ի
ձայն մեծ ասէ. Մոլիս, Պաւղէ. բազում դպ-
րութիւնք զքեզ 'ի մոլորութիւն դարձուցա-
25 նեն: * Իսկ Պաւղոս ասէ. Ոչ մոլիմ, քաջդ Փես-
տոս, այլ զգաստութեան եւ զճշմարտութեան
26 բանս բարբառիմ. * գիտակ իսկ է այսոցիկ ար-
քայ, ընդ որում համարձակեալդ խօսիմ. քան-
զի ծածկել 'ի քէն իմիք 'ի սոցանէ՝ չառնում
յանձն. զի ոչ եթէ յանկեան ուրեք գործեալ
27 իցէ այս: * Հաւատա՞ս, արքայ Ագրիպպաս,
28 մարգարէից. գիտեմ զի հաւատաս: * Եւ ասէ
Ագրիպպաս ցՊաւղոս. փոքու իմն հաւանեցու-
29 ցանես զիս լինել քրիստոնեայ: * Եւ Պաւղոս ա-
սէ. Խնդրէի յԱստուծոյ՝ եւ փոքու եւ մեծաւ,
ոչ միայն զքեզ՝ այլ զամենեսեան որ լսեն ինձ
այսօր՝ լինել այսպիսի որպէս եւ եսս եմ. բաց
30 'ի կապանաց աստի: * Յոտն եկաց արքայն եւ
դատաւորն եւ Բերինիկէ, եւ որք ընդ նոսայն
31 նստէին: * Եւ իբրեւ գնացին, խօսէին ընդ մի-
մեանս եւ ասէին, թէ ոչ ինչ արժանի մահու
32 կամ կապանաց գործէ այրս այս: * Իսկ Ագրիպ-
պաս ցՓեստոս ասէ. Արձակել մարթ էր զայրս
զայս՝ եթէ ոչ էր բողոքեալ 'ի կայսր:

ԳԼՈՒԽ ԻԷ.

ԻԷ. Իբրեւ հրամայեցաւ մեզ նաւել յԻտա- 1
լիա, տային զՊաւղոս եւ զայլս ոմանս կապեալս
՚ի հարիւրապետ մի, որում անուն էր Յուլիոս,
սեբաստեան գնդին: * Եւ ելեալ ՚ի նաւ մի ադր- 2
ամիտտացի, որ երթալոց էր ՚ի կողմանս Ասի-
ացւոց՝ գնացաք. էր ընդ մեզ Արիստարքոս Մա-
կեդոն Թեսաղոնիկեցի: * Եւ ՚ի վաղիւ անդր 3
իջաք ՚ի Սիդոն. եւ մարդասիրութիւն ցուցեալ
Յուլիոս առ Պաւղոս, հրամայեաց առ բարեկամ-
սն երթալ եւ դարման գտանել: * Եւ անտի ե- 4
լեալ՝ խոնարհագոյն նաւեցաք ՚ի Կիպրոս վասն
հողմոյն ընդդէմ լինելոյ. * Յայնժամ ընդ մէջ 5
ծովուն Կիլիկեայ եւ Պամփիլեայ նաւեալ՝ իջաք
՚ի Միւռա Լիկիացւոց: * Եւ անդ գտեալ հարիւ- 6
րապետին նաւ մի աղեքսանդրացի՝ որ երթայր
յԻտալիա, եմոյծ զմեզ անդր: * Եւ ՚ի բազում 7
աւուրս ծանրանաւեալք՝ հազիւ հասաք առ Կնի-
դեաւ. եւ ՚ի չթողացուցանել մեզ հողմոյն, նա-
ւեցաք խոնարհագոյն ՚ի Կրետէ առ Սաղմոնեաւ.
* հազիւ անցեալ առ նովաւ՝ եկաք ՚ի տեղի ինչ՝ 8
որ կոչէր Գեղեցիկ նաւահանգիստ, յոր հուպ
էր քաղաքն Ղասեայ: * Եւ իբրեւ բազում ժա- 9
մանակք անցանէին, եւ սփալ եւս լինէր նա-
ւելոյն, եւ վասն այն ինչ եւս պահոյն անցա-
նելոյ, տայր խրատ Պաւղոս, * եւ ասէր ցնոսա. 10

Արք, տեսանեմ զի Թշնամանօք եւ բազում վնա-
սու՝ ոչ միայն բեռինդ եւ նաւիդ, այլ եւ ան-
11 ձանց մերոց լինելոց է նաւարկութիւնս: * Իսկ
հարիւրապետն նաւապետին եւ նաւավարին ա-
12 ռաւել անսայր, քան բանիցն Պաւղոսի: * Իբ-
րեւ դժպատեհ իմն Թուէր նաւահանգիստն
առ ձմերել, բազումք խորհեցան գնալ անտի.
Թերեւս կարասցեն հասանել ՚ի Փիւնիկէ, ձմե-
րել ՚ի նաւահանգստին կրետացւոց, որ հայէր
13 ընդ հարաւակողմ եւ ընդ աշխարհն: * Եւ ՚ի
շնչել հարաւոյն՝ համարեցան ուր դիմեալն էին
հասանել, եւ արկեալ՝ մօտ անցանէին առ Կրե-
14 տեաւ. * եւ ոչ յետ բազում ժամուց՝ անկաւ
զնովաւ հողմ ուռուցիկ որ կոչի Եւրակիլոմն:
15 * Ընդ յափշտակել նաւին եւ ՚ի չհանդուրժել
ընդդէմ հողմոյն, թոյլ տուեալ երթայաք եւ
16 գայաք. * ՚ի կղզի ինչ դիմեալ՝ որ կոչէր Կլաւ-
17 դա, հազիւ կարացաք ըմբռնել զմակոյկն, * զոր
առեալ՝ յօգնականութիւն կապէին ընդ նաւն:
Երկուցեալք թէ գուցէ ՚ի յորձանուտն անկա-
նիցին, իջուցեալ զառագաստն՝ այնպէս երթա-
18 յին եւ գային: * Եւ ՚ի սաստկագոյն վտանա-
լոյն մերոյ՝ ՚ի վաղիւ անդր զկարասին ընկեցին
19 առնէին. * Եւ յերրորդ աւուր ընդ իւրեանց ձեռն
20 զգործին նաւին ընկեցին: * Իբրեւ ոչ արեւ եւ
ոչ աստեղք երեւէին ՚ի բազում աւուրս, եւ
ձմեռն ոչ սակաւ կայր ՚ի վերայ, ապա բառ-
21 նայր ամենայն յոյս փրկութեան մերոյ: * Եւ զի

բազում աւուրս նօթի էին, յայնժամ Պաւղոս
կացեալ 'ի մէջ նոցա՝ ասէ. Պարտ էր ձեզ, ո՛վ
արք, անսալ ինձ, եւ ոչ ելանել 'ի Կրետեայ՝ եւ
շահել զվիշտս զայս եւ զվնաս. * եւ արդ խրա- 22
տեմ զձեզ քաջալերել. զի վնաս անձին՝ եւ ոչ
միում 'ի ձէնջ լինելցի, բայց 'ի նաւէդ: * Քանզի 23
երեւեցաւ ինձ յայսմ գիշերի հրեշտակ Աստու-
ծոյ՝ որոյ եսն եմ եւ պաշտեմ զնա, * եւ ասէ. 24
Մի՛ երկնչիր, Պաւղէ, կայսեր եւս պարտ է քեզ
յանդիման լինել. եւ ահա շնորհեալ է քեզ
յԱստուծոյ զամենեսեան՝ որ են ընդ քեզ 'ի նա-
ւիդ: * Վասն այսորիկ քաջալերեցարուք, արք, 25
զի հաւատամ յԱստուած՝ եթէ այսպէս լինի՝
զոր օրինակ խօսեցաւ ընդ իս: * բայց 'ի կղզի ինչ 26
հասանէ մեզ անկանել:

ԻԶ. * Իբրեւ չորեքտասաներորդ գիշեր լի- 27
նէր՝ մինչդեռ ծփէաք 'ի հանդրին անդունդս,
'ի մէջ գիշերին կարծէին նաւավարքն եթէ հա-
սեալ իցեն յաշխարհ ուրեք. * Եւ ընկեցեալ ըդ- 28
գունդն՝ գտին գիրկս քսան. եւ սակաւ ինչ
դադարեալ, դարձեալ ընկեցին՝ եւ գտին գիր-
կըս հնգետասան: * Զահի հարեալ թէ գուցէ 29
'ի խիստ ինչ տեղիս անկանիցին, յետուստ կող-
մանէ ընկեցին խարիսխս չորս. ըղձանային այ-
գուն լինելոյ: * Բայց նաւավարքն խնդրէին փախ- 30
չել 'ի նաւէ անտի, եւ իջուցեալ զկուրն 'ի ծով
անդր՝ պատճառանօք, որպէս թէ առաջոյ կող-
մանէ խարիսխս ձգելոց իցեն, * ասէ Պաւղոս 31

ցհարիւրապետն եւ ցզօրականսն. Եթէ ոչ դո-
քա մնան 'ի նաւիս՝ դուք ապրել ոչ կարէք:
32 * Յայնժամ զօրականքն հատին զլարս կրին, եւ
33 'ի բաց ընկեցին: * Եւ մինչդեռ այգն կամէր լի-
նել, աղաչէր Պաւղոս զամենեսեան՝ առնուլ կե-
րակուր, ասէ. Այս չորեքտասաներորդ օր է՝
որում ակն ունիք նօթիս կատարել, եւ չէ ինչ
34 ճաշակեալ. * վասն որոյ աղաչեմ զձեզ՝ ճաշա-
կել կերակուր, զի այն իսկ վասն ձերոյ փրկու-
թեան է. զի ոչ ուրուք 'ի ձէնջ մազ մի 'ի գլխոյ
35 կորիցէ: * Եւ իբրեւ ասաց զայս, առեալ հաց՝
գոհացաւ զԱստուծոյ առաջի ամենեցուն, եբեկ
36 եւ սկսաւ ուտել: * Եւ քաջալերեցան ամենե-
37 քին, եւ նոքա առին կերակուր. * եւ էաք ամե-
նայն հոգիք 'ի նաւին՝ երկերիւր եօթանասուն
38 եւ վեց: * Իբրեւ յագեցան կերակրովն, թեթե-
ւացուցին զնաւն՝ թափեալ զցորեանն 'ի ծով:
39 * Եւ իբրեւ այգ եղեւ՝ զերկիրն ոչ ճանաչէին,
բայց զգոգ մի նշմարէին՝ թէ ափն ծովուն ի-
ցէ. յոր խորհէին թէ հնար ինչ իցէ՝ զերծու-
40 ցանել զնաւն: * Եւ զխարիսխսն հատեալ ընկե-
ցին 'ի ծովն, թուլացուցին զխառնելիս թեւո-
ցըն, եւ 'ի բաց առին զառագաստն, եւ ե-
41 տուն հողմոյն յափն կոյս ծովուն: * Անկեալ 'ի
տեղի մի երկծով՝ թիւրեցին զնաւն, եւ առա-
ջին կողմն նաւին խրեալ անշարժ մնայր, եւ յե-
42 տին կողմն քակէր 'ի բռնութենէն: * Եւ զօրա-
կանացն խորհուրդ արարեալ՝ զի զկապեալսն

սպանցեն, եւ զի մի ոք լուղիցէ եւ փախիցէ ։
*Եւ հարիւրապետն քանզի կամեցաւ ապրեցու- 43
ցանել զՊաւղոս, արգել զնոսա 'ի խորհրդոյն.
հրամայեաց զի որ կարօղն իցեն լուղել՝ անկա-
նիցին նախ եւ 'ի ցամաքն ելանիցեն. *եւ զայլ- 44
սն՝ զորս 'ի տախտակս, եւ զորս յայլ ինչ կահ
'ի նաւէ անտի. եւ այսպէս եղեւ ամենեցուն
փրծանել յերկիր ։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Եւ ապրեալք՝ յայնժամ գիտացաք եթէ Մե- 1
լիտինէ էր անուն կղզւոյն ։ Բայց բարբարոսքն
շնորհեցին ոչ սակաւ մարդասիրութիւն մեզ.
*քանզի լուցին խարոյկ՝ եւ ընկալան զամենեսեան 2
զմեզ, վասն անձրեւին որ ստիպէր եւ վասն ցրր-
տոյն ։ *Եւ 'ի ժողովել Պաւղոսի խուխ ինչ բա- 3
զում՝ եւ դնել 'ի վերայ խարուկին, իժ մի 'ի
ջերմութենէն ելեալ կալաւ զձեռանէ նորա ։
*Եւ իբրեւ տեսին բարբարոսքն կախեալ զգա- 4
զանն զձեռանէ նորա, ասէին ցմիմեանս. Ու-
րեմն սպանող է այրս այս, որ թէպէտ ապրե-
ցաւ 'ի ծովէն, իրաւունքն ոչ ետուն կեալ ։ *Եւ 5
նորա թօթափեալ զգազանն 'ի հուրն, եղեւ
նմա չար եւ ոչ ինչ. *եւ նոքա ակն ունէին նմա 6
ուռնլոյ, կամ անկանելոյ եւ յանկարծակի մեռա-
նելոյ. իբրեւ շատ ակն կալեալ՝ եւ տեսանէին
թէ ոչ ինչ վնաս եղեւ նմա, դարձեալ դարձու-

ցին զբանսն եւ ասէին, թէ աստուած ոմն է ։
7 *Եւ շուրջ զտեղեաւն զայնուիկ էին գեօղք
գլխաւորի կղզւոյն որում անուն էր Պոպլիոս,
որ առ զմեզ յերաշխի զերիս աւուրս՝ եւ սիրով
8 ընկալաւ ։ *Եւ եղեւ հօրն Պոպլեայ 'ի ջերմ եւ
յախտ թանչից հիւանդանալ դնել. առ որ մը-
տեալ Պաւղոս եւ կացեալ յաղօթս՝ եդ ձեռն
9 եւ բժշկեաց զնա ։ *Իբրեւ այս եղեւ, այլ հի-
ւանդք որ էին 'ի կղզւոջն՝ գային եւ բժշկէին.
10 *որք եւ բազում պատուով պատուեցին զմեզ.
եւ իբրեւ գնացաք, ետուն որ ինչ պէտք էին ։
11 ԷԷ. *Եւ յետ երից ամսոց ելաք 'ի նաւ մի
աղեքսանդրացի՝ որ ձմերեալ էր 'ի կղզւոջն, նշա-
12 նաւորաւ դիոսկուրացւոց ։ *Եւ իջեալ 'ի Սիւ-
13 րակուսա՝ եղեաք աւուրս երկուս. *ուստի
գնացեալ հասաք 'ի Հռեգիոն ։ Եւ յետ ա-
ւուր միոյ 'ի շնչել հարաւոյն՝ երկօրեայք եկաք
14 'ի Պատիոլուս, *ուր եւ գտաք եղբարս, աղա-
չեցեալք 'ի նոցանէ լինել աւուրս եօթն ։ Եւ
15 ապա ելաք 'ի Հռոմ. *եւ անտի՝ լուեալ եղ-
բարց զմէնջ, ելին ընդ առաջ մեր մինչեւ յոր-
դոստոյն Ապփեայ եւ երիցն կրպակաց. զորս
տեսեալ Պաւղոսի՝ գոհացաւ զԱստուծոյ եւ քա-
16 ջալերեցաւ ։ *Եւ իբրեւ մտաք 'ի Հռոմ, հրա-
մայեցաւ Պաւղոսի լինել առանձինն հանդերձ
զինուորաւն՝ պահպանաւ իւրով ։
17 *Եւ եղեւ յետ երից աւուրց կոչել նմա ըզ-
հրէիցն գլխաւորս. եւ իբրեւ եկին, ասէ ցնո-

սա . Ես , արք եղբարք , ոչ ինչ հակառակ գոր-
ծեալ ժողովրդեանն կամ կրօնիցն հայրենեաց ,
կապեալ յԵրուսաղեմէ՝ մատնեցայ 'ի ձեռս հռ-
ռովմայեցւոց ։ * Որք իբրեւ դատեցանն զիս , 18
կամեցան արձակել , վասն եւ ոչ մի ինչ վնաս
մահու գտանելոյ յիս . * 'ի հակառակել Հրէիցն՝ 19
հարկ եղեւ բողոքել 'ի կայսր . իբր ոչ եթէ զազ-
գէն իմմէ ունէի ինչ չարախօսել ։ * Վասն այսր 20
պատճառանաց աղաչեցի զձեզ՝ տեսանել եւ
խօսել . քանզի վասն յուսոյն Իսրայէլի կամ 'ի
շղթայս յայսոսիկ ։ * Եւ նոքա ասեն ցնա . Մեք 21
ոչ թուղթս ինչ վասն քո ընկալաք 'ի Հրէաստա-
նէ , եւ ոչ եկեալ ոք յեղբարց պատմեաց կամ
խօսեցաւ ինչ վասն քո չարութիւն ։ * Բայց ա- 22
ղաչեմք՝ 'ի քէն լսել՝ թէ զինչ խորհիցիս . զի
վասն հերձուածոյդ այդորիկ յայտ իսկ է մեզ ,
զի ամենայն ուրեք հակառակութիւն կրէ ։
* Ժամ եդեալ նմա օր մի , եկին 'ի վանսն առ 23
նա բազումք . որոց պատմէր վկայութեամբ զար-
քայութիւն Աստուծոյ , եւ հաւանեցուցանէր
զնոսա վասն Յիսուսի՝ յօրինացն Մովսիսի եւ 'ի
մարգարէից , յայգուէ մինչեւ ցերեկոյ ։ * Եւ ո- 24
մանք հաւանէին բանիցն , եւ կէսք չհաւատա-
յին . * եւ անմիաբանք լեալ միմեանց՝ արձա- 25
կէին , յասելն Պաւղոսի բան մի , թէ բարւոք
խօսեցաւ Հոգին Սուրբ 'ի ձեռն Եսայեայ մար-
գարէի առ հարսն մեր , * եւ ասէ . Երթ առ ժո- 26
ղովուրդն եւ ասասցես . լսելով լուիջիք՝ եւ մի

իմասջիք , եւ տեսանելով տեսջիք՝ եւ մի տեսջիք ։
27 * Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնորիկ ,
եւ ականջօք իւրեանց ծանր լուան , եւ զաչս իւ-
րեանց կափուցին , զի մի երբէք տեսցեն աչօք ,
եւ ականջօքն լուիցեն , եւ սրտիւքն իմասցին ,
28 եւ դարձցին եւ բժշկեցից զնոսա ։ * Եւ արդ՝
յայտնի լիցի ձեզ , զի հեթանոսաց առաքեցաւ
29 փրկութիւնս Աստուծոյ . նոքին եւ լուիցեն ։ (* Եւ
իբրեւ զայս ասաց՝ արտաքս գնացին 'ի նմանէ
Հրէայքն . որք ունէին 'ի մէջ իւրեանց զբազում
30 խնդիրս ։) * Եւ եղեւ զերկեամ մի բովանդակ
31 իւրով վարձու . * եւ ընդունէր զամենեսեան որ
32 մտանէին առ նա . * քարոզէր զարքայութիւնն
Աստուծոյ , եւ ուսուցանէր վասն տեառն Յի-
սուսի Քրիստոսի անխափան՝ ամենայն համար-
ձակութեամբ ։

ԹՈՒՂԹ
ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

ԱԲ. ՊԱՒՂՈՍ ծառայ Յիսուսի Քրիստո- 1
սի. կոչեցեալ Առաքեալ, որոշեալ
յԱւետարանն Աստուծոյ, * որ յառաջ խոստա- 2
ցաւ ՚ի ձեռն մարգարէից իւրոց գրովք սրբովք,
* վասն Որդւոյ իւրոյ՝ եղելոյ ՚ի զաւակէ Դաւթի 3
ըստ մարմնոյ. * սահմանելոյ Որդւոյն Աստուծոյ 4
զօրութեամբ ըստ հոգւոյն սրբութեան, ՚ի յա-
րութենէ մեռելոց Յիսուսի Քրիստոսի Տեառն
մերոյ. * որով ընկալաք շնորհս եւ առաքելու- 5
թիւն ՚ի հնազանդութիւն հաւատոց յամենայն
հեթանոսս՝ վասն անուան նորա, * յորս եւ դուք 6
էք կոչեցեալ Յիսուսի Քրիստոսի. * ամենեցուն 7
որոց էք ՚ի Հռոմ՝ սիրելեաց Աստուծոյ՝ կոչեցե-
լոց սրբոց: Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն
յԱստուծոյ Հօրէ մերմէ, եւ ՚ի Տեառնէ Յիսուսէ
Քրիստոսէ: * Նախ գոհանամ զԱստուծոյ իմոյ 8
՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի վասն ձեր ամենե-

ցուն, զի հաւատք ձեր պատմեալ են ընդ ա-
9 մենայն աշխարհ: * Վկայ է ինձ Աստուած, զոր
պաշտեմն հոգւով իմով յԱւետարանի Որդւոյ
10 նորա, * թէ որպէս զյիշատակս ձեր առնեմ.
յամենայն ժամ յաղօթս իմ աղաչելով, զի թե-
րեւս երբեք յաջողեսցի ինձ կամօքն Աստուծոյ
11 գալ առ ձեզ: * Քանզի անձկացեալ եմ տեսա-
նել զձեզ, զի փոխեցից ՚ի ձեզ շնորհս ինչ հո-
12 գեւորս՝ առ ՚ի հաստատել զձեզ. * այսինքն է՝
մխիթարակից լինել ձեզ վասն ընդ միմեանց ի-
13 մոյ եւ ձերդ հաւատոց: * Ոչ կամիմ եթէ ան-
գէտք լիցէք, եղբարք, զի բազում անգամ յօ-
ժարեցի գալ առ ձեզ, եւ արգելայ մինչեւ ցայ-
ժմ. զի եւ ՚ի ձեզ գտից պտուղ ինչ՝ որպէս եւ
14 յայլ հեթանոսս: * Քանզի Յունաց եւ բարբա-
րոսաց, իմաստնոց եւ անմտից պարտապան եմ.
15 * այնպէս որչափ իմովսանն յօժարութեամբ՝ եւ
16 ձեզ որ ՚ի Հռոմդ էք աւետարանել: * Զի ոչ ե-
թէ ամօթ ինչ համարիմ զԱւետարանն. քանզի
զօրութիւն Աստուծոյ է ՚ի փրկութիւն ամենայն
հաւատացելոց. նախ Հրէի եւ ապա հեթանոսի.
17 * զի արդարութիւն Աստուծոյ նովաւ յայտնի
հաւատոց ՚ի հաւատս, որպէս եւ գրեալ է,
թէ արդարն ՚ի հաւատոց կեցցէ:
18 ԱԳ. * Քանզի յայտնելոց է բարկութիւնն
Աստուծոյ յերկնից ՚ի վերայ ամենայն ամբարշ-
տութեան եւ անիրաւութեան մարդկան. որք
զճշմարտութիւնն անիրաւութեամբ ունին.

* վասն զի գիտութիւնն Աստուծոյ յայտնի է ’ի 19
նոսա . քանզի Աստուած իսկ յայտնեաց նոցա ։
* Զի աներեւոյթք նորա ’ի սկզբանէ աշխարհի՝ 20
արարածովքս իմացեալ տեսանին . այսինքն է՝
մշտնջենաւորութիւն եւ զօրութիւն եւ աս-
տուածութիւն նորա . զի ոչ գտանիցեն ամենե-
ւին տալ պատասխանի ։ * Զի ծանեան զԱս- 21
տուած , եւ ոչ իբրեւ զԱստուած փառաւորե-
ցին կամ գոհացան . այլ նանրացան ’ի խորհուր-
դս իւրեանց , եւ խաւարեցան անմտութեամբ
սիրտք նոցա . * զանձինս առ իմաստունս ունէ- 22
ին՝ յիմարեցան . * եւ փոխեցին զփառս անեղ- 23
ծին Աստուծոյ՝ ’ի նմանութիւն պատկերի եղ-
ծանելի մարդոյ , եւ թռչնոց , եւ չորքոտանեաց,
եւ սողնոց ։ * Վասն որոյ մատնեաց զնոսա Աս- 24
տուած ’ի ցանկութիւն սրտից նոցա ’ի պղծու-
թիւն , անարգել զմարմինս իւրեանց յանձինս
իւրեանց . * որք փոխանակեցին զճշմարտութիւ- 25
նըն Աստուծոյ ընդ ստութեան , հնազանդեցան
եւ պաշտեցին զարարածս՝ եւ ոչ զԱրարիչն , որ
է օրհնեալ յաւիտեանս . ամէն ։ * Վասն այնո- 26
րիկ մատնեաց զնոսա Աստուած ’ի կիրս անար-
գութեան . զի էգք նոցա փոխանակեցին զպէ-
տըս բնականս ’ի պէտս անբնականս ։ * Նոյնպէս 27
եւ արուացն թողեալ զբնական պէտս իգու-
թեանն , բորբոքեցան ցանկութեամբք իւրեանց
’ի միմեանս . արուք ընդ արուս զխայտառա-
կութիւն գործէին , եւ զդարձ փոխարինին որ

պարտ էր մոլորութեանն նոցա՝ յանձինս իւրեանց
28 ընդունէին ։ * Եւ որպէս զի ոչ ընտրեցին զԱս-
տուած ունել ’ի գիտութեան , մատնեաց զնո-
սա Աստուած ’ի միտս անարգութեան՝ գործել
29 զանարժանս , * զլցեալս ամենայն անիրաւու-
թեամբ , պոռնկութեամբ , անզգամութեամբ,
ագահութեամբ , չարութեամբ , լի նախանձու,
սպանութեամբ , հեռիւ , նենգութեամբ , չա-
30 րաբանութեամբ , շոգմոգք , * չարախօսք , աս-
տուածատեացք , թշնամանողք , ամբարտա-
ւանք , ամբարհաւաճք , գտիչք չարեաց , ծը-
31 նօղս անարգուք . * անմիտք , ուխտադրուժք ,
32 անագորոյնք , աննուէրք , անողորմք ։ * Որք հա-
ւեալ էին յԱստուծոյ իրաւանցն վերայ . եթէ
ոյք զայսպիսիս գործեն՝ արժանի են մահու .
եւ ոչ միայն որ զայն առնեն , այլ եւ որ կամա-
կիցն լինին գործելեացն ։

ԳԼՈՒԽ Բ.

1 Վասն որոյ առանց պատասխանի տալոյ ես ,
ո՛վ մարդ , որ դատիդ . զի որով դատիս զըն-
կերն , զանձն քո դատապարտես . զի դու զնոյն
գործես՝ որով դատիսն ։
2 Ս.Դ. * Քանզի գիտեմք՝ եթէ Աստուծոյ դա-
տաստանն ճշմարտութեամբ է ’ի վերայ այնո-
3 ցիկ՝ որ զայնպիսիս գործեն ։ * Իսկ արդ խոր-
հիցիս զայս , ո՛վ մարդ , որ դատիս զայնոսիկ որ

զայնպիսիս գործեն՝ եւ դու զնոյն գործես, ե֊
թէ դու ապրելո՞ց իցես 'ի դատաստանացն Ա֊
ստուծոյ։ * Եթէ զմեծութեամբ քաղցրութեան 4
նորա՝ եւ զներելովն եւ զերկայնմտութեամբն
արհամարհիցես, չգիտիցե՞ս զի քաղցրութիւնն
Աստուծոյ զքեզ յապաշխարութիւն ածէ. * այլ 5
ըստ խստութեան քում եւ ըստ անզեղջ սրտի՝
գանձես անձին քում բարկութիւն՝ յաւուր բար֊
կութեան եւ յայտնութեան արդար դատաւո֊
րութեանն Աստուծոյ, * որ հատուցանէ իւրա֊ 6
քանչիւր ըստ գործս իւրեանց։ * Որ համբերու֊ 7
թեամբ են 'ի գործս բարութեան՝ եւ զփառս
եւ զպատիւ եւ զանեղծութիւն խնդրեն, ըզ֊
կեանսն յաւիտենից։ * Իսկ որ 'ի հակառակու֊ 8
թենէ անտի են եւ ապստամբք 'ի ճշմարտու֊
թենէն, եւ զհետ երթեալ զանիրաւութեան,
բարկութիւն եւ սրտմտութիւն։ * Նեղութիւն 9
եւ անձկութիւն 'ի վերայ ամենայն մարդոյ որ
գործէ զչար. նախ Հրէին, եւ ապա հեթանոսի։
* Փառք եւ պատիւ եւ խաղաղութիւն ամե֊ 10
նայնի որ գործէ զբարի, նախ Հրէին, եւ ապա
հեթանոսի։ * Զի ոչ է ակնառութիւն առաջի 11
Աստուծոյ։

ԱԵ. * Որք միանգամ արտաքոյ օրինացն մե֊ 12
ղան, արտաքոյ օրինացն եւ կորնչին. եւ որք
ընդ օրինօքն մեղան, օրինօքն դատեսցին։ * Զի 13
ոչ եթէ որ լսելք օրինացն են՝ արդարացեալ
են առաջի Աստուծոյ, այլ առնելք օրինացն

14 արդարասցին։ * Այլ յորժամ հեթանոսք որ
զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործի֊
ցեն, նոքա որ զօրէնս ոչ ունին, անձանց իւ֊
15 րեանց իսկ են օրէնք. * որք ցուցանեն զգործս
օրինացն գրեալ 'ի սիրտս իւրեանց, վկայու֊
թեամբ մտաց իւրեանց, եւ յանդիմանել զմի֊
մեանս 'ի խորհրդոց իւրեանց, կամ թէ պա֊
16 տասխանի իսկ տալ. * յաւուրն յորում դատի֊
ցի Աստուած զգաղտնիս մարդկան, ըստ Աւե֊
տարանիս իմում 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի։
17 * Ապա թէ դու Հրեայ անուանեալ ես, եւ յե֊
18 ցեալ ես յօրէնս, եւ պարծիս յԱստուած, * եւ
գիտես զկամս նորա, եւ ընտրես զլաւն, եւ խր֊
19 րատեալ ես յօրինացն. * վստահ ես յանձն քո
20 առաջնորդ լինել կուրաց, լոյս խաւարելոց, * խր֊
րատիչ անզգամաց, վարդապետ տղայոց, ունել
զկերպարանս գիտութեան եւ ճշմարտութեան
21 յօրինացն։ * Իսկ արդ որ ուսուցանես զընկերն՝
զանձն քո ոչ ուսուցանես, որ քարոզես չգողա֊
22 նալ՝ գողանաս. * որ ասես չշնալ՝ շնաս. որ գար֊
23 շիս 'ի մեհենաց՝ զսեղանս կողոպտես, * որ օրի֊
նօքն պարծիս՝ յանցանել ըստ օրէնս զԱստուած
24 անարգես։ * Զի անունն Աստուծոյ վասն ձեր
հայհոյի 'ի մէջ հեթանոսաց՝ որպէս եւ գրեալ է։
25 ԱԶ. * Թլփատութիւն օգնէ եթէ զօրէնս
պահիցես. ապա թէ յանցաւոր օրինացն իցես,
թլփատութիւն քո անթլփատութիւն եղեւ։
26 * Իսկ եթէ անթլփատութիւնն զիրաւունս օ֊

րինացն պահիցէ, ո՞չ ապաքէն անթլփատու-
թիւն նորա 'ի թլփատութիւն համարեսցի.* եւ 27
դատիցի որ 'ի բնէ անթլփատութիւնն է, զօ-
րէնսն կատարելով, զքեզ որ գրովն եւ թլփա-
տութեամբն յանցաւոր օրինացն իցես:* Զի ոչ 28
եթէ որ յայտնի հրեայն է, եւ ոչ որ յայտնի
մարմնով թլփատութիւնն,* այլ որ 'ի ծածուկ 29
հրեայն է, եւ թլփատութիւն սրտի. հոգւով՝
եւ ոչ գրով. որոյ գովութիւնն՝ ոչ 'ի մարդկա-
նէ է, այլ յԱստուծոյ:

ԳԼՈՒԽ Գ.

Իսկ արդ զի՞նչ աւելի է հրէին, կամ զի՞նչ 1
օգուտ 'ի թլփատութենէ անտի:* Բազում ինչ, 2
ամենայն իրօք. նախ այն իսկ, զի հաւատարիմ
եղեն պատգամքն Աստուծոյ:* Իսկ արդ եթէ 3
չէր հաւատացեալ ոմանց, միթէ անհաւատու-
թիւն նոցա զԱստուծոյ հաւատոն խափանէ՞ր.
քաւ լիցի:* Արդ եղիցի Աստուած ճշմարիտ, 4
եւ ամենայն մարդ սուտ. որպէս եւ գրեալ է.
Որպէս արդար եղիցես 'ի բանս քո, եւ յաղթի-
ցես 'ի դատել քեզ:* Իսկ արդ եթէ ապիրա- 5
տութիւնն մեր զԱստուծոյ արդարութիւնն յան-
դիման կացուցանէ, զի՞նչ ասեմք. միթէ անի-
րա՞ւ ինչ է Աստուած՝ որ ածէ զբարկութիւնն.
* ըստ մարդկութեան ասեմ. քաւ լիցի. ապա 6
թէ ո՞չ զիա՞րդ դատի Աստուած զաշխարհ:* Զի 7

եթէ ճշմարտութիւնն Աստուծոյ յիմում ստու-
թեանն առաւել 'ի փառս նորա, զի՞ եւս ես
8 իբրեւ զմեղաւոր դատիմ.* եւ կամ թէ՝ որ-
պէս հայհոյիմքն, եւ որպէս ասեն ոմանք ըզ-
մէնջ՝ ասել, թէ արասցուք չար՝ զի եկեսցէ
բարի. որոց դատաստանքն յիրաւի են:
9 * Եւ արդ ի՞ւ իւիք առաւել իցեմք. ապաքէն
եւ ոչ իւիք. քանզի յառաջագոյն իսկ մեղադիր
եղեաք հրէից եւ հեթանոսաց, ամենեցուն ընդ
10 մեղօք լինելոյ.* որպէս եւ գրեալ է, թէ ոչ ոք է
11 արդար՝ եւ ոչ մի.* եւ ոչ գոյ որ իմանայ, եւ
12 ոչ ոք է որ խնդրէ զԱստուած:* Ամենեքեան
խոտորեցան 'ի միասին եւ անպիտանացան. ոչ
ոք է որ առնէ զքաղցրութիւն, ոչ ոք է մին-
13 չեւ 'ի մի:* Գերեզման բաց է կոկորդ նոցա,
լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն. թոյնք ի-
14 ժից 'ի ներքոյ շրթանց նոցա.* որոց բերանք ա-
15 նիծիւք եւ դառնութեամբ լի են:* Երագ են
16 ոտք նոցա հեղուլ զարիւն.* բեկումն եւ թշ-
17 ուառութիւն 'ի ճանապարհս նոցա,* եւ ըզ-
18 ճանապարհն խաղաղութեան ոչ ծանեան.* ոչ է
երկիւղ Աստուծոյ առաջի աչաց նոցա:
19 ԲԴ.* Բայց գիտեմք՝ որ ինչ միանգամ օրէն-
քըն ասեն, այնոցիկ որ ընդ օրինօքն են՝ ասեն.
զի ամենայն բերան խցցի, եւ դատապարտ լի-
20 ցի ամենայն աշխարհ Աստուծոյ:* Զի 'ի գոր-
ծոց օրինաց ոչ արդարասցի ամենայն մարմին
առաջի նորա. քանզի օրինօքն է գիտութիւն

մեղաց. * բայց արդ առանց օրինացն իսկ ար- 21
դարութիւնն Աստուծոյ յայտնեալ է, վկայեալ
յօրինաց անտի եւ 'ի մարգարէից: * Քանզի ար- 22
դարութիւնն Աստուծոյ 'ի հաւատոց անտի Յի-
սուսի Քրիստոսի, յամենայն հաւատացեալս. եւ
ոչ ինչ է խտիր: * Քանզի ամենեքին մեղան, 23
եւ նուազեալ են 'ի փառացն Աստուծոյ, * եւ 24
արդարանան ձրի նորին շնորհօք 'ի ձեռն փրկու-
թեանն որ 'ի Քրիստոս Յիսուս, * զոր յառաջն 25
եդ Աստուած քաւութիւն 'ի ձեռն հաւատոցն
արեամբն նորա 'ի հանդէս արդարութեանն նո-
րա՝ վասն թողութեան յառաջագոյն մեղացն
գործելոց. * 'ի ներելն Աստուծոյ՝ 'ի հանդէս 26
արդարութեանն նորա 'ի ժամանակի յայսմիկ.
զի եղիցի նա արդար, եւ արդարացուսցէ զայն
որ 'ի հաւատոյն Յիսուսի: * Իսկ արդ ո՞ւր են պար- 27
ծանքն. արգելան. յորո՞ց օրինաց. 'ի գործո՞ց
անտի. ո՛չ, այլ 'ի հաւատոյն օրինաց. * Քանզի 28
համարիմք հաւատովք արդարանալ մարդոյ՝ ա-
ռանց գործոց օրինաց: * Եթէ Հրէի՞ց միայն իցէ 29
Աստուած՝ եւ հեթանոսաց ո՞չ. այո՛ եւ հեթա-
նոսաց: * Զի եթէ մի է Աստուած, որ արդա- 30
րացուսցանէ զթլփատութիւն 'ի հաւատոց, ա-
պա եւ զանթլփատութիւնն նովին հաւատովք:
* Արդ զօրէնս ինչ խափանե՞մք հաւատովքս. 31
քա՛ւ լիցի. այլ զօրէնս հաստատեմք:

ԳԼՈՒԽ Դ.

1 ԲՋ. * Իսկ արդ զի՞նչ ասիցեմք գտանելն
Աբրահամու նահապետին մերոյ ըստ մարմնոյ.
2 * զի եթէ Աբրահամու գործովք էր արդարա-
ցեալ, ունել ունէր պարծանս, այլ ոչ առ Աս-
3 տուած: * Իսկ զի՞նչ ասիցէ գիր. հաւատաց Աբ-
րահամ յԱստուած, եւ համարեցաւ նմա յար-
4 դարութիւն: * Բայց այնմ որ գործիցէ, ոչ հա-
մարին վարձքն ըստ շնորհաց, այլ ըստ պարտեաց.
5 * իսկ այնմ որ ոչն գործիցէ. բայց հաւատայցէ յայն
որ արդարացուցանէ զամբարիշտս, համարին հա-
6 ւատքն նորա յարդարութիւն: * Որպէս եւ Դաւիթ
ասէ զերանութիւն մարդոյ, որում Աստուած հա-
7 մարի արդարութիւն առանց գործոց. * երանի՜
որոց թողան անօրէնութիւնք, եւ որոց ծած-
8 կեցան մեղք իւրեանց. * Երանեալ է այր՝ ո-
9 րում ոչ համարեսցի Տէր զմեղս նորա: * Արդ
երանութիւնս այս 'ի վերայ թլփատութեա՞նն
է, թէ 'ի վերայ անթլփատութեան. քանզի
ասեմք եթէ համարեցաւ Աբրահամու հաւատ-
10 քըն յարդարութիւն: * Արդ զիա՞րդ համարե-
ցան. մինչդեռ 'ի թլփատութեա՞նն էր՝ եթէ
յանթլփատութեանն. ոչ 'ի թլփատութեանն,
11 այլ յանթլփատութեանն. * եւ նշանակ առ ըզ-
թլփատութիւնն, կնիք արդարութեան հաւա-
12 տոյ՝ որ յանթլփատութենէ անտի: * Զի եղիցի

նա հայր ամենայն հաւատացելոց որ յանթլփա-
տութենէ անտի իցեն, առ 'ի համարելոյ եւ
նոցա յարդարութիւն. եւ հայր թլփատութեան,
որոց ոչ 'ի թլփատութենէ անտի եւեթ, այլ
եւ որոց երթայցեն ընդ հետս անթլփատու-
թեան հաւատոյ հօր մերոյ Աբրահամու:

ԳԴ. * Զի ոչ եթէ օրինօքն են աւետիքն Աբ- 13
րահամու եւ զաւակի նորա՝ ժառանգ լինել աշ-
խարհի, այլ 'ի հաւատոյն արդարութենէ: * Զի 14
եթէ որք յօրինացն են՝ ժառանգք իցեն, ապա
ընդունայն են հաւատքն եւ դատարկ աւետի-
քըն. * քանզի օրէնքն զբարկութիւն գործեն. 15
բայց ուր ոչ են օրէնք, եւ ոչ յանցանք ինչ:
* Վասն այնորիկ 'ի հաւատոյ անտի, զի ըստ 16
շնորհացն իցէ. առ 'ի լինելոյ հաստատուն աւե-
տեացն ամենայն զաւակին. ոչ այնմ միայն որ
յօրինաց անտի, այլ եւ այնմ որ 'ի հաւատոյն
Աբրահամու, որ է հայր մեր ամենեցուն, * որ- 17
պէս եւ գրեալ է՝ եթէ հայր ազգաց բազմաց
արարի զքեզ, առաջի Աստուծոյ, որում հա-
ւատացն՝ եթէ կենդանի առնէ զմեռեալս, եւ
կոչէ զչգոյն իբրեւ զգոյ: * Որ յանյոյսն յուսով 18
հաւատաց, լինել նմա հայր ազգաց բազմաց.
որպէս եւ ասացաւ, թէ այնպէս եղիցի զա-
ւակ քո. * եւ նա ոչ երկմտեաց 'ի հաւատոյն, 19
թէպէտ եւ հայեցաւ 'ի մարմին իւր այնուհե-
տեւ իբրեւ 'ի մեռեալ, քանզի զհարիւրամենիւք
ուրեմն էր, եւ 'ի մեռելութիւն արգանդին Սա-

20 ռայի: * Բայց յաւետեացն Աստուծոյ ոչ երկմը-
տեաց անհաւատութեամբ, այլ զօրացաւ հա-
21 ւատովք, ետ փառս Աստուծոյ՝ * եւ հաստա-
տեցաւ 'ի միտս իւր, թէ որ խոստացաւն՝ կա-
22 րող է առնել. * վասն որոյ համարեցաւ նմա
23 յարդարութիւն: * Այլ զի գրեցաւն, ոչ եթէ
24 վասն նորա միայն՝ թէ համարեցաւ նմա, * այլ
եւ վասն մերոյ՝ համարելոց է, որք հաւատամք
յայն որ յարոյց զՅիսուս զՏէր մեր 'ի մեռելոց.
25 * որ մատնեցաւ վասն յանցանաց մերոց, եւ յա-
րեաւ՝ վասն զմեզ արդարացուցանելոյ: ՎՁ

ԳԼՈՒԽ Ե.

1 Այսուհետեւ արդարացեալք 'ի հաւատոյ
անտի, խաղաղութիւն կալցուք առ Աստուած
2 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. * ո-
րով եւ զընծայութիւնն ընկալաք հաւատովք
'ի շնորհս յայսոսիկ, յորում կամք եւ պարծիմք
3 յուսով փառացն Աստուծոյ: * Եւ ոչ այսչափ
միայն, այլ եւ պարծիմք եւս 'ի նեղութիւնս
մեր. քանզի գիտեմք, եթէ նեղութիւնք զհամ-
4 բերութիւն գործեն, * համբերութիւն՝ զհան-
5 դէս, հանդէս՝ զյոյս, * յոյս ոչ երբէք ամաչե-
ցուցանէ. զի սէրն Աստուծոյ սփռեալ է 'ի սիր-
տս մեր՝ 'ի ձեռն Հոգւոյն Սրբոյ որ տուաւ մեզ:
6 * Զի մինչդեռ տկարքն էաք, Քրիստոս վասն մեր
'ի ժամանակի 'ի վերայ ամպարշտաց մեռաւ.

* Զի վասն արդարոյ հազիւ ոք մեռանիցի, այլ 7
վասն բարւոյ թերեւս համարձակիցի ոք մեռա-
նել: * Յայտնեաց Աստուած զսէրն իւր 'ի մեզ. 8
զի մինչդեռ մեղաւորքն էաք, * Քրիստոս վասն 9
մեր մեռաւ. որչափ եւս առաւել յարդարա-
նալս մերում այժմիկ արեամբն նորա՝ ապրես-
ցուք նովաւ 'ի բարկութենէ անտի: * Զի եթէ 10
մինչ թշնամիքն էաք, հաշտեցաք ընդ Աստուծոյ
մահուամբ Որդւոյ նորա, որչափ եւս առաւել
'ի հաշտելս մերում ապրեսցուք կենօքն նորա:
* Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ պարծիմք եւս 11
յԱստուած 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի, որով եւ զհաշտութիւն իսկ ընկալաք:
ԳԶ. * Զի որպէս 'ի միջէ մարդոյ մեղք յաշ- 12
խարհ մտին, եւ 'ի մեղաց անտի մահ, եւ այն-
պէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ, ո-
րով ամենեքին մեղան. * Քանզի մինչեւ յօրէնսն 13
մեղք էին յաշխարհի, բայց մեղք ոչ համարին
ուր օրէնք ոչ լինին: * Այլ թագաւորեաց մահ 14
յԱդամայ մինչեւ 'ի Մովսէս, եւ 'ի վերայ չյան-
ցուցելոցն, ըստ նմանութեան յանցուածոյն
Ադամայ, որ է օրինակ հանդերձելոցն: * Այլ 15
ոչ որպէս յանցանքն՝ նոյնպէս եւ շնորհքն. զի
եթէ միոյն յանցանօք բազումք մեռան, որչափ
եւս առաւել շնորհքն Աստուծոյ եւ պարգեւք
շնորհօք միոյն մարդոյ Յիսուսի Քրիստոսի, 'ի բա-
զումս առաւելան: * Եւ ոչ որպէս 'ի միջէ յան- 16
ցուցելոյն պարգեւքս. զի դատաստանն 'ի միո-

ջէ յանցուածոյ անտի 'ի դատապարտութիւն,
այլ շնորհքն՝ 'ի բազմաց յանցուածոյն յարդա-
17 րութիւն: * Զի եթէ 'ի միոյն յանցանաց մահ
թագաւորեաց միովն, որչափ եւս առաւել՝ որք
զառաւելութիւն շնորհաց եւ զպարգեւաց ար-
դարութեանն առնուցուն, կենօք թագաւորես-
18 ցեն 'ի ձեռն միոյն Յիսուսի Քրիստոսի: * Ապա
ուրեմն որպէս միոյն յանցանօք յամենայն մար-
դիկ դատապարտութիւն, նոյնպէս եւ միոյն
արդարութեամբն յամենայն մարդիկ արդարու-
19 թիւն կենաց: * Զի որպէս անհնազանդու-
թեամբ միոյն մարդոյ մեղաւորք բազումք ե-
ղեն, նոյնպէս եւ հնազանդութեամբ միոյն՝ ար-
20 դարք բազումք եղիցին: * Բայց օրէնք 'ի ներքս
անկան, զի յանցանքն բազմասցին. զի ուր ա-
ռաւել եղեն մեղքն, առաւել եւս յաւելան
21 շնորհքն: * Զի որպէս թագաւորեցին մեղքն
'ի մահու անդ, նոյնպէս եւ շնորհքն թագա-
ւորեսցեն արդարութեամբ 'ի կեանս յաւի-
տենից 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մե-
րոյ: Վ.Զ

ԳԼՈՒԽ Զ.

1 Իսկ արդ զի՞նչ ասիցեմք. յաճախեսցուք 'ի
2 մեղսն՝ զի շնորհքն բազմասցի՞ն: * Քաւ լիցի.
որք մեռաք մեղացն, զիա՞րդ տակաւին 'ի նմին կեց-
3 ցեմք: * Եթէ ո՞չ գիտէք, զի որ միանգամ մկրտ-

տեցաք 'ի Քրիստոս Յիսուս, 'ի մահ անդր նորա
մկրտեցաք. * Թաղեցաք ընդ նմին մկրտութեամ- 4
բն 'ի մահ, զի որպէս յարեաւ Քրիստոս 'ի մե-
ռելոց փառօքն Հօր, նոյնպէս եւ մեք 'ի նորո-
գութեան կենաց շրջեսցուք: * Զի եթէ անկեալ 5
եղեաք նմանութեան մահու նորա, այլ եւ յա-
րութեան նորա լինելոց եմք: * Զայս գիտասցուք՝ զի 6
հին մարդն մեր խաչակից եղեւ նորա, զի խա-
փանեսցի մարմին մեղացն, մի եւս ծառայել
մեզ մեղացն. * զի որ մեռանին՝ արդարացեալ է 7
'ի մեղաց անտի. * Իսկ եթէ մեռաք ընդ Քրիս- 8
տոսի, հաւատամք թէ եւ կեցցուք ընդ նմա:
* Գիտեմք եթէ Քրիստոս յարուցեալ է 'ի մեռե- 9
լոց. այսուհետեւ ոչ մեռանի, եւ մահ նմա ոչ
եւս տիրէ. * զի որ մեռաւն, մեղացն մեռաւ մի 10
անգամ, եւ որ կենդանին է՝ կենդանի է Աստու-
ծոյ: * Նոյնպէս եւ դուք համարեսջիք զանձինս 11
մեռեալս մեղացն, եւ կենդանիս Աստուծոյ 'ի
Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր:

ԴԿ. * Մի այսուհետեւ թագաւորեսցէ 12
մեղք 'ի մահկանացու մարմինս ձեր, հնազան-
դել ցանկութեանց նորա. * Եւ մի պատրաս- 13
տէք զանդամս ձեր զէն անիրաւութեան մե-
ղացն, այլ պատրաստեցէք զանձինս ձեր Աս-
տուծոյ, որպէս 'ի մեռելոց՝ 'ի կենդանիս, եւ
զանդամս ձեր՝ զէն արդարութեանն Աստուծոյ.
* զի մեղք ձեզ ոչ տիրեսցեն. քանզի ոչ էք ընդ 14
օրինօք՝ այլ ընդ շնորհօք: * Իսկ արդ զինչ. մե- 15

ղիցո՞ւք՝ զի չեմք ընդ օրինօք՝ այլ ընդ շնորհօք.
16 քաւ լիցի: * Ո՞չ գիտէք՝ թէ որում պատրաս-
տէք զանձինս ձեր ծառայս 'ի հնազանդութիւն,
ծառայ էք որում հնազանդիքն. եթէ մեղաց՝
մահու, եւ եթէ 'ի հնազանդութիւն՝ արդա-
17 րութեան: * Այլ շնորհք Աստուծոյ. զի էիք
ծառայք մեղաց, հնազանդեցարուք 'ի սրտէ ո-
րում աւանդեցայք յառակ վարդապետութեան:
18 * Արդ ազատեալք 'ի մեղաց՝ ծառայեցէք ար-
19 դարութեանն: * Մարդկօրէն ասեմ վասն տը-
կարութեան մարմնոյ ձերոյ. զի որպէս պատ-
րաստեցէք զանդամս ձեր ծառայս պղծութեան
եւ անօրէնութեան յանօրէնութիւն, նոյնպէս
եւ այժմ պատրաստեցէք զանդամս ձեր ծառայս
20 արդարութեան 'ի սրբութիւն: * Զի մինչ ծա-
ռայքն էիք մեղաց՝ ազատացեալք էիք յարդա-
21 րութենէն: * Իսկ արդ զի՞նչ պտուղ ունէիք
յայնժամ, որովք այժմդ զամօթի հարեալ էք.
զի վախճան նոցա մահ է:

22 * Բայց արդ ազատացեալք 'ի մեղացն եւ
ծառայեալք Աստուծոյ, ունիք զպտուղ ձեր 'ի
սրբութիւն, եւ վախճան նորա՝ կեանք յաւի-
23 տենից: * Զի թոշակն մեղաց՝ մահ է, այլ շնոր-
հօքն Աստուծոյ՝ կեանք յաւիտենից 'ի Քրիս-
տոս Յիսուս 'ի Տէր մեր:

ԳԼՈՒԽ Է.

ԴԳ. Եթէ ո՞չ գիտէք, եղբարք,—զի ընդ գի- 1
տունս օրինացն խօսիմ—, զի օրէնք տիրեն մար-
դոյ՝ որչափ ժամանակս կենդանի իցէ: * Քանզի 2
կին առնակին 'ի կենդանի այր իւր կապեալ կայ
օրինօք. իսկ եթէ մեռանիցի այրն, արձակեալ
է յօրինաց առնն. * ապա ուրեմն մինչ կենդանի 3
է այրն, շուն կոչի՝ եթէ լինիցի առն այլում.
Եւ եթէ մեռանիցի այրն, ազատ է յօրինացն,
չհամարեալ շուն՝ եթէ լինիցի առն այլում:
* Այսուհետեւ եւ դուք, եղբարք, մեռարուք 4
օրինացն մարմնովն Քրիստոսի, լինել այլում, որ
'ի մեռելոցն յարուցեալ է, զի պտղաբերք լի-
ցուք Աստուծոյ: * Քանզի մինչ էաքն մարմնով, 5
կարիք մեղաց որ օրինօքն էին, զօրանային յան-
դամս մեր, առ 'ի պտղաբերս առնելոյ զմեզ
մահու: * Բայց այժմ դատարկացաք յօրինաց 6
անտի. քանզի մեռաք այնմիկ որով ըմբռնեալն
էաք, առ 'ի ծառայել մեզ նորոգութեամբ հո-
գւոյն՝ եւ ոչ հնութեամբ գրոյն:

* Իսկ արդ զի՞նչ ասեմք. օրէնքն մե՞ղք ի- 7
ցեն. քաւ լիցի. այլ զմեղս ոչ գիտէի, եթէ ոչ
օրինօքն. եւ զցանկութիւն ոչ ճանաչէի, եթէ
ոչ օրինացն էր ասացեալ, մի՛ ցանկանայցես:
* Պատճառս առին մեղքն պատուիրանաւն, եւ 8
գործեցին յիս զամենայն ցանկութիւն. զի ա-

9 ռանց օրինաց մեղքն մեռեալ էին: * Եւ ես ա-
ռանց օրինացն երբեմն էի կենդանի. այլ իբ-
րեւ եհաս յիս պատուիրանն, մեղքն կենդա-
10 նացան, եւ ես մեռայ. եւ գտաւ ինձ պատուի-
11 րանն՝ որ 'ի կեանս էր, նոյն 'ի մահ: * Զի
մեղացն պատճառս առեալ պատուիրանաւն
խաբեցին զիս, եւ նովին սպանին:

12 ԴԶ. * Այսուհետեւ օրէնքն սուրբ են եւ
պատուիրանն, սուրբ եւ արդար եւ բարերար:
13 * Իսկ արդ ինձ բարի՞ն մահ եղեւ. քաւ լիցի.
այլ մեղքն. զի երեւեսցին մեղքն բարեաւն
գործել ինձ զմահ. զի եղիցին ըստ առաւելու-
թեան մեղքն մեղաւոր 'ի ձեռն պատուիրանին:
14 * Գիտեմ զի օրէնքն հոգեւոր են, այլ ես մար-
15 մնաւոր եմ ընդ մեղօք վաճառեալ. զի զոր
գործեմն՝ ոչ գիտեմ. ոչ եթէ զոր կամիմն՝
զայն առնեմ. այլ զոր ատեամն՝ զայն գործեմ:
16 * Ապա եթէ զոր ոչն կամիմ՝ զայն առ-
17 նեմ, վկայեմ օրինացն թէ բարւոք են: * Այլ
արդ ոչ եթէ ես գործեմ զայն, այլ բնակեալ
18 յիս մեղքն. * գիտեմ զի ոչ բնակեալ է յիս,
այսինքն է՝ 'ի մարմնի իմում, բարի ինչ. զի կամքն
19 առաջի կան ինձ, եւ առնել զբարին ոչ: * Զի
ոչ եթէ զոր կամիմ զբարին՝ առնեմ, այլ զոր ոչն
20 կամիմ զչարն՝ զայն գործեմ. * Ապա եթէ զոր
ոչն կամիմ՝ զայն առնեմ, ոչ եւս ես առնեմ
21 զայն, այլ բնակեալ յիս մեղքն: * Եւ արդ գը-
տանեմ զօրէնս այնորիկ որ կամիցին առնել յիս

զչարին, եւ ինձ չարն առաջի կայ։ * Հաճեալ 22
եմ ընդ օրէնսն Աստուծոյ ըստ ներքին մարդոյն,
* բայց տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ, զինեալ 23
հակառակ օրինաց մտաց իմոց, եւ գերեալ զիս
օրինօքն մեղաց որ են յանդամս իմ։ * Այր մի տա- 24
ռապեալ եմ ես. ո՛վ ապրեցուսցէ զիս 'ի մար-
մնոյ աստի մահու. * այլ շնորհքն Աստուծոյ՝ 'ի 25
ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։

ԵԿ. Ապա ուրեմն ես ինքնին մտօք իմովք
ծառայեմ օրինացն Աստուծոյ, եւ մարմնով օ-
րինացն մեղաց։

ԳԼՈՒԽ Ը.

Թէ այդպէս իցէ, ոչ ինչ դատապարտու- 1
թիւն է այնոցիկ որ 'ի Քրիստոս Յիսուս, որ ոչ
գնան ըստ մարմնոյ. * զի օրէնք հոգւոյն կենաց 2
'ի Քրիստոս Յիսուս ազատեցին զիս յօրինաց մե-
ղացն եւ մահու։ * Զի որ անհնարինն էր օրի- 3
նացն՝ որով տկարանայրն մարմնով, Աստուած
զՈրդին իւր առաքեաց 'ի նմանութիւն մարմնոյ
մեղաց եւ վասն մեղաց, եւ դատապարտեաց
զմեղս 'ի մարմնի անդ. * զի արդարութիւն օ- 4
րինացն կատարեսցի 'ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ
գնայցեմք՝ այլ ըստ հոգւոյն։ * Զի որք ըստ մար- 5
մնոյն են՝ զմարմնոյն խորհին, եւ որք ըստ հո-
գւոյն՝ զհոգւոյն։ * Զի խորհուրդ մարմնոյ՝ մահ 6
է, եւ խորհուրդ հոգւոյն՝ կեանք եւ խաղա-
ղութիւն. * Քանզի խորհուրդ մարմնոյ թշնա- 7

մութիւն է յԱստուած, զի օրինացն Աստուծոյ
8 ոչ հնազանդի, նա՝ եւ կարէ իսկ ոչ. * զի որ
մարմնովն են՝ Աստուծոյ հաճոյ լինել ոչ կարեն։
9 * Բայց դուք ոչ էք մարմնով՝ այլ հոգւով, եթէ
իցէ հոգին Աստուծոյ 'ի ձեզ բնակեալ. ապա
եթէ ոք զհոգի Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա։
10 * Իսկ եթէ Քրիստոս 'ի ձեզ է, ապա մարմին
մեռեալ է վասն մեղաց. եւ հոգին կենդանի
11 է վասն արդարութեան։ * Եթէ հոգի այնորիկ
որ յարոյցն զՅիսուս 'ի մեռելոց՝ բնակեալ է 'ի
ձեզ, ապա եւ որ յարոյցն զՔրիստոս 'ի մեռե-
լոց՝ կենդանացուսցէ զմահկանացու մարմինս
ձեր բնակեալ ոգւովն իւրով 'ի ձեզ։ ՎՋ
12 * Այսուհետեւ, եղբարք, պարտապան եմք,
13 ոչ մարմնով ըստ մարմնոյ կեալ. * զի եթէ ըստ
մարմնոյ կեցջիք, մեռանելոց էք. իսկ եթէ հոգ-
ւով զգործս մարմնոյ սպանանիցէք, կեցջիք։
14 * Զի որ հոգւովն Աստուծոյ վարին՝ նոքա են որ-
15 դիք Աստուծոյ. * զի ոչ առէք զհոգին ծառա-
յութեան միւսանգամ յերկիւղ, այլ առէք
զհոգին որդեգրութեան, որով աղաղակեմք՝
16 աբբա, հայր։ * Նոյն ինքն հոգին վկայէ հոգ-
17 ւոյս մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ. * եւ
եթէ որդիք, ապա եւ ժառանգք. ժառանգք
Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի. եթէ
չարչարանացն կցորդ լինիմք, եւ փառացն հա-
ղորդ լինելոց եմք։
18 * Ինձ այսպէս թուի, եթէ ոչ են արժանի

չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառա-
ցըն՝ որ յայտնելոց են ՚ի մեզ ։ * Զի ակնկալու- 19
թիւն արարածոց՝ յայտնութեան որդւոցն Աս-
տուծոյ սպասէ ․ * զի ընդունայնութեան արա- 20
րածքն հնազանդեցան , ոչ իւրեանց կամաւ ,
այլ վասն այնորիկ որ հնազանդեցոյցն յուսով ․
* զի եւ ինքեանք իսկ արարածքն ազատեսցին ՚ի 21
ծառայութենէ ապականութեան՝ յազատու-
թիւն փառաց որդւոցն Աստուծոյ ։ * Քանզի գի- 22
տեմք , եթէ ամենայն արարածք հեծեն եւ երկ-
նեն մինչեւ ցայժմ․ * եւ ոչ այսչափ միայն , այլ 23
եւ մեք իսկ՝ որ զպտուղ հոգւոյն ունիմք՝ ան-
ձամբ յանձինս մեր հեծեմք , որդեգրութեանն
ակն կալեալ փրկութեան մարմնոյ մերոյ ։ * Զի 24
յուսով ապրեցաք ․ այլ յոյս տեսանելի՝ չէ յոյս ․
զի զոր տեսանէ ոք՝ զի՞ եւս յուսայ ․ * ապա ե- 25
թէ զոր ոչն տեսանեմք՝ յուսամք , համբերու-
թեամբ ակն ունիմք ։ * Նոյնպէս եւ հոգին ՚ի 26
թիկունս հասանէ տկարութեանս մերում․ զի
զոր կամքն յաղօթս , որպէս արժան իցէ՝ ոչ գի-
տեմք ․ այլ ինքն հոգին բարեխօս լինի ՚ի հեծու-
թիւնս անմռունչս ․ * բայց որ քննէն զսիրտս , 27
գիտէ զինչ խորհուրդ է հոգւոյն ․ զի ըստ Աս-
տուծոյ բարեխօսէ վասն սրբոց ։ * Բայց գիտեմք՝ 28
եթէ որոց սիրեն զԱստուած , յամենայնի գոր-
ծակից լինի ՚ի բարիս , որք հրաւիրանաւն կոչե-
ցան ․ * զի զորս յառաջն ճանաչէր , յառաջագոյն 29
հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի

Որդւոյն իւրոյ ․ զի եղիցի նա անդրանիկ ՚ի մէջ
30 եղբարց բազմաց ։ * Եւ զորս յառաջագոյն հրա-
ւիրեաց՝ զնոսին եւ կոչեաց , եւ զորս կոչեացն ,
զնոսին եւ արդարացոյց ․ եւ զորս արդարացոյ-
31 ցըն , զնոսին եւ փառաւորս արար ։ * Իսկ արդ
զի՞նչ ասեմք առ այս ․ եթէ Աստուած ՚ի մեր
32 կոյս է՝, ո՞վ իցէ մեր հակառակ ․ * որ յիւր Որդին
ոչ խնայեաց , այլ վասն մեր ամենեցուն մատ-
նեաց զնա , զիա՞րդ ոչ նովաւ հանդերձ զամե-
33 նայն շնորհիցէ մեզ ։ * Ո՞վ իցէ որ մեղադիր լի-
նիցի ընտրելոց Աստուծոյ ․ Աստուած է որ ար-
34 դարացուցանէ , * իսկ արդ ո՞վ է որ դատապարտ
առնիցէ ․ Քրիստոս Յիսուս՝ որ մեռաւն , մանա-
ւանդ թէ յարուցեալ իսկ է , եւ է ընդ աջմէ
Աստուծոյ , որ եւ բարեխօս իսկ է վասն մեր ։
35 * Արդ ո՞վ մեկնեսցէ զմեզ ՚ի սիրոյն Քրիստո-
սի ․ նեղութի՞ւն , թէ անձկութի՞ւն , թէ հա-
լածա՞նք , թէ սո՞վ , թէ մերկութի՞ւն , թէ
36 վի՞շտք , թէ սո՞ւր ․ * որպէս եւ գրեալ է ․ Վասն
քո մեռանիմք զօրհանապազ , համարեցաք իբ-
37 րեւ զոչխար ՚ի սպանդ ։ * Այլ յայսմ ամենայնի՝
առաւել յաղթեմք նովաւ որ սիրեացն զմեզ ։
38 * Քանզի հաստատեալ եմ՝ եթէ ոչ մահ , եւ ոչ
կեանք , եւ ոչ հրեշտակք , եւ ոչ իշխանու-
թիւնք , եւ ոչ որ կան , եւ ոչ հանդերձեալքն ,
եւ ոչ զօրութիւնք , եւ ոչ բարձրութիւն , եւ
39 ոչ խորութիւն ։ * Եւ ոչ այլ ինչ արարած կարէ
մեկնել զմեզ ՚ի սիրոյ անտի Աստուծոյ , որ ՚ի
Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր ։

ԳԼՈՒԽ Թ.

ԵԴ. Ճշմարտութեամբ ասեմ 'ի Քրիստոս՝ եւ 1
ոչ ստեմ, վկայէ ինձ միտք իմ 'ի Հոգի Սուրբ.* զի 2
տրտմութիւն է ինձ յոյժ, եւ անպակաս ցաւք
սրտի իմոյ։ * Զի ուխտիւք խնդրէի, ես ինքն 3
նզովեալ լինել 'ի Քրիստոսէ, վասն եղբարց
իմոց եւ ազգականաց ըստ մարմնոյ, * որ են Իս- 4
րայելացիք. որոց որդեգրութիւնն եւ փառքն
եւ կտակարանքն եւ օրէնսդրութիւնն եւ պաշ-
տօնն եւ աւետիքն. * որոց հարքն. յորոց եւ Քր- 5
իստոս ըստ մարմնոյն, որ է 'ի վերայ ամենե-
ցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս. ամէն։
* Ոչ ինչ է մարթ՝ եթէ անկեալ լինիցի բանն Աս- 6
տուծոյ. զի ոչ ամենեքեան որ յԻսրայելէն են,
նոքա Իսրայելեանք իցեն. * եւ ոչ որ զաւակն 7
Աբրահամու են, ամենեքեան որդիք իցեն. այլ
Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ. * այս ինքն՝ 8
թէ ոչ որ որդիք մարմնոյն են՝ են որդիք Աստու-
ծոյ, այլ որդիք աւետեացն համարեսցին 'ի զա-
ւակ. * քանզի աւետեաց բանն այս, թէ 9
'ի ժամանակի յայսմիկ եկից, եւ եղիցի որդի
Սառայի։ * Եւ ոչ այնչափ միայն, այլ եւ 'ի Հռե- 10
բեկայ 'ի միոջէ անկողնոյ Սահակայ հօր մերոյ.
* զի մինչ չեւ ծնեալ էին, եւ մինչ չեւ բարի 11
ինչ կամ չար գործեալ էր, զի ըստ ընտրութեա-
նըն յառաջադրութիւնն Աստուծոյ հաստատես-

12 ցի, ոչ 'ի գործոց, * այլ յայնմանէ որ կոչեացն,
13 ասացաւ նմա, * թէ երիցն կրսերոյն ծառայես-
ցէ, որպէս եւ գրեալ է, թէ զՅակոբ սիրեցի,
14 եւ զԵսաւ ատեցի։ * Իսկ արդ զի՞նչ ասեմք.
միթէ անիրաւութի՞ւն ինչ յԱստուծոյ. քաւ լի-
15 ցի։ * Զի Մովսիսի ասէ. Ողորմեցայց՝ որում ո-
16 ղորմեցայցն, եւ գթացայց՝ յոր գթացայցն։ * Ա-
պա ոչ ըստ այնմ ինչ է՝ որ կամիցին, եւ ոչ ըստ
այնմ՝ որ ընթանայցէ, այլ ըստ Աստուծոյ՝ որ
ողորմի։
17 ԵԶ. * Քանզի ասէ գիր ցՓարաւոն, թէ
վասն այնորիկ զարթուցի զքեզ, զի 'ի քեզ ցու-
ցից զզօրութիւն իմ, եւ պատմեսցի անուն իմ
18 ընդ ամենայն երկիր. * Ապա ուրեմն ում կամի՝
19 ողորմի, եւ ում կամի՝ խստանայ։ * Իսկ արդ
ասիցե՞ս թէ մեղ եւս զի՞ գտնէ, զի կամաց նորա
20 ոչ ոք կայ հակառակ։ * Իսկ արդ դու ո՞վ ես
մարդ՝ որ պատասխանի տաս Աստուծոյ. միթէ
ասիցէ՞ ստեղծուածն ցստեղծիչն՝ թէ ընդէ՞ր
21 այդպէս արարեր զիս. * եթէ ո՞չ ունիցի իշխա-
նութիւն բրուտն կաւոյն՝ 'ի նմին զանգուածոյ
առնել անօթ, զոմն 'ի պատիւ եւ զոմն յանար-
22 գանս։ * Ապա թէ կամէր Աստուած ցուցանել
զբարկութիւն, եւ յայտնի առնել զզօրութիւն
իւր, զոր համբերեն բազում երկայնմտութեամբ
անօթոյն բարկութեան՝ պատրաստելոյն 'ի կո-
23 րուստ։ * Զի յայտնի արասցէ զմեծութիւն փա-
ռաց իւրոց 'ի վերայ անօթոյն ողորմութեան,

զոր պատրաստեաց 'ի փառս . * զորս եւ կոչեաց 24
զմեզ ոչ միայն 'ի Հրէից՝ այլ եւ 'ի հեթանոսաց ։
* Որպէս եւ յՈվսէէ ասէ . կոչեցից զոր ոչ ժողո- 25
վուրդ իմ ժողովուրդ իմ , եւ զչսիրեցեալն՝ սի-
րեցեալ . * եւ եղիցի 'ի տեղւոջ յորում ասացաւ 26
նոցա , թէ ոչ ժողովուրդ իմ դուք , անդ կո-
չեսցին նոքա որդիք Աստուծոյ կենդանւոյ ։ * Ե- 27
սայի աղաղակէ վասն Իսրայելի . Եթէ իցէ թիւ
որդւոցն Իսրայելի իբրեւ զաւազ ծովու , սակաւ
ինչ մնացորդք մնասցեն . * զի բան մի հակիրճ 28
եւ համառօտ արդարութեամբ , զբանն հակիրճ
արասցէ Տէր 'ի վերայ երկրի ։ * Եւ որպէս ասէ 29
Եսայի . Եթէ ոչ Տէրն զօրութեանց թողեալ
էր մեզ զաւակ , իբրեւ զՍոդոմ լինէաք եւ Գո-
մորայ նմանէաք ։

ԶԿ . * Իսկ արդ զի՞նչ ասիցեմք . զի հեթա- 30
նոսք՝ որ ոչ երթային զհետ արդարութեան՝ հա-
սին արդարութեան , այնմ արդարութեան՝ որ
'ի հաւատոց անտի . * այլ Իսրայէլ երթայր զհետ 31
օրինացն արդարութեան , եւ յօրէնս արդարու-
թեանն ոչ ժամանեաց ։ * Ընդէ՞ր . զի ոչ 'ի հա- 32
ւատոց , այլ իբրեւ 'ի գործոց օրինաց . քանզի
գթեցին նոքա առ վիմին գայթակղութեան ,
* որպէս եւ գրեալ է . Ահաւասիկ դնեմ 'ի Սիովն 33
քար գայթակղութեան եւ վէմ գլորման . եւ
ամենայն որ հաւատասցէ 'ի նա՝ մի ամաչեսցէ ։

ԳԼՈՒԽ Ժ .

1 Եղբարք , իմ կամք սրտի եւ աղօթք առ Աս-
2 տուած վասն նոցա են 'ի փրկութիւն . * քանզի
վկայեմ նոցա՝ եթէ զնախանձ Աստուծոյ ունին ,
3 այլ ոչ գիտութեամբ ։ * Զի տգէտ են Աստուծոյ
արդարութեանն , եւ զիւրեանցն խնդրեն կա-
ցուցանել . զի արդարութեանն Աստուծոյ ոչ
4 հնազանդեցան . * քանզի կատարած օրինացն
Քրիստոս է՝ յարդարութիւն ամենայն հաւատա-
ցելոց ։

5 ԶԴ . * Մովսէս գրէ զարդարութիւն որ յօ-
րինաց անտի է , եթէ արասցէ զայն մարդ՝ կեց-
6 ցէ նովին ։ * Իսկ զհաւատոյն արդարութենէ
այսպէս ասէ . Մի՛ ասիցես 'ի սրտի քում , ո՛վ
ելանիցէ յերկինս . այսինքն է՝ զՔրիստոս իջու-
7 ցանել . * կամ ո՛վ իջանիցէ յանդունդս . այսինքն
8 է զՔրիստոս հանել 'ի մեռելոց ։ * Այլ զի՞նչ ա-
սէ գիր . մերձ է բանն , 'ի բերան քո եւ 'ի սրտի
քում է . այսինքն է՝ բանն հաւատոյ զոր քարո-
9 զեմք . * զի եթէ խոստովանեսցես բերանով քով
Տէր զՅիսուս , եւ հաւատասցես 'ի սրտի քում՝
թէ Աստուած յարոյց զնա 'ի մեռելոց , կեցցես ։
10 * Զի սրտիւ հաւատայք յարդարութիւն , եւ
11 բերանով խոստովանիք 'ի փրկութիւն . * քանզի
ասէ գիր . Ամենայն որ հաւատասցէ 'ի նա , մի՛
12 ամաչեսցէ ։ * Զի ոչ գոյ խտիր Հրէի եւ հեթա-

նոսա․ քանզի նոյն Տէր է ամենեցուն, բաւական
յամենեսին որք կարդան առ նա․ *Զի ամենայն 13
որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ ։ *Իսկ զի- 14
ա՞րդ կարդասցեն՝ յոր ոչն հաւատացին, կամ զի-
ա՞րդ հաւատասցեն՝ որում ոչն լուան, կամ զիա՞րդ
լուիցեն առանց ուրուք քարոզելոյ՝ *կամ զիա՞րդ 15
քարոզեսցեն՝ եթէ ոչ առաքեսցին ։ Որպէս եւ
գրեալ է․ Իբրեւ զի գեղեցիկ են ոտք աւետա-
րանչացն խաղաղութեան, եւ աւետարանչացն
բարութեան ։ *Այլ ոչ ամենեքեան հնազանդ 16
եղեն Աւետարանին․ Եսայի ասէ․ Տէր, ո՞ հա-
ւատաց լրոյ մերում․ *Ապա ուրեմն հաւատք ՚ի 17
լսելոյ են, եւ լուր ՚ի բանէն Քրիստոսի ։ Կ Զ
*Այլ ասեմ, միթէ ո՞չ լուան․ մանաւանդ 18
զի ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, եւ
ընդ ծագս տիեզերաց խօսք նոցա ։ *Այլ ասեմ․ 19
միթէ Իսրայէլ ո՞չ լուաւ․ Նախ Մովսէս ասէ․ Ես
նախանձեցուցից զձեզ ոչինչ ժողովրդեամբ, եւ
ազգաւ անմտաւ զկծեցուցից զձեզ․ *Բայց Ե- 20
սայի համարձակի իսկ եւ ասէ․ Գտայ այնոցիկ՝
որ զիս ոչ խնդրէին ։ Յայտնի եղէ այնոցիկ՝ որ
զինէն ոչ հարցանէին ։ *Այլ առ Իսրայէլ ասէ․ 21
Զօր ամենայն ձգեցի զձեռս իմ առ ժողովուրդն
անհաւան եւ հակառակող ։

ԳԼՈՒԽ ԺԱ․

ԶԶ․ Իսկ արդ ասեմ․ միթէ մերժեա՞ց Աս- 1
տուած զժողովուրդ իւր․ քաւ լիցի․ քանզի եւ

ես Իսրայելացի եմ, ՚ի զաւակէ Աբրահամու, յազ-
2 գէ Բենիամենի․ *ոչ մերժեաց Աստուած զժո-
ղովուրդ իւր, զոր յառաջն ծանեաւ․ թէ ո՞չ
գիտէք յԵղիա զինչ ասէ գիր, որպէս ամբաս-
3 տան լինի Աստուծոյ զԻսրայելէ ։ *Տէր, զմարգա-
րէս քո կոտորեցին, եւ զսեղանս քո կործանե-
ցին․ ես մնացի միայն, եւ խնդրեն զանձն իմ ։
4 *Այլ զի՞նչ ասէ նմա պատասխանին․ Թողի ինձ,
ասէ, եօթն հազար այր, որ ոչ կրկնեցին ծունր
5 Բահաղու ։ *Նոյնպէս եւ յայսմ ժամանակի մի-
նացորդք ըստ ընտրութեան շնորհացն եղեն ։
6 *Իսկ եթէ շնորհօք, ոչ եւս ՚ի գործոց․ ապա
7 թէ ոչ՝ շնորհքն ոչ եւս շնորհք լինին ։ *Իսկ արդ
զոր խնդրէրն Իսրայէլ՝ այնմ ոչ եհաս, բայց ընտ-
8 րութիւնն եհաս, եւ այլքն կուրացան, *որպէս
եւ գրեալ է․ Ետ նոցա Աստուած հոգի յիմա-
րութեան․ աչս որովք ոչ տեսանիցեն, եւ ա-
կանջս որովք ոչ լսիցեն, մինչեւ ցայսօր ժամա-
9 նակի ։ *Եւ Դաւիթ ասէ․ Եղիցին սեղանք նո-
ցա յորոգայթ եւ յորս եւ ՚ի գայթակղութիւն,
10 եւ ՚ի հատուցումն նոցին․ *խաւարեսցին աչք
նոցա՝ զի մի տեսցեն, եւ զթիկունս նոցա հա-
11 նապազ կորացո ։ *Իսկ արդ ասեմ․ միթէ վասն
այնորիկ յանցեան՝ զի կործանեսցի՞ն․ քաւ լիցի․
այլ նոցա յանցանօքն փրկութիւն հեթանոսաց,
12 զի նախանձ արկցէ նոցա ։ *Իսկ եթէ յանցանքն
նոցա մեծութիւն աշխարհի, եւ պակասութիւն
նոցա մեծութիւն հեթանոսաց, ո՞րչափ եւս ա-

ռաւել լրումն նոցա ։
ԻԿ. * Այլ ձեզ ասեմ հեթանոսաց, ցոր- 13
քան ժամանակս իցեմ հեթանոսաց Առաքեալ,
զպաշտօնն իմ փառաւոր առնեմ. * զի թերեւս 14
նախանձ արկից նոցա մարմնոյ իմոյ, եւ ապ-
րեցուցից զոմանս 'ի նոցանէ ։ * Զի եթէ մեր- 15
ժումն նոցա հաշտութիւն աշխարհի է, իսկ ըն-
դունելութիւնն զի՞նչ իցէ, եթէ ոչ կենդանու-
թիւն 'ի մեռելոց ։ * Իսկ եթէ սկիզբն սուրբ է, 16
եւ զանգուածն. եւ արմատն, ապա եւ ոստքն ։
* Եթէ յոստոց անտի ոմանք փշրեցան, եւ դու 17
որ ձիթենիթ վայրենի էիր՝ պատուաստեցար 'ի
նոսա, եւ բաժանորդ եղեր արմատոյն եւ պա-
րարութեան ձիթենւոյն, * մի՛ պարծիր առ ոս- 18
տովքն. ապա թէ պարծիցիս, ոչ եթէ դու զար-
մատն 'ի վեր ունիս, այլ արմատն զքեզ ։ * Իսկ 19
արդ ասիցես. ոստքն փշրեցան, զի ես պա-
տուաստեցայց. * բարւոք է, անհաւատու- 20
թեամբն փշրեցան, եւ դու հաւատովք հաստա-
տեցար. մի՛ հպարտանար, այլ երկիր. * զի եթէ 21
Աստուած 'ի բուն ոստոցն ոչ խնայեաց, գուցէ
երբէք եւ 'ի քեզ ոչ խնայեսցէ ։ * Արդ տես ըզ- 22
քաղցրութիւն եւ զսաստկութիւնն Աստուծոյ.
'ի վերայ կործանելոցն սաստկութիւն, եւ 'ի վե-
րայ քո քաղցրութիւն Աստուծոյ, եթէ կայցես
'ի նմին քաղցրութեան. ապա թէ ոչ՝ եւ դու
կոտորեսցիս ։ * Եւ նոքա եթէ ոչ 'ի նմին անհա- 23
ւատութեանն կայցեն, պատուաստեսցին. զի

կարող է Աստուած միւսանգամ պատուաստել
24 զնոսա ։ * Զի եթէ դու 'ի բուն վայրենի ձի-
թենւոյ անտի հատար, եւ յանբունս քո 'ի բա-
րի ձիթենւոջն պատուաստեցար, ո՞րչափ եւս ա-
ռաւել նոքա որ բունքն իսկ են՝ պատուաստես-
ցին յիւրեանց ձիթենւոջն ։
25 ԻԲ. * Ոչ կամիմ, եղբարք, եթէ տգէտք ի-
ցէք խորհրդոյս այսմիկ, զի մի՛ յանձինս ձեր ի-
ցէք իմաստունք. զի կուրութիւն փոքր 'ի շա-
տէ եղեւ Իսրայէլի. մինչեւ լրումն հեթանոսաց
26 մտցէ, եւ ապա ամենայն Իսրայէլ կեցցէ. * որ-
պէս եւ գրեալ է. Եկեսցէ 'ի Սիոնէ Փրկիչ. եւ
27 դարձուսցէ զամպարշտութիւնս Յակոբայ. * եւ
այս նոցա որ յինէն ուխտ՝ յորժամ բարձից զմե-
28 ղս նոցա ։ * Ըստ Աւետարանիս՝ թշնամիք են
վասն ձեր, ըստ ընտրութեանն՝ սիրելիք վասն
29 հարցն. * քանզի անզեղջ են շնորհքն եւ կոչումն
30 Աստուծոյ ։ * Զի որպէս եւ դուք երբեմն ապըս-
տամբք էիք յԱստուծոյ, եւ արդ ողորմութիւն
31 գտէք առ նոցա ապստամբութեամբն, * նոյնպէս
եւ նոքա այժմ ապստամբք եղեն առ ձերով ո-
ղորմութեամբդ, զի եւ նոքա ողորմութիւն գըտ-
32 ցեն ։ * Քանզի արգել Աստուած զամենեսին յան-
33 հաւանութիւն, զի ամենեցուն ողորմեսցի ։ * Ո՜վ
խորհք մեծութեան եւ իմաստութեան եւ գի-
տութեանն Աստուծոյ. ո՜րպէս առանց քննելոյ
են դատաստանք նորա, եւ առանց զննելոյ են
34 ճանապարհք նորա ։ * Զի ո՞վ գիտաց զմիտս Տեառն,

կամ ո՞վ խորհրդակից լինիցի նմա. * կամ ո՞վ ետ 35
նմա փոխ, եւ առնուցու փոխարէն 'ի նմանէ:
* Զի 'ի նմանէ եւ նովաւ եւ 'ի նոյն ամենայն. 36
նմա փառք յաւիտեանս. ամէն: Վ.Ձ

ԳԼՈՒԽ ԺԲ.

Աղաչեմ զձեզ, եղբարք, գթութեամբքն 1
Աստուծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատա-
րագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, ըղ-
խօսուն պաշտօնդ ձեր. * եւ մի՛ կերպարանիք 2
կերպարանօք աշխարհիս այսորիկ, այլ նորոգե-
ցարուք 'ի նորոգութիւն մտաց ձերոց, առ 'ի
քննել ձեզ զաւն, եւ եթէ զինչ են կամքն Աս-
տուծոյ բարին եւ հաճոյն եւ կատարեալն:*Զայս 3
ասեմ շնորհօքն Աստուծոյ՝ որ տուեալ են ինձ ա-
մենայնի որ է 'ի ձեզ, մի՛ առաւել ինչ խորհել
քան զարժանն խորհելոյ. այլ խորհել 'ի զգաս-
տանալ իւրաքանչիւր, որպէս եւ բաժանեաց
Աստուած չափ հաւատոյ: * Որպէս 'ի միում 4
մարմնի անդամս բազումս ունիմք, եւ անդամքն
ամենայն ոչ զնոյն գործ ունին, * նոյնպէս եւ բա- 5
զումքս մի մարմին եմք 'ի Քրիստոս, այլ իւրա-
քանչիւր միմեանց անդամք եմք: * Բայց ունիմք 6
մեք շնորհս ըստ շնորհացն, որ տուեալ են մեզ
ազգս ազգս. եթէ մարգարէութիւն՝ ըստ չա-
փոյն հաւատոյ, * եթէ պաշտօն՝ ըստ պաշտա- 7
մանն, եթէ որ ուսուցանէն՝ ըստ վարդապետու-

8 թեանն, * եթէ որ մխիթարէն՝ ըստ մխիթարու-
թեանն, որ առատն է՝ զուարթութեամբ, որ
վերակացուն է՝ փութով, որ ողորմին՝ ըջմտու-
9 թեամբ: * Սէր առանց կեղծաւորութեան, ա-
10 տեալ զչար, զհետ երթալ բարեաց. * յեղբայր-
սիրութեան առ միմեանս գթածք, 'ի պատիւ
11 զմիմեամբք ելանել: * Ի փոյթ՝ մի՛ վեհերոտք,
12 հոգւով եռացէք, Տեառն ծառայեցէք. * յու-
սով խնդացէք, նեղութեան համբերեցէք, ա-
13 ղօթից ստէպ կացէք. * 'ի պէտս սրբոց հաղոր-
դեցարուք, զհիւրասիրութեան զհետ երթայք.
14 օրհնեցէք զհալածիչս ձեր, * օրհնեցէք եւ մի՛ ա-
15 նիծանէք: * Խնդալ ընդ խնդացօղս, լալ ընդ լա-
16 ցօղս. * զնոյն միմեանց խորհիջիք. մի՛ ամբար-
17 տաւանէք՝ այլ ընդ խոնարհս զիջանիցիք: * Մի՛
լինիք իմաստունք յանձինս ձեր, մի՛ ումեք չա-
րի չար հատուցանէք: Խորհեցարուք զբարիս
18 առաջի ամենայն մարդկան. * եթէ հնար ինչ ի-
ցէ ձեզ՝ ընդ ամենայն մարդկան զխաղաղու-
19 թիւն կալջիք: * Մի՛ զանձանց վրէժ խնդրէք,
սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան. քանզի
գրեալ է. Իմ է վրէժխնդրութիւն, եւ ես հա-
20 տուցից՝ ասէ Տէր: * Այլ եթէ քաղցեալ է թըշ-
նամին քո՝ հաց տուր նմա, եւ եթէ ծարաւի՝
ջուր տուր նմա. զայս արարեալ՝ կայծակունս
21 հրոյ կուտեսցես 'ի գլուխ նորա: * Մի՛ յաղթիր
'ի չարէ. այլ յաղթեա բարեաւն չարին:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է՝ 1
'ի հնազանդութեան կացցէ. քանզի ոչ ուստեք է
իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ. եւ որ ենն,
յԱստուծոյ կարգեալ են: *Այսուհետեւ որ հա- 2
կառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ հրա-
մանին հակառակ կայ. եւ որք հակառակն կան,
անձանց դատաստանս ընդունին. *զի իշխանքն 3
ոչ են յերկիւղ բարեաց գործոց, այլ չարեաց:
Կամի՞ս չերկնչել յիշխանութենէ անտի. զբարիս
գործեա, եւ ընկալցիս գովութիւն 'ի նմանէ.
*զի Աստուծոյ պաշտօնեայ է՝ քեզ 'ի բարիս. 4
ապա եթէ չար գործիցես, երկի՛ր. զի ոչ եթէ
վայրապար ածեալ է սուսեր ընդ մէջ. Աստուծոյ
սպասաւոր է՝ վրէժխնդիր 'ի բարկութիւն այնմ՝
որ զչարն գործիցէ: *Վասն որոյ հարկ է հնա- 5
զանդ լինել, ոչ միայն վասն բարկութեանն, այլ
եւ վասն խղճի մտացն. *վասն այնորիկ եւ հար- 6
կս հարկանէք, զի Աստուծոյ սպասաւորք են 'ի
նոյն կանխեալք: *Արդ հատուցէք ամենեցուն 7
զպարտս. որում զհարկ՝ զհարկն, որում զմաքս՝
զմաքսն, որում զերկիւղ՝ զերկիւղն, որում ըզ-
պատիւ՝ զպատիւն. *եւ մի ումեք պարտապան 8
գտանիցիք, բաց զմիմեանս սիրելոյ. զի որ սիրէ
զընկերն, զօրէնսն կատարէ. *զմի՛ շնայցես, 9
եւ մի՛ սպանանիցես, եւ մի՛ գողանայցես, եւ

մի՛ սուտ վկայիցես, եւ մի՛ ցանկանայցես: Եւ
եթէ այլ ինչ պատուիրան է՝ յայն բան բովան-
դակին, եթէ սիրեսցես զընկեր քո իբրեւ զան-
10 ձն քո. *սէր՝ ընկերի իւրում չար ոչ առնէ.
11 լրումն օրինացն սէր է: *Եւ զայս գիտասջիք
վասն ժամանակիս. զի արդ ժամ իսկ է մեզ
'ի քնոյ զարթնուլ. զի այժմ մերձ է մեզ
փրկութիւն՝ քան յորժամ հաւատացաքն.
12 *գիշերն մերժեցաւ, եւ տիւն մերձեցաւ.
'ի բաց արասցուք այսուհետեւ զգործս խա-
13 ւարի, եւ զգեցցուք զզէնն լուսոյ: *Իբրեւ
'ի տուընջեան զգաստացեալք շրջեսցուք. մի՛
անառակութեամբք եւ արբեցութեամբք, եւ
մի՛ խառն ընկողնովք եւ պղծութեամբ, եւ մի՛
14 նախանձու եւ հակառակութեամբք. *այլ զգե-
ցարուք զտէր Յիսուս Քրիստոս, եւ մարմնոյ
խնամ մի՛ տանիք 'ի ցանկութիւնս:

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Այլ զտկարացեալն 'ի հաւատս՝ ընկալարուք,
2 մի՛ խղճիւ երկմտութեանց. *ոմն հաւատայ ու-
տել զամենայն. եւ որ հիւանդն է՝ բանջար կե-
3 րիցէ: *Որ ուտէն, զայն որ ոչն ուտէ՝ մի՛ ան-
գոսնեսցէ. եւ որ ոչն ուտէ, զայն որ ուտէն՝
մի՛ դատեսցի. քանզի Աստուած զնա ընկալաւ:
4 *Դու ո՞վ ես որ դատիս զայլոյ ծառայ. իւրում
Տեառն կայ կամ անկանի. բայց կացցէ, զի կա-

րող է Տէրն հաստատել զնա ։ * Ոմն պահէ օր 5
ըստ օրէ , եւ ոմն պահէ զօր հանապազ . իւրա-
քանչիւր ոք զիւր միտս հաճեսցէ ։ * Որ խորհի 6
զօրն՝ Տեառն խորհի , եւ որ ոչն խորհի զօրն՝
Տեառն չխորհի . եւ որ ուտէ՝ Տեառն ուտէ եւ
գոհանայ զԱստուծոյ , եւ որ ոչն ուտէ՝ Տեառն
չուտէ եւ գոհանայ զԱստուծոյ . * զի ոչ ոք ՚ի 7
մէնջ անձամբ կեայ , եւ ոչ անձամբ մեռանի ։
* Եթէ կեամք՝ Տեառն կեամք, եւ եթէ մեռանիմք՝ 8
Տեառն մեռանիմք. * եւ արդ եթէ կեամք եւ եթէ 9
մեռանիմք՝ Տեառն եմք ։ Քանզի ՚ի նոյն իսկ եւ
Քրիստոս մեռաւ եւ եկեաց , զի մեռելոց եւ կեն-
դանեաց առ հասարակ տիրեսցէ ։ * Դու զի՞ դա- 10
տիս զեղբայր քո , կամ ընդէ՞ր անգոսնես զեղ-
բայր քո . քանզի ամենեքին կալոց եմք առաջի
ատենին Քրիստոսի ։ * Զի գրեալ է . Կենդանի 11
եմ ես , ասէ Տէր , զի ինձ կրկնեսցի ամենայն
ծունր , եւ ամենայն լեզու խոստովան լիցի Աս-
տուծոյ ։ * Ապա ուրեմն իւրաքանչիւր ոք ՚ի մէնջ 12
ընդ անձին համարս տացէ Աստուծոյ ։ * Այսու- 13
հետեւ մի՛ զմիմեանս դատեսցուք . այլ առա-
ւել զայս դիք ՚ի մտի , չդնել գայթակղութիւն
եղբօրն ։ * Գիտեմ եւ հաստատեալ եմ ՚ի 14
Քրիստոս Յիսուս , զի ոչ ինչ է պիղծ նովաւ .
բայց այնմ որ համարիցի ոք ինչ պիղծ , նմա է
պիղծ . * զի եթէ վասն կերակրոյ եղբայրն քո 15
տրտմի , ոչ եւս սիրով գնայցես . մի՛ կերակրովն
քո զնա կորուսաներ , վասն որոյ Քրիստոսն մե-

16 ռաւ . * մի՛ հայհոյեսցի բարին ձեր ։ * Զի ոչ է
17 արքայութիւնն Աստուծոյ կերակուր եւ ըմպելի ,
այլ արդարութիւն եւ խաղաղութիւն եւ խըն-
18 դութիւն ՚ի Հոգին Սուրբ . * զի որ յայսմ ծառայէ
Քրիստոսի , հաճոյ է Աստուծոյ եւ ընտիր մարդ-
19 կան ։ * Ապա այսուհետեւ զհետ երթիցուք խա-
ղաղութեան եւ զշինութեան որ առ միմեանս .
20 * մի՛ վասն կերակրոյ քակեր զգործ Աստուծոյ .
ամենայն ինչ սուրբ է , այլ չար այնմ մարդոյ է՝
21 որ խղճիւն ուտիցէ ։ * Լաւ է ոչ ուտել միս եւ
ոչ ըմպել գինի , եւ ոչ՝ որով եղբայրն քո գայ-
22 թակղի , կամ գլթէ , կամ տկարանայ ։ * Դու
ապաքէն հաւատս ունիս , կալ առանձինն ա-
ռաջի Աստուծոյ . երանի՛ որ ոչ դատեսցի զան-
23 ձրն , որով զընկերն փորձիցէ ։ * Բայց որ խղճէն՝
թէպէտ եւ ուտիցէ՝ դատապարտեալ է , զի
ոչ ըստ հաւատոց . զի ամենայն ինչ որ ոչ ՚ի հա-
24 ւատոց է՝ մեղք են ։ * Այլ այնմ որ կարօղն է
հաստատել զձեզ ըստ աւետարանիս իմում , եւ
ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի , ըստ
յայտնութեան խորհրդոյն՝ ժամանակօքն յաւի-
25 տենից լռեցելոյ , * եւ յայտնելոյ այժմիկ ՚ի ձեռն
գրոց մարգարէականաց , ըստ հրամանի մշտըն-
ջենաւորին Աստուծոյ , ՚ի հնազանդութիւն հա-
ւատոց , յամենայն հեթանոսս ծանուցելոյ , մի-
այնոյ իմաստնոյն Աստուծոյ , ՚ի ձեռն Յիսուսի
Քրիստոսի , որում փառք յաւիտեանս . ամէն ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Եղ. Պարտ է մեզ որ կարօղս եմք՝ զտկա- 1
րութիւն տկարացն բառնալ. եւ մի՛ անձանց եւ
եթ հաճոյ լինել. * այլ իւրաքանչիւր ոք 'ի մէնջ 2
ընկերին հաճոյ լիցի 'ի բարիս՝ վասն շինութեան ։
* Քանզի եւ Քրիստոս ոչ եթէ անձին հաճոյ ե- 3
ղեւ, այլ որպէս եւ գրեալ է. Նախատինք նա-
խատչաց քոց անկան 'ի վերայ իմ ։ * Բայց որ ինչ 4
գրեցաւն՝ 'ի մեր վարդապետութիւն գրեցաւ,
զի համբերութեամբ եւ մխիթարութեամբ
գրոց զյոյսն ընկալցուք ։ * Այլ Աստուած համ- 5
բերութեան եւ ամենայն մխիթարութեան տա-
ցէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս ըստ Յիսու-
սի Քրիստոսի. * զի միաբանութեամբ 'ի մի բե- 6
րան փառաւոր առնիցէք զԱստուած եւ զՀայր
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. * վասն որոյ 7
ընկալարուք զմիմեանս, որպէս եւ Քրիստոս ըն-
կալաւ զձեզ 'ի փառս Աստուծոյ ։ * Այլ ասեմ, 8
թէ Քրիստոսի սպասաւոր թլփատութեանն լի-
նել՝ վասն ճշմարտութեանն Աստուծոյ էր, առ
'ի հաստատուն առնելոյ զաւետիս հարցն ։ * Այլ 9
հեթանոսք վասն ողորմութեան փառաւոր առ-
նեն զԱստուած, որպէս եւ գրեալ է. Վասն
այսորիկ գոհացայց զքէն 'ի հեթանոսս, եւ ա-
նուան քում սաղմոս ասացից ։ * Եւ դարձեալ՝ 10
թէ ուրախ եղերուք հեթանոսք ընդ ժողովրդ-

11 դեան նորա. * եւ դարձեալ՝ թէ օրհնեցէք ամե-
նայն հեթանոսք զՏէր, եւ գովեցէք զնա ամե-
12 նայն ժողովուրդք ։ * Եւ դարձեալ Եսայի ասէ.
Եղիցի արմատն Յեսսեայ, եւ որ կանգնելոցն է
իշխան հեթանոսաց, 'ի նա հեթանոսք յուսա-
13 ցին ։ * Այլ Աստուած յուսոյ՝ լի արասցէ զձեզ
ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ,
առաւելուլ ձեզ յուսով՝ զօրութեամբ հոգւոյն
Սրբոյ ։

14 Եղ. * Հաստատեալ եմ եւ ես ինքնին, եղ-
բարք իմ, վասն ձեր, զի դուք լի էք բարու-
թեամբ, լի էք ամենայն գիտութեամբ, կարող
15 էք զմիմեանս խրատել ։ * Այլ համարձակագոյնս
գրեցի առ ձեզ, եղբարք, փոքր 'ի շատէ, իբ-
րեւ յիշեցուցանելով ձեզ վասն շնորհացն որ
16 տուեալ են ինձ յԱստուծոյ, * լինել ինձ սպա-
սաւոր Յիսուսի Քրիստոսի 'ի հեթանոսս. ըղձա-
կերտս առնել զԱւետարանն Աստուծոյ, զի ե-
ղիցի պատարագն հեթանոսաց ընդունելի, սըր-
17 բեալ հոգւովն Սրբով ։ * Ունիմք այսուհետեւ
պարծանս 'ի Քրիստոս Յիսուս առ Աստուած.
18 * Քանզի ոչ իշխեմ խօսել ինչ զոր ոչ գործեաց
Քրիստոս ինեւ 'ի հնազանդութիւն հեթանո-
սաց՝ բանիւք եւ արդեամբք, զօրութեամբ նշ-
19 շանաց եւ արուեստից, * զօրութեամբ հոգւոյն
Սրբոյ, որպէս ինձ յԵրուսաղեմէ եւ շուրջ մին-
չեւ 'ի կողմանս Իւրիկացւոց լնուլ զԱւետարա-
20 նըն Քրիստոսի ։ * Այնպէս առատացեալ յաւե-

տարանել, ոչ ուր անուանեցաւ Քրիստոս, զի
մի՛ իբրեւ յայլոց հիման վերայ շինիցեմ, այլ որ-
պէս եւ գրեալ է. * Թէ որոց ոչ պատմեցաւ 21
վասն նորա՝ տեսցեն, եւ որոց ոչ իցէ լուեալ՝
'ի միտ առցեն ։ * Վասն որոյ շատ խափանեցայ 22
գալ առ ձեզ ։ * Բայց արդ ոչ եւս գոյ ինձ տե- 23
ղի 'ի կողմանս յայսոսիկ. եւ անձուկ յոյժ ու-
նիմ 'ի բազում ամաց գալ առ ձեզ. * յորժամ 24
անցանիցեմ 'ի Սպանիա, ակն ունիմ յանցանելն
առ նոսա՝ տեսանել զձեզ, եւ 'ի ձէնջ յուղար-
կել անդր, եթէ նախ խոկ փոքր 'ի շատէ ձեօք
լցայց ։ * Բայց այժմ երթամ յԵրուսաղէմ պաշ- 25
տել զսուրբսն. * քանզի հաճոյ թուեցաւ Մա- 26
կեդոնացւոցն եւ Աքայեցւոցն՝ հաղորդութիւն
ինչ առնել ընդ աղքատս սրբոցն՝ որ են յԵրու-
սաղէմ ։ * Հաճոյ թուեցաւ, քանզի եւ պարտա- 27
պան իսկ են նոցա, զի եթէ հոգեւորացն նոցա
հաղորդ եղեն հեթանոսք, պարտին եւ մար-
մնաւորացն կցորդ լինել ։ * Արդ զայս կատա- 28
րեալ, եւ կնքեալ զպտուղ նոցա, անցից առ
ձեօք 'ի Սպանիա. * զայս գիտեմ, զի 'ի գալն ի- 29
մում առ ձեզ, լրութեամբ օրհնութեան Աւե-
տարանին Քրիստոսի եկից ։

ԻԵ. * Աղաչեմ զձեզ, եղբարք, 'ի ձեռն 30
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ սիրով Հոգ-
ւոյն, պատերազմակից լինել ինձ յաղօթս վա-
սն իմ առ Աստուած. * զի ապրեցայց յապս- 31
տամբացն որ 'ի Հրէաստանի են, եւ պաշտօնն

իմ որ յԵրուսաղէմ՝ ընդունելի լիցի սրբոցն.
32 * զի խնդութեամբ եկեալ առ ձեզ 'ի կամս Աս-
33 տուծոյ, հանգեայց ընդ ձեզ ։ * Եւ Աստուած
խաղաղութեան եղիցի ընդ ձեզ ամենեսեան.
ամէն ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Յանձն առնեմ ձեզ զՓիբէ զքոյր մեր, որ է
2 սպասաւոր եկեղեցւոյն Կենքրացւոց. * զի զնա
ընկալջիք 'ի Տէր՝ արժանի սրբոց, եւ վերակա-
ցու լինիջիք նմա՝ յոր պէտս իրաց եւ կոչեսցէ
զձեզ. քանզի եւ նա վերակացու եղեւ բազմաց,
3 եւ ինձ իսկ 'ի գլխովին. * Ողջոյն տաջիք Պրիսկեայ
եւ Ակիւղայ՝ գործակցաց իմոց 'ի Քրիստոս Յի-
4 սուս. * որք ընդ անձին իմոյ զիւրեանց պարա-
նոցս մատուցին. զորոց ոչ ես միայն գոհանամ,
5 այլ եւ ամենայն եկեղեցիք հեթանոսաց. * եւ
առտնին եկեղեցւոյն նոցա ։ Ողջոյն տաջիք Ե-
պենետեայ սիրելւոյ իմոյ, որ է պտուղ Ասիաց-
6 ւոց 'ի Քրիստոս ։ * Ողջոյն տաջիք Մարեայ, որ
7 բազում վաստակս վաստակեաց 'ի ձեզ ։ * Ողջոյն
տաջիք Անդրոնիկեայ եւ Յունեայ ազգականաց
իմոց եւ գերեկցաց, որք երեւելիքն իսկ են յԱ-
ռաքեալս, որք եւ յառաջ իսկ քան զիս եղեն 'ի
8 Քրիստոս ։ * Ողջոյն տաջիք Ամպղեայ սիրելւոյ ի-
9 մոյ 'ի Տէր ։ * Ողջոյն տաջիք Ուրբանեայ գործակ-
ցի իմոյ 'ի Տէր, եւ Ստաքեայ սիրելւոյ իմոյ ։

* Ողջոյն տաջիք Ապեղեայ՝ որ ընտիրն է 'ի Տէր : 10
* Ողջոյն տաջիք նոցա որ յԱրիստաբուղեայ տա- 11
նէ անտի իցեն . ողջոյն տաջիք Հերովդիոնեայ
ազգականի իմում : Ողջոյն տաջիք այնոցիկ՝ որ 'ի
Նարկիսեայ տանէն իցեն 'ի Տէր : * Ողջոյն տաջիք 12
Տրիփոսեայ եւ Տրիփոնեայ՝ վաստակաւորաց 'ի
Տէր : Ողջոյն տաջիք Պերսիդեայ սիրելւոյ, որ բա-
զում վաստակս վաստակեաց 'ի Տէր : * Ողջոյն տա- 13
ջիք Ռուփայ ընտրելոյ 'ի Տէր , եւ մօր նորա եւ
իմոյ : * Ողջոյն տաջիք Ասիւնկրիտեայ, Փլեգոնտեայ, 14
Երմայ, Պատրոբեայ, Երմեայ. եւ որ ընդ նոսա եղ-
բարք իցեն : * Ողջոյն տաջիք Փիլողեայ եւ Յու- 15
լեայ, Ներեայ եւ քեռ նորա եւ Ողիմպեայ, եւ որ
ընդ նոսա սուրբք ամենեքին իցեն : * Ողջոյն տաջիք 16
միմեանց 'ի համբոյր սրբութեան : Ողջոյն տան
ձեզ ամենայն եկեղեցիք Քրիստոսի :

ԻԶ . * Աղաչեմ զձեզ, եղբարք, դիտել զայն- 17
պիսիսն՝ որ հերձուածս եւ գայթակղութիւնս
առնիցեն արտաքոյ վարդապետութեանն՝ զոր
դուքն ուսարուք, եւ խորշեցարուք 'ի նոցանէ :
* Զի այնպիսիքն Տեառն մերոյ Քրիստոսի ոչ ծա- 18
ռայեն, այլ իւրեանց որովայնին . եւ քաղցրա-
բանութեամբ եւ օրհնութեամբ պատրեն ըզ-
սիրտս անմեղաց : * Զի ձեր հնազանդութիւնդ 19
առ ամենեսեան հասեալ է . եւ արդ 'ի ձեզ
ուրախ եմ . բայց կամիմ զձեզ իմաստունս լի-
նել 'ի բարիս եւ անմեղս 'ի չարիս . * եւ Ա- 20
տուած խաղաղութեան խորտակեսցէ զսատա-

նայ ընդ ոտիւք ձերովք մերձ ընդ մերձ : Շնորհք
21 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ : * Ող-
ջոյն տայ ձեզ Տիմոթէոս եղբայր եւ գործակից
իմ, եւ Ղուկիոս եւ Յասոն եւ Սոսիպատրոս,
22 ազգականք իմ : * Ողջոյն տամ ձեզ եւ ես Տեր-
23 տիոս, որ զթուղթս գրեցի 'ի Տէր : * Ողջոյն տայ
ձեզ Գայիոս ասպնջական իմ, եւ ամենայն եկե-
ղեցւոյն : Ողջոյն տայ ձեզ Երաստոս Շահապ քա-
24 ղաքիս եւ Կուարտոս եղբայր : * Այլ այնմ, որ
կարողն է հաստատել զձեզ ըստ Աւետարանիս
իմում, եւ ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիս-
տոսի, ըստ Յայտնութեան խորհրդոյն, ժա-
25 մանակօքն յաւիտենից լռեցելոյ, * եւ յայտ-
նելոյ այժմիկ 'ի ձեռն գրոց մարգարէականաց,
ըստ հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ, 'ի հը-
նազանդութիւն հաւատոց, յամենայն հեթա-
26 նոսս ծանուցելոյ, * միայնոյ իմաստնոյն Աստու-
ծոյ, 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի . Նմա փառք
27 յաւիտեանս յաւիտենից . ամէն : * Շնորհք
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ա-
մենեսին :

Առ Հռովմայեցիս Գրեցաւ 'ի Կորնթոսէ 'ի ձեռն
Փիբեայ սարկաւագի :

ԹՈՒՂԹ
ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

Ա.Գ. ՊԱՒՂՈՍ կոչեցեալ Առաքեալ, Յի- 1
սուսի Քրիստոսի՝ կամօքն Աստուծոյ,
եւ Սոսթենէս եղբայր. * եկեղեցւոյդ Աստուծոյ 2
որ է 'ի Կորնթոս, նուիրելոց 'ի Քրիստոս Յիսուս՝
կոչեցելոց սրբոց, ամենեքումբք հանդերձ որ
կարդան զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,
յամենայն տեղիս նոցա եւ մեր։ * Շնորհք ընդ 3
ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ,
եւ 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։ * Գոհա- 4
նամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ վասն ձեր՝
'ի վերայ շնորհացն Աստուծոյ որ տուեալ են
ձեզ 'ի Քրիստոս Յիսուս. * զի յամենայնի մեծա- 5
ցարուք դուք նովաւ՝ ամենայն բանիւ, եւ ա-
մենայն գիտութեամբ, * որպէս վկայութիւնն 6
իսկ Աստուծոյ հաստատեցաւ 'ի ձեզ. * զի դուք 7
մի՛ նուազիցիք եւ մի՛ իւիք շնորհօք, ակն կա-
լեալ յայտնութեանն Տեառն մերոյ Յիսուսի

8 Քրիստոսի, * որ եւ հաստատեսցէ զձեզ մինչեւ
'ի կատարած անարատս յօրն Տեառն մերոյ Յի-
9 սուսի Քրիստոսի։ * Հաւատարիմ է Աստուած,
որով կոչեցարուք 'ի հաղորդութիւն որդւոյ նո-
րա Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։
10 Ա.Զ. * Աղաչեմ զձեզ, եղբարք, անուամբն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի զնոյն բան
ունիցիք ամենեքեան, եւ մի՛ լիցին 'ի ձեզ հեր-
ձուածք. քանզի էիք հաստատեալք 'ի նոյն մի-
11 տս եւ 'ի նոյն հանճար։ * Ազդ եղեւ ինձ վասն
ձեր, եղբարք, 'ի Քղուացւոց անտի, թէ հա-
12 կառակութիւնք են 'ի ձեզ. * եւ արդ ասեմ իսկ,
եթէ իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ ասէ. Ես պաւ-
ղոսեան եմ, եւ միւսն՝ եթէ ես ապողոսեան.
եւ միւսն՝ եթէ ես կեփայեան, եւ միւսն՝ ե-
13 թէ ես քրիստոսեան. * իսկ արդ բաժանեա՞լ
ինչ իցէ Քրիստոս. միթէ Պաւղո՞ս 'ի խաչ ելեալ
իցէ վասն ձեր, կամ յանո՞ւն Պաւղոսի մկրտե-
14 ցարուք։ * Գոհանամ զԱստուծոյ իմոյ՝ զի ոչ զոք
'ի ձէնջ մկրտեցի. բայց միայն զԿրիսպոս եւ զԳա-
15 յիոս, զի մի՛ ոք ասիցէ, * թէ յիմ անուն մկր-
16 տեցարուք. * այլ եւս կնքի եւ տանն Ստեփա-
նեայ. այլ ոք ոչ գիտեմ ամենեւին թէ մկր-
17 տեցի. * զի ոչ առաքեաց զիս Քրիստոս մկրտել՝
այլ աւետարանել, ոչ ճարտարութեամբ բա-
նից, զի մի՛ ընդունայն լիցի խաչն Քրիստոսի։
18 * Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է,
19 այլ փրկելոցս մեզ զօրութիւն Աստուծոյ։ * Զի

գրեալ է. Կորուսից զիմաստութիւն իմաստնոց,
եւ զխորհուրդս խորհրդականաց արհամարհե-
ցից: * Ո՞ւր իմաստուն, ո՞ւր դպիր, ո՞ւր քննիչ 20
աշխարհիս այսորիկ. ո՞չ ապաքէն յիմարեցոյց
Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ:
* Քանզի իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծա- 21
նեաւ աշխարհ իմաստութեամբն զԱստուած,
հաճեցաւ Աստուած յիմարութեամբ քարոզու-
թեանն ապրեցուցանել զհաւատացեալս:
ԲԿ. * Իսկ որովհետեւ Հրեայք նշան հայ- 22
ցեն, եւ հեթանոսք իմաստութիւն խնդրեն,
* մեք քարոզեսցուք զխաչեցեալն Քրիստոս՝ Հրէ- 23
ից գայթագղութիւն եւ հեթանոսաց յիմարու-
թիւն. * բայց նոցին իսկ կոչեցելոցն Հրէից եւ 24
հեթանոսաց՝ զՔրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն
եւ Աստուծոյ իմաստութիւն. * զի յիմարն Աս- 25
տուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ, եւ տը-
կարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ: * Թէ- 26
պէտ եւ զձեր իսկ կոչումն տեսէք, եղբարք,
զի ոչ բազում իմաստունք ըստ մարմնոյ եւ
ոչ բազում հզօրք, եւ ոչ բազում ազնուա-
կանք. * այլ զյիմարս աշխարհիս ընտրեաց Աս- 27
տուած, զի յամօթ արասցէ զիմաստունս. եւ
զտկարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յա-
մօթ արասցէ զհզօրս. * եւ զանարգս աշխարհի 28
եւ զարհամարհեալս ընտրեաց Աստուած՝ եւ զո-
չինչսն, զի զէսն իմն խափանեսցէ. * որպէս զի 29
մի պարծեսցի ամենայն մարմին առաջի Աստու-

30 ծոյ: * Զի 'ի նմանէ դուք էք 'ի Քրիստոս Յիսուս,
որ եղեւ մեզ իմաստութիւն յԱստուծոյ՝ արդա-
31 րութիւն եւ սրբութիւն եւ փրկութիւն. * զի
որպէս եւ գրեալ է. Որ պարծին 'ի Տէր պար-
ծեսցի:

ԳԼՈՒԽ Բ.

1 Եւ ես թէպէտ եւ եկի առ ձեզ, եղբարք,
ոչ ըստ առաւելութեան ինչ բանից իմաստու-
թեան պատմել ձեզ զվկայութիւնն Աստուծոյ:
2 * Զի ոչ եթէ 'ի մտի եդի գիտել ինչ 'ի ձեզ,
բայց միայն զՅիսուս Քրիստոս, եւ զնոյն 'ի խաչ
3 ելեալ. * եւ ես տկարութեամբ եւ երկիւղիւ
4 եւ դողութեամբ բազմաւ եղէ առ ձեզ. * եւ
բանն իմ եւ քարոզութիւն՝ ոչ պատիր բանիւք
իմաստութեան, այլ արդեամբք հոգւոյն եւ զօ-
5 րութեամբ. * զի հաւատք ձեր մի՛ իցեն իմաս-
տութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աս-
տուծոյ: ՎԶ
6 * Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս,
զիմաստութիւն ոչ զաշխարհիս այսորիկ եւ ոչ
զիշխանաց աշխարհիս այսորիկ զխափանելեացս,
7 * այլ խօսիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծա-
ծուկ խորհրդով, զոր յառաջ քան զյաւիտեա-
8 նըս սահմանեաց Աստուած 'ի փառս մեր. * զոր
ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ.
զի եթէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զՏէր փա-
9 ռացն 'ի խաչ հանէին. * Այլ որպէս եւ գրեալ

է, զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ, եւ
'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աս-
տուած սիրելեաց իւրոց :

ԲԴ. * Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգ- 10
ւովն իւրով. զի Հոգին զամենայն քննէ՝ եւ ըզ-
խորս Աստուծոյ. զի ո՞ ոք 'ի մարդկանէ գիտէ
ինչ զմարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն որ 'ի նմա.
* Նոյնպէս եւ ոչ զԱստուծոյն ոք գիտէ, եթէ 11
ոչ Հոգին Աստուծոյ : * Այլ մեք ոչ եթէ զհոգի 12
աշխարհիս այսորիկ առաք, այլ զՀոգին որ յԱս-
տուծոյ. զի ծանիցուք զայն որ յԱստուծոյն շը-
նորհեցաւ մեզ : * Եւ զոր խօսիմքս՝ ոչ եթէ 13
մարդկեղէն ուսմամբ ճարտարութեան բանից,
այլ վարդապետութեամբ Հոգւոյն՝ ընդ հոգե-
ւորս զհոգեւորսն համեմատեմք. * քանզի շըն- 14
չաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Աստուծոյ,
զի յիմարութիւն է նմա. եւ ոչ կարէ գիտել՝
եթէ հոգեպէս քննիցի. * իսկ հոգեւորն քննէ 15
զամենայն, եւ ինքն յումեքէ ոչ քննի : * Իսկ 16
արդ ո՞վ գիտաց զմիտս Տեառն, որ եւ խրատ-
տու լինիցի նմա. այլ մեք զմիտս Քրիստոսի ու-
նիմք :

ԳԼՈՒԽ Գ.

Եւ ես, եղբարք, ոչ կարացի խօսել ընդ ձեզ իբ- 1
րեւ ընդ հոգեւորս՝ այլ իբրեւ ընդ մարմնաւորս :
* Իբրեւ տղայոց 'ի Քրիստոս կաթն ջամբեցի ձեզ՝ 2

եւ ոչ կերակուր. զի ոչ եւս կարէիք. եւ արդ իսկ
3 ոչ կարէք. քանզի դեռ մարմնաւոր էք. * ուր եւ
արդ են իսկ 'ի ձեզ հեռ եւ նախանձ. ո՞չ ապաքէն
4 մարմնաւոր էք եւ ըստ մարդկան գնայք : * Յոր-
ժամ ասէ ոք 'ի ձէնջ՝ ես պաւղոսեան եմ, եւ
միւսն՝ եթէ ես ապողոսեան, ոչ մարդիկ էք :
Իսկ արդ ո՞վ է Պաւղոս, կամ ո՞վ Ապողոս.
5 * պաշտօնեայք՝ որովք հաւատացէքն, եւ իւ-
6 րաքանչիւր որպէս Տէր ետ. * ես տնկեցի, Ապո-
7 ղոս ջուր ետ, այլ Աստուած աճեցոյց : * Ա յ-
սուհետեւ ոչ այն ինչ ոք է՝ որ տնկեացն, եւ ոչ
այն՝ որ ջուրն ետ. այլ որ աճեցոյցն Աստուած :
8 * որ տնկեացն, եւ որ զջուրն ետ, մի են. բայց
իւրաքանչիւր ոք զիւր վարձս առնուցու ըստ
9 իւրում վաստակոց : * Զի Աստուծոյ գործակից
եմք, Աստուծոյ արդիւն էք, Աստուծոյ շինած
10 էք : * Ըստ շնորհացն Աստուծոյ որ տուեալ են
ինձ, իբրեւ իմաստուն ճարտարապետ հիմն ե-
դի. բայց այլ է որ շինէն. այլ իւրաքանչիւր ոք
11 զգոյշ լիցի՝ թէ որպէս շինիցէ, * զի հիմն այլ՝
ոք ոչ կարէ դնել քան զեդեալն՝ որ է Յիսուս
Քրիստոս : ՎԶ
12 * Եթէ ոք շինէ 'ի վերայ հիմանս այսորիկ
ոսկի, արծաթ, ականս պատուականս, փայտ,
13 խոտ, եղէգն, * իւրաքանչիւր գործն յայտնե-
լոց է. զի օրն ընտրեսցէ. զի հրով յայտնելոց
14 է. * եւ զիւրաքանչիւր գործն զիարդ եւ իցէ՝
15 հուրն փորձեսցէ : * Եթէ ուրուք գործն զոր

չինեաց՝ կացցէ, վարձս առցէ. եւ եթէ ու-
րուք գործն այրեսցի՝ տուժեսցի, բայց ինքն
կեցցէ. այլ այնպէս՝ որպէս թէ 'ի հուր: * Ո՞չ 16
գիտէք եթէ տաճար էք Աստուծոյ, եւ հոգի
Աստուծոյ բնակեալ է 'ի ձեզ. * եթէ ոք զտա- 17
ճար Աստուծոյ ապականէ, ապականեսցէ զնա
Աստուած. զի տաճար Աստուծոյ սուրբ է, որ
էք դուք: * Մի՛ ոք զանձն խաբեսցէ. եթէ ոք 18
կամիցի 'ի ձէնջ իմաստուն լինել յաշխարհիս
յայսմիկ, յիմար լիցի՝ զի եղիցի իմաստուն:
* Զի իմաստութիւն աշխարհիս այսորիկ՝ յիմա- 19
րութիւն է առաջի Աստուծոյ. քանզի գրեալ
է, թէ որ ըմբռնէ զիմաստունս 'ի խորագի-
տութեան իւրեանց. * եւ դարձեալ՝ թէ Տէր 20
ճանաչէ զխորհուրդս իմաստնոց, զի են ընդու-
նայն: * Այսուհետեւ մի՛ ոք պարծեսցի 'ի մարդ- 21
կանէ. * զի ամենայն ինչ ձեր է. եթէ Պաւղոս, 22
եթէ Ապողոս, եթէ Կեփաս, եթէ աշխարհ,
եթէ կեանք, եթէ մահ, եթէ որ կանս, եթէ
հանդերձեալքն. ամենայն ինչ ձեր է. * դուք 23
Քրիստոսի, Քրիստոս Աստուծոյ:

ԳԼՈՒԽ Դ.

Այսպէս համարեսցին զձեզ մարդիկ իբ- 1
րեւ զպաշտօնեայս Քրիստոսի եւ հազարապե-
տըս խորհրդոյն Աստուծոյ: * Արդ խնդիր է 'ի 2
մէջ հազարապետաց, եթէ ոք հաւատարիմ

3 գտցի. * Այլ ինձ եւ այս անարգանք են, եթէ
'ի ձէնջ դատեցայց կամ ընաւ իսկ 'ի մարդկա-
4 նէ. նա եւ զանձն իմ ոչ քննեմ. * զի ոչ ինչ
գիտեմ զանձին իմոյ. այլ ոչ եթէ այսու ար-
5 դարանամ, զի որ քննէն զիս՝ Տէր է: * Այսու-
հետեւ մի՛ յառաջ քան զժամանակն դատիք,
մինչեւ եկեսցէ Տէր որ լուսաւոր առնիցէ ըզ-
գաղտնիս խաւարի, եւ յայտնիցէ զխորհուրդս
սրտից. եւ ապա իւրաքանչիւր գովութիւն ե-
6 ղիցի յԱստուծոյ: * Զայս, եղբարք, առակեցի
յանձն իմ եւ՝ յԱպողոս վասն ձեր. զի 'ի մէնջ
ուսջիք՝ մի՛ ինչ առաւել քան զգրեալսն իմանալ.
զի մի՛ այր քան զընկեր հպարտանայցէք 'ի վե-
7 րայ ընկերին: * Իսկ արդ ո՞վ է որ քննիցէ զքեզ.
զինչ ունիս զոր ոչ իցէ առեալ. եւ եթէ ա-
8 ռեր՝ զի՞ պարծիս իբրեւ չառեալ: * Արդէն իսկ
յագեալ իցէք, եւ արդէն մեծացարուք, ա-
ռանց մեր թագաւորեցէք. եւ երանի թէ թա-
գաւորէիք, զի եւ մեք ընդ ձեզ թագաւորէաք:
9 * Ինձ այսպէս թուի՝ թէ զմեզ զԱռաքեալս յետ-
նորդս արար Աստուած՝ իբրեւ զմահապարտս.
զի տեսիլ եղեաք աշխարհի եւ հրեշտակաց եւ
10 մարդկան: * Մեք յիմարք վասն Քրիստոսի, եւ
դուք իմաստունք 'ի Քրիստոս. մեք տկարք՝ եւ
դուք հզօրք, դուք փառաւորեալք՝ եւ մեք
11 անարգք. * մինչեւ ցայսօր ժամանակի եւ քաղ-
ցեաք, եւ ծարաւեցաք, եւ մերկ գնացաք,
եւ կռփահարեցաք, եւ անհանգիստ եղեաք,

* եւ աշխատեցաք ձեռօք մերովք · բամբասեալք 12
զմեզ՝ օրհնեաք · հալածեալք՝ յանձն առնուաք ,
* հայհոյեալք՝ աղաչեաք · իբրեւ առակ նշաւակի 13
եղեաք ամենայն աշխարհի , ամենեցուն փարե-
լի լինել մինչեւ ցայժմ ։ * Ոչ եթէ յամօթ ինչ 14
առնելով զձեզ՝ գրեմ զայս , այլ իբրեւ զորդիս
սիրելիս խրատեմ · * Թէպէտ եւ բիւր դաստի- 15
արակս ունիցիք 'ի Քրիստոս , այլ ոչ եթէ բա-
զում հարս · զի 'ի Քրիստոս Յիսուս Աւետարա-
նաւն ես ծնայ զձեզ ։ * Արդ աղաչեմ զձեզ՝ նը- 16
մանողք ինձ եղիջիք · (որպէս եւ ես Քրիստոսի)։
* Վասն այնորիկ առաքեցի առ ձեզ զՏիմոթէոս, 17
որ է իմ որդի սիրելի եւ հաւատարիմ 'ի Տէր ·
որ յիշեցուսցէ ձեզ զճանապարհս իմ որ 'ի Քը-
րիստոս Յիսուս , որպէս եւ ամենայն ուրեք՝ յա-
մենայն եկեղեցիս ուսուցանեմ ։ * Որպէս թէ 18
չիցեմ գալոց առ ձեզ՝ ոմանք հպարտացան . * այլ 19
եկից հուպ ընդ հուպ՝ եթէ Տէր կամեսցի , եւ
'ի միտ առից՝ ոչ զբանս հպարտացելոցն , այլ
զզօրութիւն . * զի ոչ եթէ բանիւք է արքայու- 20
թիւն Աստուծոյ · այլ զօրութեամբ ։
* Արդ զի՞նչ կամիք · գաւազանա՞ւ եկից 21
առ ձեզ , եթէ սիրով հոգւոյն հեզութեան եւ
արդարութեան եւ խոնարհութեան ։

ԳԼՈՒԽ Ե .

Բնաւ եւ անուանի լսի 'ի ձեզ ընդէ՞ր 1
պոռնկութիւն , եւ այնպիսի պոռնկութիւն՝ որ

ոչ եւ 'ի հեթանոսս , որպէս թէ զկին հօր իւրոյ
2 ունել . * եւ դուք հպարտացեալ էք , եւ ոչ ա-
ռաւել զղջացարուք , զի բարձցի 'ի միջոյ ձերմէ
3 որ զգործն զայն գործեաց ։ * Զի ես թէպէտ եւ
մարմնով մեկուսի եմ , սակայն հոգւով մերձ
եմ . բայց արդէն իսկ իբրեւ 'ի մօտոյ ընտրեցի ,
4 զայն որ այնպէսն գործեաց , * յանուն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի ժողովել ձեզ 'ի միասին
եւ իմոյ հոգւոյս՝ զօրութեամբն հանդերձ Տեա-
5 ռըն մերոյ Յիսուսի Քրիստոսի , * մատնել զայն-
պիսին սատանայի 'ի սատակումն մարմնոյ , զի
ոգին ապրեսցի յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի
6 Քրիստոսի ։ * Ոչ բարւոք են պարծանքդ ձեր . ո՞չ
գիտէք եթէ փոքր մի խմոր զամենայն զանգուա-
7 ծըն խմորէ . * սրբեցէք 'ի բաց զհին խմորն , զի
եղիջիք նոր զանգուած , որպէս էքդ անխմորք .
8 քանզի զատիկ մեր զենաւ Քրիստոս ։ * Այսու-
հետեւ արասցուք տօնս՝ մի 'ի խմորն հին եւ մի
'ի խմորն չարութեան եւ անզգամութեան , այլ
յանխմոր սրբութեան եւ ճշմարտութեան ։
9 ԲՋ . * Գրեցի ձեզ 'ի թղթի այդր չխառնա-
10 կել ընդ պոռնիկս . * եւ ոչ եթէ ընդ պոռնիկս
աշխարհիս այսորիկ , կամ ընդ ագահս , կամ
ընդ յափշտակողս , կամ ընդ կռապաշտս . ա-
պա թէ ոչ՝ պարտ էիք եւ յաշխարհէ իսկ ե-
11 լանել . * բայց արդ գրեցի ձեզ չխառնակել ,
եթէ ոք եղբայր անուանեալ՝ կամ պոռնիկ իցէ ,
կամ կռապաշտ , կամ ագահ , կամ բամբա-

սող, կամ արբեցող, կամ յափշտակող, ընդ
այնպիսումն եւ հաց մի՛ ուտել։ * Զի՞ կայ իմ 12
եւ զարտաքինսն դատելոյ, ո՞չ ապաքէն դուք
զներքինսն դատիցիք, * եւ զարտաքինսն Աս- 13
տուած դատիցի. բարձէք զչարն 'ի միջոյ ձերմէ։

ԳԼՈՒԽ Զ.

Իշխէ՞ ոք 'ի ձէնջ, եթէ իրք ինչ իցեն ընդ ընկերի 1
իւրում, դատել առաջի անիրաւաց, եւ ոչ առաջի
սրբոց. *եթէ ո՞չ գիտէք՝ զի սուրբք զաշխարհ դա- 2
տին. եւ եթէ ձեօք դատի աշխարհ. ապա ոչ էք
արժանի անարգ ատենից. *ո՞չ գիտէք եթէ զհրեշ- 3
տակս դատիմք, թող թէ զերկրաւորս։ *Զերկրա- 4
ւոր ատեանս եթէ յանձն առնուցուք՝ զանարգս
եկեղեցւոյ դատաւորս նստուցանէք. * առ ամօ- 5
թոյ ձերոյ ասեմ, այնչափ ո՞չ գոյ ոք իմաստուն
'ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել 'ի մէջ
եղբօր իւրոյ, * այլ եղբայր ընդ եղբօր դատի, 6
եւ զայն 'ի մէջ անհաւատից։ * Եւ արդ ամենե- 7
ւին իսկ վատթարութիւն է 'ի ձեզ. զի դատաս-
տանս իսկ գոն 'ի միջի ձերում. ընդէ՞ր ոչ դուք
զրկիք, եւ ոչ դուք առաւել նեղիք, *այլ դուք 8
զրկէք եւ նեղէք, եւ այդ զեղբարս եւս։ *Եթէ 9
ո՞չ գիտէք՝ զի անիրաւք զարքայութիւն Աստու-
ծոյ ոչ ժառանգեն. մի՛ խաբիք, ոչ պոռնիկք,
ոչ կռապաշտք, ոչ շունք, * ոչ իգացեալք, ոչ 10
արուագէտք, ոչ գողք, ոչ ագահք, ոչ արբե-

ցողք, ոչ բամբասողք, եւ ոչ յափշտակողք՝
11 զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն։ * Եւ
դուք այնպիսիք ոմանք էիք. այլ լուացարուք, այլ
սրբեցարուք, այլ արդարացարուք յանուն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ 'ի Հոգին Աստու-
ծոյ մերոյ։

12 ԳԿ. * Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ ա-
մենայն ինչ օգուտ է. ամենայն ինչ ինձ մարթ
է, այլ ոչ եթէ ես ընդ իշխանութեամբ ուրուք
13 լինիցիմ։ * Կերակուրք որովայնի, եւ որովայն կե-
րակրոց. այլ Աստուած զսա եւ զնոսա խափա-
նեսցէ. բայց մարմին՝ ոչ պոռնկութեան, այլ
14 Տեառն, եւ Տէր մարմնոյ. * այլ Աստուած՝ որ եւ
զՏէրն յարոյց, եւ զձեզ յարուսցէ զօրութեամբ
15 իւրով։ * Ո՞չ գիտէք եթէ մարմինք ձեր անդամք
են Քրիստոսի. արդ առեալ զանդամս Քրիստո-
սի, առնիցեմք անդամս պոռնկի՞. քաւ լիցի։
16 * Եթէ ո՞չ գիտէք, զի որ մերձենայ 'ի պոռնիկ՝
մի մարմին է. եղիցին, ասէ, երկոքին 'ի մարմին
17 մի. * եւ որ մերձենայ 'ի Տէր, մի հոգի են.
18 * փախերուք 'ի պոռնկութենէ։ Զամենայն մե-
ղս՝ զոր եւ գործէ մարդ՝ արտաքոյ մարմնոյ իւ-
րոյ է, իսկ որ պոռնկի՝ յիւր մարմինն մեղանչէ։
19 * Եթէ ո՞չ գիտէք, զի մարմինք ձեր տաճար են
Հոգւոյն որ է 'ի ձեզ՝ զոր ունիք յԱստուծոյ. եւ
20 չէք անձանց տէր, * քանզի գնոց գնեցայք,
փառաւոր արարէք զԱստուած 'ի մարմինս ձեր,
եւ յոգիս, որ են յԱստուծոյ։

ԳԼՈՒԽ Է.

Այլ վասն որոյ գրեցէքն առ իս, բարւոք է 1
մարդոյ ՚ի կին մարդ չմերձենալ. * բայց վասն 2
պոռնկութեան, իւրաքանչիւր ոք զիւր կին կալ-
ցի, եւ իւրաքանչիւր ոք կին՝ զիւր այր կալցի.
* կնոջ՝ այր իւր զպարտսն հատուսցէ, նոյնպէս 3
եւ կինն՝ առն իւրում. * Զի կին մարմնոյ իւրում 4
ոչ իշխէ, այլ այրն. նոյնպէս եւ այրն իւրում
մարմնոյ ոչ իշխէ, այլ կինն: * Մի՛ զրկէք զմիմեա- 5
նս, բայց եթէ ինչ ՚ի միաբանութենէ առ ժա-
մանակ մի, զի ուխտիցն պարապիցէք, եւ դար-
ձեալ ՚ի նոյն դարձջիք. զի մի՛ փորձեսցէ զձեզ
սատանայ վասն անխառնութեանն ձերոյ: * Զայս 6
ասեմ ներելով, եւ ոչ հրաման տալով. * քանզի 7
կամիմ եթէ ամենայն մարդ լինէր իբրեւ զիս.
այլ իւրաքանչիւր ոք զիւր շնորհս ունի յԱստու-
ծոյ, ոմն այսպէս եւ ոմն այնպէս: * Բայց ա- 8
մուրեացն եւ այրեացն ասեմ, լաւ է նոցա թէ
կայցեն իբրեւ զիս. * ապա թէ ոչ ունիցին ժոյժ, 9
ամուսնասցին. զի լաւ է ամուսնանալ՝ քան ըղ-
ջեռնուլ: * Այլ կանամբեացն պատուիրեմ, ոչ 10
ես՝ այլ Տէր, կնոջ յառնէ մի՛ մեկնել. * ապա 11
եթէ մեկնեսցի, անայր մնասցէ, կամ անդրէն
ընդ առն իւրում հաշտեսցի. եւ առն՝ զկին
իւր մի՛ թողուլ: ՎՁ
* Բայց այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ Տէր, 12

եթէ ոք եղբայր՝ կին ունիցի անհաւատ, եւ
նմա հաճոյ իցէ բնակել ընդ նմա, մի՛ թողցէ
13 զնա. * եւ կին որ ունիցի այր անհաւատ, եւ
նմա կամ իցէ բնակել ընդ նմա, մի՛ թողցէ զայ-
14 րն. * զի սուրբ է այրն անհաւատ՝ կնաւն, եւ
սուրբ է կինն անհաւատ՝ արամբն. ապա թէ
ոչ՝ որդիքն ձեր պիղծ են. բայց այժմ սուրբ են:
15 * Ապա եթէ անհաւատն մեկնիցի, մեկնեսցի.
զի ոչ ինչ հարկ ՚ի վերայ կայ եղբօրն կամ քե-
ւըրն յայնպիսի իրս. քանզի ՚ի խաղաղութիւն
16 կոչեաց զմեզ Աստուած: * Զի՞ գիտես կին դու՝
եթէ զայր քո ապրեցուցես, կամ զի՞ գիտես
17 այր դու՝ եթէ զկին քո ապրեցուցես. * եթէ
ոչ՝ իւրաքանչիւր ումեք որպէս եւ բաժանեաց
Տէր, զիւրաքանչիւր ոք որպէս եւ կոչեաց Աս-
տուած, այնպէս գնասցէ. եւ այսպէս ընդ ա-
18 մենայն եկեղեցիս պատուէր տամ: * Թլփատեալ
ոք կոչեցաւ, մի՛ ցանկասցի անթլփատութեան.
յանթլփատութենէ ոք կոչեցաւ, մի՛ թլփատես-
19 ցի. * զի թլփատութիւն ոչ ինչ է, եւ անթըլ-
փատութիւն ոչ ինչ, այլ պահպանութիւն Աս-
20 տուծոյ պատուիրանացն. * բայց իւրաքանչիւր
21 ոք յոր կոչումն կոչեցաւ, ՚ի նմին կացցէ: * Ծա-
ռա՞յ կոչեցար, մի՛ փոյթ լիցի քեզ. այլ թէ եւ
կարիցես ազատ լինել, քեզ այնպէս լաւ լիցէ.
22 * զի որ ՚ի Տէր կոչեցեալ իցէ ծառայն, ազատ
Տեառն է. նոյնպէս եւ որ ազատն կոչեցեալ է,
23 ծառայ Քրիստոսի է: * Գնոց գնեցայք՝ մի՛ լինիք

ծառայք մարդկան . * իւրաքանչիւր յոր կո- 24
չումն կոչեցաւ , եղբարք , 'ի նմին կացցէ առաջի
Աստուծոյ :

Գ.Դ. * Այլ վասն կուսանաց հրաման ինչ 25
'ի Տեառնէ ոչ ունիմ, բայց խրատ տամ, որպէս
ողորմեալ ուրուք 'ի Տեառնէ, հաւատարիմ լի-
նել . * համարիմ թէ այնպէս լաւ իցէ . բայց 26
վասն վտանգին որ 'ի վերայ կայ , բարւոք է
մարդոյ թէ այսպէս իցէ : * Կապեալ ես 'ի կին, 27
մի խնդրեր արձակել . արձակեալ ես 'ի կնոջէ ,
մի խնդրեր կին . * զի եթէ ամուսնանայցես` ոչ 28
մեղար , եւ եթէ ամուսնանայցէ կոյսն` ոչ մե-
ղաւ , բայց նեղութիւն մարմնոյ ունիցին այնպի-
սիքն . այլ ես խնայեցի 'ի ձեզ : * Բայց զայս ասեմ, 29
եղբարք , եթէ ժամանակս կարճեալ է այսու-
հետեւ . զի որ ունիցին կանայս` որպէս թէ չու-
նիցին , * եւ որ լայցեն` որպէս թէ ոչ լայցեն , 30
եւ որ խնդանն` որպէս թէ ոչ խնդայցեն , եւ
որ գնեն` որպէս թէ չունիցին , * եւ որ վա- 31
րեն զաշխարհս` որպէս թէ չվայելիցեն . զի ան-
ցեալ է վայելչութիւն աշխարհիս այսորիկ : * Այլ 32
կամիմ զձեզ անհոգս լինել . զի որ անկինն է`
հոգայ զՏեառն , թէ որպէս հաճոյ լիցի Տեառն .
* եւ որ կանամբին է , հոգայ զաշխարհիս` թէ 33
որպէս հաճոյ լիցի կնոջ իւրում : * Եւ ահա մեկ- 34
նեցան 'ի միմեանց առնակինն եւ կոյսն . զի կոյսն
հոգայ զՏեառն , զի իցէ սուրբ մարմնով եւ հոգ-
ւով . եւ առնակինն հոգայ զաշխարհիս` թէ որ-

35 պէս հաճոյ լիցի առն իւրում : * Այլ զայս վասն
ձերոյ օգտի ասեմ . ոչ եթէ խեղդ ինչ արկա-
նեմ ձեզ , այլ վասն պարկեշտութեան եւ հը-
պատակութեան Տեառն առանց զբաղմանց :

36 Գ.Զ. * Ապա թէ ոք ամօթ համարեսցի վասն
կուսին իւրոյ եթէ իցէ ելեալ ըստ չափ , եւ
այնպէս ինչ պարտ իցէ լինել , զոր կամի արաս-
37 ցէ , ոչ մեղանչէ . ամուսնասցի : * Իսկ որ հաս-
տատեալ է 'ի սրտի իւրում , եւ վտանգ ինչ ոչ
իցէ նմա , իշխանութիւն ունի 'ի վերայ կամաց
իւրոց . եւ զայն ընտրեաց 'ի սրտի իւրում`
38 պահել զկոյսն իւր , բարւոք առնէ . * եւ որ ա-
մուսնացուցանէ զկոյսն իւր` բարւոք առնէ , եւ
39 որ ոչն ամուսնացուցանէ` լաւ եւս առնէ : * Կին
կապեալ է ցորժամ ժամանակս կենդանի է այր
նորա . ապա եթէ ննջեսցէ այր նորա , ազատ է`
ում կամիցի ամուսնանալ . բայց միայն Տէրամբ .
40 * բայց երանելի եւս է` թէ այնպէս կացցէ ըստ
իմում խրատու . եւ այսպէս համարիմ` թէ եւ
յիս իցէ Հոգի Աստուծոյ :

ԳԼՈՒԽ Ը .

1 Այլ վասն զոհից կռոցն , գիտեմք եթէ ա-
մենեքեան գիտութիւն ունիմք . գիտութիւն հը-
2 պարտացուցանէ , այլ սէր շինէ : * Եթէ ոք կա-
միցի գիտել ինչ , չեւ եւս գիտաց` որպէս ար-
3 ժան է գիտել . * բայց որ սիրէ զԱստուած , նա

է տեղեկացեալ 'ի նմանէ ։ *Այլ վասն կերակ- 4
րոցն զոհելոց՝ գիտեմք եթէ ոչ ինչ իսկ կուռքդ
են յաշխարհի. զի չիք ոք Աստուած բայց 'ի մի-
ոյն ։ * Զի թէպէտ և իցեն անուանեալ աս- 5
տուածք՝ եթէ յերկինս և եթէ յերկրի, որպէս
և են աստուածք բազումք և տեարք բազումք,
* այլ մեզ մի է Աստուած, Հայր՝ յորմէ ամենայն, 6
և մեք 'ի նա. և մի տէր Յիսուս Քրիստոս,
որով ամենայն, և մեք նովաւ ։ ԿԶ
* Այլ ոչ յամենեսեան գիտութիւն է. ո- 7
մանք առ խղճի մտաց մինչև ցայժմ զկռոցն իբ-
րև զզոհեալ ուտեն, և խիղճ մտաց նոցա՝
քանզի տկար է, պղծի ։ * Այլ կերակուր զմեզ 8
առաջի Աստուծոյ ոչ կացուցանէ. ոչ եթէ չու-
տեմք՝ պակասեմք ինչ, և ոչ եթէ ուտեմք՝ ա-
ռաւելումք ինչ. * բայց զգոյշ լերուք՝ գուցէ իշ- 9
խանութիւնդ ձեր այդ գայթակղութիւն լինի-
ցի տկարացն ։ * Եթէ ոք տեսանիցէ զքեզ որ 10
զգիտութիւնդ ունիս՝ բազմեալ 'ի մեհենի, ո՞չ
ապաքէն խիղճ մտացն նորա՝ որ տկարութեամբն
զգածեալ է, անդրէն շինիցի ուտել զզոհեալն.
* և կորնչիցի տկար եղբայրն 'ի քում գիտու- 11
թեանն, վասն որոյ Քրիստոսն մեռաւ. * և այն- 12
պէս յանցուցեալ յեղբարս, և զխիղճ մտաց
տկարացն զայրացուցեալ, 'ի Քրիստոս մեղանչէ ։
* Վասն որոյ եթէ կերակուր գայթակղեցու- 13
ցանէ զեղբայրն իմ, ոչ կերայց միս յաւիտեան,
զի մի զեղբայրն իմ գայթակղեցուցից ։

ԳԼՈՒԽ Թ.

1 Ո՞չ ապաքէն ազատ եմ, ո՞չ ապաքէն Առա-
քեալ եմ, ո՞չ ապաքէն զՏէր մեր Յիսուս Քրիս-
տոս աչօք իմովք տեսի, ո՞չ ապաքէն գործ իմ
2 դուք էք 'ի Տէր. * Թէպէտ և այլոց չիցեմ Ա-
ռաքեալ, այլ դէպ ձեզ եմ. զի կնիք իսկ առա-
3 քելութեան իմոյ դուք էք 'ի Տէր ։ * Իմ պատաս-
4 խանի առ զիս հարցանիցեն՝ այս է. * միթէ ո՞չ
5 ունիցիմք իշխանութիւն ուտել և ըմպել, * մի-
թէ ո՞չ ունիցիմք իշխանութիւն զքոյր կանայս
շրջեցուցանել ընդ մեզ, որպէս և այլ Առա-
քեալքն, և եղբարքն Տեառն, և Կեփաս.
6 * եթէ միայն ես և Բառնաբաս ոչ ունիցիմք
7 իշխանութիւն չգործել ինչ ։ * Ո՞ ոք երբէք զի-
նուորիցի իւրովք թոշակօք, ո՞ ոք տնկիցէ այ-
գի՝ և 'ի պտղոյ նորա ոչ ուտիցէ, ո՞ ոք արա-
ծիցէ խաշն՝ և 'ի կաթանէ խաշինն ոչ ուտի-
8 ցէ ։ * Միթէ ըստ մարդկութեա՞ն խօսիցիմ զայս,
9 կամ թէ և օրէնքն զայն ո՞չ ասիցեն. * 'ի Մով-
սիսի իսկ օրէնսն գրեալ է. Ոչ կապեսցես զբ-
ռուկ եզին կալոտւոյ. միթէ զեզա՞նց ինչ փոյթ
10 էր Աստուծոյ. * ո՞չ ապաքէն վասն մեր ասէ,
քանզի վասն մեր գրեցաւ. զի յուսով պարտի
որ սերմանէն՝ սերմանել, և որ կասուն՝ յու-
11 սով վայելել ։ * Եթէ մեք 'ի ձեզ զհոգևորսն
սերմանեցաք, մե՞ծ ինչ է՝ եթէ 'ի ձէնջ զմար-

մնաւորսդ հնձիցեմք. * եթէ այլք ձերում իշխա- 12
նութեամբդ վայելեն, ո՞չ առաւել եւս մեք.
այլ ոչ 'ի գործ ինչ արկաք զիշխանութիւնս զայս.
բայց ամենայնի համբերեմք, զի մի՛ խափան ինչ
լինիցիմք Աւետարանին ։ * Ո՞չ գիտէք՝ եթէ որ 13
'ի տաճարին գործեն, 'ի տաճարէ անտի ուտեն.
եւ որ սեղանոյն պաշտօնեայք են, 'ի սեղանոյ
անտի վայելեն. * Նոյնպէս եւ Տէր հրաման ետ, 14
որոց զԱւետարանն աւետարանեն՝ յԱւետարա-
նէ անտի կեալ ։ * Բայց ես եւ ոչ զմի ինչ յայս- 15
ցանէ արկի 'ի գործ, եւ ոչ գրեցի զայդ, զի
ինձ այսպէս ինչ լինիցի. լաւ է ինձ մանաւանդ
մեռանել, եւ ոչ զի զպարծանս իմ ոք ընդու-
նայն համարիցի ։ * Զի եթէ աւետարանեմ, ոչ 16
ինչ են ինձ պարծանք, քանզի հարկ 'ի վերայ
կայ. բայց վայ է ինձ՝ թէ ոչ աւետարանեմ.
* եթէ կամաւ զայն առնեմ, վարձք են ինձ. 17
եւ եթէ ակամայ, տնտեսութիւն յանձն է ինձ ։
* Եւ արդ զի՞նչ վարձք լիցին ինձ, եթէ յաւե- 18
տարանելն ձրի տաց զԱւետարանն, զի մի՛ զեղ-
ծիցիմ ինչ իշխանութեամբս իմով յԱւետարա-
նի անդ ։ * Քանզի ազատ էի յամենայնէ, եւ ա- 19
մենեցուն զանձն 'ի ծառայութեան կացուցի,
զի զբազումս շահեցայց ։ * Եղէ ընդ Հրեայսն իբ- 20
րեւ զՀրեայ, զի զՀրեայսն շահեցայց. * եղէ ընդ 21
օրինօք՝ իբրեւ զայնոսիկ որ ընդ օրինօքն էին,
իբրեւ ոչ եթէ ընդ օրինօքն էի, այլ զի որ ընդ
օրինօքն իցեն՝ եւ զնոսա շահեցայց. ընդ անօ-

րինս եղէ իբրեւ զանօրէն, իբր ոչ եթէ անօ-
րէն ինչ էի յԱստուծոյ, այլ ընդ օրինօքն Քրիս-
22 տոսի, զի շահեցայց զանօրէնսն. * Եղէ ընդ տը-
կարս իբրեւ զտկար, զի զտկարսն շահեցայց.
ընդ ամենայնի ամենայն եղէ, զի թերեւս ապ-
23 րեցուցից զոմանս ։ * Զայս ամենայն առնեմ վա-
սն Աւետարանին, զի կցորդ եղէց նմա ։
24 ԴԿ. * Ո՞չ գիտէք՝ եթէ որ յասպարիսին ըն-
թանան, ընթանալ ամենեքին ընթանան, բայց
մի ոք առնու զյաղթութեանն. այնպէս ըն-
25 թացարուք՝ զի հասանիցէք ։ * Ամենայնի որ պա-
տերազմի, ամենայնի ժուժկալ լինի. նոքա զի
զեղծանելի պսակն առնուցուն, եւ մեք զա-
26 նեղծութեանն ։ * Արդ ես խոկ այնպէս ընթա-
նամ, ոչ որպէս յաներեւոյթս. այնպէս մրցիմ,
27 որպէս ոչ թէ զհողմս ինչ կոծելով, * այլ ճըն-
շեմ զմարմինս իմ եւ հնազանդեցուցանեմ. զի
գուցէ որ այլոյն քարոզեցի՝ ես ինքն անպիտան
գտանիցիմ ։

ԳԼՈՒԽ Ժ.

1 Ոչ կամիմ եթէ ագէտք իցէք, եղբարք, զի
հարքն մեր ամենեքին ընդ ամպովն էին, եւ ա-
2 մենեքին ընդ ծովն անցին, * եւ ամենեքեան 'ի
3 Մովսէս մկրտեցան յամպն եւ 'ի ծովն, * եւ ա-
մենեքին զնոյն զհոգեւոր զկերակուրն կերան,
4 * եւ ամենեքին զնոյն զհոգեւոր ըմպելին արբին.

զի ըմպէին 'ի հոգեւոր վիմէն որ երթայր զհետ
նոցա, եւ վէմն էր ինքն Քրիստոս: * Այլ ոչ ե- 5
թէ ընդ բազումս 'ի նոցանէ հաճեցաւ Աս-
տուած. քանզի տապաստ անկան յանապատի
անդ. * Եւ այն օրինակաւ լինէր վասն մեր, զի 6
մի լինիցուք ցանկացօղք չարեաց, որպէս նոքայն
ցանկացան: * Եւ մի կռապաշտք լինել՝ որ- 7
պէս ոմանք 'ի նոցանէ, որպէս եւ գրեալ է.
Նստաւ ժողովուրդն ուտել եւ ըմպել՝ եւ յա-
րեան 'ի խաղալ: * Եւ մի պոռնկեսցուք. որպէս 8
ոմանք պոռնկեցան 'ի նոցանէ, եւ անկան 'ի
միում աւուր քսան եւ չորք հազարք. * Եւ մի 9
փորձեսցուք զՏէր, որպէս ոմանք 'ի նոցանէ փոր-
ձեցին, եւ յօձից անտի սատակեցան. * Եւ մի 10
տրտնջեսցուք, որպէս ոմանք 'ի նոցանէ տրտն-
ջեցին, եւ կորեան 'ի սատակչէ անտի: * Այլ 11
այն ամենայն օրինակաւ անցանէր ընդ նոսա,
բայց գրեցաւ վասն մերոյ խրատու, յորս վախ-
ճան յաւիտենիցն եհաս:

Դ.Դ. * Այսուհետեւ որ համարիցի հաստա- 12
տուն կալ, զգոյշ լիցի՝ գուցէ անկանիցի: * Փոր- 13
ձութիւն 'ի ձեր վերայ ոչ է եկեալ՝ բայց 'ի
մարդկանէ. այլ հաւատարիմ է Աստուած, որ
ոչ արկցէ զձեզ 'ի փորձութիւն առաւել քան
զկար ձեր. այլ արասցէ ընդ փորձութեանն եւ
զելսն, զի համբերել կարասջիք: * Վասն որոյ, 14
սիրելիք իմ, փախերուք 'ի կռապաշտութենէ.
*Իբրեւ ընդ իմաստունս խօսիմ, ընտրեցէք ձե- 15

16 զէն զոր ասեմ: * Բաժակն օրհնութեան զոր
օրհնեմք՝ ո՞չ ապաքէն հաղորդութիւն է արեա-
նըն Քրիստոսի. հացն զոր բեկանեմք՝ ո՞չ ապա-
քէն հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի:
17 * Զի մի հաց՝ մի մարմին եմք բազումքս. զի ա-
18 մենեքին 'ի միոջէ հացէ անտի վայելեմք: * Տե-
սէք զԻսրայէլն ըստ մարմնոյ. ո՞չ ապաքէն որ
19 ուտեն 'ի զոհիցն, հաղորդք են սեղանոյն. * Իսկ
արդ զի՞նչ ասեմ. եթէ զոհեալն իցէ ինչ, եւ
20 կամ կուռքն իսկ իցէ՞ն ինչ: * Այլ զոր զոհենն
հեթանոսք, դիւաց՝ եւ ոչ Աստուծոյ զոհեն.
ոչ կամիմ զձեզ հաղորդս դիւաց լինել. քանզի
ոչ կարէք զբաժակն Տեառն ըմպել եւ զբաժակն
21 դիւաց. * Եւ ոչ կարէք 'ի սեղանոյ Տեառն վա-
22 յելել եւ 'ի սեղանոյ դիւաց. * Եթէ նախա՞նձ
ինչ արկանիցեմք Տեառն, միթէ զօրագո՞յնք ի-
23 ցեմք քան զնա: * Ամենայն ինչ ինձ մարթ է,
այլ ոչ ամենայն ինչ օգուտ է. ամենայն ինչ ինձ
24 մարթ է, այլ ոչ ամենայն ինչ շինէ. * Մի ոք
զանձին եւ եթ խնդրեսցէ, այլ եւ զընկերին:
25 * Ամենայն ինչ որ 'ի սպանդանոցի վաճառի, կե-
26 րայք՝ եւ մի խտրէք վասն խղճի մտաց. * Զի Տեա-
ռըն է երկիր լրիւ իւրով: Վ.Զ

27 * Եթէ ոք կոչեսցէ զձեզ յանհաւատից, եւ
կամիցիք երթալ, զամենայն ինչ որ առաջի դը-
նիցի՝ կերայք, եւ մի խտրէք վասն խղճի մը-
28 տաց. * ապա թէ ոք ասասցէ ձեզ՝ թէ այդ զո-
հեալ է, մի ուտիցէք վասն նորա՝ որ գուշակն

եղեւ, եւ վասն խղճի մտացն: * Այլ զխիղճ մը- 29
տացն ասեմ՝ ոչ զիւրն, այլ զընկերին. իսկ ըն-
դէ՞ր ընաւ ազատութիւնս իմ դատիցի յայլոց
խղճէ մտաց. * եթէ ես շնորհօք վայելեմ, ըն- 30
դէ՞ր հայհոյիցիմ, վասն որոյ ես գոհանամ:
* Արդ եթէ ուտիցէք, եթէ ըմպիցէք, եթէ 31
զինչ եւ գործիցէք, զամենայն ինչ 'ի փառս Աս-
տուծոյ արասջիք. * առանց գայթակղութեան 32
գտնելոյ Հրէից եւ հեթանոսաց՝ լինիջիք, եւ ե-
կեղեցւոյն Աստուծոյ: * Որպէս եւ ես ամենեւին 33
ամենեցուն հաճոյ լինիմ. ոչ խնդրեմ զանձին օ-
գուտ, այլ զբազմաց զի ապրեսցին:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Նմանօղք ինձ եղերուք, որպէս եւ ես Քրի- 1
ստոսի:

ԴՋ. * Գովեմ զձեզ՝ զի զամենայն ինչ զիմ 2
յիշէք, եւ որպէս աւանդեցի ձեզ՝ զաւանդու-
թիւնսն ունիցիք: * Կամիմ զի գիտիցէք դուք, 3
եթէ առն ամենայնի գլուխ Քրիստոս է, եւ գը-
լուխ կնոջ այր, եւ գլուխ Քրիստոսի Աստուած:
* Ամենայն այր յորժամ յաղօթս կայցէ կամ մար- 4
գարէանայցէ, եւ զգլուխն ծածկեալ ունիցի,
յամօթ առնէ զգլուխն իւր. * եւ ամենայն կին 5
յորժամ յաղօթս կայցէ կամ մարգարէանայցէ
բացաւ գլխով, յամօթ առնէ զգլուխն իւր, զի
այնպէս համարէ՝ թէ գերծեալ իցէ: * Զի եթէ 6

ոչ քողեսցի կին, փքրեսցէ զհերս իւր. ա-
պա թէ անպատեհ է կնոջ փքրել կամ գեր-
7 ծուլ, քողեսցի: * Առն մարդոյ չէ պարտ ծած-
կել զգլուխ, զի պատկեր եւ փառք Աստուծոյ
8 է. * իսկ կին՝ փառք առն իւրոյ. զի ոչ եթէ այր
9 'ի կնոջէ է, այլ կին յառնէ. * քանզի ոչ իսկ հաս-
տատեցաւ այր վասն կնոջ, այլ կին վասն առն:
10 * Վասն այնորիկ պարտի կինն շուք դնել գլխոյն
11 վասն հրեշտակաց: * Բայց ոչ կին առանց առն, և
12 ոչ այր առանց կնոջ 'ի Տէր. * զի որպէս կին յառնէ,
նոյնպէս և այր 'ի կնոջէ. բայց ամենայն յԱստուծոյ:
13 * Այլ դուք ձեզէն տուք զիրաւդ. արժա՞ն է
կնոջ մարդոյ հոլանի յաղօթս կալ առաջի Աս-
14 տուծոյ. * եւ ո՞չ բնութիւնն իսկ ուսուցանէ ըզ-
ձեզ, զի այր եթէ գիսաւոր է՝ անարգանք են
15 նմա, * բայց կին եթէ գիսաւոր է՝ փառք են
նմա. զի գէսք փոխանակ զգեստու տուեալ
16 են նմա: * Ապա թէ ոք կամի հակառակօղ լի-
նել, մեք չունիմք այնպիսի սովորութիւն, եւ
ոչ եկեղեցիքն Աստուծոյ: ՎՋ
17 * Այլ զայս պատուիրեմ, ոչ որպէս թէ գո-
վիցեմ, զի ոչ 'ի լաւ անդր՝ այլ 'ի վատթարն
18 նկրտիք: * Նախ՝ յորժամ 'ի մի վայր ժողովիցիք
յեկեղեցին, լսեմ եթէ հերձուածք գոն 'ի ձեզ.
19 եւ սակաւ ինչ հաւատացի. * բայց եւ հեր-
ձուածք լինելոց են 'ի ձեզ, զի որ ընտիրքն իցեն
20 'ի ձեզ՝ երեւեսցին: * Եւ արդ 'ի ժողովելն ձեզ
'ի միասին, ոչ է առն Տեառն ձեզ ուտել հաց

ուտելոյ . * զի իւրաքանչիւր ոք զիւր ընթրիս 21
յառաջանայ ուտել , եւ ոմն քաղցեալ , եւ ոմն
արբեալ ։ * Մինթէ տունս ոչ ունիցիք ուտելոյ եւ 22
ըմպելոյ . եթէ զեկեղեցեա՞ն Աստուծոյ արհա-
մարհէք , եւ յամօթ առնէք զչքաւորսն . զի՞նչ
ասացից , գովեցի՞ց զձեզ . յայդմ ոչ գովեմ ։ * Զի 23
ես ընկալայ 'ի Տեառնէ , զոր եւ ձեզն աւան-
դեցի , եթէ Տէր Յիսուս 'ի գիշերին յորում մատ-
նէր՝ ա՛ռ հաց , * գոհացաւ , եբեկ եւ ասէ . Այս 24
է իմ մարմին որ վասն ձեր . զայս արարէք առ
իմոյ յիշատակի ։ * Նոյնպէս եւ զբաժակն յետ 25
ընթրեացն ա՛ռ եւ ասէ . Այս բաժակ նոր ուխտ
է իմով արեամբ . զայս արարէք քանիցս անգամ
թէ ըմպիցէք՝ առ իմոյ յիշատակի ։ * Քանիցս ան- 26
գամ թէ ուտիցէք զհացս զայս եւ զբաժակս
ըմպիցէք , զմահն Տեառն պատմեցէք , մինչեւ
եկեսցէ նա ։ * Այսուհետեւ որ ուտիցէ զհացս , 27
կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանու-
թեամբ , պարտական եղիցի մարմնոյ եւ արեանն
Տեառն . * փորձեսցէ մարդ զանձն իւր , եւ ա- 28
պա 'ի հացէ անտի կերիցէ , եւ 'ի բաժակէն
արբցէ . * զի որ ուտէ եւ ըմպէ անարժանու- 29
թեամբ , դատաստանս անձին իւրում ուտէ եւ
ըմպէ . զի ոչ խտրէ զմարմինն Տեառն ։ * Վասն 30
այնորիկ իսկ են 'ի ձեզ բազում հիւանդք եւ
ախտաժէտք , եւ շատ եւս այն են՝ որ եւ նն-
ջեցեալքն իսկ իցեն ։ * Զի եթէ զանձինս քն- 31
նէաք , ապա ոչ դատապարտէաք . * Եւ եթէ 32

դատիմք՝ 'ի Տեառնէ խրատիմք , զի մի՛ ընդ աշ-
33 խարհի դատապարտեսցուք ։ * Այսուհետեւ ,
եղբարք , յորժամ 'ի մի վայր ժողովիցիք ուտել՝
34 միմեանց մնասջիք . * ապա թէ ոք քաղցեալ ի-
ցէ , 'ի տան իւրում կերիցէ , զի մի՛ 'ի դատա-
պարտութիւն ժողովիցիք ։ Բայց զայլն ինչ յոր-
ժամ եկից , յայնժամ պատուիրեցից ։

ԳԼՈՒԽ ԺԲ .

1 ԵԿ . Այլ վասն հոգեւորացն , ոչ կամիմ ե-
2 թէ տգէտք իցէք . * գիտէք իսկ՝ զի մինչ հե-
թանոսքն էիք՝ առ կուռս անմռունչս որպէս
3 երթայիք եւ գայիք ։ * Վասն որոյ ցուցանեմ
ձեզ , զի ոչ ոք հոգւով Աստուծոյ խօսի , եւ ա-
սիցէ թէ Նզովեալ Յիսուս . եւ ոչ ոք կարէ ա-
սել Տէր զՅիսուս , եթէ ոչ հոգւովն Սրբով ։
4 * Թէպէտ եւ բաժինք շնորհաց են , այլ հոգի
5 նոյն է , * եթէ բաժինք պաշտամանց են , այլ
6 Տէր նոյն է , * եթէ բաժինք յաջողութեանց են ,
այլ Աստուած նոյն է՝ որ յաջողէ զամենայն յա-
7 մենայնի ։ * Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է
յայտնութիւն հոգւոյն՝ առ իւրաքանչիւր օ-
8 գուտ ։ * Ումեմն 'ի հոգւոյն տուեալ է բան ի-
մաստութեան , այլում բան գիտութեան ըստ
9 նմին հոգւոյ , * միւսումն հաւատք նովին հոգ-
ւով . այլում շնորհս բժշկութեանց նովին հոգ-
10 ւով , * այլում յաջողութիւնք զօրութեանց ,

այլում մարգարէութիւն, այլում ընտրութիւն
հոգւոց, այլում ազգք լեզուաց, այլում թարգ-
մանութիւնք լեզուաց.* այլ զայս ամենայն յա- 11
ջողէ մի եւ նոյն Հոգի, եւ բաժանէ իւրաքան-
չիւր որպէս եւ կամի։

ԵԳ. *Որպէս մարմին մի է, եւ անդամս 12
բազումս ունի, եւ ամենայն բազում անդամք
մարմնոյն՝ մի մարմին է, նոյնպէս եւ Քրիստոս.
*քանզի միով Հոգւով մեք ամենեքեան 'ի մի 13
մարմին մկրտեցաք, եթէ Հրեայք, եթէ հե-
թանոսք, եթէ ծառայք, եթէ ազատք, ամե-
նեքին զմի Հոգի արբաք։* Քանզի մարմին ոչ մի 14
անդամ է, այլ բազում.* եթէ ասիցէ ոտն, զի 15
չեմ ձեռն՝ չեմ 'ի մարմնոյ անտի. ո՞չ այնու չի-
ցէ 'ի մարմնոյ անտի.* եւ եթէ ասիցէ ունկն, 16
վասն զի չեմ ակն՝ չեմ 'ի մարմնոյ անտի, ո՞չ այ-
նու չիցէ 'ի մարմնոյ անտի.* եթէ ամենայն մար- 17
մինն ակն էր, ո՞ւր էր ունկն. եւ եթէ ամենայն
լսելիք էին, ո՞ւր էին հոտոտելիք։ * Բայց արդ 18
Աստուած եդ զանդամսն՝ զմի մի իւրաքանչիւր
'ի նոցանէն 'ի մարմնին՝ որպէս եւ կամեցաւ.
* ապա թէ էր ամենայն մի անդամ, ո՞ւր էր 19
մարմին։ *Բայց արդ անդամք բազումք են, եւ 20
մարմին մի.* ոչ կարէ ակն ասել ցձեռն, թէ 21
չես ինձ պիտոյ, եւ կամ դարձեալ գլուխն ցոտսն՝
թէ չէք ինձ պիտոյ.* այլ առաւել որ թուին 22
անդամք մարմնոյն՝ թէ տկարագոյնք իցեն, կա-
րեւորք են,* եւ որ թուին թէ անարգագոյնք 23

իցեն մարմնոյն, այնց առաւելագոյն պատիւ առ-
նեմք. եւ ամօթոյքն մեր առաւել եւս պար-
24 կեշտութիւն ունին։ * Եւ պարկեշտոյն մերոց
չէ ինչ պիտոյ. քանզի Աստուած խառնեաց ըզ-
մարմինն, եւ նուաղին առաւել եւս պատիւ ետ.
25 * զի մի՛ իցեն հերձուածք 'ի մարմնի անդ, այլ զի
26 նոյնք զմիմեանց հոգասցեն անդամքն։*Եւ եթէ
վշտանայ ինչ մի անդամն, վշտանան ամենայն
անդամքն ընդ նմա, եւ եթէ փառաւորի մի ան-
27 դամն, խնդան ամենայն անդամքն ընդ նմա.*այլ
դուք մարմին Քրիստոսի էք՝ եւ անդամք յանդա-
մոց նորա։ ՎԶ
28 * Եւ զորս եդն Աստուած յեկեղեցւոջ՝ այս են.
նախ զԱռաքեալս, երկրորդ զՄարգարէս, եր-
րորդ զՎարդապետս, ապա զօրութիւնս, ապա
շնորհս բժշկութեանց, օգնութիւնս, վարիչս,
ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց։
29 *Միթէ ամենեքի՞ն առաքեալք իցեն. միթէ ա-
մենեքի՞ն մարգարէք իցեն, միթէ ամենեքի՞ն վար-
դապետք իցեն, միթէ ամենեքի՞ն զօրութիւնք
30 իցեն,* միթէ ամենեքի՞ն շնորհս բժշկութեան
ունիցին, միթէ ամենեքի՞ն 'ի լեզուս խօսեսցին,
31 միթէ ամենեքի՞ն թարգմանիցեն։ * Բայց նա-
խանձաւորք լերուք շնորհացն, որ լաւն են. այլ
ես առաւել եւս ճանապարհ ցուցանեմ ձեզ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԵԶ. Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ 1
զհրեշտակաց, եւ սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբ-
րեւ զպղինձ որ հնչէ, կամ իբրեւ զծնծղայս
որ ղօղանջեն։ *Եւ եթէ ունիցիմ զմարգարէու- 2
թիւն, եւ գիտիցեմ զխորհուրդս ամենայն եւ
զամենայն գիտութիւն, եւ եթէ ունիցիմ զա-
մենայն հաւատս՝ մինչեւ զլերինս փոփոխել,
եւ սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ։ *Եւ եթէ ջամ- 3
բեցից զամենայն ինչս իմ աղքատաց, եւ մատ-
նիցեմ զմարմին իմ յայրումն, եւ սէր ոչ ու-
նիցիմ, ոչ ինչ օգտիմ։ *Սէր երկայնամիտ է, 4
քաղցրանայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարհա-
ւաճէ, ոչ հպարտանայ, *ոչ յանդգնի, ոչ խնդ- 5
րէ զիւր, ոչ գրգռի, ոչ խորհի զչար. *ոչ խնդ- 6
այ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստու-
գութիւն. *ամենայնի տանէ, ամենայնի հաւա- 7
տայ, ամենեւին յուսայ, ամենայնի համբերէ։
*Սէր ոչ երբէք անկանի. եթէ մարգարէու- 8
թիւնք են՝ խափանեսցին, եթէ լեզուք՝ լռես-
ցեն, եթէ գիտութիւն՝ խափանեսցի։ *Քանզի 9
փոքր ՚ի շատէ գիտեմք, եւ փոքր ՚ի շատէ մար-
գարէանամք. *այլ յորժամ եկեսցէ կատարում- 10
նըն, փոքր ՚ի շատէս խափանեսցի։
ԶԿ. *Մինչ տղայն էի՝ իբրեւ զտղայ խօսէի, 11
իբրեւ զտղայ խորհէի, իբրեւ զտղայ համարէի.

այլ յորժամ եղէ այր, զտղայութեանն ՚ի բաց
12 խափանեցի։ *Այժմ տեսանեմք իբրեւ ընդ հա-
յելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման.
այժմ խելամուտ եմ փոքր ՚ի շատէ, այլ յայն-
ժամ գիտացից՝ որպէս եւ նոյն ծանեաւ զիս։
13 *Բայց արդ՝ միայն հաւատք, յոյս, սէր, սոքա
երեքեան. եւ մեծ քան զսոսա՝ սէր է։

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Զհետ երթայք սիրոյ, եւ նախանձաւոր լե-
րուք հոգեւորացն, առաւել զի եւ դուք մար-
2 գարէանայցէք։ *Զի որ խօսի ՚ի լեզուս՝ ոչ ընդ
մարդկան խօսի, այլ ընդ Աստուծոյ. զի ոչ ոք է
3 որ լսէ, բայց հոգւով խօսի խորհուրդս. *Իսկ որ
մարգարէանայն, մարդկան խօսի շինութիւն եւ
4 մխիթարութիւն եւ սփոփութիւն. *որ խօսի
՚ի լեզուս՝ զանձն իւր շինէ, եւ որ մարգարէա-
5 նայ՝ զեկեղեցին շինէ։ *Կամիմ զի ամենեքին
դուք ՚ի լեզուս խօսիցիք, առաւել զի մարգա-
րէանայցէք. զի լաւ է որ մարգարէանայն, քան
զայն որ ՚ի լեզուսն խօսիցի. բայց եթէ թարգ-
մանեսցէ, զի եկեղեցին շինութիւն առնու-
ցու։ ՎԶ
6 *Բայց այժմ, եղբարք, եթէ եկից առ ձեզ
՚ի լեզուս խօսելով, զինչ օգուտ լինիցիմ ձեզ,
եթէ ոչ խօսիցիմ կամ յայտնութեամբ, կամ
գիտութեամբ, կամ մարգարէութեամբ, կամ

վարդապետութեամբ . * այնպէս՝ որպէս ան- 7
շունչքն ձայն տայցեն, եթէ փող եւ եթէ քը-
նար . զի եթէ ընտրութիւն ինչ բարբառոյն
չտանիցեն, զիա՞րդ ճանաչիցի փողոյն հարկանել
կամ քնարին հնչել . * քանզի եթէ խառնաձայն 8
արձակիցէ փողն, ո՞վ պատրաստեսցի ՚ի պատե-
րազմ ։ * Նոյնպէս եւ դուք՝ եթէ լեզուօք ոչ 9
նշանակիցէք զբանն, զիա՞րդ ճանաչիցին խօսքն .
զի լինիցիք այնուհետեւ իբրեւ ընդ օդս խօսե-
ցեալք ։ * Զի այնչափ ազգք ձայնից են յաշ- 10
խարհի, եւ ոչ ինչ է անձայն . * իսկ արդ եթէ 11
ոչ գիտիցեմ զզօրութիւն ձայնին, լինիցիմ այնմ
որ խօսիցին ընդ իս՝ խուժ , եւ նա որ խօսիցին
ընդ իս՝ դուժ . * Նոյնպէս եւ դուք՝ քանզի նա- 12
խանձորդք էք հոգեւորացն , վասն շինածոյ
եկեղեցւոյն , խնդրէ՛ք՝ զի առաւել եւս իցէք ։
* Վասն որոյ որ խօսին ՚ի լեզուս, աղօթս ա- 13
րասցէ՝ զի եւ թարգմանիցէ . * եթէ կամ յա- 14
ղօթս լեզուաւ, հոգին իմ կայ յաղօթս, այլ
միտք իմ անպտուղ են ։ * Իսկ արդ զի՞նչ իցէ . 15
կացից յաղօթս եւ հոգւով, կացից յաղօթս եւ
մտօք . սաղմոս ասացից հոգւով, սաղմոս ասա-
ցից եւ մտօք ։ * Ապա թէ ոչ, եթէ օրհնեսցես 16
հոգւով, որ կայցէ ՚ի տեղւոջ տգիտին, զիա՞րդ
ասիցէ ՚ի քում գոհութեանն՝ զամէնն . քանզի
զոր ասեմն՝ նա ոչ գիտէ ։ * Զի դու բարւոք գո- 17
հանաս, այլ ընկերն ոչ շինի ։

ԶԲ . * Գոհանամ զԱստուծոյ, վասն ամենե- 18

19 ցուն ձեր՝ առաւել լեզուաւ խօսիմ . * այլ ՚ի
մէջ եկեղեցւոյն կամիմ բանս հինգ՝ մտօք խօ-
սել, զի եւ զայլս խրատիցեմ, քան զբազում բա-
20 նըս լեզուաւ ։ * Եղբարք , մի՛ տղայք լինիք մը-
տօք , այլ ՚ի չարեաց տղայացարուք , եւ մտօք
21 կատարեալք լինիջիք . * քանզի եւ յօրէնս գրեալ
է , եթէ յօտար լեզուս եւ ՚ի շրթունս օտարո-
տիս խօսեցայց ընդ ժողովրդեանդ ընդ այդմիկ ,
22 սակայն եւ ոչ այնպէս լուիցեն ինձ ։ * Ապա ու-
րեմն լեզուք՝ նշանակի վասն են , ոչ հաւատա-
ցելոց՝ այլ անհաւատից . իսկ մարգարէութիւն ,
23 ոչ անհաւատից՝ այլ հաւատացելոց ։ * Ապա թէ
գայցէ եկեղեցին ամենայն ՚ի մի վայր , եւ ա-
մենեքին ՚ի լեզուս խօսիցին , եւ մտանիցեն անդր
տգէտք կամ անհաւատք , ո՞չ ասիցեն եթէ զի
24 մոլիքդ ։ * Իսկ եթէ ամենեքեան մարգարէանայ-
ցեն , եւ մտանիցէ ոք անդր անհաւատ կամ
տգէտ , յանդիմանի յամենեցունց , եւ քննի յա-
25 մենեցունց . * եւ գաղտնիք սրտի նորա յայտնի
լինին . եւ ապա անկեալ ՚ի վերայ երեսաց՝ եր-
կիր պագանիցէ Աստուծոյ , եւ խոստովան լինի-
ցի՝ թէ արդարեւ Աստուած է ՚ի ձեզ ։

26 ԶԳ . * Եւ արդ զի՞նչ իցէ , եղբարք , յորժամ
՚ի մի վայր ժողովիցիք , իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ
եթէ սաղմոս ունիցի , եթէ վարդապետութիւն
ունիցի , եթէ յայտնութիւն ունիցի , եթէ լե-
զուս ունիցի , եթէ թարգմանութիւն ունիցի ,
27 ամենայն ՚ի շինած լինիցի ։ * Եթէ ՚ի լեզուս ոք

խօսիցի, երկուք. եւ եթէ եւս աւելի, երեք,
եւ ապա մի ըստ միոջէ. եւ մինն թարգմանես-
ցէ. * ապա թէ չիցէ ոք որ թարգմանիցէ, 28
լուռ լիցի յեկեղեցւոջն. ընդ միտս իւր եւ ընդ
Աստուծոյ խօսեսցի: * Բայց մարգարէք երկու 29
կամ երեք խօսեսցին, եւ այլքն քննեսցեն. * ա- 30
պա թէ այլ ումեք որ նստիցի՝ յայտնեսցի, ա-
ռաջինն լռեսցէ: * Քանզի կարող էք ամենեքեան 31
մի ըստ միոջէ մարգարէանալ. զի ամենեքեան
ուսանիցին, եւ ամենեքեան մխիթարեսցին.
* քանզի եւ ոգիք իսկ մարգարէից՝ մարգարէից 32
հնազանդ են. * զի ոչ եթէ խռովութեան է Աս- 33
տուած, այլ խաղաղութեան՝ որպէս յամենայն
եկեղեցիս սրբոց: * Կանայք յամենայն եկեղեցիս 34
լուռ լիցին. զի ոչ հրամայի նոցա խօսել, այլ հը-
նազանդ լինել, որպէս եւ օրէնքն իսկ ասեն.
* ապա եթէ ուսանել ինչ կամիցին, 'ի տան զարս 35
իւրեանց հարցանիցեն. քանզի անպատեհ է կը-
նոջ մարդոյ յեկեղեցւոջ խօսել: * Եթէ 'ի ձէ՞նջ 36
բանն Աստուծոյ ել, եւ կամ թէ առ ձե՞զ միայն
եհաս: * Իսկ եթէ ոք համարիցի մարգարէ լի- 37
նել կամ հոգեւոր, գիտասցէ զոր գրեցիդ առ
ձեզ, թէ Տեառն պատուիրանք են. * ապա թէ 38
ոք տգիտանայցէ, տգիտասցի: * Այսուհետեւ, 39
եղբարք, նախանձեցարուք մարգարէանալ, եւ
զխօսելն լեզուօք մի՛ արգելուք: * Եւ ամենայն 40
ինչ ձեր պարկեշտութեամբ եւ ըստ կարգի լի-
նիցի:

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Ցուցանեմ ձեզ, եղբարք, զաւետարանն իմ՝
զոր աւետարանեցի ձեզ, զոր եւ ընկալարուք,
2 յոր եւ հաստատեալ էք, * որով ապրեցէքն.
որով բանիւ աւետարանեցի թէ ունիցիք. բայց
3 եթէ 'ի զուր ինչ հաւատացէք: * Զի ես ձեզ
զայն նախ աւանդեցի, զոր եւ ես ընկալայ,
թէ եւ Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց
4 ըստ գրոց, * եւ զի թաղեցաւ, թէ եւ յարեաւ
5 յաւուր երրորդի՝ ըստ գրոց, * եւ թէ երեւե-
6 ցաւ Կեփայի եւ ապա երկոտասանիցն, * ապա
երեւեցաւ աւելի եւս քան զհինգ հարիւր եղ-
բարց միանգամայն, յորոց բազումք կան մին-
7 չեւ ցայժմ, եւ ոմանք ննջեցին. * եւ ապա ե-
րեւեցաւ Յակոբայ, ապա Առաքելոցն ամենե-
8 ցուն: * Հուսկ յետոյ քան զամենեսին՝ իբրեւ
9 անարգի միոջ՝ երեւեցաւ եւ ինձ. * զի ես իսկ
եմ տրուպն Առաքելոց, որ չեմ իսկ արժանի
թէ կոչեցայց Առաքեալ, զի հալածեցի զեկե-
10 ղեցին Աստուծոյ. * այլ շնորհօքն Աստուծոյ եմ
զինչ եւ իցեմ, եւ շնորհք նորա որ յիս՝ ընդու-
նայն ինչ ոչ եղեն, այլ առաւել քան զնոսա ա-
մենեսին վաստակեցի. եւ ոչ եթէ ես՝ այլ շը-
11 նորհքն Աստուծոյ որ ընդ իս. * արդ եթէ ես,
եւ եթէ նոքա՝ այսպէս քարոզեցաք, եւ դուք
12 այսպէս հաւատացէք: * Ապա եթէ Քրիստոս

*քարոզի թէ 'ի մեռելոց յարուցեալ է, զիա՞րդ
ասեն ոմանք 'ի ձէնջ՝ եթէ յարութիւն մեռե-
լոց չիք. * եթէ յարութիւն մեռելոց չիք, ապա 13
եւ Քրիստոս չէ յարուցեալ. * եւ եթէ Քրիստոս 14
չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն
մեր. ընդունայն են եւ հաւատքն ձեր. * եւ 15
գտանիցիմք սուտ վկայք Աստուծոյ, զի վկայե-
ցաք զԱստուծոյ՝ եթէ յարոյց զՔրիստոս. զոր
ոչն արդեօք յարոյց՝ եթէ մեռեալք ոչ յառնի-
ցեն։ * Իսկ եթէ մեռեալք ոչ յառնեն, ապա 16
եւ Քրիստոս չէ յարուցեալ. * եւ եթէ Քրիստոս 17
չիցէ յարուցեալ, ընդունայն են հաւատքն ձեր,
եւ տակաւին 'ի նմին 'ի մեղս կայցէք։ * Իսկ 18
արդ որ ննջեցինն 'ի Քրիստոս՝ կորեա՞ն արդեօք.
* եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք 'ի 19
Քրիստոս, ողորմելի եմք քան զամենայն մարդիկ։*

*ԶԴ. * Այլ արդ Քրիստոս յարուցեալ է 'ի 20
մեռելոց, առաջին պտուղ ննջեցելոց. * քանզի 21
մարդով եղեւ մահ, եւ մարդով յարութիւն
մեռելոց. * որպէս Ադամաւն ամենեքին մեռա- 22
նին, նոյնպէս եւ Քրիստոսիւ ամենեքին կեն-
դանասցին, * իւրաքանչիւր յիւրում կարգի. 23
նախ Քրիստոս, եւ ապա քրիստոսեանք 'ի գա-
լստեան նորա, * եւ ապա կատարած։ Յորժամ 24
տացէ 'ի ձեռս զԹագաւորութիւնն Աստուծոյ
եւ Հօր, յորժամ խափանեսցէ զամենայն իշխա-
նութիւնս եւ զամենայն պետութիւն եւ զզօ-
րութիւն. * զի պարտ է նմա Թագաւորել, մին- 25*

*չեւ դիցէ զամենայն թշնամիս 'ի ներքոյ ոտից
26 իւրոց. * յետին թշնամին խափանի՝ մահ. եւ
զամենայն ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից
27 նորա։ * Այլ յորժամ ասիցէ, թէ հնազան-
դեալ է նմա ամենայն, յայտ է՝ թէ բաց յայն-
28 մանէ որ հնազանդեցոյց նմա զամենայն. * այլ
յորժամ հնազանդեսցի նմա ամենայն, յայն-
ժամ եւ ինքն որդի հնազանդեսցի այնմ, որ հը-
նազանդեցոյց նմա զամենայն. զի եղիցի Աս-
29 տուած ամենայն յամենայնի։ * Ապա թէ ոչ,
զի՞նչ գործիցեն որ մկրտիցինն վասն մեռելոց,
եթէ արդարեւ մեռեալք ոչ յառնիցեն. ըն-
30 դէր իսկ բնաւ մկրտին վասն նոցա. * ընդէ՞ր եւ
31 մեք ճգնիմք յամենայն ժամ, * եւ հանապազ
մեռանիմք. 'ի պարծանս ձեր երդնում, եղ-
բարք, զոր ունիմ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր։
32 * Եթէ վասն մարդոյ 'ի գազանամարտի լինեալ
էի յԵփեսոս, զի՞նչ օգուտ էր ինձ, եթէ մե-
ռեալք ոչ յառնեն. կերիցուք արբցուք, քան-
33 զի վաղիւ մեռանիմք։ * Մի՛ խաբէք. ապակա-
նեն զբարս քաղցունս բանք չարք։*

*34 ԶԵ. * Սթափեցարուք արդարութեամբ, եւ
մի՛ մեղանչէք. զի զգիտութիւն Աստուծոյ ոչ
35 ունին ոմանք. առ ամօթոյ ձերոյ ասեմ։ * Այլ
ասիցէ ոք. զիա՞րդ յառնեն մեռեալք, կամ ո-
36 րո՞վ մարմնով գայցեն։ * Անմիտ, դու զոր սեր-
մանես՝ ոչ կենդանանայ՝ եթէ ոչ մեռանիցի.
37 * եւ զոր սերմանես՝ ոչ զնոյն մարմին որ ծնա-*

նելոյն լինի՝ սերմանես, այլ հատ մերկ, եթէ
ցորենոյ լինի եւ եթէ այլոց սերմանեաց. * եւ 38
Աստուած տայ նմա մարմին՝ որպէս եւ կամի.
եւ իւրաքանչիւր սերմանեացն զիւր մարմին։
* Ոչ ամենայն մարմին՝ նոյն մարմին է. այլ՝ այլ 39
մարմին է մարդկան եւ այլ մարմին անասնոց,
այլ մարմին թռչնոց եւ այլ մարմին ձկանց. * եւ 40
մարմինք երկնաւորք, եւ մարմինք երկրաւորք.
այլ՝ այլ փառք երկնաւորաց են եւ այլ փառք
երկրաւորաց, * այլ փառք արեգական եւ այլ 41
փառք լուսնի, այլ փառք աստեղաց. եւ աստղ
քան զաստղ առաւել է փառօք։ * Նոյնպէս եւ 42
յարութիւն մեռելոց. սերմանի ապականու-
թեամբ՝ եւ յառնէ առանց ապականութեան,
* սերմանի անարգութեամբ՝ եւ յառնէ փառօք, 43
սերմանի տկարութեամբ՝ եւ յառնէ զօրու-
թեամբ, * սերմանի մարմին շնչաւոր՝ եւ յառնէ 44
մարմին հոգեւոր. եթէ գոյ մարմին շնչաւոր, գոյ
եւ հոգեւոր։ * Այսպէս եւ գրեալ է, եղեւ մար- 45
դըն առաջին Ադամ ՚ի շունչ կենդանի, երկրորդ
Ադամ ՚ի հոգի կենդանարար. * բայց ոչ նախ 46
հոգեւորն, այլ շնչաւորն, եւ ապա հոգեւորն։
* Առաջին մարդն յերկրէ՝ հողեղէն, իսկ երկ- 47
րորդ մարդն Տէր՝ յերկնից. * որպէս հողեղէնն՝ 48
նոյնպէս եւ հողեղէնքս, եւ որպէս երկնաւորն՝
նոյնպէս եւ երկնաւորքն. * եւ որպէս զգեցաք 49
զպատկեր հողեղինին, զգեցցուք եւ զպատկեր
երկնաւորին։

50 ՁԶ. * Բայց զայս ասեմ, եղբարք, եթէ մար-
մին եւ արիւն զարքայութիւնն Աստուծոյ ժա-
ռանգել ոչ կարեն, եւ ոչ ապականութիւն զա-
51 նապականութիւն ժառանգէ։ * Արդ խորհուրդ
մի ասեմ ձեզ. ամենեքեան ննջեսցուք, այլ ոչ
52 եթէ ամենեքեան. * Նորոգեսցուք յանկարծա-
կի յական թօթափել ՚ի փող յետին. քանզի
փող հարկանի, եւ մեռեալք յարիցեն առանց
53 ապականութեան, եւ մեք նորոգեսցուք։ * Զի
պարտ է ապականութեանս այսմիկ զգենուլ
զանապականութիւն, եւ մահկանացուիս այ-
54 միկ զգենուլ զանմահութիւն։ * Այլ յորժամ
մահկանացուս այս զգեցցի զանմահութիւն, եւ
ապականութիւնս զանապականութիւն, յայն-
ժամ եղիցի բանն որ գրեցաւ, եթէ ընկլաւ
55 մահ ՚ի յաղթութիւն։ * Ո՞ւր է, մահ, յաղթու-
56 թիւն քո. ո՞ւր է, դժոխք, խայթոց քո. * խայ-
թոց մահու՝ մեղք են, եւ զօրութիւն մեղաց՝
57 օրէնք։ * Այլ շնորհք Աստուծոյ՝ որ ետ մեզ
զյաղթութիւն ՚ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի։

58 ԱԳ. * Այսուհետեւ, եղբարք իմ սիրելիք,
հաստատուն եղերուք, անշարժ կացէք, առաւել
լերուք ՚ի գործ Տեառն յամենայն ժամ. գիտա-
ջիք՝ զի վաստակքն ձեր ոչ են ընդունայն ա-
ռաջի Տեառն։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Այլ վասն հաշուելին որ 'ի սուրբսն է , որ- 1
պէս պատուէր ետու եկեղեցեացն գաղատա-
ցւոց , *Նոյնպէս եւ դուք առնիջիք ըստ իւրա- 2
-քանչիւր միաշաբաթուցն . իւրաքանչիւր ոք 'ի
ձէնջ առանձին իւրում գանձեսցէ որ ինչ եւ յաջո-
ղեսցի . * զի մի՛ յորժամ գայցեմ , յայնժամ հա- 3
շիւք լինիցին . այլ յորժամ եկից , զոր միանգամ
ընտրեցէք թղթովք , զնոսա առաքեցից տանել
զշնորհսն ձեր յԵրուսաղէմ . * ապա թէ արժան 4
իցէ եւ ինձ երթալ , ընդ իս երթիցեն ։ * Այլ 5
եկից առ ձեզ՝ յորժամ 'ի Մակեդոնիա անցանի-
ցեմ . բայց իբրեւ շրջեցայց ընդ Մակեդոնիա ,
* թէ դէպ լիցի , առ ձեզ մնացից եւ կամ ձը- 6
մերեցից . զի դուք յուղարկիցէք զիս՝ ուր եւ
երթալոցն իցեմ . * զի ոչ կամիմ զձեզ այժմ 'ի 7
հարեւանցի տեսանել . այլ ունիմ ժամանակ ինչ
առնել առ ձեզ , եթէ Տէր հրամայեսցէ ։ * Բայց 8
այժմ լինիմ յԵփեսոս մինչեւ ցպենտակոստէ . *զի 9
դուռն բացեալ է ինձ մեծ եւ կարեւոր , եւ
հակառակորդք բազում են ։ * Արդ եթէ եկես- 10
ցէ Տիմոթէոս , տեսջիք զիարդ աներկիւղ լինի-
ցի առ ձեզ , զի զգործ Տեառն գործէ , որպէս
եւ ես . * մի՛ ոք զնա անգոսնեսցէ . եւ յուղար- 11
կեսջիք զնա խաղաղութեամբ , զի եկեսցէ առ իս .
-քանզի ակն ունիմ նմա եղբարբք հանդերձ ։

12 ԱԶ . * Այլ՝ վասն Ապողոսի եղբօր՝ յոյժ աղաչե-
ցի զնա , զի եկեսցէ առ ձեզ եղբարբք հանդերձ .
եւ արդեօք ոչ էին կամք զի այժմ եկեսցէ , այլ
13 եկեսցէ յորժամ եւ պարապեսցէ ։ * Հսկեցէք ,
հաստատուն կացէք 'ի հաւատս , ժրացարուք ,
14 զօրացարուք , * ամենայն ինչ ձեր՝ սիրով լիցի ։
15 *Աղաչեմ զձեզ , եղբարք , գիտէք զտունն Ստե-
փանեայ եւ Փորտունատեայ , որ են պտուղ ա-
-քայեցւոց , եւ 'ի պաշտօն սրբոցն կարգեցին
16 զանձինս . * զի եւ դուք հնազանդ լինիցիք այն-
պիսեացն , եւ ամենայնի՝ որ գործակից իցէ եւ
17 վաստակակից ։ * Ուրախ եղէ 'ի գալ Ստեփանեայ
եւ Փորտունատեայ եւ Աքայիկոսի , զի զձեր պա-
18 կասութիւն նոքա լցին . *-քանզի հանգուցին ըզ-
հոգի իմ եւ զձեր . արդ ծանիջիք զայնպիսիսն ։
19 * Ողջոյն տան ձեզ եկեղեցիքն Ասիացւոց ։ Ող-
ջոյն շատ տան ձեզ 'ի Տէր Ակիւղաս եւ Պրիսկա՝
20 հանդերձ առտնին եկեղեցեաւն իւրեանց ։ * Ող-
21 ջոյն տան ձեզ եղբարք ամենեքին ։ * Ողջոյն տուք
22 միմեանց 'ի համբոյր սրբութեան ։ * Ողջոյնդ այդ
իմոյ ձեռին Պաւղոսի է . եթէ ոք ոչ սիրէ զտէր
23 Յիսուս , եղիցի նզովեալ , Մարան Աթա ։ * Շը-
նորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ .
24 * եւ սէրն իմ ընդ ամենեսին ձեզ 'ի Քրիստոս
Յիսուս . ամէն ։

Առ Կորնթացիս առաջին թուղթն՝ գրեցաւ յԵփեսոսէ ,
'ի ձեռն Ստեփանեայ եւ Փորտունատեայ եւ Աքայիկոսի ։

ԹՈՒՂԹ
ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

ԲԿ. ՊԱՒՂՈՍ Առաքեալ Յիսուսի Քրիս- 1
տոսի կամօքն Աստուծոյ, եւ Տիմո-
թէոս եղբայր. եկեղեցւոյդ Աստուծոյ որ է 'ի
Կորնթոս, սրբովքդ ամենեքումբք՝ որ են յա-
մենայն կողմանս աքայեցւոց ։ * Շնորհք ընդ ձեզ 2
եւ խաղաղութիւն յԱստուծոյ հօրէ մերմէ, եւ
'ի տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ ։

* Օրհնեալ է Աստուած եւ հայր Տեառն մե- 3
րոյ Յիսուսի Քրիստոսի, հայր գթութեանց եւ
Աստուած ամենայն մխիթարութեան, * որ մ- 4
խիթարէն զմեզ յամենայն նեղութիւնս մեր,
առ 'ի կարող լինելոյ մեզ մխիթարել զայնոսիկ՝
որ յամենայն նեղութիւնս իցեն, մխիթարու-
թեամբն որով մեք մխիթարիմք յԱստուծոյ. * զի 5
որպէս առաւելուն չարչարանքն Քրիստոսի 'ի մեզ,
նոյնպէս եւ 'ի ձեռն Քրիստոսի առաւել լցի
եւ մխիթարութիւնն մեր ։ * Զի եթէ նեղիմք, 6

վասն ձերոյ մխիթարութեան եւ փրկութեան,
եւ եթէ մխիթարիմք, վասն ձերոյ մխիթարու-
թեան. որ յաջողեալն է համբերութեամբ նո-
7 ցին չարչարանաց, զոր եւ մեքն չարչարիմք. * եւ
յոյսն մեր հաստատուն է վասն ձեր. քանզի
գիտեմք՝ եթէ որպէս կցորդ էք չարչարանացն,
8 նոյնպէս եւ մխիթարութեանն ։ * Քանզի ոչ կա-
միմ տգէտ լինել ձեզ, եղբարք, վասն նեղու-
թեան մերոյ եղելոյ յԱսիա. զի առաւել քան
զկար մեր ծանրացաք, մինչեւ անյոյս լինելոյ
9 մեզ եւ 'ի կենաց ։ * Այլ անձամբ յանձինս ըզ-
վճիռ մահու ընկալաք, զի մի՛ յանձինս ապաս-
տան իցեմք, այլ յԱստուած՝ որ յարուցանէ ըզ-
10 մեռեալս, * որ յայնպիսի մահուանէ փրկեաց
11 զմեզ՝ եւ փրկեսցէ. * քանզի յուսացեալ եմք՝ ե-
թէ տակաւին փրկեսցէ օգնականութեամբ ա-
12 ղօթից ձերոց վասն մեր ։ * Զի 'ի բազմադէմ
շնորհացն՝ որ 'ի մեզ, բազմօք յաճախեսցեն գո-
հութիւնքն վասն մեր ։

13 ԲԴ. * Քանզի պարծանք մեր այս են. վկա-
յութիւն մտաց մերոց, զի սրբութեամբ եւ
ստուգութեամբ Աստուծոյ եւ ոչ մարմնեղէն
իմաստութեամբ, այլ շնորհօքն Աստուծոյ շրջե-
ցաք յաշխարհի, բայց առաւել եւս առ ձեզ ։
14 * Քանզի ոչ եթէ այլ ազգ ինչ գրեմք առ ձեզ,
այլ զոր ընթեռնուցուք եւ գիտակ լինիցիք.
քանզի յուսամ՝ թէ մինչեւ 'ի վախճան գիտի-
15 ցէք. * որպէս եւ խելամուտ եղէք մեզ փոքր 'ի

շատէ. զի պարծանք ձեր եմք՝ որպէս եւ դուք
մեր, յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։
* Եւ յայս ապաստան՝ կամէի նախ առ ձեզ գալ, 16
զի դուք կրկին շնորհս ընդունիջիք. * եւ ՚ի ձէնջ 17
երթալ ՚ի Մակեդոնիա. եւ դարձեալ ՚ի Մակե-
դոնիայ գալ առ ձեզ, եւ ՚ի ձէնջ յուղարկել
՚ի Հրէաստան։ * Իսկ եթէ զայս խորհեցայ՝ մի- 18
թէ թեթեւութեամբ ինչ գնացի. եւ կամ զոր
խորհիմ՝ ըստ մարմնոյ ինչ խորհիցիմ. այլ զի
եղիցի յինէն կողմանէ, այոն՝ այո, եւ ոչն՝ ոչ։
* Հաւատարիմ է Աստուած. զի բանն մեր որ 19
առ ձեզ եհաս՝ ոչ է այո, եւ ոչ. * քանզի Որդին 20
Աստուծոյ Յիսուս Քրիստոս, որ ՚ի ձեզ մեօք քա-
րոզեցաւ, ինեւ եւ Սիղուանոսիւ եւ Տիմոթէիւ,
ոչ եղեւ այո եւ ոչ. այլ այոն ՚ի նմին եղեւ.
* զի որչափ աւետիքն Աստուծոյ են ՚ի նմա այոն. 21
վասն որոյ եւ նովին ամէնն մեօք ՚ի փառս Աս-
տուծոյ։

* Այլ որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ 22
՚ի Քրիստոս՝ եւ օծ զմեզ, Աստուած է. * որ եւ 23
կնքեացն զմեզ, եւ ետ զառհաւատչեայ հոգւոյն
՚ի սիրտս մեր։

ԲՁ. * Այլ ես վկայ զԱստուած կոչեմ ան- 24
ձին իմոյ, զի վասն խնայելոյ ՚ի ձեզ ոչ եւս եկի
՚ի Կորնթոս. զի ոչ եթէ տիրեմք ձեզ հաւա-
տովքս, այլ գործակից եմք շնորհացդ ձերոյ.
քանզի հաւատովք հաստատեալ կայք։

ԳԼՈՒԽ Բ.

1 Բայց զայս եւ եթ ընտրեցի, զի մի միւսան-
2 գամ տրտմութեամբ եկից առ ձեզ. * զի եթէ
ես տրտմեցուցանեմ զձեզ, եւ ո՞վ է որ ուրախ
առնիցէ զիս, եթէ ոչ որ տրտմիցին յինէն։
3 * Եւ զայս գրեցի, զի մի յորժամ գայցեմ՝ տրտ-
մութիւն ինչ կրիցեմ ուստի արժանն իցէ ինձ
ուրախ լինել. յուսացեալ եմ ՚ի ձեզ ամենեսին,
4 զի իմ ուրախութիւնս՝ ձեր ամենեցուն է. * զի
՚ի բազում վշտաց եւ ՚ի նեղութենէ սրտի գը-
րեցի առ ձեզ բազում արտասուօք. ոչ զի տրտ-
միցիք, այլ զի զսէրն իմ գիտասջիք, զոր ունիմ
5 առաւելապէս առ ձեզ։ * Այլ եթէ ոք տրտ-
մեցոյց, ոչ եթէ զիս տրտմեցոյց, այլ փոքր ՚ի
6 շատէ, զի մի ծանրացուցից ամենեցուն ձեզ. * շատ
է այնպիսւոյն պատուհասն այն, որ ՚ի բազմաց
7 անտի է։ * Այսուհետեւ նմին հակառակ՝ մա-
նաւանդ շնորհել ձեզ նմա եւ մխիթարել, զի
մի յառաւել տրտմութենէն ընկղմեսցի այնպի-
8 սին. * վասն որոյ աղաչեմ զձեզ՝ հաստատել ՚ի
9 նա զսէրն։ * Վասն այնորիկ իսկ եւ գրեցի, զի
զչափ առից զձեր, եթէ յամենայնի հպատակ ի-
10 ցէք. * զի եթէ ումեք շնորհիցէք՝ եւ ես. քան-
զի եւ ես եթէ շնորհիցեմ, զոր ինչ շնորհիցեմն՝
11 վասն ձեր ՚ի դէմս Քրիստոսի. * զի մի զրկիցիմք
՚ի սատանայէ. քանզի չեմք ինչ անտեղեակ խոր-
հրդոցն նորա։

ԳԿ. * Այլ իբրեւ հասի ես 'ի Տրովադա յԱ- 12
ւետարանն Քրիստոսի, եւ դուռն բաց էր ինձ
'ի Տէր, * ոչ եւս ունէի հանգիստ հոգւոյ իմում. քան- 13
զի ոչ գտի ես անդ զՏիտոս զեղբայր իմ. այլ
հրաժարեալ 'ի նոցանէ՝ գնացի 'ի Մակեդոնիա։
* Այլ Աստուծոյ շնորհքն, որ յամենայնի հաշակ 14
հարկանէ զմեզ 'ի Քրիստոս Յիսուս, եւ զհոտ
գիտութեանն իւրոյ յայտնի առնէ մեօք յամե-
նայն տեղիս. * զի հոտ անոյշ եմք Քրիստոսի առ 15
Աստուած՝ 'ի մէջ փրկելոցն եւ 'ի մէջ կորուսե-
լոցն. * ոմանց հոտ մահուանէ 'ի մահ, եւ ո- 16
մանց հոտ կենդանութենէ 'ի կեանս. եւ առ
այս ո՞ բաւական իցէ։ * Քանզի ո՛չ եմք իբրեւ 17
զայլսն, որ վաճառական լինին բանին Աստուծոյ.
այլ իբրեւ 'ի հաստատութենէ, այլ իբրեւ յԱս-
տուծոյ՝ առաջի Աստուծոյ 'ի Քրիստոս խօսիմք։

ԳԼՈՒԽ Գ.

Սկսանիմք այսուհետեւ վերստին զանձինս 1
ընծայեցուցանել, թէպէտ եւ ոչ պիտոյ իցեն
մեզ, որպէս ոմանց թուղթք ընծայութեան
առ ձեզ կամ 'ի ձէնջ։ * Այլ թուղթք մեր դուք 2
էք՝ գրեալ 'ի սիրտս մեր, ծանուցեալ եւ ըն-
թերցեալ յամենայն մարդկանէ. * յայտնեալք՝ 3
զի էք թուղթք Քրիստոսի, պաշտեցեալ 'ի մէնջ.
եւ գրեալ՝ ոչ մրով, այլ Հոգւովն Աստուծոյ կեն-
դանւոյ. ոչ 'ի տախտակս քարեղէնս, այլ 'ի
տախտակս սրտի մարմնեղէնս։

4 ԳԴ. * Յոյս մի այսպիսի ունիմք 'ի ձեռն Քը-
5 րիստոսի առ Աստուած. * իբր ոչ եթէ անձամբ
բաւական եմք խորհել ինչ իբրեւ 'ի մէնջ, այլ
6 բաւականութիւնն մեր յԱստուծոյ է, * որ եւ
բաւականս արար զմեզ՝ պաշտօնեայս Նորոյ Կը-
տակարանաց, ոչ գրով, այլ հոգւով. զի գիրն
7 սպանանէ, այլ հոգին կեցուցանէ։ * Զի եթէ
պաշտօն մահու՝ գրով դրոշմեալ 'ի տախտակս
քարեղէնս՝ եղեւ փառօք, զի մի կարասցեն հա-
յիլ որդիքն Իսրայելի յերեսն Մովսիսի, վասն փա-
8 ռաց երեսաց նորա՝ որ խափանելոցն էր, * ո՞րչափ
եւս առաւել պաշտօն հոգւոյն եղիցի փառօք։
9 * Զի եթէ պաշտօն դատապարտութեանն փա-
ռօք էր, ո՞րչափ եւս առաւել պաշտօն արդա-
10 րութեանն փառօք. * քանզի ոչ եթէ փառաւո-
րի փառաւորեալն յայսմ մասին, վասն առա-
11 ւելութեան փառացն։ * Զի եթէ որ խափանե-
լոցն էր՝ այն փառօք էր, ո՞րչափ եւս առաւել
12 որ գալոցն է՝ փառօք իցէ։ * Եւ արդ, զի ունիմք
այսպիսի յոյս, բազում համարձակութեամբ վա-
13 րեսցուք. * եւ ոչ որպէս Մովսէս արկանէր քող
'ի վերայ երեսաց իւրոց, վասն չհայելոյ որդւո-
14 ցըն Իսրայելի 'ի վախճան խափանելոցն։ * Այլ
կուրացան միտք նոցա. քանզի մինչեւ ցայսօր
ժամանակի՝ նոյն քող ձգեալ կայ 'ի վերայ ըն-
թերցուածոց Հին Կտակարանացն. եւ ոչ վերա-
15 նայ, զի Քրիստոսիւ խափանելոց է։ * Այլ մին-
չեւ ցայսօր յորժամ ընթեռնուն զՄովսէս, նոյն

առագաստ կայ 'ի վերայ սրտից նոցա. * այլ յոր- 16
ժամ դարձցին առ Տէր, ապա վերասցի առա-
գաստն: * Զի Տէր Հոգին է. ուր Հոգի Տեառն է, 17
անդ ազատութիւն է: Վ.Զ
* Բայց մեր ամենեցուն բացաւ երեսօք ըզ- 18
փառսն Տեառն իբրեւ ընդ հայելի տեսեալ, 'ի
նոյն պատկեր նորոգիմք՝ փառաց 'ի փառս, որ-
պէս եւ 'ի Տեառն Հոգւոյ:

ԳԼՈՒԽ Դ.

Վասն այսորիկ ունիմք զպաշտօնս զայս, որ- 1
պէս եւ գտաք զողորմութիւն, եւ ոչ ձանձրա-
նամք. * այլ հրաժարեցաք 'ի գաղտնեաց ամօ- 2
թոյն, զի մի՛ գնասցուք խորամանկութեամբ,
եւ մի՛ նենգեսցուք զբանն Աստուծոյ. այլ յայտ-
նութեամբ ճշմարտութեանն ընծայեցուսցուք
զանձինս մեր առ ամենայն միտս մարդկան ա-
ռաջի Աստուծոյ: * Ապա թէ իցէ եւս ծած- 3
կեալ Աւետարանն մեր, 'ի մէջ կորուսելոցն է
ծածկեալ. * որոց Աստուած աշխարհիս այսորիկ 4
կուրացոյց զմիտս անհաւատիցն, զի մի՛ ծագեսցէ
'ի նոսա լուսաւորութիւն Աւետարանի փառացն
Քրիստոսի. որ է պատկեր աներեւութին Աստու-
ծոյ. * զի ոչ եթէ զանձինս քարոզեմք. այլ ըզ- 5
Քրիստոս Յիսուս զՏէր, եւ զմեզ ծառայս ձեզ
վասն Քրիստոսի: * Զի Աստուած որ ասաց 'ի խա- 6
ւարէ լոյս ծագել, որ եւ ծագեաց իսկ 'ի սիրտս

մեր 'ի լուսաւորութիւն գիտութեան փառացն
Աստուծոյ 'ի դէմս Յիսուսի Քրիստոսի:
7 * Այսուհետեւ ունիմք զգանձս զայս յամանս
խեցեղէնս. զի առաւելութիւն զօրութեանն
8 իցէ յԱստուծոյ, եւ ոչ 'ի մէնջ. * յամենայնի
նեղեալք՝ այլ ոչ նուաղեալք, կարօտեալք՝ այլ
9 ոչ տարակուսեալք, * հալածեալք՝ այլ ոչ լը-
քեալք, չարչարեալք՝ այլ ոչ սատակեալք.
10 * յամենայն ժամ զմահն Յիսուսի 'ի մարմինս մեր
կրեսցուք, զի եւ կեանքն Յիսուսի 'ի մարմինս
11 մեր յայտնեսցին: * Քանզի միշտ մեք որ կեն-
դանիքս եմք, 'ի մահ մատնիմք վասն Յիսուսի.
զի եւ կեանքն Յիսուսի յայտնի լիցին 'ի մահկա-
12 նացու մարմինս մեր. * այսուհետեւ մահ 'ի մեզ
13 զօրանայ, եւ կեանք 'ի ձեզ: * Արդ ունիմք ըզ-
նոյն հոգի հաւատոց, որպէս եւ գրեալ է. հա-
ւատացի՝ վասն որոյ եւ խօսեցայ. եւ մեք հա-
14 ւատամք՝ վասն որոյ եւ խօսիմք իսկ: * Զայս գի-
տեմք՝ եթէ որ յարոյցն զՅիսուս, եւ զմեզ ընդ
Յիսուսի յարուսցէ, եւ յանդիման կացուսցէ
15 ձեօք հանդերձ. * քանզի ամենայն ինչ վասն
ձեր է. զի շնորհքն յաճախեալք 'ի բազմաց
գոհութենէ անտի, առաւելասցին 'ի փառս
16 Աստուծոյ: * Վասն որոյ եւ ոչ ձանձրանամք.
այլ թէպէտ եւ արտաքին մարդս մեր ապականի,
17 այլ ներքին մարդն մեր նորոգի օր ըստ օրէ. * զի
առժամայն յաճախութիւն թեթեւնեղութեա-
նըս մերոյ 'ի յաւիտենական առաւելութիւն,

զմեծութիւն փառացն գործէ 'ի մեզ ։ *Քանզի 18
ոչ դիտեմք զերեւելիսս, այլ զաներեւոյթսն. զի
երեւելիքս առժամանակ մի են, եւ աներեւոյթ-
քըն յաւիտենականք ։

ԳԼՈՒԽ Ե.

Քանզի գիտեմք՝ զի եթէ երկրաւոր տաճար 1
շինուածոյս մերոյ քակտեսցի, շինած յԱստուծոյ
ունիմք՝ տաճար առանց ձեռագործի յաւիտե-
նական յերկինս. *եւ ընդ այս տաղտկամք, քան- 2
զի զընակութիւնն երկնից փափագեմք զգենուլ.
*միայն թէ յորժամ զգենուցումքն, ոչ մերկ գը- 3
տանիցիմք ։ *Քանզի որ եմք ընդ յարկաւս ընդ 4
այսուիկ՝ տաղտկամք ծանրացեալք. զի ոչ կա-
միմք մերկանալ, այլ զայն 'ի վերայ այսր զգե-
նուլ, զի ընկղմեսցի մահկանացուս 'ի կենաց
անտի ։ *Այլ որ յաջողէն մեզ 'ի սոյն, Աստուած 5
է. որ ետ մեզ զառհաւատչեայ հոգւոյն ։
Գ.Զ. *Արդ համարձակիմք յամենայն ժամ, 6
եւ գիտեմք եթէ որչափ յամեմք 'ի մարմնի աստ,
օտարանամք 'ի Տեառնէ. *զի հաւատովք գը- 7
նամք, եւ ոչ կարծեօք ։ *Այլ համարձակիմք, 8
եւ առաւել եւս հաճեալ եմք ելանել 'ի մար-
մնոյ աստի՝ եւ մտանել առ Աստուած. *վասն 9
որոյ եւ առատանամք. զի եթէ յամիցեմք եւ
եթէ ելանիցեմք, հաճոյ եւ եթ լիցեմք նմա ։
*Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ 10

առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրա-
քանչիւր իւրով մարմնովն՝ զոր ինչ գործեաց յա-
ռաջ, եթէ բարի եւ եթէ չար ։
11 *Իսկ արդ զահ Տեառն գիտելով չափ, ըզ-
մարդկան ինչ զմիտս հաճեմք, սակայն առաջի
Աստուծոյ յայտնեալ եմք. բայց եւ յուսամ եւ
12 'ի ձեր միտս յայտնի լինել ։ *Իբր ոչ եթէ մի-
անգամ զանձինս ինչ ընծայեցուցանեմք ձեզ,
այլ պատճառս տամք ձեզ պարծանաց վասն մեր.
զի ունիցիք առ այնոսիկ որ առ աչօք պարծիցին,
13 եւ ոչ սրտիւք. *զի եթէ առանցաք ինչ, այն
Աստուծոյ է. եւ եթէ զգաստանամք, այն ձեր
14 է ։ *Զի սէրն Քրիստոսի ստիպէ զմեզ քըն-
նել զայս. զի եթէ մին փոխանակ ամենեցուն
մեռաւ, ապա ուրեմն ամենեքեան մեռեալ ե-
15 ին. *եւ 'ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ
կենդանիքն իցեն՝ մի անձանց իցեն կենդանիք,
այլ այնմ որ 'ի վերայ նոցայն մեռաւ եւ յարեաւ ։
16 *Այսուհետեւ մեք ոչ զոք գիտեմք մարմնով.
զի թէպէտ եւ գիտէաք մարմնով զՔրիստոս,
17 այլ արդ ոչ եւս նոյնպէս գիտեմք. *բայց եթէ
ինչ 'ի Քրիստոս նոր արարած իցէ. զի հինն անց,
18 եւ արդ նոր եղեւ ամենայն ։ *Այլ ամենայն
ինչ յԱստուծոյ՝ որ հաշտեցոյց զմեզ ընդ իւր
'ի ձեռն Քրիստոսի, եւ ետ մեզ զպաշտօնն հաշ-
տութեան ։ ԿԶ
19 *Եւ քանզի Աստուած էր, Քրիստոսիւ զաշ-
խարհս հաշտեցուցանել ընդ իւր, եւ չհամարել

նոցա զմեղս իւրեանց , եւ եդ 'ի մեզ զբանն
հաշտութեան . * արդ վասն Քրիստոսի պատգա- 20
մաւորիմք որպէս եւ Աստուծոյ բարեխօսու-
թեամբ մեօք . աղաչեմք վասն Քրիստոսի՝ հաշ-
տեցարուք ընդ Աստուծոյ . * զի զայն՝ որ ոչն գի- 21
տէր զմեղս՝ վասն մեր մեղս արար , զի մեք ե-
ղիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ :

ԳԼՈՒԽ Զ.

Գործակից եմք ձեր՝ եւ աղաչեմք , մի՛ ըն- 1
դունայն զշնորհսն Աստուծոյ ընդունել ձեզ . * զի 2
'ի ժամանակի ընդունելութեան , ասէ , լուայ
քեզ , եւ յաւուր փրկութեան օգնեցի քեզ :
Ահաւասիկ ժամանակ ընդունելի , ահա օր փըր-
կութեան . * մի՛ եւ մի՛ իւիք տայցէք պատճա- 3
ռըս , զի մի՛ արատեսցի պաշտօնն . * այլ յամե- 4
նայնի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրեւ զպաշ-
տօնեայս Աստուծոյ՝ համբերութեամբ բազմաւ ,
'ի նեղութիւնս , 'ի վիշտս , 'ի չարչարանս , * 'ի 5
գանս , 'ի բանտս , 'ի խռովութիւնս , յաշխատու-
թիւնս , 'ի հսկմունս , 'ի պահս , * 'ի սրբութեան , 6
'ի գիտութեան , յերկայնմտութեան , 'ի քաղց-
րութեան , 'ի հոգի սուրբ , 'ի սէր առանց կեղ-
ծաւորութեան , * 'ի բանս ճշմարտութեան , 'ի 7
զօրութեան Աստուծոյ . վասն զինուն արդա-
րութեան՝ որ ընդ աջմէն եւ ընդ ահեկէն է .
փառօք եւ անարգութեամբ , գովութեամբ եւ 8

պարսաւանօք , իբրեւ մոլարք՝ եւ ճշմարիտք ,
9 * իբրեւ անծանօթք՝ եւ ծանուցեալք , իբրեւ
մահկանացուք՝ եւ ահաւասիկ կենդանի եմք ,
իբրեւ խրատեալք՝ եւ ոչ մահապարտեալք ,
10 * իբրեւ տրտմեալք՝ եւ հանապազ ուրախ եմք ,
իբրեւ անանկք՝ եւ զբազումս մեծացուցանեմք ,
իբրեւ ոչ ինչ ունիցիմք՝ եւ զամենայն ինչ ու-
11 նիմք : * Բերանք մեր բացեալ են առ ձեզ , կո-
րընթացիք , եւ սիրտք մեր ընդարձակեալ .
12 * ոչ ինչ նեղիք 'ի մէնջ , բայց եթէ 'ի գութս
13 ձեր նեղիցիք . * արդ զնոյն հատուցումն իբրեւ
ընդ որդեակս ունիմ . ընդարձակեցարուք եւ
14 դուք . եւ մի՛ լինիք լծակիցք անհաւատից . * քան-
զի զի՞նչ հաղորդութիւն է արդարութեան ընդ
անօրէնութեան , եւ կամ զի՞նչ հաւասարու-
15 թիւն է լուսոյ ընդ խաւարի , * եւ կամ զի՞նչ
միաբանութիւն է Քրիստոսի ընդ Բելիարայ ,
կամ զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ ան-
16 հաւատին , * կամ զի՞նչ նմանութիւն է տաճարի
Աստուծոյ՝ մեհենից : Ապաքէն դուք տաճար
Աստուծոյ կենդանւոյ էք , որպէս ասաց Աս-
տուած , թէ բնակեցայց 'ի նոսա , եւ գնացից
'ի նոսա , եւ եղէց նոցա Աստուած , եւ նոքա
17 եղիցին իմ ժողովուրդ : * Վասն որոյ ելէք 'ի
միջոյ նոցա եւ մեկնեցարուք , ասէ Տէր , եւ 'ի
18 պղծոյ մի՛ մերձենայք . * եւ ես ընկալայց զձեզ ,
եւ ես եղէց ձեզ 'ի հայր , եւ դուք եղիջիք ինձ
յուստերս եւ 'ի դստերս , ասէ Տէր ամենակալ :

ԳԼՈՒԽ Է․

Իսկ որովհետեւ զայս աւետիս ունիմք, սի- 1
րելիք, սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղ-
ծութենէ մարմնոյ եւ հոգւոյ, կատարեսցուք
զսրբութիւն ահիւն Աստուծոյ։ * Տարայք մեզ, 2
զի ոչ ումեք մեղաք, եւ ոչ զոք եղծաք, եւ ոչ
զոք զրկեցաք։ * Ոչ եթէ 'ի դատապարտու- 3
թիւն ինչ ասեմ․ քանզի յառաջ իսկ ասացի, ե-
թէ 'ի սրտի մերում կայք՝ 'ի կեալ եւ 'ի մեռա-
նել ընդ ձեզ։

Դկ․ * Բազում համարձակութիւն է ինձ առ 4
ձեզ, բազում պարծանք են ինձ վասն ձեր, լի
եմ մխիթարութեամբ, առաւելեալ եմ ուրա-
խութեամբ յամենայն նեղութիւնս մեր։ * Քան- 5
զի յորժամ հասաք մեք 'ի Մակեդոնիա, եւ ոչ
միով իւիք հանգիստ գտաւ մարմնոյ մերում,
այլ յամենայնի նեղեալք․ քանզի արտաքոյ
մարտք եւ 'ի ներքոյ արհաւիրք։ * Այլ որ մը- 6
խիթարէն զխոնարհս՝ մխիթարեաց զմեզ Աս-
տուած 'ի գալստեանն Տիտոսի․ * ոչ միայն 'ի 7
գալստեան նորա, այլ եւ 'ի մխիթարութեանն զոր
մխիթարեցաւ նա 'ի ձեզ, 'ի պատմել մեզ զան-
ձուկն ձեր, զողբումն ձեր, զնախանձ ձեր
վասն իմ, մինչ առաւել ուրախ լինել ինձ։ * Զի 8
թէ եւ տրտմեցուցի զձեզ թղթովն՝ ոչ զղջա-
նամ, թէպէտ եւ զղջացեալ էի․ քանզի տե-

սանեմ՝ զի թուղթն այն թէ առ ժամանակ մի
9 տրտմեցոյց զձեզ․ * արդ ուրախ եմ, ոչ զի
տրտմեցայք՝ այլ զի յապաշխարութիւն տրտմե-
ցարուք․ քանզի տրտմեցայք դուք ըստ Աստու-
10 ծոյ, զի մի՛ իւիք զրկեսջիք 'ի մէնջ։ * Զի որ ըստ
Աստուծոյն տրտմութիւն է, ապաշխարութիւն
'ի փրկութիւն առանց զղջանալոյ գործէ․ իսկ
11 աշխարհի տրտմութիւն մահ գործէ։ * Արդ
նոյն իսկ որ ըստ Աստուծոյն տրտմեցարուք,
որչափ ինչ փոյթ գործեաց 'ի ձեզ, կամ աղերս,
կամ սաստ, կամ երկիւղ, կամ անձուկ, կամ
նախանձ, կամ վրէժխնդրութիւն․ քանզի յա-
մենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր՝ սուրբս
12 լինել յիրիդ յայդմիկ։ * Ապա ուրեմն թէ եւ
գրեցի ես առ ձեզ, ոչ վասն այնորիկ որ զըր-
կեացն, եւ ոչ վասն այնորիկ որ զրկեցաւն, այլ
վասն յայտնի լինելոյ փութոյն ձերոյ որ վասն
13 մեր՝ առ ձեզ առաջի Աստուծոյ։ * Վասն այնո-
րիկ մխիթարեալ եմք 'ի վերայ մխիթարութեա-
նըն մերոյ․ առաւել եւս խնդացաք 'ի վերայ
խնդութեանն Տիտոսի, քանզի հանգուցեալ էր
14 հոգի նորա 'ի ձէնջ ամենեցունց․ * զի զինչ եւ
պարծեցայ առ նմա վասն ձեր, ոչ ամաչեցի․
այլ որպէս զամենայն ճշմարտութեամբ խօսե-
ցաք ընդ ձեզ, նոյնպէս եւ պարծանքն մեր առ
15 Տիտոս ճշմարիտ եղեն։ * Նա՝ եւ գութք նորա
առաւել եւս են 'ի ձեզ․ քանզի յիշեցուցանէր
մեզ զամենեցուն զձեր հնազանդութիւն, թէ

որպէս ահիւ եւ դողութեամբ ընկալարուք զդ-
նա ։ * Եւ արդ ուրախ եմ, զի յամենայնի հա- 16
մարձակ եմ առ ձեզ ։

ԳԼՈՒԽ Ը.

ԴԲ. Ցուցանեմ ձեզ, եղբարք, զշնորհսն 1
Աստուծոյ՝ որ տուեալ են եկեղեցեացն Մակե-
դովնացւոց. * զի մեծաւ հանդիսիւ նեղութեանն՝ 2
առաւելութիւն խնդութեանն նոցա, եւ ծայր
աղքատութիւնն նոցա առաւել եղեւ ՚ի մե-
ծութիւն առատութեան նոցա. * զի ըստ կարի 3
նոցա վկայեմ, եւ աւելի քան զկար, * Ինքնակամ 4
բազում աղաչանօք աղաչէին զշնորհսն եւ զհա-
ղորդութիւն պաշտամանն որ ՚ի սուրբսն առ
ցմեզ ։ * Ոչ որչափ ակն ունէաք, այլ եւ զան- 5
ձինս եւս ետուն, նախ Տեառն եւ ապա մեզ
կամօքն Աստուծոյ. * աղաչել զՏիտոս, զի որ- 6
պէս սկսաւն յառաջագոյն՝ նոյնպէս եւ կատա-
րեսցէ ՚ի ձեզ եւ զայդ եւս շնորհս ։ * Այլ որ- 7
պէս յամենայնի առաւել էք հաւատովք եւ բա-
նիւ եւ գիտութեամբ, եւ ամենայն փութով,
եւ որ ՚ի մէնջ ՚ի ձեզ սէրն է, զի եւ յայդմ
եւս շնորհի առաւել լինիցիք. * ոչ որպէս հրա- 8
ման տալոյ ասեմ, այլ վասն այլոց փութոյ եւ
վասն ձերոյ սիրոյ՝ զմտերմութիւնդ փորձեմ.
* քանզի գիտէք զշնորհսն Տեառն մերոյ Յիսու- 9
սի Քրիստոսի, զի վասն ձեր աղքատացաւ՝ որ

մեծատունն էր, զի դուք նորա աղքատու-
10 թեամբն մեծասջիք ։ * Եւ խրատ մի յայսմիկ
տամ. զի այն իսկ օգուտ է ձեզ. որք ոչ միայն
զառնելն, այլ եւ զկամելն յառաջագոյն սկսայք
11 ՚ի հերուն հետէ. * բայց արդ եւ զառնելն իսկ
կատարեցէք. զի որպէս յօժարութիւնն ՚ի կա-
12 մաց է, նոյնպէս եւ առնելն ըստ գոյին. * զի
եթէ յօժարութիւնն առաջի կայ, ըստ գոյին ըն-
13 դունելի է, եւ ոչ եթէ ըստ չգոյին ։ * Զի ոչ
եթէ այլոց հանգիստ կամիցիմ, եւ ձեզ նեղու-
14 թիւն ։ * Այլ հաւասարութեամբ յայժմու ժա-
մանակիս, ձեր առաւելութիւնդ ՚ի նոցա պա-
կասութիւնն, զի եւ նոցա առաւելութիւնն ե-
ղիցի ՚ի ձերում պակասութեանդ. զի եղիցի
15 հաւասարութիւն, որպէս եւ գրեալ է. * Թէ
որ բազումն ա՛ռ՝ ոչ առաւելաւ, եւ որ սակա-
ւըն՝ ոչ նուազեցաւ ։

16 ԴԳ. * Բայց շնորհք Աստուծոյ՝ որ արկ զնոյն
17 փոյթ վասն ձեր ՚ի սիրտ Տիտոսի. * զի զաղա-
չանսն ընկալաւ, եւ փութացաւ յօժարագոյնս
18 դիմեաց գալ առ ձեզ. * եւ առաքեցաք ընդ
նմա զեղբայրն, որոյ գովութիւնն յաւետարա-
19 նի անդ է՝ ընդ ամենայն եկեղեցիս ։ * Եւ ոչ
այսչափ միայն, այլ եւ ձեռնադրեալ յեկեղե-
ցեաց անտի, նշդեհակից մեր եղեւ ՚ի շնորհս
յայսմիկ, որ պաշտին ՚ի մէնջ ՚ի փառս Տեա-
20 ռըն, եւ ՚ի մեր յօժարութիւն ։ * Բայց զայս
խորշեաք իսկ, թէ գուցէ արատ ոք ինչ դնիցէ

'ի հաստատութեանս յայսմիկ՝ որ պաշտեցաւ
'ի մէնջ։ * Քանզի խորհիմք զբարիս՝ ոչ միայն ա- 21
ռաջի Տեառն, այլ եւ առաջի մարդկան.* Եւ ա- 22
ռաքեցաք ընդ նոսա զեղբայրն մեր՝ զոր ընտրե-
ցաք 'ի բազում իրս բազում անգամ պինդ գը-
տեալ, եւ առաւել եւս այժմ պնդագոյն յու-
սով մեծաւ 'ի ձեզ։ * Բայց եթէ վասն Տիտոսի 23
ինչ բանք են, իմ հաւասար է եւ ձեր գործա-
կից. եւ եթէ եղբարք մեր Առաքեալքն եկե-
ղեցւոյ, եւ փառք Քրիստոսի։ * Եւ արդ զհան- 24
դէս սիրոյ ձերոյ եւ զմերոյ պարծանաց վասն
ձեր՝ 'ի դոսա ցուցջիք յանդիման ամենայն եկե-
ղեցեաց։

ԳԼՈՒԽ Թ.

ԴԴ. Այլ վասն պաշտամանն որ 'ի սուրբսն 1
է, աւելի է ինձ եւ գրել առ ձեզ.* զի գիտեմ 2
զյօժարութիւն ձեր, զոր վասն ձեր պարծեցեալ
եմ 'ի մէջ Մակեդոնացւոյն, թէ Աքայեցիքն 'ի
հերուն հետէ պատրաստ են. եւ ձեր նախանձն
զբազումս յորդորեաց. * եւ առաքեցաք զեղ- 3
բարսն, զի մի պարծանքն մեր որ վասն ձեր՝ ըն-
դունայն լինիցի 'ի մասինդ յայդմիկ. այլ որպէս
ասէի իսկ, պատրաստագոյնք գտանիջիք.* գու- 4
ցէ յորժամ գայցեն ընդ մեզ Մակեդոնացիքն,
եւ գտանիցեն զձեզ անպատրաստս, եւ ամա-
չեսցուք մեք. —զի մի ասասցուք՝ թէ դուք—, 'ի

5 մասինդ յայդմիկ պարծանաց։ * Արդ կարեւոր
համարեցայ աղաչել զեղբարս, զի յառաջագոյն
եկեսցեն առ ձեզ, եւ յառաջագոյն պատրաս-
տեսցեն զյառաջագոյն խոստացեալ օրհնութիւ-
նըն ձեր 'ի պատրաստի ունել. այնպէս՝ իբրեւ
զօրհնութիւն, եւ մի իբրեւ զագահութիւն։
6 * Քանզի զայդ՝ որ սերմանէ ճշդելով՝ ճշդելով
եւ հնձեսցէ, եւ որ սերմանէ առատութեամբ՝
7 առատութեամբ եւ հնձեսցէ, * իւրաքանչիւր
որպէս եւ յօժարեսցի ոք սրտիւ, մի առ հարկի
եւ տրտմութեան. քանզի զտուրս զուարթա-
8 ռատս սիրէ Աստուած։* Այլ կարող է Աստուած
զամենայն շնորհս առաւելուլ 'ի ձեզ, զի յամե-
նայնի յամենայն ժամ զամենայն բաւականու-
թիւն ընկալեալ՝ առաւելուցուք յամենայն գոր-
9 ծըս բարութեան,* որպէս եւ գրեալ է. Սփռ-
եաց եւ ետ տնանկաց, արդարութիւն նորա
մնայ յաւիտեան.
10 ԴԵ. *Այլ այն որ պարգեւէ սերմն սերմա-
նահանաց՝ եւ հաց 'ի կերակուր, պարգեւեսցէ
եւ բազմացուսցէ զսերմանիս ձեր, եւ աճե-
11 ցուսցէ զարդիւնս արդարութեան ձերոյ.*յա-
մենայնի մեծացեալք ամենայն առատութեամբ.
12 որ յօրինէն մեօք գոհութիւն Աստուծոյ։ * Զի
պաշտօն հարկիս այսորիկ՝ ոչ միայն առ 'ի լնուլ
զպակասութիւն սրբոյն է, այլ առաւելուլ
13 բազմօք գոհութիւն Աստուծոյ. * հանդիսիւ
պաշտամանս այսորիկ, փառաւորել զԱստուած

'ի վերայ հնազանդութեան խոստովանութեան
ձերոյ յԱւետարանին Քրիստոսի. եւ առատու-
թեամբ հաղորդութեանն 'ի նոսա եւ յամենե-
սին. * եւ նոցա աղօթք վասն ձեր, քանզի անձ- 14
կացեալ են առ մեզ վասն առաւել շնորհացն
Աստուծոյ՝ որ 'ի մեզ։ * Այլ շնորհք Աստուծոյ 15
'ի վերայ անպատում պարգեւացն նորա։

ԳԼՈՒԽ Ժ.

Այլ ես ինքն Պաւղոս աղաչեմ զձեզ հեզու- 1
թեամբ եւ հանդարտութեամբն Քրիստոսի, որ
յանդիման ձեզ իբրեւ տառապեալ մի եմ 'ի
միջի ձերում. բայց 'ի հեռուստ համարձակիմ
առ ձեզ։ * Աղաչեմ, զի մի 'ի մօտոյ եւ եթ հա- 2
մարձակիցիմ վստահութեամբ, կամ համարիցիմ
յանդգնել 'ի վերայ ոմանց, որ կարծեն զմէնջ ե-
թէ ըստ մարմնոյ գնայցեմք. * զի թէպէտ եւ մար- 3
մնով գնամք, այլ ոչ եթէ ըստ մարմնոյ զինուո-
րիմք։ * Զի զէն զինուորութեան մերոյ ոչ է մար- 4
մնաւոր, այլ զօրաւոր յԱստուծոյ, առ 'ի քակե-
լոյ զամուրս. զխորհուրդս քակեմք, * եւ զա- 5
մենայն բարձրութիւն հպարտացեալ 'ի վերայ
գիտութեանն Աստուծոյ, եւ գերեմք զամենայն
միտս 'ի հնազանդութիւն Քրիստոսի. * եւ 'ի 6
պատրաստի ունիմք խնդրել զվրէժ ամենայն ան-
հնազանդութեան, յորժամ ձեր եւս հնազան-
դութիւնդ կատարեսցի։

7 ԴԶ. * Ըստ իւրաքանչիւր երեսաց գիտե-
ջիք. եթէ ոք վստահ յանձն իցէ Քրիստոսի լի-
նել, զայս խորհեսցի դարձեալ 'ի միտս իւր, թէ
8 որպէս նա Քրիստոսի է՝ նոյնպէս եւ մեք. * զի
թէ առաւել եւս պարծեցայց վասն իշխանու-
թեանս մերոյ՝ զոր ետ մեզ Տէր 'ի շինել՝ եւ ոչ
9 'ի քակել զձեզ, ոչ ինչ ամաչեցից. * զի մի թուե-
ցայց իբրեւ ահ ինչ արկանել ձեզ թղթովքս։
10 * Ասիցէք. թուղթքս ծանունք են եւ սաստիկք,
բայց տեսիլ մարմնոյ տկար, եւ բանն արհա-
11 մարհեալ։ * Զայս խորհեսցի այնպիսին, զի որ-
պիսիք եմք բանիւք թղթովք 'ի հեռուստ, նոյն-
12 պիսիք եւ 'ի մօտոյ արդեամբք։ * Քանզի ոչ իշ-
խեմք կշռել եւ հաւասարել զանձինս մեր ո-
մանց, որ զանձինս իւրեանց ձեզ ընծայեցուցա-
նեն. այլ անձամբ յանձինս՝ զանձինս չափեն,
եւ 'ի կշռել անձամբ յանձինս՝ ոչ առնուն 'ի
13 միտ։ * Այլ մեք ոչ եթէ յանչափս ինչ պար-
ծեցուք, այլ ըստ չափոյ կանոնին, զոր բաժա-
նեաց մեզ Աստուած չափով՝ հասանել մինչեւ
14 առ ձեզ. * իբր ոչ եթէ հասու ինչ չիցեմք 'ի
ձեզ, եւ ձկտեցուցանիցեմք զանձինս. քանզի
մինչեւ առ ձեզ հասաք աւետարանաւն Քրիս-
15 տոսի։ * Եւ ոչ յանչափս ինչ պարծիմք օտար վաս-
տակօք։ Բայց յոյս մի ունիմք զաճմանն հաւա-
տոյ ձերոյ, այդրէն 'ի ձեզ մեծանալոյ, ըստ
կանոնիս մերոյ՝ յառաւելութիւն. 'ի վեր եւս
16 քան զձեզ աւետարանել. * ոչ օտար կանոնաւ 'ի

պատրաստականս ինչ պարծել։ * Զի որ պարծի- 17
ցին՝ ՚ի Տէր պարծեսցի ։

ԲԿ. * Զի ոչ եթէ որ զանձն իւր ընծայե- 18
ցուցանէ՝ նա է ընտրեալ. այլ զոր Տէրն ըն-
ծայեցուցանէ ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Լաւ էր եթէ ներէիք փոքր մի եւ իմում ան- 1
զգամութեանս. այլ եւ անսայջիք իսկ. * Նախան- 2
ձեցուցանեմ զձեզ ՚ի նախանձն Աստուծոյ. զի
խօսեցայ զձեզ առն միում, իբրեւ զկոյս մի
սուրբ՝ յանդիման կացուցանել Քրիստոսի. * Բայց 3
երկնչիմ, գուցէ որպէս օձն խաբեաց զԵւայ խո-
րամանկութեամբ իւրով՝ ապականեսցին միտք
ձեր ՚ի միամտութենէն որ ՚ի Քրիստոս. * զի ե- 4
թէ որ գալոցն իցէ՝ այլ Քրիստոս քարոզիցէ
զոր մեքն ոչ քարոզեցաք, կամ ոգի օտար առ-
նուցուք՝ զոր ոչ առէք, կամ աւետարան օ-
տար՝ զոր ոչ ընկալարուք, բարւոք անսայիք
նոցա ։ * Բայց ես այսպէս համարիմ, թէ ոչ 5
ինչ իւիք պակաս իցեմ քան զլաւ Առաքեալսն.
* Թէպէտ եւ տգէտ եւս իցեմ բանիւ, այլ 6
ոչ եթէ գիտութեամբ. սակայն յամենայնի
յայտնեցաք զանձինս ամենեւին առ ձեզ ։ * Եւ 7
եթէ մեղս ինչ գործեցի՝ զի զանձն խոնարհե-
ցուցի, եւ այն՝ զի դուք բարձրասջիք. զի ձրի
զԱւետարանն Աստուծոյ աւետարանեցի ձեզ.
* զայլ եկեղեցիս կողոպտեցի, առեալ թոշակ 8

9 ՚ի ձեր սպասաւորութիւն ։ * Եւ յորժամ էի
առ ձեզ, թէպէտ եւ պակասեաց ինչ, ոչ զոք
՚ի ձէնջ ծանրացուցի, զի զպակասութիւնն իմ
լցին եղբարքն եկեալք ՚ի Մակեդոնացւոց. եւ
յամենայնի առանց ծանրանալոյ ձեզ զանձն իմ
10 պահեցի՝ եւ պահեցից. * զի գոյ յիս ճշմար-
տութիւնն Քրիստոսի ։

ԲԴ. * Զի պարծանքս այս ոչ արգելցին յի-
11 նէն ՚ի կողմանս Աքայեցւոց ։ * Ընդէ՞ր. իբրու
թէ ո՞չ սիրիցեմ զձեզ. զայն Աստուած գիտէ.
12 * զոր առնեմս՝ եւ արարից. զի հատից զպատ-
ճառս այնոցիկ՝ որ զպատճառսն կամիցին. զի
որով պարծին, եւ նոքա իբրեւ զմեզ գտանի-
13 ցին ։ * Զի այնպիսիքն՝ սուտ առաքեալք, մշակք
նենգաւորք, կերպարանին ՚ի կերպարանս առա-
14 քելոց Քրիստոսի. * եւ չէն ինչ զարմանք, քան-
զի եւ ինքն սատանայ կերպարանի ՚ի հրեշտակ
15 լուսոյ. * եւ ոչ ինչ է մեծ՝ թէ եւ պաշտօնեայք
նորա կերպարանին իբրեւ զպաշտօնեայս արդա-
րութեան. որոց կատարածն եղիցի ըստ գործոց
16 իւրեանց ։ * Դարձեալ ասեմ. մի՛ ոք համարեսցի
զիս անզգամ. ապա թէ ոչ, իբրեւ զանզգամ
ընկալարուք զիս, զի եւ ես փոքր մի ինչ պար-
17 ծեցայց. * եւ զոր խօսիմս, ոչ եթէ ըստ Տեա-
ռըն ինչ խօսիմ, այլ իբրեւ անզգամութեամբ՝
18 ըստ կարգի այդց պարծանաց ։ * Եւ քանզի
բազումք պարծին ըստ մարմնոյ, եւ ես պար-
19 ծեցայց. * մտադիւր իմն անսայք անմտացն՝

ձերովդ իմաստութեամբ . *քանզի անսայք՝ ե- 20
թէ ոք խաբէ զձեզ, եթէ ոք ծառայեցուցանէ ,
եթէ ոք ուտէ զձեր, եթէ ոք առնու ինչ, եթէ ոք
հպարտանայ , եթէ ոք զձեզ յանդիման հարկա-
նէ . * ըստ անարգանացդ ասեմ, իբրեւ թէ մեք 21
տկարացաք արդեօք . յոր ինչ ոք համարձակիցի ,
անզգամութեամբ ասեմ, համարձակիմ եւ ես ։
* Եբրայեցի՞ք իցեն , եւ ես . Իսրայելացի՞ք իցեն , 22
եւ ես . զաւակ Աբրահամո՞ւ իցեն , եւ ես . *պաշ- 23
տօնեայք Քրիստոսի՞ իցեն , յանդգնագոյնս աս-
ցից՝ թէ առաւել եւս ես , եթէ վաստակօք՝
առաւել , եթէ գանիւք՝ եւս առաւել , եթէ
բանտիւ՝ աւելի քան զնոսա , եթէ մահուամբք՝
բազում անգամ . * 'ի Հրէից՝ հնգիցս քառասուն 24
միով պակաս արբի , * երիցս ձաղկեցայ , միան- 25
գամ քարկոծ եղէ , երիցս նաւակոծ եղէ , ըզ-
տիւ եւ զգիշեր յանդունդս տառապեցայ , * 'ի 26
ճանապարհս բազում անգամ ։ Վիշտս 'ի գետոց,
վիշտս յաւազակաց , վիշտս յազգէ , վիշտս 'ի
հեթանոսաց , վիշտս 'ի քաղաքի , վիշտս յանա-
պատի , վիշտս 'ի ծովու , վիշտս 'ի սուտ եղբարց .
* 'ի ջանս եւ 'ի վաստակս , 'ի տքնութիւնս բա- 27
զում անգամ, 'ի քաղց եւ 'ի ծարաւ , 'ի պահս
բազում անգամ, 'ի ցուրտ եւ 'ի մերկութեան ։
* Թող զայլ նեղութիւնն . եւ զի հանապազ 28
խուժանն 'ի վերայ իմ կուտէր , եւ հոգք ամե-
նայն եկեղեցեացն ։ * Ո՞ հիւանդանայ , եւ ոչ ես 29
հիւանդանամ . ո՞ գայթակղի , և ոչ ես տապանամ ։

30 ԲԶ . * Եթէ պարծել ինչ պարտ իցէ , զտկա-
31 րութեանն պարծեցայց . * Աստուած եւ Հայր
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գիտէ , որ է
32 օրհնեալ յաւիտեանս , զի ոչ ստեմ ։ * Ի Դամաս-
կոս ազգապետն Արետայ արքայի պահէր զքա-
33 ղաքն Դամասկացւոց՝ ունել զիս . * եւ ընդ պա-
տուհանն վանդակաւ կախեցայ ընդ պարիսպն ,
եւ փախեայ 'ի ձեռաց նորա ։

ԳԼՈՒԽ ԺԲ .

1 Արդ պարծել ինչ պարտ իցէ , այլ օգնէ ինչ
ոչ . բայց եկից 'ի տեսիլս եւ յայտնութիւնս
2 Տեառն ։ * Գիտեմ այր մի 'ի Քրիստոս յառաջ
քան զչորեքտասան ամ . եթէ մարմնով՝ ոչ գի-
տեմ, եւ եթէ առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ,
Աստուած գիտէ . յափշտակեալ զայնպիսին մին-
3 չեւ յերրորդ երկինս . * եւ գիտեմ զայնպիսի այր,
եթէ մարմնով՝ եւ եթէ առանց մարմնոյ՝ ոչ
4 գիտեմ, Աստուած գիտէ , * զի յափշտակեցաւ
'ի դրախտն , եւ լուաւ բանս անճառս , զոր ոչ է
5 պարտ մարդոյ խօսել ։ * Վասն այնպիսւոյն պար-
ծեցայց , այլ վասն անձին ինչ ոչ պարծեցայց .
6 բայց եթէ 'ի տկարութիւնս . * զի եթէ եւ կա-
մեցիմ պարծել , ոչ եղէց անզգամ , քանզի զար-
դարն ասեմ . այլ անխայեմ, գուցէ ոք համարի-
ցի յիս աւելի քան զոր տեսանիցէ յիս կամ լը-
7 սիցէ յինէն ։ * Եւ զի մի առաւելութեամբ յայտ-

նութեանցն հպարտացայց, տուաւ ինձ խայթ
մարմնոյ, հրեշտակ սատանայ՝ կռփել զիս, զի մի՛
հպարտացայց: * Եւ վասն այնորիկ երիցս անգամ 8
աղաչեցի զՏէր՝ զի ՚ի բաց արասցէ յինէն, * եւ 9
ասէ ցիս. շատ են քեզ շնորհք իմ, զի զօրու-
թիւն իմ ՚ի տկարութեան կատարի. եւ արդ
լաւ եւս լիցի ինձ պարծել ՚ի տկարութիւնս,
զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի:
Գ.Դ. * Վասն որոյ հաճեալ եմ ընդ տկա- 10
րութիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ
հալածանս, եւ ընդ նեղութիւնս վասն Քրիստո-
սի. զի յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ:
* Եղէ անզգամ, քանզի դուք ստիպեցէք. զի 11
ինձ պարտ էր ՚ի ձէնջ վկայութիւն առնուլ, թէ
ոչ ինչ պակաս գտայ քան զլաւ Առաքեալսն. զի
թէպէտ եւ ես ոչ ինչ եմ, * սակայն նշանք Ա- 12
ռաքելոյ գործեցան ՚ի ձեզ, ամենայն համբե-
րութեամբ, նշանօք եւ արուեստիւք եւ զօ-
րութեամբք. * եւ արդ զի՞նչ իցէ որով պակաս 13
գտայք քան զայլ եկեղեցիս. բայց եթէ այնու,
զի ես զձեզ ոչ ձանձրացուցի. շնորհեցէք ինձ
զմեղս զայդ: * Ահաւասիկ այս երիցս անգամ 14
պատրաստեալ եմ գալ առ ձեզ, եւ ձեզ բեռն
ինչ ոչ եղէց. զի ոչ խնդրեմ ինչ զձեր, այլ ըզ-
ձեզ. քանզի ոչ պարտին որդիք հարց գանձել,
այլ հարք որդւոց. * բայց ես մտադիւրութեամբ 15
ծախեցից եւ ծախեցայց վասն անձանց ձերոց.
զի թէպէտ եւ յառաւել սիրոյն զձեզ՝ սակաւ-

16 սիրեցիմ: * Այլ գրեթէ ես ոչ ինչ ծանրացայ
ձեզ. այլ քանզի խորագէտ էի, խեղք կալայ
17 զձեզ. * միթէ որովք առաքեցին առ ձեզ, նո-
18 քօք ինչ ագահեցայ՞ ՚ի ձէնջ. * աղաչեցի զՏիտոս՝
եւ առաքեցի ընդ նմա զեղբայրն. միթէ ագա-
հեա՞ց ինչ զձեր Տիտոս. ո՞չ նովին ոգւով գնա-
ցաք, ո՞չ նովին շաւղօք շրջեցաք:
19 Գ.Ջ. * Դարձեալ համարիցիք եթէ յաղօք ան-
կեալ ինչ ձեզ աղերսիցե՞մք. առաջի Աստուծոյ
՚ի Քրիստոս խօսիմք, զի ամենայն ինչ, սիրելիք,
20 վասն ձերոյ շինութեան է. * այլ երկնչիմ, գու-
ցէ եկեալ՝ ոչ որպիսի կամիմն գտանիցեմ ըզ-
ձեզ, եւ ես գտանիցիմ ձեզ՝ որպէս եւ դուք
ոչ կամիցիք: Գուցէ դարձեալ՝ հեռ, նախանձ,
սրտմտութիւնք, գրգռութիւնք, չարախօսու-
թիւնք, քսութիւնք, հպարտութիւնք, ամբար-
21 տաւանութիւնք, խռովութիւնք: * Գուցէ դար-
ձեալ յորժամ գայցեմ՝ նկուն ինչ առնիցէ զիս
Աստուած իմ առ ձեզ, եւ սուգ առնուցում
վասն բազմաց յառաջագոյն մեղուցելոց, եւ ոչ
ապաշխարելոց ՚ի վերայ պղծութեան եւ պոռ-
նկութեան եւ գիջութեան՝ զոր գործեցին:

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Այս երիցս անգամ գամ առ ձեզ. զի ՚ի
բերանոյ երկուց եւ երից վկայից հաստատեսցի
2 ամենայն բան, * յառաջ ասացի, եւ դարձեալ

կանխաւ ասեմ, յանդիման երկիցս անգամ, եւ
այժմ 'ի բացուստ գրեմ յառաջագոյն յանցու-
ցելոցն եւ այլոցն ամենեցուն, զի եթէ եկից
դարձեալ՝ ոչ խնայեցից ։ * Եթէ զփո՞րձ ինչ խն- 3
դրէք զՔրիստոսի . որ ինեւս ընդ ձեզ խօսի . որ
հզօրացեալն է 'ի ձեզ, եւ ոչ տկարացեալ, * զի 4
թէպէտ եւ խաչեցաւ 'ի մերմէ տկարութենէ,
այլ կենդանի է զօրութեամբն Աստուծոյ . եւ
մեք թէպէտ եւ տկարանայցեմք վասն նորա,
այլ կենդանի լիցուք ընդ նմա զօրութեամբն
Աստուծոյ ։

ԴԿ . * Փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայ- 5
ցէք 'ի նոյն հաւատս . քննեցէք զանձինս, եթէ
ոչ գիտէք զանձինս, զի Քրիստոս Յիսուս 'ի ձեզ
է . բայց եթէ անպիտանք իցէք . * այլ ակն 6
ունիմ՝ թէ գիտիցէք . զի մեք ոչ եմք անպիտանք ։
* Այլ խնդրեմք յԱստուծոյ՝ զի մի՛ ինչ արասցէ 7
ձեզ չար . ոչ զի մեք ընտիրք երեւեսցուք, այլ
զի դուք զբարին գործիցէք, եւ մեք անպիտանք
իցեմք . * զի ոչ կարեմք ինչ հակառակ կալ ճշ- 8
մարտութեանն, այլ վերակացու եմք ճշմար-
տութեանն ։ * Խրախ եմք՝ յորժամ մեք տկա- 9
րանայցեմք, եւ դուք զօրաւորք իցէք . զդոյն իսկ
եւ աղօթս առնեմք՝ զձեր հաստատութիւնդ .
* վասն այնորիկ զայս 'ի հեռուստ գրեմ, զի մի՛ 10
յորժամ եկից՝ սաստկութեամբ վարեցայց ըստ
իշխանութեանս, զոր ետ ինձ Տէր 'ի շինել՝ եւ
ոչ 'ի քակել ։ * Այսուհետեւ, եղբարք . ողջ լե- 11

րուք, հաստատուն կացէք, մխիթարեցարուք,
միաբան լերուք, խաղաղութիւն արարէք . եւ
Աստուած խաղաղութեան եւ սիրոյ եղիցի ընդ
12 ձեզ ։ * Ողջոյն տուք միմեանց 'ի համբոյր սրբու-
թեան ։ Ողջոյն տան ձեզ սուրբք ամենայն ։
13 * Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ
սէրն Աստուծոյ եւ հաղորդութիւն Հոգւոյն
Սրբոյ ընդ ձեզ ամենեսին . ամէն ։

Առ Կորնթացիս Երկրորդ՝ Գրեցաւ 'ի Փիլիպեայ,
'ի ձեռն Տիտոսի եւ Ղուկայ ։

ԹՈՒՂԹ
ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

Գ.Դ. ՊԱՒՂՈՍ Առաքեալ ոչ 'ի մարդկա֊ 1
նէ եւ ոչ 'ի ձեռն մարդոյ, այլ 'ի
ձեռն Յիսուսի Քրիստոսի, եւ Աստուծոյ Հօր՝ որ
յարոյց զնա 'ի մեռելոց. * եւ որ ընդ իս են եղ֊ 2
բարք ամենեքին, եկեղեցեացդ Գաղատացւոց:
* Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստու֊ 3
ծոյ 'ի Հօրէ եւ 'ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիս֊
տոսէ, * որ ետ զանձն իւր վասն մեղաց մերոց, 4
զի զմեզ փրկեսցէ յաշխարհէ աստի չարէ, ըստ
կամացն Աստուծոյ եւ Հօր մերոյ. * որում փառք 5
յաւիտեանս. ամէն: * Զարմանամ՝ զի այդպէս 6
վաղվաղակի փոխիք յայնմանէ որ կոչեացն
զձեզ 'ի շնորհսն Քրիստոսի՝ յայլ Աւետարան,
* որ ոչ գոյ այլ. բայց եթէ իցեն ոմանք որ խռ֊ 7
ովեցուցանիցեն զձեզ, եւ կամիցին շրջել զԱ֊
ւետարանն Քրիստոսի: * Այլ թէ մեք, կամ 8
հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի

քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ լիցի.
9 * որպէս յառաջագոյնն ասացաք՝ եւ արդ դար֊
ձեալ ասեմ, եթէ ոք աւետարանեսցէ ձեզ ա֊
10 ւելի քան զոր առէքն, նզովեալ լիցի: * Արդ
մարդկա՞ն հաճոյ լինիցիմ՝ թէ Աստուծոյ, կամ
խնդրիցեմ մարդկա՞ն հաճոյ լինել. եթէ տակա֊
ւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի
ծառայ ոչ էի:
11 Գ.Ջ. * Ցուցանեմ ձեզ եղբարք զԱւետարանն,
որ աւետարանեցաւ յինէն, զի ոչ է ըստ մար֊
12 դոյ. * քանզի եւ ոչ ես 'ի մարդոյ առի, եւ ոչ
ուսայ յումեքէ, այլ 'ի յայտնութենէն Յիսուսի
13 Քրիստոսի: * Քանզի լուեալ իսկ է ձեր զիմ գը֊
նացսն որ երբեմն 'ի Հրէութեան անդ, զի ան֊
չափ հալածէի զեկեղեցին Աստուծոյ, եւ աւար
14 հարկանէի զնա. * եւ յառաջադէմ էի 'ի Հրէ֊
ութեանն՝ քան զբազում հասակակիցս իմ որ
յազգին իմում էին, առաւել նախանձախնդիր
15 էի իմոց հայրենի աւանդութեանցն: * Այլ յոր֊
ժամ կամեցաւ Աստուած, որոշեաց զիս յորո֊
վայնէ մօր իմոյ, եւ կոչեաց 'ի ձեռն շնորհաց
16 իւրոց, * յայտնել զՈրդին իւր ինեւ, զի աւե֊
տարանեցից զնա 'ի հեթանոսս. անդէն վաղ֊
վաղակի ոչ ինչ զգացուցի մարմնոյ եւ արեան,
17 * եւ ոչ ելի յԵրուսաղէմ առ որ յառաջագոյն
քան զիս Առաքեալքն էին. այլ չոգայ յԱրա֊
18 բիա, եւ դարձեալ դարձայ 'ի Դամասկոս: * Ապա
յետ երից ամաց ելի յԵրուսաղէմ տեսանել

զՊետրոս. եւ եղէ առ նմա աւուրս հնգետա-
սան. * զայլ ոք յԱռաքելոց անտի ոչ տեսի, բայց 19
միայն զՅակովբոս զեղբայրն Տեառն: * Այլ զոր 20
գրեմ առ ձեզ՝ ահաւասիկ առաջի Աստուծոյ,
զի ոչ ստեմ: * Ապա եկի 'ի կողմանս Ասորւոց 21
եւ Կիլիկեցւոց. * եւ յանծանօթս էի երեսօք ե- 22
կեղեցեացն՝ որ 'ի Թլփատութենէ անտի էին
'ի Քրիստոս: * Բայց զի լսելով լուեալ էր, թէ 23
որ հալածէրն զմեզ յայնժամ, արդ աւետարա-
նէ զհաւատսն՝ զոր երբեմն խախտէր, * եւ փա- 24
ռաւոր առնէին ինեւ զԱստուած:

ԳԼՈՒԽ Բ.

ԵԿ. Ապա յետ ամաց չորեքտասանից, միւս 1
անգամ ելի յԵրուսաղէմ ընդ Բառնաբայ, ա-
ռեալ ընդ իս եւ զՏիտոս. * եւ ելի ըստ յայտնու- 2
թեանն, եւ զգացուցի նոցա զԱւետարանն՝
զոր քարոզէի 'ի հեթանոսս, առանձինն այ-
նոցիկ՝ որ կարծեալքն էին, գուցէ ընդունայն
ինչ ընթացեալ իցեմ կամ ընթանայցեմ:
* Այլ եւ ոչ Տիտոս որ ընդ իս 'ի հեթա- 3
նոսաց էր, բռնադատեցաւ թլփատել. * այլ 4
վասն սպրդողաց սուտ եղբարցն՝ որք սպրդեցին
մտանել դիտել զազատութիւնն մեր՝ զոր ու-
նիմք 'ի Քրիստոս Յիսուս, զի զմեզ ծառայեցու-
ցեն. * որոց եւ ոչ առ ժամանակ մի անսացաք 5
հնազանդութեանն. զի ճշմարտութիւն Աւե-

6 տարանին հաստատեսցի առ ձեզ: * Բայց զկար-
ծելոցն եթէ իցեն ինչ, որպիսիք ոք երբեմն է-
ին, չէ ինչ ինձ փոյթ. քանզի Աստուած աչն
մարդկան ոչ առնու. զի ինձ կարծեալքն այն-
7 պիսի ինչ ոչ զգացուցին. * այլ զնորին հակառակն,
իբրեւ տեսին եթէ հաւատացեալ է ինձ Աւե-
տարանն անթլփատութեան, որպէս Պետրոսի
8 թլփատութեան. * զի որ յաջողեացն Պետրոսի
յառաքելութիւն թլփատութեանն, յաջողեաց
9 եւ ինձ 'ի հեթանոսս. * իբրեւ գիտացին զշնորհ-
սն որ տուեալ էին ինձ, Յակովբոս եւ Կեփաս
եւ Յովհաննէս, որ կարծեալ սիւնքն էին, ձեռն
ետուն հաւանութեան ինձ եւ Բառնաբայ, զի
մեք 'ի հեթանոսս, եւ նոքա 'ի թլփատութեա-
10 նն. * բայց միայն զի զաղքատսն յիշեսցուք,
զոր եւ ես փութացայ զնոյն առնել:
11 ԵԴ. * Այլ յորժամ եկն Կեփաս յԱնտիոք,
ընդդէմ դարձայ նորա. քանզի գոդ իբրեւ ըստ
12 գտեալ իմն էր. * քանզի մինչ չեւ եկեալ էին ո-
մանք առ 'ի Յակովբայ, ընդ հեթանոսս ուտէր
անխտիր. իսկ իբրեւ եկին, զատանէր եւ որո-
շէր զանձն, երկուցեալ յայնցանէ որ 'ի թլփա-
13 տութենէ անտի էին. * եւ կեղծաւորեցան ընդ
նմա եւ այլ Հրեայքն, մինչեւ Բառնաբաս ան-
գամ խոնարհեցաւ 'ի նոցա կեղծաւորութիւնն:
14 * Այլ իբրեւ տեսի, թէ ոչ ուղիղ գնան 'ի ճշմար-
տութիւն աւետարանին, ասեմ ցԿեփաս առա-
ջի ամենեցուն, եթէ դու որ Հրեայդ ես՝ հե-

թանոսաբար եւ ոչ հրէաբար կեաս, զիա՞րդ ըս֊
տիպես հեթանոսաց լինել հրէաբէն. * զի մեք 15
բուն Հրեայք եմք, եւ ոչ 'ի հեթանոսաց մե֊
ղաւորք: * Զայս գիտեմք, եթէ ոչ արդարանայ 16
մարդ 'ի գործոց օրինաց, եթէ ոչ 'ի հաւատոցն
Յիսուսի Քրիստոսի. եւ մեք 'ի Քրիստոս Յիսուս
հաւատացաք, զի արդարասցուք 'ի հաւատոցն
Քրիստոսի, եւ ոչ 'ի գործոց օրինաց. զի 'ի գոր֊
ծոց օրինաց ոչ արդարասցի ամենայն մարմին:
* Իսկ եթէ մինչ խնդրիցեմք արդարանալ 'ի 17
Քրիստոս, եւ գտանիցիմք մեղաւորք, ապա ու֊
րեմն Քրիստոս մեղա՞ց պաշտօնեայ եղեւ. քաւ
լիցի: * Զի եթէ զոր քակեցին՝ զնոյն միւսան֊ 18
գամ շինիցեմ, ապա յանցաւոր զանձն իմ ես ին֊
ձէն երեւեցուցանեմ. * զի ես օրինօք օրինացն 19
մեռայ, զի Աստուծոյ կեցից, եւ ընդ Քրիստոսի
'ի խաչ ելից. * եւ կենդանի եմ այսուհետեւ, 20
ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս:
ԵԶ. Այլ որ այժմ կեամ մարմնով, հա֊
ւատովք որդւոյն Աստուծոյ կեամ. որ սիրեա֊
ցըն զիս, եւ մատնեաց զանձն վասն իմ. * եւ 21
ես ոչ անարգեմ զշնորհսն Աստուծոյ. զի եթէ
յօրինաց անտի էր արդարութիւն, ապա Քրիս֊
տոս զուր մեռաւ:

ԳԼՈՒԽ Գ.

Ո՛վ անմիտ գաղատացիք, ո՞ նախանձ արար 1
զձեզ. որոց դրեթէ առաջի աչաց Յիսուս Քրիս֊

2 տոս գրեցաւ 'ի խաչ ելեալ: * Զայս միայն կա֊
միմ ուսանել 'ի ձէնջ. 'ի գործո՞ց օրինաց զհոգին
3 ընկալարուք՝ եթէ 'ի լրոյ հաւատոց. * այդչափ
անմիտ էք. սկսեալ հոգւով՝ եւ արդ մարմնով
4 վախճանիք. * եւ այնչափ անցք անցին ընդ ձեզ
5 զուր, եթէ լոկ զուր: * Իսկ արդ որ բաշխեաց
'ի ձեզ զհոգին, եւ աջողեաց 'ի ձեզ զզօրու֊
թիւնս, 'ի գործո՞ց օրինաց է՝ եթէ 'ի լրոյ հա֊
ւատոց:
6 * Որպէս Աբրահամ հաւատաց յԱստուած՝ եւ
7 համարեցաւ նմա յարդարութիւն. * գիտիցէք
արդեօք, զի որք 'ի հաւատոց անտի են, նոքա
8 են որդիք Աբրահամու: * Յառաջագոյն գիտէր
գիր, եթէ 'ի հաւատոց անտի արդարացուցա֊
նէ Աստուած զհեթանոսս, յառաջագոյն խոս֊
տացաւ Աբրահամու, թէ 'ի քեզ օրհնեսցին ա֊
9 մենայն ազգք: * Այսուհետեւ որք 'ի հաւատոց
անտի են, օրհնին ընդ հաւատացելոյն Աբրա֊
համու:
10 * Զի որ միանգամ 'ի գործոց օրինացն են,
ընդ անիծիւք են. քանզի գրեալ է, թէ անի֊
ծեալ ամենայն մարդ որ ոչ կացցէ յամենայն
գրեալսն 'ի գիրս օրինաց՝ առնել զամենայն: Վ.Զ
11 * Զի օրինօքն ոչ ոք արդարանայ առաջի Ա֊
ստուծոյ, այն յայտ իսկ է. զի Արդարն, ասէ,
12 'ի հաւատոց կեցցէ. * բայց օրէնքն չեն 'ի հա֊
ւատոց, այլ որ արասցէ զայն՝ կեցցէ 'ի նոսին:
13 *Քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինացն, ե֊

ղեալ վասն մեր անէծք . զի գրեալ է , Թէ ա-
նիծեալ ամենայն որ կախեալ կայցէ զփայտէ .
* զի 'ի հեթանոսս օրհնութիւնն Աբրահամու ե- 14
ղիցի 'ի Քրիստոս Յիսուս . զի մեք զաւետիս Հոգ-
ւոյն Սրբոյ ընկալցուք հաւատովք :
* Ըստ մարդկութեան ասեմ, եղբարք. ապա- 15
քէն զմարդկան հաստատեալ կտակ՝ ոչ ոք կա-
րէ անարգել, եւ ոչ այլ հրաման 'ի վերայ այ-
նըր տալ. * Իսկ Աբրահամու խոստացան աւե- 16
տիքն, եւ զաւակի նորա, եւ ոչ ասէ զաւակաց՝
իբրեւ բազմաց, այլ իբրեւ զմիոյ, Թէ եւ զա-
ւակի քում, որ է Քրիստոս : * Բայց զայս ասեմ. 17
զկտակն յառաջագոյն հաստատեալ յԱստուծոյ
'ի Քրիստոս, օրէնքն որ յետ չորեքհարիւր եւ
երեսուն ամի եղան՝ ոչ կարեն խախտել առ 'ի
խափանելոյ զաւետիսն. * եթէ յօրինաց անտի է 18
ժառանգութիւնն, ապա ոչ եւս յաւետեացն.
բայց Աբրահամու աւետեօք շնորհեաց Աստուած :
* Իսկ զի՞նչ լինէ՞ն օրէնք . յանցուածոց վասն յա- 19
ւելան, մինչեւ եկեսցէ զաւակն որում խոստա-
ցեալն էր, կարգեալ հրեշտակօք 'ի ձեռն միջ-
նորդի . * Իսկ միջնորդ՝ միոյ ուրուք ոչ է, բայց 20
Աստուած մի է : * Իսկ արդ. օրէնքն հակառա՞կ 21
ինչ լինի՞ն աւետեացն Աստուծոյ . քաւ լիցի . զի
եթէ տուեալ էին օրէնքն՝ որ կարող էին կեն-
դանի առնել, ապա հաստատ յօրինաց անտի
էր արդարութիւն : * Այլ փակեցին գիրք զա- 22
մենեսին ընդ մեղօք, զի աւետիքն 'ի հաւատոց

անտի Յիսուսի Քրիստոսի տացին հաւատացելոց .
23 * մինչ չեւ հաւատքն եկեալ էին, ընդ օրինօք
փակեալ պահէաք 'ի համբերձեալ հաւատոն որ
24 յայտնելոց էին 'ի մեզ : * Ապա օրէնքն դաստիա-
րակ եղեն մեզ 'ի Քրիստոս Յիսուս, զի 'ի հա-
25 ւատոյն արդարասցուք . * այլ իբրեւ եկին հա-
26 ւատքն, ոչ եւս ընդ դաստիարակաւ եմք . * քան-
զի ամենեքին որդիք Աստուծոյ էք՝ հաւատովք
27 'ի Յիսուս Քրիստոս : * Որք միանգամ 'ի Քրիստոս
մկրտեցարուք՝ զՔրիստոս զգեցեալ էք . չի՛ք խտիր,
28 * ոչ հրէի եւ ոչ հեթանոսի, ոչ ծառայի եւ ոչ
ազատի, ոչ արուի եւ ոչ իգի . զի ամենեքեան
29 դուք մի էք 'ի Քրիստոս Յիսուս : * Ապա եթէ դուք
Քրիստոսի էք, ուրեմն Աբրահամու զաւակ էք,
ըստ աւետեացն ժառանգք :

ԳԼՈՒԽ Դ.

1 ԶԿ. Զայս ասեմ. յորքան ժամանակս ժա-
ռանգն տղայ է, չէ ինչ առաւել քան զծառայն,
2 Թէպէտ եւ տէր իցէ ամենեցուն . * այլ ընդ հա-
զարապետօք է եւ ընդ դաւառապետօք՝ մինչեւ
3 'ի ժամանակակէտ հօրն . * Նոյնպէս եւ մեք մինչ
տղայքն էաք, ընդ տարերբք աշխարհիս 'ի ծա-
4 ռայութեան կայաք : * Այլ իբրեւ եկն լրումն
ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր՝
5 որ եղեւ 'ի կնոջէ, եւ եմուտ ընդ օրինօք . * զի
զնոսա որ ընդ օրինօքն լինէն՝ գնեսցէ, զի մեք զոր-
6 դեգրութիւն ընկալցուք : * Եւ զի էք դուք որ-

դիք, առաքեաց Աստուած զհոգի Որդւոյն իւրոյ
'ի սիրտս մեր, որ աղաղակէ Աբբա, Հայր. * այսու- 7
հետեւ չես ծառայ, այլ որդի. եթէ որդի, եւ
ժառանգ Աստուծոյ։ * Այլ յայնժամ մինչ ոչն 8
գիտէիք զԱստուած, ծառայէիք այնոցիկ՝ որ ոչն
էին 'ի բնէ աստուածք. * այլ այժմիկ ծանեայք 9
զԱստուած, մանաւանդ թէ ծանուցայք իսկ
յԱստուծոյ, զիա՞րդ դառնայք միւսանգամ 'ի
տարերս տկարս եւ յաղքատս, որոց միւսանգամ
զանձինս ծառայեցուցանել կամիք։ * Զաւուրս 10
խորէք, եւ զամիսս եւ զժամանակս եւ զտարիս.
* երկնչիմ 'ի ձէնջ, գուցէ թէ 'ի զուր ինչ վաս- 11
տակեցի 'ի ձեզ. * եղերուք իբրեւ զիս, քանզի 12
եւ ես իբրեւ զձեզդ էի։ Եղբարք, աղաչեմ ըզ-
ձեզ, չիք ինչ ձեր մեղուցեալ առ իս. * գիտէք 13
դուք՝ զի տկարութեամբ մարմնոյ աւետարանե-
ցի ձեզ զառաջինն. եւ զփորձանսն որ 'ի մարմնի
իմում էին. * ոչ անարգեցէք՝ եւ ոչ անգոսնեցէք. 14
այլ իբրեւ զհրեշտակ Աստուծոյ ընկալարուք զիս,
իբրեւ զՔրիստոս Յիսուս։ * Իսկ արդ ո՞ր է երա- 15
նութիւնն ձեր. վկայեմ ձեզ. եթէ հնար ինչ էր՝
զաչս ձեր հանէիք եւ տայիք ինձ. * Արդ զի՞ թըշ- 16
նամի իմն եղէ ձեզ, զի զստոյգն խօսեցայ։ * Այլ 17
նախանձեցուցանեն զձեզ ոչ 'ի բարւոք. եւ արգե-
լուլ կամին զձեզ, զի նոցա նախանձաւորք լինի-
ջիք։ * Բայց լաւ է նախանձաւոր լինել 'ի բարիս 18
յամենայն ժամ, եւ ոչ միայն յորժամ 'ի ձերում
միջի կայեմ։

19 ԶԴ. * Որդեակք իմ, զորս դարձեալ վերըս-
տին երկնեմ, մինչեւ նկարեսցի Քրիստոս 'ի ձեզ.
20 * կամէի այժմ գալ առ ձեզ, եւ փոխել զբար-
բառ իմ. զի տարակուսեալ եմ ես վասն ձեր։
21 * Ասէք ինձ՝ որ ընդ օրինօքն կամիք լինել.
22 չլսէ՞ք ընթերցեալ ձեր զօրէնս. * զի գրեալ է՝ թէ
Աբրահամու երկու որդիք էին, մի՝ յաղախնոյ
23 անտի, եւ մի՝ յազատէն։ * Այլ որ յաղախնոյն
էր՝ ըստ մարմնոյ ծնեալ էր, եւ որ յազատէն՝
24 ըստ աւետեացն. * որ է առակ օրինակի։ Զի այս
ինքն են՝ երկու կտակարանք, մի՝ 'ի լեռնէ Սինեայ
25 'ի ծառայութիւն ծնեալ, որ էր Հագար. * քանզի
Հագար՝ լեառն Սինայ է յԱրաբիա. հաւասար է
այժմ Երուսաղէմի. զի ծառայ է որդւովք իւրովք
26 հանդերձ։ * Այլ վերինն Երուսաղէմ ազատ է,
27 որ է մայր մեր ամենեցուն. * զի գրեալ է. Ուրախ
լեր, ամուլ, որ ոչ ծնանէիր, գոչեա եւ աղա-
ղակեա՝ որ ոչդ երկնէիր. զի բազում են որդիք
28 ամնդկնդ առաւել քան զայրամբոյն։ * Այլ մեք,
եղբարք, ըստ Սահակայ աւետեացն որդիք եմք.
29 * այլ որպէս յայնժամ՝ որ ըստ մարմնոյն ծնեալ
էր՝ հալածէր զայն՝ որ ըստ հոգւոյն, նոյնպէս եւ
30 այժմ. * այլ զի՞նչ ասէ Գիր. Ի բաց հան զաղա-
խինդ եւ զորդի դորա, զի մի՛ ժառանգեսցէ որ-
31 դի աղախնոյդ ընդ որդւոյ ազատին։ * Վասն
որոյ, եղբարք, չեմք որդիք աղախնոյն, այլ ա-
զատին. ազատութեամբն որով Քրիստոս զմեզ
ազատեցոյց։

ԳԼՈՒԽ Ե.

Պինդ կացէք այսուհետեւ, եւ մի՛ միւսան- 1
գամ ընդ լծով ծառայութեան մտանէք ։
ԶԶ. * Ահաւասիկ ես Պաւղոս ասեմ ձեզ. 2
զի եթէ թլփատիք, Քրիստոս ինչ ձեզ ոչ օգնէ.
* վկայեմ ամենայն մարդոյ՝ որ թլփատիցի, թէ 3
պարտական է զամենայն օրէնսն կատարել ։ * Խա- 4
փանեալ էք 'ի Քրիստոսէ, որ օրինօքն արդարա-
նայք. եւ անկեալ էք 'ի շնորհաց անտի. * զի մեք 5
հոգւովն 'ի հաւատոց յուսոյն արդարութեան
ակն ունիմք. * զի 'ի Քրիստոս Յիսուս՝ ոչ թլփա- 6
տութիւն ինչ կարող է, եւ ոչ անթլփատու-
թիւն. այլ հաւատք՝ սիրով յաջողեալք ։ * Բար- 7
ւոք ընթանայիք, ո՞ կասեցոյց զձեզ ճշմարտու-
թեանն չհաւանել. * զի այն հրապոյրք՝ ոչ յայն- 8
մանէ են՝ որ կոչեացն զձեզ. * փոքր մի խմոր զա- 9
մենայն զանգուածն խմորէ ։ * Այլ ես յուսա- 10
ցեալ եմ 'ի ձեզ Տէրամբ՝ թէ ոչ այլ ազգ ինչ
խորհիցիք. եւ որ խռովեցուցանէ զձեզ, կրեսցէ
դատաստան՝ ո՛ ոք եւ իցէ ։ * Այլ ես, եղբարք, 11
եթէ թլփատութիւն քարոզէի, ընդէ՞ր տակա-
ւին հալածիմ. ապա ուրեմն խափանեալ իցէ
գայթակղութիւն խաչին ։ * Երանի թէ մատակ- 12
տուր իսկ լինէին, որ զձեզն խռովեցուցանեն.
* զի դուք յազատութիւն կոչեցեալ էք ։ 13
Եղբարք, միայն զի ազատութիւնն ձեր ոչ
լինիցի 'ի պատճառս մարմնոյ. այլ սիրով ծա-

14 ռայեցէք միմեանց. * զի ամենայն օրէնք 'ի մի
բան կատարին, 'ի սիրեսցես զընկեր քո իբ-
15 րեւ զանձն քո ։ * Ապա թէ զմիմեանս խածատի-
ցէք եւ ուտիցէք, զգոյշ լերուք՝ գուցէ 'ի մի-
մեանց սատակիցիք ։
16 ԷԳ. * Բայց զայս ասեմ. հոգւով գնացէք եւ
17 զցանկութիւն մարմնոյ մի՛ կատարէք. * զի մար-
մին ցանկայ հակառակ հոգւոյ. եւ հոգի հա-
կառակ մարմնոյ. եւ զի սոքա միմեանց հակա-
18 ռակ են, մի՛ զոր կամիցիքն՝ զայն առնիցէք ։ * Իսկ
19 եթէ հոգւով վարիք, ապա չէք ընդ օրինօք. * զի
յայտնի են գործք մարմնոյ. այս ինքն են, շնու-
թիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գիջու-
20 թիւն, * կռապաշտութիւն, կախարդութիւն,
թշնամութիւն, հեռ, նախանձ, բարկութիւն,
հակառակութիւնք, երկպառակութիւնք, հեր-
21 ձուածք, * չարակնութիւն. սպանութիւնք, ար-
բեցութիւնք, անառակութիւնք, եւ որ ինչ սո-
ցին նման են. զոր յառաջագոյն իսկ ասեմ ձեզ.
որպէս եւ կանխաւն ասէի. թէ որ զայսպիսի
ինչ գործեն՝ զարքայութիւն Աստուծոյ ոչ ժա-
22 ռանգեն ։ * Իսկ պտուղ հոգւոյն այս է. սէր,
խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտու-
23 թիւն, * քաղցրութիւն, բարութիւն, հաւատք,
հեզութիւն, ժուժկալութիւն. զայսպիսեաց առ-
24 նի օրէնքն չեն հակառակ. * Իսկ որ Քրիստո-
սեանքն են՝ զմարմինս իւրեանց 'ի խաչ հանին
25 կարեօքն եւ ցանկութեամբք հանդերձ ։ * Եթէ

կեամք Հոգւով, ընդ Հոգւոյն եւ միաբանեսցուք.
* եւ մի՛ լիցուք սնապարծք՝ միմեանց ձայն տա- 26
լով, եւ ընդ միմեանս նախանձելով:

ԳԼՈՒԽ Զ.

ԻԶ. Եղբարք, եթէ յանկարծ ըմբռնեսցի 1
ոք 'ի ձէնջ յինչ եւ լիցի յանցանս. դուք որ հո-
գեւորդ էք՝ հաստատեցէք զայնպիսին հոգւով
հեզութեան. զգոյշ լինիջիք անձանց, զի մի՛ եւ
դուք փորձիցիք. * զմիմեանց բեռն բարձէք, եւ 2
այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիստոսի: * Եթէ 3
համարիցի ոք լինել ինչ՝ եւ չիցէ, զանձն իւր
խաբէ. * զգործ իւր կշռեսցէ իւրաքանչիւր ոք, 4
եւ ապա անձին իւրում միայն պարծանս տացէ,
եւ մի՛ առ ընկերաւն. * զի իւրաքանչիւր ոք զիւր 5
բեռն բառնալոց է. * Հաղորդութիւն արասցէ 6
աշակերտն վարդապետին՝ յամենայն բարու-
թիւնս: * Մի՛ խաբիք, Աստուած ոչ արհամարհի. 7
* զի զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն եւ հնձեսցէ. 8
որ սերմանէ 'ի մարմին իւր՝ 'ի մարմնոյ անտի
հնձեսցէ զապականութիւն, եւ որ սերմանէ 'ի
հոգին՝ 'ի Հոգւոյ անտի հնձեսցէ զկեանսն յա-
ւիտենից: * Այլ զբարիս գործել մի՛ ձանձրաս- 9
ցուք, զի 'ի ժամանակի իւրում հնձեսցուք ա-
ռանց լքանելոյ: * Այսուհետեւ մինչդեռ ժա- 10
մանակս 'ի ձեռս է, գործեսցուք զբարիս առ ա-
մենեսեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ:

11 * Տեսէք որպիսի՛ գրով գրեցի առ ձեզ իմով
12 ձեռամբ. * զի որ միանգամ կամին բարեմար-
դիկ լինել մարմնով, նոքա ստիպեն զձեզ թլ-
փատել. միայն՝ զի մի՛ զխաչին Քրիստոսի զհետ
13 երթայցեն. * քանզի եւ որ թլփատեալքն իսկ
են, նոքա զօրէնսն ոչ պահեն. այլ կամին զի
դուք թլփատեսջիք, զի ձերով մարմնովդ պար-
ծեսցին: ԿԶ
14 * Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն 'ի
խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ
աշխարհ 'ի խաչ ելեալ է, եւ ես աշխարհի:
15 * Զի ('ի Քրիստոս Յիսուս), ոչ թլփատութիւն
ինչ է, եւ ոչ անթլփատութիւն. այլ նոր ա-
16 րարածս. * եւ որ միանգամ այսմ կանոնի միաբան
լինին, խաղաղութիւն 'ի վերայ նոցա եւ ողոր-
մութիւն, եւ 'ի վերայ Իսրայելին Աստուծոյ:
17 * Այսուհետեւ աշխատ ոք զիս մի՛ արասցէ, զի
ես զչարչարանս Քրիստոսի 'ի մարմնի իմում կը-
18 րեմ: * Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
ընդ ոգւոյդ ձերում, եղբարք. ամէն:

Առ Գաղատացիս՝ Գրեցաւ 'ի Հռովմ:

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

ԲԿ. ՊԱՒՂՈՍ Առաքեալ Յիսուսի Քրիս- 1
տոսի կամօքն Աստուծոյ, սրբոց որ
են յԵփեսոս, եւ հաւատացելոց 'ի Քրիստոս:
* Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստու- 2
ծոյ Հօրէ մերմէ եւ 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիս-
տոսէ:

* Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մե- 3
րոյ Յիսուսի Քրիստոսի, որ օրհնեաց զմեզ ամե-
նայն հոգեւոր օրհնութեամբ յերկնաւորս 'ի
Քրիստոս. * որպէս ընտրեաց զմեզ նովաւ յա- 4
ռաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ սուրբս
եւ անարատս առաջի նորա՝ սիրով: * Յառաջա- 5
գոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն 'ի ձե-
ռըն Յիսուսի Քրիստոսի, 'ի նոյն. ըստ հաճու-
թեան կամաց իւրոց, 'ի գովեստ փառաց շնոր-
հաց իւրոց. * որով զուարճացոյց զմեզ սիրե- 6
լեաւն. * որով ունիմք զփրկութիւն 'ի ձեռն ա- 7
րեան նորա, զթողութիւն մեղաց ըստ մեծու-
թեան շնորհաց իւրոց. * որ առաւելաւ 'ի մեզ 8

ամենայն իմաստութեամբ եւ գիտութեամբ:
9 * Եցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց, ըստ
հաճութեան իւրում. զոր յառաջագոյն եդ նո-
10 վաւ, * 'ի տնտեսութիւն լրման ժամանակաց,
բովանդակել զամենայն Քրիստոսիւ որ ինչ յեր-
11 կինս եւ որ ինչ յերկրի, 'ի նոյն: * Որով եւ մե-
ձակեցաք յառաջագոյն հրաւիրեալք, ըստ յա-
ռաջադրութեանն Աստուծոյ. որ զամենայն յա-
12 ջողէ ըստ խորհրդոց կամաց իւրոց. * լինել մեզ
'ի գովեստ փառաց նորա՝ յառաջագոյն յուսա-
13 ցելոցս 'ի Քրիստոս: * Որով եւ դուք իբրեւ
լուարուք զբանն ճշմարտութեան, զԱւետա-
րանն փրկութեան ձերոյ, որով հաւատացեալ
14 կնքեցայք Հոգւոյն Սրբոյ աւետեաց. * որ է առ-
հաւատչեայ ժառանգութեան մերոյ 'ի փրկու-
թիւն նուաճութեան, 'ի գովեստ փառաց նորա:
15 ԲԴ. * Վասն այնորիկ եւ ես իբրեւ լուայ
զհաւատսն ձեր որ 'ի տէր Յիսուս, եւ զսէրն
16 որ ընդ ամենայն սուրբս. * ոչ դադարեմ 'ի գո-
17 հանալոյ վասն ձեր՝ յիշել զձեզ յաղօթս. * զի
Աստուած Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայ-
րըն փառաց, տացէ ձեզ զհոգին իմաստութեան
18 եւ յայտնութեան՝ գիտութեամբն իւրով:* Լու-
սաւոր առնել զաչս սրտից, առ 'ի գիտելոյ մեզ՝
զինչ է յոյս կոչմանն նորա, եւ զինչ է մեծու-
թիւն փառաց ժառանգութեանն նորա 'ի սուր-
19 բըս. * եւ զինչ է առաւելութիւն մեծութեան
զօրութեան նորա 'ի մեզ հաւատացեալս, ըստ

յաջողութեան կարողութեան զօրութեանն իւ-
րոյ, * զոր յաջողեաց 'ի Քրիստոս ։ Զի յարոյց 20
զնա 'ի մեռելոց, եւ նստոյց ընդ աջմէ իւրմէ
յերկնաւորս, * 'ի վերայ ամենայն իշխանու- 21
թեան եւ պետութեան եւ զօրութեան եւ
տէրութեան, եւ ամենայն անուան անուանե-
լոյ, ոչ միայն յաշխարհիս յայսմիկ, այլ եւ 'ի հան-
դերձելումն. * եւ զամենայն ինչ հնազանդ ա- 22
րար 'ի ներքոյ ոտից նորա ։ Եւ զնա ետ գլուխ
'ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ, * որ է մար- 23
մին նորա, լրումն՝ որ զամենայն յամենայնի լնու ։

ԳԼՈՒԽ Բ.

Եւ դուք որ մեռեալն էիք 'ի մեղս ձեր եւ 1
յանցանս, * յորս երբեմն գնայիք ըստ յաւիտե- 2
նի աշխարհիս այսորիկ, ըստ իշխանին իշխանու-
թեան օդոյս այսոց, որ այժմ ընդմտեալ է յոր-
դիսն ապստամբութեան. * յորս եւ մեք ամե- 3
նեքեան շրջեաք երբեմն, 'ի ցանկութիւն մար-
մնոյ մերոյ, եւ առնէաք զկամս մարմնոյ եւ ըղ-
ձոաց, եւ էաք որդիք բարկութեան
իբրեւ այլքն ։

ԲԶ. * Այլ Աստուած որ մեծն է ողորմու- 4
թեամբ, վասն բազում սիրոյն իւրոյ զոր սիրեա-
ցն զմեզ, մինչդեռ մեռեալն էաք 'ի մեղս մեր,
* կենդանիս արար զմեզ 'ի Քրիստոս. քանզի շը- 5
նորհօք ապրեցաք. * ընդ նմին յարոյց, եւ ընդ 6
նմին նստոյց յերկնաւորս 'ի Քրիստոս Յիսուս.

7 * զի ցուցցէ 'ի յաւիտեանսն որ գալոցն են՝ զա-
ռաւել մեծութիւն շնորհացն իւրոց՝ քաղցրու-
8 թեամբ 'ի մեզ 'ի Քրիստոս Յիսուս ։ * Զի շնոր-
հօք նորա էք փրկեալք 'ի ձեռն հաւատոյն.
եւ այս ոչ 'ի ձէնջ, այլ Աստուծոյ պարգեւ է.
9 * ոչ 'ի գործոց, զի մի ոք պարծեսցի. * զի նորա
10 արարած եմք, հաստատեալք Քրիստոսիւ Յի-
սուսիւ 'ի գործս բարութեան, յորս յառաջա-
գոյն պատրաստեաց Աստուած, զի 'ի նոյն գը-
11 նասցուք ։ * Վասն որոյ եւ դուք յիշեցէք, զի
երբեմն հեթանոսք էիք մարմնով, որ կոչեցեալն
են անթլփատութիւն՝ յանուանեալ թլփատու-
12 թենէ անտի մարմնաւոր ձեռագործին. * զի է-
իք 'ի ժամանակին յայնմիկ առանց Քրիստոսի.
(եւ օտարացեալք յառաքինութենէն Իսրայէլի,)
եւ տարագիրք յուխտից աւետեացն, եւ յոյս
ինչ ոչ ունէիք, եւ անաստուածք էիք յաշխար-
13 հի ։ * Իսկ այժմ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի,
դուք՝ որ երբեմն հեռաւորքն էիք, մերձաւորք
14 եղերուք արեամբն Քրիստոսի ։ * Զի նա է խա-
ղաղութիւն մեր, որ արար զերկոսեան մի, եւ
զմիջնորմ ցանկոյն քակեաց՝ զթշնամութիւն 'ի
15 մարմնի իւրում, * եւ զօրէնս պատուիրանացն՝
հրամանօքն խափանեաց. զի զերկոսին հաստա-
16 տեսցէ ինքեամբ 'ի մի նոր մարդ, * եւ արասցէ
խաղաղութիւն, եւ հաշտեսցուսցէ զերկոսին
միով մարմնով ընդ Աստուծոյ խաչիւն իւրով ։
Քանզի սպան զթշնամութիւն յանձին իւրում,

* եւ եկն աւետարանեաց խաղաղութիւն ձեզ 17
հեռաւորաց , եւ խաղաղութիւն մերձաւորաց .
* զի նովաւ ունիմք զնուաճութիւն երկոքին մի- 18
ով Հոգւով առ Հայր ։ * Ապա այսուհետեւ ոչ 19
էք օտարք եւ պանդուխտք , այլ քաղաքակիցք
սրբոց եւ ընտանիք Աստուծոյ . * շինեալք ՚ի վե- 20
րայ հիման Առաքելոց եւ մարգարէից , որոյ է
գլուխ անկեանն Յիսուս Քրիստոս , * յորում ա- 21
մենայն շինուածն յօդեալ եւ պատշաճեալ աճէ
՚ի տաճար սուրբ Տէրամբ . * յորում եւ դուք 22
ընդ նմին շինիք ի բնակութիւն Աստուծոյ Հոգ-
ւով ։

ՎԶ

ԳԼՈՒԽ Գ.

Վասն այսորիկ ես Պաւղոս կապեալ Յիսու- 1
սի Քրիստոսի , վասն ձեր հեթանոսաց . * Թերե- 2
ւս լուեալ իցէ ձեր զտնտեսութիւն շնորհացն
Աստուծոյ , որ տուեալ են ինձ ՚ի ձեզ ։ * Զի ըստ 3
յայտնութեան ցուցաւ ինձ խորհուրդն , որպէս
յառաջագոյն գրեցի առ ձեզ սակաւուք , * առ 4
՚ի կարող լինելոյ ընթեռնուլ եւ ՚ի միտ առ-
նուլ զիմաստութիւնն իմ ՚ի խորհրդեանն Քրի-
ստոսի ։ * Զի այլոց ազգաց ոչ ցուցաւ որդ- 5
ւոց մարդկան , որպէս եւ այժմ յայտնեցաւ սըր-
բոց իւրոց՝ Առաքելոց եւ մարգարէից՝ Հոգւովն .
* լինել հեթանոսաց ժառանգակիցս եւ մարմնա- 6
կիցս , եւ հաղորդս աւետեացն ՚ի Քրիստոս Յի-
սուս՝ Աւետարանաւն , * որոյ եղէ ես սպասա- 7

ւոր , ըստ պարգեւաց շնորհացն Աստուծոյ որ
տուան ինձ՝ ըստ յաջողութեան զօրութեան
8 նորա ։ * Ինձ որ տրուպս եմ ամենայն սրբոց՝
տուան շնորհքս այս՝ ՚ի հեթանոսս աւետարա-
9 նել զանքնին մեծութիւնն Քրիստոսի . * եւ լու-
սաւոր առնել զամենեսին , թէ զինչ է տնտե-
սութիւն խորհրդոյն , որ ծածկեալ էր յամե-
նայն յաւիտենից՝ առ Աստուծոյ որ զամենայն
10 ինչ արար ։ * Զի յայտնեսցի արդ իշխանու-
թեանց եւ պետութեանց՝ որ յերկինս են , ՚ի
ձեռն եկեղեցւոյ՝ բազմապատիկ իմաստութիւ-
11 նըն Աստուծոյ . * ըստ յառաջադրութեան յա-
ւիտենիցն՝ զոր արար ՚ի ձեռն Տեառն մերոյ
12 Յիսուսի Քրիստոսի . * որով ունիմք զհամարձա-
կութիւն եւ զնուաճութիւն յուսով ՚ի ձեռն
13 հաւատոց նորա . * վասն որոյ աղաչեմ մի ձանձ-
րանալ ՚ի նեղութեանս մերում , որ վասն ձեր
է , որ է փառք մեր ։
14 * Վասն այսորիկ դնեմ ծունր առ Հայր Տեա-
15 ռըն մերոյ Յիսուսի Քրիստոսի , * ուստի ամենայն
նահապետութիւն յերկինս եւ յերկրի անուա-
16 նի , * զի տացէ ձեզ ըստ մեծութեան փառաց
իւրոց , հաստատել զօրութեամբ ՚ի ձեռն Հոգ-
17 ւոյն իւրոյ , * ՚ի ներքին մարդն բնակել Քրիստո-
սի հաւատովք ՚ի սիրտս ձեր . սիրով արմատա-
18 ցեալք եւ հաստատեալք ։ * Զի կարող լինիջիք
հասանել ընդ ամենայն սուրբս , զինչ է լայնու-
թիւն եւ երկայնութիւն , եւ բարձրութիւն եւ

խորութիւն. *ճանաչել զառաւելութիւն գի- 19
տութեան սիրոյն Քրիստոսի. զի լցջիք ամենայն
լրութեամբն Աստուծոյ: *Այլ այնմ որ կարօղն 20
է առաւել քան զամենայն ինչ առնել յաճա-
խութեամբ՝ քան զոր խնդրեմքն եւ իմանամք,
ըստ զօրութեանն որ յաջողեալն է ՚ի մեզ, *նմա 21
փառք յեկեղեցւոջն եւ ՚ի Քրիստոս Յիսուս, յա-
մենայն ազգս յաւիտենից յաւիտեանս. ամէն:

ԳԼՈՒԽ Դ.

Արդ աղաչեմ զձեզ՝ ես որ կապեալս եմ ՚ի 1
Տէր՝ արժանի գնալ կոչմանն յոր կոչեցարուք.
*ամենայն խոնարհութեամբ եւ հեզութեամբ 2
եւ երկայնմտութեամբ, անսալ միմեանց սիրով.
*փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յօ- 3
դիւ խաղաղութեան. *մի մարմին եւ մի հո- 4
գի, որպէս եւ կոչեցարուք ՚ի մի յոյս կոչման
ձերոյ: *Մի է Տէր, մի հաւատք, մի մկրտու- 5
թիւն. *մի Աստուած եւ հայր ամենեցուն, որ 6
՚ի վերայ ամենայնի եւ ընդ ամենեսին եւ յա-
մենեսին ՚ի մեզ: *Այլ իւրաքանչիւր ումեք ՚ի 7
մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պարգեւա-
ցն Քրիստոսի. վասն որոյ եւ ասէ. *Ել ՚ի բար- 8
ձունս՝ գերեաց զգերութիւն, եւ ետ պարգե-
ւս մարդկան: *Որ ելն զինչ է, եթէ ոչ զի 9
էջ նախ ՚ի ստորին կողմ երկրի. *որ էջն, նոյն 10
է եւ որ ելն ՚ի վերոյ քան զամենայն երկինս,

11 զի լցէ զամենայն: *Եւ նա ետ զոմանս Առա-
քեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետա-
12 րանիչս, զոմանս հովիւս եւ վարդապետս, *՚ի
հաստատութիւն սրբոց, ՚ի գործ պաշտաման,
13 ՚ի շինուած մարմնոյն Քրիստոսի. *մինչեւ հաս-
ցուք ամենեքեան ՚ի մի միաբանութիւն հաւա-
տոյ եւ գիտութեան Որդւոյն Աստուծոյ, յայր
կատարեալ ՚ի չափ հասակի կատարմանն Քրիս-
14 տոսի: *Զի մի՛ յայսմհետէ լիցուք տղայք խռո-
վեալք եւ տատանեալք յամենայն հողմոյ վար-
դապետութեան, խաբէութեամբ մարդկան,
խորամանկութեամբ ՚ի խաբէութիւն մոլորու-
15 թեան. *այլ ճշմարտեալք սիրով՝ աճեցու-
ցուք ՚ի նա զամենայն, որ է գլուխ Քրիստոս.
16 *ուստի ամենայն մարմինն յօդեալ եւ պատշա-
ճեալ ամենայն խաղալեօք տարբերութեան՝
ըստ ազդեցութեան՝ չափով ըստ իւրաքանչիւր
մասին՝ զաճումն մարմնոյ գործէ՝ ՚ի շինած ան-
ձին իւրոյ սիրով:
17 *Արդ զայս ասեմ եւ ուխտեմ ՚ի Տէր. մի՛
եւս ձեզ զնոյն օրինակ գնալ, որպէս եւ այլ հե-
թանոսք գնան՝ ունայնութեամբ մտաց իւ-
18 րեանց. *որոց խաւարեալ են միտք իւրեանց,
եւ օտարացեալ են ՚ի կենաց անտի Աստուծոյ,
վասն տգիտութեանն որ է ՚ի նոսա, վասն
19 կուրութեան սրտից իւրեանց. *որք զանձանց
իւրեանց զյոյսն հատին, եւ մատնեցին զանձինս
գիջութեան, ՚ի գործս ամենայն պղծութեան

ագահութեամբ։ * Այլ դուք ոչ այդպէս ուսա- 20
րուք զՔրիստոս. * Թէպէտ և լուարուք զնմա- 21
նէ՝ և նովաւ ուսայք, որպէս է ճշմարտու-
թիւնն Յիսուսի. * ՚ի բաց մերկանալ ՚ի ձէնջ ըստ 22
առաջին գնացիցն զմարդն հին, զապականեալն
ցանկութեամբք խաբէութեանն, * և նորոգել 23
հոգւովն մտաց ձերոց, * և զգենուլ զնոր մար- 24
դն՝ որ ըստ Աստուծոյն հաստատեալ է, արդա-
րութեամբ և սրբութեամբ ճշմարտութեանն։
* Վասն որոյ ՚ի բաց ընկեցէք զստութիւն, խօ- 25
սեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ
ընկերի իւրում. զի եմք միմեանց անդամք.
* Բարկանայք՝ և մի մեղանչէք, արեգակն ՚ի 26
վերայ բարկութեան ձերոյ մի մտցէ, * և մի 27
տայք տեղի սատանայի։ * Որ գողանայրն՝ մի ևս 28
գողասցի, այլ մանաւանդ վաստակեսցէ գործել
ձեռօք իւրովք զբարիս, զի բաւական լիցի տալ
ում պիտոյ իցէ։ * Ամենայն բան տգեղ ՚ի բե- 29
րանոյ ձերմէ մի ելցէ. այլ որ ինչ բարին է, ՚ի
շինած պիտոյից, զի տացէ շնորհս այնոցիկ որ
լսենն. * և մի տրտմեցուցանէք զՀոգին Սուրբ 30
Աստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն փրկու-
թեան։ * Ամենայն դառնութիւն և բարկու- 31
թիւն և սրտմտութիւն և աղաղակ և հայ-
հոյութիւն՝ բարձցի ՚ի ձէնջ ամենայն չարու-
թեամբն հանդերձ։ * Լերուք ընդ միմեանս քաղ- 32
ցունք՝ գթածք, շնորհել միմեանց՝ որպէս և
Աստուած Քրիստոսիւ շնորհեաց մեզ։

ԳԼՈՒԽ Ե.

1 Եղերուք նմանօղք Աստուծոյ՝ իբրև որդիք
2 սիրելիք, * և գնացէք սիրով որպէս և Քրիս-
տոս սիրեաց զմեզ, և մատնեաց զանձն իւր
վասն մեր՝ պատարագ և զենումն Աստուծոյ ՚ի
հոտ անուշից։
3 * Այլ պոռնկութիւն և ամենայն պղծու-
թիւն կամ ագահութիւն՝ և անուանեսցի մի
4 ՚ի միջի ձերում, որպէս և վայելէ սրբոց. * և
զաղտութիւն, կամ խօսք յիմարութեան, կամ
խեղկատակութիւն, որ ոչ վայելէ. այլ մանա-
5 ւանդ գոհութիւն։ * Զայս տեղեկացեալ գի-
տասջիք, թէ ամենայն պոռնիկ, կամ պիղծ,
կամ ագահ՝ որ է կռապաշտ, ոչ ունի
ժառանգութիւն յարքայութեանն Քրիստոսի
6 և Աստուծոյ։ * Մի ոք զձեզ խաբեսցէ բա-
նիւք սնոտիօք. զի վասն այսորիկ իսկ գայ
բարկութիւն Աստուծոյ ՚ի վերայ որդւոցն ան-
7 հաւանութեան։ * Մի այսուհետև լինիք բա-
8 ժանորդք նոցա. * զի թէպէտ և երբեմն էիք
խաւար, արդ լոյս էք ՚ի Տէր, իբրև զորդիս
9 լուսոյ գնացէք. * զի պտուղ լուսոյ ամենայն բա-
րութեամբ է և արդարութեամբ և ճշմար-
10 տութեամբ։ * Փորձեցէք՝ զինչ է հաճոյ Տեառն,
11 * և մի կցորդ լինիք անպտղութեան գործոյն
12 խաւարի, այլ մանաւանդ յանդիմանեցէք. * զի
որ ՚ի ծածուկ ինչ գործի ՚ի նոցանէ, զայն և խօ-

սել ամօթալի է ․ * այլ ամենայն ինչ յանդիմա- 13
նեալ 'ի լուսոյ՝ յայտնի լինի, զի ամենայն ինչ որ
յայտնի է՝ լոյս է ։ * Վասն որոյ եւ ասէ ․ արի 14
որ ննջեսդ, եւ կանգնեաց 'ի մեռելոց, եւ լու-
սատու լիցի քեզ Քրիստոս ։

ԹԿ․ * Տեսջիք՝ որպէս ճշմարտիւ գնայցէք ․ 15
մի իբրեւ անիմաստք, * այլ իբրեւ իմաստունք ․ 16
գնեցէք զժամանակս, զի աւուրքս չարութեան
են ․ * վասն այնորիկ մի լինիք անմիտք, այլ իմա- 17
ցարուք զինչ են կամք Տեառն ։ * Եւ մի արբե- 18
նայք գինւով՝ յորում զեղխութիւն է, այլ մա-
նաւանդ լցարուք հոգւով ․ * խօսել 'ի միտս ձեր 19
սաղմոսիւք եւ օրհնութեամբք, եւ երգովք հո-
գեւորօք, երգել եւ սաղմոս ասել 'ի սիրտս ձեր
Տեառն ։ * Գոհացարուք յամենայն ժամ 'ի վերայ 20
ամենայնի, յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի՝ Հօրն եւ Աստուծոյ ․ * հնազանդ լերուք մի- 21
մեանց երկիւղիւն Քրիստոսի ։

* Կանայք իւրեանց արանց հնազանդ լիցին 22
իբրեւ Տեառն ․ * զի այր է գլուխ կնոջ, որպէս 23
եւ Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, եւ ինքն է
փրկիչ մարմնոյ ․ * այլ որպէս եկեղեցին հնազանդ 24
լինի Քրիստոսի, նոյնպէս եւ կանայք իւրեանց
արանց յամենայնի ։ * Արք, սիրեցէք զկանայս 25
ձեր, որպէս եւ Քրիստոս սիրեաց զեկեղեցի, եւ
զանձն իւր մատնեաց վասն նորա, * զի զնա սըր- 26
բեսցէ սրբութեամբ աւազանին բանիւ ․ * զի կա- 27
ցուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղե-

ցի, զի մի ունիցի ինչ արատ, կամ աղտեղու-
թիւն, կամ այլ ինչ յայսպիսեաց ․ այլ զի իցէ
28 սուրբ եւ անարատ ։ * Նոյնպէս պարտին արք
սիրել զիւրեանց կանայս՝ իբրեւ զիւրեանց մար-
29 մինս ․ որ սիրէ զկին իւր, զանձն իւր սիրէ ․ * զի
ոչ ոք երբէք ատեաց զանձն իւր, այլ սնուցանէ
եւ դարմանէ զնա, որպէս եւ Քրիստոս զեկե-
30 ղեցի ․ * զի անդամք եմք մարմնոյ նորա, 'ի մար-
31 մնոյ նորա եւ յոսկերաց նորա ։ * Վասն այսորիկ
թողցէ այր զհայր եւ զմայր իւր, եւ երթիցէ
զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկոքին 'ի մար-
32 մին մի ։ * Խորհուրդս այս մեծ է, բայց ես ա-
33 սեմ խակ 'ի Քրիստոս եւ յեկեղեցի ․ * այլ եւ դուք
նոյնպէս մի ըստ միոջէ ․ զի իւրաքանչիւր ոք զիւր
կին այնպէս սիրեսցէ՝ իբրեւ զիւր անձն, եւ կին
երկնչիցի յառնէ իւրմէ ։

ԳԼՈՒԽ Զ.

1 ԹԳ․ Որդիք, հնազանդ լերուք ծնողաց ձե-
2 րոց 'ի Տէր, զի այն է արժանն ։ * Պատուեա ըզ-
հայր քո եւ զմայր, որ է առաջին պատուիրան
3 յաւետիւն, * զի քեզ բարի եղիցի, եւ երկայնա-
4 կեաց լինիցիս 'ի վերայ երկրի ։ * Հարք, մի զայ-
րացուցանէք զորդիս ձեր, այլ սնուցանիջիք ըզ-
5 նոսա խրատու եւ ուսմամբ Տեառն ․ * Ծառայք,
հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց,
ահիւ եւ դողութեամբ եւ միամտութեամբ սըր-
6 տից ձերոց՝ որպէս եւ Քրիստոսի ։ * Մի առ ակա-

նէ ծառայել իբրեւ մարդահաճոյք, այլ իբրեւ
ծառայք Քրիստոսի առնել զկամս Աստուծոյ.
* սրտի մտօք ծառայել իբրեւ Տեառն, եւ մի 7
իբրեւ մարդկան. * գիտասջիք թէ իւրաքանչիւր 8
ոք որ զինչ առնէ զբարին՝ զնոյն ընդունի ՚ի
Տեառնէ, եթէ ծառայ եւ եթէ ազատ: * Եւ 9
դուք, տեարք, զնոյն առնիջիք առ նոսա, նե-
րելով առնել զսպառնալիսն. գիտասջիք՝ թէ եւ
նոցա եւ ձեր Տէր գոյ յերկինս, եւ ակնառու-
թիւն ոչ գոյ առաջի նորա: ԿԶ

* Այսուհետեւ զօրացարուք Տերամբ եւ կա- 10
րողութեամբ զօրութեան նորա. * եւ զգեցա- 11
րուք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կա-
րող լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի:
* Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ 12
արեան, այլ ընդ իշխանութիւնս եւ ընդ պե-
տութիւնս, եւ ընդ աշխարհակալս խաւարիս
այսորիկ՝ ընդ այսս չարութեան որ ՚ի ներքոյ
երկնից:

Թ.Զ. * Վասն այսորիկ առէք զսպառազի- 13
նութիւնն Աստուծոյ, զի կարող լինիցիք ՚ի դի-
մի հարկանել չարին յաւուրն չարութեան: * Եւ 14
իբրեւ զամենայն ինչ կատարիցէք, հաստատուն
կացէք, զտեղի կալջիք, պնդեալ զմէջս ձեր ճշ-
մարտութեամբ, եւ զգեցեալ զզրահս արդա-
րութեան, * եւ ագուցեալ զոտս պատրաստու- 15
թեամբ Աւետարանին խաղաղութեան: * Եւ ՚ի 16
վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոյ,

որով կարող լինիջիք զամենայն նետս մխիս չա-
17 րին շիջուցանել. * եւ առէք զսաղաւարտն փրկ-
կութեան, եւ զսուսեր Հոգւոյն՝ որ է բանն Աս-
18 տուծոյ. * ամենայն աղօթիւք եւ խնդրուածովք՝
աղօթս առնել յամենայն ժամանակի հոգւով.
եւ ՚ի նոյն տքնեսջիք ամենայն ժուժկալու-
թեամբ եւ խնդրուածովք՝ վասն ամենայն սըր-
19 բոց, * եւ վասն իմ, զի ինձ տացի բան ՚ի բա-
նալ բերանոյ իմոյ՝ համարձակութեամբ ցու-
20 ցանել զխորհուրդս Աւետարանին, * վասն որոյ
պատգամաւորիմ կապանօքս, զի նովին համար-
ձակեցայց որպէս եւ պարտ իցէ ինձ խօսել:
21 * Բայց զի գիտիցէք եւ դուք զինէն զինչ գոր-
ծիցեմ, զամենայն ինչ ցուցցէ ձեզ Տիւքիկոս սի-
րելի եղբայր եւ հաւատարիմ պաշտօնեայ ՚ի
22 Տէր. * զոր առաքեցի առ ձեզ դմին իրի, զի
գիտասջիք դուք զմէնջ, եւ մխիթարեսցէ զսիր-
23 տս ձեր: * Խաղաղութիւն ընդ եղբարս, եւ
սէր հաւատովքն հանդերձ յԱստուծոյ ՚ի Հօրէ
24 եւ ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: * Շնորհք
ընդ ամենեսին՝ որք սիրեն զՏէր մեր Յիսուս
Քրիստոս անեղծութեամբ:

Առ Եփեսացիս՝ Գրեցաւ ՚ի Հռոմէ ՚ի ձեռն
Տիւքիկոսի:

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

ԺԿ. Պաւղոս եւ Տիմոթէոս ծառայք Յի- 1
սուսի Քրիստոսի՝ ամենայն սրբոց 'ի
Քրիստոս Յիսուս, որ են 'ի կողմանս Փիլիպեց-
ւոց, եպիսկոպոսակցօք եւ սարկաւագօք: * Շը- 2
նորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ
Հօրէ մերմէ, եւ 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:
* Գոհանամ զԱստուծոյ իմոյ 'ի վերայ ամե- 3
նայն յիշատակաց ձերոց. * յամենայն ժամ յա- 4
մենայն խնդրուածս իմ վասն ձեր ամենեցուն
առնել աղօթս խնդութեամբ, * վասն հաղոր- 5
դութեան ձերոյ ընդ Աւետարանին՝ յօրէ յա-
ռաջնմէ մինչեւ ցայժմ: * Վստահ եմ յայդ, թէ 6
որ սկսաւն 'ի ձեզ զգործս բարեաց՝ կատարես-
ցէ մինչեւ յօրն Յիսուսի Քրիստոսի. * որպէս ի- 7
րաւ իսկ թուի ինձ խորհել զայս վասն ձեր ա-
մենեցուն, վասն ունելոյ ինձ զձեզ 'ի սրտի 'ի
կապանս իմում և 'ի պատասխանատուութեան

խմում եւ 'ի հաստատութեան Աւետարանին,
կցորդս ինձ շնորհացս զձեզ ամենեսին լինել:
8 * Վկայ է ինձ Աստուած, որպէս անձկացեալ
եմ առ ձեզ ամենեսին գթովքն Քրիստոսի Յի-
9 սուսի. * եւ զայն աղօթս առնեմ, զի սէրն ձեր
եւս քան զեւս առաւել լցի 'ի գիտութեան
10 եւ յամենայն խմաստութեան. * ընտրել ձեզ
զլաւն, զի լիջիք հաստատունք եւ առանց գայ-
11 թագղութեան 'ի յաւուրն Քրիստոսի. * լցեալ
պտղովք արդարութեան 'ի ձեռն Յիսուսի Քը-
րիստոսի, 'ի փառս եւ 'ի գովեստ Աստուծոյ:
12 ԺԴ. * Կամիմ թէ գիտիցէք, եղբարք, զի որ
ինչ վասն իմ էր, եւս քան զեւս 'ի յառաջադի-
13 մութիւն Աւետարանին եկն. * մինչեւ կապանաց
իմոց յայտնի լինել 'ի Քրիստոս յամենայն հրա-
14 պարակս, եւ առ այլս ամենեսեան. * եւ առ բա-
զում եղբարս 'ի Տէր, որ վստահ են կապանօքս
իմովք, առաւել եւս համարձակել՝ առանց եր-
15 կիւղի զբանն Աստուծոյ խօսել: * Ոմանք առ նա-
խանձու եւ հակառակութեան, եւ ոմանք մը-
16 տադիւրութեամբ իսկ զՔրիստոս քարոզեն. * եւ
ոմանք 'ի սիրոյ, քանզի գիտեն եթէ 'ի պատաս-
17 խանատուութիւն Աւետարանին կամ. * եւ ո-
մանք առ հեստութեան զՔրիստոս պատմեն,
այլ ոչ սրբութեամբ. քանզի համարին նեղու-
թիւնս յարուցանել 'ի վերայ կապանաց իմոց:
18 * Բայց այս զի՞նչ է. որով օրինակաւ եւ իցէ,
եթէ պատճառանօք եւ եթէ ճշմարտութեամբ,

Քրիստոս պատմի. եւ ընդ այս խնդամ, այլ եւ
ուրախ եւս եղէց. * զի գիտեմ եթէ այս պա- 19
հի ինձ ՚ի փրկութիւն ՚ի ձերոց խնդրուածոց.
եւ ՚ի պարգեւաց Հոգւոյն Յիսուսի Քրիստոսի,
* ըստ ակնկալութեան եւ յուսոյն իմոյ. զի մի 20
իւիք յամօթ եղէց, այլ ամենայն համարձակու-
թեամբ՝ որպէս յամենայն ժամ՝ եւ այժմ մե-
ծասցի Քրիստոս ՚ի մարմնի իմում, եթէ կենօք
եւ եթէ մահու: * Զի ինձ կեանք Քրիստոս է, 21
եւ մեռանել շահ. * ապա եթէ կեանքս մար- 22
մնոյ, այս ինձ պտուղ գործոյ է. եւ զինչ ընտ-
րեցից, զայն ոչ գիտեմ. * Նեղեալ եմ յերկո- 23
ցունց, զցանկալն ելանել եւ ընդ Քրիստոսի լի-
նել՝ առաւել լաւ համարիմ, * եւ կալ մնալ ա- 24
տէն ՚ի մարմնի՝ կարեւոր եւս վասն ձեր: * Եւ 25
զայս յուսացեալ գիտեմ, եթէ կացից եւ մը-
նացից ամենեցուն ձեզ, ՚ի ձեր զարգանալ եւ
ուրախ լինել ՚ի հաւատս. * զի պարծանք ձեր 26
առաւել լինիցին ՚ի Քրիստոս Յիսուս ինեւ ՚ի
միւսանգամ գալստեան իմում առ ձեզ: ՎԶ
* Միայն թէ արժանի Աւետարանին գնայ- 27
ցէք. զի եթէ գայցեմ եւ տեսանիցեմ զձեզ,
եւ եթէ հեռի իցեմ եւ լսիցեմ զձէնջ, զի հաս-
տատուն կայցէք ՚ի մի հոգի, եւ միով շնչով
նահատակիցիք ՚ի հաւատս Աւետարանին. * եւ 28
մի զանգիտիցէք եւ մի իւիք ՚ի հակառակորդաց
անտի, որ է նոցա հանդէս կորստեան, եւ ձե-
րոյ փրկութեան: * Եւ այդ յԱստուծոյ է, որ 29

ձեզ շնորհեցաւ վասն Քրիստոսի, ոչ միայն ՚ի
նա հաւատալ՝ այլ եւ վասն նորա չարչարել.
30 * զնոյն պատերազմ ունել՝ զոր յիս տեսէք, եւ
այժմ լսէք յինէն:

ԳԼՈՒԽ Բ.

1 Արդ եթէ մխիթարութիւն ինչ իցէ ՚ի Քրիս-
տոս, եթէ սփոփութիւն սիրոյ, եթէ հաղոր-
դութիւն հոգւոյ, եթէ գթութիւն եւ ողոր-
2 մութիւն, * լցէք զխնդութիւնս իմ. զնոյն խոր-
հիցիք, զնոյն սէր յանձին ունիցիք, համաշունչք,
3 միախորհուրդք. * մի ինչ ըստ գրգռութեան
եւ մի ինչ ըստ սնապարծութեան, այլ խոնար-
հութեամբ զմիմեանս լաւ համարել առաւել
4 քան զանձինս. * մի զանձանց եւեթ գիտել,
5 այլ իւրաքանչիւր ոք զընկերին: * Զայն խորհես-
ցի իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ, որ եւ ՚ի Քրիստոս
6 Յիսուս. * որ ՚ի կերպարանս Աստուծոյ է, ոչ ինչ
յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւա-
7 սար Աստուծոյ. * այլ զանձն ունայնացոյց՝ զկեր-
պարանս ծառայի առեալ, ՚ի նմանութիւն
մարդկան եղեալ, եւ կերպարանօք գտեալ իբ-
8 րեւ զմարդ. * խոնարհեցոյց զանձն, լեալ հը-
9 նազանդ մահու չափ եւ մահու խաչի. * Վասն
որոյ եւ Աստուած զնա առաւել բարձրացոյց,
եւ շնորհեաց նմա անուն որ ՚ի վեր է քան զա-
10 մենայն անուն. * զի յանուն Յիսուսի Քրիստոսի

ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց եւ
երկրաւորաց եւ սանդարամետականաց. * եւ 11
ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր է Յի-
սուս Քրիստոս 'ի փառս Աստուծոյ Հօր:

ԺԶ. * Այսուհետեւ, սիրելիք իմ, որպէս 12
յամենայնի հնազանդեցարուք, մի միայն 'ի գա-
լըստեան իմում, այլ առաւել եւս այժմ՝ յոր-
ժամ հեռի եմ 'ի ձէնջ, ահիւ եւ դողութեամբ
զանձանց փրկութիւն գործեցէք. * զի Աստուած 13
է որ յաջողէ 'ի մեզ զկամելն եւ զառնելն վասն
հաճութեան: * Զամենայն ինչ գործեցէք առանց 14
տրտնջելոյ եւ քրթմնջելոյ. * զի եղիջիք անբիծք 15
եւ անարատք՝ որդիք Աստուծոյ, անմեղք 'ի մէջ
կամակոր եւ խեղաթիւր ազգին. յորոց միջի ե-
րեւիջիք իբրեւ լուսաւորք յաշխարհի. * զբանն 16
կենաց ունել յանձինս՝ 'ի պարծանս ինձ յաւու-
րըն Քրիստոսի, զի ոչ ընդունայն ինչ ընթացայ,
եւ ոչ ընդունայն վաստակեցի: * Այլ թէպէտ 17
եւ նուիրիմ 'ի վերայ պատարագի եւ պաշտա-
ման հաւատոցն ձերոց. խնդամ եւ ուրախակից
եմ ամենեցուն ձեր. * նոյնպէս եւ դուք խըն- 18
դացէք եւ ուրախակից եղերուք ինձ:

* Բայց յուսամ 'ի Տէր Յիսուս՝ զՏիմոթէոս 19
վաղվաղակի արձակել առ ձեզ. զի եւ ինձ սրտի
դիւր լինիցի. յորժամ գիտիցեմ ինչ զձէնջ. * զի 20
ոչ զոք ունիմ համաշունչ, եթէ ընտանեբար
հոգայցէ վասն ձեր. * զի ամենեքին զանձանց 21
խնդրեն, եւ ոչ զՅիսուսի Քրիստոսի: * Բայց ըզ- 22

փորձ նորա գիտէք եւ դուք, զի իբրեւ որդի
23 հօր ծառայեաց ընդ իս յԱւետարանին. * արդ-
զսա ակն ունիմ արձակել. որպէս նոյնհետայն
24 զանձնէ ստուգեցից. * այլ յուսացեալ եմ 'ի
25 Տէր՝ թէ եւ ես իսկ ընդ հուպ եկից: * Բայց
լաւ համարեցայ զԷպափրոդիտոս զեղբայր եւ
զգործակից եւ զզինուորակից իմ, զձեր Առա-
քեալ եւ զպաշտօնեայ խնդրոյ պիտոյից՝ առաքել
26 առ ձեզ. * քանզի եւ ինքն իսկ յոյժ անձկացեալ
է տեսանել զամենեսին զձեզ. եւ հոգայր, զի
27 ձեր լուեալ էր թէ խօթացաւ. * եւ արդարեւ
խօթեցաւ մերձ 'ի մահ, այլ Աստուած ողոր-
մեցաւ նմա, ոչ նմա միայն, այլ եւ ինձ. զի
մի տրտմութիւն 'ի վերայ տրտմութեան կրի-
28 ցեմ: * Արդ փութապէս յղեցի զնա, զի տե-
սեալ զնա միւսանգամ ուրախ լինիցիք. եւ ես
29 առանց տրտմութեան եղէց: * Ընկալջիք զնա
'ի Տէր ամենայն խնդութեամբ, եւ զայնպիսիս
30 առ պատուականս ունիջիք. * զի վասն գործոյ
Տեառն մինչեւ 'ի մահ մերձեցաւ, դուն գոր-
ծեալ ոգւովք չափ, զի լցցէ զձեր պակասու-
թիւն իմոյ սպասաւորութեան: ՎԶ

ԳԼՈՒԽ Գ.

1 Այսուհետեւ, եղբարք իմ, ուրախ լերուք
'ի Տէր. զնոյն գրել առ ձեզ ինձ ոչ դանդաղելի
2 է, եւ ձեզ կարի զգուշալի: * Զգոյշ եղերուք 'ի
շանց անտի, զգոյշ եղերուք 'ի չար մշակաց ան-

տի, զգոյշ եղերուք ՚ի կրճատութենէ անտի.
*զի թլփատութիւնն մեք եմք, որ հոգւովն Աս- 3
տուծոյ պաշտեմք, եւ պարծիմք ՚ի Քրիստոս Յի-
սուս, եւ ոչ ՚ի մարմին պանծացեալ եմք: *Թէ- 4
պէտ եւ ես իսկ զնոյն վստահութիւն ունիմ եւ
՚ի մարմնի. եթէ ոք համարիցի այլազգ վստահ
լինել ՚ի մարմին, առաւել եւս ես. *Թլփատու- 5
թեամբ ութօրեայ, յազգէ Իսրայէլի, ՚ի ցեղէ
Բենիամինի, եբրայեցի յեբրայեցւոց, ըստ օրի-
նացն փարիսեցի, *ըստ նախանձայոյզ լինելոյ՝ 6
հալածէի զեկեղեցին, ըստ արդարութեան օրի-
նացն լեալ անարատ: *Այլ որ ինչ ինձ շահն 7
էր, զայն վնաս համարիմ վասն Քրիստոսի. *այլ 8
եւ համարիմ իսկ զամենայն վնաս՝ վասն առա-
ւել գիտութեանն Յիսուսի Քրիստոսի Տեառն մե-
րոյ. վասն որոյ յամենայնէ զրկեցայ՝ եւ համա-
րիմ կղկղանս, զի զՔրիստոս շահեցայց, եւ գը-
տայց ՚ի նմա. *Իբրեւ ոչ եթէ զիմ ինչ արդա- 9
րութիւն՝ որ յօրինաց անտի է՝ ունիցիմ, այլ
զհաւատոյն Քրիստոսի՝ որ յԱստուծոյ արդա-
րութիւնն է. *Հաւատովք ճանաչել զնա, եւ 10
զզօրութիւն յարութեան նորա, եւ զհաղոր-
դութիւն չարչարանաց նորա, կերպարանակից
լինել մահու նորա, *թէ որպէս հասից ՚ի մե- 11
ռելոցն յարութիւն: *Իբր ոչ եթէ արդէն ա- 12
ռեալ իցէ, կամ արդէն կատարեալ իցեմ. զհետ
մտեալ եմ թէ հասից, մանաւանդ թէ ըմբռ-
նեալ իսկ իցեմ ՚ի Քրիստոսէ Յիսուսէ: *Եղբարք, 13

ես ոչ համարիմ զանձն իմ թէ հասեալ իցեմ.
բայց մի ինչ է, զի զառ ՚ի յետոյն մոռացեալ
14 է, եւ ՚ի յառաջադէմն նկրտեալ եմ. *ուշ ե-
դեալ ընթանամ ՚ի կէտ կոչմանն Աստուծոյ, ՚ի
15 Քրիստոս Յիսուս: *Այսուհետեւ որ միանգամ
կատարեալքդ էք՝ զայս խորհեցարուք. եւ եթէ
այլ ազգ ինչ խորհիցիք, սակայն եւ զայն Աս-
16 տուած ձեզ յայտնեսցէ: *Բայց յոր ժամանե-
ցաք՝ զնոյն խորհել, եւ նմին կանոնի միաբան
17 լինել. *Նմանօղք ինձ եղիջիք, եղբարք, եւ դի-
տասջիք զայնպիսիսն որ այնպէսն գնայցեն, որ-
18 պէս ունիքդ զմեզ ձեզ օրինակ: *Զի բազումք
գնան, զորոց բազում անգամ ասէի ձեզ. բայց
արդ եւ լալով իսկ ասեմ զթշնամեաց խաչին
19 Քրիստոսի. *որոց կատարածն կորուստ է, որոց
Աստուած որովայնն իւրեանց է, եւ փառք ա-
մօթն իւրեանց, որք զերկրաւորս եւեթ խոր-
20 հին: *Այլ մեր առաքինութիւնն յերկինս է,
ուստի եւ փրկչին ակն ունիմք՝ տեառն Յիսու-
21 սի Քրիստոսի. *որ նորոգեսցէ զմարմին խոնար-
հութեան մերոյ, կերպարանակից լինել մար-
մնոյ փառաց իւրոյ, ըստ զօրութեանն՝ առ ՚ի
կարօղ լինելոյ հնազանդեցուցանել ընդ իւրեւ
զամենայն:

ԳԼՈՒԽ Դ.

1 Այսուհետեւ, եղբարք իմ սիրելիք եւ անձ-
կալիք, ուրախութիւն իմ եւ պսակ, այսպէս
2 հաստատուն կացէք ՚ի Տէր, սիրելիք. *զԵւո-

դիա աղաչեմ, եւ զՍիւնտիքէ աղաչեմ զնոյն խոր-
հել ՚ի Տէր ։ * Այո աղաչեմ եւ զքեզ, մտերիմ 3
իմ եւ լծակից, եւ դու օգնական լինիջիր նոցա՝
որք յԱւետարանին նահատակեցան ընդ իս Կղե-
մաւ հանդերձ, եւ այլովք գործակցօք իմովք,
որոց անուանքն ՚ի դպրութեան կենաց ։ * Ու- 4
րախ լերուք ՚ի Տէր յամենայն ժամ. դարձեալ
ասեմ, ուրախ լերուք. * հեզութիւն ձեր յայտ- 5
նի լիցի ամենայն մարդկան. Տէր մերձ է ։ * Մի 6
ինչ հոգայք. այլ ամենայն աղօթիւք եւ խըն-
դրուածովք, գոհութեամբ խնդրուածք ձեր
յայտնի լիցին առ Աստուած. * Եւ խաղաղու- 7
թիւնն Աստուծոյ՝ որ ՚ի վեր է քան զամենայն մի-
տս, պահեսցէ զսիրտս ձեր եւ զմիտս ՚ի Քրիս-
տոս Յիսուս ։

Ակ. * Այսուհետեւ, եղբարք, որ ինչ ճըշ- 8
մարտութեամբ է, որ ինչ պարկեշտութեամբ,
որ ինչ արդարութեամբ, որ ինչ սրբութեամբ,
որ ինչ սիրով, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ
քաջութեամբ, որ ինչ գովութեամբ, զայն խոր-
հիջիք. * զոր ուսարուքն եւ ընկալարուք, եւ 9
լուայք եւ տեսէք յիս, զայն արարէք. եւ Աս-
տուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ ։

* Ուրախ եղէ ես ՚ի Տէր յոյժ, զի եւ դուք 10
զմտաւ ածէք հոգալ ինչ վասն իմ, որպէս եւ
հոգայիքն. բայց պարապէիք իմնէ. * Իբր ոչ առ 11
կարօտութեան ինչ ասեմ. զի ես ուսայ՝ որովք
կարեմ բաւական լինել ։ * Գիտեմ նուաղել, գի- 12

տեմ առաւելուլ. յամենայնի ամենեւին խելա-
մուտ եմ, եւ յագել եւ քաղցենալ, եւ առա-
13 ւելուլ եւ նուաղել. * յամենայնի կարօղ եմ այ-
14 նու որ զօրացուցն զիս. * բայց բարւոք արարէք
15 զի կցորդ եղերուք ինձ ՚ի նեղութեանս ։ * Գի-
տէք եւ դուք, փիլիպեցիք, զի ՚ի սկզբան Աւե-
տարանին իբրեւ ելի ես ՚ի Մակեդոնիա՝ եւ ոչ
մի եկեղեցի հաղորդեաց ինձ յաղագս տալոյ եւ
16 առնլոյ, բայց միայն դուք. * զի եւ ՚ի Թեսա-
ղոնիկէ միանգամ եւ երկիցս զպէտս իմ ետուք
17 բերել ։ * Իբր ոչ եթէ խնդրեմ զտուրսն, այլ
խնդրեմ զպտուղն որ յաճախէ ՚ի բան ձեր ։
18 * Այլ իմ առեալ զամենայն եւ առաւելեալ եմ,
ընկալայ եւ լի եմ ՚ի ձեռն Եպափրոդիտեայ, որ
՚ի ձէնջ հոտ անուշից, պատարագ ընդունելի՝
19 հաճոյ Աստուծոյ ։ * Եւ Աստուած իմ լի արաս-
ցէ զամենայն պէտս ձեր, ըստ իւրում մեծու-
20 թեանն՝ փառօք ՚ի Քրիստոս Յիսուս ։ * Այլ Աս-
տուծոյ եւ Հօր մերում փառք յաւիտեանս յա-
21 ւիտենից. ամէն ։ * Ողջոյն տայջիք ամենայն սըր-
22 բոց ՚ի Քրիստոս Յիսուս ։ * Ողջոյն տան ձեզ որ
23 ընդ իս են եղբարք ։ * Ողջոյն տան ձեզ ամե-
նայն սուրբք, մանաւանդ որ ՚ի տանէ կայսեր
24 են ։ * Շնորհք տեառն Յիսուսի ընդ ոգւոյդ
ձերում. ամէն ։

Առ Փիլիպեցիս՝ Գրեցաւ ՚ի Հռովմէ ՚ի ձեռն
Եպափրոդիտեայ ։

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

ԱԲ. ՊԱՒՂՈՍ Առաքեալ Յիսուսի Քրիս- 1
տոսի, կամօքն Աստուծոյ, եւ Տիմո-
թէոս եղբայր, * առ Կողոսացիս սուրբս եւ հա- 2
ւատացեալս եղբարս 'ի Քրիստոս։ * Շնորհք ընդ 3
ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մեր-
մէ՝ (եւ 'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ)։

Գոհանամ զԱստուծոյ եւ զՀօրէ Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի, յամենայն ժամ վասն
ձեր աղօթս առնեմ. * իբրեւ լուաք զհաւատ- 4
սն ձեր որ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր, եւ
զսէրն որ ընդ ամենայն սուրբս ունիք. * վասն 5
յուսոյն որ պահի ձեզ յերկինս. զորմէ լուա-
րուք բանիւն ճշմարտութեան՝ Աւետարանին,
* որ եհաս առ ձեզ. որպէս ընդ ամենայն աշ- 6
խարհ աճէ եւ պտղաբերէ, որպէս եւ 'ի ձե-
րում միջի. յօրէ յորմէ լուարուք եւ ծանեայք
զշնորհսն Աստուծոյ ճշմարտութեամբ. * որպէս 7

եւ ուսարուք յԵպափրեայ սիրելւոյ՝ ծառայակ-
ցէ մերմէ, որ է հաւատարիմ վասն ձեր պաշ-
8 տօնեայ Յիսուսի, * որ եւ պատմեաց մեզ զձեր
սէրն հոգւով։

9 * Վասն այնորիկ եւ մեք յօրէ յորմէ լուաք՝
ոչ դադարեմք վասն ձեր աղօթս առնել եւ
խնդրուածս մատուցանել, զի լնուցուք զգի-
տութիւն կամաց նորա՝ ամենայն իմաստու-
10 թեամբ եւ հոգեւոր հանճարով, * գնալ ձեզ
արժանի Տեառն յամենայն հաճութեան, յամե-
նայն գործս բարութեան, պտղաբերք եւ ա-
11 ճեցունք գիտութեամբն Աստուծոյ. * ամենայն
զօրութեամբ զօրացեալք ըստ զօրութեան փա-
ռաց նորա. յամենայն համբերութիւն եւ եր-
կայնմտութիւն։

12 ԱԳ. * Ուրախութեամբ գոհանալ զՀօրէ, որ
կոչեաց զմեզ 'ի մասն վիճակի սրբոցն 'ի լոյս.
13 * որ փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի,
եւ փոխեաց զմեզ յարքայութիւն Որդւոյն իւրոյ
14 սիրելւոյ, * որով ունիմք զփրկութիւն արեամբն
նորա, եւ զթողութիւն մեղաց մարմնոյն նորա։
15 * Որ է պատկեր աներեւութին Աստուծոյ,
16 անդրանիկ ամենայն արարածոց. * զի նովաւ
հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս եւ
որ ինչ յերկրի, որ երեւելին եւ որ ոչն երեւելին,
եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պե-
տութիւնք, եթէ իշխանութիւնք. ամենայն
17 ինչ նովաւ եւ 'ի նոյն հաստատեցաւ. * եւ նա է

յառաջ քան զամենայն, եւ ամենայն նո-
վաւ եկաց բովանդակ։ *Եւ նա է գլուխ մար- 18
մնոյ եկեղեցւոյ. որ է սկիզբն, անդրանիկ 'ի
մեռելոց. զի եղիցի ինքն յամենայնի յառաջա-
ցեալ. *զի 'ի նմա հաճեցաւ ամենայն լրումն 19
աստուածութեանն բնակել, *եւ նովաւ հաշ- 20
տեցուցանել զամենայն 'ի նոյն. արար խաղա-
ղութիւն արեամբ Խաչին իւրոյ՝ որ ինչ յերկրի
եւ որ ինչ յերկինս։

*Եւ զձեզ՝ որ երբեմն օտարացեալքն էիք, 21
եւ թշնամիք խորհրդովք 'ի գործս չարութեան,
*այժմ աւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ 22
իւրոյ, 'ի ձեռն մահուան իւրոյ յանդիման կա-
ցուցանել զձեզ սուրբս եւ անբիծս եւ անա-
րատս առաջի նորա. *եթէ կայցէք 'ի հաւատ- 23
սըն արմատացեալք եւ հաստատեալք, եւ ան-
շարժք 'ի յուսոյ Աւետարանին զոր լուարուք՝
քարոզելոյ ընդ ամենայն արարածս 'ի ներքոյ
երկնից, որոյ եղէ ես Պաւղոս պաշտօնեայ։

Ա.Գ. *Եւ արդ ուրախ եմ 'ի չարչարանս 24
իմ վասն ձեր, եւ լնում զպակասութիւն նե-
ղութեանցն Քրիստոսի 'ի մարմնի իմում՝ վասն
մարմնոյ նորա, որ է եկեղեցի. *որոյ եղէ ես 25
Պաւղոս պաշտօնեայ, ըստ տնտեսութեանն Աս-
տուծոյ որ տուեալ է ինձ 'ի ձեզ, կատարել
զբանն Աստուծոյ. *զխորհուրդն որ ծածկեալ 26
էր 'ի յաւիտենից եւ յազգաց, որ այժմ յայտ-
նեցաւ սրբոց իւրոց։ *Որոց կամեցաւ Աստուած 27

ցուցանել, թէ զի՞նչ է մեծութիւն փառաց
խորհրդոյն նորա 'ի հեթանոսս. որ է Քրիստոս
28 'ի ձեզ, յոյսն փառաց. *զոր մեքն քարոզեմք,
եւ խրատեմք զամենայն մարդ, եւ ուսուցա-
նեմք զամենայն մարդ ամենայն հոգեւոր իմաս-
տութեամբ, զի կացուսցուք զամենայն մարդ
29 կատարեալ 'ի Քրիստոս Յիսուս. *յոր եւ աշխա-
տիմ պատերազմեալ ըստ յաջողութեան նորա,
որ յաջողեալ է յիս զօրութեամբ։

ԳԼՈՒԽ Բ.

1 Կամիմ զի գիտիցէք դուք՝ որպիսի ճգնու-
թիւն ունիմ յանձին վասն ձեր եւ վասն Լա-
ւոդիկեցւոցն, եւ որոց չիցէ տեսեալ զերեսս
2 իմ մարմնով. *զի մխիթարեսցին սիրտք նոցա՝
տեղեկացեալք սիրով, եւ յամենայն մեծու-
թիւն լրութեան իմաստութեան՝ 'ի գիտու-
թիւն խորհրդոյն Աստուծոյ 'ի Քրիստոս Յիսուս,
3 *յորում ամենայն գանձք իմաստութեան եւ
4 գիտութեան ծածկեալ կան։ *Այլ զայս ասեմ,
զի մի ոք զձեզ զառանցուսցէ պատիր բանիւք.
5 *զի թէպէտ եւ մարմնով հեռի եմ, այլ հոգ-
ւով ընդ ձեզ եմ. խնդամ՝ իբրեւ տեսանեմ
զկարգն ձեր եւ զհաստատութիւն հաւատոյն
6 ձերոյ, որ 'ի Քրիստոս Յիսուս։ *Արդ որպէս
ընկալարուք զՔրիստոս Յիսուս զՏէր, նովին գը-
7 նասջիք, *արմատացեալք եւ շինեալք 'ի նա,

եւ հաստատեալք 'ի հաւատս, որպէս ուսա-
րուքն՝ առաւելեալք 'ի նմին գոհութեամբ: Վ Ջ
* Զգոյշ լերուք, մի՛ ոք լիցի որ զձեզ կողոպ- 8
տիցէ ճարտարմտութեամբ եւ սնոտի խա-
բէութեամբ, որք ըստ մարդկան աւանդու-
թեան եւ ըստ տարերց աշխարհիս, եւ ոչ ըստ
Յիսուսի Քրիստոսի. * զի 'ի նմա բնակէ ամենայն 9
լրումն աստուածութեանն մարմնապէս, * եւ էք 10
դուք նովաւ լցեալք. որ է գլուխ ամենայն իշ-
խանութեան եւ պետութեան:

* Որով թլփատեցարուք հաւատովք զան- 11
ձեռագործ թլփատութիւնն, 'ի մերկանալ զան-
դամս մարմնոյ թլփատութեամբն Քրիստոսի.
* Թաղեալք ընդ նմին 'ի մկրտութեանն, որով 12
եւ ընդ նմին յարեայք հաւատովք՝ Աստուծոյ
ազդեցութեանն, որ յարոյց զնա 'ի մեռելոց:
* Եւ զձեզ որ երբեմն մեռեալն էիք 'ի մեղս 13
եւ յանթլփատութիւն մարմնոյ ձերոյ, կենդա-
նացոյց յանձին իւրում. շնորհեաց մեզ զամե-
նայն յանցանս մեր. * եւ ջնջեաց զձեռագիր 14
մերոյ հակառակութեանն հրամանօքն իւրովք.
որ կայր մեզ հակառակ՝ եբարձ զայն 'ի միջոյ
եւ բեւեռեաց ընդ խաչափայտին. * մերկեաց 15
զիշխանութիւնս եւ զպետութիւնս, յայտ յան-
դիման խայտառակեաց նշաւակեալ զնոսա յան-
ձին իւրում 'ի յարութեան իւրում: * Մի՛ ոք 16
այսուհետեւ զձեզ դատեսցի ուտելով կամ
ըմպելով, կամ մասամբք տօնից, կամ ամսամտ-

17 տիւք կամ՝ շաբաթուք, * որ են ստուերք հան-
դերձելոյն. այլ մարմինն՝ Քրիստոս է:
18 * Մի՛ ոք զձեզ խաբեսցէ, որ կամիցի խոնար-
հութեամբ եւ կրօնիւք հրեշտակաց, զոր չիցէ
տեսեալ զրահետ վարել՝ տարապարտ հպար-
19 տացեալ 'ի մտաց մարմնոյ իւրոյ. * եւ ոչ ունիցի
զգլուխն Քրիստոս, ուստի ամենայն մարմինն յօ-
դիւք եւ խաղալեօք տարաբերեալ եւ խառ-
20 նեալ՝ աճէ զաճումն Աստուծոյ: * Եթէ մեռա-
րուք ընդ Քրիստոսի 'ի տարերց աշխարհիս, զի՞
եւս իբրեւ զկենդանիս աստէն յաշխարհի կրօ-
21 նաւորիք. * մի՛ մերձենար, մի՛ ճաշակեր, մի՛
22 հուպ լինիր. * որ է ամենայն ինչ 'ի պէտս ա-
պականութեան, ըստ պատուիրանաց եւ վար-
23 դապետութեան մարդկան. * որ յիմաստութիւն
իմն համարէ, ինքնակամ կրօնիւք, եւ խոնար-
հութեամբ, եւ անխնայութեամբ մարմնոյ. եւ
ոչ 'ի պատիւ ինչ լրութեան մարմնոյ:

ԳԼՈՒԽ Գ.

1 Եթէ յարերուք ընդ Քրիստոսի, ապա զվե-
րինն խնդրեցէք՝ ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ
2 Աստուծոյ. * զվերինն խորհեցարուք, մի՛ զայս որ
3 յերկրի աստ է. * քանզի մեռարուք, եւ կեանքն
ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած.
4 * իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն ձեր,
յայնժամ եւ դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք:

* Սպանէք այսուհետեւ զանդամս ձեր զեր- 5
կրաւորս . 'ի բաց ընկեցէք զպոռնկութիւն . ըզ-
պղծութիւն , զախտ , զցանկութիւն չարեաց , եւ
զագահութիւն՝ որ է կռապաշտութիւն . * վա- 6
սն որոյ գայ բարկութիւն Աստուծոյ 'ի վերայ
որդւոյն անհաւանութեան , * որովք եւ դուք 7
երբեմն գնայիք՝ մինչ կենդանիքն էիք 'ի նոսա ։
* Արդ 'ի բաց թօթափեցէք եւ դուք զայն ա- 8
մենայն , զբարկութիւն , զսրտմտութիւն , զչա-
րութիւն , զհայհոյութիւն , զխեղկատակութիւն
'ի բերանոյ ձերոյ ։ * Մի՛ ստէք միմեանց . մեր- 9
կացարուք զհին մարդն գործովքն իւրովք , * եւ 10
զգեցարուք զնորն նորոգեալ 'ի գիտութիւն , ըստ
պատկերի արարչին իւրոյ . * ուր ոչ է հրեայ եւ 11
ոչ հեթանոս . թլփատութիւն եւ անթլփատու-
թիւն , խուժ , դուժ , Սկիւթացի , ծառայ , ա-
զատ , այլ ամենայն եւ յամենայնի Քրիստոս ։
* Զգեցարուք այսուհետեւ իբրեւ ընտրեալք 12
Աստուծոյ՝ սուրբք եւ սիրեցեալք՝ զգութ , զո-
ղորմութիւն , զքաղցրութիւն , զխոնարհութիւն ,
զհեզութիւն , զերկայնմտութիւն . * ներել մի- 13
մեանց , շնորհել իրերաց , եթէ ուրուք զումե-
քէ տրտունջ ինչ իցէ որպէս Աստուած Քրիստո-
սիւ շնորհեաց ձեզ , նոյնպէս եւ դուք ։ * Եւ 'ի 14
վերայ այսր ամենայնի զսէրն , որ է զօդ կատար-
մանն . * եւ խաղաղութիւնն Քրիստոսի հաս- 15
տատեսցի 'ի սիրտս ձեր , յոր եւ կոչեցարուքն
միով մարմնով ։

16 ԱԵ . Եւ գոհացօղք լինիջիք . * զի բանն Քը-
րիստոսի բնակեսցէ 'ի ձեզ առատապէս . ամե-
նայն իմաստութեամբ ուսուցանել եւ խրատել
զմիմեանս . սաղմոսիւք եւ օրհնութեամբք , եւ
երգովք հոգեւորօք՝ եւ շնորհօք օրհնել 'ի սիր-
17 տըս ձեր զԱստուած ։ * Եւ զամենայն զոր եւ
առնիցէք բանիւք եւ արդեամբք , զամենայն յա-
նուն Տեառն Յիսուսի արասջիք . գոհացօղք լի-
նիջիք զԱստուծոյ եւ զհօրէ նովաւ ։
18 * Կանայք , հնազանդ լերուք արանց ձերոց ,
19 որպէս եւ վայել է 'ի Տէր ։ * Արք , սիրեցէք զկա-
20 նայս ձեր , եւ մի՛ դառնացուցանէք զնոսա ։ * Որ-
դիք , հնազանդ լերուք ծնողաց ձերոց յամենայ-
21 նի , զի այն է հաճոյ առաջի Տեառն ։ * Հարք ,
մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր , զի մի՛ տրտ-
22 մեսցին ։ * Ծառայք , հնազանդ լերուք տերանց
ձերոց յամենայնի . մի՛ առաչանէ ծառայու-
թեամբ իբրեւ մարդահաճոյք , այլ միամտու-
23 թեամբ սրտի երկնչել 'ի Տեառնէ . * զոր ինչ առ-
նիցէք՝ սրտի մտօք գործեսջիք իբրեւ Տեառն ,
24 եւ ոչ իբրեւ մարդկան ։ * Գիտասջիք զի 'ի Տեառ-
նէ առնուցուք զհատուցումն ժառանգութեան
25 ձերոյ , քանզի Տեառն Քրիստոսի ծառայէք ։ * Իսկ
ապիրատն ընկալցի ըստ իւրում՝ ապիրատու-
թեանն . զի չիք ակնառութիւն առաջի Աս-
տուծոյ ։

ԳԼՈՒԽ Դ.

Տեարք, զիրաւունս եւ զհաւասարութիւն 1
ծառայից ձերոց շնորհեցէք. գիտասջիք զի եւ
ձեր Տէր գոյ յերկինս: * Աղօթից ստէպ կացէք, 2
տքնել 'ի նմին գոհութեամբ. * աղօթս արարէք 3
միանգամայն եւ վասն մեր, զի Աստուած բաց-
ցէ մեզ դուռն բանին, խօսել զխորհուրդն Քրի-
ստոսի, վասն որոյ եւ կապեալս կամ. * զի 4
յայտնի արարից զնա որպէս արժան իցէ ինձ
խօսել:

ԱԶ. * Իմաստութեամբ գնասջիք առ ար- 5
տաքինսն՝ գնոյ առեալ զժամանակս. * եւ բանն 6
ձեր յամենայն ժամ լի շնորհօք Տեառն՝ իբրեւ
աղիւ համեմեալ լիցի. գիտել որպէս արժան
իցէ ձեզ իւրաքանչիւր ումեք տալ պատասխա-
նի: * Այլ որ ինչ զինէն իցէ՝ ցուցցէ ձեզ զա- 7
մենայն Տիւքիկոս սիրելի եղբայր եւ հաւատա-
րիմ պաշտօնեայ եւ ծառայակից 'ի Տէր. * զոր 8
առաքեցի առ ձեզ դմին իրի, զի գիտասջիք
վասն մեր, եւ մխիթարեսցէ զսիրտս ձեր. * Ոնե- 9
սիմաւ հանդերձ եղբարբ հաւատարմաւ եւ սի-
րելեաւ՝ որ է 'ի ձէնջ. զամենայն ինչ ցուցցէ ձեզ՝
որ ինչ աստ է: * Ողջոյն տայ ձեզ Արիստարքոս 10
գերեկից իմ, եւ Մարկոս եղբօրորդի Բառնա-
բայ. վասն որոյ առէք պատուէր, եթէ եկես-
ցէ առ ձեզ՝ ընկալջիք զնա. * եւ Յիսուս որ ա- 11

նուանեալն է Յուստոս, որք են 'ի թլփատութե-
նէ անտի. զի դոքա միայն գործակից եղեն ինձ
յարքայութեանն Աստուծոյ, որք եւ եղեն իսկ
12 ինձ մխիթարութիւն: * Ողջոյն տայ ձեզ Եպափ-
րաս՝ որ 'ի ձէնջ ծառայ Յիսուսի Քրիստոսի է,
յամենայն ժամ պատերազմեալ վասն ձեր յա-
ղօթս, զի կայցէք կատարեալք եւ լցեալք յա-
13 մենայն կամս Աստուծոյ. * վկայեմ նմա, զի բա-
զում աշխատութիւն ունի վասն ձեր եւ վասն
Լաւոդիկեցւոյն, եւ վասն այնոցիկ որ յԻերապօ-
14 լիս են: * Ողջոյն տայ ձեզ Ղուկաս բժիշկ եւ
15 սիրելի, եւ Դեմաս: * Ողջոյն տասջիք եղբարց որ
են 'ի Լաւոդիկիա, եւ Նիմփայ՝ եւ որ առտնին
16 եկեղեցին է նորա: * Եւ յորժամ ընթեռնուցու
առ ձեզ թուղթդ, արասջիք զի եւ 'ի Լաւոդի-
կեցւոց եկեղեցւոջն ընթերցցի. եւ զառ 'ի Լա-
17 ւոդիկեցւոյն՝ զի եւ դուք ընթեռնուցուք: * Եւ
ասասջիք ցԱրքիպպոս. զգոյշ լեր սպասաւորու-
թեանդ, զոր ընկալար 'ի Տէր, զի զայդ կատա-
18 րեսցես: * Ողջոյնդ ձեռին իմոյ Պաւղոսի է. յուշ
լիցին ձեզ կապանքս իմ: Շնորհք ընդ ձեզ:

Առ Կողոսացիս՝ Գրեցաւ 'ի Հռովմէ 'ի ձեռն
Տիւքիկոսի եւ Ոնեսիմոսի:

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

ԲԿ. ՊԱՒՂՈՍ եւ Սիղուանոս եւ Տիմո- 1
թէոս, եկեղեցւոյդ Թեսաղոնիկե-
ցւոց՝ յԱստուած հայր մեր, եւ 'ի Տէր Յիսուս
Քրիստոս։ *Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն։ 2
Գոհանամք զԱստուծոյ յամենայն ժամ վա-
սըն ձեր ամենեցուն՝ յիշատակ առնել յաղօթս
մեր անդադար. *յիշել զձեր գործն հաւատոյ, 3
եւ զվաստակ սիրոյ՝ եւ զհամբերութեան յուսոյ
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ առաջի Աստու-
ծոյ եւ հօր մերոյ։ *Գիտէք, եղբարք սիրեցեալք 4
յԱստուծոյ, զընտրութիւնն ձեր. *զի Աւետա- 5
րանն մեր ոչ եղեւ առ ձեզ միայն բանիւ, այլ
եւ զօրութեամբ եւ Հոգւովն Սրբով, եւ լըու-
թեամբ բազմաւ. որպէս եւ գիտէք իսկ, թէ
որպիսիք եղեաք 'ի միջի ձերում վասն ձեր։ *Եւ 6
դուք նմանեալք մեզ եւ Տեառն. ընկալեալք ըզ-
բանն 'ի բազում նեղութեան՝ խնդութեամբ
Հոգւոյն Սրբոյ. *լինել ձեզ օրինակ ամենայն հա- 7

ւատացելոց որ են 'ի Մակեդոնիա եւ յԱքայիա։
8 *Զի 'ի ձէնջ հնչեաց բանն Աստուծոյ. ոչ միայն
'ի Մակեդոնիա եւ յԱքայիա, այլ յամենայն տե-
ղիս հաւատքն ձեր որ առ Աստուած են սփռե-
ցան. զի այսուհետեւ ոչ ինչ է պիտոյ մեզ եւ
9 խօսել ինչ. *զի նոքին իսկ պատմեն վասն մեր,
թէ որպէս եղեւ մեզ մուտ առ ձեզ. եւ որ-
պէս դարձայք առ Աստուած 'ի կռոց անտի,
ծառայել Աստուծոյ կենդանւոյ եւ ճշմարտի,
10 *եւ ակն ունել Որդւոյ նորա յերկնից. զոր յա-
րոյց 'ի մեռելոց՝ զՅիսուս, որ փրկելոցն է զմեզ
'ի բարկութենէ անտի որ գալոցն է։

ԳԼՈՒԽ Բ.

1 ԲԴ. Դուք ինքնին գիտէք, եղբարք, զմու-
տըն մեր առ ձեզ. զի ոչ ընդունայն ինչ եղեւ.
2 *այլ յառաջագոյն չարչարեալք եւ թշնամա-
նեալք, որպէս եւ դուք իսկ գիտէք, 'ի մէջ
փիլիպեցւոց համարձակեցաք Աստուծով մերով՝
պատմել ձեզ զԱւետարանն Աստուծոյ մեծաւ
3 պատերազմաւ։ *Զի մխիթարութիւնն մեր ոչ
'ի մոլորութենէ է, եւ ոչ 'ի պղծութենէ, եւ
4 ոչ նենգութեամբ. *այլ որպէս ընտրեցաք յԱս-
տուծոյ հաւատարիմ լինել Աւետարանին, նոյն-
պէս եւ խօսիմք. ոչ իբրեւ մարդկան հաճոյ լի-
5 նել, այլ Աստուծոյ որ քննէ զսիրտս մեր։ *Զի
ոչ երբէք բանիւք ողոքանաց եղեաք առ ձեզ,

որպէս եւ դուք իսկ գիտէք. եւ ոչ 'ի պատճա-
ռըս ագահութեան, որպէս եւ Աստուած վը-
կայ է. * եւ ոչ խնդրէաք փառս 'ի մարդկանէ, 6
ոչ 'ի ձէնջ եւ ոչ յայլոց: * Կարող էաք՝ որպէս 7
Քրիստոսի առաքեալք՝ ծանրանալ, այլ եղէաք
հեզք 'ի միջի ձերում. որպէս դայեակ մի որ
սնուցանիցէ մանկունս, * նոյնպէս եւ մեք գը- 8
թայաք 'ի ձեզ. հաճոյ թուէր մեզ տալ ձեզ՝
ոչ միայն զԱւետարանն Աստուծոյ, այլ եւ զան-
ձինս մեր. քանզի սիրելիք մեր եղերուք: * Յի- 9
շեցէք, եղբարք, զվաստակն մեր եւ զջան. զի
զդայգ եւ զցերեկ գործէաք վասն չծանրանալոյ
ումեք 'ի ձէնջ, եւ քարոզէաք ձեզ զԱւետա-
րանն Աստուծոյ. * դուք ինքնին վկայէք եւ Աս- 10
տուած, որպէս սրբութեամբ եւ արդարու-
թեամբ եւ անբծութեամբ ձեզ հաւատացե-
լոցդ եղեաք. * որպէս եւ գիտէք իսկ. զի զիւ- 11
րաքանչիւր ոք 'ի ձէնջ՝ իբրեւ հայր զորդիս՝
* մխիթարէաք եւ սփոփէաք, եւ դնէաք վկա- 12
յութիւն գնալ ձեզ արժանապէս Աստուծոյ,
որ կոչեաց զձեզ յիւր արքայութիւնն եւ 'ի
փառս:

ՎԶ

* Վասն այնորիկ եւ մեք գոհանամք զԱս- 13
տուծոյ անպակաս, զի առեալ զլուր բանին Աս-
տուծոյ առ 'ի մէնջ ընկալարուք, ոչ իբրեւ ըզ-
բան մարդկան, այլ որպէս ճշմարտիւ զբան Աս-
տուծոյ. որ եւ յաջողեալ իսկ է 'ի ձեզ հաւա-
տացելոցդ: * Զի դուք նմանօղք եղերուք, եղ- 14

բարք, եկեղեցեացն Աստուծոյ՝ որ են 'ի Հը-
րեաստանի 'ի Քրիստոս Յիսուս. զի զնոյն չար-
չարանս չարչարեցայք եւ դուք 'ի ձերոց ազգա-
15 կանաց՝ որպէս եւ նոքայն 'ի Հրէից. * որք եւ ըզ-
տէրն Յիսուս սպանին եւ զմարգարէսն եւ զմեզ
հալածեցին, եւ Աստուծոյ յաչո̊ց ելին, եւ ա-
16 մենայն մարդկան հակառակ եղեն. * եւ արգե-
լուին զմեզ խօսել հեթանոսաց՝ զի ապրեսցին.
զի կատարեսցեն զմեղս իւրեանց յամենայն ժամ.
քանզի հասեալ է 'ի վերայ նոցա բարկութիւն
մինչեւ 'ի սպառ:
17 ԲԶ. * Այլ մեք, եղբարք, թէպէտ եւ որբ
մնացաք 'ի ձէնջ առ ժամանակ մի, երեսօք՝ եւ
ոչ սրտիւք. առաւել եւս փութացաք տեսանել
18 զերեսս ձեր մեծաւ ցանկութեամբ. * վասն այ-
սորիկ կամեցայ գալ առ ձեզ ես Պաւղոս միան-
գամ եւ երկիցս, եւ խափանեաց զմեզ սատա-
19 նայ: * Քանզի ո՞վ է մեր յոյս, կամ խնդութիւն,
կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք 'ի
Տէր՝ առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի
20 նորա գալստեանն. * Զի դուք էք փառք մեր
եւ խնդութիւն:

ԳԼՈՒԽ Գ.

1 Վասն որոյ ոչ եւս ունիմք ժոյժ, զի բար-
2 ւոք թուեցաւ մեզ միայն մնալ յԱթէնս. * եւ
առաքեցաք զՏիմոթէոս զեղբայր մեր եւ զգոր-

ծակից Աւետարանին Աստուծոյ եւ Հօրն Քրիս-
տոսի, հաստատել զձեզ եւ մխիթարել վասն
հաւատոյն ձերոյ ։ ՎԶ
* Զի մի՛ տաղտկայցէք 'ի նեղութիւնս յայս- 3
սիկ. * քանզի դուք ինքնին իսկ գիտէք, զի 'ի այն
կամք. քանզի մինչ առ ձեզն իսկ էաք՝ յառաջա- 4
գոյն ասէաք ձեզ, թէ նեղութիւնք հասանելոց
են 'ի վերայ մեր. որպէս եւ եղեւ իսկ եւ գի-
տացէք ։ * Վասն այնորիկ եւ ես զի ոչ ունէի 5
ժոյժ՝ առաքեցի գիտել զհաւատոյն ձեր. գու-
ցէ արդեօք փորձեաց եւ զձեզ փորձիչն, եւ
ընդունայն լինիցի ջանն մեր ։ * Բայց արդ իբրեւ 6
եկն Տիմոթէոս 'ի ձէնջ առ մեզ, եւ ետ մեզ
զաւետիս հաւատոյն ձերոյ եւ զսիրոյ, զի ունիք
'ի մտի զյիշատակս մեր բարեաց յամենայն ժամ,
եւ ցանկացեալ էք տեսանել զմեզ՝ որպէս եւ
մեք զձեզ, * վասն այսորիկ մխիթարեցաք 'ի ձեզ, 7
եղբարք, 'ի վերայ ամենայն վշտաց եւ նեղու-
թեանց մերոց, 'ի ձեռն հաւատոյն ձերոյ. * զի 8
այժմ կենդանի եմք՝ եթէ դուք հաստատուն կայ-
ցէք 'ի Տէր ։ * Զի՞նչ կարեմք գոհութիւն մատու- 9
ցանել Աստուծոյ վասն ձեր, 'ի վերայ ամենայն
խնդութեանն զոր խնդամք վասն ձեր առաջի
Աստուծոյ մերոյ. * զայգ եւ զցերեկ առաւել 10
եւս աղաչեմք՝ տեսանել զերեսս ձեր, եւ հաս-
տատել զպակասութիւն հաւատոյն ձերոյ ։
* Այլ ինքն Աստուած եւ Հայր մեր եւ Տէր 11
մեր Յիսուս Քրիստոս ուղղեսցէ զճանապարհս

12 մեր առ ձեզ. * եւ զձեզ ինքն Տէր բազմապատի-
կս եւ առաւելս արասցէ սիրով ընդ միմեանս
13 եւ առ ամենեսին՝ որպէս եւ մեք 'ի ձեզ. * հաս-
տատել զսիրտս ձեր անարատս 'ի սրբութիւն
առաջի Աստուծոյ եւ Հօր մերոյ՝ 'ի գալստեանն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ համդերձ ա-
մենայն սրբովք իւրովք ։

ԳԼՈՒԽ Դ.

1 ԳՆ. Այսուհետեւ, եղբարք, աղաչեմք ըզ-
ձեզ, եւ մխիթարեմ 'ի Քրիստոս Յիսուս.
զի որպէս ընկալարուք 'ի մէնջ, թէ որպէս
պարտ իցէ ձեզ գնալ եւ հաճոյ լինել Աս-
տուծոյ, որպէս եւ գնայք իսկ, զի եւս քան
2 զեւս յաւելեսջիք 'ի նոյն ։ * Եւ գիտէք՝ թէ որ-
պիսի պատուէրանս տուաք ձեզ 'ի Տէր Յիսուս.
3 * զի այս են կամք Աստուծոյ, սրբութիւն ձեր.
4 'ի բաց լինել ձեզ 'ի պոռնկութենէ, * գիտել
իւրաքանչիւր ումեք 'ի ձէնջ զիւր ամանն ստա-
5 նալ սրբութեամբ եւ պատուով. * մի՛ 'ի ցաւս
ցանկութեան՝ որպէս եւ այլ հեթանոսք որ ոչ
6 գիտեն զԱստուած ։ * Մի՛ զանցանել եւ զրկել
յիրիդ յայդմիկ զեղբայր իւր. քանզի վրէժխնդ-
իր է Տէր 'ի վերայ ամենայնի այդորիկ, որպէս
յառաջագոյն ասացաք ձեզ, եւ եդաք վկայու-
7 թիւն. * քանզի ոչ կոչեաց զմեզ Աստուած 'ի
8 պղծութիւն՝ այլ 'ի սրբութիւն. * այսուհետեւ
որ անարգէ՝ ոչ զմարդ անարգէ, այլ զԱստուած՝

որ եւ ես զհոգին Սուրբ 'ի ձեզ։ *Այլ վասն եղ֊ 9
բայրսիրութեան չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ.
զի դուք ինքնին իսկ աստուածուսոյցք էք՝ առ֊
միմեանս սիրելոյ. *քանզի եւ առնէք իսկ զդոյն 10
յամենայն եղբարս, որ են յամենայն կողմանս
Մակեդոնացւոց։ Աղաչեմ զձեզ, եղբարք, առա֊
ւել եւս առաւելուլ եւ առատանալ. *հանդար֊ 11
տել եւ գործել զիւրաքանչիւր, եւ գործել ձե֊
ռօք ձերովք, որպէս եւ պատուիրեցաք ձեզ.
զի գնայցէք պարկեշտութեամբ առ արտաքին֊
սն, եւ մի իւիք կարօտեալք լիցէք։

*Ոչ կամիմ, եղբարք, եթէ տգէտ լիցէք 12
վասն ննջեցելոցն. զի մի տրտմիցիք որպէս եւ
այլքն որոց ոչ գոյ յոյս։ *Եթէ հաւատամք՝ ե֊ 13
թէ Յիսուս մեռաւ եւ յարեաւ, նոյնպէս եւ
Աստուած զննջեցեալսն 'ի ձեռն Յիսուսի ածցէ
ընդ նմա։

վՁ

*Բայց զայս ասեմք Տեառն բանիւ, թէ մեք 14
որ կենդանիքս եմք մնացեալք՝ 'ի գալստեանն
Տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն. *զի ինքն Տէր 15
հրամանաւ՝ 'ի ձայն հրեշտակապետի եւ 'ի փող
Աստուծոյ իջանէ յերկնից, եւ մեռեալք 'ի Քրի֊
ստոս յարիցեն յառաջագոյն։ *Ապա եւ մեք 16
որ կենդանիքս մնացեալ լիցեմք՝ նոքօք հանդերձ
յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ Տեառն
յօդս, եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն
լինիցիմք։ *Այսուհետեւ մխիթարեցէք զմի֊ 17
մեանս բանիւքս այսոքիւք։

ԳԼՈՒԽ Ե.

1 ԳԴ. Այլ վասն ժամուց եւ ժամանակաց, եղ֊
2 բարք, չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ. *զի դուք
ինքնին իսկ ստոյգ գիտէք, թէ օր Տեառն իբ֊
3 րեւ զգող գիշերի՝ այնպէս հասանէ։ *Յորժամ
ասիցեն թէ խաղաղութիւն եւ շինութիւն է,
յայնժամ յանկարծակի հասցէ նոցա սատակու֊
մն՝ որպէս եւ երկն յղւոյ, եւ մի ապրեսցեն։
4 *Այլ դուք, եղբարք, ոչ էք 'ի խաւարի, թէ
5 օրն ձեր իբրեւ զգող 'ի վերայ հասանիցէ. *զի
ամենեքին դուք որդիք լուսոյ էք եւ որդիք տ֊
6 ւընջեան. չեմք գիշերոյ, չեմք խաւարի. *ա֊
պա մի զքնով անկանիցիմք՝ որպէս եւ այլքն,
7 այլ արթունք եւ զուարթունք եղիցուք։ *Զի
որ ննջենն՝ գիշերի ննջեն, եւ որ արբենանն՝ գի֊
8 շերի արբենան. *այլ մեք զի տուընջեան եմք,
արթունք եղիցուք, եւ զգեցցուք զզրահն հա֊
ւատոյ եւ սիրոյ, եւ դիցուք զսաղաւարտն յու֊
9 սոյն փրկութեան։ *Զի ոչ եդ զմեզ Աստուած
'ի բարկութիւն, այլ 'ի փրկութիւն կենդանու֊
թեան 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստո֊
10 սի, *որ մեռաւն վասն մեր. զի եթէ արթունք
լիցեմք եւ եթէ ննջիցեմք, նովաւ հանդերձ կեց֊
11 ցուք. *վասն որոյ մխիթարեցէք զմիմեանս, եւ
շինեցէք զիրեարս՝ որպէս եւ առնէքդ իսկ։
12 ԳԶ. *Աղաչեմ զձեզ, եղբարք, ծանաչել
զվաստակաւորս եւ զվերակացուս ձեր 'ի Տէր,

եւ զխրատիչս ձեր . * եւ համարեցարուք զնոսա 13
արժանիս առաւել սիրոյ՝ վասն գործոյ նոցա .
խաղաղութիւն արարէք ընդ միմեանս ։ * Աղա- 14
չեմ զձեզ, եղբարք, խրատեցէք զստահակս,
մխիթարեցէք զկարճամիտս, պատսպարան լե-
րուք տկարաց, երկայնամիտ լերուք առ ամե-
նեսին ։ * Զգոյշ լերուք՝ գուցէ ոք չարի չար 15
հատուցանիցէ, այլ յամենայն ժամ զբարեաց
զհետ երթայք՝ առ միմեանս եւ առ ամենեսին ։
* Յամենայն ժամ ուրախ լերուք, * անդադար 16
աղօթս արարէք, * յամենայնի գոհացարուք . զի 17
այս են կամք Աստուծոյ Քրիստոսիւ Յիսուսիւ 'ի 18
ձեզ ։ * Զհոգին մի շիջուցանէք, * զմարգարէու- 19
թիւնս մի արհամարհէք, * զամենայն ինչ փոր- 20
ձեցէք՝ զբարին ընկալարուք, * յամենայն իրաց 21
չարաց 'ի բաց կացէք ։ 22

* Եւ ինքն Աստուած խաղաղութեան սուրբս 23
արասցէ զձեզ համօրէնս . եւ բովանդակ ձեր
ոգի եւ շունչ եւ մարմին՝ անարատ 'ի գալուստ
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցի . * հա- 24
ւատարիմ է՝ որ կոչեացն զձեզ, որ եւ արաս-
ցէ զնոյն ։ * Եղբարք, աղօթս արարէք եւ 'ի մեր 25
վերայ ։ * Ողջոյն տայցէք եղբարց ամենեցուն 'ի 26
համբոյր սրբութեան ։ * Երդմնեցուցանեմ զձեզ 27
'ի Տէր՝ ընթեռնուլ զթուղթդ առաջի ամենայն
եղբարց սրբոց ։ * Շնորհք Տեառն մերոյ Յիսու- 28
սի Քրիստոսի ընդ ձեզ ։

Առ Թեսաղոնիկեցիս առաջին թուղթն՝ Գրեցաւ յԱթենայ ։

ԹՈՒՂԹ
ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԴԿ. ՊԱՒՂՈՍ եւ Սիղուանոս եւ Տիմոթէ-
ոս՝ եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց՝
յԱստուած հայր մեր, եւ 'ի Տէր Յիսուս Քրիս-
2 տոս ։ * Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն
յԱստուծոյ Հօրէ մերմէ, եւ 'ի Տեառնէ Յիսու-
սէ Քրիստոսէ ։

3 * Գոհանալ պարտիմք զԱստուծոյ յամենայն
ժամ վասն ձեր, եղբարք, որպէս եւ արժան
իսկ է . զի եւս քան զեւս աճէն հաւատքդ ձեր,
եւ յաճախէ սէր իւրաքանչիւր ձեր ամենեցուն
4 առ միմեանս ։ * Որպէս եւ մեզ ձեօք պարծել
յեկեղեցիսն Աստուծոյ՝ վասն համբերութեան
ձերոյ եւ հաւատոյ՝ յամենայն հալածանս ձեր
եւ 'ի նեղութիւնս, որում դուքն համբերէք .
5 * յօրինակ արդար դատաստանին Աստուծոյ . ար-
ժանի լինել ձեզ արքայութեանն Աստուծոյ, վա-
6 սն որոյ եւ զճգնութիւնդ կրէք . * եթէ պարտ
է առաջի Աստուծոյ՝ հատուցանել նեղչացն ձե-
7 րոց նեղութիւն, * եւ ձեզ նեղելոցդ հանգիստ
ընդ մեզ՝ 'ի յայտնութեանն Տեառն մերոյ Յի-

սուսի, յերկնից հրեշտակօք զօրութեան նորա.
* ՚ի բոց հրոյ առնուլ վրէժս յայնցանէ՝ որք ոչ 8
ճանաչեն զԱստուած, եւ որ ոչ հնազանդին Աւե-
տարանին Տեառն մերոյ Յիսուսի ։ * Որք տու- 9
ցեն վրէժս ՚ի սատակումն յաւիտենից՝ յերեսաց
Տեառն եւ ՚ի փառաց զօրութեան նորա, * յոր- 10
ժամ գայցէ փառաւոր լինել ՚ի մէջ սրբոց նո-
րոց, եւ սքանչելի ՚ի մէջ ամենայն հաւատա-
ցելոց. զի հաւատարիմ եղեւ վկայութիւնն
մեր ՚ի վերայ ձեր յաւուր յայնմիկ ։ * Յոր եւ ա- 11
ղօթս առնեմք վասն ձեր յամենայն ժամ, զի
զձեզ արժանիս արասցէ կոչմանն ձերում Աս-
տուած, մինչեւ լցցէ զամենայն հաճութիւն
բարութեան, եւ զգործս հաւատոյն զօրու-
թեամբ. * զի փառաւոր լիցի անուն Տեառն մե- 12
րոյ Յիսուսի Քրիստոսի ՚ի ձեզ, եւ դուք ՚ի նմա,
ըստ շնորհացն Աստուծոյ մերոյ եւ տեառն Յի-
սուսի Քրիստոսի ։

ԳԼՈՒԽ Բ.

Դ Դ. Աղաչեմ զձեզ, եղբարք, վասն գալըս- 1
տեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ մե-
րոյ ժողովելոյն առ նա, * մի վաղվաղակի խռո- 2
վել ձեզ ՚ի մտաց եւ մի զարհուրել, մի հոգ-
ւով եւ մի բանիւ եւ մի թղթովք՝ իբրեւ թէ
՚ի մէնջ. որպէս թէ եկեալ հասեալ իցէ օր
Տեառն ։ * Մի ոք զձեզ խաբեսցէ եւ մի իւիք 3
իրօք. զի եթէ ոչ նախ եկեսցէ ապստամբու-

թիւնն, եւ յայտնեսցի մարդն անօրէնութեան,
4 * որդին կորստեան, հակառակորդն հպարտա-
ցեալ ՚ի վերայ ամենայնի՝ որ անուանեալ իցէ
Աստուած կամ պաշտօն. մինչեւ նստել նմա ՚ի
տաճարին Աստուծոյ, եւ ցուցանել զանձն՝ թէ
5 Աստուած իցէ ։ * Ո՞չ յիշէք՝ զի մինչ առ ձեզն
6 իսկ էի՝ ասէի զայս. * եւ արդ դուք ինքնին գի-
տէք զայն որ ունին յայտնել նմա յիւրում ժա-
7 մանակի. * զի խորհուրդն անօրէնութեան ար-
դէն իսկ զօրանայ. բայց յայնժամ, մինչ ՚ի մի-
8 ջոյ բարձցի որ այժմդ ունի, * եւ ապա յայտ-
նեսցի անօրէնն, զոր Տէր Յիսուս սատակեսցէ
հոգւով բերանոյ իւրոյ, եւ խափանեսցէ յայտ-
9 նութեամբ գալստեանն իւրոյ ։ * Որոյ գալըս-
տըն ըստ ազդեցութեան սատանայի է, ամենայն
զօրութեամբ եւ նշանօք եւ արուեստիւք սը-
10 տովք, * և ամենայն պատրանօք անիրաւութեան
՚ի վերայ կորուսելոցն. փոխանակ զի զսէրն ճըշ-
մարտութեան ոչ ընկալան՝ զի ապրեսցին, եւ
վասն այնորիկ առաքեսցէ նոցա Աստուած ազ-
դեցութիւն մոլորութեան՝ հաւատալ նոցա սը-
11 տութեանն. * զի դատապարտեսցին ամենեքեան
որ ոչ հաւատացին ճշմարտութեանն, այլ հա-
ճեցան ընդ անօրէնութիւնն ։
12 * Այլ մեք պարտիմք գոհանալ զԱստուծոյ
յամենայն ժամ վասն ձեր, եղբարք սիրեցեալք
՚ի Տեառնէ, զի ընտրեաց զմեզ Աստուած իս-
կըզբանէ ՚ի փրկութիւն՝ սրբութեամբ հոգւոյն

եւ հաւատովքն ճշմարտութեան. *յոր եւ կո- 13
չեաց զձեզ Աւետարանաւն մերով 'ի փրկութիւն՝
փառացն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: *Այ- 14
սուհետեւ, եղբարք, հաստատուն կացէք եւ
պինդ կալարուք զաւանդութիւնսն՝ զոր ուսա-
րուք եթէ բանիւ եւ եթէ թղթով մերով: *Այլ 15
ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս, եւ Աստուած հայր
մեր, որ սիրեաց զմեզ եւ ետ մեզ մխիթարու-
թիւն յաւիտենից եւ յոյս բարեաց շնորհօք, *մ- 16
խիթարեսցէ զսիրտս ձեր, եւ հաստատեսցէ
յամենայն բանս եւ 'ի գործս բարութեան:

ԳԼՈՒԽ Գ.

ԶԴ. Այսուհետեւ, եղբարք, աղօթս արա- 1
րէք 'ի վերայ մեր, զի բանն Տեառն ընթանայ-
ցէ. եւ փառաւոր լինիցի յամենայն տեղիս՝
որպէս եւ առ ձեզդ. *զի ապրեսցուք յանօրի- 2
նաց եւ յանզգամաց մարդոց. զի ոչ ամենեցուն
են հաւատք: *Այլ հաւատարիմ է Տէր, որ եւ 3
հաստատեսցէ զձեզ, եւ պահեսցէ 'ի չարէ ան-
տի: *Վստահ եմք 'ի ձեզ Տերամբ, թէ զոր 4
պատուիրեցաքն ձեզ՝ եւ առնէք եւ առնիցէք.
*այլ Տէր ուղղեսցէ զսիրտս ձեր 'ի սէրն Աստու- 5
ծոյ եւ 'ի համբերութիւնն Քրիստոսի:
*Պատուիրեմ ձեզ, եղբարք, յանուն Տեառն 6
մերոյ Յիսուսի Քրիստոսի, խորշել ձեզ յամենայն
եղբօրէ՝ որ ստահակն գնայցեն, եւ ոչ ըստ ա-
ւանդութեանն զոր ընկալարուք 'ի մէնջ: *Զի 7

դուք ինքնին գիտէք՝ թէ որպէս պարտ է ձեզ
նմանել մեզ. զի ոչ երբէք ստահակեցաք առ
8 ձեզ, *եւ ոչ ձրի զուրուք հաց կերաք. այլ ջա-
նիւ եւ վաստակով զցայգ եւ զցերեկ գործէաք՝
9 վասն չծանրանալոյ ումեք 'ի ձէնջ. *ոչ եթէ
չունէաք իշխանութիւն, այլ զի զանձինս օրի-
10 նակ արասցուք ձեզ՝ նմանօղս լինել մեզ. *քան-
զի մինչ առ ձեզն իսկ էաք՝ զայս պատուիրէաք
ձեզ, թէ որ ոչն կամիցի գործել՝ եւ կերիցէ մի:
11 *Արդ լսեմք զոմանց 'ի ձէնջ՝ թէ ստահակու-
թեամբ գնան. գործ ինչ ոչ գործեն, այլ յու-
12 լացեալ հետաքրքիր շրջին. *այնպիսեացն պա-
տուէր տամք՝ եւ աղաչեմք 'ի տէր Յիսուս Քրիս-
տոս, զի հանդարտութեամբ գործեսցեն՝ եւ
13 զիւրեանց հաց կերիցեն. *այլ դուք, եղբարք,
14 մի ձանձրանայք զբարիս գործել: *Ապա եթէ
ոչ ոք հնազանդեսցի բանից մերում թղթովդ
այդուիկ, դուք նշանակեսջիք զնա. եւ մի խառ-
15 նակեսջիք ընդ նմա, զի պատկառեսցէ. *բայց
մի իբրեւ զթշնամի համարեսջիք, այլ խրատես-
ջիք իբրեւ զեղբայր:
16 *Եւ ինքն Տէր խաղաղութեան, տացէ ձեզ
խաղաղութիւն յամենայն ժամ յամենայն իրս:
17 Տէր ընդ ամենեսին ընդ ձեզ: *Ողջոյն՝ իմով ձե-
ռին Պաւղոսի է, որ է նշանակ յամենայն թուղ-
18 թս այսպէս գրեմ: *Շնորհք Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեսին ձեզ:

Առ Թեսաղոնիկեցիս Երկրորդ՝ Գրեցաւ յԱթենայ:

ԹՈՒՂԹ
ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

ԱԿ. ՊԱՒՂՈՍ Առաքեալ Յիսուսի Քրիս- 1
տոսի, ըստ հրամանի Փրկչին մերոյ
Աստուծոյ, եւ Յիսուսի Քրիստոսի յուսոյն մերոյ,
* Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ հաւատովք։ Շը- 2
նորհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստու-
ծոյ Հօրէ եւ ՚ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիս-
տոսէ։

* Որպէս աղաչեցի զքեզ կալ յԵփեսոս, մինչ 3
երթային ՚ի Մակեդոնիա, զի պատուէր տացես
ոմանց չլինել օտարուսոյցս, * եւ չհայել յա- 4
ռասպելս եւ ՚ի տոհմաթիւս անչափս. որ մա-
նաւանդ խնդիրս յուզեն, եւ ոչ զտնտեսութիւն
Աստուծոյ հաւատովք։ * Քանզի գլուխ պատու- 5
իրանին՝ սէր է, ՚ի սուրբ սրտէ եւ ՚ի մտաց
բարեաց, եւ յանկեղծաւոր հաւատոյ. * յորոց 6
ոմանք վրիպեցան խոտորեալք յունայնութիւն
բանից. * կամին լինել վարդապետք օրինաց, ին- 7

քեանք ոչ իմանան զինչ խօսին, եւ ոչ վասն ո-
8 րոյ պնդեալն են։ * Գիտեմք՝ եթէ բարւոք են
9 օրէնք, եթէ ոք զնոսա օրինօք կրեսցէ. * բայց
զայս գիտասցէ՝ զի ՚ի վերայ արդարոց օրէնք ոչ
կան, այլ ՚ի վերայ անօրինաց եւ անհնազանդից,
ամպարշտաց եւ մեղաւորաց, անսրբոց եւ պղծ-
ծոց, զհայր եւ զմայր անարգողաց, մարդասպա-
10 նաց, * պոռնկաց, արուագիտաց, մարդելու-
զաց, ստոց, ստերդմնաց. եւ եթէ այլ ինչ իցէ
11 հակառակ ողջամիտ վարդապետութեանս, * որ
ըստ Աւետարանի փառաց երանելւոյն Աստու-
ծոյ է, որում եղէ ես հաւատարիմ։ Վ.Ջ
12 * Շնորհ ունիմ այնմիկ որ զօրացոյցն զիս ՚ի
Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր. զի հաւատարիմ
13 համարեցաւ կարգել ՚ի սպասաւորութիւն, * որ
յառաջագոյն հայհոյիչն էի եւ հալածիչ եւ
թշնամանիչ. այլ գտի ողորմութիւն, զի զայն
յանգիտութեան եւ յանհաւատութեան գոր-
14 ծէի. * եւ առաւել եղեն շնորհք Տեառն մերոյ
հաւատովքն եւ սիրովն՝ որ ՚ի Քրիստոս Յիսուս։
15 * Հաւատարիմ է բանս, եւ ամենայն ընդունե-
լութեան արժանի է, զի Յիսուս Քրիստոս եկն
յաշխարհ փրկել զմեղաւորս, որոց գլուխն ես
16 եմ. * այլ վասն այնորիկ գտի ողորմութիւն, զի
նախ յիս եցոյց Յիսուս Քրիստոս զամենայն եր-
կայնմտութիւն, յօրինակ այնոցիկ որ հաւա-
տալոցն իցեն ՚ի նա՝ ՚ի կեանսն յաւիտենից։
17 * Այլ Թագաւորին յաւիտենից՝ անեղծի եւ ա-

ներեւութի, միոյն Աստուծոյ՝ փառք եւ պատիւ
յաւիտեանս յաւիտենից. ամէն։
*Զայս պատուիրան աւանդեմ քեզ, որդեակ 18
իմ Տիմոթէոս, ըստ կանխելոց 'ի քեզ մարգա֊
րէութեանցն, զի դու զինուորիցիս նոքօք զգե֊
ղեցիկ զինուորութիւնն. *ունիցիս հաւատս 19
որբովք մտօք. զոր ոմանց մերժեալ յանձանց
իւրեանց՝ նաւաբեկեցան 'ի հաւատոյն. *որոց 20
սակի են Հիմենոս եւ Աղեքսանդրոս, զորս մատ֊
նեցի սատանայի՝ զի խրատեսցին չհայհոյել։

ԳԼՈՒԽ Բ.

Ես արդ աղաչեմ նախ քան զամենայն առ֊ 1
նել աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհու֊
թիւնս վասն ամենայն մարդկան, *մանաւանդ 2
վասն թագաւորաց եւ ամենայն իշխանաց. զի
խաղաղութեամբ եւ հանդարտութեամբ վա֊
րեսցուք զկեանս մեր, ամենայն աստուածպաշ֊
տութեամբ եւ սրբութեամբ։ *Զի այն է բա֊ 3
րի եւ ընդունելի առաջի Փրկչին մերոյ Աստու֊
ծոյ. *որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն՝ 4
եւ 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն։
*Զի մի է Աստուած, եւ մի միջնորդ Աստու֊ 5
ծոյ եւ մարդկան՝ մարդ Յիսուս Քրիստոս. *որ 6
ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն, վկայու֊
թիւն ժամանակաց իւրոց, *յոր եդայ ես քարոզ 7
եւ առաքեալ. ճշմարիտ ասեմ 'ի Քրիստոս եւ

ոչ ստեմ, եղէ վարդապետ հեթանոսաց հա֊
ւատովք եւ ճշմարտութեամբ։
8 ԱԳ. *Կամիմ զի արք կայցեն յաղօթս յա֊
մենայն տեղիս, բառնայցեն զսուրբ ձեռս 'ի
վեր առանց բարկութեան եւ երկմտութեան։
9 *Նոյնպէս եւ կանայք 'ի զարդ խոնարհութեան,
ակնածութեամբ եւ զգաստութեամբ զարդա֊
րել զանձինս. մի 'ի հիւսս ոսկեմանս ընդելու֊
զեալս մարգարտով, կամ 'ի հանդերձս պաճու֊
10 ճեալս. *այլ որպէս վայելէ կանանց՝ զաստուած֊
պաշտութիւն յանձն առելոց գործովք բարու֊
թեան։
11 *Կին մարդ ցածութեամբ ուսցի, ամենայն
12 հնազանդութեամբ. *այլ ուսուցանել կնոջ
մարդոյ ոչ հրամայեմ, եւ ոչ ճոխաբան լինել
13 քան զայր մարդ, այլ 'ի լռութեան կալ. *զի
14 Ադամ նախ ստեղծաւ եւ ապա Եւա. *եւ Ա֊
դամ ոչ պատրեցաւ, այլ կինն պատրեցաւ եւ
15 յանցեաւ. *բայց կեցցէ վասն որդեծնութեա֊
նըն, եթէ կայցեն 'ի հաւատս եւ 'ի սէր եւ 'ի
սրբութիւն պարկեշտութեան։

ԳԼՈՒԽ Գ.

1 Հաւատարիմ է բանս, եթէ ոք եպիսկոպո֊
սութեան ցանկայ, բարւոյ գործոյ ցանկայ։
2 *Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, միոյ
կնոջ այր, արթուն, հեզ, ցած, պարկեշտ, հիւ֊

բասէր, ուսուցիչ. * մի՛ թշնամանող, մի՛ հարկա- 3
նող, այլ հանդարտ. մի՛ կռուօղ, մի՛ արծաթա-
սէր. * զի իւրում տանն իսկ բարւոք վերակա- 4
ցու լինել իցէ. որդեակս ունիցի՝ որ ՚ի հնազան-
դութեան կայցեն ամենայն պարկեշտութեամբ։
* Ապա թէ ոք իւրում տանն վերակացու չգի- 5
տիցէ լինել, զիա՞րդ եկեղեցւոյ Աստուծոյ խնա-
մակալ լիցի։ * Մի՛ մատաղատունկ, զի մի՛ հպ- 6
պարտացեալ ՚ի դատաստանս սատանայի անկա-
նիցի. * այլ պարտ է նմա վկայութիւն բարի եւ 7
յարտաքնոցն ունել, զի մի՛ ՚ի նախատինս ան-
կանիցի՝ եւ յորոգայթս սատանայի։ * Նոյնպէս 8
եւ զսարկաւագունս պարկեշտս. մի՛ երկբանս,
մի՛ գինեսէրս, մի՛ զօշաքաղս, * այլ ունիցին ըզ- 9
խորհուրդս հաւատոցն սուրբ մտօք. * Նոքեանք 10
նախ փորձեսցին, եւ ապա ՚ի պաշտօնն մատի-
ցեն, զի անարատք իցեն. * Նոյնպէս եւ կանայք 11
նոցա պարկեշտք. մի՛ չարախօսք, հեզք, հաւա-
տարիմք յամենայնի։ * Սարկաւագք լինիցին միոյ 12
կնոջ արք. որոց որդւոց իւրեանց բարւոք վե-
րակացու լինել իցեն՝ եւ տանց իւրեանց. * զի 13
որ բարւոքն պաշտիցեն, աստիճան բարի անձանց
իւրեանց շահին, եւ բազում համարձակու-
թիւն ՚ի հաւատսն՝ որ ՚ի Քրիստոս Յիսուս։ ԿԶ
* Զայս գրեմ առ քեզ, զի ակն ունիմ ՚ի մօ- 14
տոյ գալ. * ապա թէ յամեցից, զի գիտասցես՝ 15
թէ որպէս պարտ իցէ քեզ ՚ի տան Աստուծոյ
շրջել, որ է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ, սիւն

16 և հաստատութիւն ճշմարտութեան։ * Եւ յայտնի
իսկ մեծ է խորհուրդն աստուածպաշտութեան,
որ երեւեցաւ մարմնով, արդարացաւ հոգւով,
յայտնեցաւ հրեշտակաց, քարոզեցաւ ՚ի հե-
թանոսս, հաւատարիմ եղեւ յաշխարհի, եւ
վերացաւ փառօք։

ԳԼՈՒԽ Դ.

1 Ա.Զ. Այլ Հոգին Սուրբ յայտնապէս ասէ,
թէ ՚ի ժամանակս յետինս քակեսցին ոմանք ՚ի
հաւատոցն. եւ հայեսցին յայս մոլորութեան,
2 եւ ՚ի վարդապետութիւնս դիւաց՝ * կեղծաւո-
րութեամբ. ստաբանք, խարեալք իւրեանց
3 խղճիւն մտաց. * որ արգելուցուն յամուսնանա-
լոյ, եւ մեկնիցեն ՚ի կերակրոյ՝ զոր Աստուած
հաստատեաց ՚ի վայելել հաւատացելոց՝ եւ ոյք
4 հասեալ իցեն ՚ի ճշմարտութեանն վերայ. * զի
ամենայն արարածք Աստուծոյ բարի են, եւ չիք
ինչ խոտան. մանաւանդ որ գոհութեամբ ըն-
5 դունիցին. * Զի սրբի բանիւն Աստուծոյ եւ ա-
6 ղօթիւք։ * Զայս խրատ տուեալ եղբարց, բար-
ւոք պաշտօնեայ լինիցիս Քրիստոսի Յիսուսի, սը-
նանիցիս բանիւք հաւատոց, եւ բարւոք վար-
դապետութեամբքն՝ զորոյ զհետ իսկ եղեր։
7 * Այլ ՚ի պիղծ բանից եւ յառասպելաց պառա-
ւանց հրաժարեսջիր։
Բայց կրթեա զանձն քո յաստուածպաշտու-

թիւն. * զի մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ 8
օգտակար է, իսկ աստուածպաշտութիւն առ
ամենայն ինչ օգտակար է, եւ զաւետիս կենաց
ունի՝ զարդիս եւ զհանդերձելոցն. * Հաւատա- 9
րիմ է բանս եւ ամենայն ընդունելութեան
արժանի է. * զի ՚ի սոյն իսկ վաստակեմք եւ նա- 10
խատինս յանձն առնումք. զի յուսացեալ եմք
յԱստուած կենդանի, որ է փրկիչ ամենայն
մարդկան, մանաւանդ հաւատացելոց: * Պա- 11
տուէր տաջիր զայդ եւ ուսուցանիջիր, * զի մի 12
ոք զքո մանկութիւնդ արհամարհիցէ.

Բկ. * Այլ օրինակ լինիջիր հաւատացելոց,
բանիւք, գնացիւք, սիրով, հաւատովք, սըր-
բութեամբ. * մինչեւ գամ ես. միտ դիր ըն- 13
թերցուածոյ մխիթարութեան վարդապետու-
թեան. * մի անփոյթ առներ զշնորհացդ որ ՚ի 14
քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ՚ի
ձեռնադրութենէ երիցութեան: * Ցայդ խոր- 15
հեաց եւ ՚ի դոյն կանխեսջիր, զի քո յառաջա-
դիմութիւն ամենեցուն յայտնի լիցի. * Զգոյշ լե- 16
նիջիր անձին եւ վարդապետութեանդ, եւ ՚ի
դմին յամեսջիր. զայդ եթէ առնիցես՝ եւ զանձն
ապրեցուսցես, եւ զայնոսիկ որ քեզն լսիցեն:

ԳԼՈՒԽ Ե.

Զծերն մի պատուհասիցես, այլ մխիթարես- 1
ջիր իբրեւ զհայր. զերիտասարդս իբրեւ զեղ-

2 բարս, * զպառաւունս իբրեւ զմարս, զմանկա-
մարդս իբրեւ զքորս, ամենայն սրբութեամբ:
3 * Զայրիս պատուեա՝ որ ստոյգ այրիքն իցեն.
4 ապա թէ ոք այրի * որդիս եւ թոռունս ունի-
ցի, ուսանիցին նախ իւրեանց տանց բարի առ-
նել, եւ զփոխարէնսն հատուցանել ծնողացն.
զի այն է բարի եւ ընդունելի առաջի Աստու-
5 ծոյ: * Իսկ որ ճշմարտիւ այրին իցէ, եւ մենա-
ցեալ յուսացեալ յԱստուած, եւ կանխեալ
յաղօթս եւ ՚ի խնդրուածս զցայգ եւ զցերեկ:
6 * Իսկ գիրգ այրին կենդանւոյն մեռեալ է. * զայս
7 պատուիրեա՝ զի անարատք իցեն: * Իսկ եթէ
8 ոք իւրոց, եւ մանաւանդ եւ ընտանեաց իւ-
նամ ոչ տանիցի, ՚ի հաւատոյն ուրացեալ է,
9 եւ չար եւս քան զանհաւատն է: * Այրի՝ ընդ
այրիս անուանեսցի, որ չիցէ պակաս ՚ի վաթսու-
10 նամենից, միոյ առն կին լեալ, * եւ ՚ի գործս
բարիս վկայեալ. եթէ մանկունս սնուցեալ ի-
ցէ, եթէ զհիւրս ընկալեալ իցէ, եթէ զսրբոց
զոտս լուացեալ իցէ, եթէ նեղելոց բաւական
լեալ իցէ, ՝եթէ զամենայն գործոց բարեաց
11 զհետ երթեալ իցէ: * Այլ ՚ի մանկամարդաց
այրեացն հրաժարեա, զի յորժամ խայտան ըզ-
12 Քրիստոսիւ՝ ամուսնանալ կամին. * իսկ զդատաս-
տանս ընդունին, զի զառաջին հաւատսն ար-
համարհեցին. միանգամայն եւ դատարկան-
13 ձունք ուսանին, շրջօղք տանէ ՚ի տուն. * եւ ոչ
միայն դատարկք, այլ եւ փաղքուք եւ հետա-

քրքիրք . եւ խօսին՝ որ ինչ ոչ է պիտոյ ։ * Կա֊ 14
միմ զմանկամարդացդ ամուսնանալ, որդիս ծը֊
նանել, տնարարս լինել, եւ մի ինչ պատճառս
տալ հակառակորդին ՚ի հայհոյութեան աղագս .
* զի արդէն իսկ ոմանք խոտորեցան զկնի սատա֊ 15
նայի ։ * Եթէ ոք հաւատացեալ՝ այրիս ունիցի, 16
բաւական լիցի նոցա , եւ մի ծանրասցի եկե֊
ղեցւոյն . զի ճշմարիտ այրեացն՝ բաւական լի֊
նիցի ։

ԲԴ . * Որ բարւոք վերակացու լինին երիցունք՝ 17
կրկին պատուոյ արժանի եղիցին , մանաւանդ
որ աշխատիցին բանիւ եւ վարդապետութեամբ .
* քանզի ասէ գիր . Մի կապեսցես զցռուկ եզին 18
կալոտւոյ , եւ արժանի է մշակն վարձու իւրոյ ։
* Զերիցուէ չարախօսութիւն մի ընդունիցիս , 19
բայց եթէ երկուք եւ երիւք վկայիւք . * իսկ որ 20
մեղանչէնն՝ առաջի ամենեցուն յանդիմանեա ,
զի եւ այլքն երկիցեն ։ * Վկայութիւն դնեմ ա֊ 21
ռաջի Աստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի եւ ընտը֊
րելոց հրեշտակաց , զի զայդ պահեսցես ա֊
ռանց մտահաճութեան . մի ինչ առնել աչա֊
ռանօք ։

* Ձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի դնի֊ 22
ցես , եւ մի կցորդ լինիցիս մեղաց օտարաց .
զանձն քո սուրբ պահեսջիր ։ — * Այսուհետեւ 23
մի ջուր եւեթ ըմպիցես , այլ սակաւիկ մի եւ
գինի խառնեսջիր , վասն ստամոքսի եւ ստէպ
հիւանդութեանց ։ —

24 * Են մարդք՝ որոց մեղքն յայտնի են , եւ յա֊
ռաջագոյն հասեալ ՚ի դատաստան , եւ են՝ ո֊
25 րոց զկնի երթան . * նոյնպէս եւ բարի գործքն՝
յայտնի են , եւ որ այլ ազգ եւս ինչ իցեն՝
թաքչել ոչ կարեն ։

ԳԼՈՒԽ Զ .

1 Որ միանգամ ընդ լծով ծառայութեան իցեն՝
զիւրաքանչիւր տեարս պատուոյ արժանի համա֊
րեսցին . զի մի անուանն Աստուծոյ եւ վարդա֊
2 պետութիւնն հայհոյեսցի ։ * Իսկ որ հաւատա֊
ցեալ տեարս ունիցին , մի արհամարհեսցեն ,
զի եղբարք են . այլ առաւել ծառայեսցեն , զի
հաւատացեալքն են եւ սիրունք . որք զբարերա֊
րութիւնն յանձին ունիցին . զայս ուսուցանիջիր
եւ մխիթարեսջիր ։

3 * Իսկ եթէ ոք այլազգ ինչ ուսուցանիցէ , եւ
ոչ անսայցէ ողջմտութեան բանից Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի , եւ ըստ աստուածպաշտու֊
4 թեան վարդապետութեանն , * այնպիսին հպար֊
տացեալ է , եւ ոչ ինչ ոչ գիտէ . այլ տապի ՚ի
խնդիրս եւ ՚ի բանս հակառակութեան . ուստի
լինի նախանձ , հեռ , հայհոյութիւնք , կարծիք
5 չարեաց , * խարդախութիւնք ապականելոց մը֊
տաց մարդկան , եւ օտարացելոց ՚ի ճշմարտու֊
թենէ անտի , որք շահավաճառ համարին զաս֊
տուածպաշտութիւնն . բայց դու մերժեսջիր
յայնպիսեաց անտի ։

ԲԶ. * Այլ շահավաճառ մեծ աստուա- 6
պաշտութիւնն է՝ բաւականութեամբ հանդերձ.
* զի ոչ բերաք ինչ յաշխարհս, եւ ոչ տանել 7
ինչ կարասցուք. * այլ ունիմք կերակուր եւ հան- 8
դերձս, եւ այնու շատասցուք: * Իսկ որք կամին 9
մեծանալ՝ անկանին 'ի փորձութիւն եւ յորո-
գայթ, եւ 'ի բազում ցանկութիւնս անմիտս եւ
վնասակարս, որք ընկղմեն զմարդիկ 'ի սատա-
կումն եւ 'ի կորուստ: * Զի արմատ ամենայն 10
չարեաց՝ արծաթսիրութիւն է, որում ոմանց
ցանկացեալ՝ վրիպեցան 'ի հաւատոյն, եւ զան-
ձինս արկին ընդ բազում ցաւովք:

* Այլ դու, ո՛վ մարդ Աստուծոյ, փախիր 11
յայնցանէ, եւ երթ զհետ արդարութեան,
զաստուածպաշտութեան, զհաւատոյ, զսիրոյ,
զհամբերութեան, զհեզութեան. * եւ մարտիր 12
զբարւոք մարտն հաւատոյ, եւ բուռն հար ըզ-
կենացն յաւիտենականաց յոր կոչեցարն, եւ
դաւանեցեր զբարւոք դաւանութիւն առաջի
բազում վկայից: * Պատուիրեմ քեզ առաջի Աս- 13
տուծոյ՝ որ կենդանի առնէ զամենայն, եւ Յի-
սուսի Քրիստոսի՝ որ վկայեաց առաջի Պոնտաց-
ւոյ Պիղատոսի զբարւոք դաւանութիւնն. * պա- 14
հել քեզ զպատուիրանն, անբիծ՝ անարատ, մին-
չեւ 'ի յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քը-
րիստոսի. * զոր յիւր ժամանակս ցուցցէ երա- 15
նելին, եւ միայն հզօր, Թագաւոր Թագաւորաց,
եւ Տէր տերանց. * որ միայն ունի զանմահու- 16

թիւն՝ բնակեալ 'ի լոյս անմատոյց. զոր ոչ ոք
ետես 'ի մարդկանէ, եւ ոչ տեսանել կարող է.
որում պատիւ եւ զօրութիւն յաւիտեանս.
ամէն:

17 * Մեծատանց որ են յայսմ աշխարհի՝ պա-
տուէր տացիր՝ մի հպարտանալ եւ մի յուսալ
'ի մեծութիւն անստի, այլ յԱստուած՝ որ տայ
18 մեզ զամենայն առատապէս 'ի վայելել. * զբա-
րիս գործել, մեծանալ գործովք բարութեան,
19 առատս, սիրունս, հաղորդս լինել. * գանձել
անձանց հիմն բարի 'ի հանդերձեալսն. զի բու-
20 ռըն հարկանիցեն զճշմարիտ կենացն: * Ո՛վ Տիմո-
թէէ, պահեա զաւանդն՝ խոտորեալ 'ի պղծոյ
եւ 'ի նորաձայն բանից, եւ 'ի հակառակութե-
21 նէ եւ 'ի մոլարանուն գիտութենէ. * զոր ոմանց
յանձն առեալ՝ վրիպեցան 'ի հաւատոյ անտի:
Շնորհք ընդ քեզ:

Առ Տիմոթէոս առաջին թուղթ՝ գրեցաւ 'ի Լաւոդիկէայ,
որ է մայր քաղաքաց Պաղկատիանացւոց:

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

ԳԿ. ՊԱՒՂՈՍ Առաքեալ Յիսուսի Քրիս- 1
տոսի կամօքն Աստուծոյ, ըստ աւե-
տեաց կենացն որ 'ի Քրիստոս Յիսուս, * Տիմո- 2
թեայ որդւոյ սիրելւոյ, շնորհք ողորմութիւն,
եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ եւ 'ի Քրիս-
տոսէ Յիսուսէ Տեառնէ մերմէ :
* Շնորհ ունիմ Աստուծոյ զոր պաշտեմն 'ի 3
նախնեաց մտօք սրբովք, իբրեւ զի անպակաս
ունիմ զքէն յիշատակ յաղօթս իմ. զցայգ եւ
զցերեկ ցանկացեալ եմ տեսանել զքեզ, * յիշա- 4
տակեալ զարտասուսն քո, զի լցայց ուրախու-
թեամբ. * զմտաւ ածեալ զանխիղճ հաւատսն 5
որ են 'ի քեզ, որ յառաջագոյն բնակեցաւ 'ի հա-
նոյ քում Լաւոդեայ, եւ 'ի մօր քում Եւնիկեայ.
հաստատեալ եմ թէ եւ 'ի քեզ է : * Վասն որոյ 6
յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստու-
ծոյ՝ որ են 'ի քեզ 'ի ձեռնադրութենէ իմմէ :

7 * Զի ոչ ետ մեզ Աստուած հոգի վհատութեան,
այլ զօրութեան եւ սիրոյ եւ զգաստութեան.
8 * մի՛ այսուհետեւ ամօթ համարիցիս զվկայու-
թիւնն Տեառն մերոյ, եւ մի՛ զիս զկապեալ նո-
րա. այլ կցորդ լեր չարչարանաց Աւետարանին՝
9 ըստ զօրութեանն Աստուծոյ, * որ փրկեացն
զմեզ, եւ կոչեաց 'ի կոչումն սուրբ. ոչ ըստ
գործոց մերոց, այլ ըստ իւրում յառաջադրու-
թեանն, եւ շնորհացն որ տուաւ մեզ 'ի Քրիս-
տոս Յիսուս՝ յառաջ քան զժամանակս յաւի-
տենից :
10 ԳԴ. * Բայց յայտնեցաւ այժմիկ՝ յերեւել
փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ խափանեաց
զմահ՝ եւ լուսաւոր արար զկեանս եւ զանեղ-
11 ծութիւն 'ի ձեռն Աւետարանին, * որոյ եդայ
ես քարոզ եւ Առաքեալ եւ վարդապետ հե-
12 թանոսաց : * Վասն որոյ եւ զայս չարչարանս
կրեմ, այլ ոչ ինչ ամօթ համարիմ. քանզի գի-
տեմ յո հաւատացեալն եմ, եւ հաստատեալ
եմ, թէ կարող է զաւանդն իմ պահել յօրն
13 յայն : * Ունիցիս օրինակ ողջմտութեան բանիցն
զորս յինէն լուար, հաւատովք եւ սիրովն որ 'ի
14 Քրիստոս Յիսուս. * զբարւոք աւանդն պահեսջիր
'ի ձեռն Հոգւոյն Սրբոյ 'ի մեզ բնակելոյ :
15 * Զայս գիտասջիր՝ զի մեկնեցան 'ի մէնջ ա-
մենեքին՝ որ էին յԱսիա, որոց սակի են Փիգե-
16 լոս եւ Հերմոգենէս. * տացէ Աստուած ողոր-
մութիւն տանն Ոնեսիփորայ. զի բազում ան-

գամ հանգոյց զիս, եւ զկապանս իմ ոչ ամօթ
համարեցաւ. * այլ իբրեւ եկն 'ի Հռովմ, պըն- 17
դագոյնս խնդրեաց զիս եւ եգիտ. * տացէ նմա 18
Տէր ողորմութիւն գտանել 'ի Տեառնէ յաւուրն
յայնմիկ. եւ որչափ ինչ միանգամ յԵփեսոս
սպաս կալաւ ինձ, զայն դու ինքնին քաջ գիտես:

ԳԼՈՒԽ Բ.

Արդ դու, որդեակ իմ, զօրացիր շնորհօքն 1
որ 'ի Քրիստոս Յիսուս. * եւ զոր լուար յինէն բա- 2
զում վկայիւք, զայն աւանդեսցես հաւատարիմ
մարդոց, որք բաւական լիցին եւ զայլս ուսու-
ցանել:

Գ.Զ. * Վշտակից լեր իբրեւ զբարւոք զի- 3
նուոր Քրիստոսի Յիսուսի: * Ոչ ոք զինուորեալ 4
աստէն ընդ կեանս աշխարհիս պատաղի, եթէ
զօրավարին հաճոյ լինիցի. * եւ եթէ մարտիկ 5
ոք իցէ՝ ոչ պսակի եթէ ոչ ըստ օրինին մարտի-
ցէ. * եւ հողագործին աշխատելոյ՝ պարտ է նախ 6
'ի պտղոյն վայելել: * Իմա՛ց զինչ ասեմ. տա- 7
ցէ քեզ Տէր իմաստութիւն յամենայնի:

* Յիշեա զՔրիստոս Յիսուս յարուցեալ 'ի մե- 8
ռելոց՝ 'ի զաւակէ Դաւթի, ըստ աւետարանիս
իմում. * յորում չարչարիմ կապանօք չափ իբ- 9
րեւ զչարագործ, այլ բանն Աստուծոյ ոչ եթէ
կապեալ իցէ: * Վասն այնորիկ ամենայնի համ 10
բերեմ վասն ընտրելոցն, զի եւ նոքա փրկու-

թեանն հասանիցեն՝ որ 'ի Քրիստոս Յիսուս երկ-
11 նաւոր փառօքն հանդերձ: * Հաւատարիմ է
բանս, զի եթէ ընդ նմա մեռաք, ընդ նմին եւ
12 կեցցուք. * եթէ համբերեմք, ընդ նմին եւ թա-
գաւորեսցուք. եւ եթէ ուրանամք, եւ նա
13 ուրասցի զմեզ. * եւ եթէ չհաւատամք, նա հա-
ւատարիմ մնայ, ուրանալ զանձն իւր ոչ կարէ:
14 * Զայս յուշ արասջիր՝ վկայութիւն եդեալ ա-
ռաջի Աստուծոյ, մի բանակռիւ լինել յոչինչ
պէտս 'ի կործանումն լսողաց:

15 Կ.Ի.Բ. * Փութասջիր զանձն քո ընտիր կա-
ցուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ա-
մօթոյ. ուղիղ համառօտել զբանն ճշմարտու-
16 թեան: * Այլ 'ի պղծոց եւ 'ի սնոտի խօսից մեր-
ժեսջիր. զի առաւել յառաջ գայցեն յամպա-
17 րըշտութիւնս. * եւ բանք նոցա իբրեւ զքաղց-
կեղ ճարակ գտանեն. որոց աւկի են Հիմենոս
18 եւ Փիղետոս. * որք վրիպեցան 'ի ճշմարտութե-
նէն, եւ ասեն՝ եթէ յարութիւն մեռելոց ար-
դէն իսկ եղեալ է. եւ կործանեն զհաւատս ո-
19 մանց: * Այլ հաստատուն հիմն Աստուծոյ կայ
եւ ունի զկնիքս զայս, թէ ծանեաւ Տէր զայ-
նոսիկ՝ որ իւրն են. եւ 'ի բաց լիցի յանիրաւու-
թենէ՝ ամենայն որ անուանէ զանուն Տեառն:
20 * Այլ 'ի տան մեծի՝ ոչ միայն են անօթք ոսկե-
ղէնք եւ արծաթեղէնք, այլ եւ փայտեղէնք եւ
խեցեղէնք. են որ 'ի պատուի են, եւ են որ
21 յանարգութեան. * եթէ ոք սրբեսցէ զանձն

իւր յայնպիսեաց անտի, եղիցի անօթ պատուա-
կան, սրբեալ եւ պիտանի Տեառն իւրում՝
յամենայն գործս բարութեան պատրաստեալ։
* Այլ յերիտասարդական ցանկութեանցն փա- 22
խիր, եւ երթ զհետ արդարութեան, զհաւա-
տոյ, զսիրոյ, զխաղաղութեան, զսրբութեան,
ընդ այնոսիկ որ կարդան զանուն Տեառն սուրբ
սրտիւք։ * Այլ 'ի յիմար եւ յանխրատ խնդրոց 23
հրաժարեա. գիտասջիր՝ թէ անտի ծնանին կը-
ռիւք. * բայց ծառայի Տեառն ոչ է պարտ կը- 24
ռուել, այլ հեզ լինել առ ամենեսեան, ուսու-
ցիչ, անոխակալ. * հանդարտութեամբ խրա- 25
տել զհակառակորդսն. թերեւս տացէ նոցա Աս-
տուած ապաշխարութիւն՝ 'ի գիտութիւն ճըշ-
մարտութեան, * եւ սթափեսցին յորոգայթից 26
սատանայի որսացեալք 'ի նմանէ 'ի նորա կամսն։

ԳԼՈՒԽ Գ.

ԿԻՐ. Զայս գիտասջիր, եթէ յաւուրս յե- 1
տինս եկեսցեն ժամանակք չարք. * զի եղիցին 2
մարդիկ անձնասէրք, արծաթասէրք, հպարտք,
ամբարտաւանք, հայհոյիչք, անհաւանք ծնո-
ղաց, անշնորհք, անսուրբք, * աննուէրք, ան- 3
գութք, բանսարկուք, անժոյժք, վէսք, անբա-
րեսէրք, * մատնիչք, յանդգունք, ամբարհա- 4
ւաճք, ցանկասէրք՝ մանաւանդ քան աստուա-
ծասէրք. * որ ունիցին զկերպարանս աստուած- 5

պաշտութեան, եւ 'ի զօրութենէ անտի նորա
6 ուրացեալ իցեն. եւ խորշեսջիր 'ի նոցանէ.* քան-
զի 'ի նոցանէ են՝ որ մտանեն տանէ 'ի տուն,
եւ գերեն զկանայս շեղջակուտեալս մեղօք, վա-
7 րեալս 'ի պէսպէս ցանկութիւնս. * որ յամենայն
ժամ ուսանին, եւ երբէք 'ի գիտութիւն ճըշ-
8 մարտութեան ոչ հասանեն։ * Այլ որպէս Յա-
նէս եւ Յամրէս հակառակ կացին Մովսէսի,
նոյնպէս եւ սոքա հակառակ կան ճշմարտու-
թեանն. մարդք ապականեալք մտօք, անպի-
9 տանք 'ի հաւատս. * այլ ոչ երբէք գայցեն յա-
ռաջ 'ի լաւ անդր. քանզի անմտութիւն սոցա
յայտնի լիցի ամենեցուն, որպէս եւ նոցայն
իսկ եղեւ։

10 * Այլ դու զհետ եկիր վարդապետութեան
իմոյ, առաջնորդութեան. յօժարութեան, հա-
ւատոյ, երկայնմտութեան, սիրոյ, համբերու-
11 թեան, * հալածանաց, չարչարանաց. որպիսիք
եղեն ինձ յԱնտիոք եւ յԻկոնիոն եւ 'ի Լիւստրոս.
որպիսի հալածանաց համբերի, եւ յամենայնէ
12 փրկեաց զիս Տէր։ * Եւ ամենեքին որ կամիցին
աստուածպաշտութեամբ կեալ 'ի Քրիստոս Յի-
13 սուս, 'ի հալածանս կայցեն. * այլ մարդք չարք
եւ կախարդք՝ յառաջ եկեսցեն 'ի չար անդր.
14 մոլորեալք՝ եւ մոլորեցուցանիցեն։ * Այլ դու
հաստատուն կաց յոր ուսարդ, եւ հաւա-
15 տարիմ եղեր. գիտես ուստի ուսար. * զի 'ի
մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որ կա-

րող են իմաստուն առնել զքեզ 'ի փրկութիւն՝
'ի ձեռն հաւատոցն որ 'ի Քրիստոս Յիսուս ։
ԴՇ. * Ամենայն գիրք աստուածաշունչք եւ 16
օգտակարք 'ի վարդապետութիւն են եւ 'ի յան-
դիմանութիւն, եւ յուղղութիւն եւ 'ի խրատ
արդարութեան. * զի կատարեալ լիցի մարդն 17
Աստուծոյ, յամենայն գործս բարութեան հաս-
տատեալ ։

ԳԼՈՒԽ Դ.

Զայս վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ 1
եւ Յիսուսի Քրիստոսի, որ դատելոց է զկենդա-
նիս եւ զմեռեալս 'ի յայտնութեան իւրում եւ
յարքայութեան. * եւ դու քարոզեա զբանն, հաս 2
'ի վերայ ժամու եւ տարաժամու, յանդիմա-
նեա, սաստեա, մխիթարեա, ամենայն երկայն-
մտութեամբ եւ վարդապետութեամբ ։ * Քան- 3
զի եկեսցէ ժամանակ՝ զի ողջմտութեան վար-
դապետութեանն ոչ անսայցեն, այլ ըստ իւրա-
քանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց
վարդապետս՝ ըստ մարմաջելոյ լսելեաց իւր-
եանց, * եւ 'ի ճշմարտութենէ անտի դարձու- 4
ցանիցեն զլսելիս եւ յառասպելս կործանեսցին ։
* Այլ դու զուարթ կաց յամենայնի, ճգնեաց, 5
զգործս աւետարանչի գործեա, զպաշտօնդ քո
կատարեալ կալ ։
* Զի ես այսուհետեւ նուիրեալ եմ, եւ ժա- 6

7 մանակ դարձի իմոյ հասեալ կայ. * զբարւոք պա-
տերազմ պատերազմեցայ, զընթացսն կատարե-
8 ցի, զհաւատսն պահեցի ։ * Այսուհետեւ կայ
մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատու-
ցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն դատա-
ւոր. ոչ միայն ինձ, այլ եւ ամենեցուն որ սի-
րեցին զյայտնութիւն նորա ։
ԶՇ. Փութասջիր գալ առ իս վաղվաղակի.
9 * զի Դեմաս եթող զիս՝ եւ սիրեաց զաշխարհ,
10 եւ գնաց 'ի Թեսաղոնիկէ. * Կրեսկէս՝ 'ի Գաղղիա,
11 Տիտոս 'ի Դաղմատիա.- * Ղուկաս միայն է ընդ իս ։
Զմարկոս առեալ ընդ քեզ ածցես՝ զի է ինձ
12 պիտանի 'ի սպասաւորութիւն. * զՏիւքիկոս ա-
13 ռաքեցի յԵփեսոս ։ * Զփիլոնն թողի 'ի Տրովա-
դայ առ Կարպոսի. յորժամ գայցես՝ բերջիր եւ
14 զգիրսն. մանաւանդ զմատեանսն ։ * Աղեքսանդր-
րոս (դարբին) բազում չարչարանս եցոյց ինձ.
15 հատուսցէ նմա Տէր ըստ գործս նորա. * յորմէ
եւ դու անձնապահ լինիջիր, զի շատ հակառակ
16 եկաց բանից մերոց ։ * Յառաջնում ատենին՝ ոչ
ոք ինձ 'ի թիկունս եկաց, այլ ամենեքին թո-
17 ղին զիս. մի համարեսցի նոցա այն. * այլ Տէր
օգնեաց ինձ եւ զօրացոյց զիս, զի ինեւ քարո-
զութիւնն հաստատեսցի. եւ լուիցեն ամենայն
հեթանոսք. եւ ապրեցայ ես 'ի բերանոյ առիւ-
18 ծուն ։ * Փրկեսցէ զիս Տէր յամենայն գործոց չա-
րեաց, եւ զերծուսցէ զիս յարքայութիւն իւր՝
որ յերկինս է. որում փառք յաւիտեանս յաւի-

տենից. ամէն: * Ողջոյն տացիր Պրիսկեայ եւ Ա- 19
կիւղեայ, եւ Ոնեսիփորեայ տանն: * Երաստոս մը- 20
նաց 'ի Կորնթոս. զՏրոփիմոս թողի 'ի Մելիտոս
հիւանդացեալ: * Փութասջիր յառաջ քան զձը- 21
մեռն գալ: Ողջոյն տան քեզ Եւբուղոս եւ Պու-
դէս եւ Լինոս եւ Կղաւդիա, և եղբարք ամենե-
քեան: * Տէր Յիսուս Քրիստոս ընդ ոգւոյդ քում: 22
Շնորհք ընդ քեզ:

Առ Տիմոթէոս երկրորդ թուղթ, որ էր Եփեսացւոց եպիսկոպոս առաջին յեռնադրեալ. գրեցաւ 'ի Հռոմէ՝ յորժամ երկրորդ անգամ եկաց յատենի Պօղոս առաջի Ներոնի կայսեր Հռոմայ:



ԹՈՒՂԹ
ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՏԻՏՈՍ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԿԻՐ. ՊԱՒՂՈՍ ծառայ Աստուծոյ, եւ ա-
ռաքեալ Յիսուսի Քրիստոսի, ըստ
հաւատոց ընտրելոցն Աստուծոյ եւ 'ի գիտու-
թիւն ճշմարտութեան, որ ըստ աստուածպաշ-
2 տութեանն է. * յուսով կենացն յաւիտենից,
զոր խոստացաւ անստուտն Աստուած յառաջ քան
3 զժամանակս յաւիտենից. * բայց յայտնեաց իւ-
րովք ժամանակօք զբանն իւր քարոզութեամբ,
որոյ եղէ ես հաւատարիմ, ըստ հրամանի Փրկ-
4 չին մերոյ Աստուծոյ. * Տիտոսի որդւոյ սիրելւոյ
ըստ հասարակաց հաւատոց. շնորհք եւ խա-
ղաղութիւն յԱստուծոյ 'ի Հօրէ՝ եւ 'ի Քրիստոսէ
Յիսուսէ Փրկչէ մերմէ:

5 * Վասն այնորիկ եդի թողի զքեզ 'ի Կրետէ,
զի որ ինչ միանգամ պակաս իցէ՝ ուղղեսցես,
եւ կացուսցես ըստ քաղաքաց երիցունս, որպէս
6 եւ ես քեզ պատուիրեցի. * եթէ ոք անարատ ի-
ցէ, միոյ կնոջ այր, որդեակս ունիցի հաւատա-
ցեալս, եւ ոչ յամբաստանութիւն անառակու-

թեան, կամ անհնազանդս։ *Զի պարտ է եպիսկո- 7
պոսին անարատ լինել, որպէս և Աստուծոյ տնտե-
սի. մի յանդուգն, մի բարկացօղ, մի թշնամանօղ,
մի հարկանօղ, մի զօշաքաղ. *այլ հիւրասէր, բա- 8
րեսէր, ցած, արդար, սուրբ, ժուժկալ. *վե- 9
րակացու լինել, հաւատարիմ բանին վարդապե-
տութեան. զի կարօղ իցէ եւ մխիթարել ողջ-
մտութեամբ վարդապետութեանն, եւ զհակա-
ռակորդսն կշտամբել։

*Քանզի բազումք են անհնազանդք, զրա- 10
խօսք եւ մտախաբք, մանաւանդ որ 'ի թլփա-
տութենէ անտի են. *զորս պարտ է ըմբերա- 11
նել. որք զամենայն տունս կործանեն, եւ ու-
սուցանեն՝ զոր չէ արժան, վասն զօշաքաղու-
թեան։

ԴՇ. *Ասաց ոմն 'ի նոցանէ՝ իւրեանց իսկ 12
մարգարէ, Կրետացիք հանապազստուք, չա-
րաճճիք, դատարկապորտք։ *Եւ ստոյգ է վկա- 13
յութիւնս այս. վասն որոյ կշտամբեսցես զնոսա
խստագոյնս, զի առողջասցին 'ի հաւատս. *եւ 14
մի հայեսցին 'ի հրէական առասպելս, եւ 'ի պա-
տուէրս մարդկան դառածելոցն 'ի ճշմարտութե-
նէ։ *Ամենայն ինչ սուրբ է սրբոց, բայց պղծոցն 15
եւ անհաւատից՝ ոչ ինչ է սուրբ. այլ պղծեալ
են միտք եւ խղճմտանք նոցա, *խոստանան գի- 16
տել զԱստուած, եւ գործովք իւրեանց ուրա-
նան, պիղծք եւ անհաւանք, եւ յամենայն գոր-
ծս բարեաց անպիտանք։

ԳԼՈՒԽ Բ.

1 Այլ դու խօսեաց որ ինչ վայելէ ողջամիտ
վարդապետութեանդ։
2 *Ծերոց զգաստս լինել, պարկեշտս, ցածու-
նս, ողջամիտս 'ի հաւատս, 'ի սէր, 'ի համբե-
3 րութեան, 'ի ժուժկալութեան։ *Պառաւանց՝
նոյնպէս 'ի գաստութեան, 'ի սուրբ վայելչու-
թեան, մի բանսարկուս, մի գինեմոլս, այլ բա-
4 րեխրատս. *զի զգաստացուցանիցեն զմանկա-
5 մարդսն՝ այրասէրս լինել, որդեսէրս, *ցածու-
նս, սուրբս, անարատս, բարեգործս, հնազան-
դս իւրեանց արանց. զի մի բանն Աստուծոյ եւ
6 վարդապետութիւնն հայհոյեսցի։ *Զերիտա-
սարդս նոյնպէս աղաչեսջիր՝ ցածունս լինել,
7 *ամենեցուն զանձն օրինակ կացուցանել գործոց
բարութեան, վարդապետութեամբ զանեղծու-
թիւն ունել, զորբութիւն, զպարկեշտութիւն,
8 զբանն ողջմտութեան, անպարսաւ լինել, *զի որ
հակառակորդն իցէ՝ յամօթ լիցի, եւ մի ինչ
ունիցի ասել զմէնջ չարութիւն։
9 *Ծառայից՝ իւրեանց տերանց հնազանդ լի-
10 նել եւ հաճոյս յամենայնի, *մի հակառակօղս,
մի հատուս. այլ զամենայն հաւատս ցուցանել
բարութեամբ, զի զվարդապետութիւն փրկչին
մերոյ Աստուծոյ զարդարեսցեն յամենայնի։ ՎԶ
11 *Քանզի երեւեցաւ՝ շնորհն Աստուծոյ փր-
12 կիչ՝ ամենայն մարդկան, *որ խրատէ զմեզ, զի
ուրացուք զամպարշտութիւն եւ զաշխարհա-

կան ցանկութիւնս. զգաստութեամբ եւ ար-
դարութեամբ եւ աստուածպաշտութեամբ կեց-
ցուք յաշխարհիս. * եւ ակնկալցուք երանելի 13
յուսոյն, եւ յայտնութեան փառաց մեծին Աս-
տուծոյ եւ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. * որ 14
ետ զանձն վասն մեր, զի փրկեսցէ զմեզ յամե-
նայն անօրէնութենէ, եւ սրբեսցէ իւր ժողո-
վուրդ սեպհական՝ նախանձաւոր գործոց բա-
րութեան: *Զայդ խօսեաց, եւ մխիթարեա եւ 15
յանդիմանեա ամենայն սաստիւք, զի մի ոք ի-
ցէ՝ որ զքեզ արհամարհիցէ:

ԳԼՈՒԽ Գ.

ԶՇ. Եւ յուշ արասջիր նոցա՝ իշխանու- 1
թեանց եւ պետութեանց հնազանդ լինել եւ
հպատակ կալ, եւ ամենայն գործոց բարու-
թեան պատրաստ գտանել. * մի զոք հայհոյել, 2
անկռիւս լինել, հեզս, զամենայն ցածութիւն
առ ամենայն մարդիկ ցուցանել: * Զի էաք եր- 3
բեմն եւ մեք անմիտք, անհաւանք, մոլորեալք
ծառայէաք ցանկութեանց եւ պէսպէս անա-
ռակութեանց. չարութեամբ եւ նախանձու
շրջէաք, ատեցեալք՝ եւ զմիմեանս ատէաք:
* Իսկ յորժամ քաղցրութիւն եւ մարդասիրու- 4
թիւն փրկչին մերոյ Աստուծոյ յայտնեցաւ. * ոչ 5
'ի գործոց արդարութեան զոր արարաք մեք,
այլ ըստ իւրում ողորմութեան ապրեցոյց զմեզ
'ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդեանն, եւ

6 նորոգութեամբ հոգւոյն Սրբոյ. * զոր եհեղ 'ի մեզ
առատութեամբ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի
7 փրկչին մերոյ. * զի արդարացեալք շնորհօքն՝ ե-
ղիցուք ժառանգաւորք յուսով կենացն յաւի-
8 տենականաց: * Հաւատարիմ է բանս, եւ 'ի այսն
կամիմ զքեզ հաստատուն լինել, զի փոյթ արաս-
ցեն բարեաց գործոց վերակացու լինել հաւա-
տացեալքն յԱստուած. զի այն է բարի եւ օգ-
տակար մարդկան:

9 * Այլ զյիմարութեան խնդիրս եւ զտոհմա-
թիւս եւ զհեռ եւ զօրինական կռիւս 'ի բաց
10 մերժեսջիր. զի անօգուտք են եւ սնոտիք: * Յառա-
նէ հերձուածողէ՝ յետ միանգամ եւ երկիցս
11 խրատելոյ՝ հրաժարեսջիր. * գիտասջիր զի թիւ-
րեալ է այնպիսին, եւ մեղանչէ անձամբ զանձն
12 դատապարտեալ: * Այլ յորժամ յղեցից առ
քեզ զԱրտեմա կամ զՏիւքիկոս, փութասջիր
գալ առ իս 'ի Նիկոպօլիս. զի անդ եդի 'ի մտի
13 ձմերել: * Եւ զԶենոն զօրինական դպիր եւ զԱ-
պօղոս՝ փութով արձակեսջիր, զի մի ինչ պա-
14 կասիցէ նոցա: * Ուսցին եւ մերքն եւս՝ բարեաց
գործոց վերակացու լինել 'ի պէտս կարեւորս,
15 զի մի անպտուղք լինիցին: * Ողջոյն տան քեզ որ
ընդ իս են ամենեքին: Ողջոյն տուր սիրելեաց
մերոց հաւատովք: Շնորհք ընդ ձեզ ամենեսին:

Առ Տիտոս՝ Կրետացւոց եկեղեցւոյն առաջին ձեռնադրեալ
եպիսկոպոս՝ գրեցաւ 'ի Նիկոպօլսէ Մակեդոնացւոց:

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՊԱՒՂՈՍ կապեալ Յիսուսի Քրիստոսի, եւ 1
Տիմոթէոս եղբայր, Փիլիմոնի սիրելւոյ
եւ գործակցի մերոյ, * եւ Ապփեայ քեռ, եւ Ար- 2
քիպպեայ զինուորակցի մերոյ, եւ առ տնին ե-
կեղեցւոյդ: * Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղու- 3
թիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ 'ի Տեառնէ Յի-
սուսէ Քրիստոսէ:

* Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ, 4
յիշատակեալ յաղօթս իմ վասն քո. * իբրեւ լը- 5
սեմ զքո հաւատսն եւ զսէր, զոր ունիս առ Տէր
Յիսուս եւ առ ամենայն սուրբս. * զի հաղորդու- 6
թիւն հաւատոյն քոյ՝ արգոյ լինիցի, գիտու-
թեամբ ամենայն բարութեան, որ 'ի ձեզ է 'ի
Քրիստոս Յիսուս: * Խնդութիւն յոյժ ընկալայ, 7
եւ մխիթարութիւն 'ի վերայ սիրոյն քոյ. զի
գութք սրբոց քեւ հանգուցեալ են, եղբայր:

8 * Վասն որոյ բազում համարձակութիւն
ունիմ 'ի Քրիստոս՝ հրաման տալ քեզ զարժանն
9 վասն սիրոյ. * մանաւանդ թէ աղաչեմ իսկ այն-
պիսի լինել՝ որպէս եւ Պաւղոս ծերացեալ, արդ
10 եւ կապեալ եւս Յիսուսի Քրիստոսի: * Աղաչեմ
զքեզ վասն որդւոյ իմոյ՝ զոր ծնայ 'ի կապանս
11 իմ զՈնեսիմոս. * որ երբեմն անպիտան էր քեզ,
12 բայց արդ քեզ եւ ինձ պիտանի. * զոր յղեցի
առ քեզ, եւ դու դմա ընկալջիր, այսինքն է՝ զիմ
13 աղիս: * Զոր կամէի առ իս արգելուլ, զի ընդ-
քո ունիցի ինձ սպաս 'ի կապանս Աւետարանին.
14 բայց առանց քո կամաց ոչ ինչ կամեցայ առնել,
զի մի բարիքդ քո 'ի հարկէ լինիցին. այլ կամաւ:
15 * Եւ թերեւս վասն այնորիկ մեկնեցաւ առ ժա-
16 մանակ մի, զի յաւիտեան ունիցիս զդա, * մի եւս
իբրեւ զծառայ. այլ 'ի վեր քան զծառայ, իբրեւ
զեղբայր սիրելի. եթէ ինձ այսպէս, ո՞րչափ եւս
17 առաւել քեզ մարմնով եւ Տերամբ: * Եթէ զիս
քեզ հաղորդ համարիցիս, ընկալ զդա իբրեւ
18 զիս, * եւ եթէ յանցուցեալ ինչ իցէ կամ պար-
19 տիցի, զայն ինձ համարեաց: * Ես Պաւղոս գրեցի
իմով ձեռամբ. ես հատուցից. զի մի ասիցեմ
20 քեզ՝ թէ դու զանձն քո ինձ պարտիս. * այո, եղ-
բայր, ես քո փոխանակ եղէց 'ի Տէր. հանգո
21 զաղիս իմ 'ի Քրիստոս: * Յուսացեալ 'ի հնա-
զանդութիւնդ քո գրեցի առ քեզ. քանզի գի-
տեմ թէ առաւել եւս քան զոր ասեմդ՝ առնի-
22 ցես: * Միանգամայն եւ պատրաստեսջիր ինձ

վանս. քանզի յուսամ թէ աղօթիւք ձերովք
շնորհեսցայց ձեզ: * Ողջոյն տայ ձեզ Եպափրաս 23
գերեկից իմ ՚ի Քրիստոս Յիսուս, * եւ Մարկոս 24
եւ Արիստարքոս եւ Դեմաս եւ Ղուկաս՝ գոր-
ծակիցք իմ: * Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի 25
Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում:

Առ Փիլիմոն եւ Ապփիա տեարս Ոնեսիմոյ, եւ առ Արքիպպոս սարկաւագ Կողոսացւոց եկեղեցւոյն՝ գրեցաւ ՚ի Հռոմէ ՚ի ձեռն Ոնեսիմոյ ծառայի:

ԹՈՒՂԹ
ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԱԿ. ԲԱԶՈՒՄ մասամբք, եւ բազում օ-
րինակօք կանխաւ խօսեցաւ Աս-
2 տուած ընդ հարսն մեր մարգարէիւք. * ՚ի վախ-
ճան աւուրցս այսոցիկ՝ խօսեցաւ ընդ մեզ Որդ-
ւովն, զոր եդ ժառանգ ամենայնի, որով եւ
3 զյաւիտեանսն արար: * Որ է լոյս փառաց եւ
նկարագիր էութեան նորա, որ կրէ զամենայն
բանիւ զօրութեան իւրոյ. սրբութիւն մեղաց
մերոց արարեալ, նստաւ ընդ աջմէ մեծութեա-
4 նըն ՚ի բարձունս: * Այնչափ առաւել եղեալ
քան զհրեշտակս, որչափ լաւ եւս քան զնոսա
5 անուն ժառանգեաց. * Քանզի յո՞ երբէք ասաց
՚ի հրեշտակաց. Որդի իմ ես դու, ես այսօր ծը-
նայ զքեզ. եւ դարձեալ՝ թէ ես եղէց նմա ՚ի
հայր, եւ նա եղիցի ինձ յորդի:
6 * Այլ յորժամ միւսանգամ մուծցէ զԱնդրա-
նիկն յաշխարհ, ասէ. Երկիր պագցեն նմա ամե-
7 նայն հրեշտակք Աստուծոյ: * Այլ առ հրեշտակ-
սըն ասէ. Ո արար զհրեշտակս իւր հոգիս, եւ

զպաշտօնեայս իւր բոց հրոյ։ *Իսկ ցՈրդին ասէ. 8
Աթոռ քո, Աստուած, յաւիտեանս յաւիտենից,
գաւազան ուղղութեան գաւազան արքայու-
թեան քոյ. * սիրեցեր զարդարութիւն, եւ ա- 9
տեցեր զանօրէնութիւն. վասն այսորիկ օծ ըզ-
քեզ Աստուած Աստուած քո իւղով ուրախու-
թեան՝ առաւել քան զընկերս քո. *եւ դու Տէր 10
'ի սկզբանէ զերկիր հաստատեցեր, եւ գործք
ձեռաց քոց երկինք են. * Նոքա կորնչին՝ եւ դու 11
կաս եւ մնաս. ամենեքեան իբրեւ զձորձս մա-
շեսցին * եւ իբրեւ զվերարկու. գալարեսցես ըզ- 12
նոսա իբրեւ զհանդերձ, եւ գալարեսցին. բայց
դու նոյն իսկ ես՝ եւ ամք քո ոչ պակասեսցեն։
* Ցո՞ երբէք ասաց 'ի հրեշտակաց. Նիստ ընդ աջ 13
մէ իմմէ, մինչեւ եդից զթշնամիս քո պատուան-
դան ոտից քոց։ * Ո՞չ ապաքէն ամենեքեան հո- 14
գիք են հարկաւորք՝ որ առաքին 'ի սպասաւորու-
թիւն վասն այնցիկ՝ որ ժառանգելոց են ըզ-
փրկութիւն։

ԳԼՈՒԽ Բ.

ԵԴ. Վասն այսորիկ պարտ է մեզ առա- 1
ւել եւս ունկնդիր լինել բանիցն ասացելոց, զի
մի՛ երբէք նուաղեսցուք։ * Զի եթէ որ 'ի ձեռն 2
հրեշտակաց խօսեցաւ բանն՝ հաստատուն եղեւ,
եւ ամենայն յանցաւորութիւն եւ անհնազան-
դութիւն ընկալաւ զպատիժ պատուհասի, * մեք 3

զիա՞րդ ապրեսցուք հեղգացեալք յայնպիսի փըր-
կութենէ, որ սկիզբն առ խօսելոյ 'ի Տեառնէ,
եւ 'ի ձեռն այնցիկ որ լուանն՝ 'ի մեզ հաստա-
4 տեցաւ. * վկայեալ յԱստուծոյ նշանօք եւ ա-
րուեստիւք, եւ պէսպէս զօրութեամբք, եւ
5 մասամբք Հոգւոյն Սրբոյ՝ ըստ իւրոց կամաց. * զի
ոչ եթէ հրեշտակաց հնազանդեցոյց զհանդեր-
ձեալ աշխարհն. վասն որոյ եւ մեքս խօսիմք։
6 * Վկայեաց ոք ուրեք եւ ասէ. Զի՞նչ է մարդ՝
եթէ յիշեսցես զնա, կամ որդի մարդոյ՝ թէ այց
7 առասցես նմա. * Փոքր մի խոնարհ արարեր ըզ-
նա քան զհրեշտակս. փառօք եւ պատուով պը-
սակեցեր զնա, եւ կացուցեր զնա 'ի վերայ ձե-
8 ռակերտաց քոց. * զամենայն ինչ հնազանդ ա-
րարեր 'ի ներքոյ ոտից նորա։ Արդ 'ի հնազան-
դեցուցանելն զամենայն՝ ոչ ինչ եթող անհնա-
զանդ 'ի նմանէ. բայց այժմ ոչ եւս տեսանեմք
հնազանդեալ նմա զամենայն։

9 * Այլ զփոքր մի խոնարհեալ քան զհրեշտա-
կըս՝ տեսանեմք զՅիսուս՝ վասն չարչարանաց մա-
հուն, փառօք եւ պատուով պսակեալ. զի շը-
նորհօքն Աստուծոյ վասն ամենեցուն զմահ ճա-
10 շակեսցէ։ * Զի վայելէր իսկ նմա, վասն որոյ
ամենայն եւ որով ամենայն, բազում որդիս 'ի
փառս ածել՝ եւ զառաջնորդ փրկութեան նոցա
չարչարանօք կատարել։ Վ.Զ

11 * Զի որ սրբէն եւ որ սրբին, 'ի միոջէ են
ամենեքեան. վասն որոյ ոչ ամօթ համարի եղ-

քարս անուանել զնոսա, եւ ասէ. * Պատմեցից 12
զանուն քո եղբարց իմոց, ՚ի մէջ եկեղեցւոյ
օրհնեցից զքեզ. * եւ դարձեալ՝ թէ ես եղէց 13
յուսացեալ ՚ի նա. եւ դարձեալ՝ Ահաւասիկ ես
եւ մանկունք իմ զոր ետ ինձ Աստուած ։ * Արդ 14
որովհետեւ մանկունք հաղորդեցին արեան եւ
մարմնոյ, եւ ինքն իսկ մերձաւորութեամբ կց-
որդ եղեւ նոցունց. զի մահուն իւրով խա-
փանեսցէ զայն որ զիշխանութիւն մահուն ու-
նէր, այսինքն է՝ զսատանայ. * եւ ապրեցուս- 15
ցէ զայնոսիկ որ մահուն երկիւղիւ հանապազ
կէին վտարանդեալք ՚ի ծառայութիւն ։ * Քան- 16
զի ոչ երբէք զհրեշտակաց բուռն հարկանէ, այլ
զզաւակէն Աբրահամու բուռն հարկանէ. * ուս- 17
տի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նը-
մանել. զի ողորմած լինիցի, եւ հաւատարիմ
քահանայապետ յաստուածակոյս կողմանէ ան-
տի, առ ՚ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն ։ * Զի 18
որով ինքն չարչարեցաւ՝ զփորձ առեալ, կարող
է եւ փորձանաւորացն օգնական լինել ։

ԳԼՈՒԽ Գ.

Ուստի, եղբարք սուրբք, երկնաւոր կոչմանն 1
բաժանորդք, նայեցարուք ընդ Առաքեալն եւ
ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ
ընդ Յիսուս Քրիստոս. * որ հաւատարիմ է ա- 2
րարչին իւրոյ, որպէս եւ Մովսէս յամենայն

3 տան նորա. * զի առաւել եւս փառաց քան զՄ-
ովսէս արժանի եղեւ, որչափ առաւել պա-
4 տիւ ունիցի քան զտունն՝ տանն առնելին. * զի
ամենայն տուն կազմի յումէ կազմի. իսկ որ զա-
5 մենայնն արար, Աստուած է ։ * Մովսէս՝ հա-
ւատարիմ է յամենայն տան նորա՝ իբրեւ զծա-
ռայ, առ ՚ի վկայութենէ բանից ասացելոց.
6 * այլ Քրիստոս իբրեւ որդի ՚ի վերայ տան իւրոյ,
որոյ տունն՝ մեք իսկ եմք. միայն թէ զհամար-
ձակութիւն եւ զպարծանս յուսոյն մինչեւ ՚ի
7 վախճան հաստատուն ունիցիմք ։ * Վասն որոյ
որպէս ասէ Հոգին Սուրբ. Այսօր եթէ ձայնի
8 նորա լուիցէք, մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր
իբրեւ ՚ի դառնութեանն՝ յաւուրն փորձու-
9 թեան յանապատի. * ուր փորձեցին զիս հարքն
ձեր. քննեցին զիս՝ եւ տեսին զգործս իմ զքա-
10 ռասուն ամ. վասն որոյ տաղտկացայ ազգաւն
այնուիկ, եւ ասացի, միշտ մոլորեալ են սրտիւք.
11 եւ նոքա ոչ ծանեան զճանապարհս իմ. * որպէս
երդուայ ՚ի բարկութեան իմում թէ մտցեն ՚ի
հանգիստ իմ ։
12 ԵԶ. * Տեսէք, եղբարք, գուցէ երբէք լինի-
ցի յումեք ՚ի ձէնջ սիրտ չար անհաւատութեան՝
13 ապստամբ լինել յԱստուծոյ կենդանւոյ. * այլ
մխիթարեցէք զմիմեանս զօրհանապազ՝ մինչդեռ
այսօրդ առաջի կայ. զի մի՛ ոք խստասցի ՚ի ձէնջ՝
14 խաբէութեամբ մեղաց ։ * Քանզի բաժանորդք
եղեաք Քրիստոսի. միայն թէ՝ զսկիզբն հաստա-

տութեանն մինչեւ 'ի վախճան պինդ կալցուք ,
* յասելն . Այսօր եթէ ձայնի նորա լուիջէք՝ 15
մի խստացուցանիցէք զսիրտս ձեր իբրեւ 'ի դառ-
նութեանն : * Քանզի ոմանք լուան՝ եւ դառնա- 16
ցուցին , այլ ոչ ամենեքեան որ ելեալ էին յԵ-
գիպտոսէ 'ի ձեռն Մովսիսի : * Յումէ՞ տաղտկա- 17
ցաւ զքառասուն ամն . ո՞չ ապաքէն 'ի յանցու-
ցելոցն , որոց ոսկերքն անկան յանապատի անդ :
* Ո՞ւմ երդուաւ չմտանել 'ի հանգիստն իւր , ե- 18
թէ ոչ անհաւատիցն . * եւ տեսանեմք , զի ոչ
կարացին մտանել՝ վասն անհաւատութեանն :

ԳԼՈՒԽ Դ.

Երկիցուք այսուհետեւ , գուցէ 'ի թողուլ 1
զաւետիսն՝ 'ի մտանելոյ 'ի հանգիստ նորա . գը-
տանիցի ոք 'ի ձէնջ նուաղեալ . * քանզի եմք ա- 2
ւետարանեալք՝ որպէս եւ նոքայն . այլ նոցա
ոչ ինչ օգնեաց լուր բանին՝ չամքերելոյն 'ի հնա-
զանդութիւն հաւատոյ : * Այլ մեք մտանեմք 3
'ի հանգիստն , որք հաւատացաքն՝ որպէս եւ ա-
սացն , թէ որպէս երդուայ 'ի բարկութեան ի-
մում , թէ մտցեն 'ի հանգիստ իմ . թէպէտ եւ
արդիւքն իսկզբանէ աշխարհի լեալ էին . քան- 4
զի ասէ ուրեք վասն աւուրն եօթներորդի այս-
պէս . Եւ հանգեաւ Աստուած յաւուրն եօթնե-
րորդի յամենայն գործոց իւրոց . * եւ աստ դար- 5
ձեալ ասէ՝ թէ մտցեն 'ի հանգիստ իմ : * Եւ 6

արդ . քանզի արդելան ոմանք մտանել 'ի նա , եւ
որք յառաջագոյն աւետարանեալն էին՝ չմտին
7 վասն անհաւանութեանն,* դարձեալ այլ օր սահ-
մանէ՝ զայսօրն 'ի Դաւթի , եւ ասէ՝ յետ այն-
չափ ժամանակաց , որպէս յառաջագոյն ասաց .
Այսօր եթէ ձայնի նորա լուիջէք՝ մի խստա-
8 ցուցանիցէք զսիրտս ձեր : * Զի եթէ զնոսա Յե-
սուայ հանգուցեալ էր , ապա վասն այլոց ա-
9 ւուր ոչ խօսէր յետ այնորիկ : * Արդ ուրեմն նը-
ւաղեալ է շաբաթումն ժողովրդեանն Աստու-
10 ծոյ ,* զի որ եմուտ 'ի հանգիստն նորա , եւ նա
հանգեաւ յիւրոց գործոց անտի , որպէս եւ
Աստուած յիւրայոցն : ՎԶ
11 * Փութասցուք այսուհետեւ մտանել յայն
հանգիստ . զի մի ոք ընդ նովին օրինակաւ ան-
12 հաւանութեանն անկանիցի . * զի կենդանի է բա-
նըն Աստուծոյ եւ ազդօղ եւ հատու քան զա-
մենայն սուր երկսայրի , եւ անցանէ մինչեւ ցո-
րոշումն շնչոյ եւ ոգւոյ եւ յօդից եւ ուղղոյ . եւ
13 քննիչ է մտաց եւ խորհրդոց սրտից : * Եւ չիք
արարած աներեւոյթ յերեսաց նորա , այլ ամե-
նայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նո-
14 րա՝ զորմէ մեր բանքս են : * Ունիմք այսուհե-
տեւ քահանայապետ մեծ՝ անցեալ ընդ երկի-
նըս , զՅիսուս զորդի Աստուծոյ . պինդ կալցուք
15 զխոստովանութիւնն . * քանզի ոչ եթէ ունիմք
քահանայապետ , որ չիցէ կարօղ չարչարակից
լինել տկարութեան մերոյ . այլ փորձ է ամե-

նոյնիւ ըստ նմանութեան առանց մեղաց ։
ՁԿ. * Մատիցուք այսուհետեւ համարձա- 16
կութեամբ առաջի աթոռոյ շնորհացն նորա, զի
ընկալցուք ողորմութիւն, եւ գտցուք շնորհս
՚ի դէպ ժամանակի օգնականութեան ։

ԳԼՈՒԽ Ե.

Զի ամենայն քահանայապետ ՚ի մարդկանէ 1
առեալ՝ վասն մարդկան կայ յաստուածայինսն
կողմն անդր, զի մատուսցէ պատարագս եւ
զոհս վասն մեղաց. * չափով չարչարակից կարօղ 2
է լինել տգիտաց եւ մոլորելոց, քանզի եւ ինքն
իսկ ակարութեամբ զգածեալ է ։ * Վասն այ- 3
նորիկ հարկ է՝ որպէս վասն ժողովրդեանն, նոյն-
պէս եւ ընդ անձին մատուցանել պատարագս
վասն մեղաց ։ * Եւ ոչ եթէ անձամբ ոք առնու 4
պատիւ, այլ կոչեցեալն յԱստուծոյ՝ որպէս եւ
Ահարոն. * Նոյնպէս եւ Քրիստոս, ոչ եթէ ան- 5
ձին ինչ շուք եդ լինել քահանայապետ, այլ որ
խօսեցաւն առ նա, թէ որդի իմ ես դու, ես
այսօր ծնայ զքեզ. * որպէս եւ ՚ի միւսումն ա- 6
սէ. Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին
Մելքիսեդեկի ։ * Որ յաւուրս մարմնոյ իւրոյ՝ ա- 7
ղօթս եւ պաղատանս առ այն որ կարօղն էր
ապրեցուցանել զնա ՚ի մահուանէ, ուժգին գո-
չմամբ եւ արտասուօք մատուցանէր. եւ լսելի
լինէր առ լաւութեանն. * թէպէտ եւ որդի 8

է, ուսաւ ՚ի չարչարանաց անտի զհնազանդու-
9 թիւն ։ * Եւ իբրեւ կատարեցաւ՝ եղեւ ամե-
նայն հնազանդելոց իւրոց պատճառ փրկու-
10 թեանն յաւիտենից, * եւ անուանեցաւ յԱս-
տուծոյ քահանայապետ յաւիտենից ըստ կար-
գին Մելքիսեդեկի ։
11 ՁԴ. * Վասն որոյ բազում են մեզ բանք,
եւ դժուարապատում ՚ի մեկնել. քանզի խօ-
12 թամիտք եղերուք լսելեօք. * փոխանակ զի պարտ
էր ձեզ լինել վարդապետս վասն ժամանակին,
դարձեալ պիտոյ է ձեզ ուսանել՝ թէ զինչ են
նշանագիրք սկզբան բանիցն Աստուծոյ. եւ ե-
ղերուք կարօտք կաթին, եւ ոչ հաստատուն
13 կերակրոյ ։ * Զի ամենայն որ կաթնկեր է՝ տը-
գէտ է բանին արդարութեան, քանզի տղայ է.
14 այլ կատարելոցն է հաստատուն կերակուր, * ո-
րոց՝ վասն ՚ի չափ հասանելոյ՝ ճաշակելիքն
կիրթ են ընտրութեան բարւոյ եւ չարի ։

ԳԼՈՒԽ Զ.

1 Վասն որոյ թողեալ զբան սկզբանն Քրիստո-
սի՝ ՚ի կատարումն եկեսցուք. մի միւսանգամ
արկանել հիմն ապաշխարութեան ՚ի մեռելոտի
գործոց անտի, եւ հաւատոյն որ յԱստուած,
2 * եւ մկրտութեանցն վարդապետութեան, եւ
ձեռնադրութեան ձեռաց, եւ յարութեան մե-
3 ռելոց, եւ դատաստանին յաւիտենից ։ * Եւ

արդ արասցուք զայն՝ եթէ Աստուած հրամայես-
ցէ. *քանզի անհնար է միանգամ մկրտելոցն, 4
որ ճաշակեցին յերկնաւոր պարգեւացն, եւ
հաղորդք եղեն հոգւոյն Սրբոյ, *եւ զգեղեցիկ 5
բանին Աստուծոյ ճաշակսն ճաշակեցին, եւ զզօ-
րութիւնս հանդերձելոյ աշխարհին, *եւ կոր- 6
ծանեցին, միւսանգամ նորոգել յապաշխարու-
թիւն, եւ վերստին 'ի խաչ հանել անձանց զՈր-
դին Աստուծոյ, եւ դարձեալ խայտառակել:
*Քանզի երկիր որ ըմպիցէ զանձրեւ բազում 7
անգամ եկեալ 'ի վերայ նորա, եւ ծնանիցի ար-
դիւնս շայեկանս նոցա՝ վասն որոյ գործիցին,
ընդունի զօրհնութիւն յԱստուծոյ. *իսկ որ բե- 8
րէ փուշ եւ տատասկ՝ անպիտան է եւ մերձ
յանէծս, եւ վախճան նորա յայրումն:

ՁԶ. *Բայց հաստատեալ եմ վասն ձեր, սի- 9
րելիք, 'ի լաւ անդր եւ որ լին է փրկութեամբ,
զի թէպէտ եւ այսպէս խօսիմք, *ոչ եթէ անի- 10
րաւ ինչ է Աստուած՝ մոռանալ զգործս ձեր եւ
զսէրն զոր ցուցէք յանուն նորա. զի պաշտէիք
զսուրբսն եւ պաշտէք. *եւ մեք ըղձանամք, 11
զի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ զնոյն փոյթ ցուցա-
նիցէ 'ի հաստատութիւն յուսոյն մինչեւ ցվախ-
ճան. *զի մի՛ հեղգամիտք լինիցիք: 12

Նմանողք եղերուք այնոցիկ որ հաւատով-
քն եւ երկայնմտութեամբ ժառանգեցին զա-
ւետիսն. *զի Աբրահամու խոստացեալ զաւե- 13
տիսն Աստուծոյ՝ քանզի յայլ ոք 'ի մեծ ոչ գոյր

14 երդնուլ, *յանձն իւր երդուաւ, եւ ասէ. Այո՛
օրհնելով օրհնեցից զքեզ, եւ բազմացուցանե-
15 լով բազմացուցից: *Եւ այնպէս երկայնամիտ
16 եղեալ՝ եհաս աւետեացն: *Ապաքէն մարդիկ
որ ինչ 'ի վեր է քան զինքեանս՝ յայն երդնուն.
եւ ամենայն հակառակութեան նոցա վճիռ 'ի
17 հաստատութիւն, երդումն է. *որով առաւել
եւս կամեցեալ Աստուծոյ՝ ցուցանել ժառանգա-
ւորաց աւետեացն զհաստատութիւն խորհրդոյն
18 իւրոյ, միջնորդեաց երդմամբ: *Զի երկու ան-
փոփոխելի իրօքն՝ որովք անհնար իցէ ստել Աս-
տուծոյ, հաստատուն մխիթարութիւն ունի-
ցիմք, որք ապաստան եղեաք բուռն հարկանել
19 զհանդերձեալ յուսոյն, *զոր իբրեւ զխարիսխ
հաստատուն եւ անշարժ ունիցիմք անձանց մե-
րոց. որ եւ մտանիցէ 'ի ներքին կողմն վարա-
20 գուրին, *ուր կարապետն մեր Յիսուս եմուտ
վասն մեր, ըստ կարգին Մելքիսեդեկի եղեւ
քահանայապետ յաւիտենից:

ԳԼՈՒԽ Է.

1 Քանզի այս Մելքիսեդեկ՝ թագաւոր էր Սա-
ղիմայ, քահանայ Աստուծոյ բարձրելոյ. որ ել
ընդ առաջ Աբրահամու, յորժամ դարձեալ
գայր 'ի կոտորածէ թագաւորացն՝ եւ օրհնեաց
2 զնա. *որում եւ տասանորդս յամենայնէ ետ
Աբրահամ. նախ թարգմանի թագաւոր ար-

դառութեան. ապա Թագաւոր Սաղիմայ՝ որ է
Թագաւոր խաղաղութեան. * անհայր՝ անմայր՝ 3
չհամարեալ յազգս, որոյ ոչ սկիզբն աւուրց եւ
ոչ կատարած կենաց. նմանեալ Որդւոյն Աստու-
ծոյ՝ կայ մնայ քահանայ մշտնջենաւոր: * Արդ 4
տեսէք որպիսի ոք էր սա, որում եւ Աբրահամ
տասանորդս ետ յաւարէ անտի՝ նահապետն.
* եւ որք յորդւոցն Ղեւեայ զքահանայութիւնն 5
առնուն, պատուէր ունին տասանորդել զժողո-
վուրդն ըստ օրինացն, այսինքն է՝ զեղբարս ի-
րեանց. թէպէտ եւ ելեալ իցեն յերանացն Աբ-
րահամու: * Իսկ չհամարեալն յազգս 'ի նոցանէ՝ 6
տասանորդեաց զԱբրահամ, եւ զնա որոյ զա-
ւետիսն ընկալեալ էր՝ օրհնեաց. * զի առանց 7
ամենայն հակառակութեան՝ նուաղն 'ի լաւէ
անտի օրհնեսցի: * Եւ աստ մարդք մահկանա- 8
ցուք տասանորդս առնուն, բայց անդ վկայե-
ցաւ թէ կենդանի է. եւ որպէս բանից կարգ է
ասել. * թէ Աբրահամու եւ Ղեւի իսկ որ ըզ- 9
տասանորդսն առնոյր, տասանորդեցաւ. * զի 10
դեռեւս յերանս հօր իւրոյ էր՝ յորժամ ընդ ա-
ռաջ եղեւ նմա Մելքիսեդեկ:

ԷԿ. * Իսկ արդ՝ եթէ կատարումնն 'ի ձեռն 11
Ղեւտացւոց քահանայութեանն էր. քանզի ժո-
ղովուրդն յայն օրէնսդրեցաւ, զի՞նչ պիտոյ էր
ըստ կարգին Մելքիսեդեկի այլում քահանայի
յառնել, եւ ոչ ասել՝ եթէ ըստ կարգին Ահա-
րոնի: * Այլ 'ի փոխել քահանայութեանն՝ 12

13 հարկ էր եւ օրինացն փոփոխումն լինել. * զի
զորմէ այսպէսն ասի, յայլմէ ազգէ կալաւ հա-
ղորդութիւն. յորմէ ոչ ոք երբէք եղեւ հաղորդ
14 սեղանոյն: * Արդ յայտ իսկ է, թէ յազգէ Յու-
դայ ծագեաց Տէր մեր, յորմէ ազգէ վասն քա-
15 հանայից Մովսէս ինչ ոչ ճառեաց: * Եւ եւս ա-
ռաւել յայտ է՝ թէ ըստ նմանութեան Մելքի-
16 սեդեկի յառնելոց է այլ քահանայ. * որ ոչ ըստ
մարմնաւոր պատուիրանին եղեւ, այլ ըստ զօ-
17 րութեան կենացն անվախճանից. * քանզի վկա-
յեցաւ, թէ Դու ես Քահանայ յաւիտեան ըստ
18 կարգին Մելքիսեդեկի: * Արհամարհութիւն լի-
նէր առաջին պատուիրանին՝ վասն նորին տկա-
19 րութեանն եւ անշահութեան. * քանզի ոչ ինչ
կատարումն գործեցին օրէնքն, եւ մուտ ա-
նուական յուսոյն՝ որով մերձենամք առ Աս-
20 տուած. * եւ որչափ, զի ոչ առանց երդման.
զի են ոմանք՝ որ առանց երդման են կացեալ
21 քահանայք: * Բայց սա երդմամբ, 'ի ձեռն այ-
նորիկ որ ասացն 'ի նա. Երդուաւ Տէր՝ եւ ոչ
եւս զղջասցի, դու ես Քահանայ յաւիտեան:
22 * Եւ այնչափ լաւագոյն ուխտի եղեւ երաշխա-
23 ւոր Յիսուս: * Եւ բազում են կացեալ քահա-
նայք՝ վասն մահու արգել լինելոյ 'ի մշտնջենա-
24 ւորել: * Իսկ սա՝ վասն յաւիտեան կալոյ՝ առանց
25 անցանելոյ ունի զքահանայութիւնն. * ուստի
եւ կենդանի առնել համօրէն կարող է զմա-
տուցեալսն նովաւ առ Աստուած. քանզի միշտ

կենդանի է՝ լինել բարեխօս վասն նոցա ։

Ա. * Զի այսպիսի իսկ եւ վայելէր մեզ Քա- 26
հանայապետ, սուրբ, անմեղ, անարատ, զա-
տեալ 'ի մեղաւորաց, եւ բարձրացեալ քան զեր-
կինս. * որում ոչ հանապազ հարկ է որպէս այ- 27
լոց քահանայապետացն՝ նախ վասն իւրեանց մե-
ղացն պատարագս մատուցանել, եւ ապա վասն
ժողովրդեանն. իսկ սա զայն միանգամայն կա-
տարեաց, զի զանձն իւր մատոյց պատարագ ։
* Օրէնքն զմարդիկ կացուցանեն քահանայապե- 28
տս զկածեալս տկարութեամբ, իսկ բանն եր-
դման յետ օրինացն՝ զՈրդի որ յաւիտեան կա-
տարեալ է ։

ԳԼՈՒԽ Ը.

Եւ բանից գլուխ խօսիցս, այնպիսի ունիմք 1
Քահանայապետ, որ նստաւ ընդ աջմէ մեծու-
թեան աթոռոյն յերկինս, * սրբութեանցն պաշ- 2
տօնեայ, եւ խորանին ճշմարտութեան՝ զոր Տէրն
կանգնեաց եւ ոչ մարդ ։ * Զի ամենայն քահա- 3
նայապետ վասն մատուցանելոյ զզոհս եւ զպա-
տարագս կայ, ուստի հարկ է եւ նմա ունել ինչ
զոր մատուցանիցէ ։ * Զի թէ էր յերկրէ, թե- 4
րեւս չէր իսկ քահանայ. զի գոյին որ մատու-
ցանէին ըստ օրինացն պատարագ. * որք առա- 5
կաւ եւ օրինակաւ պաշտէին երկնաւորացն. որ-
պէս եւ հրամայեցաւ Մովսէսի՝ յորժամ գործե-
լոց էր զվրան ժամուն. Տեսջիր, ասէ, արասցես

զամենայն ըստ օրինակին որ ցուցաւ քեզ 'ի
6 լերինն ։ * Բայց արդ առաւելագոյն եւս պաշտա-
ման եհաս Յիսուս. որչափ լաւագոյն եւս ուխ-
տի է միջնորդ՝ որ 'ի յառաւել աւետիսն օրի-
նադրեցաւ ։
7 * Զի եթէ առաջինն անարատ էր, ապա երկ-
8 րորդին տեղի ոչ խնդրէր ։ * Նա աւանիկ բամ-
բասէ զնոսա եւ ասէ. Ահաւասիկ աւուրք ե-
կեսցեն, ասէ Տէր, եւ կատարեցից 'ի վերայ
տանն Իսրայելի եւ 'ի վերայ տանն Յուդայ
9 ուխտ նոր. * ոչ ըստ ուխտին զոր եդի ընդ
հարս նոցա յաւուրն յորում առի 'ի ձեռն՝
հանել զնոսա յերկրէն Եգիպտացւոց. եւ զի
նոքա ոչ կացին յուխտին իմում, եւ ես ան-
փոյթ արարի զնոցանէ, ասէ Տէր ամենակալ ։
10 * Այլ այս է ուխտն զոր եդից տանն Իսրայելի
յետ աւուրցն այնոցիկ, ասէ Տէր. տաց զօրէնս
իմ 'ի միտս նոցա, եւ 'ի սիրտս նոցա գրեցից
զնոսա. եւ եղէց նոցա Աստուած, եւ նոքա ե-
11 ղիցին ինձ 'ի ժողովուրդ ։ * Եւ ոչ եւս ուսուցա-
նիցեն իւրաքանչիւր զքաղաքակից իւր, եւ իւ-
րաքանչիւր զեղբայր իւր, եւ ասիցեն թէ ծա-
նիր զՏէր. զի ամենեքին ծանիցեն զիս 'ի փոքրու-
12 կանց մինչեւ ցմեծամեծս նոցա ։ * Զի քաւիչ ե-
ղէց անիրաւութեանց նոցա, եւ զմեղս նոցա
13 եւ զանօրէնութիւնս այլ ոչ եւս յիշեցից ։ * Արդ-
ասելովն նոր՝ հնացոյց զառաջինն, եւ որ հնա-
նայն եւ ծերանայ՝ մերձ է յապականութիւն ։ ՎԶ

ԳԼՈՒԽ Թ.

Ունել ունէր եւ առաջինն իրաւունս պաշ- 1
տաման յայնժամ զաշխարհական սրբութիւնն։
* Զի խորանն առաջին հանդերձեցաւ այսպէս. 2
յորում աշտանակն եւ սեղանն եւ հացն նուի-
րաց, որ սրբութիւնն կոչէր. * եւ յետ երկրորդ 3
վարագուրին՝ խորանն որ կոչէր Սրբութիւն սըր-
բութեանց, * յորում կայր բուրվառն ոսկի, եւ 4
արկղն կտակարանաց պատեալ ներքոյ եւ արտա-
քոյ ոսկւով, յորում սափորն ոսկի լի մանանայիւ,
եւ գաւազանն Ահարոնի որ ծաղկեցաւ, եւ
տախտակք կտակարանացն. * եւ ՚ի վերայ նորա 5
քերովբէքն փառաց՝ որ հովանի ունէին ՚ի վե-
րայ քաւութեանն. վասն որոյ ոչ է այժմ ասել
մի ըստ միոջէ։ * Եւ այն ամենայն իբրեւ այնպէս 6
հանդերձեալ կայր, յառաջին խորանն յամենայն
ժամ մտանէին քահանայքն զպաշտամունսն կա-
տարել. * բայց յերկրորդն՝ միանգամ ՚ի տար- 7
ւոջն քահանայապետն. եւ զայն ո՛չ առանց ա-
րեան, զոր մատուցանէր վասն իւր եւ վասն
ժողովրդեանն անգիտութեան։ * Զայս ցուցեալ 8
հոգւոյն Սրբոյ՝ մինչեւ յայտնեալ էր ճանապարհի
սրբութեանցն. քանզի դեռ առաջին խորանն
ունէր զհաստատութիւն, * որ է առակ ժամա- 9
նակին որ առաջի կայր. յորում պատարագքն
եւ զոհք մատչէին, որք ոչ կարէին ըստ միտս
կատարել զպաշտօնեայսն, բայց միայն կերակ-

10 րովք եւ ըմպելեօք՝ * եւ պէսպէս մկրտու-
թեամբք, մարմնոյ արդարութիւնքն՝ որ մինչեւ
՚ի ժամանակս ուղղութեանն ՚ի վերայ կային։
11 * Այլ Քրիստոս եկեալ քահանայապետ հան-
դերձելոցն բարեաց, մեծաւն եւ կատարելով
եւ անձեռագործ խորանաւն, այս ինքն է՝ որ
12 ոչ յայսց արարածոց, * եւ ոչ արեամբ նոխազաց
եւ զուարակաց, այլ իւրով արեամբն եմուտ մի
անգամ ՚ի սրբութիւնսն, յաւիտենականս գը-
13 տեալ զփրկութիւն։ * Զի թէ արիւն ցլուցն եւ
նոխազաց եւ մոխիր երինջոյն ցանեալ՝ զպղծեալ-
14 սն սրբէր առ ՚ի մարմնոյ սրբութենէ, * ո՞րչափ
եւս առաւել արիւնն Քրիստոսի, որ ՚ի ձեռն
հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն անա-
րատ պատարագ Աստուծոյ, սրբեսցէ զխիղճ
մտաց ձերոց ՚ի մեռելոտի գործոց անտի՝ պաշ-
15 տել զԱստուած կենդանի։ * Եւ վասն այնորիկ
նորոյ ուխտին է միջնորդ. զի յորժամ մահ լի-
նիցի՝ ՚ի փրկութիւն վասն առաջին ուխտին յան-
ցանաց, զաւետիս առցեն հրաւիրեալքն ՚ի ժա-
16 ռանգութիւնն յաւիտենից։ * Քանզի ուր կտակ
է, հարկ է զմահ ՚ի մէջ բերել զկտակագրին.
17 * զի կտակ՝ յետ մահու հաստատուն է. ա-
պա թէ ոչ զի՞արդ լիցէ հաստատուն մինչ կը-
18 տակագիրն կենդանի է. * ուստի եւ ոչ առա-
19 ջինն առանց արեան նորոգէր։ * Քանզի իբրեւ
պատմեցան ամենայն պատուիրանք օրինացն ՚ի
Մովսիսէ ժողովրդեանն, առեալ զարիւն ցլուցն

եւ նոխազաց՝ ջրով եւ բրդով կարմրով եւ զո-
պայիւ, զկտակարանօքն իսկ եւ զամենայն ժո-
ղովրդեամբն սրսկեաց, * եւ ասէ. Այս է արիւն 20
կտակին՝ զոր պատուիրեաց ձեզ Աստուած ։ * Եւ 21
զխորանն, եւ զամենայն կահիւ պաշտօն
նոյնպէս սրսկեաց զարիւնն. * եւ գրեթէ ամե- 22
նայն ինչ արեամբն սրբէր ըստ օրինացն, եւ
առանց հեղման արեան չլինէր թողութիւն ։
* Ապա հարկ էր օրինակացն՝ այնպիսեօքն սըր- 23
բել, եւ բուն իսկ երկնաւորացն՝ առաւել եւս
պատարագօք քան զնոյնս. * զի ոչ եթէ 'ի ձե- 24
ռագործ սրբութիւնսն եմուտ Քրիստոս՝ յօրի-
նակս ճշմարտութեանն, այլ 'ի բուն իսկ յերկի-
նըս՝ յանդիման լինել երեսացն Աստուծոյ վասն
մեր ։ * Ոչ զի բազում անգամ մատուցանիցէ 25
զանձն պատարագ՝ որպէս քահանայապետն որ
մտանէր 'ի սրբութիւն սրբութեանցն ամի ամի
արեամբ օտարաւ. * ապա թէ ոչ՝ պարտ էր նը- 26
մա բազում անգամ չարչարել իսկզբանէ աշխար-
հի. բայց արդ աւասիկ մի անգամ 'ի կատարած
յաւիտեանց յանարգութիւն մեղաց իւրով պա-
տարագաւն յայտնեալ է ։ * Եւ զոր օրինակ կայ 27
մնայ մարդկան մի անգամ մեռանել, եւ յետ
այնորիկ դատաստան, * նոյնպէս եւ Քրիստոս 28
մի անգամ մատուցեալ պատարագ առ 'ի բառ-
նալոյ զմեղս բազմաց. իսկ յերկրորդումն ա-
ռանց մեղաց յայտնեսցի այնոցիկ՝ որ ակն ունի-
ցին նմա հաւատովք 'ի փրկութիւն ։

ԳԼՈՒԽ Ժ.

1 Բ. Քանզի ստուեր հանդերձելոց բարեա-
ցըն ունէին օրէնքն, եւ ոչ զնոյն կերպարանս
իրացն. ամի ամի զնոյն պատարագս մատուցա-
նեն ցանդ, որք ոչ են կարօղ զմատուցեալսն
2 կատարել. * ապա թէ ոչ՝ դադարէին 'ի մատու-
ցանելոյ, վասն եւ ոչ մի ինչ այնուհետեւ խիղճ
մտաց ունելոյ՝ պաշտօնէիցն մի անգամ սրբե-
3 ցելոց. * այլ անդէն 'ի նմին 'ի յիշատակս մեղա-
4 ցըն կային ամի ամի. * քանզի ոչ կարէր արիւն
նոխազացն եւ զուարացն բառնալ զմեղս ։
5 * Վասն որոյ 'ի մտանել իւրում յաշխարհ՝
ասէ. Զոհս եւ պատարագս ոչ կամեցար,
6 բայց մարմին հաստատեցեր ինձ. * ընդ ողջա-
7 կէզս եւ ընդ վասն մեղացն ոչ հաճեցար. * յայն-
ժամ ասացի՝ թէ ահաւասիկ եկի. 'ի ճառս գը-
րոց գրեալ է վասն իմ, առնել զկամս քո Աս-
8 տուած ։ * Վերագոյնն ասէ, թէ ընդ զոհս եւ
ընդ պատարագս եւ ընդ ողջակէզս եւ ընդ վասն
մեղացն ոչ հաճեցար, եւ ոչ կամեցար որք ըստ
9 օրինացն մատչէին. * ապա ասէ, Ահաւասիկ գամ
առնել զկամս քո Աստուած. մերժէ զառաջինն,
10 զի զերկրորդն հաստատեսցէ. * որով կամօք եւ
մեք սրբեցաք 'ի ձեռն պատարագի մարմնոյն Յի-
11 սուսի Քրիստոսի մի անգամ ։ * Եւ ամենայն քա-
հանայապետ կայ հանապազորդ 'ի պաշտաման,

եւ զնոյն պատարագս մատուցանէ բազում
անգամ, որք ոչ երբէք կարօղ են բառնալ զմե-
ղս. * իսկ սա՝ զմի վասն մեղաց մատոյց պա- 12
տարագ, եւ մշտնջենաւոր նստաւ ընդ աջմէ
Աստուծոյ. * եւ այսուհետեւ ակն ունի՝ մինչեւ 13
դիցին թշնամիք իւր 'ի ներքոյ ոտից իւրոց.
* քանզի միով պատարագաւ կատարեաց զսր- 14
բեալսն 'ի մշտնջենաւորս: * Այլ վկայէ մեզ եւ 15
Հոգին Սուրբ՝ յետ ասելոյ յառաջագոյն, * եթէ 16
այս է ուխտն՝ զոր եդից ընդ հարս նոցա, յետ
աւուրցն այնոցիկ, ասէ Տէր. տաց զօրէնս իմ 'ի
միտս նոցա, եւ 'ի խորհուրդս նոցա գրեցից
զնոսա. * ապա ասէ՝ թէ զմեղս նոցա եւ զա- 17
նօրէնութիւնս նոցա այլ ոչ եւս յիշեցից. * իսկ 18
ուր թողութիւն է, ոչ եւս պիտոյ է վասն մե-
ղաց պատարագ:

ՎՋ

* Ունիմք այսուհետեւ, եղբարք, համար- 19
ձակութիւն 'ի մուտս սրբութեանցն արեամբն
Յիսուսի, * զոր նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ 20
եւ կենդանի 'ի ձեռն վարագուրին, այսինքն է՝
մարմնոյն իւրոյ. * եւ քահանայ մեծ 'ի վերայ 21
տանն Աստուծոյ. * մատիցուք ճշմարիտ սրտիւք, 22
լրութեամբ հաւատոց, լուացեալ զսիրտս 'ի
խղճէ չարեաց եւ մկրտեալ զմարմին 'ի ջուրն
սրբութեան. * պինդ կալցուք զխոստովանու- 23
թիւն անշարժ յուսոյն, զի հաւատարիմ է որ
որ խոստացաւն:

* Եւ զգուշասցուք միմեանց յորդորմամբք 24

25 սիրոյ եւ գործոց բարեաց. * եւ մի թողցուք
զժողովս միմեանց, որպէս սովոր են ոմանք.
այլ մխիթարեսցուք, եւ այնչափ եւս առաւել՝
26 որչափ տեսանիցէք զօրն մերձեալ: * Զի կամա-
կար մոք եթէ յանցանիցեմք յետ ընդունե-
լութեան գիտութեան ճշմարտութեանն՝ այ-
նուհետեւ ոչ եւս պիտոյ է վասն մեղաց պա-
27 տարագ, * այլ ահեղ ակնկալութիւն դատաս-
տանին, եւ նախանձ հրոյն որ ուտելոց է զհակա-
28 ռակորդսն: * Արհամարհեալ ուրուք զօրէնսն
Մովսիսի, առանց ողորմութեանց՝ առ երկուք
29 կամ երիւք վկայիւք մեռանէր. * իսկ ո՞րչափ
առաւել պատժոց արժանի համարիցիք զայն, որ
զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար, եւ զարիւն
նորոյ ուխտին խառնակ համարեցաւ՝ որով սըր-
բեցաւն, եւ զՀոգին շնորհաց թշնամանեաց:
30 * Այլ գիտեմք զայն որ ասացն. Իմ են վրէժ-
խնդրութիւնք եւ ես հատուցից, ասէ Տէր. եւ
դարձեալ՝ թէ դատի Տէր զժողովուրդ իւր:
31 * Ահ մեծ է անկանել 'ի ձեռս Աստուծոյ կեն-
դանւոյ:

32 * Արդ յիշեցէք զաւուրսն զառաջինս, յորս
լուսաւորեալք բազում ճգնանց եւ չարչարանաց
33 համբերէք. * մերթ 'ի նախատինս եւ 'ի նեղու-
թիւնս խայտառակեալք, մերթ կցորդք այն-
34 պիսեաց վաստակաւորացն լինել: * Քանզի եւ
ընդ կապեալս չարչարեցարուք, եւ զյափշտա-
կութիւն ընչից ձերոց խնդութեամբ ընկալա-

րուք. քանզի գիտէիք թէ լաւագոյն եւս ստա-
ցուածս ունիք անձանց յերկինս, ուր կայն եւ
մնան ։ * Արդ մի՛ մերժէք 'ի ձէնջ զհամարձա- 35
կութիւնն ձեր, յորում կայ մեծաց վարձուց
հատուցումն. * պիտոյ է ձեզ համբերութիւն, 36
* զի զկամս Աստուծոյ արարեալ հասջիք աւե- 37
տեացն. զի փոքր միւս եւս քան որչափ, որ
գալոցն իցէ՝ եկեսցէ եւ ոչ յամեսցէ. * Զի ար- 38
դարն իմ 'ի հաւատոց կեցցէ. եւ եթէ յերկ-
միտս ոք լիցի, ոչ հաճեսցի ընդ նա անձն իմ ։
* Բայց մեք ոչ եթէ երկմտութեամբ եմք 'ի կո- 39
րուստ, այլ հաւատովք 'ի փրկութիւն հոգւոց ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ յուսացելոց ի- 1
րաց հաստատութիւն, եւ յանդիմանութիւն
որոց ոչն երեւին. * զի նովաւ վկայեցան առա- 2
ջինքն ։ * Հաւատովք իմանամք հաստատեալ ըզ- 3
յաւիտեանսն բանիւ Աստուծոյ, յաներեւութից
զերեւելիսս եղեալ ։ * Հաւատովք լաւ պատա- 4
րագս Հաբէլ քան զԿայէն մատուցանէր Աստու-
ծոյ, որով վկայեցաւ իսկ արդար լինել. զի 'ի
վերայ պատարագացն եղեւ վկայութիւն նմա
յԱստուծոյ. զի թէպէտ եւ մեռաւ 'ի նմին,
սակայն տակաւին խօսի ։ * Հաւատովք Ենովք 5
փոխեցաւ, զի մի՛ զմահ ճաշակեսցէ. եւ ոչ ու-
րեք գտանէր, քանզի փոխեաց զնա Աստուած.

եւ յառաջ քան զփոխելն նորա՝ վկայեցաւ հա-
6 ճոյ լինել Աստուծոյ. * բայց առանց հաւատոյ՝
անհնար է հաճոյ լինել. այլ հաւատալ արժան
է այնմ որ մերձենայ առ Աստուած՝ թէ է Աս-
տուած, եւ որ խնդրեն զնա՝ լինի պարգեւա-
7 տու ։ * Հաւատովք առեալ հրաման Նոյի՝ վասն
չեւ եւս երեւելեացն՝ զահի հարեալ կազմէր
զտապանն 'ի փրկութիւն տան իւրոյ, որով դա-
տեցաւ զաշխարհ. եւ հաւատոյն արդարու-
8 թեան եղեւ ժառանգաւոր ։ * Հաւատովք՝ որ
Աբրահամն կոչեցաւ՝ ունկնդիր եղեւ ելանել 'ի
տեղին զոր առնլոց էր 'ի ժառանգութիւն. եւ
9 գնաց՝ եւ ոչ գիտէր յով երթիցէ ։ * Հաւատովք
պանդխտեցաւ յերկիրն աւետեաց՝ իբրեւ յօ-
տարութեան. խորանօք բնակեաց Սահակաւ
եւ Յակովբաւ հանդերձ՝ ժառանգակցօք նորին
10 աւետեաց. * քանզի ակն ունէր հիմամբք հաս-
տատելոյ քաղաքին, որոյ ճարտարապետ եւ ա-
11 րարիչ Աստուած է ։ * Հաւատովք եւ ինքն Սա-
ռա՝ որ ամուլն էր՝ զօրութիւն առնլոյ զսերմն
որդեծնութեան ընդունէր, եւ 'ի տարաժամ
հասակի ծնանէր. քանզի հաւատարիմ համա-
12 րեցաւ զայն որ խոստացաւն. * վասն որոյ եւ 'ի
միոջէն ծնանէին, եւ այն 'ի յանցեալ ժամա-
նակի, իբրեւ զաստեղս երկնից բազմութեամբ,
եւ իբրեւ զաւազ առ ափն ծովու առանց թը-
13 ւոյ ։ * Ըստ հաւատոց մեռան ամենեքին սոքա,
եւ չեւեւս ընկալեալ զաւետիսն. այլ 'ի հե-

ռուստ տեսին զնոսա եւ ցնծացան , եւ խոստովան եղեն՝ եթէ օտարք եւ պանդուխտք
են յերկրի . * զի որք զայնպիսին խօսին , յայտ 14
առնեն՝ եթէ գաւառ իմն խնդրեն . * զի եթէ 15
զայն յիշէին ուստի ելին , գոյր ժամանակ դառ-
նալոյ անդրէն . * Նա աւանիկ ազնուականի իմն 16
ցանկացեալ են , այս ինքն է՝ երկնաւորին . վասն
որոյ ոչ ամօթ համարի Աստուած՝ կոչել նոցա
Աստուած , քանզի պատրաստեաց նոցա քաղաք ։
* Հաւատովք մատոյց Աբրահամ 'ի փորձութեան 17
իւրում՝ զԻսահակ պատարագ , եւ զմիամօրն մա-
տուցանէր , որոյ զաւետիսն ընկալեալ էր . * ո- 18
րում ասացաւ , թէ Սահակաւ կոչեսցի քեզ
զաւակ . * եդ 'ի մտի իւրում, թէ եւ 'ի մեռե- 19
լոց կարող է յարուցանել Աստուած . ուստի եւ
յառակս իսկ ընկալաւ զնա ։ * Հաւատովք վասն 20
հանդերձելոց իրաց՝ օրհնեաց Իսահակ զՅակոբ
եւ զԵսաւ ։ * Հաւատովք Յակոբ 'ի մեռանելն 21
իւրում՝ զիւրաքանչիւր ոք յորդւոցն Յովսեփու
օրհնեաց , եւ երկիր եպագ 'ի ծագ գաւազանի
իւրոյ ։ * Հաւատովք Յովսէփ 'ի վախճանել իւ- 22
րում յիշեաց զելս որդւոցն Իսրայելի , եւ վասն
ոսկերաց իւրոց պատուիրեաց ։ * Հաւատովք 23
զՄովսէս իբրեւ ծնաւ , թաքուցան ամիս երիս
'ի հարց իւրոց . քանզի տեսին կայտառ զմանու-
կն , եւ ոչ զանգիտեցին 'ի հրամանէ թագա-
ւորին ։ * Հաւատովք Մովսէս իբրեւ անձեաց՝ 24
ուրացաւ կոչել որդի դստերն փարաւոնի . * լաւ 25

համարեցաւ չարչարել ընդ ժողովրդեանն Աս-
տուծոյ , քան առ ժամանակ մի վայելել 'ի մեղս .
26 * կարեւոր համարեցաւ զնախատինս Քրիստո-
սի , քան զմեծութիւն գանձուցն Եգիպտացւոց .
զի հայեցեալ ակն ունէր վարձուցն հատուցման ։
27 * Հաւատովք թողոյր զերկիրն Եգիպտացւոց , եւ
ոչ երկնչէր 'ի ցասմանէ թագաւորին . զի զա-
ներեւոյթն իբրեւ զտեսեալ համբերութեամբ
28 համարեցաւ ։ * Հաւատովք արար զզատիկն եւ
զհեղումն արեանն , զի մի՛ սատակիչն անդրան-
29 կաց մերձեսցէ 'ի նոսա ։ * Հաւատովք անցին
ընդ ծովն կարմիր՝ իբրեւ ընդ ցամաք երկիր , զո-
րոյ զփորձ առեալ Եգիպտացւոցն՝ ընկղմեցան ։
30 * Հաւատովք պարիսպքն Երիքովի անկան , շուրջ
31 եկեալ զնոքօք զեօթն օր ։ * Հաւատովք Ռախաբ
պոռնիկ ոչ կորեաւ ընդ անհաւատսն , որոյ ըն-
32 կալեալ էր զլրտեսսն խաղաղութեամբ ։ * Եւ արդ
զի՞նչ եւս ասացից . զի չէ՛ բաւական ժամանակս
պատմելոյ վասն Գեդէովնի , Բարակայ , Սամփսո-
նի , Յեփթայայ , Դաւթի , եւ Սամուէլի , եւ այլոց
33 մարգարէիցն ։ * Որք հաւատովք պարտեցին ըզ-
թագաւորութիւնս , գործեցին զարդարութիւն ,
հասին աւետեաց , խցին զբերանս առիւծուց ,
34 * շիջուցին զզօրութիւն հրոյ , ապրեցան 'ի բե-
րանոյ սրոյ , զօրացան 'ի տկարութենէ , եղեն
զօրաւորք 'ի պատերազմի , առին զբանակս օտա-
35 րաց . * ընկալան կանայք 'ի յարութենէ զմե-
ռեալս իւրեանց ։ Կէսք կոչկոճեցան՝ եւ չեւ եւս

ընկալեալ զփրկութիւն, զի լաւագոյն յարու-
թեանն հասանիցեն. * եւ կէսք զտանջանաց եւ 36
զգանից փորձ առին, զկապանաց եւ զբանտից.
* քարկոծեցան, սղոցեցան, փորձեցան, սպան- 37
մամբ սրոյ մեռան, շրջեցան լաշկամաշկօք եւ մոր-
թովք այծենեօք: Կարօտեալք, նեղեալք, չար-
չարեալք, * զորս ոչ արժէ աշխարհս. յանա- 38
պատի մոլորեալք եւ 'ի լերինս եւ յայրս եւ 'ի
փապարս երկրի: * Եւ սոքա ամենեքին վկայեալք 39
'ի հաւատոյն, չեւ եւս ընկալան զաւետիսն. * Աս- 40
տուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ, զի մի
առանց մեր կատարեսցին:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Այսուհետեւ եւ մեք՝ որ այսչափ շուրջ ըզ- 1
մեօք մածեալ ունիմք զբազմութիւն վկայից, ըզ-
հպարտութիւն զամենայն 'ի բաց ընկեսցուք
եւ զմեղս կարեւորս. համբերութեամբ ըն-
թասցուք 'ի պատերազմ՝ որ առաջի կայ մեզ:
* Հայեսցուք 'ի զօրագլուխն հաւատոյ եւ 'ի կա- 2
տարիչն Յիսուս. որ փոխանակ ուրախութեանն
որ նմա առաջի կայր՝ յանձն առ զխաչն, արհա-
մարհեաց զամօթն, նստաւ ընդ աջմէ աթոռոյն
Աստուծոյ: * Ա՛ղէ ածէք զմտաւ, որ զայսպիսի 3
համբերութիւն 'ի մեղաւորաց հակառակու-
թենէ անտի կրեաց. զի մի աշխատք լինիցիք ան-
ձամբք ձերովք եւ լքանիցիք. * զի չեւ եւս ա- 4

րեամբ չափ պատերազմեալք՝ հակառակ կացէք
5 մեղացն, * եւ մոռացարուք զմխիթարութիւնն՝
որ ընդ ձեզ իբրեւ ընդ որդեակս խօսի:
Գ. Որդեակ իմ, մի՛ լքանիր 'ի խրատու Տեա-
ռըն, եւ մի՛ վհատիցիս յանդիմանեալ 'ի նմանէ.
6 * զի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն
7 որդի զոր ընդունի: * Ի խրատու համբերութեան
կացէք, իբրեւ յորդիս մատուցեալ է 'ի ձեզ Աս-
8 տուած: Ո՞ր որդի է՝ զոր ոչ խրատիցէ հայր. * զի
եթէ առանց խրատու լինիցիք, որով ամենեքին
բաժանորդք եղեն, ապա խորթք իցէք՝ եւ ոչ
9 որդիք: * Զի եթէ 'ի մարմնաւոր հարցն մերոց
զոր ունիմք խրատիչս՝ պատկառեմք, ո՞րչափ եւս
առաւել հնազանդեսցուք Հօրն հոգւոց՝ եւ կեց-
10 ցուք. * զի սոքա առ սակաւ ժամանակս ըստ
կամաց իւրեանց խրատէին, իսկ նա՝ վասն օգտի,
11 առ 'ի ընդունելոյ զսրբութիւն նորա: * Ամենայն
խրատ առ ժամանակն ոչ ուրախութեան թուի՝
այլ տրտմութեան. բայց յետոյ պտուղ խաղա-
ղութեան՝ նովաւ կրթեցելոցն հատուցանէ յար-
12 դարութիւն: * Վասն որոյ զձեռս լքեալս եւ
13 զծունկս կթոտս հաստատեցէք. * եւ զշաւիղս
ուղիղս արարէք ոտից ձերոց, զի մի որ կաղն
14 իցէ գլորիցի, այլ մանաւանդ բժշկեսցի: * Զխա-
ղաղութեան զհետ երթայք ընդ ամենեսին՝ եւ
զսրբութեան, առանց որոյ ոչ ոք տեսանիցէ
զՏէր:

15 * Զգոյշ լերուք, գուցէ ոք յետնեալ գտանի-

ցի 'ի շնորհացն Աստուծոյ. մի՛ ոք արմատ դառ-
նութեան 'ի վեր երեւեալ նեղիցէ, եւ նովաւ
բազումք պղծիցին: * Մի՛ ոք պոռնիկ եւ պիղծ 16
իբրեւ զԵսաւ, որ ընդ միոյ կերակրոյ զանդրան-
կութիւնն վաճառեաց. * գիտէք՝ զի թէպէտ 17
եւ յետոյ կամեցաւ ժառանգել զօրհնութիւնն,
խոտան գտաւ. զի եւ ապաշխարութեան տեղի
ոչ եգիտ, թէպէտ եւ արտասուօք խնդրեաց
զնա:

Դ. * Զի ոչ էք մատուցեալ առ լեառն շօշա- 18
փելի, որ հրոյն վառեալ էր եւ միգով եւ մա-
ռախլով եւ խաւարաւ եւ մթով, * ուր փողն 19
հնչէր եւ բարբառ պատգամացն. ուստի որք
լուանն՝ հրաժարեցին, զի մի՛ կրկնեսցի առ նոսա
բանն. * քանզի ոչ հանդարտէին հրամանին. Թէ- 20
պէտ եւ գազան մերձենայր 'ի լեառն՝ քարկոծ
լինէր. * եւ այնպէս ահագին էր տեսիլն, զի եւ- 21
Մովսէս ասէր, Թէ զահի հարեալ եմ եւ դո-
ղամ: * Այլ մատուցեալ էք 'ի Սիովն լեառն, և 22
'ի քաղաք Աստուծոյ կենդանւոյ յԵրուսաղէմ՝
յերկինս, եւ 'ի բիւրաւոր բանակս հրեշտակաց,
* եւ յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս, և 23
առ դատաւորն ամենեցուն Աստուած, եւ յո-
գիս արդարոց կատարելոց, * եւ 'ի նորոյ կտա- 24
կարանաց միջնորդն Յիսուս, եւ 'ի հեղումն ա-
րեան նորա՝ որ առաւել խօսի քան զՀաբելին:
* Զգոյշ լերուք՝ գուցէ հրաժարիցէք յայնմա- 25
նէ որ խօսեցաւն. զի եթէ նոքա ոչ կարացին

զերծանել հրաժարեալք յայնմանէ՝ որ յերկրին
հրաման տայր, որչափ եւս առաւել մեք՝ եթէ
26 յերկնաւորէն թիկունս դարձուցանիցեմք: * Որոյ
ձայնն զերկիր շարժեաց յայնժամ, և այժմ խոս-
տացեալ է եւ ասէ. Միւսանգամ՝ շարժեցից ոչ
27 միայն զերկիր՝ այլ եւ զերկինս: * Այլ միւս-
անգամն յայտ առնէ զշարժելոցն՝ իբրեւ զեղե-
լոց փոփոխումն, զի հաստատուն կացցեն ան-
28 շարժքն: * Վասն որոյ թագաւորութիւն անշարժ
ընկալեալ՝ պինդ կալցուք զշնորհսն, որով պաշ-
տեմք զԱստուած հաճութեամբք՝ ահիւ եւ դո-
29 ղութեամբ. * քանզի Աստուած մեր հուր ծա-
խիչ է:

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Եղբայրսիրութիւն հաստատեսցի առ ձեզ.
2 * զօտարասիրութիւն մի՛ մոռանայք, զի այնու ո-
3 մանք յանգէտս ընկալան զհրեշտակս: * Յուշ լի-
ցին ձեզ կապեալքն՝ որպէս թէ դուք ընդ նոսա
կապեալք իցէք, եւ չարչարեալքն՝ որպէս թէ եւ
4 դուք իսկ մարմնաւորք էք: * Պատուական է ա-
մուսնութիւն ամենեւին. եւ սուրբ անկողինք.
բայց զշունս եւ զպոռնիկս դատի Աստուած:
5 * Բարք անարծաթասէրք լինիցին, բաւական հա-
մարել որչափ ինչ 'ի ձեռս իցէ. քանզի ինքն իսկ
ասաց. Ո՛չ թողից զքեզ եւ ոչ ընդ վայր հարից.
6 * որպէս համարձակ լիցուք ասել. Տէր է իմ օգ-

նական՝ եւ ո՛չ երկեայց, զի՞ արասցէ ինձ
մարդ ։ * Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսե- 7
ցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս
գնացից նոցա. նմանօղք եղերուք հաւատոցն ։
* Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, նոյն եւ յա- 8
ւիտեանս ։ * Յուսմունս պէսպէսս եւ յօտարա- 9
ձայնս մի՛ դանդաչէք. զի լաւ է շնորհօք հաս-
տատել զսիրտս, եւ ոչ կերակրովք. որովք ոչ
ինչ օգտեցան որք այնպէսն գնացին ։

Ե. * Ունիմք մեք սեղան, ուստի ո՛չ ունին 10
իշխանութիւն ճաշակել՝ որք պաշտեն զպաշտօն
խորանին ։ * Զի որոց անասնոց մատչէր արիւնն 11
'ի սրբութիւնսն՝ վասն մեղաց 'ի ձեռն քահա-
նայապետին, նոցուն մարմինք այրէին արտա-
քոյ բանակին. * վասն որոյ եւ Յիսուս, զի սըր- 12
բեսցէ խուռն արեամբն զժողովուրդն, արտաքոյ
դրանն չարչարեցաւ ։ * Արդ եկայք ելցուք առ 13
նա արտաքոյ բանակին, առեալ յանձն զնախա-
տինս նորա. * քանզի ոչ եթէ ունիմք քաղաք՝ 14
որ աստէն մնալոց իցէ, այլ զհանդերձեալն
խնդրեմք ։ * Արդ 'ի ձեռն նորա մատուսցուք 15
պատարագ օրհնութեան յամենայն ժամ Աս-
տուծոյ, այս ինքն է՝ զպտուղ շրթանց խոստո-
վանելոց յանուն նորա ։ * Զբարերարութիւն 16
եւ զհաղորդութիւն մի՛ մոռանայք, զի ընդ այն-
պիսի պատարագս հաճի Աստուած ։ * Ունկնդիր 17
լերուք առաջնորդաց ձերոց եւ հպատակ կացէք
նոցա. զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց՝ որպէս

թէ համարս տալոց իցեն ընդ ձեր. զի խնդու-
թեամբ արասցեն զայն՝ եւ մի՛ յոգւոց հանե-
լով. զի այն ոչ յօգուտ ձեր է ։
18 ԿԻԲ. * Աղօթս արարէք վասն մեր. զի հաս-
տատեալ գիտեմք՝ եթէ բարւոք միտս ունիմք.
յամենայնի կամիմք բարւոք գնացս ցուցանել.
19 * եւ առաւել աղաչեմ՝ զի զայն առնիցէք, զի
վաղագոյն պատսպարեցայց ձեզ ։
20 * Եւ Աստուած խաղաղութեան՝ որ եհան 'ի
մեռելոց զհովիւն հօտից՝ զմեծն արեամբ յաւի-
21 տենական ուխտին զՏէր մեր Յիսուս, * հաստա-
տեսցէ զձեզ 'ի գործս բարութեան՝ առնել ըզ-
կամս նորա. եւ արասցէ 'ի մեզ զհաճոյսն ա-
ռաջի իւր՝ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում
22 փառք յաւիտեանս. ամէն ։ * Աղաչեմ զձեզ, եղ-
բարք, անսալ բանիս մխիթարութեան. քանզի
23 սակաւուք գրեցի ձեզ. * եւ ճանաչէք զեղբայրն
մեր զՏիմոթէոս՝ զարձակեալն առ ձեզ. ընդ ո-
րում՝ եթէ վաղագոյն գայցէ՝ տեսից զձեզ ։
24 * Ողջոյն տաջիք ամենայն առաջնորդաց ձերոց
եւ ամենայն սրբոց ։ Ողջոյն տան ձեզ՝ որ 'ի կող-
25 մանս Իտալացւոց են ։ * Շնորհք ընդ ամենեսին
ձեզ ։

Առ Եբրայեցիս գրեցաւ յԻտալիա 'ի ձեռն Տիմոթեայ ։

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ
ՅԱԿՈՎԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԳԼՈՒԽ Ա.

Ա.Գ. ՅԱԿՈՎԲՈՍ Աստուծոյ եւ Տեառն 1
Յիսուսի Քրիստոսի ծառայ, երկո-
տասան ազգացդ որ ՚ի սփիւռս էք՝ ողջոյն։
Ամենայն ուրախութեան արժանի համարի- 2
ջիք. եղբարք, յորժամ ՚ի պէսպէս փորձութեանց
՚ի մէջ անկանիցիք. * գիտասջիք զի հանդէս ձե- 3
րոց հաւատոցն յօրինեալ գործէ զհամբերու-
թիւն։ *Իսկ համբերութիւնն գործ կատարեալ 4
ունիցի. զի լիջիք ողջամտամք եւ կատարեալք,
եւ ոչ ինչ իւիք նուազեալք։ * Ապա թէ ոք ՚ի 5
ձէնջ լիցի նուազեալ յիմաստութենէ, խնդրես-
ցէ յԱստուծոյ՝ որ տայն ամենայնի առատապէս
եւ ոչ նախատէ, եւ տացի նմա։ * Բայց խնդրես- 6
ցէ հաւատովք՝ եւ մի երկմտեսցէ. զի որ երկ-
միտն է՝ նման է հողմակոծեալ եւ տատանեալ
ալեաց ծովու. * մի ակն կալցի մարդն այն առ- 7
նուլ ինչ յԱստուծոյ. * զի այր երկմիտ՝ առանց 8

հաստատութեան է յամենայն ճանապարհս իւր։
9 * Պարծեսցի եղբայր խոնարհ ՚ի բարձրութիւն
10 իւր, * եւ որ մեծատունն լիցէ ՚ի խոնարհու-
թիւն իւր. քանզի իբրեւ զծաղիկ խոտոյ անցցէ։
11 * Զի ծագեաց արեւ հանդերձ խորշակաւ՝ եւ
ցամաքեցոյց զխոտն, եւ թօթափեցաւ ծաղիկն
նորա, եւ կորեաւ վայելչութիւն երեսաց նորա.
նոյնպէս եւ մեծատունն հանդերձ շահիւքն իւ-
12 րովք թարշամեսցի։* Երանեալ է այր՝ որ համբե-
րիցէ փորձանաց. զի եթէ ընտիր եւս գտանիցի,
առցէ զպսակն կենաց՝ զոր խոստացաւ սիրե-
լեաց իւրոց։
13 Ա.Ե. * Մի՛ ոք որ ՚ի փորձութեան լիցէ, ասի-
ցէ՝ թէ յԱստուծոյ փորձիմ, զի Աստուած ան-
14 փորձ է չարեաց, փորձէ նա՝ եւ ոչ զոք. * իւ-
րաքանչիւր ոք փորձի առ ՚ի յիւրոյն ցանկու-
15 թեանց ձգեալ եւ պատրեալ. * ապա այնուհե-
տեւ ցանկութիւնն յղացեալ՝ զմեղս ծնանի, եւ
16 մեղքն կատարեալ՝ զմահ ծնանին։ * Մի՛ խաբէք,
17 եղբարք իմ սիրելիք, * զի ամենայն տուրք բարիք
եւ ամենայն պարգեւք կատարեալք՝ ՚ի վերուստ
են իջեալ առ ՚ի Հօրէն լուսոյ, յորում չիք փո-
18 փոխումն եւ կամ շրջելոյ ստուեր։ * Կամեցեալ
ծնաւ զմեզ բանիւն ճշմարտութեան՝ լինել մեզ
19 պտուղ ինչ ստացուածոց նորա. * գիտասջիք
եղբարք իմ սիրելիք։
Եղիցի ամենայն մարդ արագ առ ՚ի լսել,
եւ ծանր առ ՚ի խօսել, եւ ծանր առ ՚ի բար-

կամալ. * զի բարկութիւն մարդոյ զարդարու- 20
թիւն Աստուծոյ ոչ գործէ ։ * Որով 'ի բաց թօ- 21
թափեալ զամենայն աղտեղութիւն եւ զյաւե-
լուածս չարեաց, հեզութեամբ ընդունիջիք զը-
բանն ընտաբոյս, որ կարօղն է կեցուցանել զոգիս
ձեր. * լինիջիք առնելք բանին, եւ մի լսելք 22
միայն համարեսջիք յանձինս ։ * Զի եթէ ոք լը- 23
սելի միայն իցէ բանին՝ եւ ոչ առնելի, նման է
նա մարդոյ՝ որ պշուցեալ հայիցի ընդ երեսս
իւր՝ որ ծնանիցին 'ի հայելւոջ. * զի հայեցեալ 24
երես զինքն, եւ զանց արար, եւ անդէն մոռա-
ցաւ թէ որպիսի ոք էր ։ * Իսկ որ յառեալ 'ի 25
կատարեալ օրէնս ազատութեանն հայիցի, եւ
'ի նմին կացցէ , ոչ եղեւ նա լսօղ մոռացու-
թեան, այլ առնելի գործոյն. նա յառնելն իւ-
րում լիցի երանելի ։ * Եթէ ոք կամիցի կրօնա- 26
ւոր լինել, եւ ոչ սանձահարեսցէ զլեզու իւր,
այլ զբաղէցուցանիցէ զսիրտ իւր, այնպիսւոյն
վայրապար է կրօնաւորութիւնն ։ * Կրօնաւորու- 27
թիւն սուրբ եւ անարատ առ 'ի յԱստուծոյ եւ
'ի Հօրէ այս է, այցելու լինել որբոց եւ այրեաց
'ի նեղութեան իւրեանց , անարատ պահել
զանձն յաշխարհէ ։

ԳԼՈՒԽ Բ.

Ա.Զ. Եղբարք իմ, մի աչառանօք ունիցիք 1
զհաւատոն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ

2 Տէրն է փառաց ։ * Եթէ մտցէ 'ի ժողովուրդ-
ձեր այր՝ որ ունիցի մատանի ոսկի եւ հանդերձս
պայծառս, մտանիցէ անդր եւ աղքատ ոք 'ի
3 հանդերձս աղտեղիս, * հայիցիք ընդ այն՝ որ ու-
նիցի զհանդերձն պայծառս, եւ ասիցէք՝ եթէ
դու նիստ աստ պատուով, եւ ցաղքատն ա-
սիցէք՝ եթէ յոտն կաց այդր, կամ թէ եկ նիստ
4 առ պատուանդանիւ իմով. * ո՞չ խղճիցէք յան-
ձինս, եւ լինիցիք դատաւորք չարացն խորհըր-
5 դոց ։ * Լուարուք ինձ, եղբարք իմ սիրելիք. ո՞չ
ապաքէն Աստուած ընտրեաց զաղքատս աշխար-
հիս, որ են մեծատունք հաւատովք եւ ժա-
ռանգաւորք արքայութեանն՝ զոր խոստացաւ
6 սիրելեաց իւրոց. * եւ դուք անարգէք զաղքատս։
Ո՞չ մեծատունք յաղթահարեն զձեզ՝ եւ նոքա
7 քարշեն զձեզ 'ի դատաստան. * ո՞չ նոքա հայ-
հոյեն զբարւոք անունն՝ որ կոչեցեալ է 'ի վերայ
8 ձեր ։ * Ապա թէ զօրէնս կատարիցէք զարքու-
նական ըստ գրոց՝ եթէ Սիրեսցես զընկեր քո
9 իբրեւ զանձն քո, բարւոք առնէք. * իսկ եթէ
աչառիցէք, մեղս գործէք՝ յանդիմանեալք յօ-
10 րինացն իբրեւ օրինազանցք ։ * Որ ոք զամենայն
օրէնսն պահիցէ, եւ միով իւիք ինչ գլթիցէ, ե-
11 ղեւ ամենայն օրինացն պարտապան ։ * Զի որ ա-
սացն՝ թէ Մի սպանանիցես, ասաց թէ եւ մի
շնայցես. զի եթէ սպանանիցես ոչ՝ բայց շնայ-
12 ցես, եղեր յանցաւոր օրինացն ։ * Այնպէս խօ-
սեցարուք եւ այնպէս արարէք, որպէս զի ա-

ողորմութեան օրինօքն լինելոց դատելոյ . * զի անո֊ 13
ղորմ դատաստան լինելոց է այնմ, որ ոչ առ֊
նիցէ ողորմութիւն . քանզի բարձր 'ի գլուխ
պարծի ողորմութիւն առ դատաստանաւն ։

Արդ . * Զի՞նչ օգուտ իցէ, եղբարք իմ, եթէ 14
ասիցէ ոք հաւատս ունել՝ եւ գործս ոչ ունի֊
ցի . միթէ կարիցէ՞ն հաւատքն ապրեցուցա֊
նել զնա ։ * Եթէ եղբայր ոք կամ քոյր՝ իցեն 15
մերկք կամ կարօտեալ աւուրն կերակրոյ, * ա֊ 16
սիցէ ոք 'ի ձէնջ ցնոսա . երթայք խաղաղու֊
թեամբ ջեռարուք եւ յագեցարուք . եւ տայ֊
ցէք ոչ նոցա զպէտս մարմնոյն, զի՞նչ օգուտ
իցէ . * այնպէս եւ հաւատք՝ եթէ գործս ոչ 17
ունիցին, մեռեալ են առանձինն ։ * Այլ թե֊ 18
րեւս ասիցէ ոք . եթէ դու հաւատս ունիս՝ եւ
ես գործս ունիմ. ցոյց ինձ զհաւատսն քո ա֊
ռանց գործոց, եւ ես ցուցից քեզ 'ի գործոց
իմոց զհաւատսն ։ * Դու հաւատաս՝ զի մի է 19
Աստուած, բարւոք առնես . եւ դեւք հաւա֊
տան եւ սարսեն ։ * Կամի՞ս գիտել, ո՜վ մարդ 20
սնոտի, զի հաւատք առանց գործոց դատարկ
են ։ * Աբրահամ հայր մեր ո՞չ ապաքէն 'ի գոր֊ 21
ծոց արդարացաւ՝ հանեալ 'ի սեղան զորդին
իւր զԻսահակ պատարագ ։ * Տեսանե՞ս՝ զի հա֊ 22
ւատքն եղեն գործակից գործոց նորա, եւ 'ի
գործոց անտի հաւատքն կատարեցան . * եւ կա֊ 23
տարեցաւ գիրն՝ որ ասէ . հաւատաց Աբրահամ
յԱստուած, եւ համարեցաւ նմա յարդարու֊

24 թիւն, եւ կոչեցաւ բարեկամ Աստուծոյ ։ * Տե֊
սանէ՞ք՝ զի 'ի գործոց արդարանայ մարդ՝ եւ ոչ
25 'ի հաւատոց միայն ։ * Այնպէս եւ Ռախաբ պոռ֊
նիկ՝ ո՞չ ապաքէն 'ի գործոց արդարացաւ, ըն֊
կալեալ զլրտեսսն՝ եւ ընդ այլ ճանապարհ ար֊
26 ձակեաց ։ * Զոր օրինակ մարմին առանց հոգ֊
ւոյ մեռեալ է, այնպէս եւ հաւատք առանց
գործոց մեռեալ են ։

ԳԼՈՒԽ Գ.

1 ԲԱ . Մի՛ բազում վարդապետս լինել, եղ֊
բարք իմ. գիտասջիք՝ զի մեծ դատաստան ըն֊
2 դունելոց եմք . * քանզի բազում ինչ յանցա֊
նեմք ամենեքեան ։ Եթէ ոք բանիւ ոչ յանցա֊
նիցէ՝ նա է մարդ կատարեալ, որ կարօղն է
3 սանձահարել զամենայն մարմին իւր ։ * Տես՝ զի
ձիոց սանձս 'ի բերան դնեմք՝ առ անսալոյ նո֊
ցա մեզ, եւ զամենայն մարմինս նոցա նուա֊
4 ճեմք ։ * Ահաւասիկ եւ նաւք՝ որպիսի՛ ինչ են,
եւ 'ի սաստիկ հողմոց վարին . եւ փոքր թեւո֊
վըն շրջին՝ յոր կոյս եւ միտք ուղղչին կամիցին ։
5 * Այնպէս եւ լեզու՝ փոքր ինչ անդամ է՝ եւ
մեծամեծս բարբառի . ահա եւ սակաւ ինչ
6 հուր զորպիսի՛ անտառս հրդեհէ . * եւ լեզու
հուր՝ զարդ անիրաւութեան, լեզու հաստա֊
տեալ է յանդամս մեր, որ զամենայն մարմինն
ապականէ, եւ վառէ հրով զանիւ ծննդեան,

եւ բորբոքեալ տոչորի 'ի գեհենի ։ * Ամենայն 7
բնութիւն գազանաց եւ թռչնոց եւ սողնոց,
եւ որ 'ի ծովու են, հնազանդեալ է եւ հնա-
զանդի մարդկեղէն բնութեան ։ * Բայց զլեզու 8
մարդկան ոչ ոք կարէ հնազանդել, զչարն եւ
զանկարգն եւ զլի թունոց մահաբերին ։ * Նո- 9
վաւ օրհնեմք զՏէրն եւ զՀայր, եւ նովաւ անի-
ծանեմք զմարդիկ որ ըստ նմանութեան Աստու-
ծոյ արարան ։ * 'ի նմին բերանոյ ելանեն օրհնու- 10
թիւնք եւ անէծք, ոչ է պարտ, եղբարք իմ,
այդմ այսպէս լինել ։ * Մի թէ աղբիւր անտըս- 11
տին 'ի միոյ ականէ բղխիցէ՞ քաղցր եւ դառն.
* միթէ մա՞րթ ինչ իցէ, եղբարք իմ, թզենւոյ 12
ձէթ բերել, կամ որթոյ թուզ. եւ ոչ աղտա-
տին տեղւոյ ջուր քաղցր առնել ։

ԲԲ. * Ո՞վ իցէ իմաստուն եւ հանճարեղ 'ի 13
ձեզ, ցուցցէ 'ի բարւոք գնացից զգործս իւր
հեզութեամբ իմաստութեան ։ * Ապա թէ նա- 14
խանձ եւ դառնութիւն եւ հակառակութիւն
ունիցիք 'ի սիրտս ձեր, մի՛ պարծիք սուտ առ-
նել զճշմարտութիւն ։ * Ոչ է իմաստութիւնս 15
այս իջեալ 'ի վերուստ, այլ երկրաւոր՝ շնչաւոր
եւ դիւական. * զի ուր հեռ եւ նախանձ, անդ 16
է անկարգութիւն եւ ամենայն իրք չարք ։ * Իսկ 17
վերին իմաստութիւնն, նախ՝ զի սուրբ է, եւ
ապա խաղաղարար, հեզ, դիւրահաւան, լի
ողորմութեամբ եւ պտղովք բարեաց, անխիղճ,
առանց կեղծաւորութեան. * պտուղ արդարու- 18

թեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ՝ որ
առնեն զխաղաղութիւն ։

ԳԼՈՒԽ Դ.

1 Ուստի՞ պատերազմունք եւ ուստի՞ կռիւք 'ի
ձեզ. ո՞չ յայդպիսի ցանկութեանց ձերոց՝ որ
2 զօրացեալ են յանդամս ձեր ։ * Ցանկայք եւ ոչ
ունիք. սպանանէք եւ նախանձիք, եւ ոչ կա-
րէք հասանել. պատերազմիք կռուիք՝ եւ ոչ
3 ունիք, վասն զի ոչ խնդրէք. * խնդրէք՝ եւ ոչ
առնուք, վասն զի չարաչար խնդրէք. զի ան-
4 դէն 'ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք ։ * Շնա-
ցողք, ո՞չ գիտէք՝ զի սէր աշխարհիս թշնամու-
թիւն է առ Աստուած. զի որ ոք կամիցի սիրել
զաշխարհ, թշնամի առնէ զանձն Աստուծոյ ։
5 * Կամ թէ վայրապա՞ր համարիցիք՝ զոր ասէ գիրն
առ նախանձ ինչ, որում փափաքէ հոգին՝ որ
6 բնակեաց 'ի մեզ, * տալ զառաւել շնորհսն. վասն
որոյ ասէ. Տէր ամբարտաւանից հակառակ կայ
տայ շնորհս խոնարհաց ։
7 ԲԳ. * Հնազանդեցարուք այսուհետեւ Աս-
տուծոյ, եւ կացէք հակառակ չարախօսին, եւ
8 լիցի փախստական առ 'ի ձէնջ. * մերձեցարուք
առ Աստուած, եւ մերձեսցի առ ձեզ ։ Սրբե-
ցէք զձեռս, մեղաւորք, եւ ուղիղ արարէք
9 զսիրտս, երկմիտք. * տառապեցարուք, սգա-
ցարուք, եւ լացէք. ծաղր ձեր 'ի սուգ դարձ-

ցի, եւ ուրախութիւն ձեր ՚ի տրտմութիւն.
* Խոնարհեցարուք առաջի Տեառն՝ եւ բարձրա- 10
ցուսցէ զձեզ: * Մի բամբասէք զմիմեանս, եղ- 11
բարք. որ բամբասէ զեղբայր իւր, կամ դատի
զեղբայր իւր, զօրէնս բամբասէ եւ զօրէնս
դատի. իսկ եթէ զօրէնս դատիցիս, ոչ առնելի
օրինացն ես՝ այլ դատաւոր: * Մի է օրէնսդիր 12
եւ դատաւոր, որ կարօղն է փրկել եւ կորու-
սանել. * դու ո՞ ես՝ որ դատիս զընկերն: 13

Ահաւասիկ են որ ասեն. այսօր եւ վաղիւ
երթիցուք յայս անուն քաղաք, եկիցուք անդ
տարի մի, վաճառեսցուք եւ շահեսցուք. * որք 14
ոչ գիտէք զվաղիւն. * որպիսի՞ ինչ լիցին կեանք 15
ձեր. զի իբրեւ զմրրիկ էք, որ առ սակաւ մի ե-
րեւեալ՝ եւ ապա ապականեալ. փոխանակ զի
ասէիք. եթէ Տէր կամեսցի, կեցցուք եւ ա-
րասցուք զայս ինչ կամ զայն. * եւ արդ պար- 16
ծիք յամբարտաւանութեան ձերում. ամենայն
ինչ այնպիսի պարծանք՝ չարութեան են: * Որ ոք 17
գիտիցէ զբարին՝ եւ ոչ առնիցէ, մեղք են նմա:

ԳԼՈՒԽ Ե.

ԲԴ. Արդ այսուհետեւ, մեծատունք, լա- 1
ցէք եւ ողբացէք ՚ի վերայ թշուառութեանցն,
որ գալոց են ՚ի վերայ ձեր: * Զի մեծութիւնդ 2
ձեր յոչինչ է, եւ հանդերձ ձեր կերակուր ցե-
ցոյ, * եւ արծաթ ձեր եւ ոսկի՝ ժանգահար, 3

եւ ժանգն նոցա լիցի ձեզ ՚ի վկայութիւն, եւ
կերիցէ զմարմինս ձեր. իբրեւ զհուր գանձե-
4 ցէք աւուրցն յետնոց: * Ահաւասիկ վարձք մը-
շակաց որ գործեն զանդս ձեր՝ առ ձեզ են.
զրկեալն ՚ի ձէնջ աղաղակէ, եւ բողոք հնձա-
ւորացն եհաս յականջս Տեառն զօրութեանց:
5 * Փափկացայք ՚ի վերայ երկրի եւ զբօսայք. սը-
նուցէք զսիրտս ձեր՝ իբրեւ աւուր սպանման.
6 * զրկեցէք սպանէք զարդարն, որ ոչ կայր ձեզ
7 հակառակ: * Երկայնամիտ լերուք, եղբարք իմ,
մինչեւ ՚ի գալուստն Տեառն. ահա մշակ եր-
կայնամտեալ սպասէ պատուական պտղոյն երկ-
8 րի, մինչեւ առցէ զկանուխ եւ զանագան: * Եր-
կայնամտեցէք եւ դուք, հաստատեցէք զսիրտս
9 ձեր. զի գալուստն Տեառն մերձեալ է: * Մի
տրտնջիցէք զմիմեանս, եղբարք, զի մի
դատիցիք. ահաւասիկ դատաւորն առ դուրս
10 կայ: * Օրինակ առէք, եղբարք, չարչարանաց
եւ երկայնմտութեան զմարգարէսն, որք խօսե-
11 ցան յանուն Տեառն: * Ահաւասիկ երանեմք համ-
բերողաց. զհամբերութիւնն Յոբայ լուարուք՝
եւ զկատարումն Տեառն տեսէք. զի բազմա-
գութ է Տէր եւ ողորմած:

12 ԲԵ. * Յառաջ քան զամենայն ինչ, եղբարք
իմ, մի երդնուցուք, մի յերկինս, մի յերկիր,
մի յայլ ինչ երդումն, այլ եղիցի ձեր այոն՝ այո,
եւ ոչն՝ ոչ. զի մի ՚ի կեղծաւորութիւն ինչ ան-
13 կանիցիք: * Վշտանայցէ՞ ոք ՚ի ձէնջ, յաղօթս

կայցէ · բերկրիցի՞ ոք, սաղմոս ասասցէ · * Հի- 14
ւանդանայցէ՞ ոք 'ի ձէնջ, կոչեսցեն զերիցունս
եկեղեցւոյն, եւ արասցեն 'ի վերայ նորա աղօ-
թս, օծցեն իւղով յանուն Տեառն · * եւ ա- 15
ղօթքն հաւատովք՝ փրկեսցէ զաշխատեալն, եւ
յարուսցէ զնա Տէր · եւ եթէ մեղս ինչ իցէ
գործեալ՝ թողցին նմա ։ * Խոստովան եղերուք 16
միմեանց զմեղս, եւ աղօթս արարէք 'ի վերայ
միմեանց, որպէս զի բժշկեսջիք · քանզի յոյժ
զօրաւոր են աղօթք արդարոյ յօգնականութիւն ։
* Եղիա մարդ էր իբրեւ զմեզ չարչարելի · եւ 17
յաղօթս եկաց, եւ ոչ տեղեաց յերկիր զերիս
ամս եւ զվեց ամիս · * եւ դարձեալ եկաց յա- 18
ղօթս, եւ ետուն երկինք զանձրեւ եւ բուսոյց
երկիր զպտուղ իւր ։ * Եղբարք իմ, եթէ ոք 'ի 19
ձէնջ մոլորեսցի 'ի ճանապարհէ ճշմարտութեան,
եւ դարձուսցէ ոք զնա, * գիտասցէ՝ զի որ դար- 20
ձուսցէ զմեղաւորն 'ի մոլորութեան ճանապար-
հէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր 'ի մահուանէ,
եւ ծածկեսցէ զբազմութիւն մեղաց ։

ԹՈՒՂԹ ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԲՁ. ՊԵՏՐՈՍ Առաքեալ Յիսուսի Քրիստո-
սի, ընտրելոց նժդեհից որ 'ի սփիւ-
ռս պոնտացւոց, գաղատացւոց եւ կապադով-
2 կեցւոց եւ ասիացւոց եւ բիւթանացւոց, * ըստ
կանուխ գիտութեանն Աստուծոյ Հօր, սրբու-
թեամբ հոգւոյն, 'ի հնազանդութիւն եւ 'ի հե-
ղումն արեանն Յիսուսի Քրիստոսի ։ Շնորհք ընդ
ձեզ եւ խաղաղութիւն բազմասցի ։
3 * Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողոր-
մութեան իւրում ծնաւ զմեզ վերստին 'ի յոյս
կենդանի, 'ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիս-
4 տոսի 'ի մեռելոց, * յանեղծ եւ յանարատ եւ
յանթառամ ժառանգութիւնն՝ որ պահեալ է
5 յերկինս 'ի ձեզ · * որ զօրութեամբն Աստուծոյ
պահեալ էք հաւատովք 'ի պատրաստեալ փրր-
6 կութիւնն յայտնել 'ի յետին ժամանակս · * որով

ուրախ լինիջիք, որք այժմ սակաւիկ ինչ ըստ
պատշաճի խրացդ տրտմեալ էք 'ի պէսպէս փոր-
ձութիւնս: * Զի հանդէս ձերոյ հաւատոյն ա- 7
ռաւել քան զոսկի կորստական՝ պատուական
է, որ հրով փորձեալ գտաւ 'ի գովութիւն եւ
'ի փառս եւ 'ի պատիւ 'ի յայտնութեանն Յի-
սուսի Քրիստոսի: * Զոր ոչն տեսէք՝ եւ սիրեցէք. 8
ընդ որ այժմ ոչ հայեցեալք, բայց հաւատա-
ցէք. եւ ուրախ էք անճառ եւ փառաւորեալ
խնդութեամբն. * ընկալեալ զկատարումն հա- 9
ւատոյն ձերոյ՝ զոգւոյն փրկութիւն: * Վասն 10
որոյ փրկութեան՝ խնդրեցին եւ քննեցին մար-
գարէքն, որք վասն որոյ 'ի ձեզ լինելոյ էին շը-
նորհքն՝ մարգարէանային. * քննէին յորում եւ 11
յորպիսի ժամանակի գուշակէր 'ի նոսա Հոգին
Քրիստոսի. որ նախ՝ չարչարանացն Քրիստոսի
վկայէր, եւ յետ այնորիկ՝ զփառացն: * Որոց եւ 12
յայտնեցաւ իսկ. զի ոչ թէ անձանց, այլ մեզ
մատակարարք լինէին, նոյնին՝ որք այժմ պատ-
մեցան, այնոքիւք որ աւետարանեցինն ձեզ Հոգ-
ւովն Սրբով որ առաքէրն յերկնից, զոր ցանկային
տեսանել գոնեայ ընդ աղօտ հրեշտակք:

Բէ. * Որով պնդեալ զմէջս մտաց ձերոց՝ 13
զուարթացեալք, բովանդակ սպասեցէք հասե-
լոց ձեզ շնորհացն 'ի յայտնութեանն Յիսուսի
Քրիստոսի, * իբրեւ զորդիս հնազանդութեան. 14
մի կերպարանեալք առաջին ձերովք անգիտու-
թեանն ցանկութեամբք: * Այլ ըստ սրբոյն որ 15

կոչեաց զձեզ, եւ դուք սուրբք յամենայն գը-
16 նացս ձեր լինիջիք. * վասն որոյ գրեալ է, եթէ
17 եղերուք սուրբ՝ զի ես սուրբ եմ: * Եւ եթէ Հայր
կոչիցէք զայն, որ առանց ակնառութեանն դա-
տի ըստ իւրաքանչիւր գործոց, ապա երկիւղիւ
զձերոյ պանդխտութեան ժամանակդ գնաս-
18 ջիք: * Գիտասջիք, զի ոչ ապականացու արծա-
թեղինօք եւ ոսկեղինօքն փրկեցարուք 'ի ձերոց
19 ունայնութեան հայրենաւոր գնացիցն, * այլ
պատուական արեամբն Քրիստոսի, իբրեւ ան-
20 բիծ եւ անարատ գառին. * որ յառաջածանօթն
էր նախ քան զլինելն աշխարհի, եւ երեւե-
21 ցաւ 'ի վախճան ժամանակաց վասն ձեր. * որք
նովաւ հաւատացէք յԱստուած. որ յարոյց զնա
'ի մեռելոց, եւ ետ նմա փառս. զի հաւատքն
22 ձեր եւ յոյս իցեն յԱստուած: * Զանձինս ձեր
սրբել հնազանդութեամբ ճշմարտութեան,
յեղբայրսիրութեան առանց կեղծաւորութեան,
23 'ի սուրբ սրտէ սիրել սերտիւ զմիմեանս: * Ծը-
նեալք 'ի վերստին՝ ոչ յապականութեան սեր-
մանէն, այլ յանապականացուէն, կենդանի եւ
24 մշտնջենական բանիւն Աստուծոյ: * Քանզի ամե-
նայն մարմին իբրեւ զխոտ է, եւ ամենայն փառք
մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ. խոտն ցամաքե-
25 ցաւ եւ ծաղիկն թօթափեցաւ, * եւ բան Տեա-
ռըն մնայ յաւիտեան, այսինքն է՝ բանն որ 'ի
ձեզ աւետարանեցաւ:

ԳԼՈՒԽ Բ.

Գ.Կ. Ի բաց թօթափել այսուհետեւ զա- 1
մենայն չարութիւն եւ զամենայն նենգութիւն,
եւ զկեղծաւորութիւնս եւ զնախանձ, եւ զա-
մենայն չարախօսութիւն. * իբրեւ զարդի ծը- 2
նեալ մանկունս՝ խօսուն եւ անխարդախ կաթինն
փափաքեցէք. զի նովաւ աճիցէք 'ի փրկութիւն,
* եթէ ճաշակեցէք՝ զի քաղցր է Տէր: * Առ որ 3
մատուցեալ էք 'ի վէմն կենդանի, որ թէպէտ 4
'ի մարդկանէ անարգեալ, այլ առ 'ի յԱստուծոյ
ընտրեալ եւ պատուական է. * եւ դուք իբրեւ 5
զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր՝ յանա-
րատ քահանայութիւն, մատուցանել զհոգեւորն
պատարագս՝ հաճոյս Աստուծոյ 'ի ձեռն Յիսուսի
Քրիստոսի: * Քանզի կայ խոկ 'ի գրի, եթէ ահա- 6
ւասիկ դնեմ 'ի Սիոն վէմ ընտիր, գլուխ անկեան
պատուական, եւ որ 'ի նա հաւատասցէ՝ մի ա-
մաչեսցէ: * Ձեզ այսուհետեւ հաւատացելոցդ՝ 7
վէմ պատուական, իսկ անհաւատիցն՝ վէմն զոր
անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան.
* եւ վէմ գլորման եւ վէմ գայթագղութեան, 8
որ գայթագղին ապստամբեալք 'ի բանէն՝ յոր
եւ եդան: * Այլ դուք ազգ էք ընտիր, թագա- 9
ւորութիւն, քահանայութիւն. ազգ սուրբ, ժո-
ղովուրդ սեպհական. որպէս զի զձեր առաքի-
նութիւնսն նուիրեսջիք այնմ, որ զձեզ 'ի խաւա-

10 րէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն. * որք երբեմն
չժողովուրդ, բայց արդ ժողովուրդ Աստուծոյ.
որք չողորմեալք, այժմ ողորմութիւն գտէք:
11 *Սիրելիք, աղաչեմ, իբրեւ զպանդուխտս եւ զը-
նժդեհս 'ի բաց մերժել 'ի մարմնաւոր ցանկու-
12 թեանցն, որ զինուորին ընդդէմ ոգւոյ. * զվարս
ձեր 'ի մէջ հեթանոսաց պարկեշտս ցուցանել.
զի որով բամբասիցեն զձեզ իբրեւ զչարագոր-
ծըս, 'ի բարւոք գործոյն ձերոց դիտեալ՝ փա-
ռաւոր առնիցեն զԱստուած յաւուրն այցելու-
թեան:

13 Գ.Բ. * Հնազանդ լերուք ամենայն մարդկե-
ղէն ստեղծուածոյ վասն Տեառն. եթէ թագա-
14 ւորի՝ իբրեւ առաւել ումեք. * եթէ դատաւո-
րաց՝ իբրեւ 'ի նմանէ առաքելոց 'ի վրէժխնդը-
րութիւն չարագործաց, եւ 'ի գովութիւն բա-
15 րեգործացն: * Զի այսպէս են կամք Աստուծոյ,
բարեգործացն պապանձեցուցանել զանզգամ
16 մարդոց զանգիտութիւն: * Իբրեւ զազատս լի-
նել, եւ մի իբրեւ պատրուակ չարութեան ու-
նել զազատութիւնն, այլ իբրեւ Աստուծոյ ծա-
17 ռայք. * զամենեսեան պատուեցէք, զեղբայր-
սիրութիւն սիրեցէք, յԱստուծոյ երկերուք,
18 զթագաւորս պատուեցէք: * Ծառայք, հնա-
զանդ լինել յամենայնի երկիւղիւ տերանց, ոչ
միայն բարերարացն եւ հեզոցն, այլ եւ կամա-
19 կորացն. * զի այս շնորհք յԱստուծոյ են, եթէ
բարւոք խիղճ մտօք տանիցի ոք վշտաց յանիրաւի.

* Քանզի զի՞նչ երախտիք իցեն, եթէ յորժամ 20
մեղանչիցէք՝ տանջիցիք եւ համբերիցէք. այլ ե-
թէ զբարիս գործիցէք՝ չարչարիցիք եւ համբերի-
ցէք, այն շնորհք յԱստուծոյ են. * քանզի ՚ի 21
դոյն իսկ կոչեցարուք: Զի եւ Քրիստոս վասն
ձեր մեռաւ, եւ ձեզ եթող օրինակ՝ զի զհետ
երթայցէք հետոց նորա: * Որ ոչն արար մեղս, 22
եւ ոչ գտաւ նենգութիւն ՚ի բերան նորա. * որ 23
բամբասեալ՝ եւ ոչ փոխարէն բամբասէր, չար-
չարեալ՝ եւ ոչ պահէր սպառնալիս. բայց իրա-
ւամբք մատնէր դատաւորին. * որ զմեր մեղսն 24
իւրով մարմնովն վերացոյց ՚ի խաչափայտն. զի
լիցուք զերծեալք ՚ի մեղաց անտի, եւ լիցեմք
արդարութեանն կենակիցք. որոյ վիրօքն բժըշ-
կեցայք: * Քանզի էիք իբրեւ զոչխարս մոլորեա- 25
լս, այլ այժմ դարձարուք առ հովիւն եւ տե-
սուչ ոգւոց ձերոց:

ԳԼՈՒԽ Գ.

ԳԳ. Սոյնպէս եւ կանայք հնազանդ լինել 1
արանց իւրեանց. զի եթէ իցեն նոքա ապստամբք
՚ի բանէ անտի. յաղագս կանանց գնացից եւ
առանց բանին իսկ շահեսցին, * դիտել երկիւ- 2
ղիւ զձեր պարկեշտ գնացս: * Որոց լինիցի ոչ 3
արտաքուստ հիւսիւք եւ ոսկեհուռ ծամկա-
լօք կամ պաճուճեալ զգեստուք զարդ. * այլ 4
ծածուկ սրտին մարդն, անեղծութեամբ հեզու-

թեան եւ հանդարտութեան հոգւոյն, որ է
5 առաջի Աստուծոյ բազմապատիկ: * Քանզի այս-
պէս երբեմն եւ կանայք որ յուսացեալ էին
յԱստուած՝ զարդարէին զանձինս հնազանդել
6 իւրեանց արանց: * Որպէս եւ Սառա՝ զի հնա-
զանդ էր Աբրահամու, եւ տէր իւր կոչէր զնա.
որոյ եղերուքն դուք որդիք. բարեգործք էին,
եւ ոչ կասկածէին՝ եւ ոչ ՚ի միջէ ինչ երկիւղէ:
7 * Սոյնպէս եւ արք իմաստութեամբ բնակեսցեն
ընդ նոսա. իբրեւ ակար անօթոյ առնիցեն պա-
տիւ կանանց՝ եւ իբրեւ ժառանգակցաց շնոր-
հացն կենաց. զի մի խափան լինիցին աղօթիցն
8 ձերոց: * Եւ գլուխ ամենայնի, զի համամիտք
իցէք, համակարիք, եղբայրասէրք, ագնուա-
9 գութք, խոնարհք: * Մի՛ չար փոխանակ չարի
հատուցանել, կամ բամբասանս ընդ բամբա-
սանաց, այլ զնորին հակառակն՝ օրհնել. զի
յայս իսկ կոչեցարուք՝ զի զօրհնութիւնն ժա-
ռանգիցէք:

10 ԳԳ. * Զի որ կամի զկեանս սիրել, եւ զա-
ւուրս իւր տեսանել ՚ի բարութեան, լռեցուսցէ
զլեզու իւր ՚ի չարութենէ, եւ զշրթունս իւր
11 ՚ի չխօսելոյ զնենգութիւն. * խոտորեսցի ՚ի չարէ,
եւ արասցէ զբարի, խնդրեսցէ զխաղաղու-
12 թիւն եւ երթիցէ զհետ նորա. * զի աչք Տեա-
ռըն ՚ի վերայ արդարոց, եւ ականջք նորա յա-
ղօթս նոցա. երեսք Տեառն ՚ի վերայ չարագոր-
13 ծաց: * Եւ ո՞ իցէ որ չարչարիցէ զձեզ, եթէ

դուք բարւոյն նախանձաւորք լինիջիք ։ * Այլ 14
թէեւ չարչարիցէք եւս վասն արդարութեան,
երանելի էք․ բայց յերկիւղէ նոցա մի երկնչի-
ջիք եւ մի խռովեսջիք․ * այլ զՏէր զնոյն զՔրիս- 15
տոս սուրբ առնիջիք 'ի սիրտս ձեր ։ Պատրաստք
լիջիք տալ պատասխանի՝ որ խնդրիցէ զբանն՝ որ
է վասն յուսոյն ձերոյ․ * այլ հեզութեամբ եւ 16
երկիւղիւ ունիջիք բարս քաղցունս․ զի որով չա-
րախօսիցեն զձէնջ՝ յամօթ լիցին, որք բամբասեն
զձեր բարւոք գնացս 'ի Քրիստոս ։ * Զի լաւ է 17
բարեգործաց, եթէ կամիցին ըստ Աստուծոյ կա-
մացն չարչարել՝ քան չարագործացն․ * զի եւ 18
Քրիստոս միանգամ վասն մեղաց 'ի վերայ մեր
մեռաւ, արդարն 'ի վերայ անարդարոց․ զի ըզ-
մեզ մերձեցուսցէ առ Աստուած․ զի թէպէտ
եւ մեռաւ մարմնով, այլ կենդանի է հոգւով ։
* Որով եւ ոգւոցն որ էին 'ի բանտին, երթեալ 19
քարոզեաց, * երբեմն ապստամբելոցն, յորժամ 20
ներէր նոցա Աստուծոյ երկայնմտութիւնն յա-
ւուրս Նոյի՝ յորս տապանն կազմէր․ յորս նուա-
զունք, այս ինքն՝ ոգիք իբրեւ ութ ապրեցան
'ի ջրոյն ։ * Որ եւ զձեզ ըստ նմին օրինակի կե- 21
ցուցէ մկրտութիւնն․ ոչ ըստ մարմնոյ աղտոյ
'ի բաց ընկենլով, այլ զբարւոք մտաց հանդէս
առ Աստուած, 'ի ձեռն յարութեանն Յիսուսի
Քրիստոսի․ * որ է ընդ աջմէ Աստուծոյ երթեալ 22
յերկինս, 'ի հնազանդել նմա հրեշտակաց եւ
իշխանութեանց եւ զօրութեանց ։

ԳԼՈՒԽ Դ․

1 ԳԵ․ Քրիստոսի չարչարելն մարմնով վասն
մեր, եւ դուք 'ի նոյն միտս վառեցարուք․ զի
2 որ չարչարի մարմնով՝ դադարէ 'ի մեղաց․ * զի
մի եւս ըստ մարդկան ցանկութեանց՝ այլ ըստ
կամացն Աստուծոյ կեցցէ զայլ եւս ժամանակն ։
3 * Քանզի բաւական է անցեալ ժամանակն լինե-
լոյ կամացն հեթանոսաց, որք գնացին գիջու-
թեամբք, ցանկութեամբք, գինեհարութեամբք,
անառակութեամբք, արբեցութեամբք, անօրէն
4 կռապաշտութեամբք․ * որով օտարացեալք՝ ոչ
ընդ ձեզ վարին 'ի նոյն անկարգութեան զեղ-
5 խութիւն, եւ հայհոյեն․ * որ տացեն պատաս-
խանի այնմ որ 'ի պատրաստին ունի դատել ըզ-
6 կենդանիս եւ զմեռեալս ։ * Զի 'ի սոյն իսկ եւ
մեռելոց խոստացեալ է, զի դատեսցին ըստ
մարդկան մարմնով, եւ կենդանի լիցին ըստ Աս-
7 տուծոյ հոգւով ։ * Ամենեցուն վախճան մեր-
ձեալ է․ զգաստացարուք այսուհետեւ՝ եւ լե-
8 րուք զուարթունք յաղօթս ։ * Նախ քան զամե-
նայն սէր սերտ ունել ընդ միմեանս․ զի սէր
9 ծածկէ զբազմութիւն մեղաց ։ * Օտարասէրք լի-
10 նել ընդ միմեանս առանց տրտնջելոյ․ * իւրա-
քանչիւր ոք որպէս եւ ընկալաւ շնորհս ինչ՝ 'ի
միմեանս զնոյն մատակարարել, իբրեւ զբարւոք
հազարապետս պէսպէս շնորհացն Աստուծոյ ։

* Եթէ ոք խօսիցի՝ իբրեւ զԱստուծոյ պատգա- 11
մըս . եթէ ոք մատակարարիցէ՝ իբրեւ ՚ի զօրու-
թենէ զոր շնորհէ Աստուած . զի յամենայնի
փառաւորեսցի Աստուած ՚ի ձեռն Յիսուսի Քրի-
ստոսի , որում փառք եւ զօրութիւն յաւի-
տեանս ամէն ։

ԳԶ . * Սիրելիք , մի՛ օտարոտի համարել զե- 12
ռանդն ինչ որ ՚ի փորձութիւն ձեզ լինիցի , որ-
պէս թէ օտար ինչ իրք ձեզ դիպիցին . * այլ 13
իբրեւ հաղորդեալք Քրիստոսի չարչարանացն՝
ուրախ լինիջիք , զի եւ ՚ի յայտնութեան փա-
ռաց նորա ցնծացեալ բերկրեսջիք ։ * Իսկ եթէ 14
նախատիցիք եւս վասն անուանն Քրիստոսի , ե-
րանելի էք . զի փառացն եւ զօրութեան անուն ,
եւ Աստուծոյ հոգին ՚ի վերայ ձեր հանգուցեալ
է ։ * Մի՛ ոք ՚ի ձէնջ չարչարեսցի իբրեւ սպա- 15
նող , կամ իբրեւ գող , կամ իբրեւ չարա-
գործ , կամ իբրեւ օտարատեսուչ ։ * Ապա թէ 16
իբրեւ զՔրիստոնեայ , մի՛ ամաչեսցէ . այլ փա-
ռաւոր առնիցէ զԱստուած անուամբս այսուիկ ։
* Զի ժամանակ է սկիզբն լինելոյ դատաստանին 17
՚ի տանէն Աստուծոյ . զի եթէ նախ ՚ի մէնջ , իսկ
զի՞նչ կատարած իցէ այնոցիկ՝ որ ոչ հաւանեցան
Աստուծոյ աւետարանին ։ * Եւ եթէ արդարն հա- 18
զիւ կեցցէ , իսկ ամպարիշտն եւ մեղաւորն ո՞ւր
գտանիցի ։ * Որպէս զի որ չարչարիցին ըստ Աս- 19
տուծոյ կամացն , հաւատարիմ հաստչին աւան-
դեսցեն զիւրեանց ոգիս բարերարութեամբք ։

ԳԼՈՒԽ Ե .

1 ԳԷ . Զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբ-
րեւ զերիցակից եւ վկայ չարչարանացն Քրիս-
տոսի , որ եւ հանդերձեալ փառացն յայտնելոյ՝
2 հաղորդ . * արածեցէք որ ՚ի ձեզ հօտդ է Աս-
տուծոյ . վերակացու լինել՝ մի՛ իբրեւ ակամայ ,
այլ կամաւ ըստ Աստուծոյ . մի՛ զօշաքաղու-
3 թեամբ , այլ յօժարութեամբ . * մի՛ իբրեւ տի-
4 րելով վիճակացն , այլ լինել օրինակ հօտին . * զի
յերեւել հովուապետին՝ ընդունիջիք զանթա-
5 ռամ փառաց պսակն ։ * Նոյնպէս եւ երիտա-
սարդք հնազանդ լերուք ծերոց . ամենեքին ընդ-
միմեանս զխոնարհութիւն ունիցիք . զի Աստուած
ամբարտաւանից հակառակ կայ , տայ շնորհս
6 խոնարհաց ։ * Խոնարհեցարուք ընդ հզօր ձե-
ռամբն Աստուծոյ , զի զձեզ բարձրացուսցէ ՚ի
7 ժամանակի . * զամենայն հոգս ձեր ընկեցէք ՚ի
նա , զի նա է որ հոգայ վասն ձեր ։
8 ԳԸ . * Արթուն լերուք՝ հսկեցէք , զի ոսոխն
ձեր սատանայ իբրեւ զառիւծ գոչէ , շրջի եւ
9 խնդրէ՝ թէ զով կլանիցէ . * որում ՚ի դիմի հար-
կանիցիք հաստատեալք հաւատովք . գիտաս-
ջիք զնոյն անցս չարչարանաց՝ եղբայրութեան
10 ձերոյ յաշխարհի յանձինս կատարեալ ։ * Եւ Աս-
տուած ամենայն շնորհաց , որ կոչեաց զձեզ
յիւր ՚ի յաւիտենական ՚ի փառսն Քրիստոսի.

Յիսուսի, որում փոքր մի եղերուք չարչարա-
կիցք, նա կազդուրեցուսցէ, կարողացուսցէ,
հաստահիմն արասցէ. * Նմա իշխանութիւն եւ 11
փառք յաւիտեանս ։ * Ի ձեռն Սիղուանոսի հա- 12
ւատարիմ եղբօր, որպէս կարծեմ՝ փոքր 'ի շա-
տէ գրեցի ձեզ, մխիթարել եւ 'ի վերայ սորին
վկայել. զի եւ այս ճշմարիտ շնորհք յԱստուծոյ
են՝ յոր հաստատեալ կայցէք ։ * Ողջոյն տայ ձեզ 13
որ 'ի Բաբելոն ընտրեալկցն եկեղեցի է, եւ
Մարկոս որդի իմ ։ * Ողջոյն տաջիք միմեանց 'ի 14
համբոյր սրբութեան ։ Խաղաղութիւն ընդ ձեզ
ամենեսեան՝ որ էք 'ի Քրիստոս Յիսուս. ամէն ։

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ
ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԴԲ. ՇՄԱՒՈՆ Պետրոս ծառայ եւ Առա-
քեալ Յիսուսի Քրիստոսի, որոց հան-
գիտապատիւ մեզ հասէքդ հաւատոց յարդա-
րութիւն Աստուծոյ մերոյ եւ փրկչին Յիսուսի
2 Քրիստոսի ։ * Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղու-
թիւն բազմասցի, գիտութեամբն Աստուծոյ եւ
Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ ։
3 * Որպէս ամենայն ինչ մեզ՝ իւրոյ աստուա-
ծեղէն զօրութեանն առ 'ի կեանս եւ աստուած-
պաշտութիւն շնորհեալ, 'ի ձեռն գիտութեան
այնորիկ որ կոչեացն զմեզ յիւր 'ի փառս եւ
4 'ի վայելչութիւն. * որովք մեծամեծքն եւ պա-
տուականն աւետիք պարգեւեալ են մեզ. զի նո-
քիմբք աստուածեղէն բնութեանն լինիցիք հա-
ղորդակիցք, փախուցեալք 'ի ցանկութեանց
5 աշխարհիս եւ յապականութեանց ։ * Եւ ամին
այսմիկ զամենայն փոյթ 'ի մէջ առեալ՝ ձերովքն

հաւատովք մատակարարիջիք զառաքինութիւ-
նըն, եւ առաքինութեամբն զգիտութիւն, * եւ 6
գիտութեամբն զժուժկալութիւն, եւ ժուժ-
կալութեամբն զհամբերութիւն, եւ համբե-
րութեամբն զաստուածպաշտութիւն, * եւ աս- 7
տուածպաշտութեամբն զեղբայրսիրութիւն, եւ
եղբայրսիրութեամբն զսէր: * Զայսոսիկ ձեր յան- 8
ձին կալեալ եւ 'ի սոյն յաճախեալ, ոչ դատարկս
եւ անպտուղս հաստատիցեն զձեզ 'ի Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի գիտութիւնն: * Իսկ 9
յոր ոչն իցեն սոքա մերձ՝ կոյր է եւ ղաչացու,
'ի մոռացօնս դարձուցեալ զսրբութիւն առաջ-
նոց իւրոցն յանցանաց: * Վասն որոյ, եղբարք, 10
առաւել փութասջիք՝ զի բարեացն գործովք
հաստատուն զձեր կոչումն եւ զընտրութիւն
պահիցէք: Զայս արարեալ՝ ոչ երբէք յանցանի-
ցէք. * զի այսպէս առատապէս շնորհեսցի ձեզ 11
մուտ 'ի յաւիտենական արքայութիւն Տեառն
մերոյ եւ փրկչի Յիսուսի Քրիստոսի:

ԴԳ. * Որով պատրաստ իցեմ միշտ ձեզ յի- 12
շեցուցանել վասն սոցին, առաւել եւս գիտա-
կայն եւ հաստատելոյն եկեալ հասեալ ճշմար-
տութեանն:

* Քանզի իրաւունս համարիմ մինչդեռ եմ 13
'ի մարմնի աստ՝ զարթուցանել զձեզ յիշատա-
կօք: * Գիտեմ թէ վաղվաղակի է լինելոյ մեր- 14
կանալ յինէն մարմնոյս, որպէս եւ Տէր մեր Յի-
սուս Քրիստոս եցոյց ինձ. * եւ փութամ ձե- 15

պիմ միշտ զձեզ յորդորել, զի եւ յետ իմոյ ե-
լանելոյ յաշխարհէս՝ ունիցէք զյիշատակս այ-
16 սոցիկ: * Քանզի ոչ եթէ պաճուճեալ ինչ ա-
ռասպելաց զհետ երթեալ ցուցաք ձեզ զՏեա-
ռըն մերոյ Յիսուսի Քրիստոսի զզօրութիւն եւ
զգալուստն, այլ մերձէն եղեալ ականատեսք նո-
17 րա մեծութեանն: * Քանզի առեալ յԱստուծոյ
Հօրէ զփառս եւ զպատիւ՝ յեկեալ յայնպիսի
բարբառոյ 'ի մեծվայելչութեան փառաց անտի,
եթէ դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ:
18 * Եւ զայս բարբառ մեք իսկ լուաք եկեալ յերկ-
19 նից՝ որ ընդ նմա իսկ էաք 'ի սուրբ լերինն: * Եւ
ունիմք հաստատագոյն զբանն մարգարէական,
որում եթէ անսայցէք՝ բարւոք առնէք. իբրեւ
ճրագի որ տայցէ լոյս 'ի խաւարչուտ տեղւոջ,
մինչեւ տիւն լուսաւորեսցէ, եւ արուսեակն
ծագեսցէ 'ի սիրտս ձեր:

20 ԴԴ. * Բայց նախ այսմ գիտակ լինիջիք, զի ա-
մենայն մարգարէութիւն իւրոյ գրոյ լուծումն
21 ոչ ունի. * քանզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան
տուաւ մարգարէութիւն երբէք, այլ 'ի Հոգւոյն
Սրբոյ գրեալք՝ խօսեցան մարդիկ յԱստուծոյ:

ԳԼՈՒԽ Բ.

1 Լինէին եւ սուտ մարգարէք 'ի ժողովրդեա-
նըն, որպէս եւ այժմ 'ի ձեզ լինիցին սուտ վար-
դապետք, որք սպրդեալք մուծանիցեն հեր-

ձուածս կորստեան. եւ զոր Տէր գնեաց՝ զնո֊
սա ուրացեալ՝ ածեն 'ի վերայ անձանց զարա֊
գահաս կորուստ։ * Եւ բազումք անկեալ եր֊ 2
թիցեն զհետ նոցա անառակութեանցն. վասն
որոց ճշմարտութեանն ճանապարհ հայհոյեսցի.
* եւ ագահութեամբ մտացածին բանիւք առ֊ 3
նիցեն զձեզ վաճառանգս. որոց դատաստանն
'ի բնէ ոչ դատարկանայ, եւ կորուստ նոցա ոչ
նիրհէ։ * Զի եթէ 'ի հրեշտակսն յանցուցեալս 4
Աստուած ոչ խնայեաց, այլ խաւարին կապանօք
արկեալ 'ի տարտարոսն՝ ետ պահել 'ի դատաս֊
տան։ * Նա՝ եւ ոչ խկզբանն աշխարհի խնայ֊ 5
եաց. բայց զութերորդն զՆոյ՝ զարդարութեա֊
նըն քարոզ, պահեաց 'ի ջրհեղեղէ աշխարհի՝
ամպարշտելոյն ածեալ. * եւ զքաղաքս սոդո֊ 6
մացւոյն եւ գոմորացւոց դարձուցեալ յաճիւն՝
դատեցաւ, օրինակ առ յապայ ամպարշտելոցն
կացուցանէր. * Եւ զարդարն զՂովտ ձանձրա֊ 7
ցեալ յանկարգ գիջութեան գնացից՝ փրկեաց.
*քանզի տեսանատես եւ ականջալուր արդարն 8
բնակեալ 'ի մէջ նոցա, օր ըստ օրէ զիւր սուրբ
ոգին՝ նոցա անօրէն գնացիւքն տանջէր։

Դե. * Գիտէ Տէր զաստուածապաշտս փըր֊ 9
կել 'ի փորձութենէ, եւ զանիրաւս պահել 'ի
տանջանս աւուրն դատաստանի. * մանաւանդ 10
որ զհետ մարմնոյ պղծալից ցանկութեանց ի֊
ցեն երթեալ, ուրհամարհօղք տէրութեանն,
ժպիրհք, յանդգունք, չզանգիտեն զփառս հայ֊

11 հոյել. * ուր հրեշտակք զօրութեամբ եւ կարո֊
ղութեամբ քան զնոսա մեծամեծք՝ չածեն զնո֊
քօք 'ի Տեառնէ զհայհոյութեանն դատաստան։
12 * Այլ սոքա իբրեւ զանխօս անասունս ըստ բը֊
նածին բարուցն յեղծումն եւ յապականութիւն.
որոց չենն գիտակ, հայհոյեն յապականութեան
13 իւրեանց, եւ ապականեսցին՝ * տանջեալք 'ի
վարձուցն անիրաւութեան. որ ցանկութիւն
զաւուրն փափկութիւն համարին. բծկանք, ա֊
րատաւորք. փափկացեալք 'ի պատիրս իւրեանց,
14 լինել ձեզ խրախճանակիցք. * աչս ունին հան֊
գոյնս պոռնկաց՝ անդադարս 'ի մեղաց, պատ֊
րեն զանձինս յողդողդաց. որ ունին սիրտ հա֊
15 րեալ զագահութեան, մանկունք անիծից։* Թո֊
ղեալ զուղորդ ճանապարհն՝ մոլորեցան. զհետ
երթեալ ճանապարհին Բաղաամու Բէովրեայ,
16 զվարձս անիրաւութեան սիրեցին. * որ կշտամ֊
բանս իւրոյ անօրէնութեանն ստացաւ զէշն ան֊
խօսուն. մարդկեղէն բարբառովն բարբա֊
ռեալ՝ արգել զմարգարէին զանօրէնութիւնն։
17 * Այսպիսիքն են աղբիւրք անջրդիք, եւ մէգք
վարեալք 'ի մրրկէ. որոց աղջամուղջք խաւա֊
18 րին յաւիտեան պահեալ կան։ * Մեծաբանս
մնոտեաց բարբառեալ պատրեն գիջութեամբք
ցանկութեամբք մարմնոյ՝ զայնոսիկ որ սակաւ
փախչիցին յայնցանէ որ 'ի մոլորութեանն շըր֊
19 ջիցին. * նոցա ազատութիւն խոստանան, եւ
ինքեանք ապականութեանն ծառայք են. զի

որով իւիք եւ յաղթիցի ոք, նորին եւ ծառայ
է։ *Զի եթէ փախուցեալք 'ի պղծութեանց 20
աշխարհի՝ գիտութեամբ Տեառն մերոյ եւ
փրկչին Յիսուսի Քրիստոսի, եւ դարձեալ ընդ
նոյնս շաղեալք պարտիցին, եղեւ նոցա վախճանն
չար քան զառաջինն։ *Զի լաւ էր նոցա՝ թէ 21
բնաւ չէր իսկ ծանուցեալ զարդարութեանն
ճանապարհ, քան՝ զի ծանեան եւ յետս կային
'ի սուրբ պատուիրանէն որ նոցա աւանդեցաւ։
*Եկեալ 'ի դէպ նոցա ճշմարիտ առակն պգօ- 22
նութեան, եթէ շուն դառնայ անդրէն 'ի փըս-
խած իւր, եւ խոզ լուացեալ՝ ընդ տիղմ թա-
ւալեալ։

ԳԼՈՒԽ Գ.

ԴՁ. Զայս ձեզ, սիրելիք, երկրորդ թուղթ 1
գրեմ, որով զարթուցից 'ի յիշատակ զհաստա-
տուն միտս ձեր. *յիշել զյառաջագոյն ասա- 2
ցեալ պատգամս 'ի սրբոց մարգարէից, եւ յԱ-
ռաքելոցն ձերոց՝ զպատուէրս Տեառն եւ փրկ-
չին։ *Բայց զայս նախ գիտասջիք, զի յաւուրս 3
յետինս եկեսցեն արհամարհօղք, այպանօղք,
որ ըստ իւրեանց ցանկութեանցն գնասցեն.
*եւ ասիցեն, ո՞ւր են աւետիք գալստեան նո- 4
րա. զի յորմէ հետէ հարքն ննջեցին՝ ամենայն
ինչ նոյնպէս կայ մնայ իսկզբանէ արարածոց։
*Եւ զայն մոռացեալ իցէ նոցա՝ որք զայսն կա- 5

մին, եթէ երկինք եղեն 'ի սկզբանէ, եւ երկիր
'ի ջրոյ, եւ ջուրք հաստատեալ կան բանիւն
6 Աստուծոյ. *վասն որոյ երբեմն աշխարհ ջրհե-
7 ղեղաւ ապականեալ կորեաւ։ *Եւ այժմ երկինք
եւ երկիր նովին բանիւ գանձեալ են, հրոյ պա-
հեալք յօրն դատաստանի, եւ կորստեան ամ-
8 պարիշտ մարդկան։ *Եւ այս եւս մի լիցի 'ի
ձէնջ ծածկեալ, սիրելիք, զի մի օր Տեառն իբ-
րեւ զհազար ամ է, եւ հազար ամ իբրեւ զմի
9 օր։ *Ոչ յամեցուսցէ Տէր զաւետիսն՝ որպէս ո-
մանք յամր համարին, այլ երկայնամիտ լինի առ
ձեզ. քանզի ոչ կամի՝ եթէ ոք կորիցէ, այլ զա-
մենեցուն հասանել յապաշխարութիւն։
10 ԴԻ. *Այլ եկեսցէ օր Տեառն իբրեւ զգող.
յորում երկինք սաստկապաւ անցցեն, եւ բը-
նութիւնք հրով կիզեալ լուծցին, եւ երկիր՝
11 եւ որ միանգամ 'ի նմա գործք գտանիցին։ *Եւ
'ի լուծանել այսպէս այսր ամենայնի, որպիսի՞
ինչ պարտ իցէ ձեզ գտանել. այլ սուրբ եւ
12 աստուածապաշտ կարգաւ ակն ունել, *եւ փու-
թալ հասանել գալստեան աւուրն Տեառն. յո-
րում երկինք հրայրեացք լուծանիցին, եւ բը-
13 նութիւնք հրդեհեալ հալեցին։ *Նորոյ երկնից
եւ նորոյ երկրի ըստ աւետեացն հայեցեալ ըս-
14 պասեմք, յորս արդարութիւնն բնակէ։ *Վասն
որոյ, սիրելիք, այսոցիկ սպասեալ՝ փոյթ յանձին
ունիջիք՝ անբիծք եւ անարատք գտանել նմա 'ի
15 խաղաղութիւն. *եւ զՏեառն երկայնմտութիւ-

նըն՝ փրկութիւն համարեսջիք։ Զոր օրինակ եւ
սիրելի եղբայրն մեր Պաւղոս, ըստ շնորհելոյ ի-
մաստութեանն նմա յԱստուծոյ՝ գրեաց ձեզ.
*որպէս եւ յամենայն իսկ թուղթսն խօսի վասն 16
այսոցիկ, յորս գտանի ինչ ինչ դժուարիմաց, զոր
անուսմունքն եւ յողդողդքն կամակորեն, որպէս
եւ զամենայն իսկ գիրս առ իւրեանց անձանց
կորուստ։ *Դուք այսուհետեւ, սիրելիք, իբրեւ 17
զկանխագէտս զգուշացիք, զի մի՛ անառակ մոլո-
րութեամբն զգածեալք անկանիցիք յատեաց
հաստատութեանն։ *Աճեցէք շնորհօք եւ գի- 18
տութեամբն Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի
Քրիստոսի։ Նմա փառք՝ եւ այժմ եւ յօրն յա-
ւիտենից. ամէն։



ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԵԿ. Որ էրն 'ի սկզբանէ, զորմէ լուաքն,
որում ականատեսն իսկ եղեաք, ընդ
որ հայեցաքն, եւ ձեռք մեր շօշափեցին 'ի վե-
2 րայ Բանին կենաց։ *Եւ կեանքն յայտնեցան. եւ
տեսաք եւ վկայեմք, եւ պատմեմք ձեզ զյա-
ւիտենական կենացն, որ էրն առ Հօր՝ եւ երե-
3 ւեցաւ մեզ։ *Զոր տեսաքն եւ լուաք՝ պատ-
մեմք եւ ձեզ, զի եւ դուք հաղորդութիւն ու-
նիցիք ընդ մեզ. եւ մեր հաղորդութիւնն լիցի
ընդ Հօր եւ ընդ Որդւոյ իւրում Յիսուսի Քրիս-
4 տոսի։ *Եւ զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրա-
5 խութիւնն կատարեալ լիցի։ *Եւ այս են աւե-
տիք զոր լուաք առ 'ի նմանէ եւ պատմեմք ձեզ.
զի Աստուած լոյս է, եւ խաւար 'ի նմա չիք եւ
6 ոչ մի։ *Եթէ ասիցեմք՝ եթէ հաղորդութիւն
ունիմք ընդ նմա, եւ 'ի խաւարի շրջիցիմք, ս-
7 տեմք՝ եւ ոչ առնեմք զճշմարտութիւնն։ *Իսկ

եթէ ընդ լոյս գնասցեմք՝ որպէս նա 'ի լոյս է,
հաղորդութիւն ունիմք ընդ միմեանս, եւ ա-
րիւնն Յիսուսի Որդւոյ նորա սրբէ զմեզ յամե-
նայն մեղաց։ *Եթէ ասիցեմք՝ եթէ մեղս ինչ 8
մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք. եւ ճշմար-
տութիւն 'ի մեզ ոչ գոյ։ *Ապա եթէ խոստո- 9
վան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա
եւ արդար՝ առ 'ի թողուլ մեզ զմեղս մեր, եւ
սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ։
*Եթէ ասիցեմք՝ եթէ ոչ ինչ մեղաք, սուտ 10
առնեմք զնա, եւ բանն նորա ոչ է մեզ։

ԳԼՈՒԽ Բ.

ԵԲ. Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի 1
մեղիջիք. եւ եթէ մեղիցէ ոք, ունիմք բարե-
խօս առ Աստուած զՅիսուս Քրիստոս՝ զարդարն
եւ զանարատ, *եւ նա է քաւութիւն մեղաց 2
մերոց, եւ ոչ եթէ մերոցն միայն՝ այլ ամենայն
աշխարհի։ *Եւ յայսմիկ գիտեմք՝ եթէ ծանեաք 3
զնա, եթէ զպատուիրանս նորա պահիցեմք։
*Որ ասիցէ՝ եթէ ծանեայ զնա, եւ զպատուի- 4
րանս նորա ոչ պահիցէ, սուտ է, եւ ճշմարտու-
թիւն 'ի նմա ոչ գոյ։ *Իսկ որ պահէ զբան նո- 5
րա, արդարեւ 'ի նմա է կատարեալ սէրն Ա-
ստուծոյ. այսուիկ ճանաչեմք՝ եթէ 'ի նմա եմք։
*Որ ասիցէ 'ի նմա բնակել, այնպէս պարտի գը- 6
նալ՝ որպէս եւ նայն գնաց։

7 ԵԳ. *Սիրելիք, ոչ եթէ նոր ինչ պատուի-
րան գրեմ ձեզ. այլ զհին պատուիրանն՝ զոր
'ի սկզբանէ ունէիք. եւ հին պատուիրան՝ բանն
8 է զոր լուարուք։ *Դարձեալ նոր պատուիրան
գրեմ ձեզ՝ որ է ճշմարտիւ 'ի նմա եւ 'ի ձեզ.
զի խաւարն անցանէ, եւ լոյսն ճշմարիտ արդէն
9 իսկ երեւի։ *Որ ասէ եթէ 'ի լոյսն իցէ՝ եւ
զեղբայր իւր ատիցէ, սուտ է՝ եւ 'ի խաւարի է
10 տակաւին։ *Որ սիրէ զեղբայր իւր՝ 'ի լոյս բնա-
11 կէ, եւ գայթագղութիւն 'ի նմա չիք։ *Իսկ որ
ատեայ զեղբայր իւր՝ 'ի խաւարի է, եւ ընդ
խաւար շրջի. եւ ոչ գիտէ յո՛ երթայ. զի խա-
12 ւարն կուրացոյց զաչս նորա։ *Գրեմ ձեզ, որ-
դեակք, զի թողեալ են ձեզ մեղքն ձեր՝ վասն
13 անուան նորա։ *Գրեմ ձեզ, հարք, զի ծանեայք
դուք զայն՝ որ իսկզբանէն է։ Գրեմ ձեզ, երի-
14 տասարդք, զի յաղթեցէք դուք չարին։ *Գրեցի
ձեզ, մանկունք, զի ծանեայք դուք զՀայրն։ Գը-
րեցի ձեզ, հարք, զի ծանեայք դուք զայն որ 'ի
սկզբանէն է։ Գրեցի ձեզ, երիտասարդք, զի էք
դուք հզօրացեալք, եւ Բանն Աստուծոյ 'ի ձեզ
15 բնակէ, եւ յաղթեցէք դուք չարին։ *Մի սի-
16 րէք զաշխարհս, եւ մի որ ինչ յաշխարհի է. *Ե-
թէ ոք սիրէ զաշխարհ, ոչ է 'ի նմա սէր Հօր։
Զի ամենայն որ ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն
է մարմնոյ, եւ ցանկութիւն է աչաց, եւ ամ-
բարտաւանութիւն աստի կենացս. որ չէ առ
17 'ի Հօրէ՝ այլ յաշխարհէ աստի է. *եւ աշխարհս

անցանէ՝ եւ ցանկութիւն, իսկ որ առնէ զկամս
Աստուծոյ՝ մնայ 'ի յաւիտեան ։
ԵԴ. * Որդեակք, յետին ժամանակ է, եւ 18
որպէս լուարուք՝ եթէ նեռն գալոց է, եւ ար-
դէն իսկ նեռինք բազումք եկեալ են, որով
մարթեմք իմանալ՝ եթէ յետին ժամանակ է ։ * Առ 19
'ի մէնջ ելին, այլ ոչ էին 'ի մէնջ. զի եթէ 'ի
մէնջ էին, ապա առ մեզ մնային. այլ զի յայտնի
լինիցին՝ եթէ ոչ էին ամենեքեան նոքա 'ի մէնջ ։
* Եւ դուք օծութիւն ունիք առ 'ի սրբոյն, եւ 20
գիտէք ամենեքին ։ * Ոչ գրեցի ձեզ՝ եթէ ոչ գի- 21
տէք զճշմարտութիւնն, այլ եթէ գիտէք զնա,
եւ եթէ՝ զի ամենայն սուտ ոչ է 'ի ճշմար-
տութենէ անտի ։ * Իսկ ո՞ է սուտ, եթէ 22
ո՛չ որ ուրանայ եթէ Յիսուս չէ Քրիստոս. նա
իսկ է նեռն, որ ուրանայ զՀայր եւ զՈրդի ։ * Ա- 23
մենայն որ ուրանայ զՈրդի, եւ ոչ զՀայր ընդու-
նի. որ խոստովանի զՈրդի, նա եւ զՀայր ընդու-
նի ։ * Դուք զոր լուարուքն 'ի սկզբանէ՝ 'ի ձեզ 24
բնակեսցէ. զի եթէ 'ի ձեզ բնակեսցէ զոր 'ի
սկզբանէն լուարուք, եւ դուք յՈրդին եւ 'ի
Հայր բնակեսջիք ։ * Եւ այս են աւետիքն՝ զոր 25
աւետարանեաց նա մեզ՝ զկեանսն յաւիտենա-
կանս ։

ԵԵ. * Զայս գրեցի ձեզ, զի մի ոք զձեզ մո- 26
լորեցուցանիցէ. * եւ դուք օծութիւնն զոր ըն- 27
կալարուք 'ի նմանէ, բնակեսցէ 'ի ձեզ. եւ չէ
ինչ պիտոյ՝ եթէ ոք զձեզ ուսուսցէ, այլ որպէս

զի նորա օծութիւնն ուսուցանիցէ զձեզ վասն
ամենայնի. եւ ճշմարիտ է՝ եւ չէ սուտ. եւ որ-
28 պէս ուսոյց զձեզ, կայք 'ի նմա ։ * Եւ այժմ,
որդեակք, կացէք 'ի նմին. զի եթէ յայտնեսցի,
ունիցիմք համարձակութիւն, եւ մի ամաչես-
29 ցուք 'ի նմանէ 'ի գալստեան նորա ։ * Զի եթէ
գիտիցէք՝ եթէ արդար է նա, իմասջիք եթէ
ամենայն որ առնէ զարդարութիւն՝ առ 'ի նմա-
նէ է ծնեալ ։

ԳԼՈՒԽ Գ.

1 Տեսէք որպիսի սէր շնորհեաց մեզ Հայր, զի
որդիք Աստուծոյ կոչեսցուք մեք. վասն այսորիկ
աշխարհ ոչ ճանաչէ զմեզ, քանզի ոչ ծանեաւ
զնա ։
2 ԵԶ. * Սիրելիք, այժմ որդիք Աստուծոյ եմք,
եւ չեւ եւս է յայտ՝ եթէ զինչ լինելոց իցեմք.
գիտեմք՝ զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա
լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա՝ որպէս
3 եւ էն ։ * Եւ ամենայն որ ունի զայս յոյս յան-
ձին՝ սրբէ զանձն իւր, որպէս եւ նայն սուրբ
4 է ։ * Ամենայն որ զմեղս գործէ, նա՝ եւ զա-
նօրէնութիւն առնէ, եւ ինքն իսկ մեղքն ա-
5 նօրէնութիւն է. * եւ գիտեմք՝ զի նա յայն սակս
յայտնեցաւ՝ զի զմեղս բարձցէ, եւ 'ի նմա մեղք
6 ոչ են ։ * Ամենայն որ 'ի նմա է հաստատեալ, ոչ
մեղանչէ. եւ ամենայն որ մեղանչէ, ոչ ետես
7 զնա եւ ոչ ծանեաւ զնա ։ * Մանկունք, մի ոք

զձեզ խաբեսցէ . որ առնէ զարդարութիւն, ար֊
դար է՝ որպէս եւ նայն արդար է ։ * Եւ որ առ֊ 8
նէ զմեղս՝ ’ի սատանայէ է, զի ’ի սկզբանէ սա֊
տանայ մեղանչէ . վասն այսորիկ յայտնեցաւ որ֊
դին Աստուծոյ՝ զի լուծցէ զգործս սատանայի ։
* Ամենայն որ յԱստուծոյ է ծնեալ՝ մեղս ոչ առ֊ 9
նէ, զի սերմն նորա ’ի նմա մնայ . եւ ոչ կարէ
մեղանչել, զի յԱստուծոյ է ծնեալ . * այսուիկ 10
յայտնի են ’ի միմեանց որդիք Աստուծոյ եւ որ֊
դիք սատանայի ։

ԵԷ . Ամենայն որ ոչ առնէ զարդարութիւն՝
չէ նա յԱստուծոյ, եւ որ ոչ սիրէ զեղբայր իւր .
* զի այս է պատուիրանն զոր լուարուք ի սկզբա֊ 11
նէ, զի սիրեսցուք զմիմեանս ։ * Ոչ որպէս Կա֊ 12
յէնն ’ի չարէ անտի էր՝ եւ սպան զեղբայրն
իւր . եւ յո՞ր սակս սպան զնա . զի իւր գործքն
չար էին, եւ եղբօրն բարի ։ * Եւ մի՛ ինչ զար֊ 13
մանայք, եղբարք, եթէ աշխարհ զձեզ ատեայ ։
* Մեք գիտեմք՝ զի փոխեցաք ’ի մահուանէ ’ի 14
կեանս, քանզի սիրեմք զեղբարս . իսկ որ ոչն
սիրէ, անդէն ’ի մահու մնայ ։ * Ամենայն որ ա֊ 15
տեայ զեղբայր իւր՝ մարդասպան է . եւ գիտէք՝
զի ամենայն մարդասպան ոչ ունի զկեանս յա֊
ւիտենականս յանձին հաստատեալ ։ * Այսուիկ 16
գիտացաք զսէրն, զի նա զանձն իւր եդ վասն
մեր, եւ մեք վասն եղբարց մերոց պարտիմք
դնել զանձինս ։ * Որ ունիցի զկեանս ինչ զաշ֊ 17
խարհիս, եւ տեսանիցէ զեղբայր իւր կարօ֊

տեալ իւիք, եւ փակիցէ զգութս իւր առ ’ի
նմանէ, զիա՞րդ սէրն Աստուծոյ ’ի նմա իցէ բը֊
նակեալ ։

18 ԶԿ . * Որդեակք, մի՛ բանիւք եւ լեզուօք սի֊
րեսցուք, այլ արդեամբք եւ ճշմարտութեամբ .
19 * եւ այսուիկ լիցուք ծանուցեալք՝ եթէ ’ի ճըշ֊
մարտութենէ անտի իցեմք, եւ առաջի նորա
20 արասցուք հանդէս սրտից մերոց ։ * Եթէ ըստ֊
գտանիցեն զմեզ սիրտք մեր, այլ Աստուած
մեծ է քան զսիրտս մեր եւ գիտէ զամենայն ։
21 * Սիրելիք, եթէ սիրտք մեր զմեզ ոչ ըստգտա֊
նիցեն, համարձակութիւն ունիմք առ Աստուած .
22 * եւ զոր ինչ հայցեմք՝ առնումք ’ի նմանէ . զի
զպատուիրանս նորա պահեմք, եւ զհաճոյս ա֊
23 ռաջի նորա առնեմք ։ * Եւ այս է պատուիրան
նորա, զի հաւատասցուք յանուն Որդւոյ նորա
Յիսուսի Քրիստոսի, եւ սիրեսցուք զմիմեանս,
24 որպէս եւ ետ մեզ պատուէր ։ * Եւ որ պահէ
զպատուիրանս նորա՝ ’ի նմա է հաստատեալ՝
եւ նա ’ի սմա . եւ յայսմանէ գիտեմք եթէ
բնակէ ’ի մեզ ’ի հոգւոյ անտի զոր ետ մեզ ։

ԳԼՈՒԽ Դ .

1 ԶԲ . Սիրելիք, մի՛ ամենայն հոգւոյ հաւա֊
տայք, այլ ընտրեցէք զհոգիսն եթէ յԱստուծոյ
իցեն . զի բազում սուտ մարգարէք ելեալ են
2 յաշխարհ . * եւ մեք այսուիկ ճանաչեմք զհոգին
Աստուծոյ ։ Ամենայն հոգի որ խոստովանի զՅի֊

սուս Քրիստոս մարմնով եկեալ, յԱստուծոյ է
նա. *եւ ամենայն հոգի որ ոչ խոստովանի ըզ- 3
Յիսուս Քրիստոս մարմնով եկեալ, չէ նա յԱս-
տուծոյ. եւ այս նեռին է, զորմէ լուարուք
եթէ գալոց է, եւ արդէն իսկ յաշխարհի է:
*Դուք յԱստուծոյ էք, որդեակք, եւ յաղթե- 4
ցէք նոցա. զի մեծ է որ 'ի ձեզդ է, քան զայն
որ յաշխարհին է: *Նոքա յաշխարհէ են, վասն 5
այնորիկ յաշխարհէ խօսին, եւ աշխարհ լսէ նո-
ցա: *Մեք յԱստուծոյ եմք, որ զԱստուած ճա- 6
նաչէ՝ լսէ մեզ, եւ որ չէ յԱստուծոյ՝ ոչ լսէ
մեզ. այսուիկ ճանաչեմք զհոգին ճշմարտու-
թեան, եւ զհոգին խաբէութեան:

ԶԳ. *Սիրելիք, սիրեսցուք զմիմեանս, զի 7
սէր յԱստուծոյ է. եւ ամենայն որ սիրէ՝ յԱս-
տուծոյ է ծնեալ, եւ ճանաչէ զԱստուած. *եւ 8
որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զԱստուած, զի Աս-
տուած սէր է: *Եւ զի յայտ երեւեցաւ սէրն 9
Աստուծոյ 'ի մեզ, զի զՈրդին իւր միածին առա-
քեաց Աստուած յաշխարհ, զի եղիցուք նովաւ
կենդանիք: *Յայսմ է սէրն. ոչ զի մեք սիրեցաք 10
զԱստուած, այլ զի նա սիրեաց զմեզ, եւ առա-
քեաց զՈրդին իւր 'ի քաւութիւն մեղաց մերոց:
*Սիրելիք, եթէ Աստուած այնպէս սիրեաց ըզ- 11
մեզ, ապա եւ մեք պարտիմք զմիմեանս սիրել:

ԶԴ. *ԶԱստուած ուրուք երբէք չէք տե- 12
սեալ. եթէ սիրեսցուք զմիմեանս՝ Աստուած 'ի
մեզ բնակէ, եւ սէր նորա 'ի մեզ կատարեալ

13 է. *այսուիկ գիտեմք եթէ մեք 'ի նա բնակեալ
եմք եւ նա 'ի մեզ. զի 'ի հոգւոյն իւրմէ ետ
14 մեզ: *Եւ մեք տեսաք եւ վկայեմք, զի Հայր
15 առաքեաց զՈրդի իւր փրկիչ աշխարհի: *Որ ոք
խոստովանեսցի՝ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ,
Աստուած 'ի նմա բնակէ՝ եւ նա յԱստուած.
16 *եւ մեք հաւատացաք, եւ ծանեաք զսէրն Աս-
տուծոյ՝ զոր ունի առ մեզ:

Աստուած սէր է, եւ որ կայ 'ի սէրն՝ բնա-
կեալ է յԱստուած, եւ Աստուած 'ի նմա բնա-
17 կէ. *Յայսմիկ է կատարեալ սէրն նորա ընդ
մեզ, զի համարձակութիւն ունիմք յաւուրն
դատաստանի. զի որպէս եւ նայն է, նոյնպէս
18 եւ մեք եմք յաշխարհի յայսմիկ: *Երկիւղ ոչ
գոյ 'ի սէր, այլ սէրն կատարեալ 'ի բաց մերժէ
զերկիւղն. զի երկիւղ ընդ տանջանօք է. իսկ
19 որ երկնչին, չէ կատարեալ 'ի սէրն: *Մեք սի-
րեսցուք զԱստուած, վասն զի նա նախ սիրեաց
20 զմեզ: *Եթէ ոք ասիցէ՝ եթէ սիրեմ զԱստուած,
եւ զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ
զեղբայր իւր զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն
21 տեսեալ՝ զիա՞րդ կարիցէ սիրել. *եւ զայս պա-
տուէր ունիմք առ 'ի նմանէ, զի որ սիրէ զԱս-
տուած՝ սիրէ նա եւ զեղբայր իւր:

ԳԼՈՒԽ Ե.

1 ԶԵ. Ամենայն որ հաւատայ՝ եթէ Յիսուս է
Քրիստոսն, յԱստուծոյ է ծնեալ. եւ ամենայն

որ սիրէ զծնօղն, սիրէ եւ զծնեալն 'ի նմանէ ։
* Այսուիկ ճանաչեմք՝ եթէ սիրեմք զՈրդին Աս- 2
տուծոյ, յորժամ զԱստուած սիրեսցուք՝ եւ զպա-
տուիրանս նորա արասցուք ։ * Քանզի այս է սէ- 3
րն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պա-
հեսցուք . եւ պատուիրանքն նորա չեն ինչ ծա-
նունք . * զի ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է, 4
յաղթէ աշխարհի ։ Եւ այս է յաղթութիւնն՝
որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր ։ * Եւ ո՛ 5
իցէ որ յաղթիցէ աշխարհի . եթէ ոչ որ հաւա-
տայցէ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ ։ * Սա է 6
որ եկն ջրով եւ հոգւով եւ արեամբ, Յիսուս
Քրիստոս . ոչ ջրով միայն, այլ եւ արեամբ եւ
ջրով . եւ Հոգին է որ վկայէ, զի Հոգին իսկ է
ճշմարտութիւն ։ (* Զի երեք են որ վկայեն 7
յերկինս . Հայր, Բանն, եւ Հոգին Սուրբ . եւ
երեքեան մի են ։ * Եւ երեք են որ վկայեն յեր- 8
կրի . հոգի, ջուր, եւ արիւն . եւ երեքեան մի
են ։) * Եթէ զմարդկան ինչ վկայութիւն ունի- 9
ցիմք, ապաքէն Աստուծոյ վկայութիւնն մեծ
իցէ . այս է վկայութիւնն Աստուծոյ, որ վկայ-
եաց 'ի վերայ Որդւոյն իւրոյ ։
ԶԶ . * Որ հաւատայ յՈրդին Աստուծոյ, ունի 10
յանձին զվկայութիւնս զայս . որ ոչ հաւատայ
Որդւոյ Աստուծոյ՝, սուտ առնէ զնա . քանզի չհա-
ւատայ վկայութեանն զոր վկայեաց Աստուած
'ի վերայ Որդւոյն իւրոյ ։ * Եւ այս իսկ է վկա- 11
յութիւնն, զի կեանս յաւիտենականս ետ մեզ

Աստուած . եւ այս են կեանքն, որ յՈրդին նո-
12 րա են ։ * Որ ընդունի զՈրդին, ընդունի եւ
զկեանսն . եւ որ ոչ ընդունի զՈրդին Աստուծոյ,
եւ ոչ զկեանսն ընդունի ։
13 ԶԷ . * Զայս գրեցի ձեզ . զի գիտասջիք եթէ
կեանս յաւիտենականս ունիցիք, եւ զի հաւա-
14 տայցէք յանուն Որդւոյն Աստուծոյ ։ * Եւ այս է
համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա,
զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ
15 մեզ ։ * Զի եթէ գիտիցեմք՝ եթէ լսէ հայցուա-
ծոյն մերոյ, ապա գիտեմք՝ եթէ առնումք զը-
հայցուածսն զոր հայցեմք առ 'ի նմանէ ։
16 * Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ
մեղս՝ որ ոչ առ 'ի մահ, խնդրեսցէ՝ եւ տացէ
նմա կեանս մեղուցելոյն ոչ առ 'ի մահ ։ Են մեղք՝
որ մահուչափ են, ոչ վասն այնորիկ ասեմ եթէ
17 խնդրեսցես . * ամենայն անիրաւութիւն մեղք
18 են . եւ են մեղք որ մահուչափ են ։ * Գիտեմք
եթէ ամենայն որ յԱստուծոյ է ծնեալ՝ ոչ մե-
ղանչէ . այլ որ յԱստուծոյն է ծնեալ՝ պահէ
զանձն, եւ չարն առ նա ոչ մերձենայ ։
19 * Գիտեմք եթէ յԱստուծոյ եմք, եւ աշխարհ
20 ամենայն 'ի չարի կայ . * եւ գիտեմք եթէ Որ-
դին Աստուծոյ եկն եւ ետ մեզ միտս, զի ծա-
նիցուք զճշմարիտն . եւ եմք 'ի ճշմարտին Որդ-
ւոյ նորա Յիսուսի Քրիստոսի . զի նա է ճշմարիտ
21 Աստուած եւ կեանք յաւիտենականք ։ * Որդ-
եակք, պահեցէք զանձինս 'ի կռապաշտութենէ ։

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՐՈՐԴ

Ի.Կ. ՅԵՐԻՑՈՒՆՍ առ ընտրեալ Կիւրիա, 1
եւ առ որդեակս իւր զոր ես սի-
րեմ ճշմարտութեամբ. եւ ոչ եթէ ես միայն,
այլ եւ ամենեքեան որք գիտակ են ճշմարտու-
թեանն. * վասն որոյ ճշմարտութեանն՝ որ ՚ի մեզ 2
հաստատեալ է, զի եւ ընդ ձեզ լիցի, եւ դուք
յաւիտենից ընդ ձեզ լիցիք: * Շնորհք, ողորմու- 3
թիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ՚ի Հօրէ, եւ
՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ որդւոյն Հօր,
ճշմարտութեամբ եւ սիրով եղիցի ընդ ձեզ:
* Ուրախ եղէ յոյժ. զի գտի յորդեկացդ քոց՝ 4
որ գնան ճշմարտութեամբ, ըստ պատուիրա-
նին զոր առաք ՚ի Հօրէ: * Եւ այժմ աղաչեմ 5
զքեզ, Կիւրիա. իբրեւ ոչ եթէ նոր ինչ պա-
տուիրան գրեմ քեզ, այլ զոր ի սկզբանէ ունէ-
աք, զի սիրեսցուք զմիմեանս: * Եւ այս է սէրն, 6
զի գնասցուք ըստ պատուիրանաց նորա. եւ այս
է պատուիրանն, զի որպէս լուարուքն ի սկզբա-

7 նէ՝ ըստ նմին գնասջիք. * զի բազում մոլորեցու-
ցիչք ելին յաշխարհս. որ ոք ոչ խոստովանի ըզ-
Յիսուս Քրիստոս եկեալ մարմնով, նա մոլորե-
ցուցիչ է եւ նեռն:
8 Ի.Բ. * Զգոյշ լինիջիք անձանց, զի մի կորու-
սանիցէք զոր վաստակեցէքն, այլ զի առնու-
9 ցուք բովանդակ զվարձսն: * Ամենայն որ յան-
ցանիցէ՝ եւ ոչ կայցէ ՚ի վարդապետութեանն
Քրիստոսի, զԱստուած ոչ ճանաչէ. որ կայ ՚ի
վարդապետութեանն, նա՝ եւ զՈրդին եւ ըզ-
10 Հայր ընդունի: * Եթէ ոք գայցէ առ ձեզ՝ եւ
զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի, մի ըն-
դունիցիք զնա ՚ի տուն, եւ մի ողջոյն տայցէք
11 նմա. * որ ասասցէ նմա ողջոյն, կցորդ լինի չա-
12 րաց գործոց նորա: * Բազում ինչ ունէի գրել
առ ձեզ, այլ ոչ կամեցայ քարտիսիւ եւ դեղով.
զի ակն ունիմ ինձէն իսկ գալ առ ձեզ եւ բե-
րան ՚ի բերան խօսել, զի ուրախութիւնն մեր
13 լիցի կատարեալ: * Ողջոյն տան քեզ որդիք քե-
րո ընտրելոյ: Շնորհք ընդ ձեզ:

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ
ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԼԵ. ՅՈՒԴԱ, Յիսուսի Քրիստոսի ծառայ, 1
եւ եղբայր Յակոբայ, հեթանոսաց
որ յԱստուծոյ Հօրէ էք սիրեցեալք, եւ Յիսուսի
Քրիստոսի պահեալք եւ ընտրեալք. * ողորմու֊ 2
թիւն ձեզ՝ խաղաղութիւն եւ սէր բազմասցի։
* Սիրելիք, զամենայն փոյթ յանձին կալեալ 3
գրել ձեզ՝ վասն մերոյ հասարակաց փրկութեա֊
նըն, հարկ յանձին կալայ գրել ձեզ, եւ աղա֊
չել զի ճգնիցիք 'ի վերայ հաւատոյն որ միան֊
գամ աւանդեցաւ սրբոց։ * Քանզի սպրդեցին 4
մոլին ոմանք, որ յառաջագոյն իսկ կատարեալ
էին 'ի սոյն դատաստան. ամպարիշտք, որ զԱս֊
տուծոյ մերոյ շնորհսն դարձուցին յանկարգու֊
թիւն. եւ զմի միայն զիշխանն՝ եւ զՏէր մեր
Յիսուս Քրիստոս ուրացեալք։ * Յիշեցուցանել 5
ձեզ այսուհետեւ կամ է ինձ՝ որ գիտէքդ զա֊
մենայն, զի Աստուած միանգամ զժողովուրդն
փրկեաց յԵգիպտոսէ. երկրորդ անգամ զան֊

6 հաւատսն կորոյս։ * Եւ զհրեշտակս որ ոչ պա֊
հեցին զիւրեանց իշխանութիւնն, այլ թողին
զիւրեանց բնակութիւնն, 'ի դատաստանս մեծի
աւուրն՝ մշտնջենաւոր կապանօք պահեաց 'ի
7 խաւարի։ * Որպէս Սոդոմն եւ Գոմոր, եւ որ
շուրջ զնոքօք քաղաքքն, որ ըստ նմին օրինակի
պոռնկեցան զհետ ընկերացն մարմնոց, կան ա֊
ռաջի օրինակ՝ զյաւիտենական հրոյն ընկալեալ
զդատաստան։
8 * Ըստ նմին օրինակի եւ սոքա իբրեւ քնով
դանդաչեալք՝ զմարմին պղծեն, զտէրութիւնս
9 քամահեն, զփառսն հայհոյեն։ * Ուր Միքայէլ
հրեշտակապետն՝ յորժամ բանսարկուն սատա֊
նայի վիճեալ տայր պատասխանի վասն մովսի֊
սեանն մարմնոյ, ոչ յանդգնեցաւ հայհոյութեանն
դատաստանի հանդուրժել, այլ ասէ՝ Սաստես֊
10 ցէ 'ի քեզ Տէր. * Իսկ սոքա զոր ինչ ոչն իմա֊
նան՝ հայհոյեն. եւ զայլն եւս զոր բնութեամբ
իբրեւ զանխօս անասուն գիտեն, 'ի նոսին ա֊
11 պականեցին։ * Վայ է նոցա, զի ըստ ճանա֊
պարհին Կայենի գնացին, եւ ըստ մոլորութեանն
Բաղամայ զեղխեցան զհետ վարձուց, եւ ըստ
հակառակութեանն Կորխայ կորեան։
12 ԼԶ. * Սոքա են ատեցեալք, շօդմոգք, եր֊
թեալ զհետ ցանկութեանց իւրեանց. 'ի սէրս
իւրեանց՝ խարդախութեամբ, լինին ընդ ձեզ
ուրախակիցք, աներկիւղ զանձինս ճօրակեն։
Ամպք անջրդիք, հողմակոծեալք. ծառք պտ֊

նակորդք , անպտուղք , կրկնամեռք , խլեալք
արմատաքի . * անսաստ ալիք ծովու , որ միշտ 13
փրփրեն զիւրեանց անձանցն զամօթ . աստեղք
մոլարք , որոց վէհ խաւարին յաւիտենից պա-
հեալ է ։

* Մարգարէացաւ վասն նոցա եւ եօթնե- 14
րորդն յԱդամայ Ենովք՝ եւ ասէ . Ահաւասիկ
եկն Տէր բիւրովք սրբովք հրեշտակօք . * առ- 15
նել դատաստան ընդ ամենայնի , եւ յանդիմա-
նել զամենայն ամպարիշտս վասն գործոց իւր-
եանց՝ զոր ամպարշտեցին . եւ վասն ամենայն
խիստ բանից , զոր խօսեցան զնմանէ մեղաւորք
եւ ամպարիշտք ։ * Սոքա են տրտնջօղք եւ շոգ- 16
մոգք , երթեալ ըստ իւրեանց անձանց ցան-
կութեանց . եւ բերանք նոցա զամբարտաւանս
բարբառին , առնուն ակն երեսաց վասն օգտի ։

ԻԷ . * Բայց դուք , սիրելիք , յիշեցէք զկան- 17
խատաց բանս զԱռաքելոցն Տեառն մերոյ Յիսու-
սի Քրիստոսի . * զի ասէին ձեզ , եթէ 'ի յետին 18
ժամանակս եղիցին մարդք արհամարհօղք , եր-
թեալք ըստ իւրեանց ամպարշտութեանցն ցան-
կութեանց . * սոքա են նշաւակեալք շնչաւորք , 19
որ զոգին ոչ ունիցին ։

* Այլ մեք , սիրելիք , եղիցուք շինել զան- 20
ձինս սրբութեամբն հաւատոց 'ի Հոգին Սուրբ .
կացցուք յաղօթս , * պահել զանձինս սիրովն Աս- 21
տուծոյ , ակն ունել ողորմութեանն Տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի 'ի կեանսն յաւիտենա-

22 կանս ։ * Եւ ոմանց դատապարտելոց լինիջիք կըշ-
23 տամբիչք , * եւ զոմանս ապրեցուցանիջիք՝ յա-
փշտակեալ 'ի հրոյ . եւ ոմանց ողորմեսջիք՝ եր-
կիւղիւ զատել եւ զպատմուճանն որ 'ի մար-
24 մնոյն իցէ աղտեղեալ ։ * Եւ այնմ որ կարօղն
իցէ պահել զձեզ անարատս եւ անբիծս , հաս-
տատեալ առաջի իւրոյ փառաց աներկեւանն
25 ցնծութեամբ , * միոյն Աստուծոյ եւ փրկչին մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ՝ փառք ,
մեծութիւն , զօրութիւն եւ իշխանութիւն՝ յա-
ռաջ քան զամենայն յաւիտեանս , եւ այժմ եւ
յամենայն յաւիտեանս . ամէն ։

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՒ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ

ԳԼՈՒԽ Ա.

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ Յիսուսի Քրիստոսի, 'ի 1
ձեռն որոյ ետ Աստուած յուցանել ծա-
ռայից իւրոց՝ որ ինչ լինելոց է վաղվաղակի. եւ
նշանակեաց առաքելով 'ի ձեռն հրեշտակի իւ-
րոյ առ ծառայ իւր Յովհաննէս: * Որ վկայեաց 2
զվկայութիւն բանին Աստուծոյ, եւ զվկայութիւն
Յիսուսի Քրիստոսի զոր եանս. որ էր, եւ որ լի-
նելոցն էր յետ այնորիկ: * Երանի որ կարդայցէ 3
կամ լուիցէ զբանս մարգարէութեանս, եւ պա-
հեսցէ զոր 'ի սմա գրեալ է. զի ժամանակս մեր-
ձեալ է:

* Ի Յովհաննէ առ եօթն եկեղեցիս՝ որ են 4
յԱսիա, շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն
յԱստուծոյ՝ յէէն՝ եւ որ էն՝ եւ որ գալոցն է,

եւ յեօթն զօրութեանց հոգւոյն՝ որ է առաջի
5 աթոռոյն իւրոյ, * եւ 'ի Յիսուսէ Քրիստոսէ հա-
ւատարիմ վկայէն, որ է անդրանիկ 'ի մեռեա-
լոց, եւ իշխան թագաւորութեանց երկրի, որ
սիրեաց զմեզ, եւ եղյծ զկապանս մեղաց մե-
6 րոց արեամբն իւրով. * եւ արար զմեզ թա-
գաւորս եւ քահանայս Աստուծոյ եւ Հօր իւրոյ,
որում փառք եւ զօրութիւն՝ այժմ եւ միշտ եւ
7 յաւիտեանս յաւիտենից. ամէն: * Ահաւասիկ
գալոց է ընդ ամպս, եւ տեսցեն զնա ամենայն
աչք, եւ տեսցեն զնա ծագք երկրի, եւ որք
խոցեցին զնա՝ ամենեքեան յերկրի, եւ կոծես-
8 ցին 'ի վերայ նորա. այո, ամէն: * Ես եմ այբ,
եւ ես եմ քէ. ասէ Տէր Աստուած, որ էն՝ եւ
9 որ էր՝ եւ որ գալոցն է՝ Ամենակալ: * Ես Յով-
հաննէս եղբայր ձեր եւ հաւասարակից նեղու-
թեան եւ արքայութեան եւ համբերութեան
որ 'ի Քրիստոս Յիսուս, եղէ ես 'ի կղզւոջն որ
անուանեալ կոչի Պատմոս՝ վասն բանին եւ վասն
վկայութեանն Յիսուսի Քրիստոսի:

10 * Եւ եղէ յիս հոգի 'ի կիւրակէի աւուր,
եւ լուայ զձայն զհետ իմ զմեծ իբրեւ զձայն
փողոյ՝ որ ասէր ցիս. Ես եմ Ալփա եւ ով, ա-
11 ռաջին եւ վերջին. * զոր տեսանես՝ գրեա 'ի
գիրս, եւ տուր տանել յեօթն եկեղեցիս, որ
յԵփեսոս, եւ 'ի Զմիւռնիա, եւ 'ի Պերգամոն,
եւ 'ի Թիւատիր, եւ 'ի Սարդիկէ, եւ 'ի Փիլա-
12 դելփիա, եւ 'ի Լաւոդիկեա: * Եւ դարձայ տե-

սանել զձայնն՝ որ խօսէր ցիս . եւ 'ի դառնալն
իմում տեսի եօթն ճրագարան ոսկի . * եւ 'ի 13
մէջ եօթն ճրագարանացն նման Որդւոյ մարդոյ,
զգեցեալ պատմուճան պճղնաւոր, եւ գօտե-
ւորեալ առ ստեամբքն գօտի ոսկեղէն . * եւ 14
գլուխ նորա եւ հերքն իբրեւ զասր սպիտակ եւ
որպէս զձիւն, եւ աչք նորա որպէս բոց հրոյ,
* եւ ոտք նորա նմանեալ պղնձոյ ծխելոյ 'ի մէջ 15
հնոցի հրաշէկ, եւ ձայն նորա իբրեւ զձայն ջուրց
բազմաց ։ * Եւ ունէր յաջոյ ձեռինն իւրում աս- 16
տեղս եօթն, եւ 'ի բերանոյ նորա ելանէր սուր
երկբերանեան, եւ երեսք նորա իբրեւ զարե-
գակն ճառագայթեալ երեւէին ։ * Եւ իբրեւ 17
տեսի զնա՝ անկայ առ ոտս նորա իբրեւ զմե-
ռեալ. եւ եդ 'ի վերայ իմ զաջ իւր՝ եւ ասէ
ցիս . Մի երկնչիր, ես եմ առաջին, եւ ես եմ
յետին . * եւ ես եմ կեանք, եւ ես նոյն որ մե- 18
ռայ, եւ եմ կենդանի, այժմ եւ միշտ եւ յա-
ւիտեանս յաւիտենից . ամէն ։ Եւ ունիմ զփա-
կանս մահու եւ դժոխոց . * գրեա զոր տեսա- 19
նեսդ՝ որ էն, եւ որ հանդերձեալ է լինել յետ
այնորիկ ։ * Զխորհուրդ եօթն աստեղացդ՝ զոր 20
տեսերդ յաջս իմ, եւ զեօթն ճրագարանս ոս-
կիս, եօթն աստեղքն՝ հրեշտակք եօթն եկեղե-
ցեացն են . եւ ճրագարանքն եօթն՝ եօթն Ե-
կեղեցիքն են ։

ԳԼՈՒԽ Բ.

1 Առ հրեշտակ Եփեսացւոց եկեղեցւոյն գը-
րեա . Այսպէս ասէ կալօղն՝ որ ունի զաստեղս
եօթն յաջոյ ձեռին իւրում, եւ շրջի 'ի մէջ եօ-
2 թըն աշտանակի ոսկւոյ ։ * Գիտեմ զգործս քո
եւ զվաստակս քո եւ զհամբերութիւն քո . եւ
զի ոչ բառնաս զչարս, եւ փորձեցեր որ ասեն
զինքեանս Առաքեալս՝ եւ ոչ են, եւ հերքայե-
3 ցիս՝ եւ ստեն ։ * Եւ համբերեցեր, եւ փշտա-
4 ցար վասն անուան իմոյ՝ եւ աշխատեցար ։ * Այլ
ասեմ առ քեզ, զի զսէրն քո զառաջին թողեր .
5 * յիշեա այժմ ուստի անկար եւ ապաշաւեա,
եւ զառաջին գործն քո արա . ապա թէ ոչ,
գամ ես վաղվաղակի, եւ շարժեցից զաշտանա-
կըս քո 'ի տեղւոջէ իւրմէ՝ եթէ ոչ ապաշխարես-
6 ցես ։ * Արդ զայս արա՝ զի ատեցես զգործսն Նի-
7 կողայոսի, զոր ես ատեմ ։ * Որ ունի ականջս
լսելոյ՝ լուիցէ զինչ ասէ Հոգին Սուրբ առ եկե-
ղեցիս . որ յաղթէն՝ տաց նմա ուտել 'ի փայտէն
կենաց որ է 'ի մէջ դրախտին Աստուծոյ ։
8 * Եւ առ հրեշտակ զմիւռնացւոց եկեղեց-
ւոյն գրեա . Այսպէս ասէ անսկիզբն եւ ան-
վախճանն, որ եղեւ մեռեալ եւ կենդանացաւ ։
9 * Տեսի զգործս քո եւ զնեղութիւն եւ զաղքա-
տութիւն . այլ աղքատութիւն քո՝ մեծութիւն
եղիցի . եւ զհայհոյութիւնն՝ որ ասէին զինքեա-

նըս հրեայս գոլ, եւ չէին ինչ, այլ ժողով սա-
տանայի ։ * Մի՛ երկնչիր՝ վասն որոյ կամիս չար- 10
չարել. ահա հանդերձեալ բանսարկուն արկանել
՚ի ձէնջ ՚ի բանտ, զի փորձիցիք, եւ ունիք նե-
ղութիւն աւուրս տասն. լեր հաւատարիմ մին-
չեւ ՚ի մահ, եւ տաց քեզ զպսակն կենաց ։ * Որ 11
ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ Հոգին Սուրբ
ասէ առ եկեղեցիս. որ յաղթէ, ոչ անիրաւի
յերկրորդ մահուանէն ։

* Եւ առ հրեշտակն՝ որ ՚ի Պերգամոյ եկե- 12
ղեցւոյն՝ գրեա. Այսպէս ասէ՝ որ ունի զսուրն
երկսայրի սրեալ ։ * Տեսի զգործս քո, եւ զի բը- 13
նակեալ ես ուր աթոռն է սատանայի. եւ ու-
նիս զանուն իմ, եւ ոչ ուրացար զհաւատս իմ
յաւուր յորում Անթիպաս վկայն իմ հաւատա-
րիմ եղեւ. զի վկայ է իմ հաւատարիմ ամե-
նայն հաւատացեալ, որ սպանաւ ՚ի ձէնջ ուր
կայք՝ ուր սատանայ է բնակեալ ։ * Այլ ունիմ 14
առ քեզ սակաւ. զի կայ առ քեզ վարդապե-
տութիւնն Բաղաամու, որ ուսոյց զԲաղակ դը-
նել գայթակղութիւն առաջի որդւոցն Իսրայե-
լի, ուտել նոցա զոհեալ եւ պոռնկել. * այս- 15
պէս եւ դու ունիս զվարդապետութիւնն Նի-
կողայեցւոց՝ զոր ես ատեամ ։ * Արդ ապաշխա- 16
րեա, ապա թէ ոչ՝ գամ վաղվաղակի, եւ պա-
տերազմեցայց ընդ նոսա սրով բերանոյ իմոյ ։
* Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ Հոգին ա- 17
սէ առ եկեղեցիս. որ յաղթէ՝ տաց նմա ուտել

՚ի մանանայէն թաքուցելոյ, եւ տաց նմա զգիրն
սրբութեան. եւ գրեալ անուն նոր ՚ի գիրն՝ զոր
ոչ ոք գիտէ, բայց միայն որ առնուն ։
18 * Եւ առ հրեշտակն որ ՚ի Թիւատրոյ եկեղե-
ցւոյն՝ գրեա. Այսպէս ասէ Որդին Աստուծոյ,
որոյ աչք իւր են իբրեւ զբոց հրոյ, եւ ոտք
19 նորա նման պղնձի ծխելոյ ։ * Տեսի զգործս քո
եւ զսէր եւ զհաւատ, եւ զպաշտօն քո համ-
բերութեամբ. զի բազում է վաստակ քո վեր-
20 ջինն քան զառաջինն. * այլ ասեմ առ քեզ բա-
զում. զի թողեր զկինն զՅեզաբէլ, որ ասէր
զինքն մարգարէ, եւ ուսուցանէր մոլորութիւն
զծառայս իմ՝ պոռնկել եւ ուտել զզոհեալ.
21 * եւ ետու նոցա ժամանակ ապաշխարել զպոռ-
նկութիւնն իւրեանց՝ եւ ոչ ապաշխարեցին ։
22 * Ահաւասիկ ես արկանեմ զնա ՚ի հնոց, եւ ըզ-
գործակիցս իւր ընդ որս շնացաւ՝ ՚ի նեղութիւ-
նըս մեծամեծս, եթէ ոչ ապաշխարեսցեն ՚ի
23 գործոց իւրեանց. * եւ զորդիս նոցա սպանից
մահուամբ. եւ ծանիցեն ամենայն եկեղեցիք՝
թէ ես եմ որ յանդիմանեմ զերիկամունս եւ
զսիրտս, եւ տամ ձեզ իւրաքանչիւր ըստ գոր-
24 ծոց իւրեանց ։ * Այլ ձեզ ասեմ որք ՚ի Թիւա-
տիր էք, եւ ոչ ունիք զվարդապետութիւնս զայս.
որ ոչ ծանեայք զխորս սատանայի զոր խօսին.
25 ոչ արկից զձեօք ծանրութիւն. * այլ զոր ունիք
26 պահեցէք մինչեւ ես գամ ։ * Եւ որ յաղթէ եւ
պահէ զգործս իմ մինչեւ ցվախճան, տաց նմա

իշխանութիւն 'ի վերայ ազգաց. * եւ հովուեսցէ 27
զնոսա գաւազանաւ երկաթեաւ, եւ իբրեւ զա-
նօթ բրուտի փշրեսցէ զնոսա. * որպէս եւ ես ըն- 28
կալայ 'ի Հօրէ իմմէ, եւ տաց նոցա զաստղն ա-
ռաւօտուն ։ * Որ ունի ականջս՝ լուիցէ զինչ Հո- 29
գին ասէ առ եկեղեցիս ։

ԳԼՈՒԽ Գ.

Եւ առ հրեշտակ սարդիացւոց եկեղեցւոյն 1
գրեա. Այսպէս ասէ՝ որ ունի զեօթն Հոգիսն
Աստուծոյ եւ զեօթն աստեղս ։ Տեսի զգործս
քո, զի անուն կենդանւոյ ունիս՝ եւ մեռեալ
ես. * լեր արթուն, եւ հաստատեա զայսուհե- 2
տեւ՝ զի հանդերձեալ ես մեռանել. քանզի ոչ
գտի զգործս քո կատարեալ առաջի Աստուծոյ ։
* Արդեօք յիշեա թէ որպէս լուար, եւ պա- 3
հեա եւ ապաշխարեա. ապա թէ ոչ զուար-
թանաս՝ գամ որպէս գող, եւ ոչ ոք իմանայ
զգալուստ իմ առ քեզ ։ * Ունիս սակաւ մի զա- 4
նուն սարդիացւոյն, որք ոչ աղտեղացուցին ըզ-
հանդերձս իւրեանց, եւ շրջին 'ի սպիտակս՝ ո-
րում արժանի եղեն ։ * Որ յաղթէ՝ այսպէս ըզ- 5
գեցցի սպիտակս, եւ ոչ ջնջեցից անուն նորա 'ի
գրութենէն կենաց, եւ խոստովանեցայց զա-
նուն նորա առաջի Հօր իմոյ եւ առաջի հրեշ-
տակաց ։ * Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ 6
ասէ Հոգին առ եկեղեցիս ։

7 * Եւ առ հրեշտակն փիլադելփեաց եկեղե-
ցւոյն գրեա. Այսպէս ասէ սուրբն, ճշմարիտն,
որ ունի զփականս Դաւթի. բանայ՝ եւ ոչ ոք է
որ փակէ, եւ փակէ՝ եւ ոչ ոք է որ բանայ ։
8 * Տեսի զգործս քո. ահա ետու առաջի քո դու-
ռըն բացեալ, զոր ոչ ոք կարէ փակել. զի սա-
կաւիկ ունիս զօրութիւն, եւ պահեցեր զբանս
9 իմ, եւ ոչ ուրացար զանուն իմ ։ * Ահաւասիկ
ես տամ քեզ զժողովն սատանայի, որք ասեն
զինքեանս հրեայս գոլ՝ եւ ոչ են, այլ ստեն. ա-
րարից զնոսա՝ զի եկեսցեն եւ երկիր պագցեն
առաջի ոտից քոց, եւ ծանիցեն զի ես սիրեցի
10 զքեզ. * զի պահեցեր զբան համբերութեան ի-
մոյ, եւ ես պահեցից զքեզ 'ի ժամ փորձու-
թեան քոյ, որ հանդերձեալ է գալ յամենայն
տիեզերս՝ փորձել զամենայն բնակեալս յերեսս
11 երկրի ։ * Ահա գամ վաղվաղակի, կալ զոր ու-
12 նիսդ՝ զի մի ոք առցէ զպսակ քո ։ * Որ յաղթէ՝
արարից զնա սիւն տաճարի Աստուծոյ իմոյ, եւ
արտաքս այլ մի եւս ելցէ. եւ գրեցից 'ի վերայ
նորա զանուն Աստուծոյ իմոյ, եւ զանուն քա-
ղաքի Աստուծոյ իմոյ՝ զնորն Երուսաղեմի, որ ի-
ջանելոց է յերկնից Աստուծոյ իմոյ. եւ անուն
13 նորա նոր ։ * Որ ունի ականջս՝ լուիցէ զինչ ասէ
Հոգին առ Եկեղեցիս ։
14 * Եւ առ հրեշտակն Լաւոդիկեայ եկեղեցւոյն
գրեա. Այսպէս ասէ ամէնն՝ վկայն հաւատա-
րիմ եւ ճշմարիտ, սկիզբն սկզբան արարածոց

Աստուծոյ ։ * Գիտեմ զգործս քո՝ զի ոչ ցուրտ 15
ես եւ ոչ ջերմ. պարտ էր քեզ ցուրտ լինել եւ
կամ ջերմ. * այլ դու գաղջ ես, եւ ոչ ջերմ եւ 16
ոչ ցուրտ. հանդերձեալ ես փսխել ՚ի բերանոյ
իմմէ ։ * Զի ասես. մեծատուն էի եւ մեծացայ, 17
եւ ոչ ինչ կարօտ եմ, եւ ոչ գիտես՝ եթէ
դու ես ողորմելի եւ հէգ եւ աղքատ, մերկ
եւ կոյր ։ * Արդ ես խորհրդակից եղէց քեզ. առ 18
գնեա յինէն ոսկի փորձեալ ՚ի հրոյ՝ զի մեծա-
ցիս, եւ հանդերձս սպիտակս՝ զի զգեցցիս, զի
մի երեւեսցի անվայելչութիւն մերկութեան քոյ.
եւ դիր դեղ յաչս քո՝ զի տեսցես ։ * Ես՝ զոր 19
սիրեմ, յանդիմանեմ եւ խրատեմ. նախանձեա
այժմ, եւ ապաշխարեա. * ահաւասիկ կամ ես 20
առ դուրս եւ բախեմ. եթէ ոք լուիցէ ձայնի
իմում եւ բանայցէ զդրունսն, մտից առ նա եւ
ընթրիս արարից առ նա, եւ նա ընդ իս ։ * Որ 21
յաղթէ՝ տաց նմա նստել ընդ իս յաթոռ իմ,
որպէս եւ ես յաղթեցի եւ նստայ յաթոռ Հօր
իմոյ ։ * Որ ունի ականջս՝ լուիցէ զինչ ասէ Հո- 22
գին առ եկեղեցիս ։

ԳԼՈՒԽ Դ.

Եւ յետ այսր ամենայնի տեսի՝ եւ ահա 1
դրունք երկնից բացեալ էին, եւ ձայն փողոյն
առաջնոյ զոր լուայ՝ խօսէր ընդ իս եւ ասէր.
Ել այսր՝ եւ ցուցից քեզ զինչ լինելոց է յապա

2 ժամանակս ։ * Եւ ժամանեալ յիս հոգի, եւ տե-
3 սի աթոռ մի՝ զի կայր յերկինս. * եւ ՚ի վերայ
աթոռոյն նստէր նման տեսլեան ականց յասպիս
4 եւ սարդիոնի. * եւ քահանայք շուրջ զաթոռո-
վըն՝ նմանք տեսլեան զմրրխտի. եւ շուրջ զա-
թոռովն՝ աթոռք քսան եւ չորք, եւ ՚ի վերայ
աթոռոյն նստէին քսան եւ չորք երիցունք՝ ըզ-
գեցեալ հանդերձս սպիտակս, եւ ՚ի գլուխս
5 իւրեանց պսակս ոսկիս. * եւ յաթոռոյ անտի ե-
լանէին փայլատակմունք եւ ձայնք եւ որոտմունք
եւ եօթն ղամբարք հրոյ բորբոքելոյ առաջի ա-
6 թոռոյն, որ են եօթն Հոգիքն Աստուծոյ ։ * Եւ
էր առաջի աթոռոյն ծով ապակեղէն՝ նման բը-
պիտակութեան սառին, եւ ՚ի մէջ աթոռոյն
չորք կենդանիք՝ եւ լի էին աչօք առաջոյ եւ յե-
7 տոյ ։ * Եւ էր կենդանին առաջին նման առիւ-
ծու, եւ երկրորդ կենդանին նման զուարակի,
եւ երրորդ կենդանին երես մարդոյ, եւ չորրորդ
8 կենդանին նման արծուոյ թռուցելոյ ։ * Եւ չո-
րից կենդանեացն էին միոյ միոյ ՚ի նոցանէ վեց
թեւք շուրջանակի, եւ ՚ի ներքոյ լի էին աչօք,
ոչ հանգչէին՝ ոչ զտիւ եւ ոչ զգիշեր՝ ասելով.
Սուրբ սուրբ սուրբ, սուրբ սուրբ սուրբ, սուրբ
սուրբ սուրբ, տէր Աստուած ամենակալ՝ որ էն
9 եւ ես եւ որ գալոց ես ։ * Եւ յորժամ տային
կենդանիքն փառս եւ պատիւ եւ գոհութիւն
նստելոյն ՚ի վերայ աթոռոյն՝ կենդանւոյն յա-
ւիտեանս յաւիտենից, անկանէին առաջի աթո-

ռոյն. քսան եւ չորք երիցունքն եւ երկիր պագա-
նէին կենդանւոյն յաւիտենից, * եւ դնէին զպ- 10
սակս իւրեանց առաջի աթոռոյն ասելով. * Ար- 11
ժանի ես, տէր Աստուած մեր սուրբ, առնուլ
փառս եւ պատիւ եւ զօրութիւն, զի դու ըս-
տեղծեր զամենայն, եւ 'ի կամէն քո ստեղծան՝
եւ կան հաստատուն ։

ԳԼՈՒԽ Ե.

Եւ տեսի յաջոյ ձեռինն՝ որ նստէր 'ի վերայ 1
աթոռոյն՝ գիրք գրեալ ներքոյ եւ արտաքոյ, եւ
կնքեալ եօթն կնքով ։ * Եւ տեսի հրեշտակ մի 2
զօրաւոր՝ զի քարոզէր 'ի ձայն մեծ. Ո՞ է արժա-
նի բանալ զգիրքս՝ եւ լուծանել զկնիք նորա ։
* Եւ ոչ ոք կարէր՝ ոչ յերկինս եւ ոչ յերկրի 3
եւ ոչ 'ի ներքոյ երկրի՝ բանալ զգիրքն, զի ոչ
տեսանել զնա ։ * Եւ ես լայի ուժգին՝ զի ոչ ոք 4
գտաւ արժանի բանալ զգիրքն եւ հայել 'ի նա.
* 'Եւ մի յերիցանցն ասէ ցիս. Մի՛ լար, ահաւա- 5
սիկ յաղթեաց առիւծն յազգէն Յուդայ յարմա-
տոյն Դաւթի՝ բանալ զգիրքն եւ լուծանել զեօ-
թըն կնիքսն նորա ։
* Եւ տեսի 'ի մէջ աթոռոյն եւ 'ի մէջ չորից 6
կենդանեացն եւ 'ի մէջ երիցանցն՝ գառն կայր
զենեալ, որ ունէր եօթն եղջիւրս, եւ աչս եօ-
թըն՝ որ են եօթն հոգիք Աստուծոյ, որ են ա-
ռաքեալ ընդ ամենայն երկիր. * եւ եկն ընկալաւ 7

յաջոյ ձեռանէ նորա՝ որ նստէր 'ի վերայ աթո-
8 ռոյն ։ * Եւ յորժամ առ զգիրն, չորք կենդանիքն
եւ քսան եւ չորք երիցունքն անկանէին առաջի
գառինն. եւ ունէին իւրաքանչիւր քնար՝ եւ
բուրվառ ոսկի լի խնկով, որ է աղօթք սրբոցն.
9 * եւ օրհնէին երգս նորս եւ ասէին. Արժանի
ես առնուլ զգիրդ՝ եւ բանալ զկնիք դորա, զի
զենար՝ եւ գնեցեր զմեզ Աստուծոյ արեամբդ
քով՝ յամենայն ազգաց եւ 'ի լեզուաց եւ 'ի ժո-
10 ղովրդոց հեթանոսաց. * եւ արարեր զոսա Աս-
տուծոյ մերոյ թագաւորս եւ քահանայս՝ թա-
11 գաւորել 'ի վերայ երկրի. * Եւ տեսի եւ լուայ
զձայն հրեշտակաց բազմաց՝ որք կային շուրջ
զաթոռովն եւ զչորիւք կենդանեօքն եւ զքա-
հանայիւքն. եւ էր թիւ նոցա՝ բիւրք բիւրուց
12 եւ հազարք հազարաց. * ասէին ձայնիւ մեծաւ.
Արժան է գառնդ զենեալ՝ առնուլ զմեծութիւն
եւ զիմաստութիւն եւ զզօրութիւն եւ զպատիւ
13 եւ զփառս եւ զօրհնութիւն ։ * Եւ ամենայն ա-
րարածք՝ որ են յերկինս եւ յերկրի եւ 'ի ծովու
եւ որ 'ի նոսա՝ լուայ զի ասէին. Որ նստի յա-
թոռն՝ եւ գառնն՝ օրհնեալ բարձրացեալ եւ
14 փառաւորեալ յաւիտեանս յաւիտենից. * եւ
չորք կենդանիքն ասէին, ամէն. եւ երիցունքն
անկանէին առաջի նորա եւ երկիր պագանէին ։

ԳԼՈՒԽ Զ.

Եւ տեսի զի եբաց զմին 'ի կնքոյն, եւ լուայ 1
'ի միոյ 'ի չորից կենդանեացն իբրեւ զձայն որոտ-
ման՝ զի ասէր՝ Թէ գամ. *եւ տեսի եւ ահա ձի 2
սպիտակ, եւ որ հեծեալն էր 'ի նմա՝ ունէր ա-
ղեղն. եւ տուաւ նմա պսակ, եւ ելն յաղթողն
զի յաղթեսցէ:

*Եւ յորժամ եբաց զկնիքն երկրորդ, լուայ 3
յերկրորդ կենդանւոյն՝ զի ասէր. Գամ: *Եւ ել 4
այլ ձի կարմիր, եւ որ հեծեալն էր 'ի վերայ նո-
րա՝ տուաւ նմա առնուլ զխաղաղութիւն յերկ-
րէ, զի զմիմեանս զենցեն. եւ տուաւ նմա սուր
մի մեծ:

*Եւ յորժամ եբաց զկնիքն երրորդ, լուայ 5
յերրորդ կենդանւոյն՝ զի ասէր՝ Թէ գամ. եւ
տեսի եւ ահա ձի սեաւ, եւ որ նստեալն էր
'ի վերայ նորա՝ ունէր կշիռք 'ի ձեռին իւրում.
*եւ լուայ ձայն 'ի միջոյ չորից կենդանեացն. 6
կապիճ մի ցորեան դենարի միոյ, եւ երեք կա-
պիճ գարի դենարի միոյ. եւ ձէթ եւ գինի
մի՛ վնասեսցես:

*Եւ յորժամ եբաց զկնիքն չորրորդ, լուայ 7
ձայն 'ի չորրորդ կենդանւոյն՝ զի ասէր՝ Թէ գամ,
*եւ տեսի եւ ահա ձի չոռոս, եւ որ նստէրն 8
'ի վերայ նորա՝ ունէր զմահ, եւ դժոխք երթա-
յին զհետ նորա. եւ տուաւ նմա իշխանութիւն

չորրորդ մասին աշխարհի՝ սատակել սրով եւ
սովով եւ մահուամբ եւ գազանօք երկրի:
9 *Եւ յորժամ եբաց զկնիքն հինգերորդ՝ տե-
սի 'ի ներքոյ սեղանոյն զհոգիս ամենայն մարդ-
կան կնքեալ վասն բանին Աստուծոյ՝ եւ վասն
10 վկայութեան նորա զոր ունէին. *որք ասէին
ձայնիւ մեծաւ. Մինչեւ յե՞րբ, Տէր սուրբ եւ
ճշմարիտ, ոչ դատիս եւ խնդրես զվրէժ արեան
11 մերոյ 'ի բնակչաց երկրի: *Եւ տուաւ նոցա
արկանելիս սպիտակս, եւ ասացաւ նոցա զի
հանգիցեն փոքր մի ժամանակ, մինչեւ լցցին
ծառայակիցք նոցա եւ եղբարք նոցա՝ որք հան-
դերձեալ են կատարիլ իբրեւ զնոսա:
12 *Եւ տեսի յորժամ եբաց զկնիքն վեցերորդ՝
եղեւ շարժումն մեծ, եւ արեգակն եղեւ սեաւ
իբրեւ զկապերտ այծեայ, եւ լուսինն բոլորովին
13 եղեւ արիւն. *եւ աստեղք երկնից թօթափե-
ցան 'ի յերկիր, որպէս տերեւ թզենւոյ զի ուժ-
14 գին շարժիցի 'ի հողմոյ. *եւ երկինն իբրեւ ըզ-
մագաղաթեայ գիրս գալարէր, եւ ամենայն լե-
րինք եւ կղզիք 'ի տեղւոյ իւրեանց շարժեցան:
15 *Եւ թագաւորք երկրի եւ իշխանք՝ հազարա-
պետք եւ մեծամեծք եւ զօրաւորք եւ ամե-
նայն ծառայք եւ ամենայն ազատք թագուցին
16 զինքեանս յայրս եւ 'ի ծերպս վիմաց. *եւ ա-
սէին լերանց՝ Թէ անկերուք 'ի վերայ մեր, եւ
17 ցբլուրս՝ Թէ ծածկեցէք զմեզ. *զի եկն օր մեծ
բարկութեան նորա, և ո՞վ կարէ կալ առաջի նորա:

ԳԼՈՒԽ Է.

Եւ յետ այնորիկ տեսի չորս հրեշտակս՝ զի 1
կային ՚ի չորս անկիւնս երկրի, եւ ունէին զչորս
հողմունս երկրի՝ զի մի՛ շնչեսցէ հողմ ՚ի վերայ
երկրի, եւ մի՛ ՚ի ծովու եւ մի՛ ՚ի ծառս։ * Եւ 2
տեսի այլ հրեշտակ զի ել յարեւելից, եւ ունէր
զկնիք Աստուծոյ կենդանւոյ, եւ աղաղակեաց
ձայնիւ մեծաւ առ չորս հրեշտակսն՝ որոց ա-
ռեալ էր իշխանութիւն ապականել զերկիր եւ
զծով. * եւ ասէր. Մի՛ վնասէք երկրի, մի՛ ծո- 3
վու, մի՛ ծառոց, դադարեցէք մինչեւ կնքեսցուք
զծառայս Աստուծոյ մերոյ։ * Եւ լուայ զթիւ կնքե- 4
լոցն՝ հարիւր քառասուն եւ չորք հազար՝ կըն-
քեալք յազգէ որդւոցն Իսրայելի. * յազգէն 5
Յուդայ՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն
Ռուբենի՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն
Գադայ՝ երկոտասան հազար կնքեալ, * յազգէն 6
Ասերայ՝ երկոտասան հազար կնքեալ, յազգէն
Նեփթաղիմայ՝ երկոտասան հազար կնքեալ, յազ-
գէն Մանասէի՝ երկոտասան հազար կնքեալ,
* յազգէն Շմաւոնի՝ երկոտասան հազար կըն- 7
քեալ, յազգէն Ղեւեայ՝ երկոտասան հազար
կնքեալ, յազգէն Իսաքարայ՝ երկոտասան հազար
կնքեալ. * յազգէն Զաբուղոնի՝ երկոտասան հա- 8
զար կնքեալ, յազգէն Յովսեփու՝ երկոտասան
հազար կնքեալ, յազգէն Բենիամինի՝ երկոտա-
սան հազար կնքեալ։

9 * Եւ յետ այսորիկ տեսի՝ եւ ահա ժողովուրդ-
բազում որոց ոչ գոյր թիւ, յամենայն հեթա-
նոսաց եւ յամենայն ազգաց եւ յամենայն լե-
զուաց եւ յամենայն ժողովրդոց, որք կային ա-
ռաջի աթոռոյն եւ առաջի գառինն՝ արկեալ
զիւրեամբք հանդերձս սպիտակս, եւ արմա-
10 ւենիս ՚ի ձեռս իւրեանց. * աղաղակէին ՚ի ձայն
մեծ՝ եւ ասէին. Փրկութիւն Աստուծոյ մերոյ՝
11 որ նստի ՚ի վերայ աթոռոյն, եւ գառինն։ * Եւ
ամենայն հրեշտակք կային շուրջ զաթոռովն եւ
զերիցամբքն եւ զչորիւք կենդանեօքն, եւ ան-
կանէին յերեսս առաջի աթոռոյն՝ եւ երկիր պա-
12 գանէին Աստուծոյ, * ասելով. Ամէն. օրհնու-
թիւն եւ փառք եւ իմաստութիւն եւ գոհու-
թիւն եւ պատիւ եւ զօրութիւն եւ զօրհնք
Տեառն Աստուծոյ մերոյ՝ յաւիտեանս յաւիտե-
13 նից. ամէն։ * Եւ ասէ ցիս մի յերիցանց անտի.
Սոքա որ զգեցեալս են զհանդերձս սպիտակս՝
14 ո՞յք են, եւ կամ ուստի՞ գան։ * Եւ ասացի ցնա.
Տէր, դու գիտես։ Եւ ասէ ցիս. Սոքա են որ
գան ՚ի վշտաց մեծաց, եւ լուացին զարկանելս
իւրեանց և սպիտակացուցին արեամբ գառինն։
15 * Վասն այնորիկ են առաջի աթոռոյն Աստուծոյ.
եւ պաշտեն զնա զտիւ եւ զգիշեր ՚ի տաճարի
նորա. և որ նստի ՚ի վերայ աթոռոյն՝ բնակեալ
16 է ՚ի նոսա. * ոչ քաղցիցեն, եւ ոչ ծարաւիցեն,
եւ ոչ ոք մեղիցէ նոցա՝ ոչ արեգակն եւ ոչ
17 տօթ. * եւ գառնն ՚ի մէջ աթոռոյն իւրոյ հո-

վուեսցէ զնոսա, եւ առաջնորդեսցէ նոցա ՚ի
կենաց աղբեւր ջրոյ կենդանւոյ. քանզի եհատ
Աստուած զամենայն արտօսր յերեսաց նոցա։

ԳԼՈՒԽ Ը.

Եւ յորժամ եբաց զկնիքն եօթներորդ՝ ե- 1
ղեւ լռութիւն յերկինս որպէս կէս ժամու. *եւ 2
տեսի հրեշտակս եօթն, որ առաջի Աստուծոյ
կային. եւ տուաւ նոցա եօթն փող։ *Եւ այլ 3
հրեշտակ եկն եկաց առ սեղանն, եւ ունէր խըն-
կանոց ոսկի. եւ տուաւ նմա խունկ բազում,
զի մատուսցէ զաղօթս ամենայն սրբոց ՚ի վերայ
ոսկեղէն սեղանոյ առաջի աթոռոյն. *եւ ել ծուխ 4
խնկոյն՝ աղօթք սրբոյն՝ ՚ի ձեռաց հրեշտակացն
առաջի Աստուծոյ. *եւ ելից հրեշտակն զխնկա- 5
նոցն ՚ի հրոյ սեղանոյն, եւ արկ զնա յերկիր. եւ
եղեւ որոտումն եւ ձայնք եւ փայլատակումն
եւ շարժումն մեծ. *եւ եօթն հրեշտակքն որ 6
ունէին եօթն փողս՝ պատրաստեցին զինքեանս
առ ՚ի հարկանել։

*Եւ առաջին հրեշտակն եհար զփողն, եւ 7
եղեւ կարկուտ եւ հուր եւ արիւն խառնեալ՝
եւ անկաւ յերկիր, եւ զերրորդ մասն երկրի այ-
րեաց, եւ զերրորդ մասն ծառոց այրեաց, եւ
զամենայն դալար խոտոյ այրեաց։

*Եւ երկրորդ հրեշտակն փողեաց, եւ իբ- 8
րեւ լեառն մի մեծ հրդեհեալ անկաւ ՚ի ծով,

9 եւ եղեւ երրորդ մասն ծովու արիւն. *եւ սա-
տակեցաւ երրորդ մասն լուղակաց, եւ որ ու-
նէր շունչ կենդանի՝ ապականեցաւ. (եւ եր-
րորդ մասն նաւուց ընկղմեցաւ։)
10 *Եւ երրորդ հրեշտակն փողեաց, եւ անկաւ
յերկնից աստղ մի մեծ՝ բորբոքեալ իբրեւ ըղ-
ջամբար, եւ անկաւ յերրորդ մասն գետոց
11 եւ աղբերաց. *եւ էր անուն աստեղն Դառ-
նութիւն. եւ բազումք մեռան ՚ի դառնութե-
նէ ջուրցն։
12 *Եւ չորրորդ հրեշտակն փողեաց, եւ վի-
րաւորէր երրորդ մասն արեգական՝ եւ երրորդ
մասն լուսնի՝ եւ երրորդ մասն աստեղաց. եւ
խաւարէր երրորդ մասն նոցա, եւ երրորդ մա-
13 սըն գիշերոյ նոյնպէս։ *Եւ տեսի եւ լուայ ձայն
հրեշտակի թռուցելոյ ՚ի մէջ երկնից՝ զի ասէր
՚ի ձայն մեծ. Վա՜յ վա՜յ վա՜յ՝ որ բնակեալ են
յերկրի. յորժամ լինիցի ձայն երից եւս փո-
ղոց, զոր կամիցին հրեշտակքն հարկանել։

ԳԼՈՒԽ Թ.

1 Եւ հինգերորդ հրեշտակն փողէր. եւ տե-
սի զի աստղ մի անկաւ յերկնից, եւ տուաւ
2 նմա բանալի գբոյն անդընդոց. *եւ ելանէր
ծուխ ՚ի գբոյն որպէս զծուխ հնոցի մեծի. եւ
3 խաւարեցաւ արեգակն եւ օդք։ *Եւ ՚ի գբոյն
ելանէր մարախ ՚ի յերկիր. եւ տուաւ նոցա իշ-

խանութիւն իբրեւ զկայթոյս կարճի. * եւ ա֊ 4
ասացաւ նոցա զի մի՛ մեղիցեն խոտոյ երկրի, եւ
մի՛ ամենայն ծառոյ, բայց միայն մարդոյ երկը֊
րայնոյ, որ ո՛չ ունիցին զկնիք ՚ի վերայ ճակատու
իւրեանց ։ * Եւ տուաւ նոցա հրաման՝ զի մի՛ 5
սպանանիցեն զնոսա, այլ չարչարեսցեն զնոսա
ամիսս հինգ. եւ չարչարանք նոցա իբրեւ ըզ֊
խայթոյս կարճի՝ որ հարկանիցէ զմարդ. * եւ 6
յաւուրսն յայնոսիկ խնդրեսցեն մարդիկ զմահ՝
եւ մի՛ գտցեն, եւ ցանկան մեռանել՝ եւ փա֊
խիցէ ՚ի նոցանէ մահ ։ * Եւ նմանութիւն մա֊ 7
րախոյն՝ նմանութիւն ձիոյ պատրաստելոյ ՚ի պա֊
տերազմ. եւ ՚ի վերայ գլխոց նոցա իբրեւ զպը֊
սակ՝ նմանեալ ոսկւոյ. եւ երեսք նոցա իբրեւ
զերեսս մարդոյ, * եւ հերք նոցա իբրեւ զհերս 8
կնոջ, եւ ատամունք նոցա իբրեւ զառիւծու ։
* Եւ ունէին զրահս՝ իբրեւ զզրահս երկաթի. 9
եւ ձայն թեւոց նոցա իբրեւ զձայն կառավար
ձիոց բազմաց՝ որ արշաւեն ՚ի պատերազմ. * եւ 10
ունէին ագիս ըստ նմանութեան կարճի, եւ խայ֊
թոց յագիս նոցա. եւ ունէին իշխանութիւն
չարչարել զմարդիկ ամիսս հինգ. * եւ ունին թա֊ 11
գաւոր ՚ի վերայ իւրեանց զհրեշտակն դժոխոց.
եւ անուն նորա եբրայեցերէն Աբադդոն, որ
կոչի ՚ի հայ բարբառ՝ կորուստ ։ * Ահաւասիկ 12
վայ մի էանց, եւ վայք երկու գալոց են ։
* Եւ վեցերորդ հրեշտակն հարկանէր զփո֊ 13
ղն. եւ լուայ ձայն ՚ի չորից կենդանեացն որ

14 էին առաջի սեղանոյն Աստուծոյ, * զի ասէր ցը֊
հրեշտակն վեցերորդ որ ունէր զփողն. Լոյծ
զչորս հրեշտակսն զկապեալս ՚ի վերայ գետոյն
15 Եփրատայ ։ * Եւ լուծան չորս հրեշտակքն պատ֊
րաստեալք ՚ի ժամ եւ յօր եւ յամիս եւ ՚ի տարի,
16 զի սպանցեն զերրորդ մասն մարդկան. * եւ հա֊
մարք հեծելոց զօրաց նոցա՝ բիւրք բիւրուց եւ
17 հազարք հազարաց լուայ զթիւ նոցա ։ * Եւ տե֊
սի ձիս ՚ի տեսլեանն, եւ հեծեալս ՚ի նոսա՝ որք
ունէին զրահս հրեղէնս, եւ յակնթս հրդե֊
հեալս ծծմբով. եւ գլուխք ձիոյն իբրեւ զգը֊
լուխս առիւծուց. եւ ՚ի բերանոյ նոցա հուր
18 ելանէր՝ եւ ծուխ եւ ծծումբ ։ * Եւ ՚ի հարուա֊
ծոյս յայսցանէ մեռաւ երրորդ մասն մարդկան՝
՚ի հրոյն եւ ՚ի ծխոյն եւ ՚ի ծծմբոյն, որ ելանէր
19 ՚ի բերանոյ նոցա. * զի իշխանութիւն ՚ի բերա֊
նըս է նոցա եւ յագիս նոցա, եւ ագիք նոցա
նմանութիւն օձի. եւ ունէին գլուխս՝ որով սա֊
20 տակէին զանիրաւս ։ * Եւ այլք ՚ի մարդկանէ որ
ոչ մեռան ՚ի հարուածոյս յայսցանէ, ոչ ապաշ֊
խարեցին եւ ոչ դարձան ՚ի գործոց ձեռաց ի֊
րեանց, յերկրպագութենէ դիւաց եւ կռոց՝
յոսկեղինաց եւ յարծաթեղինաց եւ ՚ի պղնձոյ
եւ ՚ի քարէ եւ ՚ի փայտէ, որք ոչ տեսանել կա֊
21 րեն եւ ոչ լսել եւ ոչ գնալ. * եւ ոչ ապաշխա֊
րեցին ՚ի մարդասպանութենէ եւ ՚ի դեղատը֊
ւութենէ, եւ ՚ի պոռնկութենէ եւ ՚ի գողու֊
թենէ իւրեանց ։

Գլուխ Ժ.

Եւ տեսի այլ հրեշտակ զօրաւոր՝ զի իջանէր 1
յերկնից եւ զգեցեալ էր ամպ, եւ ծիածան 'ի
գլուխ նորա. եւ երեսք նորա իբրեւ զարեգա-
կն, եւ ոտք նորա որպէս սիւն հրոյ։ * Եւ ու- 2
նէր 'ի ձեռին իւրում գրքոյկ մի բացեալ. եւ
եդ զոտն իւր զաջ 'ի վերայ ծովու, եւ զձախն
'ի վերայ երկրի. * եւ աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ 3
գոչեաց իբրեւ զառիւծ. եւ յորժամ աղաղա-
կեաց՝ խօսեցան եօթն որոտմունք յիւրեանց
ձայնս։ * Եւ յորժամ խօսեցան եօթն որոտմուն- 4
քըն՝ կամէի գրել. եւ լուայ ձայն յերկնից՝ զի
ասէր. Կնքեա զոր խօսեցան եօթն որոտմունքն՝
եւ մի գրեր։ * Եւ հրեշտակն զոր տեսի՝ որ եդ- 5
զոտն իւր 'ի վերայ ծովու եւ զմիւսն 'ի ցամա-
քի, համբարձ զձեռն իւր զաջ յերկինս, * եւ 6
երդուաւ 'ի կենդանին յաւիտենից, որ հաստա-
տեաց զերկինս եւ որ 'ի նմա, եւ զերկիր եւ որ
'ի նմա, զի ոչ եւս կայ այլ ժամանակ. * այլ յա- 7
ւուրս ձայնի եօթներորդ հրեշտակին՝ յորժամ
հարցէ զփողն, կատարեսցի խորհուրդն Աստու-
ծոյ՝ որ աւետարանեցաւ 'ի ծառայից իւրոց մար-
գարէից։

* Եւ ձայնն զոր լուայ յերկնից՝ դարձեալ խօ- 8
սեցաւ ընդ իս եւ ասէ. Երթ առ զգրքոյկն՝ զոր
ունի հրեշտակն բացեալ 'ի ձեռին իւրում, եւ

9 կայ 'ի վերայ ծովու եւ ցամաքի։ * Եւ ես եր-
թեալ առ հրեշտակն՝ խնդրեցի 'ի նմանէ. եւ
ասէ ցիս. Առ զդա՝ եւ կեր զդոյն, եւ դառնաս-
ցի յորովայն քո. այլ 'ի բերան քո է քաղցր իբ-
10 րեւ զմեղր։ * Եւ առի զգրքոյն բացեալ 'ի հր-
րեշտակէն՝ եւ կերայ զնա. եւ էր 'ի բերան իմ
որպէս մեղր. եւ յորժամ կերայ, դառնացաւ
11 որովայն իմ. * եւ ասէ ցիս. Հաստանէ քեզ դար-
ձեալ մարգարէանալ 'ի ժողովուրդս եւ 'ի լե-
զուս եւ 'ի թագաւորս երկրի։

Գլուխ ԺԱ.

1 Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւազանի, եւ
կայր հրեշտակն եւ ասէր ցիս. Արի եւ չափեա
զտաճարն Աստուծոյ եւ զսեղանն, եւ զերկրր-
2 պագուսն որ 'ի նմա. * Եւ զգաւիթն որ արտա-
քոյ տաճարին՝ թող զնա եւ մի չափեր, զի տը-
ւեալ է զնա հեթանոսաց. եւ զքաղաքն սուրբ
կոխեսցեն ամիս քառասուն եւ երկուս։
3 * Եւ տաց երկուց վկայից իմոց, եւ մարգա-
րէասցեն աւուրս հազար երկերիւր եւ վաթ-
4 սուն՝ զգեցեալ քուրձ։ * Սոքա են երկու ձի-
թենիքն եւ երկու ճրագք, որ կան առաջի
5 Աստուծոյ յերկրի։ * Եւ որք կամիցին վնասել
նոցա՝ հուր ելցէ 'ի բերանոյ նոցա եւ կերիցէ
զթշնամիս նոցա. եւ որք կամիցին մեղանչել
6 նոցա՝ այսպէս սատակեսցին։ * Սոքա ունին իշ-

իշխանութիւն փակել զերկինս՝ զի մի՛ տեղասցէ
զաւուրս մարգարէութեան նոցա. եւ ունին
իշխանութիւն ՚ի վերայ ջուրց՝ դարձուցանել
զնոսա յարիւն, եւ հարկանել զերկիր յամենայն
հարուածս՝ քանիցս անգամ եւ կամիցին: * Եւ 7
յորժամ կատարեսցեն զամենայն աւուրս վկա-
յութեան իւրեանց, յայնժամ գազանն որ ելա-
նէ յանդնդոց՝ տացէ ընդ նոսա պատերազմ, եւ
յաղթեսցէ նոցա եւ սպանցէ զնոսա. * Եւ դի 8
նոցա անկեալ կայցէ ՚ի մէջ հրապարակաց քա-
ղաքին նոցա մեծի, որ անուանեալ կոչի ըստ
հոգւոյն Սոդոմ եւ Եգիպտոս, ուր եւ Տէրն նո-
ցա խաչեցաւ: * Եւ տեսցեն զնոսա ամենայն 9
ցեղք եւ ժողովուրդք՝ եւ ամենայն լեզուք եւ
հեթանոսք, զի դի նոցա անկեալ կայցէ զերիս
աւուրս, եւ ոչ տայցեն թաղել ՚ի գերեզմանս
զսկերս նոցա: * Եւ որ բնակեալ են յերկրի՝ ու- 10
րախ լինին եւ խնդան ՚ի վերայ նոցա, մինչեւ
ընծայս եւ պատարագս տան տանել միմեանց.
վասն զի սոքա երկոքին մարգարէքս չարչարե-
ցեն զբնակիչս երկրի:

* Եւ յետ երից աւուրց եւ կիսոյ՝ հոգի կեն- 11
դանի յԱստուծոյ մտցէ ՚ի նոսա, եւ յարիցեն
կացցեն ՚ի վերայ ոտից իւրեանց. եւ ահ եւ եր-
կիւղ մեծ անկաւ ՚ի վերայ ամենեցուն՝ որ տե-
սինն զնոսա. * Եւ լուայ զձայն մեծ՝ որ ասէր 12
ցնոսա. Վերացի՛ք ելէք աստ: Եւ վերացան ե-
լին յերկինս ամպովք. եւ տեսին զնոսա թշնա-

13 միք իւրեանց. * եւ ՚ի ժամուն յայնմիկ շարժումն
մեծ եղեւ, եւ տասներորդ մասն քաղաքին ըն-
կղմեցաւ, եւ մեռան ՚ի շարժմանէն արք եօթն
հազար. եւ յետ այնորիկ ահ մեծ եղեւ յամե-
նեսեան, եւ փառս տային Աստուծոյ երկնաւո-
14 րի: * Ահաւասիկ վայն երկրորդ էանց, եւ վայն
երրորդ գալոց է վաղվաղակի:

15 * Եւ յորժամ եօթներորդ հրեշտակն հար-
կանէր զփողն, եղեւ ձայն յերկինս եւ ասէ.
Եղեւ թագաւորութիւն ամենայն տիեզերաց
Տեառն մերոյ եւ Քրիստոսի իւրոյ, եւ թա-
գաւորեսցէ ՚ի վերայ ամենայնի յաւիտեանս
16 յաւիտենից: * Եւ քսան եւ չորս երիցունքն՝
որ նստէին յաթոռս իւրեանց առաջի Աստու-
ծոյ՝ անկանէին ՚ի վերայ երեսաց իւրեանց եւ
երկիր պագանէին տեառն Աստուծոյ, եւ ա-
17 սէին. * Գոհանամք զքէն, տէր Աստուած ամե-
նակալ, որ էն եւ էս, եւ առեր զզօրութիւն
18 քո մեծ եւ թագաւորեցեր. * եւ հեթանոսք
բարկացան, եւ եկն բարկութիւն քո, եւ ժա-
մանակ մեռելոց՝ զի դատեսցին. եւ տաս վար-
ձըս ծառայից քոց մարգարէից, եւ որոց եր-
կիւղածաց անուան՝ քոյ՝ փոքունց եւ մեծամե-
ծաց, եւ ապականես զապականիչս երկրի:

19 * Եւ բացաւ տաճարն Աստուծոյ որ յերկինս,
եւ երեւեցաւ տապանակն Աստուծոյ ՚ի տաճարն
իւր. եւ եղեն փայլատակմունք եւ ձայնք եւ ո-
րոտմունք եւ շարժումն եւ կարկուտ մեծամեծ:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին մի 1
արկեալ զիւրեւ զարեգակն, եւ լուսին ՚ի ներ-
քոյ ոտից նորա. եւ ՚ի վերայ գլխոյ նորա պը-
սակ աստեղեայ յերկոտասանից. * եւ էր յղի, 2
եւ ճչէր յերկնելն, եւ բազում վշտօք մերձ էր ՚ի
ծնանել: * Եւ երեւեցաւ այլ նշան յերկինս, եւ 3
ահաւասիկ վիշապ մի մեծ հրեղէն, որոյ էին
գլուխք եօթն եւ եղջիւրք տասն. եւ ՚ի վերայ
գլխոց նորա եօթն խոյրք. * եւ ագին նորա 4
քարշէր զերրորդ մասն աստեղաց երկնից, եւ
արկ զնոսա յերկիր. եւ վիշապն կայր առաջի
կնոջն՝ որ հանդերձեալ էր ծնանել, զի յորժամ
ծնցի կինն զորդի իւր՝ կլցէ զնա վիշապն: * Եւ 5
ծնաւ կինն արու՝ որ հանդերձեալ է հովուել
զամենայն հեթանոսս գաւազանաւ երկաթեաւ.
եւ յափշտակեցաւ որդի նորա առ Աստուած
եւ առ աթոռ նորա. * եւ կինն փախեաւ յա- 6
նապատ՝ ուր էր տեղի նմա պատրաստեալ յԱս-
տուծոյ, զի կերակրեսցի անդ աւուրս հազար
երկերիւր եւ վաթսուն:

* Եւ եղեւ պատերազմ յերկինս, Միքայէլ 7
եւ հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին, եւ
վիշապն պատերազմէր զօրօք իւրովք. * եւ ոչ 8
կարացին կալ ընդդէմ, եւ տեղի ոչ գտաւ նո-
ցա յերկինս: * Եւ անկաւ վիշապն մեծ՝ օձն ա- 9
ռաջին որ անուանեալ կոչի Բէեղզեբուղ եւ սա-

տանայ, որ մոլորեցոյց զամենայն տիեզերս երկ-
10 րի. եւ հրեշտակք նորա ընդ նմա անկան: * Եւ
լուայ ձայն մեծ յերկնից՝ որ ասէր. Արդ եղեւ
զօրութիւն եւ փրկութիւն եւ արքայութիւն
Աստուծոյ մերոյ, եւ իշխանութիւն օծելոյ նո-
րա. զի անկաւ չարախօսն եղբարց մերոց, որ
չարախօսէր զնոցանէ առաջի Աստուծոյ զտիւ
11 եւ զգիշեր: * Եւ նոքա յաղթեցին նմա արեամբ
գառինն, եւ բանիւ վկայութեան նորա, եւ
12 ոչ հաճեցան ընդ վիշապն մինչեւ ՚ի մահ. * վասն
այսորիկ ուրախ լերուք երկինք եւ ամենայն որ
բնակեալ էք ՚ի նմա: Վա՛յ երկրի եւ ծովու, զի
անկաւ բանսարկուն առ ձեզ, որ ունի զսաստումն
բազում, եւ կայցէ առ սակաւ մի ժամանակս:
13 * Եւ յորժամ ետես վիշապն թէ անկաւ յեր-
կիր, զհետ եղեւ կնոջն որ ծնաւ զմանուկն ա-
14 րու: * Եւ տուաւ կնոջն երկու թեւք արծուոյ
մեծի՝ զի թռիցէ յանապատ ՚ի տեղի իւր, ուր
կերակրէր անդ՝ ժամանակ եւ ժամանակս եւ
15 կէս ժամանակի՝ յերեսաց օձին. * եւ եհեղ օձն
՚ի բերանոյ իւրմէ զհետ կնոջն ջուր՝ զի ընկղմես-
16 ցէ զնա: * Եւ օգնեաց երկիր կնոջն, եւ եբաց
երկիր զբերան իւր եւ եկուլ զջուրն՝ զոր եհեղ
17 վիշապն ՚ի բերանոյ իւրմէ: * Եւ ցասեաւ վիշա-
պն ընդ կնոջն, եւ գնաց պատերազմել ընդ
այլ զաւակս նորա որք պահէին զպատուիրանս
Աստուծոյ, եւ ունէին զվկայութիւնն Յիսուսի,
18 * եւ կայ ՚ի վերայ աւազոյ ծովու:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Եւ տեսի զի ելանէր 'ի ծովէն գազան, եւ 1
ունէր գլուխս եօթն եւ եղջիւրս տասն, եւ 'ի
վերայ եղջերաց նորա տասն խոյր. եւ 'ի վերայ
գլխոյ նորա անուն հայհոյութեան: * Եւ գա- 2
զանն զոր տեսի՝ նման ընձու, եւ ոտք նորա իբ-
րեւ զարջու, եւ բերան նորա որպէս զառիւ-
ծու. եւ ետ նմա վիշապն զզօրութիւն իւր՝ եւ
զաթոռ իւր եւ զիշխանութիւն մեծ. * եւ մի 3
'ի գլխոց նորա վիրաւորեալ էր 'ի մահ, եւ վէր
մահուան նորա ողջանայր: Եւ զարմացաւ ա-
մենայն երկիր ընդ գազանն, զի ետ նմա վիշա-
պն զթագաւորութիւն իւր. * եւ երկիր պագին 4
վիշապին՝ որ ետ զիշխանութիւնն գազանին, եւ
ասէին. Ո՞վ իցէ նման գազանիս, կամ ո՞վ կա-
րիցէ պատերազմել ընդ դմա: * Եւ տուաւ նմա 5
բերան խօսել զմեծամեծս եւ զհայհոյութիւն,
եւ տուաւ նմա իշխանութիւն զամիս քառա-
սուն եւ երկու: * Եւ եբաց զբերան իւր հայ- 6
հոյութեամբ առ Աստուած, եւ հայհոյեաց զա-
նուն նորա եւ զխորանն նորա եւ զերկնային
խորանն: * Եւ տուաւ նմա իշխանութիւն 'ի վե- 7
րայ ամենայն ազգաց եւ լեզուաց եւ ժողովըր-
դոց, * զի երկրպագեսցեն նմա ամենայն որ 8
բնակեալ են ընդ երեսս երկրի. որոց ոչ են
գրեալ անուանք նոցա 'ի դպրութիւն կենաց

9 գառինն զենլոյ իսկզբանէ աշխարհի: * Ոյք ու-
10 նին ականջս լսելոյ լուիցեն: * Զի են ոմանք՝ որք
'ի գերութեան վարեսցին, եւ են ոմանք՝ որ սը-
րով մեռցին, եւ են ոմանք՝ որ անձամբ զան-
ձինս սպանանիցեն. աստ է համբերութիւն եւ
հաւատ սրբոց:

11 * Եւ տեսի այլ գազան զի ելանէր յերկրէ.
եւ ունէր եղջիւրս երկու՝ նման գառինն. եւ
12 խօսէր իբրեւ զվիշապն. * եւ զիշխանութիւն
զամենայն զառաջնոյ գազանին գործէր առաջի
նորա. եւ առնէր զերկիր եւ զամենայն բնա-
կիչս նորա՝ զի երկիրպագանիցեն գազանին ա-
13 ռաջնոյ՝ մինչեւ ողջացի վէր մահու նորա. * եւ
առնէր նշանս բազումս, եւ տայր հրոյ իջանել
14 յերկնից յերկիր՝ առաջի մարդկան, * եւ մոլո-
րեցուցանէր զորս բնակեալ են յերկիր նշանօ-
քըն, որ տուեալ են 'ի ձեռս նորա՝ առնել ա-
ռաջի գազանին. ասէր ցնա բնակիչք երկրի.
Արա՛ զպատկեր գազանին, որ 'ի վերայ սրոյն ե-
15 կեաց: * Եւ տուաւ նմա իշխանութիւն, զի տա-
ցէ հոգի պատկերի գազանին, եւ զի խօսեսցի
պատկերն, եւ երկիրպագցեն նմա ամենայն բը-
նակիչք երկրի. եւ որ ոչ պագցէ երկիր պատ-
16 կերի գազանին, սպանցէ զնա: * Եւ արասցէ
զամենայն փոքունս եւ զմեծամեծս եւ զմեծա-
տունս եւ զազատս եւ զաղքատս եւ զծառայս,
զի տացէ նոցա դրոշմ յաջու ձեռին եւ 'ի վե-
17 րայ ճակատու նոցա. * եւ ոչ ոք կարասցէ գը-

նել եւ վաճառել՝ եթէ ոչ ունիցի զդրոշմ գը-
րոյն՝ եւ զանուն գազանին եւ զթիւ անուան
նորա ։

* Աստ է իմաստութիւն ․ որ ունի միտ՝ 18
համարեսցի զթիւ գազանին ․ թիւ եղեալն մար-
դոյ , եւ թիւ անուան նորա՝ է այս ․ վեց հա-
րիւր վաթսուն եւ վեց ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Եւ տեսի՝ եւ ահա գառն կայր 'ի վերայ լե- 1
րինն Սիովնի , եւ ընդ նմա հարիւր քառասուն եւ
չորս հազարք , որ ունէին զանուն նորա , եւ ա-
նուն հօր նորա գրեալ 'ի վերայ ճակատուց նոցա ։
* Եւ լուայ ձայն յերկնից՝ որպէս զձայն ջուրց 2
բազմաց , եւ ձայն որոտման մեծի ․ եւ լուայ
իբրեւ զձայն քնարահարաց , զի հարկանէին ըզ-
քնարս իւրեանց ․ * եւ երգէին զերգս նորս ա- 3
ռաջի աթոռոյն՝ եւ առաջի չորից կենդանեացն՝
եւ առաջի երիցանցն , եւ ոչ ոք կարէ գիտել
զերգս նոցա ․ բայց միայն հարիւր քառասուն
եւ չորս հազարքն , որք ազատեալ են յերկրէ ։
* Սոքա են՝ որք ընդ կանայս ոչ խառնակեցան , 4
եւ են կուսանք ․ սոքա զկնի երթան գառինն
ուր եւ երթիցէ ․ սոքա ընտրեցան 'ի մարդկա-
նէ առաջի Աստուծոյ եւ գառինն , * եւ 'ի բե- 5
րան նոցա ոչ գտաւ սուտ , զի անբիծք են ։
* Եւ տեսի այլ հրեշտակ թռուցեալ 'ի մէջ 6

երկնից ․ եւ ունէր աւետիս յաւիտենական՝ Ա-
ւետարանել ամենայն ազգաց եւ լեզուաց որ
7 բնակեալ են յերկրի ․ * եւ ասէր 'ի ձայն մեծ ․
Երկերուք յԱստուծոյ՝ եւ տուք փառս նմա , զի
եկն ժամ դատաստանի նորա ․ եւ երկիր պա-
գէք Արարչին երկնի եւ երկրի եւ ծովու եւ
աղբերաց ջուրց ։

8 * Եւ այլ հրեշտակ երկրորդ գայր զհետ նո-
րա եւ ասէր ․ Անկաւ անկաւ Բաբելոն մեծն՝ 'ի
գինւոյ արբեցութենէ 'ի ցասմանէ՝ 'ի պոռնը-
կութենէ իւրմէ , որ արբեցոյց զամենայն հե-
թանոս ։

9 * Եւ այլ հրեշտակ երրորդ գայր զհետ նո-
ցա եւ 'ի ձայն մեծ ասէր ․ Ով ոք երկրպագեաց
գազանին եւ պատկերի նորա , եւ կալ զդրոշմ
նշանի նորա առ 'ի ճակատ իւր , եւ կամ՝ 'ի վե-
10 րայ աջու ձեռին իւրոյ , * այնպիսին արբցէ 'ի
բաժակէ ցասմանն Աստուծոյ՝ արկելոյ յանա-
պակէ բարկութեան բաժակին , եւ տանջեսցի
հրով եւ ծծմբով առաջի Աստուծոյ եւ գառի-
11 նըն ․ * եւ ծուխ նոցա ելցէ յաւիտեանս յաւի-
տենից ․ եւ ոչ ունին հանգիստ՝ որք երկիր պա-
գին գազանին 'ի տուէ եւ 'ի գիշերի ․ եւ որք
երկիր պագին պատկերին , եւ առնին զդրոշմ
12 եւ զանուն նորա ։ * Եւ համբերութիւն սրբոցն
աստ է ․ այս որք պահեն զպատուիրանս Աստու-
13 ծոյ , եւ զհաւատս Յիսուսի ։ * Եւ լուայ ձայն
յերկնից՝ որ ասէր ցիս ․ Գրեա , երանի մեռելո-

ցըն որք 'ի Տէր ննջեցին այժմիկ վաղվաղակի.
այս ասէ Հոգին, քանզի հանգեան յաշխատու-
թենէ իւրեանց. բայց միայն գործք իւրեանց
չոգան զհետ նոցա։
* Եւ տեսի եւ ահա ամպ սպիտակ, եւ 'ի 14
վերայ ամպոյն նստէր նման Որդւոյ մարդոյ, եւ
'ի գլուխ իւր պսակ ոսկի, եւ 'ի ձեռին իւրում
ունէր գերանդի սրեալ։ * Եւ այլ հրեշտակ ե- 15
լանէր յերկնից, աղաղակէր 'ի ձայն մեծ եւ ա-
սէր. Որ նստիդ 'ի վերայ ամպոյդ՝ առաքեա
զգերանդիդ քո եւ հնձեա, զի եկն ժամանակ
հնձոց, եւ հասեալ են հունձք երկրի։ * Եւ արկ՝ 16
որ նստէր 'ի վերայ ամպոյն՝ զգերանդին իւր
յերկիր, եւ հնձէր զամենայն բնակիչս երկրի։
* Եւ այլ հրեշտակ ելանէր 'ի տաճարէն որ 17
յերկինս, եւ ունէր եւ սա գերանդի սրեալ։
* Եւ այլ հրեշտակ ելանէր 'ի սեղանոյն, որ ու- 18
նէր իշխանութիւն 'ի վերայ հրոյ, եւ աղաղա-
կեաց 'ի ձայն մեծ առ հրեշտակն՝ որ ունէր ըզ-
գերանդին սրեալ, եւ ասէր. Կթեա զողկոյզս
այգւոյ երկրէ, զի հասեալ է խաղողդ 'ի դմա։
* Եւ արկ հրեշտակն զգերանդի իւր յերկիր, եւ 19
կթէր զխաղող նորա, եւ արկանէր 'ի հնձանն
Աստուծոյ 'ի մեծ։ * Եւ կոխեցաւ հնձանն ար- 20
տաքոյ քաղաքին, եւ ելանէր 'ի հնձանէն արիւն
մինչեւ 'ի սանձս ձիոյն. եւ երկայնութիւն նորա
հազար եւ վեց հարիւր ասպարէս։

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Եւ տեսի այլ նշան յերկինս՝ մեծ եւ սքան-
չելի. հրեշտակս եօթն՝ որք ունէին եօթն վէրս
զկնի, զի նոքօք կատարէր բարկութիւն Աստու-
2 ծոյ։ * Եւ տեսի որպէս ծով ապակեղէն խառ-
նեալ հրով. եւ որք յաղթեցին գազանին եւ
թուոյ անուան նորա՝ եւ պատկերի նորա եւ
դրոշմի նորա, նոքա կային 'ի վերայ ծովուն ա-
3 պակեղինի, եւ ունէին զքնարս Աստուծոյ, * եւ
երգէին զերգս Մովսիսի առաջի Աստուծոյ, եւ
զերգս գառինն՝ ասելով. Թէ՝ Մեծամեծ եւ ըս-
քանչելի են գործք քո, Տէր Աստուած ամենա-
կալ. արդար՝ եւ ճշմարիտ են ճանապարհք քո,
4 թագաւոր ամենայն հեթանոսաց. * եւ ո՞վ որ
ոչ երկիցէ՝ եւ փառաւորեսցէ զՏէր անուն
քո. զի դու միայն սուրբ եւ արժանի երկրպա-
գելոյ. զի ամենայն հեթանոսք եկեսցեն եւ եր-
կիր պագցեն առաջի քո, Տէր, յորժամ արդա-
5 րութիւն քո յայտնեսցի։ * Եւ յետ այսորիկ տե-
սի՝ եւ բացաւ տաճարն խորանին վկայութեան
6 որ էր 'ի յերկինս. * եւ ելանէին եօթն հրեշտա-
կըք՝ որ ունէին եօթն հարուածս, եւ զգե-
ցեալ էին 'ի տաճարին կտաւս մաքուրս եւ պայ-
ծառս, եւ գօտեւորեալք էին առ ստեամբք իւ-
7 րեանց գօտիս ոսկեղէնս։ * Եւ 'ի չորից կենդա-
նեացն տուաւ եօթն հրեշտակացն եօթն սկա-

ւառակս լի ցասմամբն Աստուծոյ կենդանւոյն
յաւիտեանս յաւիտենից ։ * Եւ լցաւ տաճարն 8
ծխով փառացն Աստուծոյ եւ զօրութեան նո–
րա․ եւ ոչ ոք կարէ մտանել 'ի տաճարն՝ մին–
չեւ կատարեսցին եօթն հարուածքն յեօթն
հրեշտակացն ։

ԳԼՈՒԽ ԺԶ․

Եւ լուայ ձայն մեծ 'ի տաճարէն՝ զի ասէր 1
ցեօթն հրեշտակսն․ Երթայք հեղէք զեօթն
սկաւառակդ ցասմամբն Աստուծոյ յերկիր ։
* Եւ գնաց առաջին հրեշտակն, եւ եհեղ 2
զսկաւառակ իւր յերկիր․ եւ եղեւ հարուածք
չարաչար 'ի վերայ մարդկան, որ ունէին զդրոշմ
գազանին եւ երկիր պագին պատկերի նորա ։
* Եւ երկրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ 3
իւր 'ի ծով, եւ դարձան ջուրքն յարիւն մե–
ռեալ․ եւ ամենայն շունչ կենդանի որ էր 'ի
ծովու՝ սատակեցաւ ։
* Եւ երրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ 4
իւր 'ի գետս եւ յաղբիւրս ջուրց, եւ եղեւ ա–
րիւն ։ * Եւ լուայ 'ի հրեշտակէն՝ զի ասէր․ Ար– 5
դար է՝ որ Էին եւ Է, եւ սուրբ 'ի գործս իւր,
զի այսպէս դատեցաւ․ * վասն զի զարիւն սըր– 6
բոց եւ զարիւն մարգարէիցն հեղին ամպարիշտք,
վասն այնորիկ արիւն ետ ըմպել նոցա ըստ ար–
ժանեացն ։ * Եւ լուայ 'ի սեղանոյ անտի զի ա– 7

սէր․ Այո, տէր Աստուած ամենակալ, արդար
եւ ճշմարիտ են դատաստանք քո ։
8 * Եւ չորրորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւառա–
9 կէ իւրմէ 'ի վերայ արեգական․ * եւ տուաւ նը–
մա խորշակահար առնել զմարդիկ հրով․ եւ
տապացան մարդիկ 'ի տապ մեծ, եւ հայհոյե–
ցին զԱստուած՝ որ ունի իշխանութիւն 'ի վե–
րայ հարուածոցս այսոցիկ, եւ ոչ ապաշխարե–
ցին 'ի փառս Աստուծոյ ։
10 * Եւ հինգերորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւա–
ռակէ իւրմէ 'ի վերայ աթոռոյ գազանին, եւ
եղեւ թագաւորութիւն նորա խաւարեալ․ եւ
11 ծամէին զլեզուս իւրեանց յախտէ ցաւոյն, * եւ
հայհոյեցին զԱստուած երկնից 'ի ցաւոց իւր–
եանց՝ եւ յախտէ դառնութեանն, եւ ոչ ա–
պաշխարեցին 'ի գործոց իւրեանց ։
12 * Եւ վեցերորդ հրեշտակն եհեղ 'ի սկաւա–
ռակէ իւրմէ 'ի վերայ գետոյն մեծի Եփրատայ,
եւ ցամաքեցան ջուրք նորա, զի պատրաստես–
13 ցի ճանապարհ թագաւորի ելիցն արեւու ։ * Եւ
տեսի՝ զի ելանէր 'ի բերանոյ վիշապին՝ եւ 'ի բե–
րանոյ գազանին՝ եւ 'ի բերանոյ սուտ մարգարէ–
14 ին ոգիք երեք անսուրբք իբրեւ զգորտս ։ * Քան–
զի նոքա էին ոգիք դիւականք՝ որք առնէին նը–
շանս, եւ երթային առ թագաւորս ամենայն
երկրի՝ ժողովել զնոսա 'ի պատերազմ՝ յօրն մեծ
Տեառն ամենակալի․ քանզի այսպէս ասաց Տէր․
15 * Ահա գամ իբրեւ զգող, երանի որ իցեն ար–

թունք, եւ պահեսցեն զհանդերձս իւրեանց.
զի մի մերկ շրջեսցին, եւ երեւեսցին ամօթանք
իւրեանց. * եւ ժողովեցից զնոսա ՚ի տեղի մի, 16
որ կոչի եբրայեցերէն Արմագեդոն ։

* Եւ եօթներորդ հրեշտակն եհեղ ՚ի սկա- 17
ւառակէ իւրմէ ՚ի վերայ օդոյ. եւ ել ձայն մեծ
յերկնից եւ յաթոռոյն՝ ասելով. Եղեւ ։ * Եւ ե- 18
ղեն փայլատակմունք եւ ձայնք եւ որոտմունք,
եւ եղեւ շարժումն մեծ՝ որպիսի չիք եղեալ
ի սկզբանէ՝ յորմէհետէ եղեւ մարդ ՚ի վերայ երկ-
րի՝ այնպիսի շարժումն մեծ ։ * Եւ եղեւ քաղա- 19
քըն մեծ յերիս մասն, եւ քաղաքք ազգացն ան-
կան. եւ Բաբելոն մեծ յիշեցաւ առաջի Աստու-
ծոյ, տալ նմա զբաժակն գինւոյ ցասման բար-
կութեան նորա ։ * Եւ ամենայն կղզիք փախեան, 20
եւ լերինք ՚ի միջոյ բարձան ։ * Եւ կարկուտ մեծ 21
իբրեւ կշիռ տաղանդոյ միոյ իջանէր յերկնից ՚ի
վերայ մարդկան. եւ հայհոյեցին մարդիկ զԱս-
տուած յերկնից՝ վասն հարուածոյ կարկտին,
զի մեծ էր հարուածն եւ սաստիկ ։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Եւ եկն մի ոմն յեօթն հրեշտակացն՝ որք ու- 1
նէին զեօթն սկաւառակսն, խօսեցաւ ընդ իս
եւ ասէ. Եկ այր եւ ցուցից քեզ զդատաս-
տանս մեծ պոռնկին՝ որ նստի ՚ի վերայ ջուրց
բազմաց. * ընդ որում պոռնկեցան թագաւորք 2

երկրի. եւ արբեցան բնակիչք երկրի ՚ի գինւոյ
3 արբեցութեան պոռնկութեան նորա ։ * Եւ ա՛ռ
տարաւ զիս յանապատ հոգւովն. եւ տեսի կին
մի՝ զի նստէր ՚ի վերայ կարմիր գազանի, եւ լի
էր անուամբ հայհոյութեան. եւ գազանն զոր
տեսի՝ ունէր գլուխս եօթն եւ եղջիւրս տասն ։
4 * Եւ կինն զգեցեալ էր ծիրանիս եւ կարմիրս,
եւ զարդարեալ ոսկւով եւ մարգարտով եւ ա-
կամբք պատուականօք, ունէր բաժակ ոսկի ՚ի
ձեռին իւրում՝, եւ լի էր գարշելի եւ անմա-
5 քուր պոռնկութեամբ. * եւ ՚ի ճակատն նորա
գրեալ անուն՝ խորհրդով. ՄԵԾՆ ԲԱԲԵԼՈՆ՝ մայր
պոռնկաց եւ գարշելեաց երկրի ։

6 * Եւ տեսի զկինն արբեցեալ յարենէ սրբոց
եւ յարենէ ամենայն վկայիցն, եւ զարմացայ
7 տեսեալ զնա՝ զարմացումն մեծ ։ * Եւ ասէ ցիս
հրեշտակն. Ընդէ՞ր զարմացար. ես ասացից քեզ
զխորհուրդս կնոջն, եւ գազանին որ բարձեալ
ունի զնա. որ ունի զեօթն գլուխսն եւ տասն
8 եղջիւր ։ * Եւ գազանդ զոր տեսեր՝ որ էր եւ
չէր, եւ հանդերձեալ է ելանել ՚ի դժոխոց՝ եւ
՚ի կորուստ երթալ, եւ զարմասցին ամենեքեան
որ բնակեալ են ՚ի վերայ երկրի, որոց ոչ էր
գրեալ անուանք նոցա ՚ի գիր կենաց ի սկզբանէ
աշխարհի, զոր տեսանէին զգազանն, զի էր եւ
9 չէ, եւ մերձ է ։ * Աստ է իմաստութիւն՝ որ ու-
նի միտս. եւ եօթն գլուխսն՝ եօթն լերինք են,
ուր կինն նստեալ էր ՚ի վերայ նոցա. եւ նոքին

թագաւորք են եօթն . եւ թագաւորք եօթն
գոլով, * հինգն անկան, եւ մին կայ, եւ մինն 10
ոչ է եկեալ. եւ յորժամ գայ՝ սակաւիկ մի ժա-
մանակ ունի . * եւ գազանն՝ որ էր եւ չէ, եւ 11
նա ութերորդ է . եւ է յեօթանց անտի, եւ 'ի
կորուստ երթալոց է ։ * Եւ տասն եղջիւրն զոր 12
տեսեր՝ տասն թագաւորք են . որոց չեւ եւս է
առեալ զթագաւորութիւն, այլ առնուն՝ եւ
կան իշխանք 'ի մի ժամ. եւ առնուն նոքա զիշ-
խանութիւն ընդ գազանին ։ * Սոքա մի կամս ու- 13
նին, եւ զզօրութիւն եւ զիշխանութիւն գա-
զանին տան . * եւ ընդ գառինն պատերազմին, 14
եւ գառնն յաղթէ նոցա, զի Տէր է նոցա եւ
թագաւոր թագաւորաց . եւ որք ընդ նմա՝ կո-
չեցեալք են, ընտրեալք եւ հաւատացեալք ։
* Եւ ասաց ցիս . Եւ զջուրն զոր տեսեր՝ ուր 15
նստէր պոռնիկն, ժողովուրդք են, եւ բազմու-
թիւնք եւ ազգք եւ լեզուք . * եւ տասն եղ- 16
ջիւրքն՝ զոր տեսեր գազանին, նոքա ատեցեն
զպոռնիկն՝ եւ ատեսցեն զնա, եւ զմարմին նո-
րա կերիցեն՝ եւ այրեսցեն զնա հրով. * քանզի 17
Աստուած ետ 'ի սիրտս նոցա առ 'ի լինել նոցա
մի կամս, եւ տալ զթագաւորութիւն գազանին՝
մինչեւ կատարեսցին բանն Աստուծոյ ։ * Եւ կինն 18
զոր տեսեր՝ է քաղաքն մեծ, որ ունի զթագա-
ւորութիւն 'ի վերայ թագաւորութեանց երկրի ։

ԳԼՈՒԽ ԺԸ .

1 Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ իջեալ
յերկնից՝ որ ունէր իշխանութիւն մեծ, եւ եր-
2 կիր լուսաւորեցաւ 'ի փառաց նորա . * եւ աղա-
ղակեաց 'ի ձայն մեծ՝ ասելով. Անկաւ Բաբելոն
մեծն, որ եղեալ էր բնակութիւն դիւաց, եւ
արգել ամենայն այսոց պղծոց, եւ բանտ պահ-
պանութեան ամենայն ոգւոց անսրբից եւ ա-
3 տեցելոց ։ * Վասն զի 'ի բարկութենէ գինւոյ
պոռնկութեան նորա արբին ամենայն ազգք եւ
թագաւորք երկրի՝ որ ընդ նմա պոռնկեցան .
եւ վաճառականք երկրի՝ 'ի նորա զօրութեանն
4 յօրանալոյ մեծացան ։ * Եւ լուայ ձայն յերկնից
զի ասէր, Ելէք 'ի միջոյ դորա, ժողովուրդ իմ,
զի մի հաղորդ լինիցիք մեղաց դորա, եւ մի զհա-
5 րուածս դորա ընդունիցիք . * զի հասին կցեցան
մեղք դորա մինչեւ յերկինս, եւ յիշեաց Աս-
6 տուած զանիրաւութիւնս դորա . * եւ հա-
տուցանէ դմա՝ որպէս եւ հատոյն մեզ, եւ
տացէ դա երկպատիկ ըստ գործոց իւրոց . եւ
զբաժակն որով խառնեացն՝ խառնեցէք դմա
7 կրկին . * եւ որչափ փառաւորեաց զինքն եւ խայ-
տաց, այնչափ հատուցէք դմա սուգ . զի 'ի սըր-
տի իւրում ասէր՝ թէ յամենայն ժամ նստայց
8 ես թագուհի, եւ այրի ոչ եւս եղէց ։ * Վասն
այնորիկ 'ի միում աւուր եկեսցեն 'ի վերայ դո-

րս հարուածք, մահ եւ սուգ եւ սով, եւ 'ի
հուր այրեսցի. զի հզօր է տէր Աստուած՝ որ
դատեսցէ զդա. * եւ լացցեն եւ կոծեսցին 'ի 9
վերայ դորա Թագաւորք երկրի՝ որք ընդ նմա
պոռնկեցան եւ խաղացին. եւ հեծեսցեն յոր-
ժամ տեսցեն զծուխ կիզման տանջանաց դորա.
* 'ի հեռաստանէ կայցեն վասն երկիւղի տանջա- 10
նաց դորա՝ եւ ասասցեն. Վա՜յ քաղաքին մեծի
Բաբելոնի. քաղաք հզօր՝ զի 'ի միում ժամու
եկին հասին դատաստանք քո: * Եւ վաճառա- 11
կանք երկրի ողբասցեն եւ սգասցեն 'ի վերայ
քո, զի զբեռն նոցա ոչ ոք գնէ. * եւ շահք որ 12
'ի քէն՝ ոչ եւս լիցէ, ոսկւոյ եւ արծաթոյ եւ
ականց պատուականաց՝ եւ մարգարտոյ եւ բե-
հեզոյ եւ ծիրանւոյ եւ սակեթելի եւ որդան,
եւ ամենայն փայտ խնկոյ՝ եւ ամենայն անօթ
փղոսկրեայ, եւ ամենայն անօթ 'ի փայտէ պա-
տուականէ եւ 'ի պղնձոյ եւ յերկաթոյ եւ 'ի
կճոյ, * եւ կինամոմոն և ամենայն խունկ, եւ իւղ 13
եւ կնդրուկ, եւ գինի եւ ձէթ, եւ նաշիհ եւ
ցորեան, եւ ստացուածք ամենայն, արջառ եւ
ոչխար. եւ երիվարաց եւ կառաց՝ որ վայել է
մարմնոց եւ ոգւոց մարդկան. * եւ ամենայն 14
ցանկութիւն անձին քո գնաց 'ի քէն, եւ ա-
մենայն լաւափայլ վայելչութիւնն, պարարան
եւ գէրն եւ ազխատն գնաց 'ի քէն, եւ ոչ եւս
գտցես զայդ: * Եւ ամենայն շահավաճառք այ- 15
սքիւք մեծացեալք 'ի քէն 'ի բաց կայցեն վասն

երկիւղի տանջանաց քոց լալով եւ սուգ առնե-
16 լով, * ասասցեն. Վա՜յ վա՜յ քաղաք մեծ. որ զգե-
ցեալ էիր բեհեզս եւ ծիրանիս եւ որդան, ոս-
կեզօծ եւ քարինս պատուականս եւ մարգա-
17 րիտս. * զի 'ի միում ժամու պակասեցաւ այն-
չափ մեծութիւն քո. եւ ամենայն նաւավար՝
եւ ամենայն որ 'ի տեղիս տեղիս նաւէն, եւ
նաւաստք, եւ որք միանգամ ուղխանաւ գոր-
18 ծեն՝ 'ի հեռաստանէ կայցեն լալով, * եւ աղա-
ղակեցին՝ տեսանելով զծուխ կիզման նորա, ա-
19 սելով. Ո՞ նմանէ քաղաքիս այսմիկ մեծի: * Եւ
արկցեն հող 'ի վերայ գլխոց իւրեանց, եւ գու-
ժալով ձայնիւ մեծաւ՝ լալով եւ սգալով ասաս-
ցեն. Վա՜յ վա՜յ քաղաք մեծ, որով ամենեքեան
մեծացայք՝ որք ունէաք զնաւս 'ի ծով՝ վասն
պատուականութեան քոյ. զի՞ 'ի միում ժամու
20 ապականեալ կործանեցար: * Ուրախ լերուք 'ի
վերայ նորա, երկինք եւ սուրբ Առաքեալք եւ
մարգարէք, զի դատեցաւ Աստուած զդատաս-
21 տան ձեր 'ի դմանէ: * Եւ առ հրեշտակն հզօր՝
քար մի իբրեւ զերկան մեծ, եւ ընկէց 'ի ծով
ասելով. Այսպէս յարձակմամբ անկցի Բաբելոնն
22 քաղաք մեծ, եւ այլ ոչ եւս գտցի. * եւ ձայն
քնարերգաց եւ երաժշտականաց արուեստա-
կանաց եւ փողահարաց եւ Թմբկի՝ այլ ոչ եւս
23 լուիցի 'ի քեզ. * եւ լոյս ճրագի եւ ձայն եր-
կանի այլ ոչ եւս երեւեսցի 'ի քեզ. եւ ձայն
փեսայի եւ ձայն հարսին՝ այլ ոչ եւս լուիցէ 'ի

քեզ. եւ ոչ վաճառականք քո փառաւորք եւ
մեծամեծք երկրի, որ զուարճացեալ էին 'ի քեզ.
վասն զի կախարդութեամբ դեղատուութեան
քո մոլորեցան ամենայն ազգք. * եւ 'ի քեզ 24
ամենայն արիւն մարգարէից եւ սրբոց գտաւ,
եւ ամենայն գրելոց յերկրին կենդանեաց:

ԳԼՈՒԽ ԺԹ.

Եւ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազմու- 1
թեան յերկինս՝ ասելով. Ալէլուիա, փրկութիւն
եւ փառք եւ պատիւ եւ զօրութիւն Աստուծոյ
մերում. * զի ճշմարիտ եւ արդար են դատաս- 2
տանք նորա. զի դատեաց զպոռնիկն մեծ 'ի
պոռնկութեան իւրում, եւ խնդրեաց զվրէժ ա-
րեան ծառայից իւրոց 'ի ձեռաց նորա: * Եւ կըր- 3
կին անգամ օրհնեցին եւ ասացին. Ալէլուիա: Եւ
ծուխ նորա ելանէր յաւիտեանս յաւիտենից.
* եւ անկան քսան եւ չորք երիցունքն եւ չորք 4
կենդանիքն, եւ երկիր պագին Աստուծոյ՝ որ նըս-
տէրն յաթոռ փառաց, ասելով. Ամէն, ալէլուիա:
* Եւ ձայն յաթոռոյն ելանէր՝ ասելով. Օրհնե- 5
ցէք զԱստուած, ամենայն ծառայք նորա, եւ
որք երկնչիք 'ի նմանէ՝ փոքունք եւ մեծամեծք:
* Եւ լուայ ձայն բազմութեան մեծի՝ իբրեւ ըզ- 6
ձայն ջուրց բազմաց, եւ իբրեւ զձայն հզօր ո-
րոտման. Ասելով դարձեալ. Ալէլուիա, վասն զի
թագաւորեաց Աստուած ամենակալ: * Խնդամք 7

(եւ ցնծամք) եւ տամք փառս նմա. զի եկն
հարսանիք գառինն:
Եւ կինն հարսն նորա պատրաստեաց զինքն.
8 * եւ տուաւ նմա զգենուլ բեհեզս սպիտակս
սուրբս եւ լուսափայլս՝ որ է բեհեզն՝ արդարու-
9 թիւն սրբոյն: * Եւ մի յերիցանցն ասէր ցիս.
Գրեա՛ զայդ. երանելիք են ամենեքեան՝ որ կո-
10 չեցեալ են յընթրիս հարսանեաց գառինն: * եւ
ես անկեալ առաջի ոտից նորա՝ երկիր պագի նը-
մա, եւ ասէ ցիս. Անսա՛, մի՛ անկանիր առաջի
իմ. քանզի եւ ես ծառայակից քո եմ, եւ եղ-
բարց քոց՝ որք ունին զվկայութիւնն Յիսուսի
Քրիստոսի. Տեառն Աստուծոյ միայն երկրպա-
գեա՛. քանզի հաստատութեամբ Յիսուսի է ան-
սուտ, եւ հոգի մարգարէութեանդ. զի վկա-
յութիւն Յիսուսի է՝ հոգւոյն Սրբոյ որ 'ի մար-
գարէսն էր:
11 * Եւ տեսի զերկինս բացեալ, եւ ահա ձի
սպիտակ, եւ որ հեծեալն էր 'ի նմա՝ հաւատա-
րիմ եւ ճշմարիտ, եւ արդարութեամբ դատի
12 եւ պատերազմի. * եւ աչք նորա բոց հրոյ, եւ
'ի վերայ գլխոյ նորա պսակս բազումս. եւ ու-
նէր անուն գրեալ, զոր ոչ ոք գիտէ՝ բայց միայն
13 ինքն. * եւ արկեալ զիւրեւ հանդերձ ներկեալ
արեամբ. եւ կոչէր անուն նորա՝ Բան Աստուծոյ.
14 * եւ զօրավարք երկնից և զօրք երկնից զհետ երթա-
յին նորա ձիովք՝ (սպիտակօք), զգեցեալ բեհեզս
15 սուրբս եւ սպիտակս: * Եւ 'ի բերանոյ նորա ելա-

նէր սուր սրեալ, զի նովաւ հարցէ զազգս. եւ
նա հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ,
եւ նա կոխեսցէ զհնձան գինւոյ ցասման բար-
կութեան Աստուծոյ ամենակալի. * եւ ունէր 16
'ի վերայ պատմուճանի իւրոյ եւ 'ի վերայ ան-
դամոց իւրոց՝ գիր գրեալ. Թագաւոր Թագա-
ւորաց եւ Տէր տերանց։

* Եւ տեսի այլ հրեշտակ՝ որ կայր 'ի վերայ 17
արեգական, զի աղաղակեաց 'ի ձայն մեծ ամե-
նայն հաւուց թռուցելոց ընդ մէջ երկնից՝ ա-
սելով. Եկայք ժողովեցարուք յընթրիս մեծին
Աստուծոյ. * եւ կերիջիք զմարմինս թագաւո- 18
րաց, եւ զմարմինս հզօրաց, եւ զմարմինս ե-
րիվարաց եւ ամենայն հեծելոց 'ի նոսա,
եւ զմարմինս ազատաց եւ ծառայից՝ մեծի եւ
փոքու։ * Եւ տեսի զգազանն եւ զթագաւորս 19
երկրի եւ զզօրս նոցա ժողովեալս՝ առնել պա-
տերազմ ընդ այնմ որ հեծեալն էր 'ի ձին սպի-
տակ՝ եւ ընդ զօրս նորա։ * Եւ ըմբռնեցաւ գա- 20
զանն, եւ որ ընդ նմա սուտ մարգարէն՝ որ առ-
նէր զնշանս առաջի նորա, եւ զորս մոլորեցոյց
եւ ետ առնուլ զդրոշմ գազանին՝ եւ զերկրպա-
գուս պատկերի նորա. եւ կենդանւոյն արկին
զնոսա 'ի լիճ հրոյ այրեցելոյ ծծմբով. * եւ այլքն 21
մեռան 'ի սրոյ հեծելոյն 'ի վերայ ձիոյն՝ յորոյ
բերանոյ ելանէր սուրն, եւ ամենայն թռչունք
յագեցան 'ի մարմնոց նոցա։

ԳԼՈՒԽ Ի.

1 Եւ տեսի այլ հրեշտակ զի իջանէր յերկնից,
եւ ունէր զփականս դժոխոց, եւ շղթայս մեծ
2 'ի ձեռին իւրում. * եւ ըմբռնեաց զվիշապն
(զօձն) զառաջին, որ է բանսարկուն եւ սա-
3 տանայ. եւ կապեաց զնա հազար ամ. * եւ արկ
զնա յանդունդս դժոխոց, եւ փակեաց եւ կն-
քեաց զնա՝ զի այլ մի եւս մոլորեցուսցէ զազ-
գս, մինչեւ կատարեսցի հազար ամն. եւ յետ
այնորիկ պարտ է լուծանել նմա սակաւ մի
ժամանակ։

4 * Եւ տեսի աթոռս, եւ նստան 'ի վերայ նո-
ցա. եւ դատաւորութիւն տուաւ նոցա՝ ընտ-
րել զհոգիս չարչարելոցն վասն վկայութեանն
Յիսուսի եւ վասն Բանին Աստուծոյ, եւ զորս ոչ
երկրպագին գազանին, եւ ոչ առին զդրոշմ նո-
րա 'ի ճակատս իւրեանց՝ եւ ոչ 'ի վերայ աջոյ
ձեռին իւրեանց. եւ կեցին եւ թագաւորեցին
ընդ Քրիստոսի հազար ամ։

5 * Եւ յետ այսորիկ 'ի մեռելոց ոչ ոք եկաց,
մինչեւ 'ի կատարել հազար ամին. այս է յա-
6 րութիւն առաջին։ * Երանի սրբոցն, որք ունին
բաժին 'ի յարութեանն առաջնում. 'ի վերայ
սոցա երկրորդ մահն ոչ ունի իշխանութիւն,
այլ եղիցին քահանայք Աստուծոյ եւ Տեառն
Յիսուսի Քրիստոսի, եւ թագաւորեսցեն ընդ
նմա հազար ամ։

* Եւ յետ հազար ամին լուծցէ զսատանայ 7
եւ հանցէ 'ի բանտէ անտի. ելցէ եւ մոլորե-
ցուսցէ զազգս ամենայն ընդ չորս կողմանս երկ-
րի. եւ զԳոգ եւ զՄագոգ առցէ 'ի ձեռս՝ ժո-
ղովել նոքօք զամենայն զօրս 'ի պատերազմ, ո-
րոց թիւ նոցա իբրեւ զաւազ ծովու. * Եւ ել- 8
ցեն 'ի լայնութիւն երկրի, եւ պատեսցեն շուրջ
զբանակս սրբոցն եւ զքաղաքն սիրելւոյ: * Եւ 9
իջցէ հուր յերկնից առ 'ի յԱստուծոյ՝ եւ կերի-
ցէ զնոսա. եւ զզօրագլուխն նոցա զսատանայ՝
որ մոլորեցոյց զնոսա. եւ արկցէ զնոսա 'ի ծովն
հրոյ եւ ծծմբոյ՝ ուր էր գազանն * եւ սուտ մար- 10
գարէն, եւ չարչարեսցին զտիւ եւ զգիշեր:

* Եւ տեսի աթոռ սպիտակ մեծ, եւ 'ի վե- 11
րայ նորա նստեալ՝ յորոյ երեսացն երկնչէին եւ
փախչէին երկինք եւ երկիր, եւ տեղի ոչ գը-
տաւ նոցա: * Եւ տեսի զմեռեալս մեծամեծս 12
եւ զփոքունս որ կային առաջի աթոռոյն. եւ
դպրեանք բանային, եւ այլ դիրք բացաւ կենաց,
եւ դատեցան մեռեալք 'ի գրելոյն՝ ըստ գոր-
ծոց իւրեանց: * Եւ ետ ծով զմեռեալս իւր, 13
եւ մահ եւ դժոխք զիւրեանց մեռեալս. եւ
դատեցան իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց.
* մահ եւ դժոխք մատնեցան 'ի լիճ հրոյն, (այս 14
է մահն երկրորդ). * եւ որ ոչ ոք գտաւ 'ի գիրն 15
կենաց գրեալ՝ արկաւ 'ի լիճ հրոյն:

ԳԼՈՒԽ ԻԱ.

1 Եւ տեսի երկին նոր եւ երկիր նոր. քանզի
առաջինն երկինք եւ երկիր էանց. եւ ծով ոչ
2 գոյր. * եւ զքաղաքն սուրբ զնորն Երուսաղէմ
տեսի՝ զի իջանէր յԱստուծոյ եւ յերկնից՝ զար-
դարեալ եւ պատրաստեալ որպէս հարսն առն
3 իւրոյ: * Եւ լուայ ձայն յերկնից՝ որ ասէր. Ա-
հաւասիկ խորանն Աստուծոյ 'ի մէջ մարդկան,
եւ բնակեսցէ ընդ նոսա. եւ նոքա ժողովուրդ
4 նմա, եւ սա Աստուած նոցա. * եւ ջնջեսցէ զա-
մենայն արտօսր յաչաց նոցա. եւ մահ ոչ եւս
գոյ, ոչ սուգ եւ ոչ աղաղակ, ոչ ցաւք եւ ոչ
աշխատանք ոչ եւս գոյ, զի առաջինն էանց:
5 * Եւ ասաց ցիս՝ որ նստէր 'ի վերայ աթո-
ռոյն. Ահաւասիկ առնեմ զամենայն նոր. եւ
ասաց ցիս. Գրեա, այս բանք ճշմարիտ եւ հա-
6 ւատարիմ: * Եւ ասէ ցիս. Եղէ. ես այբ եւ
ով, սկիզբն եւ կատարած. ես ծարաւելոյն
7 տամ՝ յաղբերէ ջրոյ կենաց ձրի: * Որ յաղթէ՝
ժառանգեսցէ զայս ամենայն. եւ ես եղէց նո-
ցա Աստուած. եւ նոքա եղիցին ինձ որդիք.
8 * եւ ծուլացն եւ անհաւատից՝ սպանողաց եւ
պոռնկաց՝ եւ կախարդաց եւ կռապաշտից՝ եւ
դեղատուաց, եւ ամենայն ստոց՝ ամբարշտաց,
որոց բաժինն իւրեանց 'ի լճին այրեցելոյ հրով
եւ ծծմբով. որ է մահն երկրորդ:

* Եւ եկն առ իս մի յեօթն հրեշտակացն, որք 9
ունէին զեօթն սկաւառակսն լցեալս եօթն վախ-
ճանաւ կատարածովք, խօսեցաւ ընդ իս եւ ա-
սէ. Եկ՝ ցուցից քեզ զհարսնն եւ զկին գառինն ։
* Եւ առ տարաւ զիս 'ի լեառն մի բարձր եւ 10
մեծ՝ հոգւովն, եւ եցոյց ինձ զքաղաք մեծ եւ
սուրբ՝ Երուսաղէմ, զի իջեալ էր յերկնից առ 'ի
յԱստուծոյ, եւ ունէր զփառս Աստուծոյ. * Եւ 11
էր 'ի նմա լուսաւորութիւն նմանեալ ակնից
պատուականաց, քար յասպիս սառնատեսակ եւ
կենդանի ։ * Եւ էին պարիսպք նորա մեծ եւ 12
բարձր, եւ ունէր դրունս երկոտասան, եւ
յերկոտասան դրունսն երկոտասան հրեշտակս,
եւ անուանք իւրաքանչիւրոցն 'ի վերայ դրանցն
գրեալ էին՝ ըստ երկոտասան ցեղիցն Իսրայելի ։
* Յարեւելից կողմանէ դրունք երեք, եւ 'ի հիւ- 13
սիսոյ կողմանէ դրունք երեք, եւ 'ի հարաւոյ
կողմանէ դրունք երեք, եւ յարեւմտից կողմա-
նէ դրունք երեք ։ * Եւ պարիսպ քաղաքին ու- 14
նէր հիմունս երկոտասան, եւ 'ի նոսա երկո-
տասան անուանք երկոտասան Առաքելոց գա-
ռինն ։ * Եւ որ խօսէրն ընդ իս՝ ունէր եղէգն 15
ոսկի 'ի ձեռին իւրում, զի չափեսցէ զքաղաքն
եւ զդրունս նորա եւ զպարիսպս նորա ։ * Եւ էր 16
քաղաքն քառակուսի. եւ որչափ երկայնութիւն
նորա՝ նոյնչափ եւ լայնութիւն եւ բարձրու-
թիւն հաւասար. եւ էր չափ երկայնութեան
նորա՝ երկոտասան հազար ասպարիզս, եւ լայ-

նութիւն նորա եւ բարձրութիւն միաչափ՝ կի-
17 վօս ։ * Եւ չափեաց զպարիսպն նորա հարիւր
եւ քառասուն եւ չորս ասպարէզս. չափ մար-
18 դոյ՝ որ է հրեշտակի. * Եւ էր շինուած պարըս-
պոյ քաղաքին յասպիս. եւ քաղաքն էր ոսկի
մաքուր՝ նման սուրբ եւ ապխտակ ապակւոյ ։
19 * Եւ հիմունք քաղաքին յամենայն ակնից պա-
տուականաց. Հիմն առաջին պորազին յասպիս,
երկրորդն՝ շափիղա, երրորդն՝ պղնձագոյն, չոր-
րորդն՝ զմրուխտ, հինգերորդն՝ եղեգնաքար,
20 * վեցերորդն՝ սարդիոն, եօթներորդն՝ ոսկեքար,
ութերորդն՝ բիւրեղ, իններորդն՝ տպազիոն,
տասներորդն՝ քրիսոպրասոս, մետասանն յա-
21 կինթ, երկոտասանն՝ ամեթոսն ։ * Եւ էին եր-
կոտասան դրունք յերկոտասան մարգարտոց՝
միաձեւ. եւ իւրաքանչիւրոցն դրունքն էին մի
մի դուռն 'ի միոյ միոյ մարգարտէ. եւ ընդար-
ձակութիւն քաղաքին ոսկի մաքուր՝ որպէս զա-
22 պակի պայծառ. * Եւ տաճար ոչ տեսի 'ի նմա,
քանզի Տէր Աստուած ամենակալ տաճար էր
23 'ի նմա՝ եւ գառնն ։ * Եւ քաղաքին չէին պէտք
արեգական եւ լուսնի, զի լուսաւորեսցեն զնա.
քանզի փառքն Աստուծոյ լուսաւորէին զնա յա-
24 մենայն ժամ. եւ ճրագ 'ի նմա գառնն. * Եւ
գնասցեն հեթանոսք 'ի լոյս նորա, եւ թագա-
ւորք երկրի լուսազգեաց լինէին 'ի փառաց նո-
25 րա ։ * Եւ դրունք նորա ոչ փակէին 'ի տուէ եւ
'ի գիշերի, այլ բաց կային հանապազորդ. եւ

գիշեր ոչ եւս լինէր 'ի նմա, * այլ փառք եւ պա֊ 26
տիւ ազգաց. * եւ ոչ մտցէ անդ ամենայն չա֊ 27
րակամ եւ պիղծ եւ ստութիւն, բայց միայն որ
գրեալ են 'ի դպրութեան կենաց գառինն:

ԳԼՈՒԽ ԻԲ.

Եւ եցոյց ինձ մաքուր գետ կենդանի ջրոյ՝ 1
սառնատեսակ, որ ելանէր յաթոռոյն Աստուծոյ
եւ գառինն, * եւ գնայր 'ի մէջ հրապարակաց 2
քաղաքին. եւ ընդերբ գետոյն աստի եւ անտի
ծառ կենաց. որ բերէր պտուղս երկոտասան.
ըստ միոյ միոյ ամսոց տային զպտուղս իւրեանց.
եւ տերեւ ծառոյն էր բժշկութիւն հեթանո֊
սաց: * Եւ նզովք անդ ոչ եւս էին. եւ աթոռն 3
Աստուծոյ եւ գառինն նորա էր 'ի նմա, եւ ծա֊
ռայք նորա պաշտէին զնա, * եւ տեսանէին զե֊ 4
րեսս նորա. եւ անուն նորա գրեալ էր 'ի ճա֊
կատս նոցա. * եւ գիշեր ոչ անդ, եւ չէր ինչ 5
անդ պէտք ճրագի եւ լուսոյ արեգական. վասն
զի Տէր Աստուած լուսաւորէր զնոսա. եւ թա֊
գաւորեսցեն յաւիտեանս յաւիտենից:

* Եւ ասէ ցիս. Այս բանք հաւատարիմ է 6
եւ ճշմարիտ. եւ Տէր Աստուած մարգարէից
սրբոց՝ առաքեաց զհրեշտակ իւր ծառայից իւ֊
րում ցուցանել զոր լինելոց է վաղվաղակի:
* Երանի որ պահէ զբանս մարգարէութեանս 7
գրոյս:

8 * Եւ ես Յովհաննէս լուայ եւ տեսի զայս ա֊
մենայն. եւ յորժամ լուայ եւ տեսի, անկայ եւ
երկիր պագի հրեշտակին՝ որ ցուցանէր ինձ զայս
9 ամենայն: * Եւ ասէ ցիս. Մի՛ անկանիր առաջի
իմ եւ երկիր պագաներ. քանզի եւ ես ծառա֊
յակից քո եմ եւ եղբարց քոց՝ որ պահեսցեն
զբանս մարգարէութեան գրոյս այսորիկ. Աս֊
տուծոյ երկիր պագ:

10 * Եւ ասէ ցիս դարձեալ. Մի՛ կնքեր զբանս
մարգարէական գրոյս այսմիկ. քանզի ժամա֊
11 նակս մերձ է: * Որ ամպարշտելոյն է՝ ամպա֊
րշտեսցի, եւ որ աղտեղանալոյն է՝ աղտեղա֊
ցի, եւ որ արդարանալոյն է՝ արդարասցի, եւ
12 որ սրբելոյն է՝ սրբեսցի. * Ահա գամ վաղվաղա֊
կի՛ եւ վարձք իմ ընդ իս, հատուցանել իւրա֊
13 քանչիւր ըստ գործս իւրեանց: * Ես եմ Ալփա
եւ Օվ, սկիզբն եւ կատարած, առաջին եւ վեր֊
14 ջին: * Երանելիք են որ պահեն զպատուիրանս
նորա. Նոքա ունին իշխանութիւն ունել 'ի փայ֊
տէն կենաց եւ մտանել ընդ դրունս քաղաքին:
15 * Այլ ելցեն արտաքս շունք եւ դեղատուք,
պոռնողք եւ կռապաշտք, եւ ամենեքեան որ
սիրեն զստութիւն:

16 * Ես Յիսուս առաքեցի զհրեշտակ իմ՝ վկա֊
յել զայս ձեզ եկեղեցեացդ. ես արմատ եւ
սեռ 'ի Դաւթայ, եւ աստղ պայծառ առաւօ֊
17 տին, * եւ հոգի եւ փեսայն որ գալոյն եմ. եւ
որ լսէ ասելով թէ եկ, եւ որ ծարաւի իցէ՝ ե֊

կեացէ , եւ որ ոք կամի առնուլ զջուրն կենաց
ձրի ։ * Վկայեմ ես ամենայնի՝ որ լսէ զբանս 18
մարգարէութեան գրոցս այսմիկ. թէ ոք յաւելցէ
'ի սա , յաւելցէ Աստուած 'ի վերայ նորա զեօթն
հարուածսն գրեալս 'ի գիրս յայս ։ * Եւ եթէ 19
ոք պակասեցուսցէ 'ի բանից մարգարէութեան
գրոցս այսմիկ , պակասեցուսցէ եւ հանցէ Աս-
տուած զբաժին նորա 'ի ծառոյն կենաց , եւ 'ի
քաղաքէն սրբոյ՝ որ գրեալ է 'ի գիրս յայս ։
* Ասաց որ վկայեացն զայս . գամ ես վաղվաղա- 20
կի . ամէն ։ Եկն տէր Յիսուս Քրիստոս ։ * Շնորհք 21
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի վերայ ամե-
նայն սրբոց . Ամէն ։

ՎԱԽՃԱՆ

18n

ՀՆ

<< Ազգային գրադարան
NL0028364